

ԵՎՐՈՊԱՅԻ ԴԱՏԱԽԱՁՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ (ԵԴԳԽԽ)



www.coe.int/ccpe

Թարգմանությունը
համաֆինանսավորվում է
Եվրոպական
միության կողմից



COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

**ԵՎՐՈՊԱՅԻ ԴԱՏԱԽԱՁՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
(ԵԴԳԽԽ)**

Կարծիքների հավաքածու թիվ 1-18
(2007-2023)

www.coe.int/ccpe

English Edition:
*Opinions of the Consultative Council of European
Prosecutors (CCPE)
Collection of opinions Nos 1-18 (2007-2023)*

*Սույն թարգմանությունն իրականացվել է
Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի
ֆինանսական աջակցությամբ:
Սույն աշխատության մեջ արտահայտված
կարծիքները հեղինակ(ներ)ի
պատասխանատվությունն են և կարող են
չարտացոլել Եվրոպայի խորհրդի և Եվրոպական
միության պաշտոնական քաղաքականությունը:*

Քաղվածքների վերարտադրումը (մինչև 500
բառ) թույլատրվում է, բացառությամբ կոմերցիոն
նպատակների, քանի դեռ պահպանվում է
տեքստի ամբողջականությունը, հատվածը չի
օգտագործվում համատեքստից դուրս, չի
տրամադրում թերի տեղեկատվություն կամ այլ
կերպ չի մոլորեցնում ընթերցողին՝ տեքստի
բնույթի, շրջանակի կամ բովանդակության
վերաբերյալ: Ամբողջական տեքստը միշտ պետք
է նշվի հետևյալ կերպ՝ «Եվրոպայի խորհուրդ,
հրատարակման տարի»:

Փաստաթղթի ամբողջական կամ մի մասի
վերարտադրման/թարգմանության հետ կապ-
ված բոլոր հարցումները պետք է ուղղվեն
Յադրողակցության տնօրինությանը (F-67075
Ստրասբուրգ, Սեդեքս կամ publishing@coe.int)

Սույն փաստաթղթի հետ կապված բոլոր այլ
նամակագրությունները պետք է հասցեագրվեն
Մարդու իրավունքների և իրավունքի
գերակայության գլխավոր
տնօրինությանը (dpc_pgg@coe.int)

© Եվրոպայի խորհուրդ, սեպտեմբեր, 2024թ.
Բոլոր իրավունքները պաշտպանված են.
Լիցենզավորված է Եվրոպական միությանը՝
համաձայն պայմանների:

Շապիկի լուսանկար. @shutterstock
Շապիկի դիզայն. Փաստաթղթերի մշակման և
տպագրությունների վարչություն (ՓՄՏՎ),
Եվրոպայի խորհուրդ

Բովանդակություն

Կարծիք թիվ 1 (2007)	
Քրեական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության ամրապնդման միջոցները	5
Կարծիք թիվ 2 (2008)	
Քրեական հետապնդման այլընտրանքները	17
Կարծիք թիվ 3 (2008)	
Քրեաիրավական ոլորտից դուրս դատախազական ծառայությունների դերը	24
Կարծիք թիվ 4 (2009)	
Դատավորների և դատախազների միջև հարաբերությունները	33
Կարծիք թիվ 5 (2010)	
Դատախազությունը եւ անչափահասների գործերով արդարադատությունը	46
Կարծիք թիվ 6 (2011)	
Դատախազների եւ բանտի վարչակազմի միջև հարաբերությունները	51
Կարծիք թիվ 7 (2012)	
Դատախազական ծառայությունների միջոցների կառավարումը	62
Կարծիք թիվ 8 (2013)	
Դատախազների և լրատվության միջոցների միջև հարաբերությունները	70
Կարծիք թիվ 9 (2014)	
Դատախազների ամնչվող եվրոպական նորմերն ու սկզբունքները	77
Կարծիք թիվ 10 (2015)	
Քրեական գործերով քննություններում դատախազների դերը	94
Կարծիք թիվ 11 (2016)	
Դատախազների աշխատանքի, այդ թվում՝ ահաբեկչության եւ ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հարցում դատախազների աշխատանքի որակը եւ արդյունավետությունը	103
Կարծիք թիվ 12 (2017)	
Քրեական վարույթներում տուժողների եւ վկաների իրավունքների առնչությամբ դատախազների դերը	117
Կարծիք թիվ 13 (2018)	
Դատախազների անկախությունը, հաշվետվողականությունը եւ էթիկան	130
Կարծիք թիվ 14 (2019)	
Դատախազների դերը կոռուպցիայի եւ հարակից տնտեսական ու ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարում	140
Կարծիք թիվ 15 (2020)	
Արտակարգ իրավիճակներում, մասնավորապես՝ համավարակի ժամանակ դատախազների դերը	152
Կարծիք թիվ 16 (2021)	
Դատախազների գործնական անկախության վերաբերյալ միջազգային դատարանների եւ պայմանագրային մարմինների որոշումները	168
Կարծիք թիվ 17 (2022)	
Շրջակա միջավայրի պահպանության գործում դատախազների դերը	186
Կարծիք թիվ 18 (2023)	
Դատախազների խորհուրդները՝ որպես դատախազական ինքնակառավարման առանցքային մարմիններ	202

Կարծիք թիվ 1 (2007)

Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի՝
ուղղված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին

Քրեական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության ամրապնդման
միջոցները

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (ԵՂԳԽՆ) ստեղծվել է Նախարարների կոմիտեի կողմից 2005 թվականի հուլիսի 13-ին՝ դատախազական ծառայությանն առնչվող հարցերի վերաբերյալ կարծիքներ պատրաստելու եւ «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» 2000 թվականի հոկտեմբերի 6-ի Rec(2000)19 առաջարկության արդյունավետ իրականացմանը նպաստելու համար: Օրենքի գերակայությունը եւ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը հանրային մեղադրողների գործելակերպի հիմքում ընկած հիմնական սկզբունքներն են, քանի որ «... *հանրային մեղադրողներն իշխանության այն ներկայացուցիչներն են, որոնք, հանդես գալով հասարակության անունից եւ ելնելով հանրային շահից, ապահովում են օրենքի կիրառումն այն դեպքերում, երբ օրենքի խախտումն առաջացնում է քրեական պատիժ՝ հաշվի առնելով թե՛ անհատի իրավունքները, թե՛ քրեական արդարադատության համակարգի անհրաժեշտ արդյունավետությունը*¹»:
2. Վարչավայի հռչակագրում եւ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների եւ կառավարությունների ղեկավարների խորհրդի երրորդ գագաթնաժողովում ընդունված գործողությունների ծրագրում² քաղաքական ամենաբարձր մակարդակով ընդգծվել է Եվրոպայի խորհրդի դերը մարդու իրավունքների, ժողովրդավարության եւ օրենքի գերակայության խթանման հարցում, ինչպես նաեւ նրա հանձնառությունն ահաբեկչության, կոռուպցիայի եւ կազմակերպված հանցավորության դեմ պայքարելու հարցում եւ Եվրոպայի խորհրդի իրավական գործիքներն ու իրավական համագործակցության մեխանիզմները հետագայում զարգացնելու հարցում: Վարչավայի գագաթնաժողովում անդրադարձ էր արվում նաեւ Եվրոպական միության հետ համագործակցության եւ փոխգործակցության ամրապնդման պարտավորությանը, մասնավորապես՝ մարդու իրավունքների³, ժողովրդավարության եւ օրենքի գերակայության ոլորտներում:
3. Rec(2000)19 առաջարկության 37-39-րդ պարբերություններում ներառված են քրեական գործերով միջազգային համագործակցության վերաբերյալ մի շարք դրույթներ, որոնք ավելի ծավալուն ներկայացված են հաջորդ Բացատրական հուշագրում: Նախարարների կոմիտեն մասնավորապես նշում է, որ «*հաշվի առնելով առկա մի շարք միջազգային փաստաթղթեր ու առաջարկություններ եւ այն փաստը, որ այս ոլորտը գտնվում է հատուկ հսկողության ներքո հենց Եվրոպայի խորհրդի շրջանակներում, կոմիտեն կենտրոնացել է ներկա իրավիճակի բարելավմանն ուղղված գործնական միջոցների բացահայտման վրա՝ հաշվի առնելով այն կարեւոր դերը, որը սովորաբար ունենում է հանրային մեղադրողը քրեական գործերով միջազգային դատական համագործակցության մեջ*»: Նախարարների կոմիտեն տեղյակ է առաջին հերթին յուրաքանչյուր երկրի ներսում ինստիտուցիոնալ գործելակերպում առկա միջազգային համագործակցության խոչընդոտների եւ համակարգման մեխանիզմների անհրաժեշտության մասին: Առաջարկության մեջ նշվում է, որ հանրային մեղադրողները «*կա՛մ ուղղակիորեն, կա՛մ հուշագրեր ներկայացնելու միջոցով մասնակցում են փոխադարձ իրավական օգնության վերաբերյալ հարցումների կատարմանը վերաբերող բոլոր ընթացակարգերին*»: Ներպետական համակարգերի մեծ մասում հանրային մեղադրողներն ունեն միջազգային համագործակցության ակտիվ մասնակիցների պարտականություններ, իսկ պետության կողմից համագործակցության վերաբերյալ հարցումներ ստանալու դեպքում՝ հանձնման, ձերբակալման մասին որոշումների կամ դատական հանձնառությունների տեսքով այլ պարտականություններ: Այս երկակի պատասխանատվությունը ենթադրում է մի շարք գիտելիքներ համագործակցության բոլոր ասպեկտների եւ ավելի ընդհանուր մակարդակում համակարգման հնարավորությունների մասին:
4. Սույն կարծիքը կազմվել է 2006 թվականի նոյեմբերի 29-ին Նախարարների կոմիտեի կողմից ընդունված ԵՂԳԽՆ-ի աշխատանքների ընդհանուր շրջանակային գործողությունների պլանին⁴ համապատասխան: Այն նպատակ ունի ընդգծելու այն Եական տարրերը, որոնք նպաստում են քրեական գործերով միջազգային համագործակցության եւ դատական փոխօգնության ամրապնդմանը

¹ Rec(2000)19 առաջարկության 1-ին պարբերություն:

² Վարչավա, 2005 թվականի մայիսի 16–17. տե՛ս CM(2005)79 վերջնական եւ CM(2005)80 վերջնական փաստաթղթերը:

³ ԵՂԳԽՆ-ն ավելի ուշ կանոնադրաճանա մարդու իրավունքների հիմնախնդիրների վերաբերյալ հանրային մեղադրողների վերապատրաստման հարցին:

⁴ CCPE(2006)05 Rev փաստաթղթի վերջնական տարբերակ:

դատախազների՝ որպես գործող իրավաբանների եւ այդպիսի համագործակցության հիմնական դերակատարների տեսանկյունից:

5. ԵՂԳԽՆ-ն տեղյակ է, որ քրեական գործերով միջազգային համագործակցության հարցերն այնպիսի կարեւոր հարցեր են, որոնք հետաքրքրում են ոչ միայն դատախազներին: Հանձնման, ձերբակալման մասին որոշումները եւ արտերկրում ապացույցների հավաքումը հիմնականում մեր գործընկերների՝ դատավորների պարտականությունն է, որոնք Եվրոպայի խորհրդում ունեն իրենց ներկայացուցչական մարմինը՝ Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԽՆ): Եվրոպայի խորհրդի շրջանակներում գործում են նաեւ այլ կոմիտեներ, ինչպիսիք են Զրեական հարցերով եվրոպական կոմիտեն (ԶՀԵԿ), որը գործում է մասնավորապես Զրեական գործերով համագործակցության մասին եվրոպական կոնվենցիաների գործողության հարցերով փորձագետների կոմիտեի շրջանակներում, որոնք այս ոլորտում⁵ կարեւոր դերակատարություն ունեն, ինչպես նաեւ Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովը (ԱԼԵԶ):
6. Սույն կարծիքի շրջանակներում ԵՂԳԽՆ-ն հաշվի է առել համընդհանուր եւ տարածաշրջանային իրավական փաստաթղթերը եւ մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի համապատասխան կոնվենցիաները, որոնք ներկայացված են հավելվածում: Հղում է կատարվել նաեւ Միջազգային եւ եվրոպական իրավունքի արդյունավետ կիրառումն ապահովելու գործում ազգային դատավորների դերի վերաբերյալ Եվրոպայի դատավորների խորհրդակցական խորհրդի թիվ (2006) 9 կարծիքին:
7. ԵՂԳԽՆ-ն հաշվի է առել այն տարբեր ֆորումների ժամանակ իրականացված աշխատանքներն ու դրանց արդյունքում ստացված եզրակացությունները, որոնց ժամանակ քաղաքական իշխանությունները, իրավապահ մարմիններն ու դատախազությունների ներկայացուցիչներն անդրադարձել են քրեական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցությանն առնչվող հարցերին. այդ ֆորումներից են մասնավորապես Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գործերով մասնագիտացած հանրային մեղադրողների 1-ին համաեվրոպական համաժողովը (Կասերտե, 2000թ.)⁶, Եվրոպայի գլխավոր դատախազների 7-րդ համաժողովը (Մոսկվա, 2006թ.)⁷ եւ Արդարադատության եւ Ներքին գործերի նախարարների բարձրաստիճան համաժողովը (Մոսկվա, 2006թ.)⁸:
8. Սույն կարծիքը պատրաստելու համար ԵՂԳԽՆ-ն գիտնական-փորձագետի⁹ աջակցությամբ վերլուծել է այս նպատակով կազմված հարցաշարին¹⁰ 30 անդամ պետությունների կողմից տրված պատասխանները: Համապատասխան եզրակացությունը քննարկվել է Զրեական ոլորտում միջազգային համագործակցության թեմայով Եվրոպայի դատախազների համաժողովի (Վարշավա, 2007 թվականի հունիսի 4-5)¹¹ ընթացքում՝ Եվրոպական միության անդամ պետությունների մեծ մասի դատախազական ծառայությունների եւ դատական համագործակցության մարմինների ներկայացուցիչների ներկայությամբ (Եվրաջասթ եւ Զրեական գործերով եվրոպական դատական ցանց):
9. Սույն կարծիքը նախապատրաստելիս ԵՂԳԽՆ-ն ցանկացել է նույնականություն պահպանել Եվրոպայի խորհրդի եւ Եվրոպական միության միջեւ ստորագրված Փոխըմբռնման հուշագրի հետ¹², որի «ընդհանուր առաջնահերթությունները եւ համագործակցության ոլորտները» ներառում են «մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, օրենքի գերակայությունը, իրավական համագործակցությունն ու նոր մարտահրավերների հաղթահարումը»:

ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԱՌԿԱ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Զրեական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության ամրապնդումն ունի կարեւոր նշանակություն որպես պետությունների համայնքի արձագանք միջազգային հանցավորության, ահաբեկչության եւ կոռուպցիայի կողմից հասարակությանը սպառնացող

⁵ Տե՛ս մասնավորապես քրեական ոլորտում միջազգային համագործակցության վերաբերյալ ԶՀԵԿ-ի 56-րդ լիազումար նիստում ընդունված որոշումները (Ստրասբուրգ, 2007 թվականի հունիսի 18-22):

⁶ Կազմակերպված Եվրոպայի խորհրդի կողմից՝ Մաֆիայի դեմ գրասեյակի եւ Նեպոլի II համալսարանի հետ համատեղ ուժերով, Կասերտայում (Իտալիա), 2000 թվականի սեպտեմբերի 8-10:

⁷ Եվրոպայի գլխավոր դատախազների համաժողովի 7-րդ նստաշրջան (Մոսկվա, 2006 թվականի հուլիսի 5-6)՝ կազմակերպված Եվրոպայի խորհրդի կողմից Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության հետ համատեղ՝ «Հանրային մեղադրողների դերն անձանց պաշտպանության հարցում» թեմայով:

⁸ Արդարադատության եւ Ներքին գործերի նախարարների բարձրաստիճան համաժողով (Մոսկվա, 2006 թվականի նոյեմբերի 9-10)՝ «Զրեական արդարադատության ոլորտում եվրոպական համագործակցության ամրապնդումը» թեմայով:

⁹ Տիկին Ջոանա ԳՈՄԵՍ-ՖԵՐԵՅՐԱ, հանրային մեղադրող, Գլխավոր դատախազություն (Պորտուգալիա): Տե՛ս զեկույցը CCPE-BU(2007)12 փաստաթղթում:

¹⁰ CCPE-BU(2006)06 փաստաթուղթ:

¹¹ Եզրակացությունները ներկայացված են CPE(2007)Council 1 փաստաթղթում:

¹² Ստորագրված է Ստրասբուրգում 2007 թվականի մայիսի 23-ին:

վտանգներին: Թեև Նախարարների կոմիտեի՝ 1997 թվականի Առաջարկությունը¹³ հիմնականում առնչվում էր կոռուպցիայի հիմնախնդրին, այն արժանի է այստեղ հիշատակման, քանի որ այն ունի ավելի ընդհանուր կիրառություն. «*կոռուպցիան լուրջ վտանգ է եվրոպայի խորհրդի հիմնարար սկզբունքների եւ արժեքների համար, այն խախտում է քաղաքացիների վստահությունը ժողովրդավարության նկատմամբ, թուլացնում է օրենքի գերակայությունը, առաջացնում է մարդու իրավունքների ժխտում եւ խոչընդոտում է սոցիալական եւ տնտեսական զարգացումը*»:

11. (2000)19 առաջարկությունը համալրվել է քննարկվող ոլորտում արձանագրված մի շարք ձեռքբերումներով.

- հիմնական կոնվենցիաներն ընդունվել են Եվրոպայի խորհրդի շրջանակներում, մասնավորապես՝ Զրեական գործերով փոխադարձ օգնության մասին եվրոպական կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրությունը (CETS No 182), Կիբեռահանցագործությունների մասին կոնվենցիան (CETS No 185) եւ դրա՝ Համակարգչային համակարգերի միջոցով կատարվող ռասիստական եւ քսենոֆոբիական բնույթի արարքների քրեականացման մասին լրացուցիչ արձանագրությունը (CETS No 189), Ահաբեկչության դեմ պայքարի մասին եվրոպական կոնվենցիան փոփոխող արձանագրությունը (CETS No 190), Ահաբեկչության կանխարգելման մասին կոնվենցիան (CETS No 196), Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին կոնվենցիան (CETS No 197) կամ Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների վճարման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (CETS No 198): Բացի այդ, Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի Պալերմոյի կոնվենցիան¹⁴, Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան¹⁵, Միջուկային ահաբեկչական գործողությունների դեմ պայքարի մասին միջազգային կոնվենցիան¹⁶, Եվրոպական միության անդամ պետությունների միջեւ քրեական գործերով փոխադարձ օգնության մասին կոնվենցիան¹⁷ եւ Զաղաքացիական, ընտանեկան եւ քրեական գործերով իրավական օգնության եւ իրավական հարաբերությունների մասին ԱՊՀ կոնվենցիան¹⁸ նույնպես ծառայել են դատական համագործակցությունն ամրապնդելու նպատակին: Ամեն դեպքում պետք է նշել, որ այս հարցով հետաքրքրված ոչ բոլոր պետություններն են վավերացրել նշված կոնվենցիաները, եւ վերոհիշյալ կոնվենցիաներից ոչ բոլորն են դեռեւս ուժի մեջ մտել: Դա թուլացնում է դրանց ազդեցությունն ու դանդաղեցնում դրանց արդյունավետ կիրարկումը գործող իրավաբանների կողմից: Ավելին, Եվրոպայի խորհրդի գործող վերաբերելի փաստաթղթերում առկա թերությունները քննարկվել են Եվրոպայի գլխավոր դատախազների՝ Մոսկվայում տեղի ունեցած համաժողովում:
- Եվրոպական միության շրջանակներում ընդունվել են այնպիսի փաստաթղթեր, ինչպես «Ձերբակալման մասին եվրոպական որոշման եւ անդամ պետությունների միջեւ հանձնման ընթացակարգերի մասին» խորհրդի 2002 թվականի շրջանակային որոշումը, ստեղծվել են նոր մարմիններ, ինչպիսիք են Եվրաջասթը, Փոխգործակցության մագիստրատները եւ Զրեական գործերով եվրոպական դատական ցանցը, որոնք կյանքի են կոչում փոխադարձ ճանաչման սկզբունքը:
- Տարբեր անդամ պետությունների դատական մարմինների¹⁹ միջեւ իրավական փոխօգնության ոլորտում երկկողմանի, տարածաշրջանային կամ միջազգային համաձայնագրերի միջոցով ձեւավորվող ուղղակի շփումները դառնում են առավել սերտ:

12. Սակայն իրական նորարարությունն այս համաձայնագրերով նախատեսված հետագա հնարավորությունների մեջ է: Նշված համաձայնագրերով նախատեսվում է մեկ պետության դատական համակարգից²⁰ մեկ այլ պետության դատական համակարգ տեղեկությունների սպունտան փոխանցումը: Եվրոպական միության անդամ պետությունների մեծ մասում գործող իրավական փաստաթղթերն ազգային դատական համակարգի մարմիններին հնարավորություն են տալիս ներկայացնելու հանցագործությունների մասին հաղորդում եւ փոխանցելու համապատասխան

¹³ Կոռուպցիայի դեմ պայքարի քսան դեկավար սկզբունքների վերաբերյալ (97) 24 բանաձեւ՝ ընդունված Նախարարների կոմիտեի կողմից 1997 թվականի նոյեմբերի 6-ին:

¹⁴ Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիա՝ ստորագրված 2000 թվականի դեկտեմբերի 12-15-ը՝ Պալերմոյի համաժողովի ժամանակ:

¹⁵ Ստորագրվել է 2003 թվականի դեկտեմբերի 9-11-ը՝ Մերիդա քաղաքում (Մեքսիկա) տեղի ունեցած՝ քաղաքական թեմայով բարձրաստիճան համաժողովի ժամանակ:

¹⁶ Ընդունվել է 2005 թվականի ապրիլի 13-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 91-րդ լիագումար նիստի ժամանակ՝ A/RES/59/290 բանաձեւով:

¹⁷ Սահմանվել է խորհրդի 2000 թվականի մայիսի 29-ի ակտով՝ «Եվրոպական միության մասին» պայմանագրի 34-րդ հոդվածի հիման վրա:

¹⁸ Ստորագրվել է Չիսինաու քաղաքում (Մոլդովա)՝ 2002 թվականի հոկտեմբերի 7-ին:

¹⁹ «Դատական մարմիններ» արտահայտությունն այստեղ օգտագործվում է լայն իմաստով՝ բնորոշելու դատավորներին, հանրային մեղադրողներին եւ բարձրաստիճան իրավապահ պաշտոնյաներին, որոնք պատասխանատու են քրեական գործերով միջազգային դատական համագործակցության ապահովման համար:

²⁰ Տե՛ս նախորդ հղումը:

տեղեկություններ: Նախարարների կոմիտեն ողջունել է այս պրակտիկան Rec(2000)19 առաջարկության մեջ, համաձայն որի «...եւ վերջապես, անհրաժեշտ է քննարկել տարբեր երկրների հանրային մեդադորողների միջեւ տեղեկությունների սպունտան փոխանակմանը նպաստող առկա մեխանիզմների ընդլայնման հնարավորությունները»²¹:

13. Ներկայումս անհրաժեշտ է դիտարկել այդ նորարարություններին տրվող պրակտիկ արձագանքները, մասնավորապես այն հանգամանքը, թե արդյոք նշված միջազգային համաձայնագրերը հանգեցրել են անլոյալ պետությունների ներպետական օրենքներում եւ պրակտիկայում էական փոփոխությունների, թե՛ ոչ եւ վերջապես, արդյո՞ք հանրային մեդադորողները կիրառում են այս նոր փաստաթղթերը եւ եթե այո, ապա որքանով, եւ արդյո՞ք նրանք տեղյակ են տեղի ունեցած փոփոխություններից:
14. ԵՂԻԽԿ կողմից կատարված նախնական ուսումնասիրություններից²² երևում է, որ դեռևս 90-ականներից սկսած՝ բարելավվել է միջազգային համագործակցությունը՝ երբեմն համագործակցության միջոցով ձեռք բերված պրագմատիկ լուծումների եւ նշված գործընթացի դերակատարների միջեւ անմիջական շփումների շնորհիվ: Որոշ երկրներ ընդգծում են համապատասխան դերակատարների մոտ մասնագիտացման զարգացումը եւ փոխադարձ իրավական աջակցության համակարգի շրջանակներում առաջարկվող հնարավորությունների վերաբերյալ ավելի սահուն ներքին տեղեկատվությունը:
15. Այնուամենայնիվ, շատ տարբեր համարվում են քրեական գործերով փոխադարձ իրավական աջակցության համար անհրաժեշտ զարգացմանը խոչընդոտող եւ ներկայիս միջազգային համագործակցության գործընթացի չափազանց ձգձգման պատճառ, մասնավորապես՝
 - իրավական համագործակցության համաեվրոպական մեխանիզմները ոչ միշտ են համապատասխանում ներկայիս մարտահրավերներին եւ պահանջներին.
 - օգնության վերաբերյալ հարցումների կազմումը (օրինակ՝ չափից շատ կրճատ կամ շատ մանրամասներ պարունակող, առանց ստորագրության կամ ոչ բավարար չափով ուսումնասիրված, սխալ թարգմանված, ոչ ճշգրիտ կամ համապատասխան ընթացակարգին չհամապատասխանող եւ այլն) կարող է խաթարել համագործակցության գործընթացը. այս թերությունները հիմնականում բացատրվում են պատրաստվածության պակասով, ընթացակարգերի բարդությամբ, տրամադրված ռեսուրսների պակասով.
 - օգնության վերաբերյալ հարցումների փոխանցումը հաճախ իրականացվում է դիվանագիտական ուղիներով, թեեւ Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին եվրոպական կոնվենցիան (CETS No 30) եւ դրա Երկրորդ լրացուցիչ արձանագրությունը (CETS No 182) հնարավոր են դարձնում իրավասու դատական մարմինների միջեւ անմիջական կապը՝ հարցումներ ներկայացնելու եւ իրականացնելու համար. տեղեկությունների (իրավասու մարմինների վերաբերյալ տվյալներ) պակասի պատճառով փոխօգնության վերաբերյալ հարցումները հաճախ անցնում են կենտրոնական մարմինների ձեռքի տակով. ավելին, միաժամանակ հաղորդակցման տարբեր ուղիների օգտագործումը համագործակցության ընթացակարգի սահուն իրականացման համար խանգարող գործոն է.
 - իրավական փոխօգնության վերաբերյալ հարցումների քանակի աճն այնպիսի գործոն է, որը նպաստում է ընթացակարգերի կաթվածահար լինելուն, քանի որ հարցում ստացած մարմինները շարունակաբար ժամանակը վատնում են երբեմն քիչ կարեւորություն ունեցող գործերի վերաբերյալ հարցումները բավարարելու վրա.
 - ինչ վերաբերում է փոխօգնության վերաբերյալ հարցումների բավարարմանը, ապա դատական համագործակցության եվրոպական մշակույթի բացակայությունը եւ պրակտիկ առումով դիմադրելիության որոշակի աստիճանը հանգեցնում են համագործակցության այնպիսի ընթացակարգերի, որոնք կանոնավոր կերպով դուրս են մղվում ներքին ընթացակարգերով:
16. Սակայն լուրջ դժվարությունները պայմանավորված են իրավական համակարգերի միջեւ առկա տարբերություններով: Ապացույցների ձեռքբերման միջոցները, կրկնակի քրեական պատասխանատվության հիմնախնդիրը կամ *ne bis in idem* (Նույն արարքի համար կրկին անգամ չդատվելու) սկզբունքը, հարցում ներկայացնող մարմնի իրավասությունը կամ *in absentia* (կողմի բացակայության պայմաններում) դատավճիռների կայացման համակարգն այն հայեցակետերի եւ ընթացակարգերի հիմնական օրինակն են, որոնց դեպքում ավելի շահավետ կլիներ միջազգային մակարդակում միմյանց հետ ավելի համաձայնեցված լինելը՝ համակարգերի միջեւ միջազգային համագործակցությանը նպաստելու համար: Այս համակարգերի վերաբերյալ ավելի լավ փոխադարձ գիտելիքները նույնպես հնարավորություն կտան նպաստելու այդ համագործակցությանը:

²¹ 39-րդ առաջարկության վերաբերյալ մեկնաբանություններ:

²² Կերելում հիշատակված CCPE-BU (2007)12 զեկույց:

17. Այսպիսի դժվարություններն առավել զգալի են հանձնմանն առնչվող հարցերի դեպքում: Օրինակ՝ քաղաքական հիմքերի հիշատակումից հետո հանձնման ընթացակարգերի չեղարկման դեպքեր, նույն իրավական գաղափարի տարբեր մեկնաբանություններ կամ քաղաքացիների հանձնման անհնարինության դեպքի կրկնություն:
18. Մեկ այլ՝ ընդհանուր առմամբ քննադատության ենթակա բացասական կողմն առանց օբյեկտիվ պատճառի ուշացումներն են: Տվյալ դեպքում խոսվում է ոչ թե կառուցվածքային կամ իրավական խնդիրների մասին, այլ առանց իրավական բնույթի բարդությունների՝ պարզապես մասնագիտական գործառույթների չկատարման մասին:
19. Այդ իսկ պատճառով պետք է ձեռավորվեն այնպիսի միջոցներ եւ մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան ստեղծելու քրեական գործերով դատական համագործակցության համընդհանուր մշակույթ ինչպես կենտրոնական իշխանությունների, այնպես էլ այդ համագործակցության մեջ ներգրավված առանձին դերակատարների մակարդակով:
20. Այս կապակցությամբ ԵՂԳԽՆ-ն վկայակոչում է, որ Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գործերով մասնագիտացած հանրային մեղադրողների առաջին համաեվրոպական համաժողովը²³ ձեռակերպել է հետեւյալ առաջարկություններն ու առաջարկել «կազմակերպել հանրային մեղադրողների միջեւ առավել կառուցվածքային շփումներ եւ տեղեկությունների փոխանակում» եւ «Եվրոպայի խորհրդին» կոչ է արել «քիչ թվով հանրային մեղադրողներից կազմելու փոխգործակցության խումբ, ոչ պաշտոնապես ստեղծելու կապեր եւ կազմակերպելու տեղեկատվության փոխանակում հանրային մեղադրողների միջեւ՝ ընդհանուր առմամբ լրացնելով առկա պայմանավորվածությունները, մասնավորապես՝ կազմակերպված հանցավորության տարրեր պարունակող գործերով մասնագիտացած հանրային մեղադրողների միջեւ»՝ միաժամանակ նշելով, որ «պետք է կապեր հաստատվեն Եվրոպայի խորհրդի փոխգործակցության խմբի եւ Եվրաջառաթի միջեւ (...)»:
21. Միաժամանակ Եվրոպայի արդարադատության նախարարները եւ ներքին գործերի նախարարները, որոնք հանդիպել էին 2006 թվականի նոյեմբերին Մոսկվայում²⁴, սատարում էին այն միտքը, որ «պետք է ստեղծվի ազգային մակարդակով կոնտակտային կետերի ցանց՝ նպաստելու միջազգային դատական համագործակցության պատասխանատուների միջեւ շփումներին, հատկապես ահաբեկչության, կոռուպցիայի եւ կազմակերպված հանցավորության, մարդկանց թրաֆիքինգի եւ կիբեռհանցագործությունների դեմ պայքարի ոլորտներում»:

ԵՂԳԽՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՅՑՈՒՆՆԵՐԸ

22. ԵՂԳԽՆ-ն ընդգծեց քրեական գործերով միջազգային համագործակցության մասով իրականացված հիմնական բարելավումները, որոնք վերաբերում են վերջին տարիներին ընդունված եվրոպական եւ միջազգային փաստաթղթերին, այս համագործակցության դերակատարների միջեւ փոխանակումները հեշտացնելու համար ստեղծված ինստիտուցիոնալ կառույցներին, ինչպես նաեւ գործող մասնագետների միջեւ ձեռավորված արդյունավետ շփումներին: ԵՂԳԽՆ-ն խրախուսում է Եվրոպայի խորհրդի համապատասխան մարմիններին եւ անդամ պետություններին շարունակելու գործադրել եւ ակտիվացնելու իրենց ջանքերը՝ անդամ տարբեր պետությունների միջեւ եւ նույնիսկ դրանցից դուրս քրեական ոլորտում համագործակցության իրական եվրոպական իրավական մշակույթի զարգացման համար ինստիտուցիոնալ, նորմատիվ եւ միջանձնային պայմաններ ստեղծելու համար:

Միջազգային համագործակցության նորմատիվ շրջանակների ուղղությամբ տարվող աշխատանքները

23. Միջազգային համագործակցության նորմատիվ շրջանակն ամրապնդելու եւ դատական ոլորտի՝ փոխօգնության կոնկրետ կիրառման պարտականություններով օժտված գործող մասնագետների ամենօրյա աշխատանքների բարելավումն ապահովելու նպատակով ԵՂԳԽՆ-ն կոչ է անում, որ չափազանց կարեւոր է, որ համապատասխան կոնվենցիաները, իսկ ավելի հստակ, սույն կարծիքի 11-րդ կետում նշված կոնվենցիաներն անհապաղ վավերացվեն եւ արդյունավետորեն կիրառվեն շահագրգիռ պետությունների, մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից:
24. Բացի այդ, ԵՂԳԽՆ-ն ամբողջությամբ սատարում է PC-OC-ի շրջանակներում իրականացվող ընթացիկ աշխատանքները, որոնք ուղղված են Եվրոպայի խորհրդի համապատասխան փաստաթղթերի արդիականացմանը: Ելնելով Եվրոպայի գլխավոր դատախազների 7-րդ համաժողովի ժամանակ ձեռավորված կարծիքներից (Մոսկվա, 2006թ.)²⁵ ԵՂԳԽՆ-ն կոչ է անում

²³ Տե՛ս վերելում:

²⁴ Տե՛ս վերելում:

²⁵ Տե՛ս վերելում:

Նախարարների կոմիտեին եւ Եվրոպայի խորհրդի համապատասխան կոմիտեներին շարունակելու առաջնահերթությունը տալ հանձնման, փոխօգնության եւ քրեական վարույթների փոխանցման վերաբերյալ փաստաթղթերի թարմացման ուղղությամբ տարվող աշխատանքներին՝ համակարգերի միջեւ փոխադարձ վստահության եւ հուսալիության վրա հիմնված համագործակցության ավելի ճկուն ընթացակարգեր ստեղծելու նպատակով, արագացնելու անձանց հանձնման գործընթացը՝ այդ գործընթացը պարզեցնելու միջոցով՝ հիմնվելով այն անձանց համաձայնության վրա, որոնց վերաբերյալ ներկայացվել է հանձնման վերաբերյալ հարցումը, եւ որոնց հիմնարար իրավունքներն ամբողջովին երաշխավորվում են:

25. Այս կապակցությամբ ԵՂԳԽՄ-ն կոչ է անում Նախարարների կոմիտեին դիտարկել քրեական գործերով միջազգային համագործակցության մասին Եվրոպայի խորհրդի համապարփակ կոնվենցիա²⁶ մշակելու հարցը:
26. ԵՂԳԽՄ-ն նաեւ կոչ է անում անդամ պետությունների օրենսդիր մարմիններին ուսումնասիրելու միջազգային համագործակցության արդյունավետ իրականացմանն ուղղված ներպետական ընթացակարգերը պարզեցնելու հնարավորությունն այնպես, որ այդ ընթացակարգերի ծավալը չխոչընդոտի համագործակցության վերաբերյալ հարցումների կատարումը, մասնավորապես՝ հանձնման ընթացակարգերի մասով: Ցանկացած դեպքում այդպիսի պարզեցված ընթացակարգերով պետք է պահպանվի խնդրո առարկա անձի իրավունքների նկատմամբ լիարժեք հարգանքը:

Միջազգային համագործակցության որակի բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքները

27. Հիմնվելով Rec(2000)19 առաջարկության (մասնավորապես 38-րդ հոդվածի) վրա, Եվրոպայի դատավորների խորհրդակցական խորհրդի (ԵԴԽՄ)՝ դատավորների՝ ներպետական եւ եվրոպական մակարդակներով նախնական եւ ընթացիկ պատշաճ վերապատրաստման մասին թիվ 4(2003) կարծիքի²⁷ եւ Միջազգային ու եվրոպական իրավունքի արդյունավետ կիրառումն ապահովելու հարցում ներպետական դատավորների դերի մասին թիվ 9(2006) կարծիքի²⁸ վրա, ինչպես նաեւ Վարշավայում տեղի ունեցած՝ Եվրոպայի դատախազների համաժողովի եզրակացությունների²⁹ վրա՝ ԵՂԳԽՄ-ն կոչ է անում մեծապես ընդլայնելու միջազգային դատական համագործակցության մեջ ներգրավված դատախազների եւ այդպիսի համագործակցության մեջ ներգրավված այլ մասնակիցների վերապատրաստման գործընթացը: Միջազգային համագործակցության թեմայով լավարկված մասնագիտական վերապատրաստման ժամանակ պետք է հաշվի առնել ոչ միայն տվյալ թեմայով առկա գործող կոնվենցիաները, այլ նաեւ գոյություն ունեցող կազմակերպությունների եւ համակարգերի կողմից հավաքված գործառնական տեղեկությունները: Այն պետք է գործող մասնագետներին տա փոխօգնության վերաբերյալ իրենց հարցումներն ավելի բարձր որակով կազմելու եւ իրենց հասցեագրված հարցումներն ավելի լավ հասկանալու եւ կատարելու հմտություններ: Կարող են գործադրվել միջազգային դատական համագործակցության մեջ ներգրավված դերակատարների իրազեկությունը բարձրացնելուն ուղղված ջանքեր՝ բարելավելու համար նրանց ունեցած հմտություններն այնպես, որ կարողանան առավել ճշգրիտ ձեւակերպել օգնության վերաբերյալ իրենց հարցումները եւ նվազեցնել երրորդ համակարգի՝ քիչ կարելորդություն ունեցող գործերի վերաբերյալ հարցումներով ծանրաբեռնումը:
28. Երբեմն անհրաժեշտ չէ կամ նույնիսկ անհնար է, որ յուրաքանչյուր դատախազ կամ դատավոր լավ տիրապետի համապատասխան միջազգային փոստաթղթերին կամ փոխանցման ուղիներին: Բայց շատ կարեւոր է, որ նրանցից ոմանք լինեն տվյալ հարցերով մասնագետներ եւ այդպիսով, լինեն հատուկ վերապատրաստում անցած: Հետեւաբար ԵՂԳԽՄ-ն առաջարկում է, որ յուրաքանչյուր անդամ պետությունն ստեղծի համապատասխան համակարգ, որը կերաշխավորվի այդպիսի մասնագիտացումը:
29. Զրեական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության վրա շեշտը դնող

²⁶ 2007 թվականի հունիսի 18-ին Զրեական հարցերով եվրոպական կոմիտեի (ԶԶԵԿ) 56-րդ նստաշրջանի իր բացման խոսքում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղար Թ. Դեվիան առաջարկեց այս նախաձեռնությանն անդրադառնալ մոտ տաս տարի հետո. «Նպատակը կլինի քրեական գործերով միջազգային համագործակցության վերաբերյալ մեր բոլոր գործող կոնվենցիաները նորացնելը, առավել արդյունավետ դարձնելն ու մեկ ընդհանուր «տանիքի» տակ հավաքելը: Գիտեմ, որ սա երկարաժամկետ, հավակնոտ եւ միգուցե, հակասական նախագիծ է, բայց չեմ կարծում, որ հնարավոր է խոսել չափից ավելի հավակնոտ լինելու մասին, երբ խոսքը վերաբերում է հանցավորության դեմ պայքարին»: Այդպիսի կոնվենցիայի նախագիծ մշակվել էր տարիներ առաջ, սակայն այն ընթացք չէր ստացել այդ ժամանակ:

²⁷ Տե՛ս մասնավորապես Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽՄ) թիվ (2003) 4 կարծիքի 43-րդ եւ 44-րդ պարբերությունները:

²⁸ Տե՛ս մասնավորապես Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽՄ) թիվ (2006) 9 կարծիքի 7-րդ, 8-րդ եւ 11-րդ պարբերությունները:

²⁹ «Հաշվի առնելով, որ մարդկային գործունը շատ կարեւոր է միջազգային համագործակցության ամրապնդման եւ դրանից լիարժեք օգտվելու համար՝ Համաժողովը, ուշադրություն դարձնելով այն կարեւորությանը, որը Rec(2000)19 առաջարկությամբ տրվում է դատախազների վերապատրաստմանը, խստագույնս ընդգծում է, որ պետք է ապահովվի նմանատիպ վերապատրաստում, մասնավորապես՝ միջազգային հանցավորության զարգացման հետ համաքայլ լինելու նպատակով»:

վերապատրաստումը պետք է ներառի մարդու իրավունքների վերաբերյալ վերապատրաստումներ դատավորների և դատախազների, ինչպես նաև պաշտպանությունն իրականացնող փաստաբանների համար: Ի լրումն մարդու իրավունքների վերաբերյալ օրենքների հիմնական տարրերի ընդհանուր ուսումնասիրության՝ կարելու է հստակորեն սահմանել այն հիմնական իրավունքներն ու համապատասխան չափանիշները, որոնք անմիջականորեն վերաբերում են քրեական գործերով միջազգային օգնության վերաբերյալ հարցումների իրականացման հետ կապված քրեական վարույթներում ներգրավված անձանց: Սա կհանգեցնի օրենքի յուրաքանչյուր համապատասխան աղբյուրի վերաբերյալ մեկնաբանությունների, քանի որ կիրառվող իրավունքներն ու չափանիշները տարբերվում են ըստ համագործակցության ձեւերի: Այդպիսի մեկնաբանությունները կամ մասնագիտացված փաստաթղթերը պետք է նաև հիմնված լինեն գերակայող պրակտիկայի և նախադեպային իրավունքի վրա:

30. Այս գիտելիքը պետք է տարածվի համապատասխան միջոցներով և վերապատրաստումներ կազմակերպող կազմակերպությունների, մասնավորապես՝ դատական և դատախազական վերապատրաստման ազգային հաստատությունների միջոցով: Դատական և դատախազական վերապատրաստումներ կազմակերպող համապատասխան եվրոպական մարմինները, ինչպիսիք են Եվրոպայի խորհրդի Լիսաբոնի ցանցը և Եվրոպական դատական ուսուցման ցանցը, նույնպես կարող են առաջատար դեր խաղալ այս համատեքստում:
31. Այս վերապատրաստումը պետք է լրացվի նաև օտար լեզուների ուսուցմամբ, մասնավորապես՝ նպաստելու համար գործող մասնագետների միջև անմիջական շփումների բարելավմանը, նրանց կողմից կազմված օգնության վերաբերյալ հարցումների որակի բարձրացմանը և նրանց հասցեագրված հարցումների ավելի լավ ընկալմանը:
32. Բացի այդ, ԵՂԳԽՆ-ն առաջարկում է, որ ներպետական իրավասու մարմինները գործող մասնագետների համար մշակեն անհրաժեշտ տեղեկատվական գործիքներ: Մասնավորապես խոսքը վերաբերում է դատական փոխօգնության վերաբերյալ ձեռնարկների կազմման օգտակարությանը, որոնք կպարունակեն տարատեսակ տեղեկություններ ազգային քննության համակարգերի մասին, ինչպես օրինակ՝ այսպես կոչված Fiches belges-ը³⁰, որը քրեական գործերով Եվրոպական դատական ցանցն օգտագործում է որպես աշխատանքային գործիք, և որը հեշտացնում է պետությունների իրավական համակարգերի ըմբռնումը: Կարող են մշակվել, թարմացվել և գործող մասնագետների շրջանում տարածվել, այդ թվում՝ համացանցի միջոցով, կիրառելի մեխանիզմները, լավ գործելակերպերի համառոտ նկարագրերն ու բազմալեզու ձեւերն ամփոփող շրջաբերականներ կամ ուղեցույցներ, որոնք ուղղված են օգնության առավել սովորական միջոցառումները միատեսակ դարձնելուն և դրանց իրականացմանը նպաստելուն:

Ըստ անհրաժեշտության՝ այս գործընթացը պետք է իրականացվի ԵՂԳԽՆ աջակցությամբ: Այս համատեքստում ԵՂԳԽՆ-ն վկայակոչում է, որ Եվրոպայի արդարադատության և ներքին գործերի նախարարները 2006 թվականի նոյեմբերին Մոսկվայում³¹ հավանության են արժանացրել այն միտքը, որ «անդամ պետություններում կիրառվող համագործակցության տարբեր ձեւերի ընթացակարգերի տվյալների բազայի ձեւավորումը կնպաստի այդ տվյալների ավելի հեշտ հասանելիությանը», և վերահաստատում է իր աջակցությունն այս առաջարկին: Վերոնշյալ գործիքները կարող են փոխանցվել Եվրոպայի խորհրդին՝ տվյալների այդպիսի բազան հարստացնելու նպատակով:

33. Ինչ վերաբերում է դատախազների մասնագիտական վերապատրաստմանն ու տեղեկատվությանը, ապա ԵՂԳԽՆ-ն նույնպես կարող է դերակատարություն ունենալ անդամ պետություններից մասնագիտացված դատախազների հանդիպումները կազմակերպելու հարցում, ինչպես օրինակ՝ վերոնշյալ Կասերտայի համաժողովը. ըստ անհրաժեշտության՝ այդ հանդիպումները կարող են կազմակերպվել Եվրոպայի խորհրդի շրջանակներում այլ շահագրգիռ մարմինների հետ համագործակցությամբ և Եվրոպական ու միջազգային այլ համապատասխան կառույցների ու կազմակերպությունների հետ գործընկերությամբ:
34. Իրավական փոխօգնության վերաբերյալ հարցումների փոխանցման արդյունավետությունը և դրանց արձագանքման մեթոդը կախված է նաև փոխանցման մեթոդների զարգացումից: ԵՂԳԽՆ-ն ընդգծում է, որ նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կողմից առաջարկվող հնարավորությունները կարող են լայնորեն կիրառվել մասնավորապես անվտանգ էլեկտրոնային ուղիների միջոցով փոխանակումը դյուրացնելու համար՝ պայմանով, որ պահպանվեն փաստաթղթերի գաղտնիության և իսկության սկզբունքները:

Գործող իրավաբանների միջև փոխանակման ընդլայնումը

³⁰ Այսպես կոչված «Fiches belges»-ը դատական փոխօգնության մեջ ներգրավված գործող մասնագետներին տրամադրում է ամբողջ օգտակար տեղեկությունները Եվրոպական միության պետությունների օրենսդրության և դրանց տարածքում գործող այն կազմակերպության մասին, որի հետ նախատեսվում է իրականացնել դատական համագործակցություն:

³¹ Տե՛ս վերևում:

35. Եվրոպայի խորհրդի մակարդակով ԵՂԳԽՄ-ն Նախարարների կոմիտեին կոչ է անում անդրադառնալու քրեական գործերով Եվրոպական դատական ցանցի եւ Եվրաջասթի օրինակով կառուցվածքային համագործակցության եւ տեղեկությունների փոխանակման արդիականությանը, ինչը մասնավորապես Եվրոպական միության այդպիսի մարմինների անդամ չհանդիսացող պետություններին հնարավորություն կտա օգտվելու նմանատիպ ծառայություններից՝ Եվրոպայի խորհրդի համապատասխան փաստաթղթերի հիման վրա:
36. Եվրոպայի խորհրդի եւ Եվրոպական միության միջեւ կնքված փոխըմբռնման հուշագրով³² նախատեսված փաստարկների եւ պարտավորությունների հիման վրա կարող է ձեւավորվել Եվրոպայի խորհրդին ֆորմալ եւ ոչ ֆորմալ միջնորդական դերակատարություն շնորհելու վերաբերյալ մեկ հավանական մոտեցում՝ նախատեսված այն դեպքերի համար, երբ առաջանում են քրեական արդարադատության ոլորտի շրջանակներում համագործակցության հետ կապված խնդիրներ:
37. Զվիճարկելով փոխանցման անմիջական եւ ապակենտրոնացված ուղիները՝ անդամ երկրները կարող են նաեւ դիտարկել յուրաքանչյուր երկրում ազգային իրավական համակարգի համապատասխան մակարդակով «մասնագիտացված ստորաբաժանում» նշանակելու հարցը, որին վստահված կլինի հարցում ներկայացնող եւ հարցում ստացող պետությունների գործող մասնագետների առջեւ դատական օգնության վերաբերյալ հարցումների մասով ծառայած դժվարություններին լուծում տալու գործընթացին օգնելը: Այդ ստորաբաժանմանը կվստահվի մասնավորապես այն խնդիրներով զբաղվելու պարտականությունը, որոնք խոչընդոտում են օգնության մասով իրականացվող ընթացակարգերը կամ դանդաղեցնում են դրանք:
38. ԵՂԳԽՄ-ն նաեւ կոչ է անում անդամ պետություններին ուժեղացնելու քրեական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության հարցում պատրաստակամությունը եւ նպաստելու գործող իրավաբանների լիարժեք եւ անմիջական մասնակցությանը: ԵՂԳԽՄ-ն անդամ երկրներին առաջարկում է կազմել կոնտակտների եւ հասցեների ցանկ՝ նշելով համապատասխան կոնտակտային անձանց անունները, ինչպես նաեւ նրանց մասնագիտացման ոլորտները, նրանց պատասխանատվության շրջանակներում ներառված ոլորտները եւ այլն, եւ հրապարակել այս ցանկը սահմանափակ հասանելիություն ունեցող ինտերնետային կայքում, որը կարող է կառավարվել Եվրոպայի խորհրդի կողմից: Այդ ցանկը պետք է պարբերաբար թարմացվի պետությունների կողմից, որպեսզի ապահովվի համակարգի արդյունավետությունը: Պահպանելով կոնվենցիաների հետ համապատասխանությունը՝ սա հնարավորություն կտա անմիջական փոխանակումներ կատարելու գործող մասնագետների միջեւ՝ առանց դիվանագիտական ուղիներով անցնելու, որոնք կարող են ծանր ընթացակարգեր լինել:
39. Բացի այդ, ԵՂԳԽՄ-ն գտնում է, որ փոխգործակցության հարցերով դատավորների/դատախազների փոխանակումը պետությունների միջեւ, ինչը խրախուսվում է Rec(2000)19 առաջարկության 38-րդ հոդվածով, լավ գործելակերպ է, որը պետք է հնարավորինս զարգացնել, քանի որ այն հեշտացնում է ազգային արդարադատության համակարգերի միջեւ շփումները, խթանում է այդ համակարգերի վերաբերյալ առավել փոխադարձ գիտելիքները եւ հետեւաբար նպաստում է միջազգային համագործակցության դերակատարների միջեւ փոխադարձ վստահության եւ հուսալիության մակարդակի բարձրացմանը:
40. ԵՂԳԽՄ-ն առաջարկում է, որ դատախազությունները խթանեն փոխադարձ համագործակցությունը նաեւ հարցումների մշակման եւ կատարման փուլում՝ ըստ անհրաժեշտության:

Երրորդ պետությունների եւ միջազգային քրեական դատարանների հետ համագործակցության ընդլայնումը

41. Եվրոպայի խորհրդի գործունեության շրջանակներում քրեական գործերով միջազգային համագործակցության մասով մեծ ուշադրություն պետք է դարձնել միջազգային քրեական դատարանների հետ համագործակցության ընթացքում ծագող խնդիրներին: Այդպիսի մոտեցմամբ պետք է նաեւ հաշվի առնել միջազգային քրեական դատարանների հետ անդամ պետությունների լիարժեք համագործակցությունն ապահովելու համար անհրաժեշտ ջանքերը՝ համապատասխան անդամ պետությունների կողմից այդ դատարանների իրավասության իրավական ճանաչման պայմանով:
42. Պետք է նաեւ ավելի շատ հաշվի առնել, որ Եվրոպայի խորհրդի համապատասխան կոնվենցիաները կիրառելի են նաեւ որոշ ոչ Եվրոպական երկրների նկատմամբ:
43. Երրորդ երկրների հետ անդամ պետությունների համագործակցության իրավական հիմքերն ընդլայնելու նպատակով ԵՂԳԽՄ-ն Նախարարների կոմիտեին առաջարկում է դիտարկել Եվրոպայից դուրս որոշ պետությունների կողմից Հանձնման մասին Եվրոպական կոնվենցիային եւ Քրեական

³² Տե՛ս այդ Հուշագրի 29-րդ պարբերությունը:

գործերով փոխադարձ օգնության մասին եվրոպական կոնվենցիային ու դրանց արձանագրություններին միանալու հարցը:

Միջազգային համագործակցության իրականացման նպատակով հատկացված ռեսուրսների հետ տարվող աշխատանքները

44. ԵՂԳԽՆ-ն անդամ պետությունների կառավարություններին առաջարկում է հատկացնել համապատասխան ֆինանսական, նյութական և մարդկային ռեսուրսներ, որպեսզի քրեական գործերով միջազգային համագործակցությունը հնարավոր լինի ընդլայնել ինչպես քանակական, այնպես էլ որակական առումներով, մասնավորապես՝ դատարանների և դատախազությունների մակարդակով: Այդպիսի ջանքերը պետք է հիմնականում ուղղված լինեն քրեական գործերով դատական փոխօգնություն ցուցաբերելու համար համապատասխան դատարաններում մասնագիտացված դատավորներ և դատախազներ նշանակելու հարցի դիտարկմանը: Այդ ջանքերը պետք է նաեւ գործող մասնագետներին թույլ տան անհրաժեշտ ժամանակ հատկացնել հարցումներին պատշաճ կերպով արձագանքելուն՝ կապված թե՛ դրանց կազմման և թե՛ դրանց պատասխանելու հետ: Վերջապես պետք է ռեսուրսներ հատկացվեն միջազգային համագործակցության լեզվաբանական որակը բարելավելու համար՝ դատարաններին և դատախազությանը համապատասխան գրավոր և բանավոր թարգմանչական միջոցներ տրամադրելու միջոցով:

ԵՂԳԽՆ-ի հասանելիությունն այլ մարմինների հետ համագործակցության համար

45. Անհրաժեշտության դեպքում ԵՂԳԽՆ-ն պատրաստ է համագործակցելու ցանկացած այդպիսի նախաձեռնության հետ: Այն վերահաստատում է իր լիակատար հասանելիությունն առաջին հերթին Եվրոպայի խորհրդի շրջանակներում այլ համապատասխան կոմիտեների, ինչպես նաեւ այլ համապատասխան եվրոպական և միջազգային կառույցների ու կազմակերպությունների հետ աշխատելու համար: Դատախազական ծառայությունները, որոնք մասնագիտորեն ավելի լավ էին պատրաստված այդպիսի հարցերով զբաղվելու համար, կարող էին դառնալ «միջազգային համագործակցության շահերի պաշտպաններ», ինչպես նշված է Rec(2000)19 առաջարկության մեջ³³:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Քրեական ոլորտում համագործակցության իրական եվրոպական իրավական մշակույթի զարգացման համար ինստիտուցիոնալ, նորմատիվ և միջանձնային պայմանները բարելավելու նպատակով ԵՂԳԽՆ-ն Նախարարների կոմիտեին և Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին առաջարկում է՝

- բարելավել միջազգային համագործակցության նորմատիվ շրջանակները հետեւյալ ուղղություններով.
 - նախապատվությունը շարունակաբար տալով քրեական արդարադատության ոլորտում գործող եվրոպական կոնվենցիաների, հատկապես Յանձնման մասին եվրոպական կոնվենցիայի թարմացմանը,
 - արագացնելով համապատասխան կոնվենցիաների վավերացումը և արդյունավետ կիրառումը և ձգտելով պարզեցնելու փոխօգնության ներպետական ընթացակարգերը.
- բարձրացնել միջազգային համագործակցության որակը հետեւյալ ուղղություններով.
 - դատախազների, ինչպես նաեւ միջազգային դատական համագործակցության այլ դերակատարների վերապատրաստման համապատասխան ծրագրերի մշակում,
 - յուրաքանչյուր անդամ պետությունում այնպիսի համապատասխան կառույցի ստեղծում, որը կերաշխավորի որոշ դատախազների և դատավորների մասնագիտացումը միջազգային համագործակցության հարցերով,
 - միջազգային քրեական վարույթներում կիրառելի մարդու իրավունքների և չափանիշների մասին պարբերաբար թարմացվող մասնագիտացված փաստաթղթերի կամ մեկնաբանությունների ընդունում,
 - գործող մասնագետներին դատական համակարգերի և ընթացակարգերի վերաբերյալ փոխադարձ տեղեկատվական գործիքների տրամադրում, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի շրջանակներում տվյալների բազայի ստեղծման միջոցով,
 - տարբեր անդամ պետությունների գործող մասնագետների համար միմյանց հետ հանդիպելու և փոխանակում իրականացնելու հնարավորությունների ընդլայնում, մասնավորապես՝ դատախազների համար նախատեսված մասնագիտական «երկխոսության» և սեմինարների միջոցով,
 - փոխօգնության վերաբերյալ հարցումների փոխանցման և տեղեկատվական նոր տեխնոլոգիաների միջոցով դրանց արձագանքելու մեթոդների բարելավում, ինչպես նաեւ հարցումների որակի բարձրացում՝ դրանց կազմման և դրանց շրջանակում օտար լեզվի

³³ Տե՛ս 3-րդ պարբերությունը:

- անհրաժեշտության մասով,
 - տեղեկությունների սպունտան եւ անմիջական փոխանցման գործընթացի դյուրացում.
- ընդլայնել գործող իրավաբանների միջեւ փոխանակումը՝ հետեւյալ ուղղություններով.
 - Եվրոպայի խորհրդի մակարդակով համակարգված համագործակցության եւ տեղեկությունների փոխանակման համակարգի ստեղծում, որն իրականացվելու է Եվրոպական դատական ցանցի եւ Եվրաջասթի միջոցով,
 - յուրաքանչյուր երկրում ազգային իրավական համակարգի համապատասխան մակարդակով «մասնագիտացված ստորաբաժանման» ստեղծում, որին վստահված կլինի հարցում ներկայացնող եւ հարցում ստացող պետությունների գործող մասնագետների առջեւ դատական օգնության վերաբերյալ հարցումների մասով ծառայած դժվարութ-յուններին լուծում տալու գործընթացին օգնելը,
 - կոնտակտային տվյալների եւ հասցեների ցանկի ստեղծում, որտեղ նշված են համապատասխան կոնտակտային անձանց անունները, ինչպես նաեւ նրանց մասնագիտացման ուղղությունը, պատասխանատվության շրջանակում ընդգրկված ոլորտը եւ այլն, ինչպես նաեւ այս ցանկի տպագրումը Եվրոպայի խորհրդի կողմից կառավարվող կայքում,
 - փոխգործակցության հարցերով դատավորների/դատախազների միջեւ փոխանակում-ների զարգացում,
 - փոխօգնության վերաբերյալ հարցումներ կազմելու եւ դրանք կատարելու փուլում համագործակցություն.
 - Եվրոպայի խորհրդի շրջանակներում խրախուսել երրորդ պետությունների, միջազգային քրեական դատարանների եւ այլ Եվրոպական ու միջազգային համապատասխան կառույցների ու կազմակերպությունների հետ համագործակցությունը,
 - ընդլայնել դատարանների եւ դատախազությունների շրջանակներում քրեական գործերով միջազգային համագործակցության համար հատկացվող բյուջետային եւ մարդկային ռեսուրսները:

Հավելված

Քրեական գործերով իրավական համագործակցության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի կոնվենցիաները

024	Հանձնման մասին եվրոպական կոնվենցիա
030	Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին եվրոպական կոնվենցիա
051	Պայմանականորեն դատապարտված կամ պայմանականորեն ազատ արձակված հանցանք կատարած անձանց նկատմամբ վերահսկողության մասին եվրոպական կոնվենցիա
052	Ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար նախատեսվող պատիժների մասին եվրոպական կոնվենցիա
070	Քրեական գործերով դատավճիռների միջազգային վավերության մասին եվրոպական կոնվենցիա
071	Անչափահասների հայրենադարձման մասին եվրոպական կոնվենցիա *
073	Քրեական գործերով վարույթների փոխանցման մասին եվրոպական կոնվենցիա
082	Պատերազմական հանցագործությունների եւ մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին եվրոպական կոնվենցիա
086	Հանձնման մասին եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն
088	Ավտոտրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելու միջազգային հետեւանքների մասին եվրոպական կոնվենցիա
090	Ահաբեկչության դեմ պայքարի մասին եվրոպական կոնվենցիա
097	Օտարերկրյա օրենսդրության վերաբերյալ տեղեկատվության մասին եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն
098	Հանձնման մասին եվրոպական կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրություն
099	Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն
101	Մասնավոր անձանց կողմից հրազենի ձեռքբերումն ու պահելը վերահսկելու մասին եվրոպական կոնվենցիա
112	Դատապարտված անձանց փոխանցման մասին կոնվենցիա
116	Բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին եվրոպական կոնվենցիա
119	Մշակութային արժեքների նկատմամբ իրավախախտումների մասին եվրոպական կոնվենցիա*
141	Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման եւ բռնագրավման մասին կոնվենցիա
156	Թմրանյութերի եւ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 17-րդ հոդվածը կիրարկող՝ «Ճովով ապօրինի տեղափոխման մասին» համաձայնագիր
167	Դատապարտված անձանց փոխանցման մասին կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն
172	Քրեական իրավունքի միջոցով շրջակա միջավայրի պաշտպանության մասին կոնվենցիա*
173	Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիա
182	Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին եվրոպական կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրություն
185	Կիբեռհանցագործությունների մասին կոնվենցիա

189	Կիբեռահանցագործությունների մասին կոնվենցիայի՝ «Համակարգչային համակարգերի միջոցով կատարվող ռասիստական եւ քսենոֆոբիական բնույթի արարքների քրեականացման մասին» լրացուցիչ արձանագրություն
190	Ահաբեկչության դեմ պայքարի մասին Եվրոպական կոնվենցիան փոփոխող արձանագրություն*
191	Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն
196	Ահաբեկչության կանխարգելման մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա
197	Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա*
198	Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա*

«*» նշանով նշված կոնվենցիաները դեռեւս ուժի մեջ չեն մտել:

Կարծիք թիվ 2 (2008)

Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի՝
ուղղված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին

Քրեական հետապնդման այլընտրանքները

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (ԵՂԳԽԽ) ստեղծվել է Նախարարների կոմիտեի կողմից 2005 թվականի հուլիսի 13-ին՝ դատախազական ծառայությանն առնչվող հարցերի վերաբերյալ կարծիքներ նախապատրաստելու եւ «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» 2000 թվականի հոկտեմբերի 6-ի Rec(2000)19 առաջարկության արդյունավետ իրականացմանը նպաստելու համար:
2. Այդ առաջարկության 3-րդ հոդվածը սահմանում է, որ «քրեական արդարադատության որոշ համակարգերում հանրային մեղադրողները (...) որոշումներ են կայացնում քրեական հետապնդման այլընտրանքների վերաբերյալ»: Այդ առաջարկության 24-րդ հոդվածի «գ» կետով նաեւ նախատեսվում է, որ հանրային մեղադրողները պետք է մասնավորապես «ձգտեն ապահովել քրեական արդարադատության համակարգի հնարավորինս արագ գործելը»:
3. Սույն կարծիքը կազմվել է Նախարարների կոմիտեի կողմից ԵՂԳԽԽ-ին տրամադրված Ընդհանուր պահանջների համաձայն¹ հաշվի առնելով ԵՂԳԽԽ-ի գործունեության ընդհանուր շրջանակային գործողությունների պլանը² եւ Եվրոպայի գլխավոր դատախազների՝ 2004 թվականի հունիսի 23-25-ը Ցեյլե (Գերմանիա) քաղաքում կայացած հետեյալ թեմայով համաժողովի եզրակացությունները՝ «Հանրային մեղադրողի հայեցողական լիազորությունները՝ հնարավորության կամ օրինականության սկզբունքը. առավելությունները եւ թերությունները»:
4. Այդ համաժողովին Եվրոպայի գլխավոր դատախազները գոհունակությամբ նշել են Եվրոպայում որդեգրված նպատակները հանրային շահի, օրենքի առջեւ բոլոր մարդկանց հավասարության եւ քրեական արդարադատության անհատականացման սկզբունքների հետ ներդաշնակեցնելու միտումը՝ Rec(2000)19 առաջարկությանը համապատասխան: Եվրոպայի գլխավոր դատախազների համաժողովի շրջանակներում կոչ է արվել կիրառել հետեյալ սկզբունքները.
 - ա. պետք է լինի հանցավոր արարքներին քրեական արդարադատության համակարգի արձագանքի եւ արձագանքի այլ տեսակների միջեւ ընտրության հնարավորություն, անկախ նրանից՝ պարտադիր, թե հայեցողական քրեական հետապնդման համակարգ է գործում՝ միեւնույն ժամանակ նկատի ունենալով, որ հանրային շահից ելնելով՝ ծանր իրավախախտումների համար անհրաժեշտ է պատժել.
 - բ. անհրաժեշտ է, որ քրեական հետապնդման այլընտրանքը լինի մտածված, հուսալի եւ դրա միջոցով հնարավոր լինի կանխել կրկնահանցագործությունները՝ միեւնույն ժամանակ հաշվի առնելով տուժողների շահերը.
 - գ. անհրաժեշտ է, որ քրեական դատավարության այլընտրանքը կիրառվի օրենքի դրույթներին համապատասխան՝ տուժողների իրավունքները հավասարակշռելով իրավախախտում կատարած անձի նկատմամբ օբյեկտիվորեն արդար եւ անկողմնակալ վերաբերմունքի հետ:
5. Սույն կարծիքը կազմելիս ԵՂԳԽԽ-ն հաշվի է առել նաեւ Նախարարների կոմիտեի հետեյալ առաջարկությունները. Քրեական արդարադատության պարզեցման վերաբերյալ Rec(87)18 առաջարկություն, [Քրեական իրավունքի եւ քրեական դատավարության շրջանակներում] տուժողի կարգավիճակի վերաբերյալ Rec(85)11 առաջարկություն եւ Քրեական գործերով մեղիացիայի վերաբերյալ Rec(99)19 առաջարկություն, ինչպես նաեւ վերականգնողական արդարադատության ոլորտում Եվրոպայի խորհրդի կողմից կատարված աշխատանքը³: ԵՂԳԽԽ-ն նաեւ հաշվի է առել Եվրոպական միության խորհրդի 2001 թվականի մարտի 15-ի «Քրեական վարույթում տուժողի կարգավիճակի մասին» շրջանակային որոշումը⁴:
6. Այս հարցին լուծում տալու համար ԵՂԳԽԽ-ն որոշել է իրականացնել ուսումնասիրություն քրեական

¹ Նախարարների տեղակալների 1019-րդ նիստի ժամանակ ընդունված Ընդհանուր պահանջներ (2008 թվականի փետրվարի 27):

² Հաստատվել է Նախարարների կոմիտեի կողմից 2006 թվականի նոյեմբերի 26-ին կայացած Նախարարների տեղակալների 981-րդ նիստին:

³ Տե՛ս մասնավորապես Եվրոպայի խորհրդի արդարադատության նախարարների 27-րդ համաժողովի ժամանակ ընդունված թիվ 1 բանաձեւը (Երեւան, 2006 թվականի հոկտեմբերի 12-13):

⁴ 2001/220/ԱԼԳ:

հետապնդման այլընտրանքների վերաբերյալ՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում կիրառվող լավագույն գործելակերպերը վերհանելու եւ խթանելու նպատակով: Այդ նպատակով ԵՂԳԽՆ-ն հարցում է անցկացրել ԵՂԳԽՆ-ի ազգային անդամների շրջանում խնդրելով նրանց տալ իրենց պատասխանները՝ ԵՂԳԽՆ-ի 2-րդ լիազումար նիստում (Ստրասբուրգ, 2007 թվականի նոյեմբերի 28-30) այդ թեմայի վերաբերյալ կայանալիք քննարկումն ապահովելու համար: Սույն կարծիքում հաշվի են առնվել 23 անդամ պետությունների պատասխանները:

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

7. Սույն կարծիքի նպատակներով «քրեական հետապնդման այլընտրանքային միջոցներ» ասելով՝ պետք է հասկանալ այն միջոցները, որոնք փոխկապակցված են քրեական հետապնդման վերջնական, ժամանակավոր կամ պայմանական դադարեցման հետ այն դեպքում, երբ կատարվել է այնպիսի հանցագործություն, որի համար հանցանքը կատարած անձն այլ պարագայում կենթարկվեր քրեական պատասխանատվության, եւ նրա նկատմամբ կնշանակվեր պատիժ, օրինակ՝ պայմանական կամ երկարաժամկետ ազատազրկման կամ տուգանքի ձեւով, ինչպես նաեւ լրացուցիչ պատիժներ, ինչպիսին է, օրինակ, որոշակի իրավունքներից զրկելը:
8. Արդյունքում որոշվել է, որ դատարանում «իրեն մեղավոր ճանաչելու» ընթացակարգը սույն կարծիքի կարգավորման շրջանակներում չէ, քանի որ դա թույլ չի տալիս խուսափել քրեական վարույթից եւ հանգեցնում է դատապարտման:
9. Նույն կերպ որոշ անդամ պետություններում գոյություն ունեցող «ազատ արձակել»-ը չի դիտվում որպես քրեական հետապնդման այլընտրանք, քանի որ դա հաջորդում է մեղադրանքին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

10. Քրեական հետապնդման այլընտրանքային միջոցներին դիմելը չի հակասում պարտադիր քրեական հետապնդման Եվրոպական հիմնական համակարգին, որն ընդհանուր առմամբ հարկավոր է հասկանալ հետեւյալ տեսանկյունից՝ օրենքի ցանկացած խախտմանը կա արձագանք, որը, ըստ էության, չի սահմանափակվում միայն պատժի նշանակմամբ. այդպիսի միջոցներ բոլոր համակարգերում կան:
11. Որոշ անդամ պետություններում գործում է հայեցողական քրեական հետապնդման համակարգը: Այլ անդամ պետություններում գործում է պարտադիր քրեական հետապնդման համակարգը, սակայն դրանց քրեադատավարական օրենսգրքերով նախատեսվում են այնպիսի բացառություններ, ինչպիսիք են՝
 - դեպքեր, երբ քրեական հետապնդումն ակնհայտորեն նպատակահարմար չէ՝ հաշվի առնելով ամրագրված նպատակները, որոնցից մեկը հանցագործության կրկնությունը կանխելն է,
 - դեպքեր, երբ տրամադրվում է ֆինանսական կամ այլ փոխհատուցում,
 - դեպքեր, որոնցում ներգրավված է անչափահաս իրավախախտ:
12. Որոշ երկրներում քրեական հետապնդում իրականացնելու պարտավորությունից կարելի է խուսափել միայն անչափահասների մասնակցությամբ դեպքերում, «ուղղիչ միջոցառումների» համատեքստում եւ առանձնահատուկ դեպքերում, որոնք առնչվում են առաջին անգամ կատարված մանր իրավախախտումներին, կամ երբ միջին ծանրության հանցագործության կատարման համար անկեղծ գոյում են:
13. Քրեական հետապնդում իրականացնող մարմինը շատ երկրներում հատկապես շահեկան կարգավիճակում է՝ այլընտրանքային այն միջոցների կիրառումն առաջարկելու եւ դա վերահսկելու առումով, որոնք իրապես ձեւավորում են կատարված իրավախախտումներին դատական համակարգի կողմից տրված արձագանքը: Երբեմն այս հարցը մեղադրողի միանձնյա ընտրության շրջանակներում է, սակայն հնարավոր է, որ վարույթը դադարեցնելու վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ լինի դատավորի համաձայնությունը:
14. Այլ երկրներում, սակայն, մեղադրողի դերը շատ ավելի պակաս կարելու է, քան դատավորինը, որը վարույթի դադարեցման վերաբերյալ միանձնյա որոշում կարող է կայացնել, մինչդեռ մեղադրողը պարտավոր է խստորեն պահպանել պարտադիր քրեական հետապնդման սկզբունքը:
15. Այլընտրանքային միջոցները պետք է համահունչ լինեն այն նպատակներին, որոնք ուղղորդում են քրեական արդարադատության իրականացման գործընթացը, այն է՝ կրկնահանցագործությունները կանխելը, հասարակության կրած վնասի փոխհատուցմանն աջակցելը, տուժողների շահերը հաշվի առնելը, պաշտպանության կողմի իրավունքները պաշտպանելը, ապօրինի արարքներին հիմնավորված արձագանք ձեւավորելը եւ հանցագործության կրկնությունից խուսափելը:
16. Որոշ երկրներում գործող օրենսդրությունը սահմանում է, որ այն դեպքերում, երբ հանցագործության կրկնությունը կանխելու համար քրեական պատիժ հարկավոր չէ, պետք է կիրառվեն այլընտրանքային

միջոցներ:

17. Հանրության համար ոչ այնքան վտանգավոր արարքի գաղափարն արտացոլված է շատ երկրների օրենսդրության մեջ: Այնուամենայնիվ, քրեական հետապնդման այլընտրանքային միջոցների կիրառումը երբեմն խիստ սահմանափակված է, երբ խոսքն այնպիսի լուրջ հանցագործությունների մասին է, ինչպիսիք են մարդկանց թրաֆիքինգը կամ ահաբեկչությունը, ինչպես նաև այնպիսի լուրջ հանցագործությունների, որոնք էապես ներառում են հանրային շահը:
18. Քրեական հետապնդման այլընտրանքային միջոցները, որոնց հնարավորությունների շրջանակը կարող է աստիճանաբար ընդլայնվել, ցույց են տալիս հասարակության զարգացման եւ արդարադատության արդիականացման էվոլյուցիոն կենսափուլը (ինչը մեծապես ողջունելի է)՝ ի հակակշիռ այն ավանդական համակարգի, որը բաղկացած է բացառապես պայմանական կամ երկարաժամկետ ազատազրկման կամ տուգանքի ձեռով պատիժներից, մասնավորապես՝ անչափահաս իրավախախտների կամ այն անչափահասների նկատմամբ, որոնք նախկինում դատապարտված չեն եղել:
19. Այս միջոցներն ուղղված են իրավախախտում կատարած անձի եւ հնարավոր է նաեւ տուժողի կողմից դատական արձագանքն ընդունելուն, եթե վերջինս բավականաչափ առնչություն ունի դրանց: Երբեմն օրենսգրքով նախատեսվում է, որ տուժողը կարող է առարկել քրեական հետապնդման դադարեցմանը: Դա արվում է քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից կայացված որոշումը վերանայելու միջոցով՝ դա ներկայացնելով կամ մեղադրողի վերադաս մարմնին, կամ ավելի բարձր ատյանի դատարան: Որոշ անդամ պետություններում առանց տուժողի համաձայնության այլընտրանքային միջոց չի կիրառվում:
20. Այլընտրանքային միջոցների առավելությունը նաեւ այն է, որ դրանց շնորհիվ իրավախախտում կատարած անձինք սոցիալական վտարանդիներ չեն դառնում. փոխարենը դրանք նպաստում են այդ անձանց վերադաստիարակմանը. որոշ երկրներում քրեական դատավարության ընթացակարգերով առաջարկվում է այդպիսի միջոցներ կիրառել այն դեպքերում, երբ հանցագործությունը եղել է ավելի շատ անխոհեմության, քան օրենքների եւ օրենսդրական արգելքների անտեսման հետեւանք:
21. Հաճախ այլընտրանքային միջոցների շնորհիվ հասարակության համար տեսանելիորեն առավել նշանակալից է դառնում փոխհատուցումը, քան պարզապես գումար վճարելը (ինչն այնքան էլ խորությամբ չի բավարարում խղճի զգացումը) կամ ազատազրկումը:
22. Որպես ազատազրկման այլընտրանքային միջոցներ՝ դրանք նվազեցնում են Եվրոպայում բանտերում գտնվող ազատազրկված անձանց թիվը, որտեղ շատ բանտեր գերբնակեցված են, իսկ բանտերի բյուջեն արդարադատության համակարգի համար նախատեսված բյուջեի զգալի մասն է կազմում:
23. Այլընտրանքային միջոցները կարող են նվազեցնել դատարանների աշխատանքային ծանրաբեռնվածությունը, սակայն դատախազության մարմինները դրանց համակարգման համար հաճախ մեծ ծավալի աշխատանք են կատարում:
24. Այնուամենայնիվ, դրանք չպետք է դիտարկվեն որպես միջոցներն ավելի արդյունավետ օգտագործելու եղանակներ. ըստ էության՝ դրանց համար անհրաժեշտ են զգալի նյութական ռեսուրսներ, հատկապես՝ տարածքներ, նաեւ մարդկային ռեսուրսներ, մանրակրկիտ նախապատրաստական աշխատանքներ, հանրության ուսուցում եւ քրեական հետապնդման այլընտրանքային միջոցների բնույթի մասին տեղեկությունների տրամադրում, գործընթացն իրականացնելու եւ դա վերահսկելու համար համապատասխան ունակություններ ունեցող եւ պատշաճ վերապատրաստում անցած անձանց (օրինակ՝ միջնորդների) ներգրավում մեղադրողների հետ մեկտեղ. այդ անձինք պետք է ստանան համարժեք վարձատրություն եւ լինեն պրոֆեսիոնալ մասնագետներ, այլ ոչ թե սիրողական մակարդակի կամավորներ, ինչպես օրինակ՝ հանրային ծառայության գործառույթներ իրականացնող կազմակերպությունները սուբսիդիա ստանալու իրավունք ունեն:
25. Որոշ անդամ պետություններում օրենսդրությունը սահմանում է այն դեպքերի թիվը, երբ կարող են կիրառվել այլընտրանքային միջոցներ, եւ սահմանափակում է դրանք: Այլ դեպքերում դա արվում է ոչ պարտադիր բնույթ ունեցող իրավական փաստաթղթերի միջոցով: Rec(2000)19 առաջարկությանը⁵ համապատասխան եւ նպատակ ունենալով խթանել այս ոլորտում հանրային մեղադրողների անաչառ, սկզբունքային եւ արդյունավետ գործունեությունը՝ անդամ պետությունները պետք է ձգտեն՝
 - սահմանել այս քրեական քաղաքականության իրականացման ընդհանուր ուղենիշները,
 - սահմանել այն ընդհանուր սկզբունքներն ու չափորոշիչները, որոնք առանձին դեպքերում որոշումներ կայացնելիս պետք է կիրառվեն որպես կողմնորոշիչներ՝ կամայական որոշումներ կայացնելուց զերծ մնալու համար:

⁵ Տե՛ս Բացատրական հուշագրի 36-րդ պարբերությունը:

26. Հանրությունը պետք է տեղեկացվի վերոնշյալ համակարգի, ուղեկիշների, սկզբունքների եւ չափորոշիչների մասին: Առաջարկվում է մշակել հատուկ միջոցառումներ, որոնք ուղղված են վերոհիշյալ ուղեկիշների կոնկրետ իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացմանը:
27. Նախքան քրեական հետապնդման այլընտրանքային միջոցների ընդունումը պետք է գնահատվեն տնտեսական, վարչական եւ կառուցվածքային պայմանները՝ այդ միջոցների պրակտիկ եւ կոնկրետ իրականացման հնարավոր լինելը ստուգելու համար:

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊԵՏՄԱՆ ԱՅԼԸՆՏՐՄԱՆՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻՑ

28. Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում քրեական հետապնդման այլընտրանքային միջոցների կիրառման տարբեր հաջողված գործելակերպեր կարելի է դիտարկել: ԵՂԳԽԽ-ն ցանկանում է ուշադրությունը հրավիրել դրանցից մի քանիսին:
29. «Rappel à la loi»-ը (դատավորների կողմից տրվող զգուշացում) շատ հաճախ կիրառվում է որոշ անդամ պետություններում, որտեղ դա կոչվում է «նախազգուշացում», երբ տրվում է որոշակի պաշտոնականությամբ՝ հատուկ որակավորված օժանդակ համակարգողի կողմից եւ հատկապես անչափահասներին առնչվող դեպքերում: Մեղադրողը կամ ցանկացած այլ իրավասու դատական մարմին լուրջ գրույց է ունենում իրավախախտում կատարած անձի կամ նրա ներկայացուցչի հետ, որի ընթացքում վերջինիս հիշեցվում է օրենքի կրկնակի խախտման համար կիրառվող իրավական դրույթների եւ նշանակվող պատժի ռիսկերի մասին: Այդ գրույցի նպատակն է նպաստել, որպեսզի իրավախախտում կատարած անձինք գիտակցեն իրենց արարքի հետեւանքները հասարակության, տուժողի եւ հենց իրենց համար: Այս զգուշացումը կիրառվում է հասարակության կամ անհատների նկատմամբ կատարված փոքր իրավախախտումների դեպքում, որոնք կատարվում են նախկինում չդատապարտված անձանց կողմից: Մեկ այլ համանման սխեմա կիրառվում է վերականգնողական արդարադատության համակարգերում, որտեղ ներառվում են արարքների ծանրությանն առնչվող քննարկումներ եւ այլն:
30. Իրավախախտում կատարած անձինք կարող են ուղղորդվել բժշկական, սոցիալական կամ մասնագիտական հաստատություններ: Մեղադրողը կամ ցանկացած իրավասու դատական մարմին հակաիրավական գործողություններ կատարած անձին պարտադրում է դիմել որոշակի տիպի մարմին, օրինակ՝ միավորում, որտեղ նա կանցնի ուսուցում կամ հրահանգավորում՝ իրավախախտմանն առնչվող թեմայով: օրինակ՝ ճանապարհային երթեւեկության կանոնների խախտման դեպքում՝ դասընթաց, որը ճանապարհային երթեւեկության կանոններից բացի կներառի նաեւ պատահարների հետեւանքով լուրջ մարմնական վնասվածքներ ստացած անձանց մասնակցություն, ինչն իրավախախտում կատարած անձանց կօգնի գիտակցել տրանսպորտային միջոցն անզգույշ վարելու հետեւանքները: Մեկ այլ օրինակ. եթե անչափահասների դաստիարակության առումով զգալի բացթողում կա, ապա «ծնողների համար» դասընթաց կարող է առաջարկվել այն ծնողներին, որոնք «ի վիճակի չեն դա անել»: Ավտոմոբիլային կախվածությամբ իրավախախտների համար սննդի հիգիենայի ծառայությունները կարող են բուժման կուրսեր կազմակերպել: Խուլիգանական կամ ռասիստական կամ հակասոցիալական վարքագծի դրսեւորման համար մեղադրվող երիտասարդ իրավախախտներին կարող է առաջարկվել քաղաքացիության թեմայով ուսուցում, որպեսզի անչափահասները գիտակցեն իրենց արարքների լրջությունը եւ փոխեն իրենց վարքագիծը:
31. Իրավախախտում համարվող իրավիճակի կարգավորումը միտված է արագ եւ արդյունավետ կերպով չեզոքացնելու օրենքի խախտումից բխող անկայունությունը: օրինակ՝ ճանապարհային ստուգումների ժամանակ վարորդական վկայականը չներկայացրած վարորդները հաջորդ օրը հրավիրվում են դա ներկայացնելու համար: Բնապահպանության եւ քաղաքաշինության ոլորտներում սկզբնական վիճակի վերականգնումը հաճախ շատ տեղին եւ զսպող միջոց է, չնայած այն աշխատանքին, որը բխում է դրանից:
32. Հակաիրավական արարքների հետեւանքով պատճառված տառապանքը երբեմն կարող է փոխհատուցվել խաբեությամբ փոխանցված գույքը վերադարձնելու կամ դրամական փոխհատուցում տրամադրելու կամ տուժողից ներողություն խնդրելու միջոցով: Վնասի դիմաց փոխհատուցումը երբեմն կազմակերպվում է որպես մեղադրյալի եւ տուժողի միջեւ միջնորդության գործընթաց, որն ամրագրում է կողմերի առաջարկած պայմանների շուրջ վերջիններիս ձեռք բերած համաձայնությունը, եւ եթե նրանց միջեւ շփումը հետագայում հնարավոր է՝ պաշտպանում է նոր հանցանքի կատարումից: օրինակ՝ հանրային աշխատանքները:
33. Անչափահաս իրավախախտների համար քրեական գործերի հետ կապված վնասի փոխհատուցում [ռեպարացիա] կարող է լինել դաստիարակչական գործողությունը, որն անչափահասի համար պարտադիր է, օրինակ՝ տարեց մարդու տանը չվճարվող աշխատանքը, տուժողին հասցեագրված ներողությամբ նամակը եւ այլն:

34. Ընտանեկան բռնություն կատարած անձի նկատմամբ կարող է կիրառվել ընտանիքից առանձնացվելու տարբերակը:
35. Անձը կարող է հսկողության տակ վերցվել՝ առանց հետագայում նրա նկատմամբ քրեական հայց ներկայացնելու, եթե նա այլևս չի կասկածվում նոր հանցագործությունների կատարման կամ դրանք կատարելու մտադրության մեջ:
36. Հաշտության համաձայնություն կարող է առաջարկվել իրավախախտում կատարած այն անձին, որը կընդունի արդարադատության համակարգի կողմից հաստատված պատժամիջոցը՝ վարորդական իրավունքի տրամադրում, չվարձատրվող աշխատանք, որոշակի վայրերում գտնվելու արգելք, որոշակի գումարի վճարում: Դատավորի կողմից հաստատված այս պայմանավորվածությունը շատ նման է մեղքի ընդունմանը, սակայն դիտարկվում է որպես «քրեական հետապնդման այլընտրանք» այն տեսանկյունից, որ որպես այդպիսին մեղադրանք չէ եւ չի ներառվում դատվածության մասին փաստաթղթերում: Որոշ երկրներում ֆինանսական տուգանքը կարելի է դիտարկել որպես այլընտրանքային միջոց:
37. Թմրամիջոցների բուժում անցնելու կարգադրություն կարող է տրվել (որոշ երկրներում քրեական վարույթներ այլևս չեն նախաձեռնվում պարզապես թմրամիջոցների օգտագործման համար. նախապատվությունը, ըստ էության, տրվում է բուժմանը):
38. Որոշ երկրներում հաշվի են առնվում նաեւ արարքի շարժառիթները եւ դա կատարած անձի վարքագիծը. որոշակի շարժառիթներ, ինչպիսիք են ռասիզմը, խտրականությունը կամ գենդերը, կարող են խոչընդոտ լինել այլընտրանքային միջոցի դիմելու համար:
39. «Գործուն զղջում» կարող է կիրառվել հետեւյալ պայմաններում՝ կատարված հանցագործության ոչ ծանր լինելը եւ դա առաջին անգամ կատարելը. իրավախախտի մեղայականով ներկայանալով՝ վերջինիս կողմից մեղքի լիովին ընդունմամբ, հանցագործության բացահայտմանն աջակցելը, արդարադատության համակարգի հետ իրավախախտի համագործակցելը, հանցագործության հետեւանքով պատճառված վնասի դիմաց փոխհատուցելը եւ այն հանգամանքը, որ այդ զղջման արդյունքում հանցագործությունը հանրության համար այլևս վտանգավոր չէ:
40. Քրեական գործերում միջնորդությունը եւ հաշտեցումը կարող են արդյունավետ կերպով կիրառվել, անհրաժեշտության դեպքում, քրեական հետապնդման այլընտրանքային միջոցների հետ մեկտեղ:
41. Եթե համապատասխան անձինք պահպանում են այլընտրանքային միջոցների պահանջները, ապա նրանց նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվում: Որոշ երկրներում այլընտրանքային միջոցին կատարվող որեւէ հղում դատվածության մասին փաստաթղթերում չի ներառվում: Հակառակ դեպքում, եթե այլընտրանքային միջոցի պահանջները չեն պահպանվում, ապա մեղադրողը կարող է դիտարկել քրեական հետապնդման եւ դատապարտման հարցը:

ՏՈՒԺՈՂԻ ԴԵՐԸ

42. Կարելու է, որ տուժողների իրավունքները լինեն պաշտպանված, իսկ հայեցողական քրեական հետապնդումը ճանաչող պետություններում լինի այնպես, որ տուժողները՝ որպես անհատներ կամ պաշտոնապես հաստատված խմբեր, կարողանան պահանջել վերանայում, եթե բողոքը մերժվել է քրեական հետապնդման այլընտրանքային միջոցի կիրառման հետեւանքով: Որոշ երկրներում այնպիսի հանցագործությունների համար կոնկրետ սահմանված դեպքերում, որոնց հետեւանքով հանրությանը վնաս չի հասցվում, տուժողին է վերապահվում քրեական հետապնդում իրականացնելու կամ չիրականացնելու վերաբերյալ որոշում կայացնելը:
43. Այլընտրանքային միջոցը նաեւ պետք է լինի ողջամիտ արձագանք, որը համաչափ է կատարված հանցագործությանը եւ այն խաթարմանը կամ տառապանքին, որի պատճառ է դարձել:
44. Վրիժառության միտումների զարգացումը, տուժողների նկատմամբ ըմբռնողական մոտեցում ցուցաբերելու առումով բացերը եւ վտանգավոր բնույթ ունեցող վեճերի շարունակականությունը կանխելու նպատակով հատկապես նախընտրելի եւ արդյունավետ կլինի տուժողներին համախմբելը կիրառվող ընթացակարգի եւ միջոցի էության ընտրության հարցում (միջնորդության, փոխհատուցման կամ կոմպրոմիսային համաձայնությամբ կարգավորման դեպքեր):

ԵՇՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

45. Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում անցկացված հարցման լույսի ներքո եւ դրան նախորդած՝ Գլխավոր դատախազների համաժողովի առաջարկություններին համապատասխան՝ ԵՂԳԽԽ-ն այն կարծիքին է, որ՝
 - ա. մեր հասարակությունների կարիքներին հարմարեցված ժամանակակից քրեական արդարադատությունը պետք է կիրառի քրեական հետապնդման այլընտրանքներ այն

դեպքերում, երբ հանցագործությունների բնույթը եւ հանգամանքները դա թույլ են տալիս, իսկ համապատասխան պետական մարմինները պետք է ապահովեն քրեական հետապնդման այլընտրանքային միջոցների բնույթի եւ ի շահ հանրության առավելությունների մասին հանրության ուսուցումն ու իրազեկումը.

- բ. ֆինանսական պատիժներ եւ ազատազրկում նշանակելն ինքնին բավականաչափ արդյունավետ ու զգայուն արձագանք չէ օրենքի խախտմանը 21- րդ դարասկզբի համատեքստում՝ լինի դա կրկնահանցագործություններից պաշտպանություն, վնասի փոխհատուցում, վեճերի կարգավորում կամ հասարակության ու տուժողների ակնկալիքների բավարարում.
- գ. անդամ պետությունները պետք է հաշվի առնեն այն գործիքները եւ նոր հնարավորությունները, որոնք ձեւավորում են հանցավորությանը տրված պատշաճ եւ տարաբնույթ արձագանքներ.
- դ. հանրային մեղադրողների անաչառ, հետեւողական եւ արդյունավետ գործունեությունը խթանելու նպատակով պետք է սահմանվեն հստակ կանոններ, ընդհանուր ուղենիշներ եւ չափորոշիչներ՝ քրեական հետապնդման այլընտրանքներին առնչվող քրեական քաղաքականության իրականացման համար. ուստի համապատասխան պետական մարմիններին խորհուրդ է տրվում ընդունել դրույթներ, որոնք կիրառարկվեն՝ այդ այլընտրանքային միջոցներն արդյունավետորեն իրականացնելու նպատակով.
- ե. այլընտրանքային միջոցները պետք է կիրառվեն արդարացիորեն եւ հետեւողականորեն՝ ազգային ուղենիշներին համապատասխան, եթե դրանք գոյություն ունեն, օրենքի առջեւ հավասարության սկզբունքին համահունչ եւ առանձին դեպքերում կամայական որոշումներ կայացնելուց պաշտպանվելու համար.
- զ. թափանցիկություն եւ հաշվետվողականությունն ապահովելու նպատակով հանրային մեղադրողները պետք է կարողանան ՉԼՄ-ների կամ հանրամատչելի հաշվետվությունների միջոցով տեղեկացնել տեղական, տարածաշրջանային կամ ազգային մակարդակով այլընտրանքային միջոցների կիրառման պատճառների մասին՝ միեւնույն ժամանակ անհիմն կերպով չմիջամտելով հանրային մեղադրողի անկախությանը կամ ինքնուրույնությանը.
- է. դատախազությանը եւ համապատասխան պետական մյուս մարմիններին պետք է տրամադրվեն բավարար նյութական եւ մարդկային ռեսուրսներ, որպեսզի այլընտրանքային միջոցների օգնությամբ արդյունավետ, պատշաճ եւ արագ արձագանք ապահովվի.
- ը. այլընտրանքային միջոցների ներդրման գործընթացը պետք է ուղղորդվի՝ ոչ թե ելնելով խնայողության նկատառումներից, այլ պետք է հետապնդի որակյալ արդարադատություն, արագ եւ գործուն արդյունքներ ապահովելու նպատակ.
- թ. մեղադրողները պետք է նախաձեռնեն եւ համապատասխան լիազորություններ ունենալու դեպքում արդյունավետորեն կիրառեն այդ այլընտրանքային միջոցները. այդ միջոցների մասով մեղադրողների կողմից իրենց հայեցողական լիազորությունները կիրառվելու դեպքում նրանց գործունեությանն անհարկի միջամտություն չպետք է լինի.
- ժ. անդամ պետությունները եւ համապատասխան պետական մարմինները պետք է մշակեն վերաբերելի ուսուցման մեթոդներ ու ծրագրեր եւ աջակցեն այն ասոցիացիաներին ու մասնագիտական կազմակերպություններին, որոնք կարող են որակյալ աջակցություն տրամադրել քրեական հետապնդման այլընտրանքների իրականացման գործընթացում.
- ժա. այլընտրանքային միջոցները պետք է պաշտպանեն տուժողների շահերը եւ բացի այդ, նպաստեն դրանք ավելի շատ հաշվի առնելուն՝ փոխհատուցման որակի, տրված արձագանքի արագության եւ անհրաժեշտության դեպքում՝ իրավախախտում կատարած անձի ու տուժողի միջեւ երկխոսության միջոցով.
- ժբ. քրեական հետապնդման այլընտրանքային միջոցները երբեք չպետք է տուժողներին զրկեն իրենց իրավունքները պաշտպանելու պահանջի իրավունքից⁶.
- ժգ. այլընտրանքային միջոցները երբեք չպետք է հանգեցնեն նրան, որ շրջանցվեն արդար դատաքննության կանոնները՝ այլընտրանքային միջոց նշանակելով այն անձի նկատմամբ, որն անմեղ է, կամ որին մեղադրանք չի կարող առաջադրվել դատավարական այնպիսի խոչընդոտների պատճառով, ինչպիսիք են քրեական հետապնդման վաղեմության ժամկետները, կամ երբ կասկածներ կան հայտնաբերված իրավախախտի պատասխանատվության կամ հանցագործությամբ պատճառված վնասի չափի վերաբերյալ.

⁶ Տե՛ս Քրեական իրավունքի եւ քրեական դատավարության շրջանակներում տուժողի կարգավիճակի վերաբերյալ Նախարարների կոմիտեի թիվ Rec(85)11 առաջարկությունը:

- ժդ. մեկ այլընտրանքային միջոցի ընդունմամբ պետք է բացառվի դրա իրականացումից հետո նույն փաստերի հիմքով ցանկացած քրեական հետապնդում (ne bis in idem [ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար]).
- ժե. եթե կասկածյալներին այլընտրանքային միջոց է առաջարկվում, ապա նրանց պետք է տեղեկացվի այն մասին, թե արդյոք նրանց կողմից դա մերժելը կամ ոչ բավարար պահպանելը հանգեցնում է քրեական հետապնդման, թե՛ ոչ.
- ժզ. այն անդամ պետությունները եւ համապատասխան պետական մարմինները, որոնց տրամադրվել են մասնավորապես ԵՂԻՄԻ-ի կողմից հավաքված տեղեկությունները, կարող են հաշվի առնել այլ համակարգերում կիրառվող լավագույն գործելակերպերը՝ հանցավորությանն իրենց կողմից տրվող արձագանքների որակը բարելավելու նպատակով.
- ժե. անդամ պետությունները կարող են դիտարկել երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր կնքելու հարցը՝ այլ պետության տարածքում այնպիսի կոնկրետ այլընտրանքային միջոցների կիրառման նպատակով, ինչպիսիք են բուժում նշանակելը, վարել սովորեցնելը կամ ծնողների համար դասընթացներ կազմակերպելը եւ այլն:
46. ԵՂԻՄԻ-ն առաջարկում է, որ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն քրեական հետապնդման այլընտրանքային միջոցների հարցը դիտարկի անդամ պետություններում դրանց արդյունավետ կիրառման, ինչպես նաեւ քրեական հետապնդման այլընտրանքային միջոցներին առնչվող՝ համապատասխան պարտադիր եւ ոչ պարտադիր փաստաթղթերի հնարավոր մշակման ու դրանց անդրսահմանային կիրարկման տեսանկյունից:
47. ԵՂԻՄԻ-ն ցանկանում է իր որեւէ հանդիպման հրավիրել տարբեր դատական համակարգերից մեկ կամ մի քանի հանրային մեղադրողների, որոնք ներգրավված են եղել քրեական հետապնդման այլընտրանքների արդյունավետ իրականացման գործընթացին՝ նրա/նրանց փորձին ծանոթանալու եւ իրավասու մարմինների համար շրջանառու տեսալսողական փաստաթուղթ պատրաստելու նպատակով:
48. ԵՂԻՄԻ-ն պատրաստակամ է համագործակցել ԶՅԵԿ-ի, ԵՂԻՄԻ-ի եւ ԱԱԵՅ-ի հետ՝ իր ներկայացրած հանրային մեղադրողների տեսակետներն այդ մարմինների կողմից իրականացվող՝ քրեական հետապնդման այլընտրանքային միջոցներին առնչվող վարույթներում ներկայացնելու համար:

Կարծիք թիվ 3 (2008)

Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի՝
ուղղված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին

Քրեաիրավական ոլորտից դուրս դատախազական ծառայությունների դերը

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (ԵՂԳԽՄ) ստեղծվել է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 2005 թվականի հուլիսի 13-ին՝ դատախազական ծառայությանն առնչվող հարցերի վերաբերյալ կարծիքներ նախապատրաստելու եւ «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» 2000 թվականի հոկտեմբերի 6-ի Rec(2000)19 առաջարկության (այսուհետ՝ Առաջարկություն) արդյունավետ իրականացմանը նպաստելու համար¹:
2. Սույն կարծիքը կազմվել է 2006 թվականի նոյեմբերի 29-ին Նախարարների կոմիտեի կողմից ընդունված՝ ԵՂԳԽՄ-ի աշխատանքների ընդհանուր շրջանակային գործողությունների ծրագրին համապատասխան², քանի որ ԵՂԳԽՄ-ն հրահանգ էր ստացել Նախարարների կոմիտեի կողմից՝ հավաքելու տեղեկություններ Եվրոպայում դատախազական ծառայությունների գործունեության վերաբերյալ³:
3. Առաջարկության մեջ դիտարկվում է քրեական արդարադատության ոլորտում հանրային մեղադրողների եւ դատախազությունների իրավիճակը, ինչպես նաեւ նրանց գործունեության հիմնական սկզբունքները, սակայն դրանում չի նշվում քրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազների դերի մասին: Այնուամենայնիվ, անդամ պետությունների մեծ մասում այս դերն ու պարտականություններն այս կամ այն չափով ներառում են նաեւ քրեական արդարադատության ոլորտից դուրս լիազորություններ՝ կապված իրավազորության հետ կամ ոչ:
4. Եվրոպայում առկա են դատախազական ծառայությունների դերին առնչվող տարբեր համակարգեր, այդ թվում՝ քրեաիրավական ոլորտից դուրս, որոնք ձեւավորվել են իրավական եւ պատմական տարբեր ավանդույթների արդյունքում⁴: Անդամ պետություններն իրենք են սահմանում իրենց իրավական համակարգերն ու դրանց գործունեությունը՝ պայմանով, որ դրանց շրջանակում լիակատար պահպանվեն մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, օրենքի գերակայության սկզբունքը եւ իրենց կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները, այդ թվում՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) նախատեսվածները: Դատախազական ծառայությունների դերը եւ դրանց լիազորությունների շրջանակը, այդ թվում՝ մարդու իրավունքների եւ հանրային շահի պաշտպանության ոլորտում, սահմանվում են անդամ պետությունների ներպետական օրենսդրությամբ: Հանրային մեղադրողների ոչ պատժիչ բնույթի գործառույթների առկայությունը կամ բացակայությունը եւ դրանց շրջանակը մեծապես պայմանավորված են մշակութային ժառանգությամբ, իրավական ավանդույթներով եւ ժողովուրդների սահմանադրական պատմությամբ⁵:
5. Սույն կարծիքը նախապատրաստելիս ԵՂԳԽՄ-ն որպես հիմնական հղումային կետ օգտագործել է

¹ Օրենքի գերակայությունը եւ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը հանրային մեղադրողների գործելակերպի հիմքում ընկած հիմնական սկզբունքներն են, քանի որ «...[դատախազները] հանրային իշխանության այն ներկայացուցիչներն են, որոնք, հանդես գալով հասարակության անունից եւ ելնելով հանրային շահից, ապահովում են օրենքի կիրառումն այն դեպքերում, երբ օրենքի խախտումը քրեական պատժ է առաջացնում հաշվի առնելով թե՛ անհատի իրավունքները, թե՛ քրեական արդարադատության համակարգի անհրաժեշտ արդյունավետությունը»: Առաջարկության մեջ ուղղակիորեն անդրադարձ չի արվում դատախազների՝ ոչ պատժիչ բնույթի խնդիրներին, սակայն 1-ին հոդվածով, ինչպես նշված է բացատրական հուշագրում, անուղղակիորեն ընդունվում է, որ «դատախազները կարող են ունենալ այդպիսի առաքելություններ, եւ բացատրական հուշագրում հստակ նշվում է, որ «որոշ երկրներում դատախազներին կարող են տրվել այլ կարեւոր հանձնարարություններ, օրինակ, առեւտրային կամ քաղաքացիական իրավունքի ոլորտներում»:

² ԵՂԳԽՄ-ի աշխատանքների ընդհանուր շրջանակային գործողությունների ծրագրում չի անտեսվում այս իրավիճակը եւ հաշվի է առնվում, որ «Եվրոպայում հանրային մեղադրողների գործառույթները զգալիորեն տարբերվում են՝ պայմանավորված Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների արդարադատության համակարգերում նրանց կարգավիճակի եւ դերի տարբերություններով... հանրային մեղադրողների հնարավոր գործառույթները կարելի է դիտարկել կամ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում դրանց իրականացման վերաբերյալ ուսումնասիրություն կամ քննություն իրականացնելու (լիազորություններն ու սահմանափակումներն օրենքում եւ գործելակերպում) կամ կարծիք նախապատրաստելու միջոցով (օրինակ՝ դրանց իրականացման վերաբերյալ ուղեկիշներ կամ չափանիշներ մշակելու անհրաժեշտության մասին)»:

³ Տե՛ս CCPE(2006)05 Rev փաստաթղթի վերջնական տարբերակը: ԵՂԳԽՄ-ի՝ 2007-2008 թվականների Ընդհանուր պահանջներ, տե՛ս CCPE(2006)04 Rev փաստաթղթի վերջնական տարբերակը:

⁴ Նույն տեղում: Տե՛ս նաեւ CPE (2008)3 փաստաթուղթը:

⁵ Բուդապեշտի համաժողովի «Համաժողովի ընթացքում եւս մեկ անգամ ընդգծվեց այս ոլորտում հանրային մեղադրանքի տարբեր համակարգերի առկայությունը, որոնք ձեւավորվել են Եվրոպայում առկա տարբեր ավանդույթների արդյունքում», տե՛ս CPE (2005)Concl. փաստաթուղթը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Դատարան) նախադեպային իրավունքը եւ հատուկ ուշադրություն է դարձրել Եվրոպայի խորհրդի նպատակներին, օրենքի գերակայության սկզբունքին եւ Եվրոպայի մշակութային ինքնության եւ բազմազանության զարգացմանը: Դատարանն անդրադարձել է Կոնվենցիայի այն խախտումներին, որոնք առնչվում են դատախազների ոչ պատժիչ բնույթի խնդիրներին, եւ ընդգծել է պատշաճ ընթացակարգեր ապահովելու պահանջը⁶: Հաշվի են առնվել նաեւ Խորհրդարանական վեհաժողովի «Օրենքի գերակայության սկզբունքով կառավարվող ժողովրդավարական հասարակությունում հանրային մեղադրողի դերի մասին» թիվ 1604(2003) առաջարկությունը⁷, ինչպես նաեւ Նախարարների կոմիտեի կողմից դրան տրված պատասխանը⁸:

6. Առաջին իսկ քննարկման պահից Եվրոպայի գլխավոր դատախազները գիտեին, որ «դատախազական ծառայությունների կողմից միջամտությունը քրեական արդարադատության ոլորտից դուրս կարող է հիմնավորված լինել միայն «հասարակության անունից եւ հանրային շահից ելնելով գործելու, օրենքի կիրառումն ապահովելու» ընդհանուր առաջադրանքի շրջանակներում, ինչպես որ արտացոլված է Թիվ (2000)19 առաջարկության մեջ, եւ որ այդ գործառնությունները կասկածի տակ չեն դնում օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների տարանջատման սկզբունքը, կամ այն փաստը, որ ի վերջո միայն իրավասու դատարաններն են լիազորված լուծելու վեճերը՝ կողմերին լսելուց հետո»^{9 10}:
7. Դատախազների՝ քրեական ոլորտին չվերաբերող խնդիրների վերանայմանը նվիրված Բրատիսլավայի համաժողովի ավարտից հետո Ցեյլեի համաժողովում ճանաչվեց այն փաստը, որ՝ «... իրավական համակարգերի մեծ մասում դատախազներն ունեն պարտականություններ, երբեմն՝ կարելու պարտականություններ, նաեւ քաղաքացիական, առեւտրային, սոցիալական եւ վարչական ոլորտներում, եւ նույնիսկ Կառավարության որոշումների օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու պատասխանատվություն»¹¹: Այնուամենայնիվ, նույն համաժողովի շրջանակում ընդունվեց նաեւ այս ոլորտում միջազգային ղեկավար սկզբունքների բացակայության փաստը, եւ հրահանգ տրվեց Բյուրոյին՝ հաջորդ լիազուժար նիստին տվյալ թեմայով կարծիք ներկայացնելու:
8. Այնուհետեւ 2005 թվականին Բուդապեշտի համաժողովում¹² ներկայացված կարծիքը, որում ամփոփվում եւ գնահատվում էին Բյուրոյի կողմից պատրաստված հարցաթերթի պատասխանները, դարձավ քրեաիրավական ոլորտից դուրս հանրային մեղադրողների գործունեության վերաբերյալ առաջին ուսումնասիրությունը, իսկ դրա հիման վրա ԵԳԴ-ի նիստերին արված եզրակացությունները՝ տվյալ թեմայի վերաբերյալ առաջին եվրոպական դիտարկումները: Այդ համաժողովի շրջանակում «եզրակացություն արվեց, որ այդ կարելու եւ բարդ խնդիրը հետագա փուլում պետք է ավելի մանրամասն ուսումնասիրվի»¹³:
9. 2006 թվականի Մոսկվայի համաժողովում հետեւյալ եզրակացությունն արվեց. « ...համաժողովի ընթացքում քննարկված՝ դատախազական ծառայությունների կողմից իրենց իրավասության շրջանակներում անհատների արդյունավետ պաշտպանությանն առնչվող լավագույն գործելակերպերը ... քրեաիրավական ոլորտից դուրս, որտեղ նրանք ունեն նման լիազորություններ, կարող են ուսումնասիրվել՝ նկատի ունենալով այդ դրական փորձի հնարավոր կիրառումն այն անդամ պետությունների կողմից, որտեղ դատախազական ծառայություններն ունեն նման լիազորություններ»¹⁴:
10. Եվրոպայի գլխավոր դատախազների համաժողովի ընթացքում (Սանկտ Պետերբուրգ, 2008 թվական) ընդգծվել է «մեր հասարակություններում խոցելի խմբերի, մասնավորապես՝ երեխաների եւ երիտասարդների, վկաների, տուժողների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների,

⁶ Տե՛ս, օրինակ, *Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի* [Brumarescu v. Romania] (28342/95), *Նիկիտինն ընդդեմ Ռուսաստանի* [Nikitin v. Russia] (50187/99), *Գրոզդանովսկին ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության* [Grozdanovski v. FYR Macedonia] (21510/03), *Ռոսկան ընդդեմ Մոլդովայի* [Rosca v. Moldova] (6267/02), *ԼՄ-ն ընդդեմ Պորտուգալիայի* [LM v. Portugal] (15764/89), *Փ.-ն ընդդեմ Սլովակիայի Հանրապետության* [P. v. Slovak Republic] (10699/05) գործերը:

⁷ Տեքստն ընդունվել է 2003 թվականի մայիսի 27-ին Վեհաժողովի անունից գործող Մշտական հանձնաժողովի կողմից:

⁸ Տե՛ս CM/AS(2004)Rec1604 փաստաթղթի վերջնական տարբերակը, 2004 թվականի փետրվարի 4:

⁹ ԵԳԴ-ն հաշվի է առել նաեւ Եվրոպայի գլխավոր դատախազների համաժողովի (ԵԳԴ) մի քանի նիստերի աշխատանքային փաստաթղթերն ու եզրակացությունները, ինչպես օրինակ՝ 4-րդ նիստը (Սլովակիայի Հանրապետություն, Բրատիսլավա, 2003 թվականի հունիսի 1-3), որտեղ առաջին անգամ առաջարկվել է հարցը քննարկման դնել հաջորդ համաժողովում, 5-րդ նիստը (Գերմանիա, Ստորին Սաքսոնիա, Ցեյլե, 2004 թվականի մայիսի 23-24), որի ժամանակ իրականացվել է թեմայի շուրջ առաջին ուսումնասիրությունը, 6-րդ նիստը (Հունգարիա, Բուդապեշտ, 2005 թվականի մայիսի 29-31), որտեղ քննարկվել է թեմայի վերաբերյալ առաջին գեկույցը, եւ հարցը փոխանցվել է հետագա քննարկման, 7-րդ համաժողովը (Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, 2006 թվականի հուլիսի 5-6) եւ Սանկտ Պետերբուրգում անցկացված՝ Եվրոպայի գլխավոր դատախազների համաժողովը (ԵԴԴ) (Ռուսաստանի Դաշնություն, 2008 թվականի հուլիսի 2-3), որն ամբողջությամբ նվիրված էր այս հարցին:

¹⁰ Ցեյլեի համաժողով, տե՛ս CPGE (2008) Concl. փաստաթուղթը:

¹¹ Տե՛ս CPGE (2004) Concl. փաստաթուղթը:

¹² Տե՛ս CPGE (2005)02 փաստաթուղթը:

¹³ Տե՛ս CPGE (2005) Concl. փաստաթուղթը:

¹⁴ Տե՛ս 2006 թվականի հուլիսի 6-ի CPGE (2006) փաստաթուղթը, 7-րդ պարբերություն:

ինչպես նաև ընդհանուր առմամբ բնակչության սոցիալական և տնտեսական իրավունքների արդյունավետ պաշտպանության աճող անհրաժեշտությունը»: Համաժողովի արդյունքում կարծիք հնչեց, որ դատախազները կարող են կարելորդ դեր կատարել այս առնչությամբ, և որ պետության աճող ներգրավվածությունն առկա խնդիրների լուծման գործում, ինչպիսիք են շրջակա միջավայրի, սպառողների իրավունքների ու հանրային առողջության պաշտպանությունը, կարող է հանգեցնել դատախազական ծառայությունների դերի շրջանակի ընդլայնմանը»¹⁵:

11. ԵՂԳԽՆ-ն հետեւել է Եվրոպայի գլխավոր դատախազների համաժողովների քննարկումներին: ԵՂԳԽՆ-ի Բյուրոն փոփոխություններ է կատարել նախկինում մշակված հարցաշարում Պոպովոյում տեղի ունեցած 3-րդ նիստի ժամանակ (Լեհաստան, 2007 թվականի հունիսի 4-5)՝ ապահովելու համար խնդրի առավել մանրամասն ուսումնասիրությունը: Պոպովոյում (Լեհաստան, 2007 թվականի հունիսի 4-5) լրամշակված հարցաշարին 43 անդամ պետությունների կողմից տրված պատասխանների¹⁶ հիման վրա մշակվել և Սանկտ Պետերբուրգի համաժողովում¹⁷ ներկայացվել է նոր մանրամասն զեկույց: Այս համաժողովի ընթացքում ձեւակերպվել են մի քանի հատուկ պահանջներ ոչ պատժիչ բնույթի իրավասությունների վերաբերյալ¹⁸, որոնք արտացոլված են սույն կարծիքում:
12. Բացի այդ, սույն կարծիքի նախապատրաստման ընթացքում հաշվի են առնվել այլ միջազգային մարմինների և կազմակերպությունների, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության¹⁹ և Անկախ Պետությունների Համագործակցության²⁰ կողմից ընդունված փաստաթղթերը:
13. Սույն կարծիքի նպատակն է ԵԳԴ-ի, ԵԴ-ի նիստերի ժամանակ և ԵՂԳԽՆ-ի կողմից նախկինում կատարված աշխատանքների հիման վրա սահմանել այն կարգավիճակը, լիազորությունները, գործելակերպը և արդյունավետ փորձը, որոնք Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մեծ մասում դատախազական ծառայություններն ունեն իրենց գործունեության ընթացքում՝ քրեաիրավական ոլորտից դուրս, ինչպես նաև ընդունել այդ գործունեության զարգացմանն ու բարելավմանն ուղղված եզրակացություններ: Կարծիքի մշակումը ցույց տվեց նաև հետագա աշխատանքներում քրեաիրավական ոլորտից դուրս դատախազական ծառայությունների իրավասությունների վերաբերյալ առաջարկության սկզբունքների վերաբերելիությունը դիտարկելու անհրաժեշտությունը:

II. ՆԵՐԿԱ ԻՐԱԿԻՃԱԿԸ

14. Հաշվի առնելով հարցաշարին տրված պատասխանները, ինչպես նաև ԵԳԴ-ի, ԵԴ-ի նիստերի արդյունքները, ԵՂԳԽՆ-ն գտնում է, որ ոչ պատժիչ բնույթի խնդիրների մասով Եվրոպայի դատախազությունների ներկայիս իրավիճակը կարել է նկարագրել հետևյալ կերպ:
15. Կարելի է առանձնացնել անդամ պետությունների երկու հիմնական խումբ. պետություններ, որտեղ դատախազական ծառայությունները քրեաիրավական ոլորտից դուրս լիազորություններ չունեն, և պետություններ, որտեղ դատախազական ծառայությունները քրեաիրավական ոլորտից դուրս ունեն որոշ լիազորություններ կամ լիազորությունների լայն շրջանակ:
16. Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մեծ մասում դատախազական ծառայություններն ունեն առնվազն մի քանի խնդիրներ և գործառնություններ քրեաիրավական ոլորտից դուրս²¹: Իրավասությունների ոլորտները տարբեր են և ներառում են, *inter alia*, քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, վարչական, ընտրական իրավունքի, ինչպես նաև շրջակա միջավայրի, սոցիալական իրավունքների և խոցելի խմբերի (ինչպիսիք են անչափահասները,

¹⁵ Սանկտ Պետերբուրգի համաժողով, տե՛ս CPE (2008) 3 փաստաթուղթը:

¹⁶ Հարցաշարում դիտարկվել են ոչ քրեական բնույթի իրավասությունների տեսակները, դրանց ծագումը, դատախազների դերը, այդ իրավասությունների արդյունավետ օգտագործումը և դրանցից ամենակարեւորները, նախատեսվող բարեփոխումները, դատախազությունների հատուկ կազմակերպությունները, դատախազների հատուկ լիազորությունները և որոշումների կայացման գործում նրանց հնարավոր դերը, Եվրոպական դատարանի և անդամ պետությունների սահմանադրական դատարանների համապատասխան նախադեպային իրավունքը:

¹⁷ Տե՛ս դոցենտ Անդրաս Չու. Վարգայի զեկույցը CCPE-Bu (2008) 4 rev. փաստաթղթում:

¹⁸ Տե՛ս CPE (2008)3 փաստաթուղթը, 8-րդ պարբերություն:

¹⁹ Տե՛ս ՄԱԿ-ի Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության հանձնաժողովի կողմից ընդունված «Օրենքի գերակայության ամրապնդում դատախազական ծառայության բարեվարքության և կարողությունների բարելավման միջոցով» 17/2 բանաձեռը (ՄԱԿ-ի E/2008/30 փաստաթուղթ) և 1999 թվականին Դատախազների միջազգային ասոցիացիայի կողմից հաստատված և այդ բանաձեռին կցված՝ Մասնագիտական պատասխանատվության չափորոշիչները և Դատախազների հիմնական պարտականությունների ու իրավունքների վերաբերյալ հայտարարությունը:

²⁰ Տե՛ս ԱՊՀ անդամ երկրների միջխորհրդարանական վեհաժողովի կողմից 2006 թվականի նոյեմբերի 16-ին ընդունված՝ «Դատախազական ծառայության մասին» օրինակելի օրենքը:

²¹ Ալբանիա, Հայաստան, Ավստրիա, Ադրբեջան, Բելգիա, Բուլղարիա, Խորվաթիա, Չեխիայի Հանրապետություն, Կիպրոս, Դանիա, Ֆրանսիա, Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետություն, Գերմանիա, Հունաստան, Հունգարիա, Իռլանդիա, Իտալիա, Լատվիա, Լիխտենշտեյն, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մոլդովա, Մոնակո, Մոնտենեգրո, Նիդեռլանդներ, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Ռուսաստանի Դաշնություն, Սան Մարինո, Սլովակիայի Հանրապետություն, Սլովենիա, Իսպանիա, Թուրքիա, Ուկրաինա:

հաշմանդամություն ունեցող անձինք կամ շատ ցածր եկամուտ ունեցող անձինք) իրավունքների պաշտպանության ոլորտները: Որոշ անդամ պետություններում դատախազների խնդիրները եւ աշխատանքային ծանրաբեռնվածությունն այս ոլորտում կարող են նույնիսկ գերակայել քրեական արդարադատության համակարգում հանրային մեղադրողի դերի նկատմամբ: Մյուս կողմից որոշ պետությունների դատախազական ծառայություններ հայտարարում են, որ այս ոլորտում իրենց իրավասությունները շատ կարելի է չեն կամ գործնականում շատ հազվադեպ են կիրառվում²²:

17. Որոշ անդամ պետություններում դատախազական ծառայությունները ոչ պատժիչ բնույթի իրավասություններ չունեն²³:
18. Զաղաքացիաիրավական խնդիրները վերաբերում են իրավունքի տարբեր ոլորտների, ինչպիսիք են քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, առեւտրային, շրջակա միջավայրի, սոցիալական իրավունքը, եւ ներառում են իրավասություններ՝ կապված, օրինակ, ամուսնությունը չեղյալ համարելու, մահվան արձանագրման, հայրության մերժման կամ որդեգրման դադարման, անձանց առողջապահական հաստատությունում պահելու, գործունակության սահմանափակման, երեխաների իրավունքների պաշտպանության, տնօրենների որակագրվման կամ ընկերությունների լուծարման, պետության գույքային իրավունքների եւ շահերի, սեփականաշնորհման, դատական համակարգի կողմից հասցված վնասի փոխհատուցման, որոշ (կարգավորման շրջանակում գտնվող) մասնագետների էթիկական վարքագծի նկատմամբ հսկողության, քաղաքացիական ստոցիաների լուծարման, աշխատանքային կամ սոցիալական իրավակարգավորումների խախտումների արձանագրման, շրջակա միջավայրի կառավարման հետ: Բացի այդ, որոշ պետություններում դատախազները կարող են գործել որպես պետության իրավական ներկայացուցիչներ եւ հարուցել գործեր, օրինակ՝ դատական հայց հարուցել հանրային սեփականությանը վնաս հասցրած անձանց դեմ:
19. Որոշ անդամ պետություններում դատախազական ծառայությունները կարող են ոչ միայն պաշտպանել մեկ կամ մի քանի անհատների իրավական շահերը եւ իրավունքները, այլ նաեւ արձագանքել այն խախտումներին, որոնք ազդում են միաժամանակ բազմաթիվ անձանց իրավունքների վրա: Այնպիսի իրավասության շնորհիվ, ինչպիսին պետական կամ տեղական իշխանության մարմինների կողմից ընդունված օրենքների կիրառման եւ իրավական ակտերի օրինականության նկատմամբ հսկողության իրականացումն է, դատախազական ծառայությունը դառնում է մարդկանց մեծ խմբերի կամ առհասարակ հասարակության իրավունքների եւ ազատությունների պաշտպանության իրական գործիք:
20. Հանրային իրավունքի գործունեությանն առնչվող իրավիճակներում կարելի է առանձնացնել երկու ընդհանուր առանձնահատկություն: Այն բոլոր երկրներում, որտեղ դատախազներն ունեն վարչական մարմինների գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնելու իրավասություններ, նրանք լիազորված են նաեւ դատական հայց հարուցելու այդ մարմինների որոշումների դեմ: Որոշ դատախազական ծառայություններ իրավունք ունեն կարծիք հայտնելու օրենսդրական ակտերի նախագծերի առնչությամբ, որոնք վերաբերում են, օրինակ, դատական համակարգի կառուցվածքին, ընթացակարգային կանոններին կամ նյութական իրավունքին: Որոշ դատախազական ծառայությունների տրվել է հատուկ իրավասություններ, օրինակ՝ վարչական որոշումների առնչությամբ իրավական կարծիքի տրամադրում օրենսդրական առաջարկությունների նախագծերի վերաբերյալ, մինչեւ պետության դեմ որեւէ այլ դատական հայց ներկայացնելը հարկադիր միջնորդության կամ ոչ դատական կարգով լուծման ուղիների մասով պահանջի ներկայացում, կալանքին վերաբերող կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողություն, օրենսդրության կիրարկման մշտադիտարկում եւ պահպանում, նախագգուշացում, համապատասխան վարչական մարմնի որոշման դեմ բողոքի ներկայացում կամ դրա վիճարկում՝ կատարումը կասեցնելու լիազորությամբ կամ առանց դրա, հակասահմանադրականության բացառման հիմքով միջնորդություն, ընտրությունների կամ հանրաքվեի իրավաչափությունը վիճարկող հայցի ներկայացում, Կառավարության նիստերին մասնակցություն եւ խորհրդարանական քննչական հանձնաժողովներին անդամություն: Որոշ երկրներում հանրային մեղադրողներն ունեն որոշ խորհրդատվական առաքելություններ՝ կապված քաղաքացիական, վարչական, աշխատանքային կամ սոցիալական իրավունքի ոլորտների հետ. խորհրդատվական կարծիքների տրամադրումը կարող է լինել իրենց կողմից իրականացվող միակ խնդիրը:
21. Դատավարական իրավունքի տեսանկյունից որոշ իրավասություններ սահմանափակվում են դատական գործեր հարուցելով (սա բնորոշ է քաղաքացիական իրավունքին առնչվող խնդիրներին, սակայն կարող է վերաբերել նաեւ հանրային իրավունքի որոշ իրավասություններին), մինչդեռ այլ՝ հիմնականում հանրային իրավունքի ոլորտին վերաբերող իրավասություններն իրականացվում են

²² Ալբանիա, Ավստրիա, Ադրբեջան, Դանիա, Գերմանիա, Հունաստան, Իռլանդիա, Իտալիա, Լիխտենշտեյն, Լյուքսեմբուրգ, Մոլդովա, Սան Մարինո, Սլովենիա:

²³ Եստոնիա, Ֆինլանդիա, Վրաստան, Իսլանդիա, Մալթա, Նորվեգիա, Շվեդիա, Շվեյցարիա եւ Միացյալ Թագավորության դատական համակարգերում:

ուղղակի (արտադատական կարգով) գործունեությամբ (ներառյալ՝ բողոքարկումները, նախագգուշացումները, քննության իրականացումը)՝ կողմերին՝ դատարան դիմելու հնարավորության ընձեռմամբ: Տրիբունալների գերծանրաբեռնումից խուսափելու համար որոշ երկրներում դատախազներին լիազորություններ են տրվել կայացնելու որոշումներ անհատների կողմից ներկայացված որոշ դիմումների վերաբերյալ՝ տվյալ կողմին հնարավորություն ընձեռելով դիմելու դատարան:

22. Դատական հայցերը՝ անկախ դրանք կարգավորող ընթացակարգային կանոններից (քաղաքացիական վարույթի կանոններ կամ վարչական իրավունքի հատուկ կանոններ), կապված են դատական վարույթի հետ. դրանում դատախազները հանդես են գալիս որպես կողմ: Դատախազական ծառայությունները չունեն հատուկ լիազորություններ կամ իրավասություններ դատախազների կողմից քաղաքացիական դատական վարույթին որպես միջնորդներ մասնակցելիս. նրանք ունեն մյուս կողմերի հետ նույն լիազորությունները: Նրանց կարգավիճակը բացառիկ չէ, վարույթը կարող է նախաձեռնվել նաեւ այլ շահագրգիռ կողմերի կողմից: Այդպիսի դեպքերում գործերի էության քննության հարցում դատախազները վստահաբար չունեն որոշում կայացնելու լիազորություններ. նրանց կողմից ընդունվող որոշումները վերաբերում են միայն գործի հարուցմանը՝ քաղաքացիական գործերով դատարան միջնորդություն ներկայացնելու միջոցով:
23. Գրեթե բոլոր երկրներում, որտեղ դատախազները քրեական ոլորտից դուրս իրավասություններ ունեն, նրանք լիազորված են հարուցելու դատական նոր հայցեր, որպես վարույթի կողմ օգտագործելու պաշտպանության սովորական եւ արտակարգ միջոցներ (բողոքարկումներ): Այնուամենայնիվ, կարելի է առանձնացնել որոշ կանոններ (արտակարգ բողոքարկման կամ վարույթը վերսկսելու մասին առաջարկի արգելք, կողմի անունից գործի լուծման արգելք):
24. Որոշ անդամ պետություններում դատախազներն ունեն նաեւ որոշակի մասնագիտացված իրավասություններ, ինչպես օրինակ՝ արդարադատության համակարգի կառավարման եւ դեկավարման մեջ նրանց դերը կամ դատական, գործադիր եւ օրենսդիր իշխանությունների համար խորհրդատվական գործառնությունները:
25. Դատախազների ոչ պատժիչ բնույթի գործունեության նպատակները, անկախ դրա բովանդակային կամ դատավարական տարբերություններից, շատ ավելի փոխկապակցված են. օրենքի գերակայության ապահովում (ժողովրդավարական որոշումների ամբողջականություն, օրինականություն, օրենքի պահպանում, օրենքի խախտումների նկատմամբ իրավական պաշտպանության միջոցների կիրառում), անձանց (մասնավորապես նրանց, ովքեր անձամբ չեն կարող պաշտպանել իրենց իրավունքները՝ անչափահասներ, անձինք, որոնց բնակության վայրն անհայտ է, հոգեպես անգործունակ անձինք) իրավունքների ու ազատությունների պաշտպանություն, պետության սեփականության եւ շահերի պաշտպանություն, հանրային շահի (կամ հանրային կարգի) պաշտպանություն, դատարանների իրավազորությունների ներդաշնակեցում (օրենքի լավագույն շահից ելնելով՝ իրավական պաշտպանության հատուկ միջոցներ վերջնական դատական որոշումների դեմ, բարձրագույն ատյանի դատարանների նման վարույթներում որպես կողմ հանդես գալու գործառնություն):
26. Զրեաիրավական ոլորտից դուրս ընդլայնված իրավասություններ ունեցող դատախազական ծառայություններն իրենց կառուցվածքում հաճախ ունեն ոչ պատժիչ բնույթի խնդիրներով զբաղվող հատուկ կամ խառը ստորաբաժանումներ: Որոշ անդամ պետություններում հատուկ վարչություններ չկան, սակայն այդ խնդիրներն իրականացվում են հատուկ դատախազների կողմից, որոնք նշանակվում են իրենց ստորաբաժանումների կարիքներից ելնելով. կախված գործերի քանակից՝ այդ դատախազները կարող են չմասնակցել քրեաիրավական վարույթներին:
27. Մյուս կողմից՝ ԵՂԳԽԽ-ն տեղյակ է քրեական արդարադատության ոլորտից դուրս գործող հանրային մեղադրողների՝ երբեմն ոչ պատշաճ գործելակերպի դեպքերի մասին, որոնք համապատասխան գնահատականի են արժանացել Դատարանի կամ որոշ սահմանադրական դատարանների²⁴ կողմից կամ քննադատության են արժանացել Եվրոպայի խորհրդի այլ մարմինների կողմից: Առավել մտահոգիչ էին առանց պատճառաբանության քաղաքացիական դատավարության կարգով դատական գործընթաց սկսելու մերժման, առանց ողջամիտ շահերի (պետության, հանրային շահի կամ իրավունքների պաշտպանության վրա հիմնված շահերի)՝ կողմերի հավասարության սկզբունքի խախտմամբ դատական գործընթացին միջամտության, իրավական որոշակիության սկզբունքի (res judicata)²⁵ խախտմամբ դատարանների վերջնական վճիռը բեկանելու, գերագույն դատարանների կոլեգիաներում դատախազների մասնակցության դեպքերը՝ շփոթելով դատավորների՝ որոշումներ

²⁴ Տե՛ս CCPE-Bu (2008)4rev փաստաթուղթը:

²⁵ Res judicata սկզբունքը բացարձակ չէ, ինչպես որ նշված է ՄԻԵԴ-ի որոշ վճիռներում, օրենքով նախատեսված դեպքերում այս սկզբունքից կարող են լինել որոշ բացառություններ (տե՛ս *Ռյաբիխն ընդդեմ Ռուսաստանի* [Ryabykh v. Russia] (զանգատ թիվ 52854/99), *Պրավեդնայան ընդդեմ Ռուսաստանի* [Pravednaya v. Russia] (զանգատ թիվ 69529/01), *Սերգեյ Պետրովն ընդդեմ Ռուսաստանի* [Sergey Petrov v. Russia] գործերը (զանգատ թիվ 1861/05):

կայացնողի դերը դատախազների խնդիրների հետ, ինչպես նաև դատավարությունն սկսելու անսահմանափակ իրավունքի դեպքերը:

28. Դատախազների մասնակցությունը դատարանների նախադեպային իրավունքի ամրապնդման գործում փաստ է շատ անդամ պետություններում: Դատախազների դերն այս առումով չպետք է հնարավորություն տա նրանց անհարկի ազդեցություն ունենալու դատավորների կողմից վերջնական որոշումների կայացման գործընթացի վրա:

III. ԵՂՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

29. Ներկայումս քրեաիրավական ոլորտից դուրս դատախազական ծառայությունների գործունեությունը պայմանավորված է առաջին հերթին մարդու իրավունքների ու հանրային շահի պատշաճ ապահովման մասով հասարակության կարիքներով:
30. Բացի դատարանների և այնպիսի այլ ինստիտուտների դերից, ինչպիսին մարդու իրավունքի պաշտպանի ինստիտուտն է, որոշ անդամ պետություններում շատ արժեքավոր է համարվում նաև ներպետական օրենսդրությամբ սահմանված մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում դատախազական ծառայությունների դերը²⁶:
31. Քրեաիրավական ոլորտից դուրս դատախազական ծառայությունների խնդիրներին, գործառույթներին և կազմակերպմանն առնչվող միջազգային ընդհանուր իրավական Նորմեր և կանոններ չկան: Միեւնույն ժամանակ բոլոր իրավական համակարգերում դատախազական ծառայությունը կարելի էր դեր է կատարում մարդու իրավունքների պաշտպանության, օրինականության և օրենքի գերակայության պահպանության և քաղաքացիական հասարակության ամրապնդման ոլորտներում: Քրեաիրավական ոլորտից դուրս դատախազական ծառայությունների գործառույթների բազմազանությունը պայմանավորված է ազգային իրավական և պատմական ավանդույթներով: Յուրաքանչյուր պետության ինքնավար իրավունքն է սահմանել մարդու իրավունքների և հանրային շահերի պաշտպանության ոլորտում իր գործառույթներն իրականացնելու ինստիտուցիոնալ և իրավական կարգը՝ պահպանելով օրենքի գերակայության սկզբունքը և իր միջազգային պարտավորությունները: «Ավելի հզոր Եվրոպայում» առկա բազմազան համակարգերի ներդաշնակեցումը հիմնված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի դրույթների վրա՝ հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը:
32. Եվրոպայի բոլոր պետությունների առջև պահանջ է դրված զարգացնելու և ամրապնդելու իր բոլոր մարմինների, այդ թվում՝ դատարանների և դատախազական ծառայությունների ներուժը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության գործառույթների հաջող իրականացումը պետք է պայմանավորված լինի ոչ թե մարդու որոշ իրավունքների և դրանց պաշտպանության հետ կապված ընթացակարգերի թուլացման հաշվին այլ իրավունքների և ընթացակարգերի ուժեղացմամբ, այլ դրանց միաժամանակյա զարգացմամբ: Դրանք բոլորը մեկ նպատակ ունեն՝ անհատների իրավունքների ու ազատությունների, հասարակության և պետության շահերի պաշտպանությունը:
33. Շատ եվրոպական երկրներում մեծանում է մարդու իրավունքների պաշտպանի դերը (ինչպես ընդհանուր իրավասությունների, այնպես էլ անհատների, օրինակ՝ կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում մասնագիտացման տեսանկյունից): Անհրաժեշտ է, որ հնարավորինս շատ մարմիններ, կազմակերպություններ և պաշտոնատար անձինք զբաղվեն մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հարցերով: Մարդիկ պետք է հնարավորություն ունենան ընտրելու իրենց շահերի պաշտպանության համար պաշտոնական կամ ոչ պաշտոնական ընթացակարգը, այդ թվում՝ այն ընթացակարգերը, որոնցում ներգրավված են քաղաքացիական հասարակության կառույցները:
34. Ժողովրդավարական պետությունում դատախազները կարող են ունենալ կամ չունենալ իրավասություններ քրեաիրավական ոլորտից դուրս: ԵՂԳԻՍԻՆ-ն կոչ է անում այն անդամ պետություններին, որոնցում դատախազական ծառայություններին վերապահված են քրեաիրավական ոլորտից դուրս գործառույթներ, ապահովելու, որ այդ գործառույթներն իրականացվեն հետեւյալ սկզբունքներին համապատասխան.
 - ա. պետք է պահպանվի լիազորությունների տարանջատման սկզբունքը՝ կապված քրեաիրավական ոլորտից դուրս դատախազների խնդիրների և գործունեության, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության գործում դատարանների դերի հետ.
 - բ. քրեաիրավական ոլորտից դուրս գործող դատախազների գործողությունները պետք է

²⁶ Սանկտ Պետերբուրգի համաժողով, տե՛ս CPE (2008) 3 փաստաթուղթը, տե՛ս նաև Գլխավոր քարտուղար Թերրի Դեկսի և Մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համարբերգի ելույթներն այս համաժողովում (www.coe.int.ccepe):

բնութագրվեն նաեւ անկողմնակալության եւ արդարության սկզբունքի պահպանմամբ.

- գ. այս գործառնությունը պետք է իրականացվեն «հասարակության անունից եւ հանրային շահից ելնելով»²⁷ ապահովելու համար օրենքի կիրառումը՝ հարգելով հիմնարար իրավունքներն ու ազատությունները եւ գործելով օրենքով դատախազներին վերապահված իրավասությունների շրջանակներում, ինչպես նաեւ Կոնվենցիայի ու Դատարանի Նախադեպային իրավունքի համաձայն.
 - դ. դատախազների նման իրավասությունները պետք է հնարավորինս ճշգրտորեն կարգավորվեն օրենքով.
 - ե. պետք է բացառել որեւէ անհարկի միջամտություն դատախազական ծառայությունների աշխատանքներին.
 - զ. քրեաիրավական ոլորտից դուրս գործելիս դատախազները պետք է ունենան մյուս կողմերին հավասար իրավունքներ ու պարտավորություններ, եւ դատական վարույթում չպետք է ունենան գերակա դիրք (կողմերի հավասարության սկզբունք).
 - է. քրեական գործերին չառնչվող հարցերում հանրային շահը պաշտպանելու նպատակով հասարակության անունից հանդես եկող դատախազական ծառայությունների գործողությունները չպետք է խախտեն դատարանի վերջնական որոշումների պարտադիր լինելու սկզբունքը (res judicata)՝ բացառությամբ միջազգային պարտավորություններով, այդ թվում՝ Դատարանի Նախադեպային իրավունքով սահմանված որոշ դեպքերի.
 - ը. պետք է օրենքով սահմանել դատախազների՝ իրենց գործողությունները հիմնավորելու եւ այդ հիմնավորումները գործով ներգրավված կամ շահագրգիռ կողմ հանդիսացող անձանց կամ հաստատությունների համար հասանելի դարձնելու պարտավորությունը.
 - թ. պետք է ապահովել քաղաքացիական գործերով ներգրավված կամ շահագրգիռ կողմ հանդիսացող անձանց կամ հաստատությունների՝ դատախազների կիրառած միջոցների կամ պարտավորությունների չկատարման դեմ պահանջ ներկայացնելու իրավունքը.
 - ժ. անհրաժեշտ է հետեւողական մոտեցում ցուցաբերել քրեաիրավական ոլորտից դուրս դատախազական ծառայությունների գործունեության վերաբերյալ Դատարանի Նախադեպային իրավունքի զարգացումներին՝ ապահովելու համար, որ նման գործունեության իրավական հիմքերը եւ համապատասխան գործելակերպը լիովին համահունչ լինեն վերաբերելի վճիռներին:
35. Պայմանավորված գործերի քանակով՝ քրեաիրավական ոլորտից դուրս իրավասություններ ունեցող դատախազական ծառայություններին խորհուրդ է տրվում ստեղծել մասնագիտացված ստորաբաժանումներ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ունենալ դատախազներ իրենց կազմակերպչական կառուցվածքում եւ բավարար թվով հմուտ մարդկային ու ֆինանսական ռեսուրսներ՝ ոչ պատժիչ բնույթի խնդիրներն իրականացնելու համար:
36. Համապատասխան դատախազական ծառայություններին կոչ է արվում քրեաիրավական ոլորտից դուրս իրենց գործունեության ընթացքում, ըստ նպատակահարմարության, հաստատել եւ զարգացնել համագործակցություն կամ կապեր մարդու իրավունքների պաշտպանի եւ մարդու իրավունքների պաշտպանին համանման կառույցների, ինչպես նաեւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցների հետ:
37. Պետք է հրատարակել շրջաբերականներ կամ ուղեցույցներ, որոնք, ըստ անհրաժեշտության, ամփոփում են յուրաքանչյուր համակարգի շրջանակում քրեաիրավական ոլորտից դուրս դատախազական ծառայությունների գործունեության նկատմամբ մոտեցումների ներդաշնակեցմանն ուղղված լավագույն գործելակերպերն ու առաջարկությունները:
38. Անդամ պետությունները կամ համապատասխան դատախազական ծառայությունները պետք է մշակեն քրեաիրավական ոլորտից դուրս գործունեությամբ զբաղվող դատախազների վերապատրաստում:
39. Անդամ պետությունները կամ համապատասխան դատախազական ծառայությունները պետք է իրականացնեն փորձի, այդ թվում՝ լավագույն գործելակերպերի, օրենսդրական ակտերի եւ այլ նորմատիվ կյուլթերի փոխանակում:
40. ԵՂԳԽՆ-ն խորհուրդ է տալիս Նախարարների կոմիտեին դիտարկել ընդհանուր եվրոպական սկզբունքների, մասնավորապես՝ հանրային մեղադրողների՝ քրեաիրավական ոլորտի շրջանակից դուրս կարգավիճակին, լիազորություններին եւ գործելակերպին վերաբերող սկզբունքների մշակումը:

²⁷ Սանկտ Պետերբուրգի համաժողով, տե՛ս CPE (2008) 3 փաստաթուղթը:

Չարքը պետք է դիտարկել մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների պաշտպանության կարելություն, լիազորությունների տարանջատման եւ կողմերի հավասարության ժողովրդավարական սկզբունքի լույսի ներքո:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

ԵԴՂԻՍ-ն այն կարծիքին է, որ այն պետությունները, որտեղ դատախազական ծառայությունները ոչ քրեական բնույթի իրավասություններ ունեն, պետք է ապահովեն, որ այդ գործառույթներն իրականացվեն ժողովրդավարական պետությունն օրենքի գերակայության շրջանակում կառավարելու սկզբունքներին համապատասխան, եւ որ մասնավորապես՝

- ա. պահպանվի լիազորությունների տարանջատման սկզբունքը՝ կապված քրեաիրավական ոլորտից դուրս դատախազների խնդիրների եւ գործունեության, ինչպես նաեւ մարդու իրավունքների պաշտպանության գործում դատարանների դերի հետ.
- բ. քրեաիրավական ոլորտից դուրս գործող դատախազների գործողությունները բնութագրվեն նաեւ անկողմնակալության եւ արդարության սկզբունքի պահպանմամբ.
- գ. այս գործառույթներն իրականացվեն «հասարակության անունից եւ հանրային շահից ելնելով»՝ ապահովելու համար օրենքի կիրառումը՝ հարգելով հիմնարար իրավունքներն ու ազատությունները եւ գործելով օրենքով դատախազներին վերապահված իրավասությունների շրջանակներում, ինչպես նաեւ Կոնվենցիայի ու Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն.
- դ. դատախազների նման իրավասությունները հնարավորինս ճշգրտորեն կարգավորվեն օրենքով.
- ե. բացառվի որեւէ անհարկի միջամտություն դատախազական ծառայությունների աշխատանքներին.
- զ. քրեաիրավական ոլորտից դուրս գործելիս դատախազներն ունենան մյուս կողմերին հավասար իրավունքներ ու պարտավորություններ, եւ դատական վարույթում չունենան գերակա դիրք (կողմերի հավասարության սկզբունք).
- է. քրեական գործերին չառնչվող հարցերում հանրային շահը պաշտպանելու նպատակով հասարակության անունից հանդես եկող դատախազական ծառայությունների գործողությունները չխախտեն դատարանի վերջնական որոշումների պարտադիր լինելու սկզբունքը (res judicata)՝ բացառությամբ միջազգային պարտավորություններով, այդ թվում՝ Դատարանի նախադեպային իրավունքով սահմանված որոշ դեպքերի.
- ը. [օրենքով սահմանվի] դատախազների՝ իրենց գործողությունները պատճառաբանելու եւ այդ պատճառաբանությունները գործով ներգրավված կամ շահագրգիռ կողմ հանդիսացող անձանց կամ հաստատությունների համար հասանելի դարձնելու պարտավորությունը.
- թ. ապահովվի քաղաքացիական գործերով ներգրավված կամ շահագրգիռ կողմ հանդիսացող անձանց կամ հաստատությունների՝ դատախազների կիրառած միջոցների կամ պարտավորությունների չկատարման դեմ պահանջ ներկայացնելու իրավունքը.
- ժ. հետեւողական մոտեցում ցուցաբերվի քրեաիրավական ոլորտից դուրս դատախազական ծառայությունների գործունեության վերաբերյալ Դատարանի նախադեպային իրավունքի զարգացումներին՝ ապահովելու համար, որ նման գործունեության իրավական հիմքերը եւ համապատասխան գործելակերպը լիովին համահունչ լինեն վերաբերելի վճիռներին.
- ժա) համապատասխան դատախազական ծառայությունները, ըստ նպատակահարմարության, հաստատեն եւ զարգացնեն համագործակցություն կամ կապեր մարդու իրավունքների պաշտպանի եւ մարդու իրավունքների պաշտպանին համանման կառույցների, ինչպես նաեւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցների հետ.
- ժբ) անդամ պետությունները կամ համապատասխան դատախազական ծառայություններն իրականացնեն փորձի, այդ թվում՝ լավագույն գործելակերպերի, օրենսդրական ակտերի եւ այլ նորմատիվ նյութերի փոխանակում.
- ժգ) անդամ պետությունները կամ դատախազական ծառայությունները մշակեն քրեաիրավական ոլորտից դուրս գործունեությամբ զբաղվող դատախազների վերապատրաստում.

ժդ) հրատարակվեն շրջաբերականներ կամ ուղեցույցներ, որոնք ամփոփում են, ըստ անհրաժեշտության, յուրաքանչյուր համակարգի շրջանակում քրեական ոլորտից դուրս դատախազների գործունեության նկատմամբ մոտեցումների ներդաշնակեցմանն ուղղված լավագույն գործելակերպերն ու առաջարկությունները:

ԵՂԳԻՍԻՆ-ն խորհուրդ է տալիս Նախարարների կոմիտեին դիտարկել ընդհանուր եվրոպական սկզբունքների, մասնավորապես՝ հանրային մեղադրողների՝ քրեաիրավական ոլորտի շրջանակից դուրս կարգավիճակին, լիազորություններին եւ գործելակերպին վերաբերող սկզբունքների մշակումը: Հարցը պետք է դիտարկել մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների պաշտպանության կարեւորության, լիազորությունների տարանջատման եւ կողմերի հավասարության ժողովրդավարական սկզբունքի լույսի ներքո:

Կարծիք թիվ 4 (2009)

Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի՝
ուղղված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին

Դատավորների և դատախազների միջև հարաբերությունները

Սույն կարծիքը, որն ընդունվել է ԵԴԽՏ-ի և ԵԴԳԽՏ-ի կողմից համատեղ, պարունակում է՝

- **Հռչակագիր, որը կոչվում է «Բորդոյի հռչակագիր»,**
- **Բացատրական ծանոթագրություն:**

ԲՈՐԴՈՅԻ ՀՈՉԱԿԱԳԻՐ «ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ»¹

Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԽՏ) և Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԳԽՏ) Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ դատավորների և դատախազների միջև հարաբերությունների վերաբերյալ կարծիք տրամադրելու խնդրանքով համաձայնել են հետևյալի մասին.

1. Հասարակության շահերից է բխում, որ օրենքի գերակայությունը երաշխավորվի արդարադատության արդար, անաչառ և արդյունավետ իրականացմամբ: Հանրային մեղադրողները և դատավորները վարույթի բոլոր փուլերում ապահովում են, որ երաշխավորվեն անհատների իրավունքները և ազատությունները, և պաշտպանվի հասարակական կարգը: Դա ներառում է պաշտպանյալների և տուժողների իրավունքների նկատմամբ լիակատար հարգանքը: Մեղադրողի՝ հետապնդում չհարուցելու մասին որոշումը պետք է բաց լինի դատական վերանայման համար: Դրա տարբերակ կարող է լինել տուժողի կողմից անմիջապես դատարանում գործ հարուցելը:
2. Արդարադատության արդար իրականացումը պահանջում է, որ մեղադրողի և պաշտպանության կողմի միջև առկա լինի իրավահավասարություն, ինչպես նաև հարգանք դատարանի անկախության, իշխանությունների տարանջատման սկզբունքի և վերջնական դատական որոշումների պարտադիր ուժի նկատմամբ:
3. Դատավորների և հանրային մեղադրողների տարբեր, սակայն միմյանց փոխլրացնող դերերի պատշաճ իրականացումն անհրաժեշտ երաշխիք է արդարադատության արդար, անաչառ և արդյունավետ իրականացման համար: Ե՛վ դատավորները, ե՛լ հանրային մեղադրողները պետք է օգտվեն իրենց գործառնությունների առնչությամբ անկախությունից, ինչպես նաև միմյանցից անկախ լինեն և այդպիսին դիտվեն:
4. Արդարադատության տրամադրության տակ պետք է լինեն պատշաճ կազմակերպչական, ֆինանսական, նյութական և մարդկային ռեսուրսներ:
5. Դատավորների, իսկ կիրառելիության դեպքում՝ երդվյալ ատենակալների դերն է պատշաճ որոշումներ կայացնել դատախազական ծառայության կողմից իրենց պարբերաբար ներկայացվող գործերի վերաբերյալ՝ առանց մեղադրողի կամ պաշտպանության կողմի կամ որեւէ այլ աղբյուրի կողմից որեւէ անհարկի ազդեցության:
6. Մինչդատական փուլում մեղադրողի կողմից օրենքի, իսկ կիրառելիության դեպքում՝ հայեցողական լիազորությունների կիրարկումը պահանջում է, որ հանրային մեղադրողների կարգավիճակն օրենքով երաշխավորվի հնարավորինս բարձր մակարդակով, դատավորների կարգավիճակին համանման եղանակով: Նրանք պետք է լինեն անկախ և ինքնավար իրենց որոշումները կայացնելիս և իրենց գործառնություններն իրականացնեն արդար, օբյեկտիվ և անաչառ եղանակով:
7. ԵԴԽՏ-ն և ԵԴԳԽՏ-ն հղում են կատարում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետեւողական նախադեպային իրավունքին՝ կապված Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի և 6-րդ հոդվածի հետ: Մասնավորապես նրանք հղում են

¹ Սույն հռչակագիրն ունի ուղեկցող Բացատրական ծանոթագրություն: Հռչակագիրը մշակվել է ԵԴԽՏ-ի և ԵԴԳԽՏ-ի աշխատանքային խմբերի կողմից համատեղ Բորդոյում (Ֆրանսիա) և ԵԴԽՏ-ի և ԵԴԳԽՏ-ի կողմից պաշտոնապես ընդունվել է 2009 թվականի նոյեմբերի 18-ին Բորդոյում (Սլովենիա):

կատարում այն որոշումներին, որոնցով Դատարանը ճանաչել է դատական իշխանություն կրակնացնելու համար օրենքով լիազորված պաշտոնատար անձի կողմից գործադիր իշխանությունից եւ կողմերից անկախ լինելու պահանջը, որը սակայն չի բացառում ենթակայությունն ավելի բարձր անկախ դատական մարմին: Դատախազներին որեւէ դատական գործառույթի վերագրումը պետք է սահմանափակվի այն գործերով, որոնք ներառում են հատկապես ոչ մեծ ծանրության պատիժներ, պետք է իրականացվի նույն գործով հետապնդում իրականացնելու լիազորության հետ համատեղ եւ չպետք է խախտի պաշտպանյալների՝ դատական գործառույթներ իրականացնող անկախ եւ անաչառ մարմնի կողմից այդպիսի գործերով որոշումներ կայացվելու իրավունքը:

8. Հանրային մեղադրողների անկախ կարգավիճակի համար անհրաժեշտ են որոշ նվազագույն պահանջներ, մասնավորապես՝
 - a. որ նրանց պաշտոնը եւ գործունեությունը ենթակա չլինեն հենց դատախազական ծառայությունից դուրս որեւէ աղբյուրի կողմից ազդեցության կամ միջամտության,
 - b. որ նրանց աշխատանքի ընդունումը, աշխատանքում առաջխաղացումը, պաշտոնավարման անվտանգությունը, այդ թվում՝ տեղափոխումը, որը պետք է իրականացվի միայն օրենքին համապատասխան կամ նրանց համաձայնությամբ, ինչպես նաեւ վարձատրությունը պաշտպանվեց օրենքով նախատեսված երաշխիքների միջոցով:
9. Օրենքի գերակայությամբ առաջնորդվող պետությունում, երբ դատախազական ծառայության կառուցվածքն աստիճանակարգային է, հանրային մեղադրողների մասով հետապնդման արդյունավետությունը խստորեն կապված է լիազորության, հաշվետվողականության եւ պատասխանատվության թափանցիկ գծերի հետ: Առանձին դատախազներին տրվող ցուցումները պետք է լինեն գրավոր, օրենքին համապատասխան եւ կիրառելիության դեպքում հետապնդման հանրամատչելի ուղենիշներին եւ չափորոշիչներին համապատասխան: Հանրային մեղադրողի կողմից հետապնդում իրականացնելու կամ չիրականացնելու մասին կայացված որոշման՝ օրենքին համապատասխան ցանկացած վերանայում պետք է իրականացվի անաչառ եւ օբյեկտիվ կերպով: Ամեն դեպքում պետք է պատշաճ կերպով հաշվի առնել տուժողի շահերը:
10. Իրավական գործընթացում ներգրավված բոլոր մասնագետների կողմից ընդհանուր իրավական սկզբունքներ եւ էթիկական արժեքներ ունենալը կարեւոր է արդարադատության պատշաճ իրականացման համար: Վերապատրաստումը, այդ թվում՝ ղեկավար կազմի վերապատրաստումը դատավորների եւ հանրային մեղադրողների համար իրավունք, ինչպես նաեւ պարտականություն է: Այդ վերապատրաստումը պետք է կազմակերպվի անաչառ հիմունքներով եւ պարբերաբար եւ օբյեկտիվորեն գնահատվի արդյունավետության մասով: Պատշաճ դեպքում դատավորների, հանրային մեղադրողների եւ իրավաբանների համար իրականացվող՝ ընդհանուր հետաքրքրության վերաբերյալ համատեղ վերապատրաստումը կարող է նպաստել բարձրագույն որակի արդարադատության հասնելուն:
11. Հասարակության շահը նաեւ պահանջում է, որ լրատվության միջոցներին տրամադրվեն անհրաժեշտ տեղեկություններ՝ հանրությանն արդարադատության համակարգի գործունեության վերաբերյալ տեղեկացնելու համար: Իրավասու մարմիններն այդ տեղեկությունները տրամադրում են՝ պատշաճ կերպով հաշվի առնելով մասնավորապես մեղադրյալի անմեղության կանխավարկածը, արդար դատաքննության իրավունքը եւ վարույթին ներգրավված բոլոր անձանց անձնական եւ ընտանեկան կյանքի իրավունքը: Ինչպես դատավորները, այնպես էլ դատախազները պետք է կազմեն լավագույն գործելակերպերի կանոնագիրք կամ ուղենիշներ յուրաքանչյուր մասնագիտության համար՝ լրատվության միջոցների հետ դրա կապերի վերաբերյալ:
12. Ինչպես հանրային մեղադրողները, այնպես էլ դատավորներն առանցքային դերակատարներ են դատական հարցերով միջազգային համագործակցության հարցում: Անհրաժեշտ է տարբեր պետությունների իրավասու մարմինների միջեւ փոխադարձ վստահության բարձրացում: Այս համատեքստում պարտադիր է, որ դատախազների կողմից միջազգային համագործակցության միջոցով հավաքված եւ վարույթում օգտագործվող տեղեկությունները լինեն թափանցիկ իրենց բովանդակությամբ եւ ծագմամբ, ինչպես նաեւ հասանելի դարձվեն դատավորներին եւ բոլոր կողմերին՝ մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների արդյունավետ պաշտպանության նպատակով:
13. Այն անդամ պետություններում, որտեղ դատախազներն ունեն քրեաիրավական ոլորտից դուրս գործառույթներ, սույն կարծիքում նշված սկզբունքները կիրառվում են այդ գործառույթների նկատմամբ:

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ա. Կարծիքի նպատակը

1. Օրենքի գերակայության վրա հիմնված ժողովրդավարական պետության կարեւոր պարտականությունն է երաշխավորել, որ լիակատար հարգվեն հիմնարար իրավունքները եւ ազատությունները, ինչպես նաեւ օրենքի առջեւ հավասարությունը՝ մասնավորապես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ), ինչպես նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Դատարան) նախադեպային իրավունքին համապատասխան: Միեւնույն ժամանակ կարեւոր է ապահովել հասարակության մեջ անվտանգությունը եւ արդարությունը՝ ապահովելով հանցավոր վարքագծի առնչությամբ արդյունավետ միջոցներ: Ժողովրդավարական պետությունում հասարակության մեջ անվտանգությունը պետք է երաշխավորվի նաեւ հանցավոր վարքագծի համար նշանակված պատիժների արդյունավետ կատարմամբ (Յուլիանոսի, 1-ին պարբերություն):
2. Այսպիսով, պետության առաքելությունն է ստեղծել մարդու իրավունքները եւ հիմնարար ազատությունները հարգող՝ արդարադատության արդյունավետ համակարգ եւ ապահովել դրա գործունեությունը: Թեեւ այդ առաքելությանը մասնակցում են բազմաթիվ դերակատարներ՝ լինեն հանրային, թե (ինչպես իրավաբանների դեպքում է) մասնավոր հատվածից, արդարադատության անկախ եւ անաչառ գործունեությունն ապահովելու հարցում առանցքային դերակատարում ունեն դատավորները եւ հանրային մեղադրողները:
3. Իրենց նախորդ կարծիքներում Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԽԽ) եւ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԳԽԽ) անդրադարձել են արդարադատության արդյունավետության բազմաթիվ կարեւոր հայեցակետերի՝ շեշտը դնելով մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների վրա: Հարկ է ընդգծել, որ դատավորների եւ դատախազների, այդ թվում՝ քրեաիրավական ոլորտից դուրս պարտականություններ ունեցող հանրային մեղադրողների ընդհանուր նպատակն է ապահովել արդար, անաչառ եւ արդյունավետ արդարադատություն: Սույն կարծիքի նորությունը նրանում է, որ այն կազմվել է իրենց ազգային գործընկերներին ներկայացնող դատավորների եւ դատախազների կողմից, եւ այն անդրադառնում է այնպիսի հարցերի, որոնց վերաբերյալ դատավորները եւ դատախազները համաձայնության են եկել իրենց գործնական փորձի հիման վրա:
4. Այսպիսով, տեքստը կենտրոնանում է երկու առաքելությունների կարեւոր հայեցակետերի վրա եւ մասնավորապես՝ անկախության, անհատների իրավունքների եւ ազատությունների, օբյեկտիվության եւ անաչառության, Էթիկայի եւ դեռնությունից, վերապատրաստման եւ լրատվության միջոցների հետ հարաբերությունների վրա:
5. Սույն կարծիքը պետք է դիտարկվի արդարադատության առնչվող՝ դատական վարույթի տարբեր փուլերին ներգրավված մասնագետների, ինչպես օրինակ՝ դատական փորձագետների, դատարանի քարտուղարների, դատական կարգադրիչների, ոստիկանության հետ դատավորների եւ դատախազների հարաբերությունների համատեքստում, ինչպես առաջարկվում է Նախարարների կոմիտեի կողմից 2001 թվականի փետրվարի 7-ին ընդունված՝ «Եվրոպայում դատավորների համար շրջանակային գլոբալ գործողությունների ծրագրով» եւ Նախարարների կոմիտեի կողմից 2000 թվականի հոկտեմբերի 6-ին ընդունված՝ «Զրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» (2000)19 առաջարկությամբ:

բ. Ազգային համակարգերի բազմազանությունը

6. Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում միմյանց կողքի առկա են բազմաթիվ իրավական համակարգեր.
 - i. ընդհանուր իրավունքի համակարգերը, որոնցում առկա է հստակ բաժանում դատավորների եւ դատախազների միջեւ, եւ որոնցում *քրեական գործերով քննություն իրականացնելու լիազորությունը* համակցված չէ այլ գործառնությունների հետ,
 - ii. մայրցամաքային իրավունքի համակարգերը, որտեղ կարելի է դիտարկել տարբեր տեսակներ, որոնցում դատավորները կամ դատախազները «դատական կորպուսի» մասն են, կամ հակառակը՝ միայն դատավորներն են պատկանում այդ կորպուսին:

Ի հավելումն՝ այդ տարբեր համակարգերում հանրային դատախազության ինքնավարությունը գործադիր իշխանությունից կարող է լիակատար կամ սահմանափակ լինել:

7. Սույն կարծիքի նպատակն է Դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո սահմանել կիրառելի սկզբունքների եւ մոտեցումների հիմք՝ միեւնույն ժամանակ հաշվի առնելով ընդհանուր կետերը, ինչպես նաեւ տարբերությունները:
8. Գործառույթների տարանջատման երաշխիքը վարույթի ընթացքում կողմերի նկատմամբ դատավորի անաչառության կարեւոր պայման է: Անաչառությունը, ինչպես նշված է ԵԴԽԽ-ի դատական իշխանության անկախության եւ դատավորների անփոխարինելիության չափանիշների վերաբերյալ թիվ 1(2001) կարծիքում, դատավորի պաշտոնը սահմանող ինստիտուցիոնալ երաշխիքներից առաջինն է: Ավելին, այն ենթադրում է, որ հանրային դատախազության վրա դրված է ապացուցման բեռը եւ մեղադրական եզրակացություններ ներկայացնելու պարտականությունը, որը վերջնական որոշման առաջին դատավարական երաշխիքներից մեկն է:
9. Յուրաքանչյուր համակարգում դատավորի դերն ըստ այդմ տարբեր է հանրային դատախազության դերից: Դրանց համապատասխան առաքելություններն այդուհանդերձ շարունակում են փոխլրացնող լինել: Դատավորի եւ դատախազի միջեւ աստիճանակարգային կապեր առկա չեն:
10. Դատախազական ծառայության անկախությունը դատական համակարգի անկախության անբախտելի հետեւանքն է: Դատախազի դերն ինչպես կասկածյալների, մեղադրյալների, այնպես էլ տուժողների մարդու իրավունքներն ապահովելու եւ պաշտպանելու հարցում կարող է լավագույնս իրականացվել, եթե դատախազը որոշումներ կայացնելիս անկախ է գործադիր եւ օրենսդրական մարմիններից, եւ եթե դատավորների եւ դատախազների տարբեր դերը ճշտորեն պահպանվում են: Օրենքի գերակայության վրա հիմնված ժողովրդավարական երկրում իրավունքն է, որ հիմք է ապահովում դատախազության քաղաքականության համար (Յճակագիր, 3-րդ պարբերություն):

գ. Գործառույթների առանձնահատկությունները

11. Դատախազները եւ դատավորներն իրենց գործառույթները պետք է իրականացնեն արդար, անաչառ, օբյեկտիվ եւ հետեւողական կերպով, պետք է հարգեն եւ ջանան պաշտպանել մարդու իրավունքները եւ ձգտեն ապահովել, որ արդարադատության համակարգը գործի անհապաղ եւ արդյունավետորեն:
12. Իրենց գործառույթներն իրականացնելիս դատախազները հիմնվում են հայեցողական հետապնդման համակարգի (հնարավորության սկզբունք) կամ պարտադիր հետապնդման համակարգի (օրինականության սկզբունք) վրա, սակայն երկու դեպքերում էլ դատախազները ոչ միայն գործում են ամբողջ հասարակության անունից, այլեւ կատարում են պարտականություններ կոնկրետ անհատների, մասնավորապես՝ մեղադրյալի նկատմամբ, որի առջեւ կրում են արդարության պարտականություն, ինչպես նաեւ հանցագործություններից տուժողների նկատմամբ, որոնց առջեւ կրում են իրենց իրավունքները լիովին հաշվի առնելու պարտականություն: Այդ առումով եւ չխախտելով կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ դատախազը չի կարող համարվել մյուս կողմերին հավասար (Յճակագիր, 2-րդ պարբերություն): Դատախազները պետք է նաեւ հաշվի առնեն տուժողների տեսակետները եւ մտահոգությունները եւ գործողություններ ձեռնարկեն կամ նպաստեն գործողություններին, որոնք ուղղված են ապահովելուն, որ տուժողները տեղեկացվեն ինչպես իրենց իրավունքների, այնպես էլ վարույթի ընթացքի մասին: Նրանք չպետք է նախաձեռնեն կամ շարունակեն հետապնդումը, երբ հասանելի ապացույցների հիման վրա իրականացված անաչառ քննությունը ցույց է տալիս, որ մեղադրանքն անհիմն է:

դ. Գործող միջազգային փաստաթղթերը

13. Եվրոպայի խորհրդի բազմաթիվ տեքստեր, ինչպես նաեւ Դատարանի նախադեպային իրավունքն ուղղակիորեն կամ անուղղակիորեն անդրադառնում են դատավորների եւ դատախազների միջեւ հարաբերություններին:
14. Նախեւառաջ, Դատարանը դատավորներին պարտականություններ է հանձնարարում միայն նրանց՝ որպես իրավունքների եւ ազատությունների պահապան լիազորությունների շրջանակում, տե՛ս մասնավորապես 5-րդ հոդվածը (ազատության եւ անձեռնմխելիության իրավունք) եւ 6-րդ հոդվածը (արդար դատաքննության իրավունքը), սակայն այն դա անում է

Նաեւ հանրային մեղադրողների դեպքում (5-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի եւ 3-րդ եւ 6-րդ կետերի արդյունքում):

15. Դատարանը, որի պարտականություններից մեկն է մեկնաբանել ՄԻԵԿ-ը, բազմաթիվ վճիռներ է կայացրել դատավորների եւ հանրային մեղադրողների միջեւ հարաբերությունների վրա ազդող հարցերի վերաբերյալ:
16. Այն մասնավորապես քննել է նույն գործով նախ որպես դատախազ, ապա դատավոր հանդես եկած անձի խնդիրը (*Պիերսակն ընդդեմ Բելգիայի* [*Piersack v. Belgium*] գործով 1982 թվականի հոկտեմբերի 1-ի վճիռ, §§ 30-32), դատարանների կամ հետապնդող մարմինների նկատմամբ երբեւէ որեւէ քաղաքական ճնշում չգործադրվելը երաշխավորելու անհրաժեշտությունը (*Գուլյան ընդդեմ Մոլդովայի* [*Guja v. Moldova*] գործով 2008 թվականի փետրվարի 12-ի վճիռ, §§ 85-91), դատավորներին եւ դատախազներին ազատ արտահայտվելու իրավունքի համատեքստում պաշտպանելու անհրաժեշտությունը (*Սայգիլին եւ այլք ընդդեմ Թուրքիայի* [*Saygılı and Others v. Turkey*] գործով 2008 թվականի հունվարի 8-ի վճիռ, §§ 34-40), դատարանների եւ հանրային մեղադրանքի մարմինների՝ մարդու իրավունքների խախտումները քննելու, հետապնդելու եւ պատժելու դատավարական պարտավորությունները (*Ռամսահայը եւ այլք ընդդեմ Նիդեռլանդների* [*Ramsahai and Others v. the Netherlands*] գործով 2007 թվականի մայիսի 15-ի վճիռ, §§ 321-357) եւ վերջապես հետապնդող մարմինների նպաստը նախադեպային իրավունքի ստանդարտացման հարցում (*Մարտինս դե Կաշտրուն եւ Ալվեշ Կոռեյրա դե Կաշտրուն ընդդեմ Պորտուգալիայի* [*Martins de Castro and Alves Correia de Castro v. Portugal*] գործով 2008 թվականի հունիսի 10-ի վճիռ, §§ 51-66):
17. Քրեական դատավարության ոլորտում Դատարանը քննել է դատախազական ծառայության կարգավիճակը եւ լիազորությունները եւ ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները («այլ պաշտոնատար անձի» առնչությամբ, «որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն») տարբեր փաստական իրավիճակների համատեքստում (տե՛ս, ի թիվս այլևի, 1979 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռները *Շիեսերն ընդդեմ Շվեյցարիայի* [*Schiesser v. Switzerland*] գործով, §§ 27-38, *Դե Յոնգը, Բայյետը եւ Վան դե Բրինկն ընդդեմ Նիդեռլանդների* [*De Jong, Baljet and Van den Brink v. the Netherlands*] գործով, §§ 49-50, *Ասենովը եւ այլք ընդդեմ Բուլղարիայի* [*Assenov and Others v. Bulgaria*] գործով, §§ 146-150, *Նիեդբալան ընդդեմ Լեհաստանի* [*Niedbala v. Poland*] գործով, §§ 45-47, *Պանտեան ընդդեմ Ռումինիայի* [*Pantea v. Romania*] գործով, §§ 232-243, եւ *Մեդվեդեյն ընդդեմ Ֆրանսիայի* [*Medvedev and Others v. France*] գործով 2008 թվականի հուլիսի 10-ի վճիռը, §§ 61, 67-69): Դատարանը նաեւ քննել է հետապնդող մարմինների կարգավիճակը, իրավասությունը եւ վերահսկող լիազորությունները հեռախոսային զանգերի գաղտնալսման դեպքերում (*Դումիտրու Պոպեսկուն ընդդեմ Ռումինիայի* [*Dumitru Popescu v. Romania*] գործով 2007 թվականի ապրիլի 26-ի վճիռ, §§ 68-86) եւ Գերագույն դատարանի խորհրդակցություններին հետապնդող մարմինների ներկայությունը (*Բորգերսն ընդդեմ Բելգիայի* [*Borgers v. Belgium*] գործով 1991 թվականի հոկտեմբերի 30-ի վճիռ, §§ 24-29, եւ *Ֆոնտենը եւ Բեռլինն ընդդեմ Ֆրանսիայի* [*Fontaine and Berlin v. France*] գործով 2003 թվականի հուլիսի 8-ի վճիռ, §§ 57-67):
18. Վերջապես, քրեական ոլորտից դուրս Դատարանն ունի հստակ ձեւավորված նախադեպային իրավունքի համակցություն «ներկա գտնվելու դոկտրինի» վերաբերյալ, ըստ որի դատարանների խորհրդակցություններին մեղադրողների ներկայությունը հակասում է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին կետին (*Լոբու Մաչադուն ընդդեմ Պորտուգալիայի* [*Lobo Machado v. Portugal*] գործով 1996 թվականի փետրվարի 20-ի վճիռ, §§ 28-32, եւ *Մարտինինն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄԴ] [*Martine c. France*] [GC] գործով վճիռ, §§ 50-55):
19. Եվրոպայի խորհրդի կողմից կազմվել են այլ տեքստեր.
 - Նախարարների կոմիտեի «Դատավորների անկախության, արդյունավետության եւ դերի մասին» Rec(94)12 առաջարկությամբ ճանաչվում են դատավորների հանրային մեղադրողների միջեւ կապերը, առնվազն այն երկրներում, որտեղ վերջիններս Դատարանի կողմից այս արտահայտությանը տրված իմաստով ունեն դատական իշխանություն,
 - Նախարարների կոմիտեի «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» REC(2000)19 առաջարկությունում բացահայտ ընդգծվում են դատավորների եւ դատախազների միջեւ հարաբերությունները՝ միեւնույն ժամանակ ընդգծելով այն ընդհանուր սկզբունքները, որոնք խիստ կարեւոր են ապահովելու համար, որ այդ հարաբերություններն աներկբայորեն նպաստեն դատավորների եւ հանրային մեղադրողների պարտականությունների պատշաճ կատարմանը: Այն մասնավորապես շեշտում է պետությունների պարտավորությունը՝ «ձեռնարկելու պատշաճ միջոցներ՝ ապահովելու համար, որ հանրային մեղադրողների իրավական

կարգավիճակը, իրավասությունները եւ դատավարական դերն օրենքով սահմանվեն այնպես, որ դատարանի դատավորների անկախության եւ անաչառության մասին իրավաչափ կասկածի առկայությունն անհնար լինի»:

- Նախարարների կոմիտեի «Քրեական արդարադատության պարզեցման մասին» Rec (87)18 առաջարկությամբ ներկայացվում են նախկինում միայն դատավորներին վերապահված եւ ներկայումս դատախազական ծառայությանը (որի առաջնային առաքելությունը դեռեւս հետապնդումներ նախաձեռնելը եւ ցուցումներ տալն է) վերապահված պարտականությունների տարբեր օրինակներ: Այս նոր պարտականությունները լրացուցիչ պահանջներ են ստեղծում դատախազական ծառայության կառուցվածքի եւ այդ գործառույթները ստանձնելուն կոչված անձանց ընտրության վերաբերյալ:

II. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԵՂԱԴՐՈՂՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ա. Դատավորների եւ հանրային մեղադրողների ներքին եւ արտաքին անկախության երաշխիքները, օրենքի գերակայությունը որպես նրանց անկախության պայման

20. Դատավորները եւ հանրային մեղադրողներն իրենց համապատասխան գործառույթներն իրականացնելիս պետք է անկախ լինեն միմյանցից, ինչպես նաեւ օգտվեն փաստացի անկախությունից: Նրանք արդարադատության համակարգում եւ լայն հասարակությունում կատարում են տարբեր պարտականություններ: Հետեւաբար առկա են ինստիտուցիոնալ եւ գործառույթային տարբեր տեսանկյուններ (Հռչակագիր, 3-րդ պարբերություն):
21. Դատական իշխանությունը հիմնված է որեւէ արտաքին ուժից եւ որեւէ աղբյուրից տրվող որեւէ ցուցումից անկախության սկզբունքի, ինչպես նաեւ ներքին աստիճանակարգության բացակայության վրա: Դրա եւ կիրառելիության դեպքում երդվյալ ատենակալների դերն է պատշաճ որոշում կայացնել իրենց մոտ դատախազական ծառայության եւ կողմերի կողմից հարուցված գործերի վերաբերյալ: Դա ներառում է հանրային մեղադրողի կամ պաշտպանության կողմից անհարկի բոլոր ազդեցությունների բացակայությունը: Դատավորները, մեղադրողները եւ պաշտպանները պետք է բոլորն էլ հարգեն մյուսների դերերը: (Հռչակագիր, 5-րդ պարբերություն):
22. Դատավորների անկախության հիմնարար սկզբունքն ամրագրված է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածում եւ շեշտված է ԵԴԽԽ-ի նախորդ կարծիքներում:
23. Դատելու գործառույթը ենթադրում է պատասխանատվություն շահագրգիռ անձանց համար պարտադիր ուժ ունեցող որոշումներ կայացնելու եւ օրենքի հիման վրա դատավարության վերաբերյալ որոշում կայացնելու համար: Երկուսն էլ դատավորի՝ պետական իշխանության այլ մարմիններից անկախ դատական մարմնի բացառիկ իրավունքն են²: Սա ընդհանուր առմամբ հանրային մեղադրողների առաքելությունը չէ, որոնք պատասխանատու են քրեական վարույթ հարուցելու կամ դրանք շարունակելու համար:
24. ԵԴԽԽ-ն եւ ԵԴԳԽԽ-ն հղում են կատարում Դատարանի հետեւողական նախադեպային իրավունքին՝ կապված ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 3-րդ կետի եւ 6-րդ հոդվածի հետ: Մասնավորապես նրանք հղում են կատարում Շիեսերն ընդդեմ Շվեյցարիայի գործով որոշմանը, որով Դատարանը ճանաչել է «դատական իշխանություն իրականացնելու համար օրենքով լիազորված պաշտոնատար անձի կողմից» գործադիր իշխանությունից եւ կողմերից անկախ լինելու պահանջը, որը սակայն չի բացառում ենթակայությունն ավելի բարձր անկախ դատական մարմնին (Հռչակագիր, 7-րդ պարբերություն):
25. Որոշ անդամ պետություններ քրեական հետապնդումների իրականացման փոխարեն կամ որոշակի շահեր պաշտպանելու նպատակով հանրային մեղադրողներին վերապահում են որոշ ոլորտներում պարտադիր ուժ ունեցող որոշումներ կայացնելու լիազորություն: ԵԴԽԽ-ն եւ ԵԴԳԽԽ-ն համարում են, որ դատախազներին որեւէ դատական գործառույթի վերագրումը պետք է սահմանափակվի այն գործերով, որոնք ներառում են ոչ մեծ ծանրության պատիժներ, պետք է իրականացվի նույն գործով հետապնդում իրականացնելու լիազորության հետ համատեղ եւ չպետք է խախտի պաշտպանյալի՝ դատական գործառույթներ իրականացնող անկախ եւ անաչառ մարմնի կողմից այդպիսի գործով որոշումներ կայացվելու իրավունքը: Այդ վերապահումը հանրային մեղադրողներին ոչ մի դեպքում չպետք է թույլ տա կայացնել

² Տե՛ս մասնավորապես ԵԴԽԽ-ի դատական իշխանության անկախության եւ դատավորների անփոխարինելիության չափանիշների վերաբերյալ թիվ 1(2001) կարծիքը եւ «Դատավորների անկախության, արդյունավետության եւ դերի մասին» Rec(94)12 առաջարկությունը:

անհատների ազատությունները սահմանափակող եւ ազատությունից զրկման հետ կապված վերջնական որոշումներ՝ առանց դատավորին կամ դատարան բողոքարկելու իրավունքի (Յճակագիր, 7-րդ պարբերություն):

26. Դատախազական ծառայությունն անկախ մարմին է, որի առկայությունը պետք է հիմնված լինի օրենքի վրա՝ հնարավորինս ամենաբարձր մակարդակով: Ժողովրդավարական պետություններում ո՛չ խորհրդարանը, ո՛չ որեւէ պետական մարմին չպետք է փորձի անհարկի ազդեցություն գործել հանրային մեղադրողների կողմից առանձին գործերով կայացված կոնկրետ որոշման վրա, որպեսզի որոշի, թե ինչպես պետք է որեւէ կոնկրետ գործով հետապնդումն իրականացվի, կամ հանրային մեղադրողներին սահմանափակի, որպեսզի նրանք փոխեն իրենց որոշումները (Յճակագիր, 8-րդ եւ 9-րդ պարբերություններ):
27. Հանրային մեղադրողների անկախությունն անքակտելի է նրանց իրենց առաքելությունն իրականացնելու հնարավորությունն տալու համար: Այն ամրապնդում է իրավունքի պետությունում եւ հասարակությունում նրանց դերը, ինչպես նաեւ երաշխավորում է, որ արդարադատության համակարգը գործի արդար եւ արդյունավետ, եւ որ իրացվեն դատական իշխանության անկախության բոլոր օգուտները (Յճակագիր, 3-րդ եւ 8-րդ պարբերություններ): Այսպիսով, դատավորների համար ապահովված անկախությանը համանման, հանրային մեղադրողների անկախությունը մեղադրողների շահերին վերապահված բացառիկ իրավունք կամ արտոնություն չէ, այլ երաշխիք է ի շահ արդար, անաչառ եւ արդյունավետ արդարադատության, որը պաշտպանում է շահագրգիռ անձանց ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր շահերը:
28. Դատավորի գործառույթը, որը կարող է բնորոշվել պարտադիր կամ հայեցողական հետապնդման սկզբունքներով, տարբերվում է ըստ յուրաքանչյուր երկրում գործող համակարգի, ըստ այն պաշտոնի, որը զբաղեցնում է հանրային մեղադրողն ինստիտուցիոնալ համակարգում եւ քրեական դատավարության մեջ:
29. Անկախ իրենց կարգավիճակից՝ հանրային մեղադրողներն իրենց իրավական դերերն իրականացնելիս պետք է օգտվեն լիակատար գործառույթային անկախությունից՝ լինեն դրանք քրեական, թե ոչ: Հանրային մեղադրողները, անկախ նրանից, թե աստիճանակարգային իշխանության ներքո են, թե՛ ոչ, իրենց հաշվետվողականությունն ապահովելու եւ կամայական կամ ոչ հետեւողական կերպով վարույթ հարուցելը կանխելու նպատակով պետք է հստակ եւ թափանցիկ ուղենիշներ տրամադրեն հետապնդում իրականացնելու իրենց լիազորությունների իրացման վերաբերյալ (Յճակագիր, 9-րդ պարբերություն):
30. Այս առնչությամբ ԵԴԽԽ-ն եւ ԵԴԳԽԽ-ն ցանկանում են վկայակոչել մասնավորապես (2000)19 առաջարկությունը, որով ճանաչվում է, որ դատախազական ծառայության գործունեության մեջ հավասարությունը, հետեւողականությունը եւ արդյունավետությունը խթանելու նպատակով պետությունները պետք է ձգտեն սահմանել ընդհանուր սկզբունքներ եւ չափորոշիչներ, որոնք կծառայեն որպես կողմնորոշման հիմք, որի համեմատությամբ առանձին գործերով մեղադրողների կողմից կայացվում են որոշումներ:
31. Դատախազներին տրվող ցուցումները պետք է լինեն գրավոր, օրենքին համապատասխան եւ կիրառելիության դեպքում հետապնդման հանրամատչելի ուղենիշներին եւ չափորոշիչներին համապատասխան (Յճակագիր, 9-րդ պարբերություն)³:
32. Հետապնդում հարուցելու կամ չհարուցելու մասին ցանկացած որոշում պետք է ունենա իրավական հիմնավորում: Դատախազի կողմից կայացված՝ հետապնդում իրականացնելու կամ չիրականացնելու մասին որոշման՝ օրենքի համաձայն ցանկացած վերանայում պետք է իրականացվի անաչառ եւ օբյեկտիվորեն, անկախ նրանից, թե դա իրականացվում է հենց դատախազական ծառայության, թե անկախ դատական մարմնի կողմից: Տուժողի շահերը, ինչպես նաեւ ցանկացած այլ անձի օրինական շահերը մշտապես պետք է պատշաճ կերպով հաշվի առնվեն: (Յճակագիր, 9-րդ պարբերություն):
33. Դատավորների եւ դատախազների գործառույթների փոխլրացնող բնույթը նշանակում է, որ երկուսն էլ գիտակցում են, որ անաչառ արդարադատությունը պահանջում է դատախազական ծառայության եւ պաշտպանության կողմի միջեւ իրավահավասարություն, եւ որ հանրային մեղադրողները պետք է մշտապես գործեն ազնվորեն, օբյեկտիվորեն եւ անաչառ կերպով: Դատավորները եւ հանրային մեղադրողները մշտապես պետք է հարգեն կասկածյալների,

³ Տե՛ս, օրինակ, ԵԴԳԽԽ-ի թիվ 3 կարծիքը (2008) քրեաիրավական ոլորտից դուրս դատախազական ծառայությունների դերի վերաբերյալ:

մեղադրյալների եւ տուժողների անձեռնմխելիությունը, ինչպես նաեւ պաշտպանության կողմի իրավունքները (Յճակագիր, 2-րդ եւ 6-րդ պարբերություններ):

34. Դատավորի եւ դատախազի անկախությունն օրենքի գերակայությունից անբաժան է: Դատավորները, ինչպես նաեւ դատախազները գործում են ընդհանուր շահերից ելնելով, հանրության եւ դրա քաղաքացիների անուկից, որոնք ցանկանում են, որ իրենց իրավունքները եւ ազատությունները երաշխավորվեն դրանց բոլոր առումներով: Նրանք միջամտում են այնպիսի ոլորտներում, որտեղ մարդու ամենազգայուն իրավունքները (անհատի ազատություն, գաղտնիություն, գույքի պաշտպանություն եւ այլն) մեծագույն պաշտպանության են արժանի: Դատախազները պետք է ապահովեն, որ ապացույցները հավաքվեն եւ վարույթը նախաձեռնվի եւ շարունակվի օրենքին համապատասխան: Այդ գործընթացում նրանք պետք է պահպանեն ՄԻԵԿ-ով եւ միջազգային այլ իրավական փաստաթղթերով սահմանված սկզբունքները, մասնավորապես՝ անմեղության կանխավարկածը հարգելը, պաշտպանության կողմի իրավունքները եւ արդար դատաքննությունը: Դատավորները պետք է հետեւեն, որ այդ սկզբունքները հարգվեն իրենց կողմից քննվող վարույթներում:
35. Թեեւ հանրային մեղադրողին թույլատրվում է դատավորին ներկայացնել օրենքով սահմանված հայցեր եւ միջնորդություններ եւ դատավորին ներկայացնել դրանք հիմնավորող փաստական եւ իրավական հարցեր, մեղադրողը չի կարող որեւէ կերպ միջամտել դատավորի կողմից որոշումների կայացման գործընթացին եւ պարտավոր է հետեւել դատավորի որոշումներին: Մեղադրողը չի կարող ընդդիմանալ այդ որոշումների կատարմանն այլ կերպ, քան հետադարձ պահանջի (ռեգրեսի) այդպիսի իրավունք իրացնելով, որը կարող է նախատեսված լինել օրենքով (Յճակագիր, 4-րդ եւ 5-րդ պարբերություններ):
36. Հանրային մեղադրողի եւ դատավորի գործունեությունը եւ վարքը պետք է դրանց օբյեկտիվության եւ անաչառության մասով կասկածի տեղիք չտան: Ե՛վ դատավորները, ե՛լ հանրային մեղադրողները պետք է օգտվեն իրենց գործառնությունների առնչությամբ անկախությունից, ինչպես նաեւ միմյանցից անկախ լինեն եւ այդպիսին դիտվեն: Դատավարության մասնակիցների եւ ընդհանրապես հասարակության աչքերում չպետք է լինի դատավորների եւ դատախազների թողտվության նույնիսկ փոքր նշույլ կամ երկու գործառնությունների միջեւ շփոթություն:
37. Վերոնշյալ սկզբունքների նկատմամբ հարգանքը ենթադրում է, որ դատախազների կարգավիճակն օրենքով երաշխավորվի հնարավորինս բարձր մակարդակով, դատավորների կարգավիճակին համանման եղանակով: Դատավորների եւ դատախազների առաքելությունների մոտ եւ փոխլրացնող բնույթը համանման պահանջներ եւ երաշխիքներ են ստեղծում նրանց կարգավիճակի եւ ծառայության պայմանների, մասնավորապես՝ աշխատանքի ընդունման, վերապատրաստման, աշխատանքում առաջխաղացման, կարգապահության, տեղափոխման (որը պետք է իրականացվի միայն օրենքին համապատասխան կամ նրանց համաձայնությամբ), վարձատրության, գործառնությունների դադարեցման եւ մասնագիտական միավորումներ ստեղծելու ազատության առումով (Յճակագիր, 8-րդ պարբերություն):
38. Ինչպես դատավորները, այնպես էլ դատախազները գործող ազգային համակարգին համապատասխան պետք է անմիջականորեն կապված լինեն իրենց համապատասխան ծառայությունների իրականացման եւ կառավարման հետ: Այդ նպատակով դատավորների եւ դատախազների տրամադրության տակ պետք է դնել բավարար ֆինանսական միջոցներ, ինչպես նաեւ ենթակառուցվածքներ եւ պատշաճ մարդկային եւ կյուլթական ռեսուրսներ, եւ դրանք պետք է օգտագործվեն եւ կառավարվեն նրանց ղեկավարմամբ (Յճակագիր, 4-րդ պարբերություն):

բ. Դատավորների եւ դատախազների Էթիկան եւ դեռնություն

39. Դատավորները եւ դատախազները պետք է լինեն անթերի հեղինակությամբ եւ պատշաճ մասնագիտական եւ կազմակերպական հմտություններով անձինք: Իրենց այն գործառնությունների բնույթով պայմանավորված, որոնք նրանք գիտակցաբար ընդունել են, դատավորները եւ դատախազները մշտապես ենթակա են հանրային քննադատության եւ արդյունքում պետք է իրենց համար սահմանեն իրենց գործերի վերաբերյալ հաղորդակցվելու իրենց իրավունքն օրենքի շրջանակներում առանց խախտման սահմանափակելու պարտականություն: Որպես արդարադատության իրականացման գլխավոր դերակատարներ, նրանք պետք է մշտապես պահեն իրենց մասնագիտության պատիվը եւ արժանապատվությունը եւ բոլոր իրավիճակներում ցուցաբերեն իրենց պաշտոնին հարիր վարքագիծ⁴

⁴ Դատավորների համար տե՛ս, օրինակ, ԵՂԻՄՍ-ի թիվ 3 (2002) կարծիքը դատավորի մասնագիտական վարքագծի, մասնավորապես՝ Էթիկայի, պաշտոնի հետ անհամատեղելի պահվածքի եւ անաչառության սկզբունքների եւ կանոնների մասին (2002թ.) եւ Դատավորների վարքագծի բանագալորյան սկզբունքները (ընդունված ՄԱԿ-ի ՏՆՏՄՈՑԻՈՐԳ-ի կողմից 2006 թվականին) եւ Դատավորների համընդհանուր խարտիան՝ ընդունված Դատավորների միջազգային միության կողմից 1999 թվականի նոյեմբերի 17-ին Թայբեյում (Թայվան): Դատախազների համար բացի ՄԱԿ-ի Դատախազների դերի վերաբերյալ ուղեցույցից (1990թ.) տե՛ս

(Հռչակագիր, 11-րդ պարբերություն):

40. Դատավորները եւ դատախազները պետք է զերծ մնան ցանկացած գործողությունից եւ վարքագծից, որը կարող է վնասել նրանց անկախության եւ անաչառության նկատմամբ վստահությունը: Նրանք պետք է իրենց ներկայացված գործերը քննարկեն պատշաճ զգուշավորությամբ եւ ողջամիտ ժամկետում, օբյեկտիվ եւ անաչառ կերպով:

41. Հանրային մեղադրողները պետք է զերծ մնան լրատվության միջոցներով հրապարակային այնպիսի մեկնաբանություններ եւ հայտարարություններ անելուց, որոնք կարող են ստեղծել դատարանի վրա որոշակի որոշման հասնելու ուղղակի կամ անուղղակի ճնշում գործադրելու տպավորություն, կամ որը կարող է վնասել դատավարության արդարությունը:

42. Դատավորները եւ դատախազները պետք է ձգտեն ծանոթանալ միմյանց գործառույթները կարգավորող էթիկայի չափանիշներին: Դա կընդլայնի միմյանց առաքելությունների ընկալումը եւ դրանց նկատմամբ հարգանքը՝ այդպիսով մեծացնելով ներդաշնակ համագործակցության հեռանկարները:

գ. Դատավորների եւ հանրային մեղադրողների վերապատրաստումը

43. Մասնագիտական հմտության բարձրագույն մակարդակը նախապայման է այն վստահության համար, որը հանրությունն ունի ինչպես դատավորների, այնպես էլ հանրային մեղադրողների նկատմամբ, եւ որի վրա նրանք սկզբունքորեն հիմնում են իրենց օրինականությունը եւ դերը: Պատշաճ մասնագիտական վերապատրաստումը խիստ կարեւոր դերակատարում ունի, քանի որ այն հնարավորություն է տալիս բարելավելու նրանց կատարողականը եւ այդպիսով բարձրացնում է ընդհանրապես արդարադատության որակը (Հռչակագիր, 10-րդ պարբերություն):

44. Դատավորների եւ դատախազների վերապատրաստումը ներառում է ոչ միայն մասնագիտականը հասանելիություն ունենալու համար անհրաժեշտ մասնագիտական կարողությունների ձեռքբերում, այլեւ հավասար մշտական վերապատրաստում նրանց մասնագիտական գործունեության ընթացքում: Այն անդրադառնում է նրանց մասնագիտական կյանքի ամենատարբեր կողմերին, այդ թվում՝ դատարանների եւ դատախազության մարմինների վարչական կառավարմանը, ինչպես նաեւ պետք է բավարարի մասնագիտացման կարիքները: Արդարադատության պատշաճ իրականացման շահերից էլնելով՝ մասնագիտական որակավորման բարձր աստիճանը պահպանելու եւ այն առավել ամբողջական դարձնելու համար պահանջվող մշտական վերապատրաստումը դատավորների եւ հանրային մեղադրողների ոչ միայն իրավունքը, այլեւ պարտականությունն է:

45. Պատշաճ դեպքում դատավորների, հանրային մեղադրողների եւ փաստաբանների համար իրականացվող՝ ընդհանուր հետաքրքրության վերաբերյալ համատեղ վերապատրաստումը կարող է նպաստել բարձրագույն որակի արդարադատության հասնելուն: Այս համատեղ վերապատրաստումը պետք է հնարավոր դարձնի ընդհանուր իրավական մշակույթի ստեղծումը (Հռչակագիր, 10-րդ պարբերություն):

46. Եվրոպական տարբեր իրավական համակարգեր դատավորների եւ դատախազների համար վերապատրաստումներ են նախատեսում ըստ տարբեր մոդելների: Որոշ երկրներ ստեղծել են ակադեմիա, ազգային դպրոց կամ այլ մասնագիտացված հաստատություն, որոշ երկրներ այդ իրավասությունը վերապահում են կոնկրետ մարմինների: Պետք է կազմակերպվեն դատավորների եւ դատախազների միջազգային վերապատրաստման դասընթացներ: Ամեն դեպքում կարեւոր է ապահովել այդ վերապատրաստումը կազմակերպելու համար պատասխանատու հաստատության ինքնավար բնույթը, քանի որ այդ ինքնավարությունը մշակութային բազմակարծության եւ անկախության երաշխիք է⁵:

47. Այս համատեքստում մեծ ուշադրություն է դարձվում դատավորների եւ դատախազների ուղղակի մասնակցությանը վերապատրաստման դասընթացներին, քանի որ դա նրանց հնարավորություն է տալիս ներկայացնելու իրենց համապատասխան մասնագիտական փորձից քաղված կարծիքներ: Դասընթացները ոչ միայն պետք է ընդգրկեն իրավունքը եւ անհատների ազատությունների պաշտպանությունը, այլեւ պետք է նաեւ ներառեն կառավարման գործելակերպերի եւ դատավորների եւ դատախազների համապատասխան առաքելությունների ուսումնասիրության վերաբերյալ մոդուլներ: Միեւնույն ժամանակ լրացուցիչ իրավաբանների եւ ակադեմիական ոլորտի անձանց մասնակցությունը կարեւոր է սահմանափակ մոտեցումներ որդեգրելուց խուսափելու համար: Վերջապես վերապատրաստման որակը եւ արդյունավետությունը պետք է պարբերաբար եւ օբյեկտիվ կերպով գնահատվի:

III. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԵԼԱԴՐՈՂՆԵՐԻ ԴԵՐԵՐԸ ԶՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ա. Դատավորների եւ հանրային մեղադրողների միջեւ դերերը մինչդատական քրեական վարույթում

³ Հանրային մեղադրողների էթիկայի եւ վարքագծի եվրոպական ուղեցույցը (Բուդապեշտի ուղեցույց)՝ ընդունված Եվրոպայի գլխավոր դատախազների կողմից 2005 թվականի մայիսի 31-ին Բուդապեշտում կայացած իրենց համաժողովին:

⁵ ՏԵՍ ԵԴԽԻՍ-ի ազգային եւ եվրոպական մակարդակներում դատավորների նախնական եւ աշխատանքային պատշաճ վերապատրաստման մասին թիվ 4 կարծիքը (2003) եւ ԵԴԽԻՍ-ի հասարակությանը ծանայելու գործում Դատական խորհրդի դերի մասին թիվ 10 կարծիքը (2007), 65-72-րդ պարբերությունները:

48. Մինչդատական փուլում դատավորն ինքնուրույն կամ երբեմն դատախազի հետ միասին հսկողություն է իրականացնում քննչական գործողությունների օրինականության նկատմամբ, հատկապես երբ դրանք ազդեցություն են գործում հիմնարար իրավունքների վրա (ձեռքալայման, արգելանքի տակ վերցնելու, առգրավման, հատուկ քննչական մեթոդների իրականացման մասին որոշումներ եւ այլն):

49. Որպես ընդհանուր կանոն, հանրային մեղադրողները պետք է մանրամասն ուսումնասիրեն քննությունների օրինականությունը եւ հետեւեն քննիչների կողմից մարդու իրավունքների պահպանությանը որոշում կայացնելիս, թե արդյոք պետք է հետապնդում իրականացնել, թե՛ ոչ:

50. Rec(2000)19 առաջարկությամբ նախատեսվում է, որ երբ ոստիկանությունը հանրային մեղադրողների լիազորության ներքո է դրվում, կամ երբ ոստիկանության կողմից իրականացվող քննությունները կատարվում կամ հսկվում են դատախազի կողմից, պետությունը պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկի՝ երաշխավորելու համար, որ հանրային մեղադրողը հնարավորություն ունենա ցուցումներ տալու եւ հնարավորություն ունենա իրականացնելու գնահատումներ եւ վերահսկողություն, ինչպես նաեւ կարողանա պատժել խախտումները: Եթե ոստիկանությունն անկախ է հանրային մեղադրողներից, առաջարկությամբ զուտ նախատեսվում է, որ պետությունն արդյունավետ միջոցներ ձեռնարկի՝ ապահովելու համար, որ հանրային մեղադրողների եւ քննչական մարմինների միջեւ առկա լինի պատշաճ եւ գործուն համագործակցություն:

51. Նույնիսկ այն համակարգերում, որտեղ քննության նկատմամբ հսկողություն է իրականացնում դատախազը, որի կարգավիճակը նրան վերապահում է դատական իշխանություն, կարելու է, որ այս համատեքստում ձեռնարկված ցանկացած միջոց, որը կապված է ազատությունների էական խախտումների հետ, մասնավորապես՝ ժամանակավոր կալանքը, վերահսկվի դատավորի կամ դատարանի կողմից:

բ. Դատավորների եւ հանրային մեղադրողների միջեւ դերերը հետապնդման եւ դատական լսման ընթացքում

52. Որոշ պետություններում հանրային մեղադրողները կարող են կարգավորել գործերի հոսքը՝ իրականացնելով այն հարցը որոշելու հայեցողական լիազորություն, թե որ գործերը կներկայացվեն դատարան, եւ որ գործերը կկարգավորվեն առանց դատական վարույթի (մեղադրյալի եւ տուժողի միջեւ հաշտություն, կողմերի համաձայնությամբ գործի մինչդատական կարգավորում, համաձայնեցման հետ կապված պարզեցված եւ կարճեցված դատավարություններ, հաշտարարություն եւ այլն), որոնք բոլորն էլ նպաստում են դատական համակարգի բեռը թեթեւացնելուն եւ մեղադրողի առաջնահերթությունները որոշելուն:

53. Հանրային մեղադրողի այդ լիազորությունները, որոնք արտացոլում են քրեական արդարադատության իրականացման արդիականացումը, սոցիալականացումը, հումանիզացիան եւ ռացիոնալացումը, օգտակար են դատարանների գործերով ծանրաբեռնվածությունը նվազեցնելու համար: Մյուս կողմից, հենց որ դատախազներն ունենան դատարանում կոնկրետ դեպքեր չներկայացնելու իրավունք, անհրաժեշտ է խուսափել կամայական գործողություններից, խտրականությունից կամ քաղաքական իշխանության կողմից հնարավոր ճնշումից եւ պաշտպանել տուժողների իրավունքները: Անհրաժեշտ է նաեւ ցանկացած ազդակիր անձի, մասնավորապես՝ տուժողին հնարավորություն տալ բողոք ներկայացնելու դատախազի՝ հետապնդում չիրականացնելու մասին որոշումը վերանայելու համար: Դրա տարբերակ կարող է լինել տուժողի կողմից անմիջապես դատարանում գործ հարուցելը:

54. Հետեւաբար այն երկրներում, որտեղ գործում է հայեցողական դատախազության համակարգ, դատախազը պետք է զգուշորեն քննարկի, թե արդյոք հետապնդում իրականացնի, թե՛ ոչ, հաշվի առնելով ցանկացած ընդհանուր ուղենիշ կամ չափորոշիչ, որն ընդունվել է դատախազության որոշումներում հետեւողականության հասնելու նպատակով:

55. Դատավարության ընթացքում դատախազների անաչառությունը պետք է ընկալվի հետեւյալ կերպ՝ նրանք պետք է վարույթ իրականացնեն արդար եւ օբյեկտիվ կերպով՝ ապահովելու, որ դատարանին տրամադրվեն բոլոր վերաբերելի փաստերը եւ իրավական փաստարկները, եւ մասնավորապես ապահովելու, որ հօգուտ մեղադրյալի ապացույցները բացահայտվեն, նրանք պետք է պատշաճ կերպով հաշվի առնեն մեղադրյալի եւ տուժողի դիրքորոշումը, ստուգեն, որ բոլոր ապացույցները ձեռք բերված լինեն դատավորի կողմից ընդունելի միջոցներով, արդար դատաքննության կանոններին համապատասխան, եւ մերժեն օգտագործել մարդու իրավունքների խախտումներով, ինչպես օրինակ՝ խոշտանգմամբ ձեռք բերված ապացույցները (Հռչակագիր, 6-րդ պարբերություն):

56. Դատախազները չպետք է նախաձեռնեն կամ շարունակեն հետապնդումը եւ պետք է գործադրեն բոլոր ջանքերը՝ դադարեցնելու վարույթը, երբ անաչառ քննությունը կամ ապացույցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեղադրանքն անհիմն է:

57. Ըստ էության՝ վարույթի ընթացքում դատավորները եւ դատախազներն իրենց համապատասխան գործառնություններն իրականացնում են արդար քրեական դատավարության նպատակով: Դատավորը հսկողություն է իրականացնում հանրային մեղադրողների կամ քննիչների կողմից ձեռք բերված ապացույցների օրինականության նկատմամբ եւ կարող է մեղադրյալին արդարացնել, երբ առկա են ոչ բավարար կամ ապօրինի ձեռք բերված ապացույցներ: Հանրային մեղադրողները կարող են նաեւ իրավունք ունենալ բողոքարկելու դատական որոշումը:

գ. Պաշտպանության կողմից իրավունքները դատավարության բոլոր փուլերում

58. Դատավորները պետք է կիրառեն քրեական դատավարության կանոնները՝ միեւնույն ժամանակ լիակատար հարգելով պաշտպանության կողմից իրավունքները (պաշտպանյալներին տալով իրենց իրավունքներն իրացնելու հնարավորություն, պաշտպանյալներին ծանուցելով իրենց մեղադրանքի մասին եւ այլն), տուժողների իրավունքները դատավարության ընթացքում, կողմերի իրավահավասարության սկզբունքը եւ հրապարակային դատաքննության իրավունքը, որպեսզի բոլոր դեպքերում երաշխավորվի արդար դատաքննություն⁶ (Յճակագիր, 1-ին, 2-րդ, 6-րդ եւ 9-րդ պարբերություններ):

59. Զրեական վարույթում մեղադրական եզրակացությունն առանցքային դեր է խաղում. դրա վերհամման պահից է, որ պաշտպանյալները պաշտոնապես գրավոր ծանուցվում են իրենց առաջադրված մեղադրանքների փաստական եւ իրավական հիմքերի մասին (*Կամազինսկին ընդդեմ Ավստրիայի* [*Kamasinski v. Austria*] գործով 1989 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռ, § 79): Զրեական գործընթացում ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվող «արդար դատաքննության» հետեւանքով պաշտպանյալները պետք է ունենան իրենց դեմ առկա ապացույցները, ինչպես նաեւ մեղադրանքի փաստական հիմքը վիճարկելու իրավունք:

60. Այն երկրներում, որտեղ հանրային մեղադրողները հսկողություն են իրականացնում քննության նկատմամբ, մեղադրողը նաեւ ապահովում է, որ հարգվեն պաշտպանության կողմից իրավունքները: Այն երկրներում, որտեղ քրեական գործերով քննությունը ղեկավարվում է ոստիկանության կամ իրավապահ այլ մարմինների կողմից, դատավորները ներգրավվում են որպես անհատների ազատությունների երաշխավորներ (*habeas corpus*), մասնավորապես՝ միջնորդական կալանքի առկայությամբ, եւ նրանք են, որ պետք է ապահովեն, որ պաշտպանյալի իրավունքները հարգվեն:

61. Բազմաթիվ երկրներում, այնուամենայնիվ, դատավորը եւ դատախազը պաշտպանության կողմից իրավունքների իրացման նկատմամբ վերահսկողության համար պատասխանատու են դառնում միայն այն բանից հետո, երբ քննությունն ավարտվում է, եւ սկսվում է մեղադրանքի քննությունը: Այդ պահին քննիչների զեկույցներն ստացած դատախազը եւ մեղադրանքը քննող եւ հավաքված ապացույցներն ուսումնասիրող դատավորը պետք է ապահովեն, որ հանցանքի համար մեղադրվող յուրաքանչյուր անձ անհապաղ, մասնավորապես իր համար հասկանալի լեզվով եւ մանրամասն տեղեկացվի իր դեմ առկա մեղադրանքի բնույթի եւ պատճառի մասին:

62. Կախված կոնկրետ երկրում իրենց դերից՝ դատախազները եւ դատավորները պետք է այնուհետեւ ապահովեն, որ անձն իր պաշտպանությունը կազմակերպելու համար ունենա պատշաճ ժամանակ եւ հնարավորություններ, որ նա պատշաճ կերպով պաշտպանվի, անհրաժեշտության դեպքում՝ պետության կողմից վճարվող պաշտոնապես նշանակված փաստաբանի կողմից, եւ անհրաժեշտության դեպքում թարգմանչին հասանելիություն ունենա եւ կարողանա պահանջել ձեռնարկել ճշմարտությունը պարզելու համար անհրաժեշտ գործողություններ:

63. Գործը քննող դատարան ներկայացվելուց անմիջապես հետո դատավորի եւ դատախազի լիազորությունները տարբերվում են ըստ այն դերի, որը նրանք ունեն դատաքննության ժամանակ: Ամեն դեպքում, եթե բացակայում է պաշտպանության կողմից իրավունքների նկատմամբ հարգանքի բաղադրիչներից որեւէ մեկը, ապա դատավորը կամ դատախազը կամ երկուսն էլ, կախված կոնկրետ ազգային համակարգից, պետք է կարողանան ուշադրություն դարձնել իրավիճակին եւ այն օբյեկտիվորեն շտկեն:

IV. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԵՂԱԴՐՈՂՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՈՐՏԻՑ ԴՈՒՐՍ ԵՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ

64. Դատախազները, կախված այն պետությունից, որտեղ գործում են, կարող են ունենալ կամ չունենալ քրեաիրավական ոլորտից դուրս պարտականություններ եւ գործառույթներ⁷: Եթե դատախազներն ունեն այդպիսի պարտականություններ եւ գործառույթներ, ապա դրանք կարող են ներառել, ի թիվս այլնի, քաղաքացիական, վարչական, առեւտրային, սոցիալական, ընտրական եւ աշխատանքային իրավունք, ինչպես նաեւ շրջակա միջավայրի պահպանություն, այնպիսի խոցելի խմբերի սոցիալական իրավունքների պաշտպանություն, ինչպիսիք են անչափահասները, հաշմանդամություն ունեցող անձինք եւ շատ ցածր եկամուտ ունեցող անձինք: Դատախազների դերն այս առումով չպետք է հնարավորություն տա նրանց անհարկի ազդեցություն գործադրել դատավորների կողմից վերջնական որոշումների կայացման գործընթացի վրա (Յճակագիր, 13-րդ պարբերություն):

65. Հարկ է նշել նաեւ այն դերը, որը հանրային մեղադրողներն ունեն որոշ երկրներում Գերագույն դատարանի առջեւ: Այդ դերը համեմատելի է եվրոպական համայնքներում արդարադատության դատարանի առջեւ գլխավոր փաստաբանի ունեցած դերի հետ: Այս ատյաններում գլխավոր դատախազը (կամ համարժեք պաշտոնյան) կողմ չի հանդիսանում եւ պետությունը չի ներկայացնում: Նա անկախ մարմին է, որը յուրաքանչյուր գործով կամ միայն առանձնահատուկ հետաքրքրություն ներկայացնող

⁶ Տե՛ս ԵՂԻՆՍ-ի թիվ 8 կարծիքը (2006) անաբեկչության համատեքստում օրենքի գերակայության եւ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ:

⁷ Տե՛ս, օրինակ, ԵՂԻՆՍ-ի թիվ 3 կարծիքը քրեաիրավական ոլորտից դուրս դատախազական ծառայությունների դերի վերաբերյալ:

գործերով եզրակացություններ է շարադրում, որպեսզի դատարանին պարզաբանի դրան ներկայացված՝ իրավունքին վերաբերող հարցերի բոլոր կողմերը՝ նպատակ ունենալով ապահովել իրավունքի ճիշտ կիրառումը:

66. Օրենքի գերակայության համաձայն՝ ժողովրդավարական հասարակություններում հանրային մեղադրողների այս բոլոր իրավասությունները, ինչպես նաև այդ իրավասություններն իրացնելու կարգերը պետք է հստակ սահմանված լինեն օրենքով: Երբ դատախազները գործում են քրեաիրավական ոլորտից դուրս, նրանք պետք է հարգեն դատավորի կամ դատարանի բացառիկ իրավասությունը եւ հաշվի առնեն մասնավորապես Դատարանի նախադեպային իրավունքում մշակված հետեւյալ սկզբունքները.

- i. դատախազության մասնակցությունը դատական վարույթին չպետք է ազդեցություն գործի դատարանների անկախության վրա.
- ii. պետք է պահպանվի իշխանությունների տարանջատման սկզբունքը՝ կապված մի կողմից՝ քրեաիրավական ոլորտից դուրս դատախազների պարտականությունների եւ գործունեության եւ մյուս կողմից՝ մարդու իրավունքների պաշտպանության գործում դատարանների դերի հետ.
- iii. չխախտելով դատախազների՝ հանրային շահը ներկայացնելու բացառիկ իրավունքները, նրանք պետք է ունենան նույն իրավունքները եւ պարտավորությունները, ինչ ցանկացած այլ կողմ, եւ չպետք է ունենան գերակա դիրք դատավարության ընթացքում (*կողմերի իրավահավասարության սկզբունք*).
- iv. հասարակության անուկից հանդես եկող դատախազների՝ հանրային շահը եւ անձանց իրավունքները պաշտպանելուն ուղղված գործողությունները չպետք է խախտեն դատարանի վերջնական որոշումների պարտադիր ուժ ունենալու սկզբունքը (*res judicata*)՝ միջազգային պարտավորություններով, այդ թվում՝ Դատարանի նախադեպային իրավունքով սահմանված որոշ բացառություններով:

Չռչակագրում նշված մյուս սկզբունքները կիրառվում են հանրային մեղադրողների՝ քրեաիրավական ոլորտից դուրս բոլոր գործառնությունների նկատմամբ, համապատասխան փոփոխություններով (Չռչակագիր, 13-րդ պարբերություն):

V. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ, ՀԱՆՐԱՅԻՆ ՄԵՂԱԴՐՈՂՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ (Չռչակագիր, 11-րդ պարբերություն)

67. Լրատվության միջոցները կարենոր դեր են խաղում ընդհանրապես ժողովրդավարական հասարակությունում եւ ավելի կոնկրետ դատական համակարգի առնչությամբ: Հասարակության մեջ արդարադատության որակի ընկալումը մեծապես պայմանավորված է արդարադատության համակարգի գործունեության վերաբերյալ լրատվության միջոցների տեսակետներով: Հրապարակայնությունը նույնպես նպաստում է արդար դատաքննության իրագործմանը, քանի որ այն դատավարության մասնակիցներին եւ պաշտպանյալներին պաշտպանում է արդարադատության ոչ թափանցիկ իրականացումից:

68. Քրեական եւ քաղաքացիական վարույթների նկատմամբ մեծացող հանրային եւ լրատվության միջոցների ուշադրությունը հանգեցրել է ինչպես դատարանների, այնպես էլ հանրային մեղադրողների կողմից լրատվության միջոցներին օբյեկտիվ տեղեկություններ տրամադրելու մեծացող անհրաժեշտության:

69. Ժողովրդավարական հասարակությունում խիստ կարեւոր է, որ դատարանները հանրության մեջ վստահություն ներշնչեն⁸: Վարույթի հանրային բնույթն այն կարեւոր միջոցներից մեկն է, որով կարելի է պահպանել դատարանների նկատմամբ վստահությունը:

70. Եվրոպայի խորհրդի շրջանակներում այս խնդրին անդրադարձ է արվում երկու հիմնական փաստաթղթերով՝ ա) «Լրատվության միջոցների միջոցով քրեական վարույթի մասին տեղեկություններ տրամադրելու մասին» Rec(2003)13 առաջարկությունը, եւ բ) ԵԴԽԽ-ի թիվ 7 կարծիքն արդարադատության եւ հասարակության վերաբերյալ (2005):

71. Հաշվի առնելով հանրության՝ ընդհանուր հետաքրքրությունն ներկայացնող տեղեկություններ ստանալու իրավունքը՝ լրագրողներին պետք է անհրաժեշտ տեղեկություններ տրամադրվեն, որպեսզի նրանք կարողանան հաղորդել եւ մեկնաբանել արդարադատության համակարգի գործունեության վերաբերյալ՝ պահպանելով դատավորների եւ դատախազների՝ քննվող գործերի վերաբերյալ շրջահայացության պարտավորությունը եւ ազգային օրենքներով եւ Դատարանի նախադեպային իրավունքով սահմանված սահմանափակումները:

72. Լրատվության միջոցները, ինչպես նաև դատավորները եւ հանրային մեղադրողները պետք է հարգեն այնպիսի հիմնարար սկզբունքներ, ինչպիսին է անմեղության կանխավարկածը⁹, եւ շահագրգիռ անձանց արդար դատաքննության իրավունքը, մասնավոր կյանքի իրավունքը, գործին ներգրավված դատավորների եւ հանրային մեղադրողների անաչառության սկզբունքի եւ այդպիսին դիտվելու խախտումից խուսափելու անհրաժեշտությունը:

⁸ Այս խնդրի վերաբերյալ տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *Օլույիչն ընդդեմ Խորվաթիայի* գործը, (գանգատ թիվ 22330/05):

⁹ Տե՛ս, ի թիվս այլնի, Rec (2003)13 առաջարկության հավելվածի I սկզբունքը եւ համապատասխան Բացատրական հուշագիրը:

73. Զննվող կամ դատաքննության փուլում գտնվող գործերի լուսաբանումը լրատվության միջոցների կողմից կարող է ինվազիվ միջամտություն դառնալ եւ ոչ պատշաճ ազդեցություն եւ ճնշում առաջացնել կոնկրետ գործի համար պատասխանատու դատավորների, երդվյալ ատենակալների եւ հանրային մեղադրողների վրա: Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է, որ դատավորները եւ հանրային մեղադրողներն ունենան լավ մասնագիտական հմտություններ, էթիկայի բարձր չափանիշներ եւ մեծ զգավածություն քննության փուլում գտնվող գործերի վերաբերյալ սիրողական մեկնաբանությունների նկատմամբ:

74. Լրատվության միջոցների հետ կապի համար պատասխանատու անձնակազմը, օրինակ՝ հանրային տեղեկատվության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձինք կամ լրատվության միջոցների հետ հաղորդակցվելու վերաբերյալ վերապատրաստում անցած դատավորների եւ դատախազների խումբը, կարող է լրատվության միջոցներին օգնել ճշգրիտ տեղեկություններ տրամադրել դատարանների աշխատանքի եւ որոշումների վերաբերյալ, ինչպես նաեւ օժանդակել դատավորներին եւ դատախազներին:

75. Դատավորները եւ դատախազները պետք է փոխադարձաբար հարգեն միմյանց հատուկ դերն արդարադատության համակարգում: Ինչպես դատավորները, այնպես էլ դատախազները պետք է կազմեն լավագույն գործելակերպերի ուղենիշներ կամ կանոնագիրք յուրաքանչյուր մասնագիտության համար՝ լրատվության միջոցների հետ դրա կապերի վերաբերյալ¹⁰: Էթիկայի որոշ ազգային կանոնագրքերով դատավորներից պահանջվում է գերծ մնալ քննության փուլում գտնվող գործերի վերաբերյալ հրապարակային մեկնաբանություններից, որպեսզի չանեն հայտարարություններ, որոնք կարող են հանգեցնել նրան, որ հանրությունը կասկածի տակ դնի դատավորների անաչառությունը¹¹, եւ խուսափեն անմեղության կանխավարկածի խախտումից: Ամեն դեպքում դատավորները պետք է նախենառաջ արտահայտվեն իրենց որոշումների միջոցով. շրջահայացությունը եւ բառերի ճիշտ ընտրությունը կարելու են, եթե դատավորները լրատվության միջոցներով հայտարարություններ են անում քննության փուլում գտնվող կամ արդեն որոշված գործերի վերաբերյալ¹²: Հանրային մեղադրողները պետք է զգուշավոր լինեն դատավորի կողմից պահպանված ընթացակարգի կամ կայացված վճռի վերաբերյալ մեկնաբանություններ անելիս՝ պատշաճ դեպքում որոշման վերաբերյալ իրենց անհամաձայնությունը հայտնելով բողոքարկման միջոցով:

VI. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ, ԴԱՏԱԽԱԶՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ (Հռչակագիր, 12-րդ պարբերություն)

76. Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու նպատակով հարկ է նշել մասնավորապես Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների միջեւ վերաբերելի միջազգային փաստաթղթերում, մասնավորապես՝ ՄԻԵԿ-ում ամրագրված արժեքների հիման վրա արդյունավետ համագործակցության անհրաժեշտությունը: Միջազգային համագործակցությունը պետք է հիմնված լինի փոխադարձ վստահության վրա: Միջազգային համագործակցության միջոցով հավաքված եւ դատական վարույթներում օգտագործվող տեղեկությունները պետք է լինեն թափանցիկ իրենց բովանդակությամբ եւ ծագմամբ, ինչպես նաեւ հասանելի լինեն դատավորներին, հանրային մեղադրողներին եւ կողմերին: Անհրաժեշտ կլինի կանխել, որ միջազգային դատական համագործակցությունը տեղի ունենա առանց որեւէ դատական վերահսկողության եւ առանց պատշաճ կերպով հաշվի առնելու մասնավորապես պաշտպանության կողմի իրավունքները եւ անձնական տվյալների պաշտպանությունը:

¹⁰ Առաջարկվում է դատավորների եւ լրագրողների համար ԵԴԽԽ-ի արդարադատության եւ հասարակության վերաբերյալ թիվ 7 կարծիքով, 39-րդ պարբերություն (2005):

¹¹ ՏԵՄ, օրինակ, ԵԴԽԽ-ի թիվ 3 կարծիքը դատավորների էթիկայի եւ պատասխանատվության վերաբերյալ, 40-րդ պարբերություն (2003):

¹² ՏԵՄ, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *Դակտարասը ընդդեմ Լիտվայի* [Daktaras v. Lithuania] (զանգատ թիվ 42095/98) եւ *Օլույիչսն ընդդեմ Խորվաթիայի* [Olujic v. Croatia], (զանգատ թիվ 22330/05):

Կարծիք թիվ 5 (2010)

Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի՝
ուղղված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին

Դատախազությունը և անչափահասների գործերով արդարադատությունը

ԵՐԵՎԱՆԻ ՀՈՉԱԿԱԳԻՐ

Ներածություն

1. Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԳԽԽ) ստեղծվել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 2005 թվականին՝ դատախազական ծառայությունների գործունեության վերաբերյալ կարծիքներ տրամադրելու եւ անդամ պետություններին ուղղված՝ «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Նախարարների կոմիտեի Rec(2000)19 առաջարկության արդյունավետ իրականացմանը նպաստելու համար:
2. 2010 թվականի համար Նախարարների կոմիտեն հանձնարարել է ԵԴԳԽԽ-ին¹, հաշվի առնելով երեխայակենտրոն արդարադատության վերաբերյալ² թիվ 2 բանաձեւը, ընդունել Անչափահասների գործերով արդարադատության ոլորտում հանրային քաղաքականության սկզբունքների վերաբերյալ կարծիք եւ ուսումնասիրել, ի թիվս այլնի, անչափահասների տեղը մինչեւ դատական վարույթը, դրա ընթացքում եւ դրանից հետո, նման վարույթի ընթացքում անչափահասների շահերը հաշվի առնելու եղանակները եւ անչափահասներին իրենց իրավունքների եւ արդարադատության, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մատչելիության վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար օգտագործված մեթոդների առնչությամբ իշխանությունների կողմից իրականացված բարելավումները:
3. Հանրային մեղադրողներն իշխանության այն ներկայացուցիչներն են, որոնք, հանդես գալով հասարակության անունից եւ ելնելով հանրային շահից, ապահովում են օրենքի կիրառումն այն դեպքերում, երբ օրենքի խախտումն առաջացնում է քրեական պատիժ: Այդպիսով, դատախազները հաշվի են առնում թե՛ անհատների իրավունքները, թե՛ քրեական արդարադատության համակարգի անհրաժեշտ արդյունավետությունը՝ Rec(2000) առաջարկությանը համապատասխան:
4. Կախված պետություններից՝ դատախազների դերը զգալիորեն տարբերվում է, եւ սույն կարծիքի նպատակն է սահմանել այն ուղենիշները, որոնցով պետք է իրենց գործողություններում առաջնորդվեն անչափահասների գործերով արդարադատության ոլորտում ներգրավված բոլոր դատախազները: Սույն կարծիքի նպատակն է ապահովել, որ անչափահասներին վերաբերող այն բոլոր վարույթներում, որոնցում ներգրավված են դատախազներ, կիրառվեն որոշակի հիմնարար սկզբունքներ՝ պատշաճ կերպով հաշվի առնելով անչափահասների հասունության աստիճանը, խոցելիությունը եւ մտավոր կարողությունները՝ անկախ այն հանգամանքից, թե օրենքը խախտած անչափահասը տուժող է, թե՛ վկա: Սույն սկզբունքներին համապատասխանությունը կիրառվում է դատավարության բոլոր փուլերում, այն է՝ դատաքննությունից առաջ, լուծմանի ընթացքում, անչափահասների վերաբերյալ որոշումների հարկադիր կատարման եւ այդ որոշումների կատարման ժամանակ:
5. Անչափահասների մասնակցությամբ գործերում դատախազները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն մի կողմից հասարակության շահերի եւ արդարադատության նպատակների եւ մյուս կողմից՝ անչափահասների շահերի, հատուկ կարիքների եւ խոցելիության միջեւ պատշաճ հավասարակշռության պահպանմանը:
6. Այն պետություններում, որտեղ դատախազներն ունեն քրեաիրավական ոլորտից դուրս իրավասություններ (օրինակ՝ ընտանեկան, խնամակալության եւ վարչական իրավունքի ոլորտները), նրանք պետք է մշտապես խթանեն հիմնարար իրավունքներն ու ազատությունները եւ մասնավորապես՝ անչափահասների հատուկ պաշտպանության վերաբերյալ սկզբունքները, ինչպես նշված է սույն կարծիքում:

¹ ՏԵՍ 2009-2010 թթ. ԵԴԳԽԽ-ի Ընդհանուր պահանջները (Նախարարների տեղակալների 1044-րդ հանդիպում, 2008 թվականի դեկտեմբերի 10):

² Եվրոպական երկրների արդարադատության նախարարների 28-րդ համաժողովի կողմից ընդունված բանաձեւ (Լանգարոտե, Իսպանիա, 2007 թվականի հոկտեմբեր):

7. Հետևյալ սկզբունքները կիրառվում են այն դեպքում, երբ դրանք դատախազների իրավասության շրջանակներում են եւ համապատասխանում են նրանց ազգային իրավունքին:
8. Սույն կարծիքում նշված՝ անչափահասներին վերաբերող սկզբունքները կարող են կիրառվել նաեւ չափահաս երիտասարդների նկատմամբ:
9. Ավելին, ԵՂԳԽՆ-ն ցանկություն է հայտնել, որ անդամ պետությունները պատշաճ միջոցներ ձեռնարկեն՝ ուղղված անչափահասների կողմից իրավախախտումների կատարմանը հանգեցնող այլ սոցիալ-տնտեսական պատճառների դեմ պայքարին (օրինակ՝ անօթեւանություն, գործազրկություն, կրթության բացակայություն):

Ելակետային փաստաթղթերը

10. ԵՂԳԽՆ-ն սույն կարծիքը նախապատրաստել է՝ հիմք ընդունելով 37 անդամ պետությունների՝ այս թեմայի վերաբերյալ հատուկ հարցաշարի պատասխանները³:
11. Սույն կարծիքը հիմնված է համընդհանուր⁴ եւ տարածաշրջանային⁵ իրավական փաստաթղթերի, այդ թվում՝ այս հարցի առնչությամբ Դատարանի նախադեպային իրավունքի վրա:⁶
12. ԵՂԳԽՆ-ն նաեւ հաշվի է առել Եվրոպայի գլխավոր դատախազների 7-րդ համաժողովի (Մոսկվա, 2006թ.)⁷ ՝ անհատների պաշտպանության գործում հանրային մեղադրողի դերի վերաբերյալ աշխատանքը եւ եզրակացությունները, ինչպես նաեւ ԵՂԳԽՆ-ի՝ Քրեական հետապնդման այլընտրանքների վերաբերյալ թիվ 2 կարծիքը, Քրեաիրավական ոլորտից դուրս դատախազական ծառայությունների դերի վերաբերյալ թիվ 3 կարծիքը եւ Ժողովրդավարական հասարակությունում դատավորների եւ դատախազների միջեւ հարաբերությունների վերաբերյալ թիվ 4 կարծիքը⁸:

³ Տե՛ս CCPE-GT(2010)1REV6 փաստաթուղթը:

⁴ Տե՛ս մասնավորապես Միավորված ազգերի կազմակերպության իրավական փաստաթղթերը, այդ թվում՝ Երեխայի իրավունքների մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան (1989 թվականի նոյեմբերի 20), Անչափահասների գործերով արդարադատության իրականացման Միավորված ազգերի կազմակերպության նվազագույն ստանդարտ կանոնները (Պեկինյան կանոններ, 1985 թվականի նոյեմբերի 29), Անչափահասների հանցավորության կանխարգելման՝ Միավորված ազգերի կազմակերպության ուղեկիշները (Ռիադի ուղեկիշներ, 1990 թվականի դեկտեմբերի 14), Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության կանոնները (Հավանայի կանոններ, 1990 թվականի դեկտեմբերի 14): Տե՛ս նաեւ «Անչափահասների գործերով արդարադատության մասով երեխաների իրավունքների վերաբերյալ» Միավորված ազգերի կազմակերպության՝ Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի թիվ 10 ընդհանուր մեկնաբանությունը (CRC/GC/10, 2007) եւ Միջազգային քրեական դատարանի ընթացակարգի եւ ապացուցման կանոնները (2002 թվականի սեպտեմբերի 9), մասնավորապես՝ 67-րդ կանոնը («Ձայնա- եւ տեսահաղորդակցության միջոցով իրական ժամանակում ցուցմունք տալը»), 68-րդ կանոնը («Նախկինում արձանագրված ցուցմունքը»), 87-րդ կանոնը («Պաշտպանության միջոցներ») եւ 88-րդ կանոնը («Հատուկ միջոցներ»):

⁵ Տե՛ս մասնավորապես Եվրոպայի խորհրդի նորմատիվ փաստաթղթերը, ինչպիսիք են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, այդ թվում՝ 6-րդ, 8-րդ եւ 13-րդ հոդվածները, Սեռական շահագործումից եւ սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին կոնվենցիան (ԵԽՊԸ թիվ 201) (ուժի մեջ է մտել 2010 թվականի հուլիսի 1-ին Եվրոպայի խորհրդի 5 անդամ պետությունների մասով), Անչափահասների հանցավորության արձագանքելու նոր ուղիների եւ անչափահասների գործերով արդարադատության դերի վերաբերյալ Rec(2003)20 առաջարկությունը, Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ Rec(2006)2 առաջարկությունը, «Պատիժների կամ այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների վերաբերյալ եվրոպական կանոնների մասին» Rec(2008)11 առաջարկությունը, Երեխաներին բռնությունից պաշտպանելու միասնական ազգային ռազմավարությունների վերաբերյալ Rec(2009)10 առաջարկությունը, «Կառուցել Եվրոպա երեխաների հետ եւ երեխաների համար» ծրագիրը: Տե՛ս նաեւ «Երեխաները եւ անչափահասների գործերով արդարադատությունը. բարելավմանն ուղղված առաջարկներ» թեմայով Մարդու իրավունքների հանձնակատարի CommDH/IssuePaper(2009)1 փաստաթուղթը:

⁶ Տե՛ս ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը, մասնավորապես՝ Էքս-ը եւ Ուայ-ն ընդդեմ Նիդեռլանդների [X and Y v. Netherlands] (1985 թվականի մարտի 26, թիվ 8978/80), Բուամարն ընդդեմ Բելգիայի [Bouamar v. Belgium] (1988 թվականի փետրվարի 29, թիվ 9106/80), Վ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության [V. v. United Kingdom] (1999 թվականի դեկտեմբերի 16, թիվ 24888/94), Թ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության [T. v. United Kingdom] (1999 թվականի դեկտեմբերի 16, թիվ 24724/94), Կույար Մոժերին ընդդեմ Ֆրանսիայի [Couillard Maugery v. France] (2004 թվականի հուլիսի 1, թիվ 64796/01), Մուբիլանզիլա Մայեկան եւ Կանիկի Միտունգան ընդդեմ Բելգիայի [Mubilanzila Mayeka and Kaniki Mitunga v. Belgium] (2006 թվականի հոկտեմբերի 12, թիվ 13178/03), Օկկալին ընդդեմ Թուրքիայի [Okkali v. Turkey] (2006 թվականի հոկտեմբերի 17, թիվ 52067/99), Մոմուսոն եւ Ուոշինգտոնն ընդդեմ Ֆրանսիայի [Maumousseau and Washington v. France], (2007 թվականի դեկտեմբերի 6, թիվ 39388/05), Յունուս Ակտաշ եւ այլք ընդդեմ Թուրքիայի [Yunus Aktas and others v. Turkey] (2009 թվականի հոկտեմբերի 20, թիվ 24744/03), Էմ.Բի-ն ընդդեմ Ֆրանսիայի [M.B. v. France], (2009 թվականի դեկտեմբերի 17, թիվ 22115/06) (գործի քննությունը Մեծ պալատին փոխանցելու պահանջն ընթացքի մեջ է), Սալդուզն ընդդեմ Թուրքիայի [Salduz v. Turkey] (2008 թվականի նոյեմբերի 27, թիվ 36391/02):

⁷ Տե՛ս Եվրոպայի գլխավոր դատախազների 7-րդ համաժողովը (Մոսկվա, 2006 թվականի հուլիսի 5-6), որը կազմակերպվել է Եվրոպայի խորհրդի կողմից Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության հետ համագործակցությամբ:

⁸ Տե՛ս նաեւ Անչափահաս իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ հարցաշարի պատասխանների ամփոփ վերլուծությունը (փաստաթուղթ PC-CP(2009)04 եզրափակիչ) եւ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի ուղեցույցների նախագիծը, որը պատրաստվել է Իրավական համագործակցության եվրոպական կոմիտեի կողմից (փաստաթուղթ CJ- S-CH (2011)9):

Սահմանումները

13. Սույն կարծիքի նպատակով ԵՂԳԽՆ-ն հղում է կատարում «Պատիժների կամ այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների վերաբերյալ եվրոպական կանոնների մասին» Rec(2008)11 առաջարկության 21-րդ պարբերությունում նշված սահմանումներին եւ Անչափահասների հանցավորությանն արձագանքելու նոր ուղիների եւ անչափահասների գործերով արդարադատության դերի վերաբերյալ Rec(2003)20 առաջարկությանը.
- i. «անչափահաս/դեռահաս» նշանակում է 18 տարին չըրացած անձ.
 - ii. «անչափահաս իրավախախտ» նշանակում է 18 տարին չըրացած անձ, որը կասկածվում է իրավախախտում կատարելու մեջ, կամ որը կատարել է իրավախախտում.
 - iii. «իրավախախտում» նշանակում է ցանկացած գործողություն կամ անգործություն, որը խախտում է օրենքը եւ առաջացնում է պատիժ, ինչպես նաեւ քննվում է քրեական դատարանի կամ որեւէ այլ դատական կամ վարչական մարմնի կողմից:

Անչափահասների գործերով արդարադատության առանձնահատկությունները

14. Բոլոր դատական, իրավապահ մարմինները եւ հասարակական կառույցները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն անչափահասների գործերով արդարադատությանը՝ ելնելով դրան դիմած անձանց խոցելիությունից: Արդարադատության բոլոր համակարգերում դատախազը պետք է հաշվի առնի անչափահասի տարիքային կարգավիճակը, տարիքով պայմանավորված՝ նրա պատասխանատվության աստիճանի վրա հնարավոր մեղմացնող ազդեցությունը եւ առանձնահատուկ ուշադրություն դարձնի նրա իրավունքներին:
15. Անհրաժեշտության դեպքում պետք է հաշվի առնել հետեւյալ միջոցները.
- անչափահասների տված ցուցմունքների տեսագրում կամ ձայնագրում, մանկական հոգեբանների, մանկավարժների, սոցիալական աշխատողների կամ այլ փորձագետների աջակցությամբ իրականացվող՝ անչափահասների հարցաքննություն.
 - անչափահասների հարցաքննություն, որն անհրաժեշտության դեպքում իրականացվում է ծնողական իրավունքներ ունեցող անձի կամ անչափահասի մերձավոր մեկ այլ անձի կամ սոցիալական ծառայությունների ներկայացուցիչների ներկայությամբ.
 - երեխաների համար հատուկ հարմարեցված հարցաքննության սենյակներ: Երիտասարդ անչափահաս տուժողների հարցաքննությունների թիվը պետք է հնարավորինս սահմանափակվի.
 - հարցաքննությունը պետք է իրականացվի այնպես, որ հնարավոր լինի խուսափել կրկնակի վիկտիմիզացիայից:
16. Դատախազները պետք է ձգտեն միջոցներ ձեռնարկել՝ ուղղված այն անչափահասների կողմից իրավախախտումների կատարումը կանխելուն, որոնք հավանական է, որ իրավախախտումներ կկատարեն՝ իրենց խոցելիության պատճառով: Անհրաժեշտ է խորհրդակցել ծնողների հետ եւ նրանց ներգրավել այդ միջոցառումների իրականացման գործընթացում:
17. Պատիժ նշանակելիս պետք է հաշվի առնել տվյալ անչափահասների կրթության մակարդակը, դաստիարակությունը, անձնական միջավայրը եւ անհատական հատկանիշները եւ չպետք է միայն պատժել քրեական իրավախախտումների կամ այլ հանցավոր վարքագծի համար: Անչափահասների ազատությունը սահմանափակող միջոցները պետք է սահմանվեն օրենքով եւ սահմանափակվեն հասարակության պաշտպանության համար անհրաժեշտ խիստ պահանջներով:
18. Դատախազն իր իրավասությունների համաձայն պետք է ձգտի ապահովել, որ արդարադատության համակարգի հետ անչափահասի ցանկացած շփում՝ անկախ նրա իրավախախտ, տուժող կամ վկա լինելուց, արժանանա հատուկ ուշադրության, որպեսզի նրան հնարավորություն տրվի իր տարիքի համար հասկանալի եղանակով ստանալու անհրաժեշտ տեղեկություններ վարույթի անցկացման, դատավարության մասնակիցների դերի եւ նրա նկատմամբ կիրառված միջոցների վերաբերյալ:
19. Դատախազները պետք է ունենան անհրաժեշտ եւ համապատասխան միջոցներ՝ անչափահասների նկատմամբ իրենց իրավասություններն իրականացնելու համար, կամ այդ միջոցները պետք է վերապահվեն անչափահասների հարցերով զբաղվող այլ իրավասու ծառայությունների: Մասնավորապես նրանց պետք է ապահովել պաշտոնների համալրումը կարգավորող համակարգով, համապատասխան վերապատրաստմամբ, ինչպես նաեւ

անհրաժեշտ անձնակազմով, միջոցներով եւ մասնագիտացված ծառայություններով: Ավելին, անդամ պետությունները պետք է դիտարկեն անչափահասների հանցավորության գործերով զբաղվող մասնագիտացված ստորաբաժանումներ կամ ծառայողների համակարգ ստեղծելու հարցը:

20. Անչափահասների հետ կապված քրեական գործերով քննություններ կամ քրեական հետապնդում եւ այլ վարույթներ իրականացնելիս դատախազները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն ժամկետներին եւ պետք է փորձեն ապահովել, որ նման գործերը դիտարկվեն որպես առաջնահերթություն եւ իրականացվեն առանց որեւէ անհիմն ձգձգման: Երկարատեւ ընթացակարգը կարող է խորացնել կատարված իրավախախտման բացասական ազդեցությունը եւ կարող է խոչընդոտել ինչպես անչափահաս իրավախախտի, այնպես էլ անչափահաս տուժողի պատշաճ վերականգնումը:
21. Դատախազները պետք է իրազեկ լինեն, որ միջազգային չափանիշներին համապատասխան՝ ազատությունից զրկված երեխաները պետք է, որպես հիմնական կանոն, պահվեն մեծահասակներից առանձին եւ պետք է ունենան իրենց ընտանիքի անդամների հետ կապ պահպանելու իրավունք⁹:
22. Հասարակության շահը պահանջում է, որ լրատվության միջոցներին տրամադրվի անհրաժեշտ տեղեկություններ արդարադատության համակարգի գործունեության վերաբերյալ¹⁰: Այնուամենայնիվ, լրատվության միջոցների հետ շփումը կարող է հատկապես վնասակար լինել քրեական գործերով քննություններում եւ այլ ընթացակարգերում ներգրավված անչափահասների համար: Դատախազները հետեւաբար պետք է հատկապես գիտակցեն իրենց պատասխանատվությունը՝ չբացահայտելու որեւէ տեղեկություն, որը կարող է խախտել ներգրավված անչափահասների իրավունքները, կամ տեղեկություն, որը կարող է հանգեցնել նրանց նախապաշարմունքների ավելացմանը:
23. Խստորեն խորհուրդ է տրվում դատախազների միջեւ իրականացնել փորձի փոխանակում եւ ընդլայնել անչափահասների գործերով արդարադատության թեմայով միջազգային համագործակցությունը:

Անչափահասները մինչեւ դատաքննությունը

24. Դատավարության գործընթացում ներգրավված անչափահասի վիճակն ավելի լավ հասկանալու համար դատախազներն իրենց իրավասության շրջանակներում պետք է առանցքային դեր կատարեն քրեական գործով քննության հիմնական դերակատարների, օրինակ՝ ոստիկանության, պրոբացիոն ծառայության եւ սոցիալական ծառայությունների աշխատանքների համակարգման եւ դրանց համագործակցության հարցում:
25. Խորհրդատվություն ստանալու նպատակով դատախազները պետք է անհրաժեշտության դեպքում դիմեն սոցիալական ծառայություններին եւ երեխաների պաշտպանության մասնագիտացված ծառայություններին՝ մինչեւ ներգրավված անչափահասների նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու կամ չիրականացնելու վերաբերյալ որոշում կայացնելը: Դատախազները պետք է նաեւ խորհրդակցեն նրանց հետ՝ մինչեւ որոշում կայացնելը, թե ինչ պատիժ կամ միջոց առաջարկել Դատարանին: Նրանք նաեւ պետք է տեղյակ լինեն անչափահասների եւ փորձագետների համար նախատեսված լուծման անցկացման հատուկ տեխնիկական միջոցների մասին եւ անհրաժեշտության դեպքում օգտագործեն դրանք (տե՛ս վերեւում՝ 16-րդ պարբերությունը):¹¹
26. Հաշվի առնելով քրեական եւ այլ վարույթների հնարավոր վնասակար ազդեցությունն անչափահասների հետագա զարգացման վրա՝ դատախազները պետք է հնարավորության սահմաններում եւ օրենքին համապատասխան փնտրեն անչափահաս իրավախախտների նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու այլընտրանքներ, եթե այդպիսի այլընտրանքները համարվում են այդ իրավախախտման համար պատշաճ դատական արձագանք՝ հաշվի առնելով տուժողների եւ ընդհանուր առմամբ՝ հանրության շահերը, եւ համահունչ են անչափահասների գործերով արդարադատության նպատակներին¹²:

⁹ Տե՛ս Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, 37-րդ հոդված:

¹⁰ Տե՛ս Բորդոյի հռչակագիրը ԵՂԳԽՆ-ի թիվ 12 (2009) կարծիքի մեջ եւ ԵՂԳԽՆ-ի թիվ 4 (2009) կարծիքը Ժողովրդավարական հասարակությունում դատավորների եւ դատախազների միջեւ հարաբերությունների վերաբերյալ:

¹¹ Տե՛ս ԵՂԳԽՆ-ի թիվ 1 կարծիքը Քրեական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության ամրապնդման միջոցների վերաբերյալ:

¹² Տե՛ս ԵՂԳԽՆ-ի թիվ 2 կարծիքը Քրեական հետապնդման այլընտրանքների վերաբերյալ:

27. Համաձայն միջազգային չափանիշների՝ անչափահասների նկատմամբ միջադատական կալանքը պետք է կիրառվի միայն որպես ծայրահեղ միջոց եւ հնարավորինս կարճ ժամկետով: Անչափահասների հետ գործ ունենալիս դատախազները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն այն հարցին, թե արդյոք միջադատական կալանքի հիմքերը կարելի է ձեռք բերել՝ կիրառելով ավելի քիչ միջամտություն ենթադրող միջոցներ, եւ երաշխավորեն, որ միջադատական փուլում անչափահասների նկատմամբ նշանակված կալանքն անցկացվի այնպիսի պայմաններում, որոնք կօգնեն նվազագույնի հասցնել կալանքի հնարավոր բացասական հետեւանքները:
28. Անչափահասների կողմից կատարված իրավախախտումների տարբեր տեսակների առնչությամբ համապատասխան միջոցների վերաբերյալ ուղեցույցները կամ առաջարկությունները կարող են օգտակար լինել օրենքի առջեւ հավասարության սկզբունքն ապահովելու համար:

Անչափահասները դատաքննության ընթացքում

29. Դատաքննության ընթացքում անչափահասների բարեկեցության եւ շահերի ապահովման նպատակը պետք է դիտարկվի բոլոր դատախազների կողմից: Դատախազները պետք է ձգտեն նվազագույնի հասցնել իրավախախտներին, տուժածներին եւ վկաներին քրեական դատավարության հետեւանքով պատճառված ցանկացած անհարկի չափազանցված վնաս անհրաժեշտության դեպքում, երբ պաշտպանական մոտեցումը կարող է օգնել:
30. Դատախազը պետք է փորձի ապահովել, որ անչափահասը տեղյակ լինի իրեն ներկայացված մեղադրանքի վերաբերյալ եւ ի վիճակի լինի լիարժեքորեն իրականացնել իր պատշաճ պաշտպանությունը, որպեսզի վերջինս կարողանա բացատրություններ տալ եւ օգտվել իրավաբանական օգնությունից բոլոր այն վարույթներում, որոնցում նա ներգրավված է, եւ ի վիճակի լինի ազատորեն արտահայտվել իրավասու դատարանի առջեւ:

Անչափահասներին վերաբերող որոշումների կատարումը

31. Ինչ վերաբերում է անչափահասների գործերով արդարադատությանը, ապա դատախազները պետք է, եթե դա իրենց իրավասության շրջանակներում է, փորձեն ապահովել, որ կրթական եւ սոցիալականացման այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են վերականգնումը, կրթությունը, սոցիալական ծառայությունների կողմից վերահսկողությունը, բուժումը, անչափահասների համար մասնագիտացված հաստատություններում տեղավորումը, միջնորդությունը, ինչպես նաեւ դատական վերահսկողությունը, պրոբացիան եւ պայմանական վաղաժամկետ ազատ արձակումը, կիրառվեն հնարավորինս մեծ ծավալով՝ միեւնույն ժամանակ հաշվի առնելով տուժողի շահերը, հանրային շահը, անչափահասի շահը, ինչպես նաեւ քրեական արդարադատության նպատակները:
32. Այն դեպքում, երբ դա իրենց իրավասության շրջանակներում է, դատախազները պետք է վերահսկեն բոլոր պատիժների եւ միջոցների իրականացման օրինականությունը, ինչպես նաեւ անչափահասների համար մասնագիտացված հաստատություններում իրականացվող կրթությունը եւ պարբերաբար իրականացնեն ստուգումներ անչափահասների համար նախատեսված բոլոր մասնագիտացված քրեակատարողական հիմնարկներում: Այս ստուգումները պետք է վերաբերեն նաեւ անչափահաս կասկածյալների միջադատական կալանքի վայրերին:
33. Դատախազները պետք է, եթե դա իրենց իրավասությունների շրջանակներում է, ապահովեն, որ այն անչափահասները, որոնք կատարել են իրավախախտում եւ որոնք ենթակա են դատական միջոցների կամ պատժի, մշտադիտարկվեն եւ նրանց տրամադրվի աջակցություն, որպեսզի հնարավոր լինի խուսափել կրկնահանցագործության ռիսկից:
34. Անդամ պետություններին առաջարկվում է պարբերաբար ստուգել Rec(2000)19 առաջարկության իրականացումն իրենց ազգային համակարգում, մասնավորապես՝ անչափահասների գործերով արդարադատության համակարգում, ինչպես նկարագրված է սույն կարծիքում

Կարծիք թիվ 6 (2011)

Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի՝
ուղղված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին

Դատախազների և բանտի վարչակազմի միջև հարաբերությունները

I. Ներածություն

1. Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԽՆ) ստեղծվել է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 2005 թվականին՝ դատախազական ծառայությունների գործունեության վերաբերյալ կարծիքներ տրամադրելու և անդամ պետություններին ուղղված՝ Զրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին Նախարարների կոմիտեի Rec(2000)19 առաջարկության արդյունավետ իրականացումը խթանելու նպատակով:
2. 2011 թվականին Նախարարների կոմիտեն հանձնարարել էր ԵԴԽՆ-ին¹ ուսումնասիրել հանրային մեղադրողների և բանտի վարչակազմի միջև հարաբերություններին առնչվող հարցերը Նախարարների կոմիտեի Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ Rec(2006)2 առաջարկության լուսի ներքո:
3. ԵԴԽՆ-ն սույն կարծիքը կազմել է 25 անդամ պետություններից հարցաշարի պատասխաններն² ստանալուց հետո: Դրանից հստակ երևում է, որ հանրային մեղադրողների և բանտի վարչակազմի միջև հարաբերությունները տարբեր են հիմնականում նպատակների, բովանդակության և կառուցվածքի առումով. համագործակցության բացակայությունից մինչև բավականին սերտ և համակարգված, իսկ երբեմն՝ դատախազական ծառայության կողմից վերահսկվող հարաբերություններ: Այս տարբերությունը բացատրվում է արդարադատության տարբեր ինստիտուտներում եղած իրավական պատմությամբ, ազգային մշակույթով և զարգացումներով:

Կարծիքի շրջանակը

4. Սույն կարծիքի բոլոր դրույթները վերաբերում են այն պետություններին, որտեղ հանրային մեղադրողները բանտերին առնչվող հարցերում ունեն հատուկ դեր: Այն պետություններում, որտեղ դատախազներն այդպիսի լիազորություններ չունեն, պետք է գոյություն ունենա մեկ այլ մարմին, որը միշտ կկարողանա պաշտպանել ազատությունից զրկված անձանց իրավունքները:
5. Սույն կարծիքը վերաբերում է «դատական մարմնի որոշմամբ կալանքի տակ գտնվող կամ դատապարտումից հետո ազատությունից զրկված անձանց» գործերով պատասխանատու դատախազների և [քրեակատարողական] հիմնարկների միջև հարաբերություններին, ինչպես սահմանված է (2006)2 առաջարկությամբ:

Կարծիքի նպատակը

6. Կալանավորված անձանց փակ տիպի հիմնարկում անազատության մեջ պահելը միշտ մարդու ամենահիմնական իրավունքները խախտելու վտանգ կպարունակի:
7. ԵԴԽՆ-ի նպատակն է սահմանել ազատությունից զրկված անձանց նկատմամբ իրենց պարտականությունները կատարելու վերաբերյալ ուղենիշներ հանրային մեղադրողների համար, և մասնավորապես՝
 - որոշել գործունեության այն բնագավառները, որոնք ներառում են կալանավորման պայմանների նկատմամբ վերահսկողություն՝ ապահովելով, որ հարգվեն օրենքն ու մարդու իրավունքները, ինչպես նաև խթանելով բանտարկյալների ուղղումը և հասարակությունում նրանց վերաինտեգրումը հնարավոր լավագույն պայմաններում
 - բարձրացնել համապատասխան բոլոր մարմինների, այդ թվում՝ դատախազական ծառայությունների անդամների իրազեկվածությունը կալանավորվածներին պահելու պայմանների վերաբերյալ, որպեսզի նրանք կարողանան արդյունավետորեն իրականացնել

¹ Տե՛ս Նախարարների տեղակալների 1099-րդ նիստը (2010 թվականի նոյեմբերի 23):

² Տե՛ս սույն կարծիքի հավելվածը, ինչպես նաև սույն թեմայի վերաբերյալ անդամ պետությունների կողմից հարցաշարին տված պատասխանները ԵԴԽՆ-ի կայքում՝ www.coe.int/ccpe:

կարգավորման առարկայի վերաբերյալ՝ ազգային օրենսդրությամբ իրենց վերապահված գործառույթները

- ընդգծել Rec(2006)2 առաջարկությամբ սահմանված հիմնարար սկզբունքները եւ որոշ կոնկրետ միջոցներ՝ իրագրվածության մակարդակը բարձրացնելու եւ համապատասխան բոլոր մարմինների կողմից այդ սկզբունքներին համապատասխանության ապահովումը նյութացնելու համար:

Ընդհանուր սկզբունքները

8. Անհրաժեշտ է, որ օրենքի գերակայությամբ կարգավորվող ցանկացած պետությունում ստեղծվեն պետության կողմից ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կատարմանն առնչվող զսպումների եւ հակակշիռների լավ կորդինացված համակարգ ու դրանց կատարման եւ հսկողության մեխանիզմներ: Սա ենթադրում է, որ թե՛ կալանքի տակ պահելու, թե՛ պատիժը կատարելու համատեքստում պետք է գործեն մշտադիտարկման եւ հսկողության համապատասխան մեխանիզմներ:
9. Այս առնչությամբ բոլոր անդամ պետությունները պետք է ստեղծեն անկողմնակալ, օբյեկտիվ եւ մասնագիտացված մարմին՝ ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կատարման նկատմամբ պարբերական եւ համակարգված մշտադիտարկում եւ հսկողություն կրակնացնելու համար: Որոշ անդամ պետություններում դա կարող է իրականացվել հանրային մեղադրողներին այնպիսի լիազորություններով օժտելու միջոցով, որոնք անհրաժեշտ են այդ խնդիրներն ամենաարդյունավետ եղանակով լուծելու համար: Այլ պետություններում այդ խնդիրների լուծումը կարող է իրականացվել այլ դատական ատյանների կամ բանտի վարչակազմից դուրս անկախ մարմինների կողմից:
10. Հետեւաբար հատուկ ուշադրություն պետք է դարձնել քրեակատարողական հիմնարկների նպատակներին եւ խնդիրներին, դատախազական ծառայությունների գործառույթներին եւ լիազորություններին, եթե նրանք ունեն այդպիսի գործառույթներ, կապված պատիժների կատարման օրինականության եւ պատիժը կրող եւ մինչդատական կալանքի տակ գտնվող անձանց իրավունքների ու հիմնարար ազատությունների պահպանման հետ:
11. Այն դեպքում, երբ հանրային մեղադրողները որեւէ իրավասու մարմնի որոշմամբ կատարում են պատիժը կամ հանձնարարում են դրա կատարումը կամ անձանց արգելանքի տակ վերցնելը, նրանք համարվում են անձին ազատությունից զրկելու գործընթացին անմիջական առնչություն ունեցողներ: Այս գործողությունների շրջանակներում հանրային մեղադրողները պետք է միշտ առաջնորդվեն օրինականության, անկողմնակալության եւ անհարկի ազդեցությունից անկախ լինելու սկզբունքներով: Իրենց գործառույթները կատարելիս նրանք պետք է խուսափեն ցանկացած հիմքով ցանկացած խտրականությունից, ինչպես օրինակ՝ սեռը, ռասան, մաշկի գույնը, լեզուն, կրոնը, հաշմանդամությունը, սեռական կողմնորոշումը, քաղաքական կամ այլ հայացքները, ազգային կամ սոցիալական ծագումը, ազգային փոքրամասնությանը պատկանելությունը, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակ (խտրականության բացառման սկզբունք):

Փաստաթղթերը, որոնց հղում է կատարվել

12. Ինչ վերաբերում է կալանավորման պայմաններին, ԵՂԳԽՄ-ն ընդգծում է Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային (ՄԻԵԿ) եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Դատարան) նախադեպային իրավունքին հղում կատարելու կարեւորությունը: Մասնավորապես ԵՂԳԽՄ-ն ընդգծում է ՄԻԵԿ-ի՝ խոշտանգումները³ եւ անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը⁴ արգելող 3-րդ հոդվածը, 8-րդ հոդվածը (անձնական եւ ընտանեկան կյանքը հարգելու իրավունք)⁵ եւ 13-րդ հոդվածը (իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք)⁶ հարգելու կարեւորությունը:

³ Տե՛ս մասնավորապես Սելմունի ընդդեմ Ֆրանսիայի [Selmouni v. France] (թիվ 25803/94), Ակսոյի ընդդեմ Թուրքիայի [Aksoy v. Turkey] (1996 թվականի դեկտեմբերի 18) եւ Այդին ընդդեմ Թուրքիայի [Aydin v. Turkey] (1997 թվականի սեպտեմբերի 25) գործերը:

⁴ Տե՛ս մասնավորապես Յալլոհի ընդդեմ Գերմանիայի [Jalloh v. Germany] (թիվ 54810/00), Օլշեւսկի ընդդեմ Լեհաստանի [Olszewski v. Poland] (2003 թվականի նոյեմբերի 13), Լաբիտա ընդդեմ Իտալիայի [Labita v. Italy] (թիվ 26772/95), Կանտյրեյ ընդդեմ Ռուսաստանի [Kantjrev v. Russia] (2007 թվականի հունիսի 21), Օրչոսկի ընդդեմ Լեհաստանի [Orchowski v. Poland] (թիվ 17885/04) եւ Նազարենկո ընդդեմ Ուկրաինայի [Nazarenko v. Ukraine] (2003 թվականի ապրիլի 29) գործերը:

⁵ Տե՛ս մասնավորապես Վլասովի ընդդեմ Ռուսաստանի [Vlasov v. Russia] (2008 թվականի հունիսի 12), Օստրովարի ընդդեմ Մոլդովայի [Ostrovar v. Moldova] (2005 թվականի սեպտեմբերի 13), Էնեան ընդդեմ Իտալիայի [Enea v. Italy] (2009 թվականի սեպտեմբերի 17) գործերը:

⁶ Տե՛ս մասնավորապես Կայան ընդդեմ Թուրքիայի [Kaya v. Turkey] (1998 թվականի փետրվարի 19) եւ Սելիկի ընդդեմ Ուկրաինայի

13. ԵՂԳԻՒՏ-ն մասնավորապես հաշվի է առել «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» (2000)19 առաջարկությունը եւ Եվրոպական բանտային կանոնների մասին (2006)2 առաջարկությունը, որոնցում թվարկված են այն կանոնները, որոնք պետք է կիրառվեն, երբ անդամ պետությունն անձին կալանքի տակ է վերցնում (հիմնական սկզբունքները, ազատագրվման պայմանները, առողջությունը, պատշաճ կարգով կանոնը, ղեկավարությունը եւ անձնակազմը, տեսչական ստուգումները եւ մշտադիտարկումը, բանտարկյալներ, որոնց գործը չի քննվել, դատապարտված անձինք), ինչպես նաեւ Եվրոպայի խորհրդի այլ փաստաթղթեր⁷:
14. ԵՂԳԻՒՏ-ն նաեւ հաշվի է առել Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան փաստաթղթերը⁸, ինչպես նաեւ որոշ միջազգային իրավական փաստաթղթեր⁹:

II. Հանրային մեղադրողների դերը

Ա. Կալանքի տակ վերցնելը

15. Քրեական գործերով կալանավորումը միշտ պետք է համապատասխանի օրենքով նախատեսված ողջամիտ հիմքերին եւ լինի ՄԻԵԿ-ի եւ համապատասխան նախադեպային իրավունքի պահանջներին համապատասխան:
16. Այն պետություններում, որտեղ բանտերին առնչվող հարցերի հետ կապված դատախազները որոշակի գործառույթներ ունեն, նրանք պետք է կարողանան՝
 - վերահսկել, որ քննչական մարմինները պահպանեն կալանավորված անձանց՝ ՄԻԵԿ-ով եւ ներպետական օրենսդրությամբ նախատեսված իրավունքները (օրինակ՝ կալանավորման պատճառներն իմանալու իրավունքը, իր կալանավորման վերաբերյալ հարազատներին տեղյակ պահելու իրավունքը, պաշտպանության իրավունքը, այդ թվում՝ փաստաբան ունենալու իրավունքը), քայլեր ձեռնարկել այդ իրավունքների խախտումները դադարեցնելու համար, ինչպես նաեւ պատասխանատվության ենթարկել այն անձանց, որոնք մեղավոր են այդ խախտումների համար.
 - ձեռնարկել համապատասխան քայլեր՝ կալանավորված անձին անմիջապես ազատ արձակելու համար այն դեպքում, երբ ազատությունից զրկելու պայմանները չեն պահպանվում (օրինակ՝ այն դեպքում, երբ կալանավորումը կատարվում է առանց օրդերի, կամ այն դեպքում, երբ առավել նվազ միջամտող բնույթ ունեցող միջոցները համարվում են բավարար).
 - հսկել, թե ինչպես է պահպանվում դատավորի՝ մինչդատական փուլում արգելանքի տակ պահելու որոշման օրինականությունը:

Բ. Պատիժների կատարումը

17. Ազատագրվման ձեռով պատժի կատարումը հանգեցնում է անձին հիմնարար իրավունքից՝ ազատությունից զրկելուն:
18. Այս եզրահանգումը տալիս է միջոցներ ձեռնարկելու հիմք, այդ թվում՝ հանրային մեղադրողների կողմից, եթե նրանք օժտված են այդպիսի գործառույթով, որպեսզի՝
 - պատիժը կատարվի այնպիսի ժամանակահատվածում, որի վաղեմության ժամկետը դեռ չի լրացել,

[Melnik v. Ukraine] (2006 թվականի մարտի 28) գործերը:

⁷ Տե՛ս նաեւ Խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին Եվրոպական կոնվենցիան, «Բանտում կրթության մասին» թիվ R(89)12 առաջարկությունը, «Բանտի եւ բանտում տարափոխիկ հիվանդությունների, այդ թվում՝ ՋԻԱԳ-ի հսկողության քրեաբանական եւ առողջապահական խնդիրների մասին» թիվ(93)6 առաջարկությունը, «Պատիժների եւ միջոցառումների կատարմամբ զբաղվող անձնակազմի մասին» թիվ R(97)12 առաջարկությունը, «Բանտում բուժօգնության բարոյական ու կազմակերպչական խնդիրների մասին» թիվ R(98)7 առաջարկությունը, «Բանտերի գերծանրաբեռնվածության եւ բանտերում գտնվողների թվի աճի մասին» թիվ Rec(99)22 առաջարկությունը, «Պայմանական ազատման (պայմանական վաղաժամկետ ազատման) մասին» Rec(2003)22 առաջարկությունը եւ «Բանտերի վարչակազմերի կողմից ցմահ ազատագրվածների եւ այլ երկարաժամկետ ազատագրված բանտարկյալների պատժի կրումը կազմակերպելու մասին» Rec(2003)23 առաջարկությունը:

⁸ Տե՛ս մասնավորապես «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը (1966թ.), «Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները» (1955թ.), «Դատախազների դերի մասին» ուղենիշները (1990թ.), «Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ» ՄԱԿ-ի կանոնները (1990թ.):

⁹ Տե՛ս մասնավորապես 2005 թվականին Դատախազների միջազգային ասոցիացիայի կողմից ընդունված՝ Դատախազների մասնագիտական պատասխանատվության չափանիշները եւ հիմնական պարտականություններն ու իրավունքները:

անկողմնակալ եւ անկախ դատական մարմնի կողմից վերջնական մեղադրական դատավճիռ կայացնելուց հետո.

- - պատժի բնույթը եւ (կամ) տեւողությունը հստակորեն սահմանվեն կայացված որոշմանը համապատասխան.
 - դատապարտված անձը տեղեկացվի պատժի հիմքերի եւ դրա ժամկետների մասին:
19. Մինչեւ պատժի կատարումը կարելու է, որ համապատասխան բանտի վարչակազմից անկախ մարմինն ապահովի այդ պատժի կատարման օրինականությունը:
20. Մարմինները, որոնք իրավասու են պատժի կատարման համար, պետք է՝
- հատկապես ստուգեն, որ ապահովված լինեն պատժի կատարման համար իրավական պայմանները, եւ պատիժը կատարվի այնպես, որ հարգվի մարդու արժանապատվությունը: Եթե արտակարգ իրավիճակներով պայմանավորված՝ հատուկ հանգամանքներ ի հայտ չեն գալիս (արդարադատությունից թաքնվելու վտանգ կամ անվտանգության նկատառումներ), նրանք պետք է ապահովեն, որ բանտարկյալի, նրա փաստաբանների կամ բանտի վարչակազմի՝ պատժի կատարմանը վերաբերող բոլոր հարցերն արագ արձագանք ստանան, եւ տրամադրեն ցանկացած փաստաթուղթ, որը հիմնավորում է իրենց դիրքորոշումը.
 - ընթացք տան ցանկացած պահանջի, որը կարող է ազդել պատժի կատարման վրա (օրինակ՝ ներման խնդրագիր, ազատ արձակելու խնդրանք) եւ դա առանց ուշացումների փոխանցեն իրավասու մարմնին:
21. Կախված ազգային իրավական համակարգերից՝ հանրային մեղադրողները կարող են կարելու դեր ունենալ իրավախախտների պայմանական ազատման, ինչպես նաեւ հասարակության մեջ նրանց վերաինտեգրման գործընթացում:

Գ. Կալանքի ռեժիմը

22. Թեեւ Եվրոպական բանտային կանոնները չեն հստակեցնում ո՛չ հանրային մեղադրողների, ո՛չ էլ հսկողություն իրականացնող որեւէ այլ մարմնի դերն ու դիրքորոշումը կալանքի համատեքստում, հանրային մեղադրողներն այդպիսի գործառնություն ունենալու դեպքում պետք է խստորեն վերահսկեն սույն կանոնները կիրարկող ազգային օրենքների կատարումը: Հատկապես կարելու է, որ նրանք իրենց իրավասությունների շրջանակում ապահովեն կալանավորված անձանց իրավունքների լիարժեք եւ արդյունավետ պաշտպանությունը՝ բանտերում մարդու իրավունքների եւ ազատությունների հետեւողական կիրառությունը թույլատրելու համար:
23. Կալանքով պետք է հարգվի ազատությունից զրկված անձանց արժանապատվությունը, եւ սահմանափակվի կալանքի բացասական ազդեցությունը՝ միեւնույն ժամանակ պաշտպանելով հասարակությանը:
24. Եթե հանրային մեղադրողներն ունեն կալանավորվածներին պահելու վայրերում իրավական նորմերի պահպանումը վերահսկելու պարտականություններ, ապա նրանք պետք է իրավունք ունենան՝
- ցանկացած պահի պարբերաբար ստուգելու կալանավորվածներին պահելու վայրերը.
 - հասանելիություն ունենալու բանտի վարչակազմի փաստաթղթերին, գործերին, գրավոր հրամաններին եւ որոշումներին եւ պահպանելու դրանք.
 - առանց խոչընդոտների հանդիպելու ազատությունից զրկված անձանց հետ առանց այլ անձանց ներկայության.
 - համապատասխան բացատրություններ պահանջելու կալանավորվածներին պահելու համապատասխան վայրի աշխատակիցներից.
 - ստուգելու ինստիտուցիոնալ խնամքի կամ պաշտպանական կրթության առնչությամբ կրթական մարմինների կողմից ընդունված ընթացակարգերի եւ որոշումների օրինականությունը կամ մինչդատական կալանքի կամ պատժի առնչությամբ քրեակատարողական ծառայության

հրամանների եւ որոշումների օրինականությունը.

- կարգադրելու, որ համապատասխան կալանքի մասով ապահովվի կիրառելի իրավական ակտերի պահպանումը.
 - ձեռնարկելու անձի անհապաղ ազատ արձակմանն ուղղված անհրաժեշտ քայլեր՝ պայմանով, որ անձը կալանավորվել է առանց օրդերի:
25. Կալանավորման գործընթացում իրավական ակտերի ցանկացած խախտման դեպքում հանրային մեղադրողները նման գործառույթ ունենալու պարագայում պետք է արձագանքեն՝ պահանջելով խստորեն պահպանել կիրառելի օրենսդրական դրույթները՝ անկախ այն հանգամանքից, որ կարող են առաջանալ լրացուցիչ ծախսեր: Անհրաժեշտության դեպքում հանրային մեղադրողները կարգապահական կամ քրեական վարույթ են նախաձեռնում բանտի անձնակազմի պատասխանատու անձանց նկատմամբ:

Դ. Բանտերում կատարված (քրեական եւ կարգապահական գործերով) իրավախախտումների վերաբերյալ արձագանքները

26. ԵՂԳԽԽ-ն հիշեցնում է, որ «հանրային մեղադրողները պետական մարմիններ են, որոնք, հանրության անունից եւ հանրային շահերից ելնելով, ապահովում են օրենքի կիրառումն այն դեպքերում, երբ օրենքի խախտումը քրեորեն պատժելի է՝ հաշվի առնելով ինչպես անհատի իրավունքները, այնպես էլ քրեական արդարադատության համակարգի անհրաժեշտ արդյունավետությունը»¹⁰: Պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն, որպեսզի ապահովեն, որ հանրային մեղադրողներն իրենց պարտականությունները կարողանան իրականացնել ազատությունից զրկելու բոլոր վայրերում:
27. Իրենց ազատությունից զրկված մարդիկ ապրում են ենթարկվածության եւ խոցելիության հատուկ փոխհարաբերությունների պայմաններում: Ելնելով այս իրավիճակից՝ հատկապես կարելու է, որ ազատությունից զրկելու վայրերը պաշտպանված լինեն քրեական իրավունքի եւ մարդու իրավունքներին եւ ազատություններին առնչվող հիմնական նորմերի խախտումներից:
28. Որպես բանտերում հանցագործությունների կանխարգելման գործիք՝ այդ վայրերում կատարված բոլոր քրեական իրավախախտումները պետք է ուսումնասիրվեն հատուկ ուշադրությամբ:
29. Հանրային շահերից է բխում, որ հանրային մեղադրողներն այդպիսի լիազորություններ ունենալու դեպքում նախաձեռնեն պատշաճ քննություն, երբ տեղի է ունեցել իրավախախտում, հատկապես կոռուպցիայի կամ կալանավորված անձի վրա անհիմն ճնշում գործադրելու կամ կալանավորվածներին պահելու վայրի աշխատակազմի կողմից կատարված մարդու իրավունքների խախտումների դեպքերով:
30. Բանտերում օրենքի խախտման բոլոր դեպքերով անդամ պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար, որ քննչական մարմինները քննությունն իրականացնելու, ուղղորդելու կամ վերահսկելու համար ստանան բոլոր անհրաժեշտ տեղեկությունները՝ քրեական հետապնդում հարուցելու կամ շարունակելու վերաբերյալ դատարանի կողմից որոշում կայացնելու նպատակով:

Ե. Բանտի վարչակազմը

31. Այն պետություններում, որտեղ հանրային մեղադրողներն ունեն բանտին առնչվող հարցերում իրենց դերը, նրանք պետք է՝
- հաշվի առնեն Եվրոպայի խորհրդի փաստաթղթերը, այդ թվում՝ Խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման (ԽԿԿ) Եվրոպական կոմիտեի եւ մասնավորապես՝ կալանքի պայմանների վերաբերյալ առաջարկությունները¹¹: Հանրային մեղադրողների կողմից այս առաջարկություններին անհամապատասխանությունն նկատելու յուրաքանչյուր դեպքում նրանք

¹⁰ Տե՛ս անդամ պետություններին ուղղված՝ «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Նախարարների կոմիտեի Rec(2000)19 առաջարկության 1-ին պարբերությունը:

¹¹ Համաձայն Rec(2006)2 առաջարկության (4-րդ պարբերություն)՝ «Բանտային պայմանները, որոնցով խախտվում են բանտարկյալների մարդու իրավունքները, չեն կարող արդարացվել միջոցների անբավարարությամբ»: Առաջարկությունից բխող քաղաքականությանը եւ գործելակերպին համապատասխան՝ օրենքից լրջորեն շեղվելն անընդունելի է: Օրենքի նման խախտումներ նկատվելու դեպքում սույն առաջարկության 92-րդ եւ 93-րդ պարբերությունների համաձայն պետք է միջոցներ ձեռնարկել դրանք դադարեցնելու ուղղությամբ (դատախազի կողմից իրականացվող ստուգումների միջոցով):

կարող են այդ հարցը ուղղել իրավասու մարմիններին: Անհրաժեշտության դեպքում Գլխավոր դատախազը, օրինակ, Խորհրդարանին ներկայացվող իր տարեկան զեկույցի կամ նմանատիպ իրադարձության դեպքում կարող է առաջարկել համապատասխան միջոցներ՝ ապահովելու համար այդ առաջարկությունների կատարումը.

- ապահովեն օրենքի գերակայությունը՝ երկու տարբեր առումներով: Մի կողմից՝ նրանք պետք է ապահովեն կալանավորված անձանց իրավունքները, որպեսզի նրանք իրենց հատուկ կարգավիճակում չկրեն ավելի մեծ վնաս, քան նախատեսված է օրենքով մյուս կողմից՝ նրանք պետք է ապահովեն հասարակության պաշտպանությունը՝ ապահովելով, որ պատիժը կատարվի օրենքին լիովին համապատասխան.
- ապահովեն արդյունավետ պաշտպանություն, քանի որ նրանք ունեն կալանավորվածներին պահելու վայրեր մուտք գործելու հնարավորություն, կարող են պարբերաբար այցելել այնտեղ եւ գործողություններ ձեռնարկել անմիջապես՝ օգտվելով համապատասխան միջոցներից եւ հատուկ փորձից:

III. Եզրակացությունները

32. Անկախ նրանից, թե Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետությունում ինչ համակարգ է գործում, կալանավորվածներին պահելու վայրերում մարդու իրավունքների պահպանումը պետք է լուրջ մտահոգության առարկա լինի հանրային մեղադրողների համար, որոնք պետք է ապահովեն օրենքին եւ ՄԻԵԿ-ով ամրագրված հիմնարար սկզբունքներին համապատասխանությունը:
33. ԵՂԳԽՆ-ն նշել է, որ մի շարք անդամ պետություններում հանրային մեղադրողները կարելու էր են խաղում պատիժների կատարման եւ կալանքների օրինականության, ինչպես նաեւ բանտերում կալանավորված անձանց կենսապայմանների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու գործում: Այնուամենայնիվ, այլ պետություններում հանրային մեղադրողները բանտերին առնչվող հարցերով լիազորություններ չունեն այդ դերը վերապահված է այլ մարմինների, որոնք միշտ պետք է կարողանան պաշտպանել իրենց ազատությունից զրկված անձանց իրավունքները:
34. ԵՂԳԽՆ-ն անհրաժեշտ է համարում, որ քրեակատարողական հիմնարկներն իրենց տրամադրության տակ ունենան կյուրթական եւ մարդկային բավարար ռեսուրսներ՝ կալանքի տակ պահելու համարժեք պայմաններ, ինչպես նաեւ իրավախախտների վերասոցիալականացման համար բարենպաստ պայմաններ ապահովելու համար:
35. Այն անդամ պետությունների վերաբերյալ, որտեղ հանրային մեղադրողները որոշակի դերակատարում ունեն բանտին առնչվող հարցերում, հետեւյալ եզրահանգումներն են արվել.
 - ա) այն հանրային մեղադրողները, որոնք ներգրավված են գործունեության այս ոլորտում, պետք է իրենց տրամադրության տակ ունենան անհրաժեշտ ֆինանսական եւ մարդկային ռեսուրսներ՝ իրենց պարտականությունները պատշաճ կատարելու համար.
 - բ) կախված աշխատանքի ծանրաբեռնվածությունից՝ դատախազական ծառայություններին առաջարկվում է իրենց կազմակերպչական կառուցվածքում ունենալ բանտի վարչակազմի հետ կապերով զբաղվող մասնագիտացված ստորաբաժանումներ.
 - գ) անհրաժեշտության դեպքում պետք է թողարկվեն լավագույն փորձն ու առաջարկություններն ամփոփող ուղենիշներ՝ ուղղված յուրաքանչյուր համակարգի ներսում բանտի վարչակազմի առնչությամբ դատախազների գործունեությանն ընդհանուր կամ հատուկ մոտեցումների ներդաշնակեցմանը.
 - դ) անդամ պետությունները կամ դատախազական ծառայությունները պետք է մշակեն հատուկ վերապատրաստման դասընթացներ՝ բանտի վարչակազմին առնչվող գործունեության մեջ ներգրավված դատախազների համար.
 - ե) իրենց պարտականությունները կատարելիս հանրային մեղադրողները պետք է հաստատեն եւ զարգացնեն անհրաժեշտության դեպքում համագործակցություն կամ կապեր օմբուդսմենի կամ նմանօրինակ այլ հաստատությունների, վերականգնման եւ վերաինտեգրման հարցերով զբաղվող մարմինների, ինչպես նաեւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, այդ թվում՝ համապատասխան հասարակական կազմակերպությունների հետ:

36. Երգիստ-ն համարում է, որ բոլոր իրավասու մարմինները, այդ թվում՝ հանրային մեղադրողները, պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ քայլերը՝ կալանավորված անձանց վիճակը բարելավելու եւ հասարակության մեջ նրանց վերաինտեգրմանը նպաստելու համար:
37. Անդամ պետությունները պետք է հավաստիանան, որ պատիժների կատարման համար իրավասու համապատասխան մարմիններն ապահովեն, որ բավարարվեն դրանց կատարման հետ կապված բոլոր իրավական պահանջները՝ միեւնույն ժամանակ լիովին հարգելով մարդու արժանապատվությունը եւ ապահովելով, որ կալանավորված անձանց իրավունքների ու պայմանների մշտադիտարկում իրականացվի:
38. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ կալանքի ընթացքում օրենսդրական դրույթների խախտմանն առնչվող իրավախախտումների կատարման վերաբերյալ պնդումների համապատասխան քննություն անցկացվի:

ՀԱՎԵԼՎԱԾ

Բանտի հարցերով տարբեր իրավական համակարգերի եւ դատախազության տարբեր իրավասությունների նկարագրության (հարցաշարի պատասխանների վերլուծություն)

1. Համապատասխան հարցաշարին պատասխանած 25 անդամ պետությունների գրեթե կեսում քրեակատարողական հիմնարկների նկատմամբ վերահսկողությունը դատախազական ծառայության գործառույթների մաս է կազմում: Միեւնույն ժամանակ շատ պետություններում դատախազներն ունեն միայն սահմանափակ լիազորություններ ազատությունից զրկման վայրերում պահվող անձանց իրավունքների պաշտպանության հարցում:
2. Համապատասխան ոլորտում հանրային մեղադրողների իրավասությունների շրջանակը տարբեր պետություններում էականորեն տարբեր է՝ սկսած քրեակատարողական հիմնարկների նկատմամբ չափից շատ վերահսկողությունից մինչև ազատությունից զրկելու կամ կալանավորելու հարցում վերահսկող լիազորությունների բացակայություն: Դա հաշվի առնելով՝ անդամ պետությունները կարելի է բաժանել երեք հիմնական խմբի՝ 1) անդամ պետություններ, որտեղ դատախազական ծառայությունները վերահսկում են քրեակատարողական հիմնարկներին: 2) անդամ պետություններ, որտեղ հանրային մեղադրողներն ունեն ազատագրկման վայրերը եւ կալանավորվածներին պահելու վայրերը վերահսկելու սահմանափակ լիազորություններ: 3) անդամ պետություններ, որտեղ դատախազական ծառայությունները վերը նշված ոլորտում որեւէ իրավունք չունեն:
3. Այն պետություններում, որտեղ հանրային մեղադրողներն ունեն քրեակատարողական հիմնարկների եւ կալանավորվածներին պահելու վայրերի ու արգելանքի տակ պահելու վայրերի, մինչդատական կալանքի վայրերի, ազատագրկման վայրերի եւ պատիժների ու հարկադրանքի միջոցների կիրառումն իրականացնող այլ մարմինների վարչակազմերի կողմից օրենքների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու բոլոր լիազորությունները, նրանք նաեւ պահպանում են կալանավորված անձանց, արգելանքի տակ վերցված անձանց, դատապարտյալների եւ հարկադրանքի միջոցների կիրառման ենթարկված անձանց իրավունքներն ու պարտականությունները:
4. Ազատությունից զրկելու ձեռով պատիժը կրող կամ ժամանակին արգելանքի տակ վերցված անձանց նկատմամբ օրենքի խախտումներ հայտնաբերելու եւ դրանք դադարեցնելու համար որոշ պետություններում հանրային մեղադրողներն ունեն բավականին լայն լիազորություններ: Իրականացնել քրեակատարողական հիմնարկներում անկախ ստուգումներ, պահանջել վարչակազմից ստեղծել պայմաններ, որոնք կապահովեն կալանավորված անձանց, արգելանքի տակ վերցված անձանց, դատապարտյալների եւ հարկադրանքի միջոցների կիրառման ենթարկված անձանց իրավունքների պահպանումը: ստուգել քրեակատարողական հիմնարկների վարչակազմի հրամանների, կանոնակարգերի, որոշումների համապատասխանությունը ներպետական օրենսդրությանը:
5. Որոշ անդամ պետությունների օրենսդրությամբ պահանջվում է, որ հանրային մեղադրողները կանոնավոր ստուգումներ իրականացնեն քրեակատարողական հիմնարկներում: Այդ ստուգումների հաճախականությունը տարբեր պետություններում տարբեր է՝ ամենօրյա այցելություններից մինչև երեք ամիսը մեկ անգամ կատարվող այցելություններ: Որոշ պետություններում ստուգումների քանակը չի կարգավորվում, եւ այդ երկրները սահմանափակվում են միայն հանրային մեղադրողներին ստուգումներ իրականացնելու հանձնարարական տալով: Այդպիսի ստուգման արդյունքում կարող են կազմվել հայտնաբերված խախտումների վերաբերյալ զեկույց, համառոտ պաշտոնական զեկույց (հայտարարություն) կամ ուղարկվել (ներկայացվել) միջնորդագրեր, որոնք պետք է ուղարկվեն ստուգման ենթարկվող հաստատության տնօրենին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան իրավասու մարմին:
6. Շատ երկրներում օրինականությունն ապահովելու հիմնական լուծումը դատախազին ազատությունից զրկելու եւ արգելանքի տակ պահելու համար նախատեսված վայրեր ցանկացած պահի այցելելու իրավունք շնորհելն է: Այդ այցելությունների ընթացքում հանրային մեղադրողները հնարավորություն ունեն ծանոթանալու փաստաթղթերին, ստուգելու անձանց կալանքի տակ պահելու պայմանները եւ անարգել ու գաղտնի շփվելու դատապարտյալների հետ:
7. Շատ պետություններում ազատագրկման պայմանների ստուգումների հաճախականությունը սահմանվում է օրենքով, եւ տարբեր պետություններում այդ հաճախականությունը տարբեր է՝ սկսած շաբաթը մեկ անգամ իրականացվող հսկողությունից մինչև տարեկան չորս անգամ

նախատեսված այցելություններ: Այլ պետություններում հանրային մեղադրողները դատապարտյալների հետ պարբերաբար հանդիպելու պարտականություն ունեն: Միեւնույն ժամանակ շատ պետություններում ազատագրկման պայմանների վերաբերյալ դատապարտյալների կամ կալանավորվածների բողոքը դիտվում է որպես համապատասխան քրեակատարողական հիմնարկում տվյալ կոնկրետ դեպքի ստուգում սկսելու պատճառ: Իսկ երրորդ խմբի որոշ պետություններում հանդիպման պատճառը դատապարտյալների պահանջն է կամ հայտարարությունը: Դատապարտյալների՝ հանրային մեղադրողներին ուղղված դիմումների խնդրո առարկան կարող են լինել կալանավորված անձանց իրավունքների ոտնահարման վերաբերյալ բողոքները, սակայն պահանջները կարող են լինել նաեւ այլ բնույթի, օրինակ՝ դատապարտյալների անվտանգությունն ապահովելու նպատակով նրանց այլ բանտ տեղափոխելը:

8. Այն պետություններում, որտեղ հանրային մեղադրողները քրեակատարողական հիմնարկներում հսկողություն իրականացնելու հարցում օժտված են սահմանափակ լիազորություններով, դատապարտյալի եւ հանրային մեղադրողի միջեւ հաղորդակցության հնարավորությունը չի բացառվում: Այդպիսի պետություններում դրա նախաձեռնողը սովորաբար դատապարտյալն է կամ արգելանքի տակ գտնվող անձը. նրանք դաժան վերաբերմունքի կամ մարդու իրավունքների այլ ոտնահարման մասին իրենց բողոքները հանրային մեղադրողին են ներկայացնում: Որպես կանոն, նմանօրինակ հանդիպումների օրենսդրական կարգավորման բացակայությունը չի բացառում անհրաժեշտության դեպքում հանրային մեղադրողի՝ դատապարտյալի հետ գաղտնի շփվելու իրավունքը:
9. Մարդու իրավունքների խախտման փաստեր հայտնաբերելու դեպքում հիմնականում պատասխանող բոլոր պետություններում, որտեղ դատախազական ծառայությունը վերահսկում է ազատությունից զրկելու եւ արգելանքի տակ պահելու վայրերը, հանրային մեղադրողները կարող են պաշտոնյաներից պահանջել բացատրություններ, կասեցնել վարչակազմի ապօրինի հրամանների եւ որոշումների կատարումը, չեղարկել կալանավորվածների նկատմամբ օրենքի խախտմամբ կիրառված պատժամիջոցները: Շատ պետություններում, որտեղ դատախազական ծառայություններին տրված են լայն լիազորություններ, հանրային մեղադրողներն իրավունք ունեն անմիջապես ազատ արձակելու ցանկացած անձի, որը պատիժը կատարող հաստատություններում պահվել է առանց օրինական հիմքերի կամ ձեռքավարկել կամ միջնորդական կալանքի տակ է պահվել օրենքի խախտմամբ:
10. Պատիժը կրելու կամ միջնորդական կալանքի ընթացքում մարդու իրավունքների խախտումն արդարացվում է դրա դադարեցման հետ կապված հանրային մեղադրողի կողմից միջամտությամբ: Հանրային մեղադրողների՝ բանտերի վարչակազմի գործողություններին հաջորդող միջամտության արդյունավետությունը եւ բնույթը տարբեր պետություններում կարող է տարբեր լինել: Շատ պետություններում ազատությունից զրկելու կամ արգելանքի տակ պահելու վայրերում մարդու իրավունքների խախտումը հանրային մեղադրողներին տալիս է լիազորություն՝ նախաձեռնելու անկախ քննություն, որի արդյունքների համաձայն կայացվում է որոշում՝ մեղավոր պաշտոնյաներին կարգապահական, վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու մասին: Հատկանշական է, որ քրեակատարողական հիմնարկներում մարդու իրավունքների խախտման դեպքերին արձագանքելու հնարավորություն դատախազներին տրվում է նաեւ այն պետություններում, որտեղ ազատությունից զրկելու կամ արգելանքի տակ պահելու վայրերի նկատմամբ դատախազի կողմից չափից շատ վերահսկողություն չկա:
11. Շատ անդամ պետություններում դատախազները մեղավոր պաշտոնյաներին կարգապահական պատասխանատվության ինքնուրույն ենթարկելու որեւէ լիազորություն չունեն: Այն դեպքում, երբ քննության ընթացքում հայտնաբերվում են կարգապահական խախտման հատկանիշներ, հանրային մեղադրողները կարող են դիմել այն պետական մարմին, որն իրավասու է համապատասխան պատժամիջոց կիրառելու ազատությունից զրկելու եւ արգելանքի տակ պահելու վայրերի աշխատողների նկատմամբ: Միայն որոշ պետություններում հանրային մեղադրողներն իրավունք ունեն մեղավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու:
12. Հանրային մեղադրողները համեմատաբար ավելի լայն լիազորություններ ունեն այն դեպքում, երբ քրեակատարողական հիմնարկում քրեորեն պատժելի արարքի հատկանիշներ են հայտնաբերվում: Նման իրավիճակում շատ պետություններում հանրային մեղադրողներն ունեն քրեական գործ նախաձեռնելու եւ անկախ քննություն իրականացնելու իրավունք: Պատահական մահվան, դատապարտյալների նկատմամբ կամ դատապարտյալների կողմից այլ դատապարտյալների կամ բանտի անձնակազմի նկատմամբ կատարված

հանցագործությունների ցանկացած դեպքում հանրային մեղադրողները պետք է միջամտեն: Շատ պետությունների օրենսդրություններ հանրային մեղադրողներին շնորհում են անկախ քննություն իրականացնելու կամ քրեական գործը քննչական մարմիններ տեղափոխելու իրավունք՝ պահպանելով այդ քննությունը վերահսկելու իրավունքը:

13. Այն դեպքում, երբ հաստատվում են քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից դատապարտյալների կամ արգելանքի տակ գտնվող անձանց նկատմամբ մարդու իրավունքների խախտման փաստեր, որոշ երկրներում հանրային մեղադրողների համար դա կարող է հիմք համարվել՝ քաղաքացիական դատավարության շրջանակում վնասի փոխհատուցման դատական հայց ներկայացնելու համար:
14. Այն պետություններում, որտեղ դատախազական ծառայությունն օժտված է քրեակատարողական հիմնարկների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավունքով, հանրային մեղադրողները նշանակալի դեր են խաղում ազատագրված ապամանների՝ միջազգային իրավունքի չափանիշներին եւ Եվրոպայի խորհրդի առաջարկություններին համապատասխանությունը վերահսկելու գործում:
15. Որոշ պետություններում հանրային մեղադրողներն ունեն սաեւ լրացուցիչ լիազորություններ. օրինակ՝ նա որոշում է կայացնում ըստ պատժի ազատագրված ժամկետը հաշվելու վերաբերյալ, մասնակցում է դատապարտյալների տեղափոխման վերաբերյալ քննարկումներին, սահմանում է դատապարտյալների կենցաղային պայմանների վերաբերյալ սահմանափակումներ՝ անվտանգություն ապահովելու նպատակով, որոշում է կայացնում այն մասին, թե արդյոք արտակարգ իրավիճակների դեպքում դատապարտյալն ունի քրեակատարողական հիմնարկը լքելու հնարավորություն, հրավիրում է համապատասխան մասնագիտացմամբ բժիշկների՝ ազատությունից զրկված կամ արգելանքի տակ վերցված անձին գննելու համար, եթե դրա անհրաժեշտությունը կա: Մի շարք պետություններում, որտեղ հանրային մեղադրողներին տրված են քրեակատարողական հիմնարկների նկատմամբ հսկողություն իրականացնելու հարցում սահմանափակ լիազորություններ, հանրային մեղադրողներն իրավունք ունեն ուսումնասիրելու հարցերը՝ արգելանքի տակ վերցված անձանց նկատմամբ վերաբերմունքի պայմանները, այդ թվում՝ մեկուսացման աստիճանը որոշելու, շփումները եւ հաղորդակցության միջոցների օգտագործումը սահմանափակելու նպատակով:
16. Մի շարք պետություններում հանրային մեղադրողների՝ քրեակատարողական հիմնարկների նկատմամբ հսկողություն իրականացնելու հարցում լիազորություններն ընդգրկում են միայն այն վայրերը, որտեղ պահվում են կալանավորված եւ արգելանքի տակ վերցված անձինք: Նման դեպքում հանրային մեղադրողներն ունեն մինչդատական կալանքի օրինականությունը հաստատող փաստաթղթերն ստուգելու, վերը նշված հիմնարկներ ցանկացած պահի այցելելու, արգելանքի տակ գտնվող անձանց հետ անարգել շփվելու լիազորություն: Ավելին, որոշ պետություններում հանրային մեղադրողներն ունեն այն անձանց ձերբակալելու եւ արգելանքի տակ վերցնելու, ինչպես նաեւ նրանց նկատմամբ հատուկ միջոցներ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին մասնակցելու իրավունք, որոնք մինչդատական կալանքի ընթացքում վտանգված են՝ քրեական համայնքներում իրենց դերով պայմանավորված:
17. Շատ պետություններում անձանց ազատագրված օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս հանրային մեղադրողներն անկախ են այլ պետական մարմիններից: Այնուամենայնիվ, գրեթե բոլոր անդամ պետություններում դատախազական ծառայությունը միասնական կենտրոնացված համակարգ է, եւ իրենց լիազորությունները կատարող հանրային մեղադրողները ենթակա են Գլխավոր դատախազին:
18. Որոշ դատախազական ծառայություններ մասնակցում են ներման վերաբերյալ որոշումների կայացմանը: Շատ հաճախ, երբ այդ ընթացակարգն իրականացվում է, դատախազներն իրենց կարծիքն են արտահայտում դատապարտյալների նկատմամբ ներում կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ: Մի շարք պետություններում դատախազների լիազորությունները ներառում են նաեւ համաներում եւ ներում կիրառելու մասին որոշումների կատարման օրինականության նկատմամբ վերահսկողությունը:
19. Մեծապես կարեւորվում է ազատագրված վայրերից դատապարտյալներին պայմանական ազատման վերաբերյալ որոշում կայացնելու հարցում դատախազական ծառայության գործունեությունը: Նման դեպքերում դատախազի գործառնությունները, որպես կանոն, չեն սահմանափակվում միայն պայմանական ազատման վերաբերյալ դիմում (միջնորդագիր) ներկայացնելով եւ համապատասխան անձին պայմանական ազատ արձակելու հնարավորության վերաբերյալ դատարանի համար հայտարարություն պատրաստելով: Որոշ

պետություններում հանրային մեղադրողները կարող են մասնակցել պայմանական ազատման հարցերով հատուկ հանձնաժողովի նիստերին եւ դատական լուսմներին, ինչպես նաեւ կարող են հսկողություն իրականացնել այդ ազատ արձակման գործընթացի օրինականության նկատմամբ:

20. Շատ անդամ պետությունների դատախազական ծառայություններն ունեն պատժի (դատապարտման) կատարմանն առնչվող հարցերի վերաբերյալ ընդունված որոշումների դեմ բողոք բերելու իրավունք: Նման գործերի քննության ընթացքում հանրային մեղադրողներն իրավունք ունեն մասնակցելու դատական լուսմներին՝ հնարավորություն ունենալով ներկայացնել նյութեր, միջնորդագրեր եւ այլն:
21. Որոշ պետություններում դատախազական ծառայությունները համագործակցում են հանրային մարմինների հետ, որոնք վերահսկում եւ հսկում են ազատությունից զրկելու վայրերում մարդու իրավունքների պահպանման գործընթացը: Մի շարք երկրներում օրենքները կարգավորում են դատախազական ծառայությունների ներկայացուցիչների եւ օմբուդսմենի համագործակցությունը (մարդու իրավունքների հարցերով): Պետությունների մեծ մասում այս համագործակցությունն ունի երկու ուղղություն. առաջինը՝ օմբուդսմենի զեկույցներում ներկայացվող տեղեկությունները, որոնք կարող են հիմք ծառայել դատախազների կողմից ստուգումներ իրականացնելու համար, եւ երկրորդը՝ ազատությունից զրկելու վայրերում մարդու իրավունքների խախտումները վերացնելու ուղղությամբ հանրային մեղադրողների աշխատանքի արդյունքները ներկայացվում են օմբուդսմենին:

Կարծիք թիվ 7 (2012)

Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի՝
ուղղված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին

Դատախազական ծառայությունների միջոցների կառավարումը

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԳԽՆ) ստեղծվել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 2005 թվականին՝ դատախազական ծառայությունների գործունեության վերաբերյալ կարծիքներ տրամադրելու եւ անդամ պետություններին ուղղված՝ «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Նախարարների կոմիտեի Rec(2000)19 առաջարկության արդյունավետ իրականացումը խթանելու նպատակով:

2. 2012 թվականին Նախարարների կոմիտեն ԵԴԳԽՆ-ին հանձնարարել էր ընդունել կարծիք՝ դատախազական ծառայությունների միջոցների կառավարման վրա իր ուշադրությունը սեւեռելու համար¹:

3. ԵԴԳԽՆ-ն սույն կարծիքը կազմել է՝ հիմնվելով 30 անդամ պետությունների կողմից ^{հարցաշարին}² տրված պատասխանների վրա: Համաձայն այդ պատասխանների՝ ֆինանսական ինքնավարության մակարդակը կարծես թե ազդեցություն ունի դատախազական ծառայությունների կողմից վերջիններիս ռեսուրսները կառավարելու համար դրանց տնօրինության տակ գտնվող գործիքների վրա: Բյուջեի կազմման իրավասությունը շատ դեպքերում բաշխված է դատախազական ծառայության եւ արդարադատության նախարարության միջեւ. հաճախ անմիջականորեն ներգրավված է նաեւ ֆինանսների նախարարությունը: Պետությունների մոտավորապես կեսը նշում է, որ իրենց դատախազական ծառայությունների բյուջեները կառավարվում են արդյունքների վրա հիմնված կառավարման համակարգով, որը ներառում է այնպիսի նպատակներ, ինչպիսիք են արդյունավետությունն ու արտադրողականությունը:

4. Բացի այդ, զգալի թվով երկրներ նշել են, որ դատախազական ծառայություններին հատկացվող բյուջեներն անբավարար են թվում. այս իրավիճակն ավելի է խորանում ներկայիս ճգնաժամի պատճառով: Ներկայիս տնտեսական վիճակը մարտահրավեր է արդարադատության արդյունավետության համար. այնուամենայնիվ, դա կարող է նաեւ հնարավորություն լինել դատախազական ծառայությունների միջոցների կառավարման ձեւերը փոփոխելու համար: Ամեն դեպքում դատախազական ծառայությունները պետք է նկատի ունենան առկա ռեսուրսներն առավելագույնս արդյունավետ օգտագործելու անհրաժեշտությունը:

Ա. Տեքստերը, որոնց հղում է կատարվել

5. ԵԴԳԽՆ-ն ընդգծում է Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային (ՄԻԵԿ) եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Դատարան) նախադեպային իրավունքին հղում կատարելու կարեւորությունը³:

6. ԵԴԳԽՆ-ն հաշվի է առել Rec(2000)19 առաջարկությունը եւ մասնավորապես այն մասը, որը վերաբերում է իր դերն իրականացնելու համար դատախազական ծառայությանը տրվող երաշխիքներին: Այն նաեւ հաշվի է առել ԵԴԳԽՆ-ի նախորդ կարծիքներում, հատկապես՝ Քրեաիրավական ոլորտից դուրս դատախազական ծառայությունների դերի վերաբերյալ թիվ 3(2008) եւ Ժողովրդավարական հասարակությունում դատավորների եւ դատախազների միջեւ հարաբերությունների վերաբերյալ թիվ 4 (2009) կարծիքներում ներառված համապատասխան եզրակացություններն ու առաջարկությունները:

7. ԵԴԳԽՆ-ն նաեւ հաշվի է առել Հանրային մեղադրողների էթիկայի եւ վարքագծի վերաբերյալ եվրոպական ուղեցույցը՝ «Բուդապեշտի ուղեցույց»-ը⁴, Դատարանների ֆինանսավորման եւ կառավարման վերաբերյալ Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 2 (2001) կարծիքը՝ հաշվի առնելով դատական իշխանության արդյունավետությունը, եւ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածը, ինչպես նաեւ Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (ԱԼԵՅ)՝ «Եվրոպական դատական համակարգեր. 2010թ. խմբագրություն» վերնագրով հաշվետվությունը⁵ եւ Վենետիկի հանձնաժողովի «Դատական համակարգի անկախության մասով եվրոպական ստանդարտների վերաբերյալ հաշվետվությունը՝ Մաս II. Դատախազական ծառայությունը»⁶:

8. Եվ վերջում ԵԴԳԽՆ-ն նաեւ ի գիտություն է ընդունել որոշ այլ միջազգային կազմակերպությունների, օրինակ՝ ՄԱԿ-ի եւ Դատախազների միջազգային ասոցիացիայի կողմից

¹ Նախարարների տեղակալների 1127-րդ հանդիպում (2011 թվականի նոյեմբերի 23):

² Տե՛ս հարցաշարին անդամ պետությունների կողմից տրված պատասխանները ԵԴԳԽՆ-ի կայքում (www.coe.int/ccpe)՝ «Նախնական աշխատանքներ. ԵԴԳԽՆ-ի 7-րդ կարծիքի կազմում» բաժնում:

³ Տե՛ս մասնավորապես Բրոնիովսկիի ընդդեմ Լեհաստանի [Broniowski v. Poland] (2004 թվականի հունիսի 22), § 183:

⁴ Ընդունվել է 2005 թվականի մայիսին Բուդապեշտում Եվրոպայի գլխավոր դատախազների 6-րդ համաժողովի ժամանակ:

⁵ Տե՛ս ԱԼԵՅ-ի կայքը՝ http://www.coe.int/t/dghl/cooperation/cepej/evaluation/default_en.asp հղմամբ:

⁶ Ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի 85-րդ լիազուցված նիստում (2010 թվականի դեկտեմբերի 17-18):

ընդունված փաստաթղթերը, ինչպես նաև 2012 թվականի մայիսի 26-ին Բուդապեշտում ընդունված՝ Հանրային մեղադրողների ցանցի 5-րդ լիազույցման կառուցման փաստաթուղթը կամ Եվրոպական միության անդամ պետությունների Բարձրագույն դատարանների ենթակայությամբ գործող համարժեք հաստատությունների փաստաթղթերը⁷:

Բ. Սույն կարծիքի շրջանակը եւ նպատակը

9. Սույն կարծիքը տարածվում է դատախազական ծառայությունների վրա՝ օրենքով սահմանված կարգով նրանց վերապահված բոլոր գործառնությունների կատարման մասով: Այն դեպքում, երբ նրանք ունեն քրեական արդարադատության համակարգից դուրս գործառնություններ⁸, սույն կարծիքների սկզբունքներն ու որոշյալները, [համապատասխան փոփոխություններով] *mutatis mutandi*, տարածվում են նաև այդ գործառնությունների վրա: Դատախազական ծառայություններն առանցքային դեր են ստանձնում ազգային արդարադատության համակարգում եւ ապահովում են մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը, այդ թվում՝ կայանավորվածներին պահելու վայրերում գործող որոշ իրավագործությունների դեպքում: Մասնավորապես, որպես օրենքի կիրառումը վերահսկելու եւ ցանկացած հանցավոր վարքագիծ հետապնդելու համար պատասխանատու մարմին՝ դատախազական ծառայությունը պետք է արձագանքի ազգային եւ միջազգային հանցավորության դեմ պայքարի ընդհանուր անհրաժեշտությանը:

10. Ներկայումս դատախազական ծառայությունը բախվում է հանցավորության աճի հետ, ինչն անապահովության աճող զգացում է առաջացնում: Հասարակությանը սպառնացող լուրջ վտանգով պայմանավորված՝ կազմակերպված հանցագործության, այդ թվում՝ ահաբեկչության, թմրամիջոցների ապօրինի շրջանառության եւ կիրեռահանցագործության տարածման հետեւանքով անհրաժեշտ է դառնում բարձրացնել դատախազների գործունեության արդյունավետությունը եւ պաշտպանել մարդու իրավունքներն ու հանրային շահերը:

11. Նույնիսկ եթե մեկ անդամ պետության դատախազական ծառայությունների՝ իրենց բյուջեն եւ ռեսուրսներն ինքնուրույն տնօրինելու լիազորությունները տարբեր են մյուս անդամ պետության դատախազական ծառայությունների՝ իրենց բյուջեն եւ ռեսուրսներն ինքնուրույն տնօրինելու լիազորություններից, կառավարման ինքնավարությունը նրանց անկախության եւ արդյունավետության երաշխիքներից մեկն է: Հետեւաբար միջոցների, մասնավորապես՝ ֆինանսական միջոցների կառավարման հարցում կառավարման ոլորտի մասնագետներին ապավինելը եւ ընդհանուր սկզբունքների մշակումը խիստ անհրաժեշտ են:

12. Սույն կարծիքի նպատակն է մշակել առաջարկություններ, որոնք թույլ կտան բացահայտել դատախազական ծառայությունների կարիքները եւ ավելի արդյունավետ կերպով բաշխել եւ օգտագործել դրանց ռեսուրսները:

III. ԴԱՏԱԽԱԶԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Ա. Բյուջեի կազմումը

13. Ցանկացած դատախազական ծառայության բյուջեն պետք է առանձին տողով ներառվի պետական բյուջեում: Կարելի է ապահովել, որ դատախազական ծառայությունների համար բյուջեներ սահմանելու եւ դրանց լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ հատկացնելու ընթացակարգերը նախատեսված լինեն բյուջեի մասին օրենքով կամ ֆինանսական այլ կարգավորումներով: Չնայած այն հանգամանքին, որ միջոցների հատկացումը դատախազական ծառայությանը համարվում է քաղաքական որոշում, շահագրգիռ օրենսդիր եւ գործադիր իշխանությունները չպետք է անհարկի ազդեցություն ունենան դատախազական ծառայության վրա՝ վերջինիս բյուջեի վերաբերյալ որոշում կայացնելիս: Դատախազական ծառայությանը միջոցներ հատկացնելու մասին որոշումը պետք է կայացվի նրա անկախության սկզբունքին խիստ համապատասխան, եւ դրանով պետք է ապահովվեն ծառայության առաքելությունն իրականացնելու համար անհրաժեշտ նախապայմանները:

14. Դատախազական ծառայությունը գործադիր իշխանության հետ միասին պետք է մասնակցի իր բյուջեի մշակմանը: Այն երկրներում, որտեղ իրավական համակարգը դա թույլ է տալիս, իր կարիքների վերաբերյալ կարծիք հայտնելու նպատակով խորհրդարանի հետ ուղղակիորեն հաղորդակցվելու դատախազության իրավունքը կարող է լինել իր սեփական բյուջեի մշակմանն ակտիվ մասնակցության ձևերից մեկը: Ամեն դեպքում խորհրդարանում դատախազական ծառայության բյուջեի ընդունման ընթացակարգով պետք է նախատեսվի հենց դատախազական ծառայության կարծիքը հաշվի առնելը:

15. Խորհրդարանի (կամ մեկ այլ իրավասու պետական մարմնի) կողմից միջոցների բավարար հատկացում նախատեսելու համար անհրաժեշտ է նախօրոք հաշվարկել գնահատված ծախսերը: Դրա համար պահանջվում են բյուջեի պլանավորման հուսալի սխեմաներ՝ լինի դա գործառնական, թե ներդրումային բյուջեների հետ կապված: Նախորդ տարիների քրեական եւ այլ համապատասխան վիճակագրությունը, ինչպես նաև դատախազական ծառայության կայուն միտումներն ու

⁷ http://www.coe.int/t/dghl/cooperation/ccpe/opinions/travaux/OP_7_Ref_doc_Network_pros_gen_en.asp

⁸ Տե՛ս անդամ պետությունների ուղղված՝ «Քրեական արդարադատության համակարգից դուրս հանրային մեղադրողների դերի մասին» Նախարարների կոմիտեի CM/Rec(2012)11 առաջարկությունը:

գործունեությունը, մասնավորապես՝ պլանավորված եւ ընթացիկ ծրագրերը, կարող են հիմք ծառայել գալիք տարվա կամ ժամանակահատվածի համար ընդհանուր նվազագույն բյուջեի մշակման համար: Արդյունքների վրա հիմնված կառավարումն առաջարկում է մի շարք օգտակար գործիքներ՝ հետագա ժամանակահատվածների համար բյուջեներ կազմելու համար:

16. Ամեն դեպքում կարելու է, որ ռեսուրսների բաշխմանն առնչվող բոլոր այն վարչական որոշումների համար պատասխանատվությունը, որոնք անմիջականորեն ազդում են դատախազական ծառայության գործունեության վրա, պետք է դրվի համապատասխան դատախազական ծառայության վրա:

17. Բյուջետային ռեսուրսների կառավարումը պետք է իրականացվի հենց դատախազական ծառայության կողմից՝ արդյունավետ եւ պատասխանատու կերպով՝ լավ կառավարման սկզբունքների համաձայն: Հետեւաբար, ի թիվս այլ միջոցառումների, պետք է կազմակերպվի այս թեմայով դատախազների համապատասխան վերապատրաստում: Դատախազական ծառայություններն անհրաժեշտության դեպքում պետք է իրենց տրամադրության տակ ունենան նաեւ ֆինանսների, աուդիտի եւ կառավարման ոլորտներում մասնագիտացված անձնակազմ՝ նման գործառույթներ իրականացնելու եւ ռեսուրսների պատշաճ օգտագործում ապահովելու համար: Դատախազական ծառայությունները պետք է տեղյակ լինեն նման մասնագիտացված անձնակազմի վրա հույս դնելու հնարավորության մասին եւ պետք է իրենց տրամադրության տակ ունենան դրա համար անհրաժեշտ ռեսուրսները: Նրանք պետք է լինեն հիմնական ընտրության վերաբերյալ որոշում կայացնողը եւ դրա համար պատասխանատուն:

18. Դատախազական ծառայության բյուջեն պետք է բոլոր հանգամանքներում թույլ տա արագ արձագանքել անկանխատեսելի իրադարձություններին եւ զարգացումներին:

Բ. Դատախազական ծառայության կարիքները

19. Զրեական ոլորտի նոր մարտահրավերները, ինչպես նաեւ հանցավորության որոշ տեսակների՝ ավելի ու ավելի բարդացող բնույթը պայմանավորված են նոր տեխնոլոգիաների արագ զարգացմամբ, մեծացող միջազգային ինտեգրացիայով եւ գլոբալիզացիայով, միջազգային առեւտրի ընդլայնմամբ եւ տվյալների հոսքով: Այս իրողությունն ստեղծել է հանցագործությունների կատարման նոր ուղիներ, ինչը ենթադրում է համագործակցության անհրաժեշտություն, այդ թվում՝ միջազգային մակարդակով՝ դրանք բացահայտելու եւ հանցագործների նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու հարցում: Անհրաժեշտ են նաեւ հատուկ վերապատրաստումներ, որոնք հնարավորություն կտան դիմակայելու վերոնշյալ երեւույթներից առաջացող սպառնալիքներին:

20. Տնտեսական ճգնաժամերի ժամանակ, երբ մարդկանց աղքատությունն ու անհավասարությունը կարող են սոցիալական անկարգությունների ու հանցավորության աճ հրահրել եւ օրենք խախտողների կողմից կատարված բոլոր տեսակի խարդախություններն ու անարդարությունները բնակչության համար ավելի անտանելի դարձնել, դատախազական ծառայություններին հատկացված միջոցները պետք է պահպանվեն նույն մակարդակի վրա, կամ հնարավոր է՝ ավելացվեն, որ նրանց հնարավորություն ընձեռվի լինել հանրային շահի, մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների վերահսկողը:

21. Դատախազական ծառայություններում աճում է մարդկային ռեսուրսների, ինչպես նաեւ դատախազական առաջադրանքների իրականացման համար անհրաժեշտ կյանքական եւ բյուջետային միջոցների պահանջարկը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մի շարք երկրներում դատախազները նաեւ իրականացնում են քրեական իրավունքի ոլորտից դուրս առաջադրանքներ, այդ թվում՝ սոցիալական եւ բնապահպանական խնդիրները մեղմելու ուղղված առաջադրանքներ⁹, այս պահանջարկը, անշուշտ, շատ ավելի ակնհայտ է դառնում:

22. Զրեական իրավունքի ոլորտում կամ դրանից դուրս իրենց գործառույթներն իրականացնելիս դատախազների նկատմամբ պետք է կիրառվեն նրանց անվտանգության հետ կապված համապատասխան միջոցառումներ: Այդ նպատակով անդամ պետությունները պետք է ապահովեն, որ դատախազները եւ անհրաժեշտության դեպքում՝ նրանց ընտանիքների անդամները ֆիզիկապես պաշտպանված լինեն, երբ նրանց անձնական անվտանգությունը կարող է վտանգվել դատախազների մասնագիտական պարտականությունների պատշաճ կատարման արդյունքում¹⁰:

23. Դատախազների մասնակցությունը քրեական գործերով միջազգային համագործակցությանը զնայով ավելի ծախսատար է դառնում: Այս գործառույթի արագ եւ արդյունավետ իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ են ժամանակակից տեխնոլոգիաներ (օրինակ՝ տեսակոնֆերանս եւ գաղտնագրում), լրացուցիչ միջոցներ եւ մարդկային ռեսուրսներ են պահանջվում, օրինակ՝ միջազգային կոնվենցիաների մշակման, օտարերկրյա պետություններում ազգային դեսպանատներ կապի եւ փոխգործակցության հարցերով ծառայողների (մասնավորապես՝ դատախազների) գործուղման, համատեղ քննչական խմբերի ֆինանսավորման եւ համապատասխան համակարգման մարմիններում

⁹ Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի (77)28 բանաձեւը շրջակա միջավայրի պաշտպանության գործում քրեական իրավունքի ներդրման մասին:

¹⁰ Տե՛ս մասնավորապես «Հանրային մեղադրողների եւ նրանց ընտանիքների անվտանգությանն ու պաշտպանությանն առնչվող նվազագույն չափանիշների վերաբերյալ հայտարարագիր»-ը, որն ընդունվել է 2008 թվականի մարտին Դատախազների միջազգային ասոցիացիայի կողմից:

ներգրավվածության համար¹¹:

24. Ազատագրված վայրերում մարդու իրավունքների պաշտպանության կարելուրդությունից ելնելով՝ պետք է բավարար ռեսուրսներ տրամադրվեն դրանց նկատմամբ հսկողությունն իրականացնելու համար, եթե դատախազական ծառայություններին նման գործառույթներ վերապահված են:

1. Զրեական իրավունքի ոլորտում գործունեությունը (քննությունը եւ քրեական հետապնդումը)

25. Դատախազական գործունեության ապահովման համար ռեսուրսների համարժեք հատկացումն անհրաժեշտ նախապայման է դատախազների եւ (կամ) դատախազական ծառայությունների անկախության սկզբունքի իրականացման համար, հատկապես՝ քրեական իրավունքի ոլորտում:

26. Դատախազական ծառայությունների ֆինանսական անկախությունն ուղղված է քրեական հետապնդման արդարության, ընդհանրապես՝ քրեական վարույթների շրջանակներում մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների արդյունավետ պաշտպանության եւ ի վերջո՝ քրեական արդարադատության պատշաճ իրականացման երաշխավորմանը:

27. Ընթացող քննությունների ֆինանսական ռեսուրսների կառավարումը տարբեր անդամ պետություններում զգալիորեն տարբերվում է: Նույն բազմազանությունը վերաբերում է քննության ընթացքում դատախազական ծառայությունների դերին. որոշ անդամ պետություններում դատախազական ծառայությունն ինքն ունի քննություն իրականացնելու որոշակի կամ լիարժեք լիազորություններ այլ անդամ պետություններում այն չունի քննություն իրականացնելու լիազորություն, սակայն կարող է ունենալ կամ չունենալ քննչական եւ դատավարական այլ գործողությունների իրականացումը քննչական մարմիններին հանձնարարելու իրավունք, նույնիսկ եթե չունի քննություն իրականացնելու սեփական լիազորություններ:

28. Այդպիսի քննչական եւ այլ դատավարական գործողությունների ծախսերը սովորաբար վճարում է դրանք փաստացի իրականացնող քննչական մարմինը: Հետեւաբար շատ անդամ պետություններում դատախազները հաճախ բախվում են այն խնդրին, որ քննություն իրականացնող մարմինները, նկատի ունենալով իրենց փոքր բյուջետային միջոցները, չեն կարողանում կամ չեն ցանկանում կատարել քննչական եւ դատավարական այլ գործողություններ իրականացնելու դատախազության հանձնարարությունը: Այս խնդիրը հատկապես արդիական է այն դեպքերում, երբ քննությամբ առաջանում են լրացուցիչ ծախսեր, ինչպիսիք են փորձաքննության որոշ տեսակների (օրինակ՝ հոմոգենետիկական փորձաքննության, տնտեսական հարցերով փորձաքննության), ԴՆԹ անալիզի կամ հատուկ քննչական մեթոդների հետ կապված ծախսերը:

29. Անդամ պետությունները պետք է բավարար միջոցներ հատկացնեն դատախազների կողմից հանձնարարված բոլոր քննությունների իրականացման համար: Նման մոտեցումը զգալիորեն կնպաստի նրան, որ քննություններն ավարտին կհասցվեն, իսկ քրեական վարույթներում չեն լինի այնպիսի բացեր, որոնք կարող են խոչընդոտել արդարադատության իրականացումը:

30. Այսպիսով, անդամ պետությունները, որտեղ քննությունը դատախազական ծառայությանը վերապահված գործառույթներից մեկն է, պետք է՝

- ապահովեն դատախազների անհապաղ եւ անխոչընդոտ հասանելիությունը հիմնական ռեսուրսներին, որոնք հատկացվում են արդյունավետ եւ անաչառ քննության համար անհրաժեշտ ցանկացած գործողություն իրականացնելու համար.
- հնարավորություն տան նրանց համապատասխան ձեւով օգտագործելու ժամանակակից տեխնոլոգիաներ՝ քննության եւ քննության ընթացքում օրենքի գերակայությունն ապահովելու համար (համակարգչային որոնման գործիքներ, տեխնիկաքրեագիտական միջոցներ, էլեկտրոնային տվյալների շտեմարաններ, տեսակոնֆերանսի եւ գաղտնագրման սարքավորումներ, հեռահաղորդակցությունների գաղտնալսում, աուդիո եւ տեսահսկում եւ այլն):

Նույն սկզբունքները պետք է կիրառվեն այն ռեսուրսների նկատմամբ, որոնք դատախազները պահանջում են դատաքննությունների ժամանակ՝ համարժեք գործողությունների համար:

31. Բացի այդ, հատուկ ուշադրություն պետք է դարձնել քրեական վարույթների ընթացքում տարբեր մարմինների կրած ծախսերի ամբողջ վճարմանը, եւ եթե դա նախատեսված է օրենքով, ապա դրանց հետագա փոխհատուցմանը: Այդպիսի փոխհատուցում ապահովելու համար պետք է ստեղծվեն անհրաժեշտ մեխանիզմներ: Այս ասպեկտը տնտեսական ճգնաժամի ժամանակ առանձնահատուկ նշանակություն ունի անդամ պետությունների եւ նրանց դատական մարմինների համար:

32. Անդամ պետությունները կարող են ուսումնասիրել բռնագրավման քաղաքականություն մշակելու հնարավորությունը, որն ուղղված է հանցագործներին հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներից զրկելուն, ինչը կարող է նպաստել հանցագործությունների համար հետապնդում իրականացնելուն՝ միեւնույն ժամանակ մշտապես հարգելով դատախազների դերն ու անկախությունը:

33. Ըննության նպատակներով հատկացված բյուջետային ռեսուրսների կառավարման հարցում դատախազական ծառայությունների համար անհիմն սահմանափակումներ չպետք է լինեն: Նման

¹¹ Օրինակ՝ Եվրաքաղաք, Եվրոպական դատական ցանցը, Հանրային մեղադրողների ցանցը կամ Եվրոպական միության անդամ պետությունների բարձրագույն դատարանների ենթակայությամբ գործող համարժեք հաստատությունները, Գլխավոր դատախազների եւ դատախազության ղեկավարների խորհրդատվական ֆորումը, Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը եւ Անկախ պետությունների համագործակցության գլխավոր դատախազների համակարգող խորհուրդը կամ դատախազների այլ ցանցեր, որոնք օրեցօր ավելանում են:

ռեսուրսների օգտագործումը պետք է լինի ռացիոնալ, արդյունավետ եւ թափանցիկ:

2. Զրեական իրավունքի ոլորտից դուրս գործունեությունը

34. Զրեական իրավունքի ոլորտից դուրս դատախազական գործունեությունը, որը տարբեր ծավալներով իրականացվում է Եվրոպայի խորհրդի շատ անդամ պետություններում, երբեմն պահանջում է, ի թիվս այլ դատավարական քայլերի, հատուկ դատաբժշկական փորձաքննություններ եւ փորձագիտական տարբեր ոլորտների մասնագետների ներգրավում (օրինակ՝ ընտանեկան իրավունքին առնչվող գործերով՝ հոգեբանների, սնանկության գործերով՝ հաշվապահների եւ ֆինանսական փորձագետների, շրջակա միջավայրի պաշտպանությանն առնչվող գործերով՝ քիմիկոսների եւ կենսաբանների ներգրավում եւ այլն):

35. Կախված աշխատանքի բազմազանությունից եւ ծավալից՝ կարող է առաջանալ դատախազական ծառայությունում մասնագիտացված ստորաբաժանումներ կամ դատախազի պաշտոններ ստեղծելու անհրաժեշտություն՝ ջրեական իրավունքի ոլորտից դուրս՝ ընդհանրապես կամ առանձին ոլորտներում գործունեություն ծավալելու համար: Նման գործունեության հատուկ բնույթը կարող է պահանջել անձնակազմի հատուկ վերապատրաստում:

IV. ՀՆԱՐԱՎՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

Ա. Մարդկային ռեսուրսները

36. Ներկա իրավիճակը պահանջում է մարդկային ռեսուրսների կարիքը համապատասխանեցնել հանրության գործողությունների կարիքներին՝ անկախ նրանից՝ դրա համար անհրաժեշտ է բավարար վարձատրություն կամ համապատասխան վերապատրաստում¹², թե՛ սկզբնական եւ թե՛ շարունակական:

37. Ընդհանուր առմամբ, ժամանակակից դատախազական ծառայությունում կան երեք տարբեր մասնագիտական մակարդակներ.

- դատախազական գործառույթներն իրականացնում են հենց իրենք՝ դատախազները: Անհրաժեշտության դեպքում (եւ իրավական համակարգի հետ համատեղելիության դեպքում) կարող են աշխատանքի ընդունվել իրավական ոլորտի մասնագետներ՝ կոնկրետ իրավական գործառույթներ կատարելու համար.
- կոնկրետ ոլորտների փորձագետները, օրինակ՝ հոգեբանները կամ հոգեբույժները, կարող են էական նշանակություն ունենալ անչափահասների հանցավորության եւ հոգեկան խանգարումներ ունեցող իրավախախտների հետ կապված դեպքերի քննությամբ զբաղվելու կամ տուժողներին աջակցելու հարցում: Էապես կարող են օգնել սոցիոլոգները եւ վիճակագրության ոլորտի փորձագետները, եթե կա վիճակագրական տվյալների վրա հիմնվելու անհրաժեշտություն, համակարգչային մասնագետները՝ կիրառական գործողությունների հետ կապված ցանկացած բան հետազոտելու համար, կամ կենսաբանները կամ քիմիկոսները՝ բնապահպանական ոլորտում կատարված իրավախախտումները քննելու համար եւ այլն.
- վարչական անձնակազմը դատախազության կառույցի կարելու մասն է: Այս անձնակազմը պետք է լինի որակավորված՝ հաղթահարելու համար վարույթ ընդունված գործերի ծանրաբեռնվածությունը, որն անխուսափելիորեն մեծանում է դատախազի կողմից քննվող գործերի ուղղվածությանը կամ բարդությանը զուգահեռ:

38. Պետք է մշակվի դատախազների ծանրաբեռնվածության հաշվարկման համակարգ՝ նրանց աճող կարիքները որոշելու համար: Այս համակարգի միջոցով պետք է նաեւ հնարավոր լինի չափել նրանց առաջադրանքների կատարման վրա ազդող կամ բացասաբար անդրադարձող գործոնները, որպեսզի այդ առաջադրանքները կատարվեն պատշաճ կերպով:

Բ. Ֆինանսական ռեսուրսները

39. Պետք է պահպանվեն հանրային ռեսուրսների օգտագործման ընդհանուր սկզբունքները՝ հնարավորության սկզբունքը, արդյունավետության սկզբունքը եւ օրինականության սկզբունքը: Երբ ռեսուրսների օգտագործման մեջ մեկից ավելի մարմիններ են ներգրավված (օրինակ՝ դատախազությունը, ոստիկանությունը եւ հարկային մարմինները), այդ սկզբունքները պետք է պահպանվեն շրջահայաց համակարգման հետ մեկտեղ՝ գործադրվող ջանքերի կրկնությունից խուսափելու եւ ապահովելու նպատակով, որ ռեսուրսներն օգտագործվեն արդարադատության արդյունավետ իրականացման վերջնական նպատակին հասնելու համար:

40. Պայմանով, որ նրանց անկախությունն ապահովված է, խնայողություններ անելու համար դատախազական ծառայություններին խրախուսում են պայմանագրեր կնքել այլ պետական մարմինների հետ՝ նպատակ ունենալով համատեղ օգտագործելու նյութատեխնիկական միջոցները եւ վարչական ծառայությունները կամ մասնակցելու համատեղ գործողություններին: Համակարգում կարելու գործիք է

¹² Տե՛ս «Դատական համակարգի անկախության մասով եվրոպական ստանդարտների վերաբերյալ հաշվետվությունը. Մաս II. Դատախազական ծառայությունը», ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից:

ռեսուրսների վատնումից եւ գործողությունների կրկնությունից նաեւ դատախազական ծառայության շրջանակներում խուսափելու համար, երբ, օրինակ, մեկից ավելի հանրային մեղադրողներ (տեղի մակարդակով իրավասու) փոխկապակցված փաստեր են քննում:

41. Որպես հանրային ռեսուրսների օգտագործման օրինակաչափային սկզբունքի ազդեցություն՝ դատախազական ծառայությունների կողմից ինքնուրույն իրականացվող ֆինանսական կառավարումը պետք է հսկողության ենթարկվի վերահսկողության եւ աուդիտի իրավասություններով օժտված պետական մարմինների կողմից, ինչպես օրինակ՝ դատարանները:

9. Սարքավորումները եւ նյութական ռեսուրսները

42. Դատախազական ծառայություններին կոչ է արվում ներդնել եւ կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաների համատեղելի համակարգեր՝ դատախազական ծառայությունների ծախսերը պլանավորելու, վերահսկելու եւ համեմատելու համար: Սա կարող է գործնական եւ արդյունավետ մեթոդ լինել ռեսուրսների օգտագործումը դրանց տարածքային ծառայությունների ծանրաբեռնվածության հետ հավասարակշռելու, տարբեր գերատեսչությունների մակարդակով ռեսուրսների օգտագործման ուղեկիշներ ստեղծելու, անհրաժեշտության դեպքում ռեսուրսների արագ վերաբաշխում եւ վերջապես, ծախսերի հաշվետվողականություն ապահովելու համար:

43. Անդամ պետություններին կոչ է արվում դատախազական ծառայություններին հնարավորություն ընձեռել իրենց ամենօրյա աշխատանքում SS սարքավորումներ օգտագործելու համար՝ ներդնելով էլեկտրոնային արդարադատության գործիքներ, գործերի էլեկտրոնային կառավարման համակարգեր եւ օրենքի կիրառման համար պատասխանատու այն մարմինների հետ տվյալների փոխանակման համակարգեր, որոնց հետ դատախազները կապ են պահպանում իրենց առաջադրանքներն իրականացնելիս: Սա հնարավորություն կտա ապահովելու գործերի առավել արդյունավետ կառավարում՝ նվազեցնելով վարույթների տեւողությունը եւ երաշխավորելով տվյալների պաշտպանության եւ գաղտնիության ապահովման միջոցառումների կիրառումը:

44. Անդամ պետություններից պահանջվում է նաեւ աջակցել դատախազական ծառայությունների կողմից սեփական կայքերը վարելու եւ հանրությանն ընդունելու համար համապատասխան տարածքներ ունենալու անհրաժեշտությանը՝ թափանցիկության եւ հանրային իրազեկվածության պատշաճ մակարդակը պահպանելու, ինչպես նաեւ արդարադատության մատչելիությանն աջակցելու եւ այն դյուրացնելու նպատակով:

7. Դատախազական ծառայությունների միջոցները եւ կառավարության խիստ խնայողության ծրագրերը

45. Տնտեսական ճգնաժամերը, եթե դրանք, ինչպես հարկն է, չեն վերացվում, կարող են բացասաբար անդրադառնալ դատախազական ծառայությունների գործունեության վրա: Այս հետեւանքի մասշտաբը յուրաքանչյուր անդամ պետության համար կարծես թե տարբեր է. մի կողմից՝ կապիտալ ներդրումների հաշվին հիմնական գործունեության մասով խնայողություններ անելու եւ դրա համար նախատեսված ռեսուրսները վերաբաշխելու ընդհանուր քաղաքականություն որդեգրելուց մինչեւ դատախազների աշխատավարձերի արմատական կրճատումներ՝ մյուս կողմից: Երացուցիչ մարդկային եւ ֆինանսական ռեսուրսների, ավելի լավ տեխնիկական սարքավորումների ձեռքբերումը, անձնակազմի համար վերապատրաստման, ինչպես նաեւ դատարաններում օգտագործվող ապացույցների հիմնավորման համար պահանջվող տեխնիկական փորձաքննության ավելի հեշտ հասանելիությունը մի շարք անդամ պետություններում դիտվում է որպես առաջնահերթություն:

46. Հենց դատախազական ծառայություններն իրենք պետք է դերակատարում ունենան իրենց ամենօրյա աշխատանքի վրա տնտեսական ճգնաժամերի բացասական ազդեցությունը չեզոքացնելու կամ առնվազն նվազագույնի հասցնելու գործում: Դա անելու համար պետք է հավասարակշռություն գտնել առկա ռեսուրսների եւ ձեռք բերվող արդյունքների միջեւ: Հանցավորության դեմ պայքարի հարցում Եվրոպայի եւ ազգային դերակատարների միջեւ ավելի լավ համագործակցության եւ համակարգման միջոցով այդ իրավիճակը կարող է զգալիորեն բարելավվել: Եվրոպական մակարդակով քրեական գործերով միջազգային համագործակցության տարբեր նոր հնարավորությունները (օրինակ՝ Եվրաջասթի միջոցով կամ համատեղ քննությունների անցկացմամբ) պետք է շատ ավելի լայնորեն օգտագործվեն: Ներպետական մակարդակով տեղական, տարածաշրջանային եւ ազգային այլ մարմինների հետ համաձայնագրերը, որոնք թույլ են տալիս համատեղ օգտագործել վարչական ծառայությունները, գրասենյակային տարածքներն ու միջոցները եւ օժանդակ անձնակազմը, կամ բարելավված համագործակցությունը վերահսկող այլ մարմինների հետ (օրինակ՝ բնապահպանական տեսչությունները) համաձայնագրերը, կարող են օգնել տնտեսական ճգնաժամի հետ կապված խնդիրները հաղթահարելու հարցում:

47. Եթե դատախազական ծառայություններն իրենց տրամադրության տակ ունեն մարդկային եւ ֆինանսական ռեսուրսների կառավարման համար համապատասխան միջոցներ, ապա նրանց աշխատանքի որակը բացասական ազդեցություն չի կրի: Դատախազական ծառայությունների (օրինակ՝ տնտեսական հանցագործությունների կամ կիբեռնանցագործությունների դեմ պայքարի նպատակով մասնագիտացված ստորաբաժանումների ստեղծումը) կամ դատախազության ֆինանսավորման

համակարգում նոր կառույցների ներդրումը (օրինակ՝ բյուջետային ինքնավարության ապահովումն այն երկրներում, որտեղ դատախազական ծառայություններն այն չունեն) կարող է մեծապես նպաստել մասնագիտական որակի պահպանմանը:

48. Տնտեսական ճգնաժամի ժամանակ դատախազական ծառայությունների համար հատկապես կարևոր է օպտիմալացնել իրենց կազմակերպությունները եւ բարելավել կառավարումն ինչպես ֆինանսական, այնպես էլ մարդկային ռեսուրսների օպտիմալ օգտագործումն ապահովելու նպատակով: Նաեւ երկրի տարածքում դատախազությունների բաշխումը՝ իրավասությունների ողջամիտ վերապահմամբ, կարող է օգնել:

Ե. Դատախազական ծառայությունների կառավարման բարելավումը

ա. Աուդիտը եւ վերահսկողությունը

49. Վերահսկողությունը եւ աուդիտը կարևոր տարրեր են պետական միջոցների բարեխիղճ կառավարումն ապահովելու համար: Դրանք պետք է հարմարեցվեն դատախազական ծառայության կոնկրետ առաջադրանքներին: Իր հատուկ նշանակությունը հաշվի առնելով՝ օրինակ, հանցագործությունների քննության համար ծախսվող միջոցների օգտագործումը չի կարող գնահատվել ծախսերի արդյունավետության սովորական հաշվարկների միջոցով. քննությունները չպետք է գնահատվեն միայն ծախսերի արդյունավետության տեսանկյունից: Վերահսկողությունը կարող է օգտակար գործիք լինել դատախազական ծառայության շրջանակներում լավագույն գործելակերպի ձեւավորման համար՝ տարբեր ստորաբաժանումներում եւ տարբեր հարցերով գործերի վարումը համեմատելու նպատակով, սակայն, որպես այդպիսին, չի կարող օգտագործվել որպես դատախազական ծառայությունը կառավարելու միջոց:

50. Միայն բացառիկ դեպքերում դատախազական ծառայությունները պետք է վերադառնան որոշ տեսակի գործերի կամ հանցագործությունների առաջնահերթություն տալուն՝ որպես ռեսուրսների սահմանափակմանը հակազդելու միջոց: Այնուամենայնիվ, այդ առաջնահերթությունը սահմանելն ընդհանուր առմամբ չպետք է լինի ի վնաս դատախազության գործունեության եւ հատկապես այլ տեսակի հանցագործությունների համար հետապնդման արդյունավետ իրականացման, ինչպես նաեւ չպետք է սահմանափակի օրենքի առջեւ հավասարության ընդհանուր սկզբունքը:

Բ. Արդյունքների հիման վրա կառավարումը

51. Անկախ նրանից, թե տարբեր անդամ պետությունների կողմից ինչպիսի կառավարման համակարգ է ընդունված, դատախազները պետք է մշտապես ապահովեն, որ իրենց տրամադրության տակ գտնվող ռեսուրսներն օգտագործվեն արդյունավետ եւ խնայողաբար, եւ որ լինեն պատշաճ հսկողության եւ հետագա վերահսկողության մեխանիզմներ:

52. Անդամ պետությունները կարող են նաեւ դիտարկել, որքանով դա համատեղելի է իրենց համապատասխան իրավական համակարգերի հետ, այնպիսի մոդելի ներդրման կամ ամրապնդման հարցը, որով դատախազական ծառայության գործունեությունը ղեկավարվում է արդյունքների վրա հիմնված կառավարման սկզբունքի համաձայն: Դեկլարման այս հայեցակարգն ինտերակտիվ, պայմանավորվածությունների վրա հիմնված ուղղորդող մոդել է, որի դեպքում ռեսուրսները բաշխվում են համաձայնեցված եւ ակնկալվող գործունեության հիման վրա: Արդյունքների վրա հիմնված կառավարման հիմնական գաղափարն է օգնել կողմերին համապատասխան հավասարակշռություն գտնել առկա ռեսուրսների եւ ձեռք բերվելիք արդյունքների միջեւ (օրինակ՝ ընթացակարգերի ձգձգումները նվազեցնելու կամ արդարադատության հասանելիությունը դրանից օգտվողների համար բարելավելու նպատակով)՝ միեւնույն ժամանակ լիովին հարգելով դատախազական ծառայությունների դերն ու անկախությունը եւ օրինականության սկզբունքը:

53. Այս մոդելը (հայեցակարգը) կառավարման գործիք է, որն ստեղծվել է համապատասխան պետական մարմնի (օրինակ՝ Ֆինանսների նախարարություն, Արդարադատության նախարարություն կամ Խորհրդարան) եւ դատախազական ծառայության միջեւ գործունեության արդյունքների մասին բանակցությունների հիման վրա: Վերջինս ինքը պետք է մասնակցի այդ բանակցություններին, քանի որ լավագույնս կարողանում է որոշել իր վերջնարդյունքների նպատակները՝ դատախազներին իրենց փաստացի աշխատանքում ուղղորդելու համար: Դատախազական ծառայությունը պետք է ունենա բավարար ազատություն իր նպատակները սահմանելու համար, որպեսզի հասնի հնարավոր լավագույն արդյունքների:

54. Կատարողականի գնահատման եւ ռեսուրսների բաշխման հիմքն արդյունքներն ու վերջնարդյունքներն են: Դատախազական ծառայության արդյունքները որոշվում են նրանով, թե որքանով է հաջողել նրա սոցիալական նպատակների իրագործումը (օրինակ՝ քրեական պատասխանատվության իրականացումը): Վերջնարդյունքները վերաբերում են այն նպատակներին, որոնց վրա դատախազական ծառայությունն ինքը կարող է ազդեցություն ունենալ իր իսկ գործունեության միջոցով, եւ դրանց կառավարման ձեւին, այսինքն՝ աշխատանքի արդյունավետությունը, որակի հսկողությունը եւ մարդկային ռեսուրսների կառավարումը:

55. Դատախազական ծառայության վերջնարդյունքները եւ արդյունքները պետք է սերտորեն

կապված լինեն դատախազական ծառայության հիմնական գործունեության եւ առկա ռեսուրսների հետ, որպեսզի նպատակներին հասնելը կախված լինի բացառապես նրանից, թե ինչ է անում տվյալ գերատեսչությունը, եւ թե ինչպես է այն կառավարվում: Պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ վերջնարդյունքների սահմանումն ազդեցություն է ունենալու դատախազների կողմից իրականացվող գործունեության վրա:

56. Արդյունքների վրա հիմնված կառավարումը պահանջում է, որ համապատասխան գերատեսչությունը զեկուցի իր նպատակներին հասնելու մասին: Մասնավորապես տեղի դատախազությունները զեկուցում են Գլխավոր դատախազությանը, որն իր հերթին զեկուցում է ռեսուրսները հատկացնող պետական մարմնին կամ խորհրդարանին: Արդյունքների հստակ եւ հուսալի գնահատումն ու չափումը կենսական նշանակություն ունեն, սակայն կարող են լուրջ խնդիրների հանգեցնել: Լավ կատարողական ցուցանիշները վկայում են ձեռքբերումների, այլ ոչ թե ձեռնարկված գործողությունների մասին:

57. Այն, թե նպատակները որքանով են իրագործվում, ազդեցություն կունենա սահմանված նպատակների եւ գործունեության հաջորդ ժամանակահատվածի համար հատկացված ռեսուրսների վրա: Դատախազական ծառայության նպատակների իրագործված կամ չիրագործված լինելու գնահատականը միշտ պետք է ուղեկցվի հենց դատախազական ծառայության կողմից ձեռնարկվելիք կոնկրետ միջոցառումների վերաբերյալ որոշումներով:

V. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

i) Դատախազներն իրենց տրամադրության տակ պետք է ունենան բավարար միջոցներ, որ իրենց առջեւ դրված տարբեր առաջադրանքները կատարեն ազգային եւ միջազգային նոր վտանգների եւ մարտահրավերների պարագայում, այդ թվում՝ տեխնոլոգիաների զարգացման եւ գլոբալիզացիայի գործընթացների հետեւանքով առաջացած:

ii) Դատախազական ծառայություններին պետք է հնարավորություն տրվի գնահատելու իրենց կարիքները, համաձայնեցնելու իրենց բյուջեները եւ որոշելու, թե ինչպես օգտագործել հատկացված միջոցները:

iii) Որպեսզի կարողանան կազմել իրենց բյուջեները, դատախազական ծառայությունները պետք է հիմնվեն ճշգրիտ եւ հիմնավոր ցուցանիշների վրա, որոնք բխում են քրեական եւ այլ համապատասխան վիճակագրությունից:

iv) Բարդ տնտեսական եւ ֆինանսական միջավայրն առաջ է բերում մասնագիտական մարտահրավերներ, որոնք ընդգծում են ավելի ռացիոնալ կառավարման անհրաժեշտությունը: Դատախազական ծառայությունների անկախությունը, անաչառությունը, ֆինանսական ինքնավարությունը եւ արդյունավետությունն արժեքներ են, որոնք պետք է երաշխավորվեն տնտեսական բոլոր հանգամանքներում:

v) Դատախազական ծառայությունները կառավարման ժամանակակից մեթոդները պետք է օգտագործեն արդյունավետ եւ թափանցիկ կերպով: Այս առումով կարող է օգտակար լինել կատարողականի ցուցանիշների եւ արդյունքների վրա հիմնված կառավարման համակարգի օգտագործումը: Նրանք նաեւ պետք է ունենան բավարար ազատություն՝ ընտրելու, թե ինչ գործողություններ պետք է իրականացվեն ցանկալի արդյունքների հասնելու համար: Դատախազական ծառայությունները չպետք է բախվեն բյուջեի չափազանց ոչ ճկուն բնույթի հետ:

vi) Պետք է ապահովվեն դատախազական բյուջեների օգտագործման ինչպես ներքին, այնպես էլ արտաքին վերահսկողությունը եւ աուդիտը: Արտաքին վերահսկողությունը եւ աուդիտը պետք է համահունչ լինեն դատարանների նկատմամբ կիրառվող վերահսկողությանը եւ աուդիտին:

vii) Պետք է ապահովվի կառավարման թեմայով վերապատրաստում այն դատախազների համար, որոնց վերապահված են կառավարման գործառույթներ: Դատախազական ծառայությունների եւ ֆինանսների ու կառավարման արտաքին մասնագետների միջեւ համագործակցության ընթացակարգերը պետք է հստակ կարգավորվեն:

viii) Պետք է իրականացվի դատախազական ծառայությունների խորհրդատվություն՝ արվելիք խնայողությունների, ինչպես նաեւ նոր ռեսուրսներ ներգրավելու կամ գոյություն ունեցողներ ռեսուրսներն ավելացնելու նախաձեռնությունների վերաբերյալ:

ix) Իրենց գործողությունների համար պահանջվող միջոցների օգտագործումը բացատրելու համար դատախազական ծառայությունները պետք է պահպանեն իրենց աշխատանքի թափանցիկության եւ դրա մասին հանրության իրազեկվածության պատշաճ մակարդակը, այդ թվում՝ սեփական կայքերի եւ տարեկան հաշվետվությունների հրապարակման միջոցով: Ամեն դեպքում նրանց անաչառ կերպարը պետք է պահպանվի:

x) Խրախուսվում է ներպետական եւ միջազգային մակարդակներում դատախազական ծառայությունների կողմից միջոցների կառավարման ոլորտում փորձի եւ լավագույն գործելակերպերի փոխանակումը:

Կարծիք թիվ 8 (2013)

Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի՝
ուղղված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին

Դատախազների և լրատվության միջոցների միջև հարաբերությունները

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (ԵՂԳԽՆ) ստեղծվել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 2005 թվականին՝ դատախազական ծառայությունների գործունեության վերաբերյալ կարծիքներ տրամադրելու և անդամ պետություններին ուղղված՝ «Զրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Նախարարների կոմիտեի Rec(2000)19 առաջարկության արդյունավետ իրականացումը խթանելու նպատակով:

2. Նախարարների կոմիտեն հանձնարարել է ԵՂԳԽՆ-ին 2013 թվականին ընդունել կարծիք՝ դատախազների և լրատվության միջոցների միջև հարաբերություններին ուշադրություն դարձնելու համար:

3. ԵՂԳԽՆ-ն կազմել է սույն կարծիքը՝ հիմնվելով 36 անդամ պետությունների կողմից հարցաշարին¹ տրված պատասխանների վրա:

4. Ըստ այդ պատասխանների՝ պարզվում է, որ դատախազների և լրատվության միջոցների միջև հարաբերությունների տարբեր ասպեկտները որոշվում են կամ Սահմանադրությամբ և (կամ) ազգային օրենքներով, կամ ներքին կարգավորող փաստաթղթերով (օրինակ՝ Գլխավոր դատախազի հրամաններով ու հրահանգներով, վարքագծի կանոններով, էթիկայի կանոնադրքերով և այլն):

5. Լրատվության միջոցների հետ դատախազների հաղորդակցության բազմազանությունը բացատրվում է անդամ պետությունների իրավական համակարգերի բազմազանությամբ՝ նրանց վերապահելով տարբեր առաջադրանքներ և դերեր՝ միաժամանակ պարտավորված լինելով հարգել մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները:

Ա. Տեքստերը, որոնց հղում է կատարվել

6. ԵՂԳԽՆ-ն ընդգծում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային (ՄԻԵԿ) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Դատարան) նախադեպային իրավունքին հղում կատարելու կարեւորությունը:

7. ԵՂԳԽՆ-ն մասնավորապես ուսումնասիրել է ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով երաշխավորված արտահայտվելու և տեղեկություններ ստանալու ազատության հիմնարար իրավունքների և դատական վարույթների վերաբերյալ հանրությանն իրազեկելու լրատվության միջոցների իրավունքի ու պարտականությունների և անմեղության կանխավարկածի, արդար դատաքննության, ինչպես նաև ՄԻԵԿ-ի 6-րդ և 8-րդ հոդվածներով սահմանված՝ անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքների միջև պատշաճ հավասարակշռությունը:

8. ԵՂԳԽՆ-ն հաշվի է առել Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ դատախազների վերաբերյալ հետևյալ առաջարկությունները.

- «Զրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Rec(2000)19 առաջարկությունը և մասնավորապես դատախազների՝ արտահայտվելու գործող իրավունքի վերաբերյալ 6-րդ կետը, նրանց վերապատրաստման վերաբերյալ 7-րդ կետը, դատախազների օբյեկտիվության և արդարության պարտավորության մասին 20-րդ կետը, ինչպես նաև անձանց առնչվող՝ իրենց բոլոր պարտականությունները և պատասխանատվությունը (24-36-րդ կետեր):
- «Զրեական արդարադատության համակարգից դուրս հանրային մեղադրողների դերի մասին» Rec(2012)11 առաջարկությունը և մասնավորապես՝ 4-9-րդ կետերը:

9. ԵՂԳԽՆ-ն հաշվի է առել նաև Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված այլ փաստաթղթեր, մասնավորապես՝

- Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին կոնվենցիան (ԵՂՇ թիվ 108).

¹ Տե՛ս անդամ պետությունների պատասխանները հարցաշարին ԵՂԳԽՆ-ի կայքում www.coe.int/ccpe՝ «Նախնական աշխատանքներ. Դատախազների և լրատվության միջոցների միջև հարաբերություններ» բաժնում:

- «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Rec (2002)2 առաջարկությունը եւ «Քրեական վարույթի մասին լրատվության միջոցներով տեղեկություններ տրամադրելու մասին» Rec(2003)13 առաջարկությունը.
- «Լրատվության միջոցների նոր հասկացության մասին» Rec(2011)7 առաջարկությունը:

10. Բացի այդ, ԵՂԳԽՆ-ն հիմնվել է ժողովրդավարական հասարակությունում դատավորների եւ դատախազների միջեւ հարաբերությունների վերաբերյալ (Բորդոյի հռչակագիր, 2009թ.) Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽՆ) հետ համատեղ կարծիքում, ինչպես նաեւ «Արդարադատությունը եւ հասարակությունը» խորագրով ԵԴԽՆ-ի թիվ 7 (2005) կարծիքում եւ «Արդարադատությունը եւ տեղեկատվական տեխնոլոգիաները(SS)» խորագրով ԵԴԽՆ-ի թիվ 14 (2011) կարծիքում ներառված սկզբունքների վրա:

11. ԵՂԳԽՆ-ն նաեւ հաշվի է առել Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան փաստաթղթերը, օրինակ՝ Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Պեկինյան կանոններ)² եւ Դատախազների դերի վերաբերյալ ուղեցույցը (1990թ.): ԵՂԳԽՆ-ն նաեւ դիտարկել է 1999 թվականին Դատախազների միջազգային ասոցիացիայի կողմից ընդունված՝ Դատախազների մասնագիտական պատասխանատվության չափանիշները եւ հիմնական պարտականություններն ու իրավունքները:

Բ. Շրջանակը

12. Սույն կարծիքի նպատակն է առաջարկություններ ներկայացնել՝ դյուրացնելու համապատասխան տեղեկություններին լրատվության միջոցների հասանելիությունը եւ խթանելու դատախազների ու լրատվության միջոցների միջեւ պատշաճ հաղորդակցությունը՝ նրանց համապատասխան ազգային օրենքներին եւ անդամ պետությունների միջազգային պարտավորություններին համապատասխան:

13. Սույն կարծիքը, ԵՂԳԽՆ-ի լիազորությանը համապատասխան, հասցեագրված է դատախազներին, եւ այն չպետք է ընկալվի որպես լրագրողներին ուղղված առաջարկություն: ԵՂԳԽՆ-ն պարտավորվում է աջակցել ընդհանուր առմամբ լրատվության միջոցների եւ հասարակության կողմից դատախազի եւ արդարադատության համակարգի դերի շարունակական ընկալման ձեւավորմանը: ԵՂԳԽՆ-ն հրավիրում է լրագրողների, ինչպես նաեւ բոլոր այլ շահագրգիռ մասնագետների՝ ծանոթանալու սույն կարծիքին եւ օժանդակելու դրա տարածմանը:

14. Ելնելով ստորեւ բերված 21-րդ, 23-րդ, 25-րդ եւ 26-րդ պարբերություններում նշված սահմանափակումներից՝ արտահայտվելու եւ տեղեկատվության ազատության հիմնարար իրավունքը պահանջ է, որը կիրառելի է ընդհանրապես դատախազների տարբեր առաջադրանքների եւ գործառնությունների առնչությամբ: Սույն կարծիքը վերաբերում է դատախազական գործունեության բոլոր տեսակներին, եւ սույն կարծիքի ցանկացած դրույթ, որը վերաբերում է քրեական արդարադատության ոլորտում գործունեությանը, վերաբերում է, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), այս ոլորտից դուրս գործող դատախազներին:

15. Ամեն անգամ, երբ տեղեկություններ տարածելու համար դատախազը կիրառում է նոր քաղաքականություն կամ հաղորդակցման մեթոդներ, սույն կարծիքում արտահայտված սկզբունքները կիրառելի կլինեն, քանի որ ակնկալվում է, որ դատախազների կողմից տարածված տեղեկությունը հանրային հետաքրքրություն է ներկայացնում:

16. Ինչ վերաբերում է «լրատվության միջոցներ» եզրույթին, ապա հիմնականում տպագիր լրատվամիջոցների վերաբերյալ ձեւակերպված եզրակացությունները, սկզբունքները եւ առաջարկությունները վերաբերում են նաեւ լրատվության տեսալսողական եւ էլեկտրոնային միջոցներին, ինչպես նաեւ համացանցին՝ որպես լրատվության միջոց օգտագործվելու դեպքում:

II. ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

17. Դատախազների, լրատվության միջոցների եւ գործերում ներգրավված բոլոր կողմերի միջեւ հարաբերությունները կարելի է դիտարկել որպես սկզբունքների երեք հիմնական խմբերին առնչվող՝

- սկզբունքներ, որոնք ուղղված են անկախ, անաչառ եւ թափանցիկ արդարադատություն ապահովելու անհրաժեշտության եւ այլ հիմնարար իրավունքներին, ինչպես օրինակ՝ արտահայտվելու³ եւ մամուլի ազատության իրավունքը երաշխավորելու անհրաժեշտության

² Պեկինյան կանոններն ընդունվել են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29-ի իր 40/33 բանաձեւում:

³ Ինչ վերաբերում է ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածին, Դատարանը բազմիցս նշել է, որ «որ արտահայտվելու ազատությունը ժողովրդավարական հասարակության հիմնաքարերից մեկն է եւ դրա առաջնությանը ու յուրաքանչյուր անհատի ինքնաիրացման հիմնական պայմաններից մեկը»: (Տե՛ս Լինգենսն ընդդեմ Ավստրիայի [Lingens v. Austria], թիվ 9815/82, 1986 թվականի հուլիսի 8. Սենտրն ընդդեմ Թուրքիայի [Sener v. Turkey], թիվ 26680/95, 2000 թվականի հուլիսի 18. Թոմասն ընդդեմ Լյուքսեմբուրգի [Thoma v. Luxembourg] թիվ

միջեւ պատշաճ հավասարակշռություն երաշխավորելուն, ինքնին կարող են ենթակա լինել սահմանափակումների, որոնք կունենան իրավական հիմք, կհամապատասխանեն մեկ կամ մի քանի իրավաչափ նպատակի, ինչպես օրինակ՝ այլոց իրավունքների պաշտպանությունը, քննությունների անխափան ընթացքը կամ անձնական կյանքի պաշտպանությունը, եւ կլինեն ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ ու իրավաչափ նպատակին (նպատակներին) համարժեք՝ հրատապ սոցիալական կարիքներին արձագանքելու համար:

- սկզբունքներ, որոնք պաշտպանում են անհատների իրավունքները, հատկապես՝ պաշտպանյալների եւ տուժողների իրավունքները (այդ թվում՝ արժանապատվության իրավունքը, անձի անձնական կյանքի⁴ եւ անվտանգության իրավունքը, ինչպես նաեւ անմեղության կանխավարկածը⁵).
- սկզբունքներ, որոնք կապված են դատավարական իրավունքների հետ, հատկապես, երբ դատախազները գործում են որպես դատավարության հավասար կողմ (օրինակ՝ կողմերի իրավահավասարության եւ արդար դատաքննության պահանջը):

Այս սկզբունքների միջեւ հակասության դեպքում դրանցից յուրաքանչյուրի միջեւ պետք է պահպանվի պատշաճ հավասարակշռություն:

Արտահայտվելու եւ մամուլի ազատությունը

18. Յուրաքանչյուր ոք, ներառյալ՝ դատական գործընթացի մասնակիցները, ունեն ազատ արտահայտվելու իրավունք:

19. Դատախազները նույնպես ունեն ազատ արտահայտվելու իրավունք⁶՝ միաժամանակ հարգելով մասնագիտական գաղտնիությունը, գաղտնիության պարտականությունը, շրջահայացության եւ օբյեկտիվության պարտականությունը⁷: Երբ դատախազները լրատվության միջոցներում հայտնվում են որեւէ կարգավիճակով, նրանք պետք է ուշադրություն դարձնեն այն ռիսկերին, որոնք կարող են առաջանալ դատախազական ծառայության անաչառության եւ բարեվարքության հետ կապված:

20. Պետք է երաշխավորվի դատական վարույթների ժամանակ մամուլի ազատությունը⁸: Համաձայն ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով նախատեսված Դատարանի նախադեպային իրավունքի՝ մամուլը պարտավոր է հանրային հետաքրքրությունն ներկայացնող հարցերի վերաբերյալ փոխանցել

38432/97, 2001 թվականի հունիսի 29. Մարոնեկն ընդդեմ Սլովակիայի [Maronek v. Slovakia], թիվ 32686/96, 2001 թվականի հուլիսի 19. Դիչանդը եւ այլք ընդդեմ Ավստրիայի [Dichand and Others v. Austria], թիվ 29271/95, 2002 թվականի փետրվարի 26):

⁴ Դատարանը բազմիցս ընդգծել է ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածով նախատեսված՝ ընթացիկ քրեական վարույթի թիրախում գտնվող անձանց անձնական կյանքի անձեռնմխելիությունը պաշտպանելու պետության դրական պարտավորությունները (Ա.-ն ընդդեմ Նորվեգիայի [A. v. Norway], թիվ 28070/06, 2009 թվականի ապրիլի 9) (տե՛ս նաեւ այս վճռում 8-րդ սկզբունքը՝ անդամ պետություններին ուղղված «Լրատվության միջոցներով քրեական վարույթի մասին տեղեկություններ տրամադրելու մասին» Նախարարների կոմիտեի Rec(2003)13 առաջարկության հավելվածում):

⁵ Ըստ Դատարանի՝ անմեղության կանխավարկածը «կխախտվի, եթե քրեական իրավախախտման մեջ մեղադրվող անձի վերաբերյալ պետական պաշտոնյայի ցուցմունքում կարծիք արտահայտվի այն մասին, որ նա մեղավոր է, նախքան դա ապացուցված կլինի օրենքի համաձայն: Նույնիսկ որեւէ պաշտոնական եզրակացության բացակայության պայմաններում դա բավարար պատճառ կարող է լինել կարծելու, որ պաշտոնյան գտնում է, որ մեղադրյալը մեղավոր է»: Դակտարաս ընդդեմ Լիտվայի [Daktaras v. Lithuania], թիվ 42095/98, § 41, 2000 թվականի հոկտեմբերի 10:

⁶ Դատարանը վերահաստատում է, որ 10-րդ հոդվածի պաշտպանությունը տարածվում է ընդհանրապես՝ աշխատավայրի, եւ մասնավորապես՝ հանրային ծառայողների վրա (Գուժան ընդդեմ Մոլդովայի [Guja v. Moldova] (Մեծ պալատ), թիվ 14277/04, § 52, 2008 թվականի փետրվարի 12): Հարաբերակցությունը ընդդեմ Սլովակիայի [Harabin v. Slovakia] գործով (թիվ 58688/11, § 149, 2012 թվականի նոյեմբերի 20) Դատարանը պարզել է, որ դատական իշխանությանը պատկանելի (այդ գործով դիմումատուին Գերագույն դատարանի նախագահին էր) դիմումատուին չի գրկում 10-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունից:

⁷ Դատարանը «հաշվի է առնում, որ աշխատողները պարտավոր են իրենց գործատուի նկատմամբ դրսևորել հավատարմություն, զսպվածություն եւ շրջահայացություն: Սա հատկապես այդպես է քաղաքացիական ծառայողների դեպքում, քանի որ քաղաքացիական ծառայության բնույթը պահանջում է, որ քաղաքացիական ծառայողը պարտավոր է դրսևորել հավատարմություն եւ շրջահայացություն (Գուժան ընդդեմ Մոլդովայի [Guja v. Moldova] (Մեծ պալատ), թիվ 14277/04, § 70, 2008 թվականի փետրվարի 12): Քաղաքացիական ծառայողների կողմից աշխատանքի ընթացքում ձեռք բերված տեղեկությունների բացահայտումը, նույնիսկ հանրային հետաքրքրությունն ներկայացնող հարցերի վերաբերյալ, պետք է ուսումնասիրվի նրանց հավատարմության եւ շրջահայացության պարտականության լույսի ներքո (Կուդեշկինա ընդդեմ Ռուսաստանի [Kudeshkina v. Russia], թիվ 29492/05, § 85, 2009 թվականի փետրվարի 26. տե՛ս նաեւ Գուժան ընդդեմ Մոլդովայի [Guja v. Moldova] (Մեծ պալատ), թիվ 14277/04, §§ 72-78, 2008 թվականի փետրվարի 12): Ավելի կոնկրետ, Օզպինարն ընդդեմ Թուրքիայի [Ozpinar v. Turkey] գործով, 20999/04, 2010 թվականի հոկտեմբերի 19, Դատարանը վերահաստատում է, որ պետության կողմից քաղաքացիական ծառայողների համար 10-րդ հոդվածի մասով իրենց կարգավիճակի հետ կապված զսպվածությունն ցուցաբերելու պարտականություն սահմանելը կամ իրենց կրոնական համոզմունքները հանրության առաջ արտահայտելու հարցում շրջահայացություն դրսևորելու պարտականություն սահմանելն օրինաչափ է (Կուրտուլմուշն ընդդեմ Թուրքիայի [Kurtulmus v. Turkey] (որոշում, թիվ 65500/01, 2006 թվականի հունվարի 24): Սույն սկզբունքները տարածվում են, mutatis mutandis (համապատասխան փոփոխություններով), ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի վրա: Այս կապակցությամբ Դատարանը նշում է, որ դատավորների էթիկական պարտավորությունները կարող են ազդել նրանց անձնական կյանքի վրա, երբ նրանց վարքագիծը, նույնիսկ մասնավոր բնույթ կրելու դեպքում, արատավորում է դատական իշխանության կերպարը կամ հեղինակությունը:

⁸ Տե՛ս Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության [The Sunday Times v. United Kingdom], (Թիվ 1), (թիվ 6538/74, § 65, 1979 թվականի ապրիլի 26), որտեղ Դատարանը պարզել է, որ «10-րդ հոդվածի նախադեպային իրավունքից բխող ընդհանուր սկզբունքները հավասարապես կիրառելի են արդարադատության իրականացման ոլորտում, որը ծառայում է ընդհանուր համայնքի շահերին եւ պահանջում է լուսավորված հասարակության համագործակցությունը»:

տեղեկություններ կամ գաղափարներ⁹, որը ներառում է դրանք ստանալու հանրության իրավունքը՝ թույլ տալով մամուլին կատարել իր դերը որպես «հանրային դիտորդ» (Ըստ Դատարանի եզրույթաբանության): Կյո կերպ մամուլն առավել պաշտպանված կլինի, եթե նպաստի հանրային հետաքրքրություն ներկայացնող օրինաչափ հարցերի քննարկմանը¹⁰:

21. Լրատվության միջոցների հետ իրենց հաղորդակցության ընթացքում դատախազները պետք է ձգտեն ապահովել, որ արտահայտվելու ազատությունը եւ մամուլի ազատությունը չխախտեն անհատների օրինական իրավունքները եւ շահերը (այդ թվում՝ խոցելի անձանց, օրինակ՝ անչափահասների, տուժողների, պաշտպանյալների ընտանիքի անդամների իրավունքները եւ շահերը), սովյալների պաշտպանության պահանջը եւ գաղտնիության պարտականությունը:

Տեղեկություններ ստանալու եւ փոխանցելու ազատությունը

22. Պետք է ապահովվի նաեւ հանրության՝ տեղեկություններ ստանալու իրավունքը¹¹: Այնուամենայնիվ, այդ գործընթացի իրականացման եղանակը կարող է կախված լինել կոնկրետ իրավական վարույթի հատուկ հանգամանքներից ու կրել դրանց ազդեցությունը եւ անհրաժեշտության դեպքում կարող է ենթարկվել սահմանափակումների՝ հիմնական սկզբունքների պահպանումն ապահովելու համար:

23. Դատախազները պետք է ձգտեն ապահովել, որ լրատվության միջոցներին տրամադրվող տեղեկությունները չխաթարեն քննության եւ քրեական հետապնդման արդարությունը կամ քննության նպատակը: Դրանք նաեւ չպետք է խախտեն երրորդ անձանց իրավունքները եւ չպետք է ազդեցություն ունենան քննությանը կամ քրեական հետապնդմանը ներգրավված անձանց վրա: Դրանք չպետք է ազդեն դատական վարույթների արդյունքների վրա:

Անմեղության կանխավարկածը եւ պաշտպանության իրավունքները

24. Դատախազները պետք է հատկապես ուշադիր լինեն պաշտպանության, արտահայտվելու ազատության իրավունքների, անմեղության կանխավարկածի եւ տեղեկացված լինելու իրավունքի նկատմամբ:

25. Հաղորդակցվելիս դատախազները պետք է համոզվեն, որ չեն խախտում պաշտպանության իրավունքները՝ ժամանակից շուտ տեղեկություններ տարածելով եւ թույլ չտալով, որ պաշտպանության կողմն արձագանքի դրանց¹²: Նրանք նաեւ պետք է զգույշ լինեն, որպեսզի չփոխանցեն այն տեղեկությունները, որոնցով չեն հարգվում տուժողների՝ պատշաճ կերպով տեղեկացված լինելու իրավունքները: Տեղեկությունների տրամադրումը չպետք է խաթարի անհատների արդար դատաքննության իրավունքը:

26. Հաղորդակցվելիս դատախազները պետք է ապահովեն, որ չեն վտանգում ներգրավված անձանց, այդ թվում՝ վկաների, տուժողների եւ զգայուն գործերով զբաղվող դատախազների ու դատավորների անվտանգությունը:

27. Անմեղության կանխավարկածը հարգելու միջոցով պետք է հավասարակշռություն հաստատվի տեղեկությունների նկատմամբ հանրային հետաքրքրության եւ անձանց պատվի ու արժանապատվության պաշտպանության միջեւ: Դատախազը, եթե դա նրա իրավասության շրջանակներում է, պետք է ապահովի, որ կալանավորված անձն իր գործողությունների միջոցով չհառնա լրատվության միջոցների հետաքրքրության առարկա, եւ որ գործում ներգրավված անձինք պատշաճ կերպով պաշտպանված լինեն լրատվության միջոցների ճնշումներից¹³, մասնավորապես, որ տուժողները պաշտպանված լինեն այնպես, որ զերծ մնան լրատվության միջոցների կողմից ոսնձգության ենթարկվելու վտանգից:

Անձնական կյանքը եւ արժանապատվությունը

28. Դատական վարույթի ցանկացած փուլում մասնակիցները, անկախ իրենց դերից, ունեն արժանապատվության, անձնական եւ ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի եւ անձնական

⁹ ՏԵՍ, ի թիվս այլնի, «Ըբզըրվըր»-ը եւ «Գարդիան»-ն ընդդեմ ՄԹ-ի [Միացյալ Թագավորություն] [Observer and Guardian v. UK], թիվ 13585/88, 1991 թվականի նոյեմբերի 26:

¹⁰ ՏԵՍ Բլադետ Տրոմսյոն եւ Ստենսասան ընդդեմ Նորվեգիայի [Bladet Tromsø and Stensaas v. Norway] (Մեծ Պալատ), թիվ 21980/93, 1999 թվականի մայիսի 20:

¹¹ ՏԵՍ, ի թիվս այլնի, Արիգոն եւ Վելան ընդդեմ Մալթայի [Arrigo and Vella v. Malta] (որոշում), թիվ 6569/04, 2005 թվականի մայիսի 10. Յորդանովան եւ Տոշեվն ընդդեմ Բուլղարիայի [Yordanova and Toshev v. Bulgaria], թիվ 5126/05, § 53, 2012 թվականի հոկտեմբերի 2:

¹² Ինչ վերաբերում է մամուլում գաղտնի տեղեկությունների արտահոսքին, տԵՍ, ի թիվս այլնի, Սթոլն ընդդեմ Շվեյցարիայի [Stoll v. Switzerland] (Մեծ պալատ), թիվ 69698/01, §§ 61 եւ 143, 2007 թվականի դեկտեմբերի 10. Կրաքսին ընդդեմ Իտալիայի [Craxi v. Italy] (Թիվ 2), թիվ 25337/94, 2003 թվականի հուլիսի 17:

¹³ ՏԵՍ, ի թիվս այլնի, Նիկոլաիշվիլն ընդդեմ Վրաստանի [Nikolaishvili v. Georgia], թիվ 37048/04, 2009 թվականի հունվարի 13. Շակկան ընդդեմ Իտալիայի [Sciaccia v. Italy], թիվ 5077/99, 2005 թվականի հունվարի 11. Կարակասը եւ Եսիլիմակն ընդդեմ Թուրքիայի [Karakas and Yesilimak v. Turkey], 43925/98, 2005 թվականի հունիսի 28:

անվտանգության իրավունք:

29. Հնարավորության սահմաններում քննության փուլում կասկածյալների ինքնությունը չպետք է բացահայտվի: Մինչև ինքնության բացահայտումը պետք է ուշադրություն դարձնել տուժողների իրավունքներին:

III. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ

30. Դատախազների գործառույթների իրականացման թափանցիկությունն օրենքի գերակայության հիմնական բաղադրիչն է եւ արդար դատաքննության կարելու երաշխիքներից մեկը: Պետք է իրականացվի արդարադատություն, եւ պետք է հետեւել այդ գործընթացին: Դա ապահովելու համար լրատվության միջոցներին պետք է հնարավորություն տրվի հաղորդելու քրեական եւ այլ դատական վարույթների մասին:

31. Դատախազների աշխատանքում թափանցիկության սկզբունքի կիրառումը հանրային վստահության եւ հավատի ապահովման միջոց է, ինչպես նրանց գործառույթների եւ լիազորությունների մասին տեղեկությունների տարածումը: Ուստի դատախազական ծառայության կերպարն արդարադատության համակարգի պատշաճ գործունեության նկատմամբ հանրային վստահության կարելու տարր է: Լրատվության միջոցների՝ դատախազների գործունեության վերաբերյալ տեղեկություններին հասանելիություն ունենալու հնարավորինս լայն իրավունքը ծառայում է նաեւ ժողովրդավարության ամրապնդմանը եւ հասարակության հետ բաց փոխգործակցության զարգացմանը:

32. Դատախազական ծառայությունները կարող են նաեւ ունենալ որոշակի ուսուցողական դեր եւ այդ կարգավիճակում պետք է օգնեն բացատրել, թե արդարադատության համակարգն ինչպես է գործում: Նրանք կարող են անհրաժեշտության դեպքում տեղեկություններ տրամադրել լրատվության միջոցներին եւ ընդհանրապես հանրությանը, որպեսզի նպաստեն դատական համակարգն ավելի լավ հասկանալու եւ դրա վերաբերյալ պատկերացում կազմելու գործընթացին:

33. Բացի այդ, դատախազների աշխատանքի բաց լինելը պետք է նպաստի դատախազության մարմինների կողմից իրականացվող գործունեության մակարդակի բարձրացմանը: Իրավապահ մարմինները եւ դատախազական ծառայությունները քննվող վարույթի եւ մասնավորապես քննության մասին լրատվության միջոցներին տեղեկացնելու միջոցով կարող են տեղեկություններ ստանալ հասարակության լայն շերտերից՝ դրանով իսկ մեծացնելով արդարադատության արդյունավետությունը:

34. Դատախազները կարող են նաեւ օրենքին համապատասխան լրատվության միջոցների միջոցով տեղեկություններ տրամադրել հասարակության լայն շերտերին՝ հետագա հանցագործությունների եւ այլ իրավախախտումների կատարումը կանխելու համար:

35. Յուրաքանչյուր անդամ պետության դատախազական ծառայությունն պետք է իր կարգավիճակին, օրենսդրությանը կամ ավանդույթներին առնչվող կոնկրետ չափորոշիչների հիման վրա ուսումնասիրի հաղորդակցվելու ամենահարմար եղանակը՝ անկախ նրանից, թե ում հետ կարող է հաղորդակցվել, կամ ինչ կարող է հաղորդվել:

36. Որոշ անդամ պետություններում դատախազները քաղաքական հարցերի կամ դատախազական ծառայության ընդհանուր դերի եւ գործունեության վերաբերյալ լրատվության միջոցներին ընդհանուր տեղեկություններ տրամադրելիս որեւէ առանձին գործի վերաբերյալ հրապարակային մեկնաբանություններ չեն անում, բացառությամբ այն դեպքերի, երբ դա դատական վարույթների ընթացքում ներկայացված համապատասխան իրավական փաստարկների մաս չի կազմում: Այլ անդամ պետություններում յուրաքանչյուր դատախազ առանձին կարող է ակտիվորեն հաղորդակցվել լրատվության միջոցների հետ այն գործերի մասին, որոնց քննությամբ զբաղվում է, կամ կարող է միայն տրամադրել սահմանափակ փաստական տեղեկություններ արդեն իսկ հանրային տիրույթում գտնվող գործի վերաբերյալ: Ամեն դեպքում լրատվության միջոցների հետ հարաբերությունները պետք է կառուցվեն փոխադարձ հարգանքի, վստահության, հավասար վերաբերմունքի եւ պատասխանատվության հիման վրա, եւ դրանցով պետք է հարգվեն դատական որոշումները: Ավելին, դատախազներն իրենց գործառույթներն իրականացնելիս պետք է անաչառության եւ հավասարության ոգով գործեն լրատվության միջոցների բոլոր անդամների նկատմամբ:

37. Դատախազների կողմից լրատվության միջոցներին տրամադրվող տեղեկությունները պետք է լինեն հստակ, հավաստի եւ միանշանակ:

38. Դատախազները կարող են լրատվության միջոցներին տեղեկություններ տրամադրել դատախազական գործունեության բոլոր փուլերում՝ պատշաճ հարգելով անձնական տվյալներին, անձնական կյանքի անձեռնմխելիությանը, արժանապատվությանը, անմեղության կանխավարկածին, վարույթի այլ մասնակիցների հետ հարաբերությունների էթիկայի կանոններին վերաբերող իրավական դրույթները, ինչպես նաեւ որոշակի տեղեկությունների բացահայտումը բացառող կամ սահմանափակող իրավական դրույթներ:

39. Ամեն դեպքում պետք է հարգվեն օրենքով պաշտպանված գաղտնիության մասին իրավական դրույթները, այդ թվում՝ քննության գաղտնիությունը:

40. Որոշ անդամ պետություններում ցանկացած հաղորդակցություն պետք է իրականացվի խոսնակի միջոցով, որը պարտադիր չէ, որ լինի դատախազ, կամ պետք է իրականացվի մասնագիտացված մամուլի գրասենյակի միջոցով: Այլ անդամ պետություններում տեղեկությունները պետք է թույլատրվեն կամ փոխանցվեն դատախազության կամ դատախազական ծառայության ղեկավարի կողմից: Դատախազական ծառայությունից դուրս ելող հաղորդակցություններն ընդհանուր առմամբ կարող են զերծ լինել գործունեությունն անձնականացված ձեռով ներկայացնելու վտանգից եւ կարող են նվազագույնի հասցնել անձնական քննադատության ռիսկերը:

41. Դատախազները կարող են պրոակտիվ մոտեցում ցուցաբերել լրատվության միջոցների պահանջներին. անհրաժեշտության դեպքում նրանք կարող են ստանձնել արդարադատությանը վերաբերող ընդհանուր հարցերի կամ բացառիկ դեպքերում, եթե կեղծ տեղեկությունները դարձել են հանրային կարծիքի մաս՝ այդ կեղծ տեղեկությունները շտկելու վերաբերյալ հանրությանը լրատվության միջոցներով տեղեկացնելու նախաձեռնություն¹⁴:

42. Իր գործառնություններն արդար, անաչառ, օբյեկտիվ եւ արդյունավետ իրականացնելու համար դատախազական ծառայությունը կարող է նպատակահարմար համարել լրատվության միջոցներին մամուլի հաղորդագրություն, ճեպագրույց կամ այլ հաղորդագրություն հրապարակելը, ինչպիսիք են մամուլի ասուլիսների անցկացումը, հարցազրույցներ տալը եւ (կամ) սեմինարներին եւ կլոր սեղան քննարկումներին մասնակցելը: Տեղեկատվական նոր տեխնոլոգիաները կարող են լայնորեն կիրառվել հանրությանը դատախազական գործունեության եւ այլ գործողությունների մասին պատշաճ եւ ժամանակին տեղեկացնելու համար՝ պետությունում օրենքն ու կարգուկանոնը պահպանելու նպատակով¹⁵: Այս առումով դատախազական ծառայություններին եւ դատախազություններին խորհուրդ է տրվում պատշաճ կերպով պահպանել սեփական ինտերնետային կայքերը:

43. Դատախազական ծառայությունը անհրաժեշտության դեպքում կարող է համագործակցել հատկապես ոստիկանության կամ համապատասխան այլ մարմինների հետ ցանկացած մամուլի հաղորդագրություն, ճեպագրույց կամ նման այլ հաղորդագրություն պատրաստելու հարցով: Սա կարող է նպաստել տարբեր ծառայությունների ջանքերի համակարգման գործընթացը մատնանշելուն, կեղծ տեղեկությունների տարածումից խուսափելուն եւ դա կանխարգելելուն, ինչպես նաեւ հասարակության համար առանձնապես ծանր հանցագործությունների բացասական հետեւանքները կանխելուն: Այդ համագործակցությունը պետք է արտացոլի Rec(2000)19 առաջարկության 22-րդ եւ 23-րդ կետերում ամրագրված ընդհանուր սկզբունքները:

44. Դատախազները պետք է ձեռնպահ մնան այնպիսի կարծիքներ արտահայտելուց կամ տեղեկություններ բացահայտելուց, որոնք հակասում են լավ հաղորդակցության հիմնարար սկզբունքներին: Նրանք միշտ պետք է հաղորդակցվեն անկախ եւ օբյեկտիվորեն՝ խուսափելով անձանց կամ իրադարձությունների վերաբերյալ անձնական կարծիքներ կամ գնահատող դատողություններ արտահայտելուց:

45. Երբ որեւէ կոնկրետ դատախազ լրատվության միջոցներով անարդար հարձակման է ենթարկվում, նա ունի վիճարկվող տեղեկությունները հերքելու կամ իրավական պաշտպանության այլ միջոցներ ստանալու իրավունք՝ ազգային օրենսդրության համաձայն: Այնուամենայնիվ, նման դեպքերում, ինչպես նաեւ այն դեպքում, երբ կեղծ տեղեկություններ են տարածվում այն վարույթում ներգրավված անձանց կամ իրադարձությունների մասին, որի քննությամբ նա զբաղվում է, նախընտրելի է, որ ցանկացած արձագանք լինի դատախազության ղեկավարի կամ խոսնակի կողմից, իսկ շատ դեպքերում՝ Գլխավոր դատախազի կամ ծառայության պատասխանատու բարձրագույն մարմնի կամ պետական բարձրագույն մարմնի կողմից: Նման ինստիտուցիոնալ արձագանքը նվազագույնի է հասցնում տվյալ դատախազի կողմից յուրաքանչյուր անձի համար երաշխավորված պատասխանի իրավունքից օգտվելու անհրաժեշտությունը եւ կոնֆլիկտի չափից դուրս «անձնավորման» ռիսկը:

46. Համարվում է, որ որոշ անդամ պետություններում կարող են լինել իրավական կամ գործնական այնպիսի խնդիրներ, որոնք պետք է հաշվի առնվեն քրեական գործերով կայացված որոշումների մասին այն անձանց տեղեկացնելու դեպքում, որոնց դատախազների այդ որոշումներն անդրադառնում են: Այնուամենայնիվ, առաջարկվում է, որ դատախազները ձգտեն ապահովել հնարավորության դեպքում, եւ (կամ) երբ գործնականում հնարավոր է, որ այն անձինք, որոնց իրենց որոշումներն անդրադառնում են, այդ որոշումների մասին տեղեկացված լինեն նախքան այդ որոշման

¹⁴ Տե՛ս, օրինակ, «Բույգե տելեկոմ» ընկերությունն ընդդեմ Ֆրանսիայի [Société Bouygues Telecom v. France (որոշում) թիվ 2324/08, 2012 թվականի մայիսի 13:

¹⁵ Դատարանն ընդունել է, որ մամուլի հաղորդագրությունները, նույնիսկ երբ դրանք հրապարակվել են Դատախազության ինտերնետային կայքում, կարող են ծառայել մեղադրական եզրակացությունը դատարան ներկայացնելու մասին հանրությանը տեղեկացնելու նպատակին (Շուվալովն ընդդեմ Էստոնիայի [Shuvalov v. Estonia], թիվ 39820/08 եւ 14942/09, § 79, 2012 թվականի մայիսի 29):

մասին լրատվության միջոցներին ցանկացած կերպով հաղորդելը:

IV. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

i. Անդամ պետությունները կամ դատախազական ծառայությունները պետք է ներդնեն հաղորդակցման քաղաքականություն՝ նպատակ ունենալով ապահովել, որ լրատվության միջոցներին հասանելի լինեն դատախազական ծառայությունների աշխատանքի մասին հանրությանը տեղեկացնելու համար անհրաժեշտ համապատասխան տեղեկությունները: Դատախազների էթիկայի կանոնագրքերում կարող են ներառվել նաև լրատվության միջոցների հետ նրանց հարաբերությունների վերաբերյալ ուղեցույցներ: Յուրաքանչյուր անդամ պետության դատախազական ծառայության խնդիրն է դիտարկել, թե որքանով եւ ինչպես լավագույնս հաղորդակցվի լրատվության միջոցների հետ՝ հիմք ընդունելով իր կարգավիճակը, օրենսդրությունը եւ ավանդույթները:

ii. Դատախազների եւ լրատվության միջոցների միջեւ հաղորդակցությամբ պետք է հարգվեն հետեւյալ սկզբունքները՝ արտահայտվելու եւ մամուլի ազատություն, գաղտնիության պարտականություն, տեղեկություններ ստանալու իրավունք, թափանցիկության սկզբունք, անձնական կյանքի եւ արժանապատվության իրավունք, ինչպես նաև քննության գաղտնիություն, անմեղության կանխավարկած, կողմերի իրավահավասարություն, պաշտպանության եւ արդար դատաքննության իրավունքներ:

iii. Լրատվության բոլոր միջոցների հետ դատախազների հարաբերությունները պետք է կառուցվեն փոխադարձ հարգանքի, վստահության, պատասխանատվության, հավասար վերաբերմունքի եւ դատական որոշումների նկատմամբ հարգանքի հիման վրա:

iv. Լրատվության միջոցների հետ իրենց հարաբերություններում դատախազական ծառայությունները պետք է որդեգրեն թե՛ փոխազդու մոտեցում՝ լրատվության միջոցների հարցումներին արձագանքելով, եւ թե՛ գործուն [պրոակտիվ] մոտեցում՝ լրատվության միջոցներին դատական որոշման մասին իրազեկելու գործընթաց նախաձեռնելով:

v. Կարելի է քննարկել լրատվության միջոցների հետ հանրային մեղադրողների կապերը մամուլի խոսնակներին կամ այն դատախազներին վերապահելու հարցը, որոնք մասնագիտացած են հանրային կապերի ոլորտում:

vi. Առաջարկվում է, որ դատախազները ձգտեն ապահովել հնարավորության դեպքում, եւ (կամ) երբ գործնականում հնարավոր է, որ քրեական գործերով կայացված իրենց որոշումների մասին այն անձինք, որոնց այդ որոշումներն անդրադառնում են, տեղեկացված լինեն նախքան այդ որոշման մասին լրատվության միջոցներին ցանկացած կերպով հաղորդելը:

vii. Այն դեպքում, երբ դատախազները լրատվության միջոցների հետ ունեն անմիջական հարաբերություններ, համապատասխան տեղեկություններ ապահովելու համար անհրաժեշտության դեպքում հաղորդակցության ոլորտում պետք է վերապատրաստում անցկացվի: Այս վերապատրաստումը կարող է անցկացվել փորձագետների եւ լրագրողների հետ համատեղ կամ նրանց աջակցությամբ:

viii. Դատախազական ծառայությունից դուրս եկող հաղորդակցություններն ընդհանուր առմամբ կարող են գերծ լինել գործունեությունն անձնականացված ձեւով ներկայացնելու վտանգից եւ կարող են նվազագույնի հասցնել անձնական քննադատության ռիսկերը:

ix. Դատախազների տրամադրության տակ եղած իրավական միջոցներից բացի՝ դատախազներին վերաբերող ոչ ճիշտ տեղեկություններին կամ դատախազների դեմ մամուլի անարդար քարոզարշավին ցանկացած արձագանք նախընտրելի է, որ լինի դատախազության ղեկավարի կամ խոսնակի, իսկ շատ դեպքերում՝ Գլխավոր դատախազի կամ ծառայության պատասխանատու բարձրագույն մարմնի կամ պետական բարձրագույն մարմնի կողմից:

x. Առաջարկվում է օգտագործել նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ, ներառյալ՝ դատախազական ծառայությունների եւ դատախազությունների կայքերը, որպեսզի հանրությունը ժամանակին տեղեկացվի դատախազական գործունեության մասին:

xi. Դատախազներն անհրաժեշտության դեպքում կարող են համագործակցել ոստիկանության եւ համապատասխան այլ մարմինների հետ՝ լրատվության միջոցներին հաղորդվող տեղեկություններն ուսումնասիրելու եւ դրանք տարածելու համար:

Կարծիք թիվ 9 (2014)

Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի՝
ուղղված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին

Դատախազներին առնչվող եվրոպական նորմերն ու սկզբունքները

Սույն կարծիքը ներառում է՝

- «Հռոմի կանոնադրություն» վերտառությամբ կանոնադրություն,
- սույն կանոնադրության մեջ շարադրված սկզբունքների վերաբերյալ մանրամասն Բացատրական ծանոթագրություն:

ՀՈՈՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԳԽՄ), որին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն խնդրել էր տրամադրել տեղեկատվական փաստաթուղթ հանրային մեղադրողներին առնչվող եվրոպական նորմերի եւ սկզբունքների վերաբերյալ, համաձայնել է հետեւյալի շուրջ.

I. Բոլոր իրավական համակարգերում հանրային մեղադրողները (այսուհետ՝ դատախազներ) նպաստում են օրենքի գերակայության ապահովմանը, հատկապես՝ բոլոր գործերով եւ իրենց իրավասության շրջանակներում գտնվող վարույթի բոլոր փուլերում արդարադատության արդար, անաչառ եւ արդյունավետ իրականացմամբ:

II. Դատախազները գործում են հասարակության անուկից եւ ելնելով հանրային շահից, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով ամրագրված մարդու իրավունքներն ու ազատությունները հարգելու եւ պաշտպանելու համար:

III. Դատախազների դերն ու գործառնություններն ինչպես քրեական արդարադատության ոլորտի շրջանակում, այնպես էլ դրանից դուրս, պետք է սահմանվեն օրենքով՝ հնարավորինս բարձր մակարդակով, եւ իրականացվեն Եվրոպայի խորհրդի սկզբունքների եւ արժեքների խստագույն պահպանմամբ:

IV. Դատախազական ծառայությունների անկախությունն ու ինքնավարությունը դատական համակարգի անկախության անբաժանելի արդյունքն են: Հետեւաբար հարկավոր է խրախուսել դատախազական ծառայությունների անկախության եւ արդյունավետ ինքնուրույնության ընդլայնմանն ուղղված ընդհանուր միտումը:

V. Դատախազները պետք է ինքնուրույն գործեն իրենց որոշումների կայացման հարցում եւ իրենց պարտականությունները պետք է իրականացնեն առանց արտաքին ճնշումների եւ միջամտության՝ հաշվի առնելով լիազորությունների տարանջատման եւ հաշվետվողականության սկզբունքները:

VI. Դատախազները պետք է պահպանեն Էթիկայի եւ մասնագիտական ամենաբարձր չափանիշները՝ մշտապես դրսևորելով անաչառ եւ օբյեկտիվ վարքագիծ: Այսպիսով, նրանք պետք է ձգտեն լինել անկախ եւ անաչառ եւ ընկալվել այդպիսին, պետք է ձեռնպահ մնան անաչառության սկզբունքի հետ անհամատեղելի քաղաքական գործունեությունից եւ չպետք է գործեն այն դեպքերում, երբ իրենց անձնական շահերը կամ գործով շահագրգիռ անձանց հետ հարաբերությունները կարող են խոչընդոտել նրանց լիակատար անաչառությունը:

VII. Դատախազների աշխատանքի թափանցիկությունն Էական նշանակություն ունի ժամանակակից ժողովրդավարության մեջ: Պետք է ընդունվեն եւ հրապարակվեն միջազգային չափանիշների վրա հիմնված մասնագիտական Էթիկայի եւ վարքագծի կանոններ:

VIII. Իրենց պարտավորությունները կատարելիս դատախազները պետք է հարգեն անմեղության կանխավարկածի սկզբունքը, արդար դատաքննության իրավունքը, կողմերի իրավահավասարության, լիազորությունների տարանջատման սկզբունքը, դատարանների անկախությունը եւ վերջնական դատական որոշումների պարտադիր ուժի սկզբունքը: Նրանք պետք է կենտրոնանան հասարակությանը ծառայելու վրա եւ հատուկ ուշադրություն դարձնեն խոցելի անձանց, մասնավորապես՝ երեխաների եւ տուժողների վիճակին:

IX. Դատախազներն ունեն ազատ արտահայտվելու եւ միավորումներ կազմելու իրավունք: Դատախազների եւ լրատվության միջոցների միջեւ հաղորդակցության ընթացքում պետք է պահպանվեն հետեւյալ սկզբունքները՝ անմեղության կանխավարկածը, անձնական կյանքի եւ արժանապատվության իրավունքը, տեղեկատվության եւ մամուլի ազատության իրավունքը, արդար դատաքննության իրավունքը, պաշտպանության իրավունքը, քննությունների ամբողջականությունը, արդյունավետությունը եւ գաղտնիությունը, ինչպես նաեւ թափանցիկության սկզբունքը:

X. Դատախազները պետք է օգտվեն ոչ թե ընդհանուր անձեռնմխելիությունից, այլ գործառնության անձեռնմխելիությունից՝ իրենց պարտականությունների կատարման ընթացքում բարեխղճորեն կատարված գործողությունների համար:

XI. Դատախազները եւ ըստ անհրաժեշտության՝ նրանց ընտանիքներն իրավունք ունեն

պաշտպանությունն ստանալու պետության կողմից, եթե իրենց գործառույթների իրականացման արդյունքում վտանգվում է նրանց անձնական անվտանգությունը:

XII. Դատախազների աշխատանքի ընդունման ու կարիերայի, այդ թվում՝ առաջնադասման, փոխադրման, կարգապահական պատասխանատվության եւ աշխատանքից ազատման հարցերը պետք է կարգավորվեն օրենքով եւ ղեկավարվեն թափանցիկ ու օբյեկտիվ չափանիշներով՝ ցանկացած խտրականությունն բացառող եւ անաչառ վերանայման հնարավորությունն ընձեռող անաչառ ընթացակարգերի համաձայն:

XIII. Մասնագիտական հմտությունների եւ ազնվության բարձր մակարդակն արդյունավետ դատախազական ծառայության եւ այդ ծառայության նկատմամբ հանրային վստահության նախապայման է: Յետեւաբար դատախազները պետք է համապատասխան կրթություն ստանան եւ վերապատրաստումներ անցնեն՝ հաշվի առնելով իրենց մասնագիտացումը:

XIV. Դատախազական ծառայությունների մեծ մասի կազմակերպումը հիմնված է աստիճանակարգային կառուցվածքի վրա: Աստիճանակարգության տարբեր մակարդակների միջեւ հարաբերությունները պետք է կարգավորվեն հստակ, ոչ երկիմաստ եւ լավ հավասարակշռված կանոնակարգերով: Գործերի բաշխումը եւ վերաբաշխումը պետք է իրականացվեն անաչառության պահանջներին համապատասխան:

XV. Դատախազները պետք է քրեական հետապնդում իրականացնելու վերաբերյալ որոշում կայացնեն միայն հիմնավոր ապացույցների հիման վրա, որոնք ողջամտորեն համարվում են հուսալի եւ թույլատրելի: Դատախազները պետք է հրաժարվեն այն ապացույցների օգտագործումից, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, ձեռք են բերվել անօրինական մեթոդների կիրառմամբ, մասնավորապես, եթե դրանք մարդու իրավունքների կոպիտ խախտում են: Նրանք պետք է ձգտեն ապահովել համապատասխան պատժամիջոցների կիրառումն այն անձանց նկատմամբ, որոնք պատասխանատու են նման մեթոդների կիրառման կամ օրենքի այլ խախտումների համար:

XVI. Քրեական հետապնդումները պետք է իրականացվեն վճռական, սակայն արդարացի ձեւով: Դատախազները նպաստում են դատարանների կողմից արդար վճիռների կայացմանը եւ պետք է նպաստեն արդարադատության համակարգի արդյունավետ, օպերատիվ եւ որակյալ գործունեությանը:

XVII. Քրեական հետապնդման ընթացքում եւ դատարանում հայեցողական որոշումներ կայացնելիս հետեւողականության եւ արդարության հասնելու համար պետք է հրապարակվեն հստակ ուղեցույցներ, մասնավորապես՝ քրեական հետապնդում իրականացնելու կամ չիրականացնելու վերաբերյալ որոշումների առնչությամբ: Ըստ անհրաժեշտության եւ օրենքին համապատասխան՝ դատախազները պետք է դիտարկեն քրեական հետապնդման այլընտրանքային տարբերակները:

XVIII. Դատախազները պետք է իրենց տրամադրության տակ ունենան անհրաժեշտ եւ համապատասխան միջոցներ, ինչպես նաեւ կիրառեն ժամանակակից տեխնոլոգիաներ՝ իրենց առաքելությունն արդյունավետ իրականացնելու համար, ինչն առանցքային նշանակություն ունի օրենքի գերակայության համար:

XIX. Դատախազական ծառայությունները պետք է հնարավորություն ունենան գնահատելու իրենց կարիքները, համաձայնեցնելու իրենց բյուջեները եւ որոշելու, թե հատկացված միջոցներն ինչպես օգտագործվեն թափանցիկ ձեւով՝ իրենց նպատակներին արագ եւ արդյունավետ կերպով հասնելու համար: Եթե ռեսուրսների կառավարումը վերապահված է դատախազական ծառայությանը, ապա այն պետք է արդյունավետորեն եւ թափանցիկ ձեւով կիրառի կառավարման ժամանակակից մեթոդները, ինչպես նաեւ անցնի համապատասխան ուսուցում:

XX. Դատախազական ծառայության արդյունավետության համար կարեւոր է փոխադարձ եւ արդար համագործակցությունն ազգային եւ միջազգային մակարդակով տարբեր դատախազությունների, ինչպես նաեւ նույն դատախազության տարբեր դատախազների միջեւ: Դատախազները պետք է իրենց իրավագործության շրջանակում գտնվող աջակցության վերաբերյալ միջազգային հարցումների նկատմամբ ցուցաբերեն նույն բարեխիղճ վերաբերմունքը, ինչ ազգային մակարդակով իրենց աշխատանքի դեպքում, եւ իրենց տրամադրության տակ պետք է ունենան անհրաժեշտ գործիքներ, այդ թվում պետք է անցնեն վերապատրաստումներ՝ իրական եւ արդյունավետ միջազգային դատական համագործակցությունը խթանելու եւ պահպանելու համար:

**Հաստատվել է ԵՂԳԽՍ-ի կողմից Հոռոմում՝
2014 թվականի դեկտեմբերի 17-ին**

Բացատրական ծանոթագրություն

Ներածություն

1. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Rec(2000)19 առաջարկությունը 14 տարի անց շարունակում է կարեւոր ուղենիշ լինել: Միեւնույն ժամանակ 2000 թվականից ի վեր եվրոպական մակարդակով կարեւորվել են դատախազության գործունեության հետագա հայեցակետերը, եւ ակնհայտ է դարձել համապատասխան սկզբունքների թարմացման եւ սինթեզի անհրաժեշտությունը:

2. Այս համատեքստում 2005 թվականին Նախարարների կոմիտեի կողմից ստեղծված Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԳԽ) նպատակ է ունեցել բացահայտելու դատախազության կարգավիճակի, գործառույթների եւ գործունեության հետ կապված ամենանշանակալի միտումները: Այս շրջանակում 2014 թվականի հունվարին՝ Նախարարների կոմիտեն հանձնարարել է ԵԴԳԽ-ին ընդունել տեղեկատվական փաստաթուղթ՝ դատախազներին վերաբերող եվրոպական նորմերի եւ սկզբունքների վերաբերյալ: Այս առաջադրանքը կատարելու համար ԵԴԳԽ-ն հաշվի է առել սույն Ծանոթագրության հավելվածում թվարկվող փաստաթղթերը:

3. Անդամ պետությունների իրավական համակարգերը բնութագրվում են մեծ բազմազանությամբ, մասնավորապես՝ դատախազների գործառույթների եւ դերերի առումով: Այնուամենայնիվ, Նրանք միշտ պարտավոր են հարգել Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով ամրագրված մարդու իրավունքներն ու ազատությունները:

4. Այս փաստաթուղթը նախատեսված է պետական կառույցների եւ դատական, գործադիր ու օրենսդիր իշխանությունների, ինչպես նաեւ մասնագետների ու հետազոտողների համար:

1. Դատախազի սահմանումը

5. Հանրային մեղադրողները (այսուհետ՝ դատախազներ) պետական մարմիններ են, որոնք, հանրության անունից եւ հանրային շահերից էլնելով, ապահովում են օրենքի կիրառումն այնտեղ, որտեղ օրենքի խախտումը քրեական պատիժ է ենթադրում հաշվի առնելով թե՛ անհատի իրավունքները, թե՛ քրեական արդարադատության համակարգի անհրաժեշտ արդյունավետությունը²: Դատախազների առաքելությունը կարող է ներառել նաեւ լիազորություններ քրեական արդարադատության համակարգից դուրս, եթե ազգային իրավական համակարգով դա նախատեսված է³:

2. Դատախազների դերը

6. Բոլոր դեպքերում եւ դատական բոլոր փուլերում դատախազները նպաստում են արդարադատության արդար, անաչառ եւ արդյունավետ իրականացմամբ օրենքի գերակայության եւ հասարակական կարգի ապահովման երաշխավորմանը⁴:

7. Կարեւոր է ապահովել դատախազների անկախությունն ու արդյունավետ ինքնուրույնությունը եւ համապատասխան երաշխիքներ սահմանել: Նրանք պարտավոր են գործել արդար, անաչառ եւ օբյեկտիվորեն: Քրեական գործերի դեպքում դատախազները պետք է հաշվի առնեն նաեւ դատավարության լուրջ հետեւանքներն անձի համար, Նույնիսկ այն հետեւանքները, որոնք հանգեցնում են արդարացման: Նրանք պետք է ձգտեն նաեւ նպաստել, որ արդարադատության համակարգը գործի հնարավորինս արագ եւ արդյունավետորեն, ինչպես նաեւ պետք է օգնեն դատարաններին արդար դատավճիռներ կայացնելու հարցում⁵:

8. Այն համակարգը, որտեղ եւ՛ դատախազը, եւ՛ դատավորը գործում են ազնվության եւ անաչառության ամենաբարձր չափանիշներով, մարդու իրավունքների համար ավելի մեծ պաշտպանություն է ապահովում, քան միայն դատավորի՝ նշված հատկանիշների վրա հիմնված համակարգը⁶:

¹ Նախարարների տեղակալների 1189-րդ ժողովը, 2014 թվականի հունվարի 22:

² Տե՛ս «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec(2000) 19 առաջարկությունը, 2000 թվականի հոկտեմբերի 6, 1-ին հոդված:

³ Տե՛ս «Քրեական արդարադատության համակարգից դուրս դատախազության դերի մասին» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec(2012) 11 առաջարկությունը, 2012 թվականի սեպտեմբերի 19, 2-րդ հոդված:

⁴ Կայստուն ընդդեմ Թուրքիայի, թիվ 64119/00 եւ 76292/01, 13/02/2009, 91-րդ պարբերություն:

⁵ Տե՛ս «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec(2000) 19 առաջարկությունը, 2000 թվականի հոկտեմբերի 6, 24-րդ հոդված եւ Եվրոպայի գլխավոր դատախազների համաժողով, 6-րդ նստաշրջան, Հանրային մեղադրողների էթիկայի եւ վարքագծի եվրոպական ուղեցույց, Բուդապեշտի ուղեցույց, CCPE(2005)05, 2005 թվականի մայիսի 31, III կետ: Տե՛ս նաեւ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, Ժողովրդավարական հասարակությունում դատավորների եւ դատախազների միջեւ հարաբերությունների վերաբերյալ թիվ 4(2009) կարծիք, 2009 թվականի դեկտեմբերի 8, Բացատրական ծանոթագրություն, 11-րդ հոդված: Տե՛ս նաեւ Վենետիկի հանձնաժողով, «Դատական համակարգի անկախությանը վերաբերող եվրոպական ստանդարտների վերաբերյալ զեկույց, Մաս II. Դատախազական ծառայությունը», CDL-AD(2010)040, 2011 թվականի հունվարի 3, 16-րդ հոդված:

⁶ Վենետիկի հանձնաժողով, «Դատական համակարգի անկախությանը վերաբերող եվրոպական ստանդարտների վերաբերյալ

2.1. Գործառույթները քրեական վարույթի շրջանակներում

9. Դատախազները կարելու դեր են խաղում օրենքի գերակայության ապահովման եւ քրեական արդարադատության համակարգերի պատշաճ գործունեության հարցում:

10. Դատախազները որոշում են՝ քրեական հետապնդումը նախաձեռնել կամ շարունակել, թե՛ ոչ, քրեական հետապնդումն իրականացնում են օրենքով ստեղծված անկախ եւ անաչառ դատարանում եւ որոշում են՝ այդ դատարանի որոշումները բողոքարկել, թե՛ ոչ:

11. Զրեական արդարադատության որոշ համակարգերում դատախազներն ունեն նաեւ այլ գործառույթներ, ինչպիսիք են հանցավորության դեմ պայքարի ազգային քաղաքականության մշակումն ու իրականացումը (ըստ անհրաժեշտության դա հարմարեցնելով տարածաշրջանային եւ տեղական հանգամանքներին), քննության իրականացումը, ուղղորդումը կամ դրա նկատմամբ վերահսկողության իրականացումը, տուժողներին արդյունավետ օգնության ապահովումը, հետապնդման այլընտրանքային տարբերակների մասին որոշում կայացնելը կամ դատարանի որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը⁷:

2.1.1. Զրեական հետապնդումները կարգավորող սկզբունքները

12. Զրեական հետապնդումների համար որպես հիմք որոշ անդամ պետությունների իրավական համակարգերով նախատեսվում է «օրինականության» սկզբունքը: Այլ անդամ պետությունների իրավական համակարգերով նախատեսվում է «հայեցողության» սկզբունքը կամ «հնարավորության սկզբունքը»:

13. Զրեական հետապնդման ընթացքում եւ դատարանում հայեցողական որոշումներ կայացնելիս հետեւողականության եւ արդարության հասնելու համար պետք է հրապարակվեն հստակ ուղեցույցներ, մասնավորապես՝ քրեական հետապնդում իրականացնելու կամ չիրականացնելու վերաբերյալ որոշումների առնչությամբ⁸: Եթե անգամ համակարգով նախատեսված չէ, որ դատախազները կարող են հայեցողական որոշումներ կայացնել, նրանց կողմից ընդունված որոշումները պետք է հիմնված լինեն ընդհանուր ուղեցույցների վրա:

14. Դատախազները պետք է ձգտեն ապահովել, որ մինչեւ քրեական հետապնդման առնչությամբ որոշում կայացնելը քննվեն գործի հանգամանքները, եւ իրականացվեն անհրաժեշտ ու ողջամիտ բոլոր քննությունները, եւ դրան ընթացք տրվի միայն այն դեպքում, երբ գործի հիմքում ընկած են հուսալի եւ թույլատրելի համարվող ապացույցներ: Զրեական հետապնդումները պետք է իրականացվեն վճռական, սակայն արդարացի ձեւով եւ դուրս չգան այն շրջանակից, որն ապացույցները մատնացույց է անում⁹:

15. Այն դեպքում, երբ հանցագործության քննությանը մասնակցությունը կամ ոստիկանության կամ այլ քննչական մարմինների նկատմամբ հսկողությունը նրանց իրավասության շրջանակում է, դատախազները դա պետք է անեն օբյեկտիվորեն, անաչառ եւ պրոֆեսիոնալ ձեւով եւ ձգտեն ապահովել քննչական ծառայությունների կողմից իրավական սկզբունքների եւ մարդու հիմնարար իրավունքների նկատմամբ հարգանքը¹⁰:

16. Դատախազները պետք է հաշվի առնեն վկաների շահերը, եւ եթե դա իրենց իրավասության շրջանակում է, ձեռնարկեն կամ խորհուրդեն նրանց կյանքի, անվտանգության եւ գաղտնիության պաշտպանությանն ուղղված միջոցներ կամ երաշխավորեն այդպիսի միջոցների ձեռնարկումը:

17. Դատախազները պետք է հաշվի առնեն տուժողների տեսակետներն ու մտահոգությունները, երբ հարցը վերաբերում է նրանց անձնական շահերին, եւ ձեռնարկեն գործողություններ կամ խթանեն այդպիսի գործողությունների ձեռնարկումը՝ ապահովելու համար տուժողների կողմից ինչպես իրենց իրավունքների, այնպես էլ գործընթացի զարգացումների վերաբերյալ տեղեկացվածությունը¹¹:

գեկույց. Մաս II. Դատախազական ծառայությունը», CDL-AD(2010)040, 2011 թվականի հունվարի 3, 19-րդ հոդված:

⁷ Տե՛ս «Զրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec(2000) 19 առաջարկությունը, 2000 թվականի հոկտեմբերի 6, 3-րդ հոդված: Տե՛ս նաեւ Դատախազների դերի վերաբերյալ ուղեցույց՝ ընդունված 1990 թվականի օգոստոսի 27-ից սեպտեմբերի 7-ը Յավանայում կայացած՝ Հանցագործությունների կանխարգելմանը եւ հանցագործություն կատարած անձանց հետ վարվելակերպին նվիրված Միավորված ազգերի կազմակերպության ութերորդ համաժողովում, 11-րդ հոդված:

⁸ Տե՛ս Դատախազների դերի վերաբերյալ ուղեցույց՝ ընդունված 1990 թվականի օգոստոսի 27-ից սեպտեմբերի 7-ը Յավանայում կայացած՝ Հանցագործությունների կանխարգելմանը եւ հանցագործություն կատարած անձանց հետ վարվելակերպին նվիրված Միավորված ազգերի կազմակերպության ութերորդ համաժողովում, 17-րդ հոդված:

⁹ Եվրոպայի գլխավոր դատախազների համաժողով, 6-րդ նստաշրջան, Հանրային մեղադրողների էթիկայի եւ վարքագծի եվրոպական ուղեցույց. Բողոքային ուղեցույց, CPGE(2005)05, 2005 թվականի մայիսի 31, III կետ: Դատախազների միջազգային ասոցիացիա, «Դատախազների մասնագիտական պատասխանատվության չափանիշները եւ հիմնական պարտականություններն ու իրավունքները», 1999 թվականի ապրիլի 23, 4.2 կետ: Տե՛ս «Զրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec(2000) 19 առաջարկությունը, 2000 թվականի հոկտեմբերի 6, 27-րդ հոդված:

¹⁰ Դատախազների միջազգային ասոցիացիա, «Դատախազների մասնագիտական պատասխանատվության չափանիշները եւ հիմնական պարտականություններն ու իրավունքները», 1999 թվականի ապրիլի 23, 4.2 կետ:

¹¹ Տե՛ս «Զրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec(2000) 19 առաջարկությունը, 2000 թվականի հոկտեմբերի 6, 32-րդ եւ 33-րդ հոդվածներ: Տե՛ս նաեւ՝ Դատախազների միջազգային ասոցիացիա, «Դատախազների մասնագիտական պատասխանատվության չափանիշները եւ հիմնական պարտականություններն ու իրավունքները», 1999 թվականի ապրիլի 23, 4.3 կետ. Եվրոպայի գլխավոր դատախազների համաժողով, 6-

18. Դատախազները պետք է հանգամանորեն դիտարկեն այն հարցը՝ արդյոք պետք է քրեական հետապնդում իրականացնել, թե՛ ոչ, հարգեն տուժողների, վկաների եւ կասկածյալների իրավունքները եւ վերանայելու համար բողոք ներկայացնելու իրավունք ընձեռեն այն անձանց, որոնց իրենց որոշումները վերաբերում են¹²:

19. Դատախազները պետք է հարգեն քրեական հետապնդման եւ պաշտպանության միջեւ կողմերի իրավահավասարության, անմեղության կանխավարկածի սկզբունքը, արդար դատաքննության իրավունքը, դատարանների անկախությունը, լիազորությունների տարանջատման եւ վերջնական դատական որոշումների պարտադիր ուժի սկզբունքները:

20. Դատախազը պետք է բոլոր արժանահավատ ապացույցները ներկայացնի դատարան եւ բոլոր համապատասխան ապացույցները բացահայտի մեղադրյալին: Հնարավոր է լինեն իրավիճակներ, երբ քրեական հետապնդումը պետք է դադարեցնել¹³:

21. Դատախազները պետք է հրաժարվեն այն ապացույցների օգտագործումից, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, ձեռք են բերվել անօրինական մեթոդների կիրառմամբ, մասնավորապես, եթե դրանք մարդու իրավունքների կոպիտ խախտումներ են: Նրանք պետք է ձգտեն ապահովել համապատասխան պատժամիջոցների կիրառումն այն անձանց նկատմամբ, որոնք պատասխանատու են նման մեթոդների կիրառման կամ օրենքի այլ խախտումների համար¹⁴: Որոշ համակարգերում մարդու իրավունքների խախտումը բավարար է ապացույցները հերքելու համար, ընդ որում, պարտադիր չէ, որ դա լուրջ խախտում լինի:

2.2. Գործառույթները քրեական վարույթի շրջանակներից դուրս

22. Բազմաթիվ պետություններում դատախազները իրավասություններ ունեն նաեւ քրեաիրավական ոլորտից դուրս (ի թիվս այլնի [inter alia]՝ քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, վարչական, ընտրական իրավունքի, ինչպես նաեւ շրջակա միջավայրի, սոցիալական իրավունքների եւ խոցելի անձանց (ինչպիսիք են անչափահասները, հաշմանդամները եւ շատ ցածր եկամուտ ունեցող անձինք) իրավունքների պաշտպանության ոլորտները¹⁵):

23. Այդպիսի իրավասությունների առկայության դեպքում դատախազների առաքելությունը պետք է լինի ընդհանուր կամ հանրային շահի ներկայացումը, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանությունը եւ օրենքի գերակայության պահպանումը¹⁶: Նրանք պետք է նաեւ խստորեն հարգեն Եվրոպայի խորհրդի ժողովրդավարական սկզբունքներն ու արժեքները:

24. Այդ իրավասությունները պետք է իրականացվեն այնպես, որ՝

- պահպանեն պետական լիազորությունների արդյունավետ տարանջատումը.
- պահպանեն դատարանների անկախությունը եւ նրանց դերը մարդու իրավունքների պաշտպանության հարցում, կողմերի հավասարության, կողմերի իրավահավասարության եւ խտրականության բացառման սկզբունքները.
- հնարավորինս ճշգրիտ կարգավորվեն օրենքով, լինեն խիստ սահմանափակ, հստակ սահմանված եւ հրապարակված հստակ ուղեցույցներին համապատասխան՝ ցանկացած

որ նստաշրջան, *Հանրային մեղադրողների էթիկայի եւ վարքագծի եվրոպական ուղեցույց*, *Բուդապեշտի ուղեցույց*, CPGE(2005)05, 2005 թվականի մայիսի 31, III կետ. *Դատախազների դերի վերաբերյալ ուղեցույց*¹² ընդունված 1990 թվականի օգոստոսի 27-ից սեպտեմբերի 7-ը Հավանայում կայացած՝ Հանցագործությունների կանխարգելմանը եւ հանցագործություն կատարած անձանց հետ վարվելակերպին նվիրված Միավորված ազգերի կազմակերպության ութերորդ համաժողովում, 13-րդ պարբերություն. Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, *Ժողովրդավարական հասարակությունում դատավորների եւ դատախազների միջեւ հարաբերությունների վերաբերյալ* թիվ 4(2009) կարծիք, 2009 թվականի դեկտեմբերի 8, Բացատրական ծանոթագրություն, 12-րդ հոդված:

¹² Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, *Ժողովրդավարական հասարակությունում դատավորների եւ դատախազների միջեւ հարաբերությունների վերաբերյալ* թիվ 4(2009) կարծիք, 2009 թվականի դեկտեմբերի 8, Բացատրական ծանոթագրություն, 53-րդ եւ 54-րդ հոդվածներ: Տե՛ս նաեւ՝ Դատախազների միջազգային ասոցիացիա, *«Դատախազների մասնագիտական պատասխանատվության չափանիշները եւ հիմնական պարտականություններն ու իրավունքները»*, 1999 թվականի ապրիլի 23, 2.1 կետ: Տե՛ս *«Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին»* Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec(2000) 19 առաջարկությունը, 2000 թվականի հոկտեմբերի 6, 34-րդ հոդված:

¹³ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, *Ժողովրդավարական հասարակությունում դատավորների եւ դատախազների միջեւ հարաբերությունների վերաբերյալ* թիվ 4(2009) կարծիք, 2009 թվականի դեկտեմբերի 8, Բացատրական ծանոթագրություն, 55-րդ հոդված: Տե՛ս նաեւ Վենետիկի հանձնաժողով, *«Դատական համակարգի անկախությանը վերաբերող եվրոպական ստանդարտների վերաբերյալ գեկույց. Մաս II. Դատախազական ծառայությունը»*, CDL-AD(2010)040, 2011 թվականի հունվարի 3, 15-րդ հոդված:

¹⁴ Դատախազների միջազգային ասոցիացիա, *«Դատախազների մասնագիտական պատասխանատվության չափանիշները եւ հիմնական պարտականություններն ու իրավունքները»*, 1999 թվականի ապրիլի 23, 4.3 կետ:

¹⁵ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, *Քրեաիրավական ոլորտից դուրս դատախազական ծառայությունների դերի վերաբերյալ* թիվ 3(2008) կարծիք, 2008 թվականի հոկտեմբերի 21, 16-րդ եւ 19-րդ պարբերություններ: Տե՛ս նաեւ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, *Ժողովրդավարական հասարակությունում դատավորների եւ դատախազների միջեւ հարաբերությունների վերաբերյալ* թիվ 4(2009) կարծիք, 2009 թվականի դեկտեմբերի 8, Բացատրական ծանոթագրություն, 64-րդ պարբերություն: Տե՛ս նաեւ *Կորոյովլու ընդդեմ Ռուսաստանի* (թիվ 2), թիվ 5447/03, 4/10/2010, 33-34-րդ պարբերություններ, *Բատսանիան ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 3932/02, 14/09/2009, 27-րդ պարբերություն, *Մենչինսկայան ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 42454/02, 15/04/2009, 35-րդ պարբերություն:

¹⁶ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, *«Քրեական արդարադատության համակարգից դուրս դատախազության դերի մասին»* CM/Rec(2012)11 առաջարկություն, 2012 թվականի սեպտեմբերի 19, 2-րդ պարբերություն:

անորոշությունից խուսափելու համար¹⁷.

- ապահովեն դատախազական ծառայությունների աշխատանքներին ցանկացած անհարկի միջամտության բացառումը.

- հարգեն ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի՝ անկախ եւ անկողմնակալ դատարանի առջեւ իր շահերը պաշտպանելու նպատակով այդ գործընթացը նախաձեռնելու կամ որպես պատասխանող հանդես գալու իրավունքը, նույնիսկ այն դեպքերում, երբ հանրային մեղադրողը կողմ է կամ մտադիր է լինել կողմ¹⁸.

- չխախտեն դատարանի վերջնական որոշումների պարտադիր ուժ ունենալու սկզբունքը (res judicata)՝ միջազգային պարտավորություններով, այդ թվում՝ Դատարանի նախադեպային իրավունքով սահմանված որոշ բացառություններով.

- ապահովեն, որ գործին ներգրավված անձանց կամ կառույցների՝ դատախազների գործողությունների վերանայման վերաբերյալ բողոք ներկայացնելու հնարավորությունը հստակ սահմանված լինի.

- երաշխավորեն քաղաքացիական գործերով ներգրավված կամ շահագրգիռ կողմ հանդիսացող անձանց կամ հաստատությունների՝ դատախազների կիրառած միջոցների կամ պարտավորությունների չկատարման դեմ գործ հարուցելու իրավունքի ապահովումը:

25. Դատախազի ցանկացած գործողությունում, որն ազդում է մարդու իրավունքների եւ ազատությունների վրա, պետք է իրավասու դատարանների հսկողության տակ լինի¹⁹:

26. Եթե դատախազներն ունեն դատարանի կամ պետական կառավարման մարմնի որոշումը վիճարկելու լիազորություն, ապա նրանք պետք է դա անեն՝ օգտվելով բողոքարկելու կամ որոշումը վերանայելու համար բողոք ներկայացնելու իրավունքից: Կողմերի միջեւ մասնավոր դատավարության դեպքում, երբ դատարանի առջեւ պետք է պաշտպանվի կամ հաստատվի հանրային շահը, վերջնական խոսքը պատկանում է դատարանին²⁰:

27. Զրեական արդարադատության ոլորտից դուրս դատարանի գործունեությանը միջամտող դատախազը, մասնավորապես ներպետական օրենսդրությանը համապատասխան, պետք է՝

- ունենա վարույթի մյուս կողմերի հետ հավասար իրավունքներ եւ պարտականություններ.
- չթաքցնի քննարկվող հարցերի վերաբերյալ ապացույցները.
- չմասնակցի դատական նիստերին եւ չստեղծի դա անելու տպավորություն.
- դատարանի որոշումը բողոքարկելու իրավունք ունենալու դեպքում պետք է ունենա մյուս կողմերի հետ հավասար իրավունքներ եւ երբեք չփոխարինի բողոքարկման իր իրավունքը.
- իր լիազորություններն իրականացնի անկախ, թափանցիկ եւ օրենքի գերակայության սկզբունքին լիովին համապատասխան.

- միջամտի իրավաբանական անձանց գործերին այն դեպքերում, երբ ողջամիտ եւ օբյեկտիվ հիմքեր կան ենթադրելու, որ տվյալ մասնավոր անձը խախտում է իր իրավական պարտավորությունները, ներառյալ՝ մարդու իրավունքների միջազգային պայմանագրերի կիրառումից բխող պարտավորությունները:

- Զրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազների կողմից ընդունված համապատասխան որոշումները պետք է միշտ ուղեկցվեն գործով ներգրավված կամ շահագրգիռ անձանց կամ հաստատությունների համար հասանելի հիմնավորումներով:

2.3. Զրեական հետապնդման այլընտրանքները եւ պատժամիջոցները

28. Դատախազները, ըստ անհրաժեշտության եւ օրենքին համապատասխան, պետք է դիտարկեն ջրեական հետապնդման այլընտրանքներ²¹: Այդ այլընտրանքները կիրառելիս նրանք պետք է լիովին հարգեն կասկածյալների եւ տուժողների իրավունքներն ու օրինական շահերը եւ ապահովեն հանցանք կատարած անձի եւ տուժողի միջեւ միջնորդության եւ հաշտարարության հնարավորությունը²²: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել հանցանքի բնույթին եւ ծանրությանը, հասարակության պաշտպանությանը եւ հանցանք կատարած անձի բնութագրին ու կենսագրությանը:

¹⁷ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, «Զրեական արդարադատության համակարգից դուրս դատախազության դերի մասին» CM/Rec(2012)11 առաջարկություն, 2012 թվականի սեպտեմբերի 19, 3-րդ եւ 11-րդ պարբերություններ եւ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, «Զրեական արդարադատության համակարգից դուրս դատախազության դերի մասին» CM/Rec(2012)11 առաջարկություն, 2012 թվականի սեպտեմբերի 19, 9-րդ պարբերություն:

¹⁸ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, «Զրեական արդարադատության համակարգից դուրս դատախազության դերի մասին» CM/Rec(2012)11 առաջարկություն, 2012 թվականի սեպտեմբերի 19, 10-րդ պարբերություն:

¹⁹ Վենետիկի հանձնաժողով, «Դատական համակարգի անկախությանը վերաբերող եվրոպական ստանդարտների վերաբերյալ գեկույց. Մաս II. Դատախազական ծառայությունը», CDL-AD(2010)040, 2011 թվականի հունվարի 3, 73-րդ պարբերություն:

²⁰ Վենետիկի հանձնաժողով, «Դատական համակարգի անկախությանը վերաբերող եվրոպական ստանդարտների վերաբերյալ գեկույց. Մաս II. Դատախազական ծառայությունը», CDL-AD(2010)040, 2011 թվականի հունվարի 3, 77-րդ պարբերություն:

²¹ Տե՛ս ԵՊԳԽԵ-ի թիվ 2(2008) կարծիքը: Տե՛ս նաեւ «Նացվիշվիլին եւ Տոգոնիձեն ընդդեմ Վրաստանի» [Natsvlishvili and Togonidze v. Georgia] գործը, թիվ 9043/05, 2014 թվականի ապրիլի 29, 90-91-րդ պարբերություններ:

²² Տե՛ս Դատախազների դերի վերաբերյալ ուղեցույց՝ ընդունված 1990 թվականի օգոստոսի 27-ից սեպտեմբերի 7-ը Հավանայում կայացած՝ Հանցագործությունների կանխարգելմանը եւ հանցագործություն կատարած անձանց հետ վարվելակերպին նվիրված Միավորված ազգերի կազմակերպության ութերորդ համաժողովում, 18-րդ հոդված:

29. Դատախազների արդար, հետեւողական եւ արդյունավետ գործունեությունը խթանելու նպատակով համապատասխան պետական մարմիններին առաջարկվում է հրապարակել քրեական հետապնդման այլընտրանքների հետ կապված քրեական քաղաքականության արդյունավետ եւ արդար իրականացման հստակ կանոններ, ընդհանուր ուղեցույցներ եւ չափորոշիչներ:

30. Այլընտրանքային միջոցները երբեք չպետք է օգտագործվեն արդար դատաքննության կանոնները շրջանցելու համար՝ այլընտրանքային միջոց նշանակելով այն անձի նկատմամբ, որն անմեղ է, կամ որին մեղադրանք չի կարող առաջադրվել դատավարական այնպիսի խոչընդոտների պատճառով, ինչպիսիք են քրեական հետապնդման ժամկետները, կամ երբ կասկածներ կան իրավախախտում կատարած եւ հայտնաբերված անձի պատասխանատվության կամ հանցագործությամբ պատճառված վնասի չափի վերաբերյալ:

31. Նկատի ունենալով անչափահասների հետագա զարգացման վրա քրեական եւ այլ վարույթների հնարավոր վնասակար ազդեցությունը՝ դատախազները պետք է հնարավոր առավելագույն չափով եւ օրենքին համապատասխան փնտրեն հանցանք կատարած անչափահասների նկատմամբ հետապնդում իրականացնելու այլընտրանքներ, եթե այդ այլընտրանքներն իրապես ձեւավորում են կատարված հանցանքին դատական համակարգի կողմից տրված պատշաճ արձագանք՝ հաշվի առնելով տուժողների եւ հանրության շահերը եւ հետեւողական լինելով անչափահասների արդարադատության նպատակներին²³:

32. Դատախազները պետք է գործադրեն բոլոր ջանքերը՝ անչափահասների նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու միայն այնքանով, որքանով դա խիստ անհրաժեշտ է²⁴:

3. Դատախազների կարգավիճակը եւ վերջիններիս կողմից իրենց գործառույթներն իրականացնելիս նրանց տրամադրվող երաշխիքները

3.1. Դատախազների անկախությունը

33. Դատախազների անկախությունը, որն էական նշանակություն ունի օրենքի գերակայության համար, պետք է օրենքով երաշխավորվի հնարավորինս բարձր մակարդակով, դատավորների կարգավիճակին համանման եղանակով: Այն երկրներում, որտեղ դատախազությունը կառավարությունից անկախ է, պետությունը պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկի՝ երաշխավորելու, որ այդ անկախության բնույթը եւ շրջանակը սահմանվեն օրենքով²⁵: Այն երկրներում, որտեղ դատախազությունը կառավարության մաս է կազմում կամ ենթակա է դրան կամ ունի վերը նկարագրված կարգավիճակից տարբերվող կարգավիճակ, պետությունը պետք է ապահովի, որ իր դատախազության լիազորությունների բնույթը եւ շրջանակը նույնպես սահմանված լինեն օրենքով, իսկ կառավարությունն իր լիազորություններն իրականացնի թափանցիկ կերպով եւ միջազգային պայմանագրերին, ազգային օրենսդրությանը եւ իրավունքի ընդհանուր սկզբունքներին համապատասխան²⁶:

34. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Դատարան) հարկ է համարել ընդգծելու, որ «ժողովրդավարական հասարակության մեջ եւ՝ դատարանները, եւ՝ քննչական մարմինները պետք է գերծ մասն քաղաքական ճնշումներից»²⁷: Սրանից հետեւում է, որ դատախազները որոշումներ կայացնելիս պետք է լինեն ինքնուրույն եւ այլ կառույցների հետ համագործակցելիս պետք է իրենց համապատասխան պարտականությունները կատարեն՝ գերծ մասով արտաքին ճնշումներից կամ գործադիր իշխանության կամ խորհրդարանի միջամտություններից՝ հաշվի առնելով լիազորությունների տարանջատման եւ հաշվետվողականության սկզբունքները²⁸: Դատարանն անդրադարձել է նաեւ դատախազների անկախության հարցին այն համատեքստում, որը վերաբերում է «ընդհանուր երաշխիքներին, ինչպիսիք են դատախազների աստիճանակարգությունից վերջիններիս գործառական անկախությունն ապահովող երաշխիքները եւ դատախազական ծառայության գործողությունների նկատմամբ դատական հսկողությունը»²⁹ :

35. Դատախազների անկախությունը վերջիններիս վերապահված՝ նրանց շահերից բխող բացառիկ իրավունք կամ արտոնություն չէ, այլ երաշխիք է ի շահ արդար, անաչառ եւ արդյունավետ արդարադատության, որը պաշտպանում է շահագրգիռ անձանց ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր

²³ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, *Դատախազության եւ անչափահասների գործերով արդարադատության վերաբերյալ* թիվ 5 կարծիք, *Երեւանի հռչակագիր*, ԵԴԳԽՍ(2010)1, 2010 թվականի հոկտեմբերի 20, 26-րդ պարբերություն:

²⁴ Տե՛ս *Դատախազների դերի վերաբերյալ ուղեցույց*²⁵ ընդունված 1990 թվականի օգոստոսի 27-ից սեպտեմբերի 7-ը Յավանայում կայացած՝ Հանցագործությունների կանխարգելմանը եւ հանցագործություն կատարած անձանց հետ վարվելակերպին նվիրված միավորված ազգերի կազմակերպության ութերորդ համաժողովում, 19-րդ պարբերություն:

²⁵ Տե՛ս «*Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին*» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec(2000) 19 առաջարկությունը, 2000 թվականի հոկտեմբերի 6, 14-րդ պարբերություն:

²⁶ Տե՛ս «*Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին*» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec(2000) 19 առաջարկությունը, 2000 թվականի հոկտեմբերի 6, 13-րդ պարբերություն, «ա» եւ «բ» կետեր: Հետագա երաշխիքների համար տե՛ս նաեւ «զ»-«զ» կետերը:

²⁷ *Գուժան ընդդեմ Մոլդովայի* (Մեծ պալատ), թիվ 14277/04, 86-րդ պարբերություն:

²⁸ *Կոլեկին ընդդեմ Բուլղարիայի*, թիվ 1108/02, 05/02/2010, 148-149-րդ պարբերություններ, *Վասիլեսկուն ընդդեմ Ռումինիայի*, թիվ 53/1997/837/1043, 22/05/1998, 40-41-րդ պարբերություններ, *Պանտեան ընդդեմ Ռումինիայի*, թիվ 33343/96, 03/09/2003, 238-րդ պարբերություն, *Մոուլինին ընդդեմ Ֆրանսիայի*, թիվ 37104/06, 23/02/2011, 57-րդ պարբերություն:

²⁹ *Կոլեկին ընդդեմ Բուլղարիայի*, թիվ 1108/02, 2010 թվականի փետրվարի 5, § 142:

շահերը:

36. Պետությունները պետք է ապահովեն, որ դատախազները կարողանան իրենց գործառնությունները կատարել առանց ահաբեկման, խոչընդոտների, ոտնձգության, անհարկի միջամտության կամ չհիմնավորված կերպով քաղաքացիական, քրեական կամ այլ պատասխանատվության ենթարկվելու³⁰:

37. Ցանկացած դեպքում դատախազները պետք է հնարավորություն ունենան քրեական հետապնդում իրականացնելու պետական պաշտոնյաների նկատմամբ նրանց կատարած հանցանքների, մասնավորապես՝ կոռուպցիայի, լիազորությունների ապօրինի օգտագործման եւ մարդու իրավունքների կոպիտ խախտումների համար³¹:

38. Դատախազները պետք է անկախ լինեն ոչ միայն գործադիր եւ օրենսդիր իշխանություններից, այլեւ այլ դերակատարներից ու կառույցներից, այդ թվում՝ տնտեսության, ֆինանսների եւ լրատվության միջոցների ոլորտներում:

39. Դատախազներն անկախ են նաեւ իրավապահ մարմինների, դատարանների եւ այլ մարմինների հետ համագործակցության առումով:

3.2. Աստիճանակարգությունը

40. Աստիճանակարգային կառուցվածքը բնորոշ է դատախազական ծառայությունների մեծ մասին՝ նրանց կատարած առաջադրանքների բնույթով պայմանավորված: Աստիճանակարգության տարբեր շերտերի միջև փոխհարաբերությունները պետք է կարգավորվեն հստակ, միանշանակ եւ լավ հավասարակշռված կանոնակարգերով, եւ պետք է նախատեսվի հակակշիռների եւ զսպումների համապատասխան համակարգ:

41. Օրենքի գերակայությամբ առաջնորդվող պետությունում, երբ դատախազական ծառայության կառուցվածքն աստիճանակարգային է, հանրային մեղադրողներին առնչվող քրեական հետապնդման արդյունավետությունը սերտորեն կապված է լիազորության, հաշվետվողականության եւ պատասխանատվության թափանցիկ բնույթի հետ:

42. Կարելի է դատախազի գործունեությանը չմիջամտելու համապատասխան երաշխիքների մշակումը: Չմիջամտել նշանակում է ապահովել, որ դատախազի գործունեությունը, մասնավորապես՝ դատաքննության ընթացքում, զերծ լինի արտաքին ճնշումներից, ինչպես նաեւ դատախազության համակարգի ներքին անհարկի կամ անօրինական ճնշումներից³²: Աստիճանակարգային համակարգում վերադաս դատախազը պետք է հնարավորություն ունենա իրականացնելու համապատասխան հսկողություն դատախազության որոշումների նկատմամբ՝ առանձին դատախազների իրավունքները պատշաճ երաշխավորելու պայմանով:

3.2.1. Գործերի բաշխումը եւ վերաբաշխումը

43. Ինչ վերաբերում է դատախազության կազմակերպմանը եւ ներքին գործունեությանը, մասնավորապես՝ գործերի բաշխմանն ու վերաբաշխմանը, դա պետք է համապատասխանի անաչառության պահանջներին՝ կապված դատախազական ծառայությունների կառուցվածքի, պարտականությունների եւ որոշումներ կայացնելու մասով իրավասությունների հետ:

44. Գործերի բաշխումն ու վերաբաշխումը պետք է որոշվի դատախազական ծառայության աստիճանակարգային կամ ոչ աստիճանակարգային կառուցվածքին համահունչ թափանցիկ կանոնակարգով:

3.2.2. Հրահանգները

45. Հանցագործություններին առնչվող քաղաքականության իրականացման վերաբերյալ ընդհանուր որոշումները պետք է լինեն թափանցիկ՝ դատախազների արդար, հետեւողական եւ արդյունավետ գործունեությունն ապահովելու համար:

46. Ընդհանուր բնույթի հրահանգները պետք է լինեն գրավոր եւ հնարավորության դեպքում հրապարակվեն, կամ այլ կերպ պետք է ապահովվի դրանց թափանցիկությունը: Նման հրահանգները պետք է խստորեն պահպանեն արդարության եւ հավասարության սկզբունքները³³:

47. Որոշ իրավական համակարգերում անընդունելի են կոնկրետ դեպքերի վերաբերյալ

³⁰ Տե՛ս *Դատախազների դերի վերաբերյալ ուղեցույց*՝ ընդունված 1990 թվականի օգոստոսի 27-ից սեպտեմբերի 7-ը Հավանայում կայացած՝ Հանցագործությունների կանխարգելմանը եւ հանցագործություն կատարած անձանց հետ վարվելակերպին նվիրված Միավորված ազգերի կազմակերպության ութերորդ համաժողովում, 4-րդ պարբերություն:

³¹ Տե՛ս *«Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին»* Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec(2000) 19 առաջարկությունը, 2000 թվականի հոկտեմբերի 6, 16-րդ պարբերություն:

³² Վենետիկի հանձնաժողով, *«Դատական համակարգի անկախությանը վերաբերող եվրոպական ստանդարտների վերաբերյալ զեկույց. Մաս II. Դատախազական ծառայությունը»*, CDL-AD(2010)040, 2011 թվականի հունվարի 3, 31-րդ եւ 32-րդ պարբերություններ:

³³ Տե՛ս *«Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին»* Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec(2000) 19 առաջարկությունը, 2000 թվականի հոկտեմբերի 6, Բացատրական հուշագիր (13-րդ պարբերություն):

գործադիր իշխանության կամ աստիճանակարգության վերադաս մակարդակի հրահանգները: Թեև առկա է դատախազության համակարգի առավել անկախ լինելու ընդհանուր միտում, որը խրախուսվում է ԵՂԳԽ-ի կողմից, այս առումով ընդհանուր չափանիշներ գոյություն չունեն: Այն դեպքում, երբ օրենսդրությամբ նման հրահանգները դեռևս թույլատրվում են, դրանք պետք է լինեն գրավոր, սահմանափակ և օրենքով կարգավորվող:

48. Պետական պաշտոնյան, որը կարծում է, որ իրենից պահանջում են գործել անօրինական, ոչ պատշաճ կամ էթիկայի սորմերից դուրս, պետք է պատասխանատվություն կրի օրենքով սահմանված կարգով³⁴:

49. Դատախազն իրավունք ունի պահանջելու, որ իրեն ուղղված հրահանգները լինեն գրավոր: Եթե նա կարծում է, որ հրահանգն անօրինական է կամ հակասում է իր խղճին, պետք է առկա լինի համապատասխան ներքին ընթացակարգ, որը կարող է ապահովել նրա հնարավոր փոխարինումը³⁵:

50. Անհրաժեշտ է հասկանալ, որ այդ երաշխիքները սահմանվում են եւ՝ առանձին դատախազների, եւ՝ հանրության շահերից ելնելով³⁶:

3.3. Նշանակումը և կարիերան

3.3.1. Ընդհանուր սկզբունքները

51. Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն միջոցներ՝ ապահովելու՝

ա) որ դատախազների աշխատանքի ընդունումը, առաջխաղացումը և տեղափոխումն իրականացվեն արդար և անաչառ ընթացակարգերի համաձայն և առանց որեւէ հիմքով խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

բ) որ դատախազների կարիերան, նրանց մասնագիտական գնահատումը, առաջխաղացումն ու փոխադրումը կարգավորվեն թափանցիկ և օբյեկտիվ չափանիշներով, ինչպիսիք են իրավասությունը և փորձը. անձնակազմի հավաքագրման հարցերով մարմինները պետք է ընտրվեն իրավասությունների և հմտությունների հիման վրա և իրենց գործառույթները պետք է կատարեն անաչառ և օբյեկտիվ չափանիշների հիման վրա:

գ) որ դատախազների փոխադրումը որոշվի նաև ծառայության կարիքներից ելնելով³⁷:

52. Դատախազների նշանակումն ու ծառայության դադարեցումը պետք է կարգավորվի օրենքով՝ ամենաբարձր մակարդակով, և հստակ ու հասկանալի գործընթացներով և ընթացակարգերով:

53. Դատավորների և դատախազների առաքելությունների նմանությունը և փոխլրացող բնույթը համանման պահանջներ և երաշխիքներ են ստեղծում նրանց կարգավիճակի և ծառայության պայմանների, մասնավորապես՝ աշխատանքի ընդունման, վերապատրաստման, աշխատանքում առաջխաղացման, աշխատավարձերի, կարգապահության և տեղափոխման (որը պետք է իրականացվի միայն օրենքին համապատասխան կամ նրանց համաձայնությամբ) առումով³⁸: Դրա համար անհրաժեշտ է ապահովել պատշաճ պաշտոնավարում և համապատասխան կարգավորումներ առաջխաղացման, կարգապահության և պաշտոնից ազատման համար³⁹:

54. Անկողմնակալության ձգտումը, որով այս կամ այն ձևով պետք է կարգավորվեն դատախազների աշխատանքի ընդունման և կարիերայի հեռանկարները, կարող է հանգեցնել մասնագիտության ընտրության մրցակցային համակարգի և Բարձրագույն խորհուրդների ստեղծման՝ կամ ամբողջ դատական համակարգի, կամ միայն դատախազների համար⁴⁰:

55. Գլխավոր դատախազի նշանակման և պաշտոնից ազատման եղանակը զգալի դեր է խաղում դատախազության ճիշտ գործունեությունը երաշխավորող համակարգում⁴¹:

56. Եթե կառավարությունները որոշակի հսկողություն ունեն գլխավոր դատախազի նշանակման հարցում, ապա կարելի է, որ ընտրության մեթոդը լինի այնպիսին, որ հնարավոր լինի ձեռք բերել

³⁴ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, «Պաշտոնատար անձանց վարքագծի կանոնների մասին» Rec(2000)10 առաջարկություն, 2000 թվականի մայիսի 11, 12-րդ պարբերություն, 1-ին կետ:

³⁵ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Rec(2000)19 առաջարկություն, 2000 թվականի հոկտեմբերի 6, 10-րդ պարբերություն:

³⁶ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Rec(2000)19 առաջարկություն, 2000 թվականի հոկտեմբերի 6, Բացատրական հուշագիր (10-րդ պարբերություն):

³⁷ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Rec(2000)19 առաջարկություն, 2000 թվականի հոկտեմբերի 6, 5-րդ պարբերություն, «ա», «բ» և «գ» կետեր:

³⁸ Տե՛ս Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, *Ժողովրդավարական հասարակությունում դատավորների և դատախազների միջև հարաբերությունների վերաբերյալ* թիվ 4(2009) կարծիք, 2009 թվականի դեկտեմբերի 8, Բորդոյի հռչակագիր, Բացատրական ծանոթագրություն, 37-րդ պարբերություն:

³⁹ Տե՛ս Վենետիկի հանձնաժողով, «Դատական համակարգի անկախությանը վերաբերող եվրոպական ստանդարտների վերաբերյալ գեկույց. Մաս II. Դատախազական ծառայությունը», CDL-AD(2010)040, 2011 թվականի հունվարի 3, 18-րդ պարբերություն:

⁴⁰ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Rec(2000)19 առաջարկություն, 2000 թվականի հոկտեմբերի 6, 5-րդ պարբերություն, «ա», «բ» և «գ» կետեր:

⁴¹ Վենետիկի հանձնաժողով, «Դատական համակարգի անկախությանը վերաբերող եվրոպական ստանդարտների վերաբերյալ գեկույց. Մաս II. Դատախազական ծառայությունը», CDL-AD(2010)040, 2011 թվականի հունվարի 3, 34-35-րդ պարբերություններ:

հանրության, ինչպես նաև դատական և դատախազական համակարգի անդամների և իրավաբանների վստահությունն ու հարգանքը: Գլխավոր դատախազը պետք է նշանակվի բավական երկար ժամանակով կամ մշտապես՝ ապահովելու համար նրա լիազորությունների կայունությունը և նրա՝ քաղաքական փոփոխություններից անկախ լինելը⁴²:

3.3.2. Վերապատրաստումը

57. Մասնագիտական հմտությունների և ազնվության բարձր մակարդակն արդյունավետ դատախազական ծառայության և այդ ծառայության նկատմամբ հանրային վստահության նախապայման է: Յետեւաբար դատախազները պետք է համապատասխան կրթություն ստանան և վերապատրաստումներ անցնեն՝ հաշվի առնելով իրենց մասնագիտացումը⁴³:

58. Եվրոպական տարբեր իրավական համակարգեր դատավորների և դատախազների համար վերապատրաստումներ են նախատեսում ըստ տարբեր մոդելների. վերապատրաստումը վստահվում է կոնկրետ մարմինների: Ամեն դեպքում կարելի է ապահովել այդ վերապատրաստումը կազմակերպելու համար պատասխանատու հաստատության ինքնավար բնույթը, քանի որ այդ ինքնավարությունը մշակութային բազմակարծության և անկախության երաշխիք է⁴⁴:

59. Այդ վերապատրաստումը պետք է կազմակերպվի անաչառ հիմունքներով և պարբերաբար և օբյեկտիվորեն գնահատվի արդյունավետության մասով: Պատշաճ դեպքում դատավորների, դատախազների և փաստաբանների համար իրականացվող ընդհանուր հետաքրքրության վերաբերյալ համատեղ վերապատրաստումը կարող է նպաստել արդարադատության որակի բարելավմանը⁴⁵:

60. Վերապատրաստումը պետք է մասնակցեն նաև վարչական անձնակազմը և պաշտոնյաները, ինչպես նաև իրավապահ մարմինները:

61. Վերապատրաստումը, այդ թվում՝ կառավարման վերաբերյալ վերապատրաստումը⁴⁶, դատախազների և՛ իրավունքն է, և՛ պարտականությունը ինչպես իրենց պարտականությունները ստանձնելուց առաջ, այնպես էլ մշտական հիմունքներով:

62. Դատախազները պետք է օգտվեն համապատասխան մասնագիտացված վերապատրաստումներից՝ քրեական արդարադատության համակարգում և դրա շրջանակից դուրս իրենց պարտականությունները պատշաճ կերպով կատարելու համար⁴⁷, այդ թվում՝ բյուջետային ռեսուրսների կառավարման⁴⁸ և հաղորդակցության ոլորտում⁴⁹:

63. Յետեւաբար պետությունները պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար, որ դատախազներն ունենան համապատասխան կրթություն և վերապատրաստում ինչպես նշանակվելուց առաջ, այնպես էլ դրանից հետո: Մասնավորապես դատախազները պետք է տեղեկացված լինեն հետեւյալի մասին.

ա) իրենց պաշտոնի սկզբունքներ և էթիկական պարտականություններ.

բ) դատական վարույթում ներգրավված անձանց սահմանադրական և այլ իրավական պաշտպանություն.

գ) Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով (մասնավորապես 5-րդ և 6-րդ հոդվածներով) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով ամրագրված մարդու իրավունքներ և ազատություններ.

դ) աշխատանքի կազմակերպման սկզբունքներ ու գործելակերպեր, կառավարում և մարդկային ռեսուրսներ.

ե) իրենց գործունեության արդյունավետությանը և հետեւողականությանը նպաստող

⁴² Վենետիկի հանձնաժողով, «Դատական համակարգի անկախությանը վերաբերող եվրոպական ստանդարտների վերաբերյալ գեկույց. Մաս II. Դատախազական ծառայությունը», CDL-AD(2010)040, 2011 թվականի հունվարի 3, 37-րդ պարբերություն: Մարդու իրավունքների խորհուրդ, Դատավորների և փաստաբանների անկախության վերաբերյալ հատուկ գեկույցի գեկույց, Գաբրիելա Կնաու, A/HRC/20/19, 2012 թվականի հունիսի 7, 65-րդ պարբերություն:

⁴³ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, Ժողովրդավարական հասարակությունում դատավորների և դատախազների միջև հարաբերությունների վերաբերյալ թիվ 4(2009) կարծիք, 2009 թվականի դեկտեմբերի 8, Բորդոյի հռչակագիր, Բացատրական ծանոթագրություն, 43-րդ պարբերություն:

⁴⁴ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, Ժողովրդավարական հասարակությունում դատավորների և դատախազների միջև հարաբերությունների վերաբերյալ թիվ 4(2009) կարծիք, 2009 թվականի դեկտեմբերի 8, Բորդոյի հռչակագիր, Բացատրական ծանոթագրություն, 46-րդ պարբերություն:

⁴⁵ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, Ժողովրդավարական հասարակությունում դատավորների և դատախազների միջև հարաբերությունների վերաբերյալ թիվ 4(2009) կարծիք, 2009 թվականի դեկտեմբերի 8, Բորդոյի հռչակագիր, 10-րդ պարբերություն:

⁴⁶ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, Ժողովրդավարական հասարակությունում դատավորների և դատախազների միջև հարաբերությունների վերաբերյալ թիվ 4(2009) կարծիք, 2009 թվականի դեկտեմբերի 8, Բորդոյի հռչակագիր, 10-րդ պարբերություն:

⁴⁷ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, «Քրեական արդարադատության համակարգից դուրս դատախազության դերի մասին» CM/Rec(2012)11 առաջարկություն, 2012 թվականի սեպտեմբերի 19, 8-րդ պարբերություն:

⁴⁸ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, Ժողովրդավարական հասարակությունում դատավորների և դատախազների վերաբերյալ թիվ 4(2009) կարծիք, 2009 թվականի դեկտեմբերի 8, Բորդոյի հռչակագիր, 10-րդ պարբերություն և Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, Դատախազական ծառայությունների միջոցների կառավարման վերաբերյալ թիվ 7(2012) կարծիք, 2012 թվականի դեկտեմբերի 11, 17-րդ պարբերություն:

⁴⁹ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, Դատախազների և լրատվության միջոցների միջև հարաբերությունների մասին թիվ 8(2013) կարծիք, 2013 թվականի հոկտեմբերի 9, VII առաջարկություն:

մեխանիզմներ եւ կյուբեր⁵⁰:

64. Զրեական ոլորտի նոր մարտահրավերները, ինչպես նաեւ հանցավորության որոշ տեսակների՝ ավելի ու ավելի բարդացող բնույթը պայմանավորված են նոր տեխնոլոգիաների արագ զարգացմամբ, գլոբալիզացիայով եւ միջազգային առևտրի ընդլայնմամբ ու տվյալների հոսքով: Անհրաժեշտ են նաեւ հատուկ վերապատրաստումներ, որոնք հնարավորություն կտան դատախազներին դիմակայելու վերոնշյալ երեւույթներից առաջացող սպառնալիքներին⁵¹:

3.3.3. Մասնագիտական հմտությունների գնահատումը

65. Դատախազների կատարողականի գնահատումը պետք է իրականացվի կանոնավոր պարբերականությամբ, լինի ողջամիտ, համապատասխան, օբյեկտիվ եւ սահմանված չափանիշների հիման վրա, ինչպես նաեւ պետք է իրականացվի պատշաճ ու արդար ընթացակարգով:

66. Դատախազները պետք է հասանելիություն ունենան իրենց գնահատման արդյունքներին եւ իրավունք ունենան ներկայացնելու դիտարկումներ, ինչպես նաեւ ըստ անհրաժեշտության՝ իրավական պաշտպանություն պահանջել:

67. Դատախազների առաջխաղացումը պետք է հիմնված լինի օբյեկտիվ գործոնների, մասնավորապես՝ մասնագիտական որակավորումների, կարողությունների, ազնվության եւ փորձի վրա, եւ դրա վերաբերյալ որոշում կայացվի արդար եւ անաչառ ընթացակարգերով⁵²:

3.3.4. Տեղափոխումը եւ փոխադրումը

68. Դատախազի վրա ոչ պատշաճ կերպով ազդելու միջոց կարող է լինել նրա տեղափոխումն այլ դատախազություն՝ առանց նրա համաձայնության:

69. Դատախազի կամքին հակառակ՝ ներքին կամ արտաքին տեղափոխման կամ գործուղման դեպքում հնարավոր ռիսկերը պետք է հավասարակշռվեն օրենքով նախատեսված երաշխիքներով (օրինակ՝ տեղափոխում, որը քողարկում է կարգապահական ընթացակարգը):

70. Դատախազին առանց իր համաձայնության տեղափոխելու հնարավորությունը պետք է կարգավորվի օրենքով եւ սահմանափակվի այնպիսի բացառիկ հանգամանքներով, ինչպիսիք են ծառայության խիստ անհրաժեշտությունը (աշխատանքային ծանրաբեռնվածության հավասարեցում եւ այլն) կամ առանձնակի ծանրության հանցագործությունների դեպքերում՝ կարգապահական միջոցները, սակայն պետք է հաշվի առնել նաեւ դատախազի տեսակետները, ձգտումները, մասնագիտացումը եւ նրա ընտանեկան դրությունը⁵³:

71. Պետք է անկախ մարմին դիմելու հնարավորություն լինի:

3.3.5. Պաշտոնից ազատումը

72. Հաշվի առնելով դատախազների կարելու դերն ու գործառույթը՝ նրանց պաշտոնից ազատումը պետք է ենթակա լինի խիստ պահանջների, որոնք չպետք է խաթարեն նրանց գործունեության անկախ եւ անաչառ իրականացումը⁵⁴: Պետք է կիրառելի լինեն կարգապահական ընթացակարգերի հետ կապված բոլոր երաշխիքները:

73. Դատախազների անկախությունը նրանց պաշտպանությունն է կամայական կամ քաղաքական դրդապատճառներով պաշտոնից ազատումից: Սա մասնավորապես վերաբերում է գլխավոր դատախազներին, եւ օրենքով պետք է հստակ սահմանվեն նրանց՝ պաշտոնից վաղաժամ ազատման պայմանները⁵⁵:

3.4. Ծառայության պայմանները

3.4.1. Ընդհանուր սկզբունքները

74. Դատախազները պետք է ունենան անհրաժեշտ եւ համապատասխան միջոցներ իրենց առաքելությունն իրականացնելու համար, ինչը կարելու նշանակություն ունի օրենքի գերակայության

⁵⁰ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, «Զրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Rec(2000)19 առաջարկություն, 2000 թվականի հոկտեմբերի 6, 7-րդ պարբերություն:

⁵¹ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, *Դատախազական ծառայությունների միջոցների կառավարման վերաբերյալ* թիվ 7(2012) կարծիք, 2012 թվականի դեկտեմբերի 11, 19-րդ պարբերություն:

⁵² ՏԵՍ *Դատախազների դերի վերաբերյալ ուղեցույց*՝ ընդունված 1990 թվականի օգոստոսի 27-ից սեպտեմբերի 7-ը Հավանայում կայացած՝ Հանցագործությունների կանխարգելմանը եւ հանցագործություն կատարած անձանց հետ վարվելակերպին նվիրված Միավորված ազգերի կազմակերպության ութերորդ համաժողովում, 7-րդ պարբերություն:

⁵³ Մարդու իրավունքների խորհուրդ, *Դատավորների եւ փաստաբանների անկախության վերաբերյալ հատուկ զեկուցողի զեկույց*, Գաբրիելա Վևաու, A/HRC/20/19, 2012 թվականի հունիսի 7, 68-րդ եւ 69-րդ պարբերություններ:

⁵⁴ Մարդու իրավունքների խորհուրդ, *Դատավորների եւ փաստաբանների անկախության վերաբերյալ հատուկ զեկուցողի զեկույց*, Գաբրիելա Վևաու, A/HRC/20/19, 2012 թվականի հունիսի 7, 70-րդ պարբերություն:

⁵⁵ Վենետիկի հանձնաժողով, «Դատական համակարգի անկախությանը վերաբերող եվրոպական ստանդարտների վերաբերյալ զեկույց. Մաս II. Դատախազական ծառայությունը», CDL-AD(2010)040, 2011 թվականի հունվարի 3, 40-րդ պարբերություն:

համար⁵⁶:

75. Պետությունները պետք է ձեռնարկեն միջոցներ՝ ապահովելու համար, որ դատախազներն ապահովված լինեն ծառայության ողջամիտ պայմաններով, ինչպիսիք են իրենց կարելու դերին համարժեք վարձատրությունը, պաշտոնավարումը եւ կենսաթոշակը, ինչպես նաեւ կենսաթոշակի անցնելու համապատասխան տարիքը⁵⁷:

76. Ծառայության պայմանները պետք է արտացոլեն պաշտոնի կարեւորությունն ու արժանապատվությունը, ինչպես նաեւ դրա նկատմամբ հարգանքը⁵⁸: Դատախազների համապատասխան վարձատրությունը ենթադրում է նաեւ նրանց գործառույթի եւ դերի կարեւորության ճանաչումը եւ կարող է նաեւ նվազեցնել կոռուպցիայի ռիսկը⁵⁹: Պարզեւատրումները, եթե այդպիսիք առկա են, պետք է հիմնված լինեն միանգամայն օբյեկտիվ եւ թափանցիկ չափանիշների վրա:

3.4.2. Անհամատեղելիությունը եւ շահերի բախումը

77. Դատախազները պետք է մշտապես պահպանեն էթիկական եւ մասնագիտական ամենաբարձր չափանիշները: Մասնավորապես նրանք չպետք է գործեն այն դեպքերում, երբ իրենց անձնական շահերը կամ գործով շահագրգիռ անձանց հետ հարաբերությունները կարող են խոչընդոտել նրանց լիարժեք անաչառությունը⁶⁰: Դատախազները չպետք է իրականացնեն որեւէ գործունեություն, գործարք կամ ստանձնեն որեւէ պաշտոն կամ գործառույթ՝ վճարովի կամ անվճար, որն անհամատեղելի է իրենց պարտականությունների պատշաճ կատարման հետ կամ շեղում է դրանից⁶¹:

78. Պետությունները պետք է երաշխավորեն, որ անձը չկարողանա կատարել դատախազի եւ դատավորի պարտականությունները միաժամանակ: Այնուամենայնիվ, պետությունները կարող են ձեռնարկել միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս միեւնույն անձին հաջորդաբար կատարելու դատախազի եւ դատավորի գործառույթները կամ հակառակը: Գործառույթների հետ կապված նման փոփոխությունները հնարավոր են միայն շահագրգիռ անձի հստակ խնդրանքով եւ երաշխիքների պահպանմամբ⁶²:

79. Դատախազներին որեւէ դատական գործառույթի վերապահումը պետք է սահմանափակվի ոչ խիստ պատիժներ ներառող գործերով, պետք է իրականացվի նույն գործով քրեական հետապնդում իրականացնելու լիազորության հետ համատեղ եւ չպետք է խախտի պաշտպանյալների՝ դատական գործառույթներ իրականացնող անկախ եւ անաչառ մարմնի կողմից այդպիսի գործերով որոշումներ կայացնելու իրավունքը⁶³:

80. Դատախազները ցանկացած ժամանակ պետք է ցուցաբերեն պրոֆեսիոնալ մոտեցում եւ ձգտեն լինել անկախ եւ անաչառ եւ ընկալվել որպես այդպիսին⁶⁴:

81. Դատախազները պետք է զերծ մնան անաչառության սկզբունքի հետ անհամատեղելի քաղաքական գործունեությունից:

82. Դատախազները պետք է արտահայտվելու եւ միավորումներ կազմելու իրենց ազատությունն իրացնեն այնպես, որ լինի իրենց պաշտոնի հետ համատեղելի եւ չազդի դատական ու դատախազական անկախության կամ անաչառության վրա կամ չթվա, որ ազդում է վերջիններիս վրա: Թեեւ նրանք ազատ են մասնակցելու իրավական թեմաներին, դատական համակարգին կամ արդարադատության իրականացմանն առնչվող հարցերի վերաբերյալ հանրային քննարկումներին, նրանք չպետք է մեկնաբանեն քննության փուլում գտնվող գործերը եւ պետք է խուսափեն այնպիսի տեսակետներ արտահայտելուց, որոնք կարող են խաթարել դատարանի վարկանիշն ու ազնվությունը⁶⁵:

83. Օրենքի համաձայն՝ համապատասխան ժամանակահատվածում դատախազը չպետք է գործի

⁵⁶ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, *Դատախազական ծառայությունների միջոցների կառավարման վերաբերյալ* թիվ 7(2012) կարծիք, տե՛ս նաեւ Դատախազության եւ անչափահասների գործերով արդարադատության վերաբերյալ թիվ 5 (2010) կարծիքը, Երեւանի հռչակագիր, 2010 թվականի հոկտեմբերի 20, 19-րդ պարբերություն:

⁵⁷ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, *«Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին»* Rec(2000)19 առաջարկություն, 2000 թվականի հոկտեմբերի 6, 5-րդ պարբերություն:

⁵⁸ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, *«Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին»* Rec(2000)19 առաջարկություն, 2000 թվականի հոկտեմբերի 6, 5-րդ պարբերություն, «դ» կետ:

⁵⁹ Վենետիկի հանձնաժողով, *«Դատական համակարգի անկախությանը վերաբերող եվրոպական ստանդարտների վերաբերյալ զեկույց»*.

Մաս II. Դատախազական ծառայությունը», CDL-AD(2010)040, 2011 թվականի հունվարի 3, 69-րդ պարբերություն: Տե՛ս նաեւ Մարդու իրավունքների խորհուրդ, *Դատավորների եւ փաստաբանների անկախության վերաբերյալ հատուկ զեկուցողի զեկույց*, Գաբրիելա Կևաու, A/HRC/20/19, 2012 թվականի հունիսի 7, 71-րդ պարբերություն:

⁶⁰ Եվրոպայի գլխավոր դատախազների համաժողով, 6-րդ նստաշրջան, *Հանրային մեղադրողների էթիկայի եւ վարքագծի եվրոպական ուղեցույց*. *Բուդապեշտի ուղեցույց*, CPGE(2005)05, 2005 թվականի մայիսի 31, II կետ:

⁶¹ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, *«Պաշտոնատար անձանց վարքագծի կանոնների մասին»* Rec(2000)10 առաջարկություն, 2000 թվականի մայիսի 11, 15-րդ պարբերություն, 1-ին, 2-րդ, 3-րդ կետեր:

⁶² Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, *«Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին»* Rec(2000)19 առաջարկություն, 2000 թվականի հոկտեմբերի 6, 17-րդ եւ 18-րդ պարբերություններ:

⁶³ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, *Ժողովրդավարական հասարակությունում դատավորների եւ դատախազների միջեւ հարաբերությունների վերաբերյալ* թիվ 4(2009) կարծիք, 2009 թվականի դեկտեմբերի 8, Բորդոյի հռչակագիր, 7-րդ պարբերություն:

⁶⁴ Մարդու իրավունքների խորհուրդ, *Դատավորների եւ փաստաբանների անկախության վերաբերյալ հատուկ զեկուցողի զեկույց*, Գաբրիելա Կևաու, A/HRC/20/19, 2012 թվականի հունիսի 7, 81-րդ պարբերություն:

⁶⁵ Հիմնված է Միջազգային քրեական դատարանի Դատական էթիկայի կանոնագրի վրա:

որեւէ անձի կամ մարմնի օգտին՝ կապված այնպիսի հարցի հետ, որի առնչությամբ նա գործել է կամ խորհրդատվություն է տրամադրել հանրային ծառայությանը, եւ որը կարող է հանգեցնել այդ անձի կամ մարմնի համար որոշակի օգուտի⁶⁶:

84. Դատախազը, ինչպես դատավորը, չի կարող գործել այնպիսի հարցի առնչությամբ, որում նա անձնական շահ ունի, եւ փորձելով երաշխավորել իր անաչառությունը եւ բարեվարքությունը՝ կարող է ենթակա լինել որոշակի սահմանափակումների⁶⁷:

3.4. Վարույթի շրջանակերում տրվող երաշխիքները

85. Մարդու իրավունքների չափանիշներով եւ սկզբունքներով սահմանվում է, որ դատախազները պատասխանատվություն են կրում իրենց պարտականությունների կատարման ժամանակ եւ կարող են ենթարկվել կարգապահական ընթացակարգերի⁶⁸:

86. Օրենքի գերակայության ներքո գործող ժողովրդավարական համակարգում անձի արդարացումը չպետք է հանգեցնի գործի համար պատասխանատու դատախազի նկատմամբ կարգապահական վարույթի:

87. Պետությունները պետք է ձեռնարկեն միջոցներ՝ ապահովելու համար, որ դատախազների նկատմամբ կարգապահական վարույթները կարգավորվեն օրենքով եւ երաշխավորեն արդար եւ օբյեկտիվ գնահատում, ինչպես նաեւ անկախ եւ անաչառ վերանայման ենթակա որոշման կայացում⁶⁹:

88. Դատախազները չպետք է օգտվեն ընդհանուր անձեռնմխելիությունից, որը նրանց կարող է պաշտպանել իրենց կատարած հանցագործությունների համար քրեական հետապնդումից, եւ որոնց համար նրանք պետք է պատասխան տան դատարանում, քանի որ դա կարող է հանգեցնել հանրային վստահության պակասի կամ նույնիսկ կոռուպցիայի⁷⁰: Պետությունները դատախազներին պատասխանատվության ենթարկելու համար կարող են սահմանել հատուկ ընթացակարգեր՝ որպես նրանց անկախության եւ անաչառության երաշխիք:

89. Ընդհանուր չափանիշների համաձայն՝ դատախազներին կարող է անհրաժեշտ լինել պաշտպանություն իրենց պարտականություններն իրականացնելիս բարեխղճորեն կատարված գործողությունների դեմ ներկայացված քաղաքացիական հայցերից:

3.5. Դատախազների, նրանց ընտանիքների եւ այլնի պաշտպանությունը

90. Պետությունները պետք է ձեռնարկեն միջոցներ՝ ապահովելու համար, որ դատախազները եւ անհրաժեշտության դեպքում՝ նրանց ընտանիքները պաշտպանված լինեն պետության կողմից, երբ նրանց անձնական անվտանգությունը վտանգվում է իրենց գործառնությունների կատարման հետեւանքով⁷¹:

91. Երբ դատախազները կամ նրանց ընտանիքների անդամները ենթարկվում են բռնության կամ բռնության սպառնալիքի կամ ցանկացած ձեւի ահաբեկման, հարկադրանքի կամ անտեղի հսկողության, պետք է իրականացվի նման դեպքերի մանրակրկիտ քննություն, եւ ձեռնարկվեն քայլեր՝ դրանց հետագա կրկնությունը կանխելու համար. անհրաժեշտության դեպքում դատախազներին եւ նրանց ընտանիքների անդամներին պետք է տրամադրվի անհրաժեշտ խորհրդատվություն կամ հոգեբանական աջակցություն⁷²:

4. Դատախազների պարտականություններն ու իրավունքները

4.1. Դատախազների վարքագծին առնչվող պարտականությունները

4.1.1. Անաչառության, օբյեկտիվության եւ արդարության հիմնական պարտականությունը

92. Դատախազները պետք է իրենց գործառնությունները կատարեն անաչառ կերպով եւ գործեն

⁶⁶ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, «Պաշտոնատար անձանց վարքագծի կանոնների մասին» Rec(2000)10 առաջարկություն, 2000 թվականի մայիսի 11, 26-րդ հոդված, 3-րդ կետ:

⁶⁷ Վենետիկի հանձնաժողով, «Դատական համակարգի անկախությանը վերաբերող եվրոպական ստանդարտների վերաբերյալ զեկույց. Մաս II. Դատախազական ծառայությունը», CDL-AD(2010)040, 2011 թվականի հունվարի 3, 17-րդ եւ 62-րդ պարբերություններ:

⁶⁸ Մարդու իրավունքների խորհուրդ, Դատավորների եւ փաստաբանների անկախության վերաբերյալ հատուկ զեկուցողի միջանկյալ զեկույց, A/65/274, 2010 թվականի օգոստոսի 10, 60-րդ պարբերություն:

⁶⁹ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Rec(2000)19 առաջարկություն, 2000 թվականի հոկտեմբերի 6, 5-րդ պարբերություն, «Ե» կետ: Տե՛ս նաեւ Դատախազների դերի վերաբերյալ ուղեցույց՝ ընդունված 1990 թվականի օգոստոսի 27-ից սեպտեմբերի 7-ը Չավանայում կայացած՝ Հանցագործությունների կանխարգելմանը եւ հանցագործություն կատարած անձանց հետ վարվելակերպին նվիրված Միավորված ազգերի կազմակերպության ութերորդ համաժողովում, 22-րդ պարբերություն:

⁷⁰ Վենետիկի հանձնաժողով, «Դատական համակարգի անկախությանը վերաբերող եվրոպական ստանդարտների վերաբերյալ զեկույց. Մաս II. Դատախազական ծառայությունը», CDL-AD(2010)040, 2011 թվականի հունվարի 3, 61-րդ պարբերություն:

⁷¹ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Rec(2000)19 առաջարկություն, 2000 թվականի հոկտեմբերի 6, 5-րդ պարբերություն, «Ե» կետ:

⁷² Մարդու իրավունքների խորհուրդ, Դատավորների եւ փաստաբանների անկախության վերաբերյալ հատուկ զեկուցողի զեկույց, Գաբրիելա Կևուկ, A/HRC/20/19, 2012 թվականի հունիսի 7, 76-78-րդ եւ 118-րդ պարբերություններ:

օբյեկտիվորեն: Նրանք նաեւ պետք է մարդկանց վերաբերվեն որպես օրենքի առջեւ հավասար եւ որեւէ մեկի նախապատվություն չպետք է տան կամ որեւէ մեկի նկատմամբ խտրական վերաբերմունք չպետք է դրսեւորեն:

93. Դատախազները գիտակցում են կոռուպցիայի վտանգները եւ իրենց գործառույթներն իրականացնելիս չեն խնդրում, ընդունում կամ ստանում արտոնություններ կամ առավելություններ: Իրենց անաչառության շնորհիվ դատախազները պետք է ապահովեն դատախազական ծառայությունների նկատմամբ հանրության վստահությունը: Դատախազները զերծ են մնում լրացուցիչ զբաղվածությունից եւ այլ առաջադրանքներից, որոնց դեպքում նրանց անաչառությունը կարող է վտանգի տակ դրվել: Նրանք ի հայտ են բերում շահերի բախում առաջացնող իրավիճակներ եւ անհրաժեշտության դեպքում հրաժարվում են առաջադրանքը կատարելուց:

4.1.2. Դատախազների հաշվետվողականությունը

94. Դատախազները գործում են հանրային պատասխանատվության հիման վրա: Նրանց որոշումները հիմնվում են օրենքի եւ այլ կանոնակարգերի վրա եւ մնում են իրենց հայեցողության շրջանակում: Մասնավորապես դատախազները պետք է հարգեն եւ ապահովեն մարդու իրավունքների պաշտպանությունը:

95. Դատախազները գործում են թափանցիկ կերպով, եթե օրենսդրությամբ չեն սահմանափակվում նրանց գործողությունները կամ նրանց կողմից կազմված փաստաթղթերի հրապարակայնությունը: Նրանք պետք է հատկապես ուշադիր լինեն, որ իրենց որոշումները շահագրգիռ կողմերին հայտնեն հասկանալի ձևով, ինչպես նաեւ հասարակության եւ լրատվության միջոցների հետ շփվելիս:

96. Դատախազների մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, մասնավորապես՝ կառավարման, հաղորդակցության եւ համագործակցության մասով, այդ թվում նաեւ միջազգային մակարդակով, պետք է լինեն բարձր մակարդակի եւ պետք է պահպանվեն վերապատրաստումների միջոցով: Դատախազներն արագ եւ օպտիմալ որակով պետք է վարեն այն գործերը, որոնց համար իրենք պատասխանատվություն են կրում, ինչպես նաեւ պետք է պատասխանատվությամբ օգտագործեն իրենց հասանելի ռեսուրսները:

4.1.3. Մասնագիտության արժանապատվությունը պահպանելու պարտականությունը

97. Դատախազները պետք է շահեն հանրության վստահությունը՝ բոլոր դեպքերում դրսեւորելով օրինակելի վարքագիծ: Նրանք պետք է մարդկանց վերաբերվեն արդարացիորեն, հավասար ձեւով, հարգալից ու քաղաքավարի եւ պետք է մշտապես պահպանեն մասնագիտական ամենաբարձր չափանիշներն ու պահպանեն իրենց մասնագիտության պատիվն ու արժանապատվությունը՝ մշտապես դրսեւորելով ազնիվ եւ հոգատար վարքագիծ⁷³:

4.1.4. Էթիկայի եւ վարքագծի կանոնագրքերը

98. Իրավական գործընթացում ներգրավված բոլոր դատախազների կողմից ընդհանուր իրավական սկզբունքներ եւ էթիկական արժեքներ ունենալը կարեւոր է արդարադատության պատշաճ իրականացման⁷⁴ եւ մասնագիտական ամենաբարձր չափանիշների պահպանման համար: Դատախազները պետք է կարողանան իրենց աշխատանքում բացահայտել էթիկական խնդիրները եւ օգտագործեն հստակ սկզբունքներ դրանք լուծելու համար:

99. Մասնագիտական էթիկայի եւ վարքագծի կանոնագրքերը պետք է ընդունվեն եւ հրապարակվեն՝ հիմնվելով Միավորված ազգերի կազմակերպության կողմից մշակված միջազգային չափանիշների, ինչպես նաեւ Եվրոպայի գլխավոր դատախազների համաժողովի կողմից 2005 թվականի մայիսի 31-ին ընդունված Յանրային մեդադոկտրինի էթիկայի եւ վարքագծի վերաբերյալ եվրոպական ուղեցույցի (Բուդապեշտի ուղեցույց) վրա:

4.2 Դատախազների հիմնարար ազատությունները

100. Դատախազներն օգտվում են կարծիք արտահայտելու եւ խոսքի ազատությունից եւ միավորումներ կազմելու ազատությունից այնպես, ինչպես հասարակության մյուս անդամները: Այս իրավունքներից օգտվելիս նրանք պետք է հաշվի առնեն հայեցողության պարտականությունը եւ զգույշ լինեն, որ չվտանգեն հանրության շրջանում իրենց անկախության, անաչառության եւ արդարության հեղինակությունը, որը դատախազը միշտ պետք է պահպանի:

101. Պետք է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը՝ ապահովելու համար դատախազների

⁷³ Եվրոպայի գլխավոր դատախազների համաժողով, 6-րդ նստաշրջան, *Դատախազների էթիկայի եւ վարքագծի եվրոպական ուղեցույց*. Բուդապեշտի ուղեցույց, CPGE(2005)05, 2005 թվականի մայիսի 31, II կետ:

⁷⁴ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, *Ժողովրդավարական հասարակությունում դատավորների եւ դատախազների միջեւ հարաբերությունների վերաբերյալ* թիվ 4(2009) կարծիք, 2009 թվականի դեկտեմբերի 8, Բորդոյի հռչակագիր, 10-րդ պարբերություն:

անձնական կյանքի նկատմամբ հարգանքը⁷⁵: Այնուամենայնիվ, նրանք պետք է ցուցաբերեն շրջահայացություն եւ զգուշավորություն, որպեսզի խուսափեն իրենց մասնագիտության արժանապատվությունը կամ իրենց գործառույթներն իրականացնելու կարողությունը կասկածի տակ դնելուց:

5. Այլ դերակատարների եւ հաստատությունների հետ հարաբերությունները

5.1. Հարաբերությունները տուժողների, վկաների, կասկածյալների, մեղադրյալների, ամբաստանյալի եւ հանրության հետ

102. Դատախազները պետք է պաշտպանեն արդար դատաքննության իրավունքը եւ հաշվի առնեն վկաների, տուժողների, կասկածյալների, մեղադրյալների կամ ամբաստանյալի օրինական շահերը՝ ապահովելով, որ նրանք տեղեկացված լինեն իրենց իրավունքների եւ վարույթի ընթացքի մասին⁷⁶:

5.2. Հարաբերությունները դատարանների (դատավորների եւ դատարանի անձնակազմի) եւ փաստաբանների հետ

103. Եթե դատախազությունը դատական ինստիտուտի մաս է կազմում, ապա անհրաժեշտ է դատախազների եւ դատավորների միջեւ հստակ տարանջատում սահմանել: Անդամ պետությունները դատախազների՝ օրենքով սահմանված իրավական կարգավիճակը, իրավասությունները եւ դատավարական դերը պետք է հստակեցնեն այնպես, որ դատախազների եւ դատավորների փոխադարձ անկախության եւ անաչառության հետ կապված որեւէ կասկած չմնա⁷⁷:

104. Արդար, անաչառ եւ արդյունավետ արդարադատությունը կարող է երաշխավորվել միայն դատավորների եւ դատախազների լրացուցիչ գործողություններով⁷⁸:

105. Դատական գործողությունների արդյունավետության համար դատախազները պետք է մշտապես քաղաքավարի հարաբերություններ պահպանեն դատարանի բոլոր աշխատակիցների եւ փաստաբանների հետ:

5.3 Հարաբերությունները քննիչների հետ

106. Զննությունների ընթացքում դատախազները եւ քննիչները համագործակցում են պատշաճ կերպով եւ արդյունավետորեն:

107. Դատախազները, եթե դա իրենց իրավասության շրջանակում է, պետք է ապահովեն, որ քննիչները գործեն օրինական կերպով, հարգեն պաշտպանության իրավունքները եւ հնարավորինս սեղմ ժամկետներում եւ մատչելի լեզվով մակրամասն տեղեկացնեն բոլոր կասկածյալներին այն փաստերի մասին, որոնք կարող են օգտագործվել նրանց դեմ⁷⁹:

5.4 Հարաբերությունները բանտի վարչակազմի հետ

108. Դատախազն իր իրավասության սահմաններում պատասխանատվություն է կրում կալանքի օրինականությունն ստուգելու համար: Նա պետք է ապահովի կալանավորների եւ բանտարկյալների իրավունքների ամբողջական եւ արդյունավետ պաշտպանությունը, բարելավի նրանց վիճակը եւ հեշտացնի նրանց ինտեգրումը հասարակությանը⁸⁰:

5.5 Հարաբերությունները լրատվության միջոցների հետ

109. Դատախազներին խորհուրդ է տրվում լրատվության միջոցներով հանրությանը պարբերաբար տեղեկացնել իրենց գործունեության եւ դրանց արդյունքների մասին⁸¹: Դատախազների

⁷⁵ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, «Պաշտոնատար անձանց վարքագծի կանոնների մասին» Rec(2000)10 առաջարկություն, 2000 թվականի մայիսի 11, 17-րդ պարբերություն:

⁷⁶ Եվրոպայի գլխավոր դատախազների համաժողով, 6-րդ նստաշրջան, Հանրային մեղադրողների էթիկայի եւ վարքագծի եվրոպական ուղեցույց. Բուդապեշտի ուղեցույց, CPGE(2005)05, 2005 թվականի մայիսի 31, II կետ:

⁷⁷ Տե՛ս «Զրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec(2000) 19 առաջարկությունը, 2000 թվականի հոկտեմբերի 6, 17-րդ պարբերություն, ինչպես նաեւ տե՛ս ԵՂԳԽԽ-ի թիվ 4(2009) կարծիքը, 2009 թվականի դեկտեմբերի 8, Բացատրական ծանոթագրություն, 66-րդ պարբերություն:

⁷⁸ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, Ժողովրդավարական հասարակությունում դատավորների եւ դատախազների միջեւ հարաբերությունների վերաբերյալ թիվ 4(2009) կարծիք, 2009 թվականի դեկտեմբերի 8, Բորդոյի հռչակագիր, 3-րդ պարբերություն:

⁷⁹ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, Ժողովրդավարական հասարակությունում դատավորների եւ դատախազների միջեւ հարաբերությունների վերաբերյալ թիվ 4(2009) կարծիք, 2009 թվականի դեկտեմբերի 8, Բորդոյի հռչակագիր, Բացատրական ծանոթագրություն, 60-րդ եւ 61-րդ պարբերություններ:

⁸⁰ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, Դատախազների եւ բանտի վարչակազմի միջեւ հարաբերությունների վերաբերյալ թիվ 6(2011) կարծիք, 2011 թվականի նոյեմբերի 24, 16-րդ եւ 36-րդ պարբերություններ:

⁸¹ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, Դատախազների եւ լրատվության միջոցների միջեւ հարաբերությունների մասին թիվ 8(2013) կարծիք, 2013 թվականի հոկտեմբերի 9, 20-րդ եւ 22-րդ պարբերություններ: Տե՛ս նաեւ

գործողությունները պետք է ուղղված լինեն դատախազության թափանցիկությունը եւ դրա նկատմամբ հանրային վստահությունը խթանելուն եւ պահպանելուն:

110. Դատախազներից ստացված հաղորդագրությունները պետք է լինեն անաչառ՝ առանց դատավորների վրա որեւէ կերպ ոչ պատշաճ ազդեցություն ունենալու եւ նրանց անձնական քննադատության ենթարկելու:

111. Երբ որեւէ կոնկրետ դատախազ լրատվության միջոցներով անարդար հարձակման է ենթարկվում, նրան վերապահված է վիճարկվող տեղեկությունները հերքելու կամ իրավական պաշտպանության այլ միջոցներ ստանալու իրավունք՝ ազգային օրենսդրության համաձայն: Այնուամենայնիվ, նման դեպքերում, ինչպես նաեւ այն դեպքում, երբ կեղծ տեղեկություններ են տարածվում այն վարույթում ներգրավված անձանց կամ իրադարձությունների մասին, որի քննության մասին չափազանց կարևոր է, նախընտրելի է, որ ցանկացած արձագանք լինի դատախազության ղեկավարի կամ խոսնակի կողմից, իսկ շատ դեպքերում՝ Գլխավոր դատախազի կամ ծառայության պատասխանատու բարձրագույն մարմնի կամ պետական բարձրագույն մարմնի կողմից: Նման ինստիտուցիոնալ արձագանքը նվազագույնի է հասցնում տվյալ դատախազի կողմից յուրաքանչյուր անձի համար երաշխավորված պատասխանի իրավունքից օգտվելու անհրաժեշտությունը եւ կոնֆլիկտի չափից դուրս «անձնավորման» ռիսկը:

5.6 Հարաբերությունները հանրային ծառայությունների եւ մարմինների հետ

112. Դատախազները չպետք է միջամտեն օրենսդիր կամ գործադիր մարմինների իրավասություններին: Այնուամենայնիվ, նրանք պետք է համագործակցեն պետական մարմինների եւ տարբեր ծառայությունների հետ:

113. Դատախազները պետք է լիազորված լինեն առանց որեւէ խոչընդոտի նշանակելու քննություններ եւ քրեական հետապնդում իրականացնելու քաղաքացիական ծառայողների եւ ընտրված պաշտոնյաների նկատմամբ, եթե վերջիններս կասկածվում են հանցագործությունների կատարման մեջ⁸²:

VI. Դատախազության կազմակերպումը

6.1 Կառուցվածքը

114. Դատախազական ծառայության հիմնարար պատասխանատվությունն իր գործողությունների արդյունավետությունն ապահովելն է: Պետք է լինեն այնպիսի կազմակերպում եւ կառուցվածք, որոնք թույլ կտան արագ եւ հմտորեն կատարել կանոնադրությամբ սահմանված իր բոլոր գործառնությունները՝ ընդ որում պահպանելով որակի բարձր մակարդակ:

6.2 Անձնակազմը

115. Դատախազությունը պետք է կառավարվի արդյունավետորեն՝ խուսափելով բյուրոկրատական քաշքշուկից: Դա անելու համար դատախազները պետք է ունենան համապատասխան վերապատրաստում անցած բավարար եւ որակավորված վարչական անձնակազմ: Պետք է նախատեսվեն նաեւ հատուկ ոլորտների փորձագետներ, օրինակ՝ հանցագործություններից տուժած անձանց ընդունելության, տվյալների մշակման, վիճակագրության համար:

6.3 Ռեսուրսների կառավարումը

116. Համապատասխան կազմակերպչական, ֆինանսական, կյանքական եւ մարդկային ռեսուրսների ապահովումը նպաստում է անկախության երաշխավորմանը: Հատկապես տնտեսական դժվարությունների ժամանակ պետք է հատկացվեն բավարար ռեսուրսներ՝ որակյալ ծառայություն ապահովելու համար⁸³:

117. Եթե ռեսուրսների կառավարումը հանձնարարվում է դատախազական ծառայությանը, ապա այն պարտավոր է դա անել առավելագույն խստությամբ եւ թափանցիկ ձեւով⁸⁴: Այդ նպատակով, ինչպես նաեւ տվյալ միջոցներով արդյունքներն առավելագույնի հասցնելու համար պետք է առկա լինեն

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը. *Արրիզոն եւ Վեյլան ընդդեմ Մայթայի* (որոշում), թիվ 6569/04, 2005 թվականի մայիսի 10, *Յորդանովան եւ Տոշեն ընդդեմ Բուլղարիայի*, թիվ 5126/05, 2012 թվականի հոկտեմբերի 2, 53-րդ պարբերություն, «Ըբզըրվըր»-ը եւ «Գարդիան»-ն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 13585/88, 1991 թվականի նոյեմբերի 26:

⁸² Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Rec(2000)19 առաջարկություն, 2000 թվականի հոկտեմբերի 6, 16-րդ պարբերություն:

⁸³ Տե՛ս ԵՂՎԻՍԻ-ի թիվ 4(2009) կարծիքը, Բորդոյի հռչակագիր, 4-րդ պարբերություն: Տե՛ս նաեւ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, *Դատախազական ծառայությունների միջոցների կառավարման վերաբերյալ* թիվ 7(2012) կարծիք, 2012 թվականի դեկտեմբերի 11, (i) առաջարկություն:

⁸⁴ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, *Դատախազական ծառայությունների միջոցների կառավարման վերաբերյալ* թիվ 7(2012) կարծիք, 2012 թվականի դեկտեմբերի 11, 51-րդ պարբերություն:

համապատասխան միջոցներ. դատախազները պետք է նաեւ համապատասխան վերապատրաստում անցնեն եւ որակյալ մասնագետների կողմից աջակցություն ստանան:

118. Ցանկացած դեպքում, անկախ այն բանից՝ դատախազական ծառայությունները կառավարման ինքնուրույնություն ունեն, թե՛ ոչ, նրանց պետք է հնարավորություն տրվի գնահատելու իրենց կարիքները, համաձայնեցնելու իրենց բյուջեները եւ կայացնելու որոշումներ այն մասին, թե ինչպես օգտագործել հատկացված միջոցները թափանցիկ կերպով՝ արագ եւ որակյալ արդարադատության նպատակներին հասնելու համար⁸⁵:

6.4 Մասնագիտացումը

119. Դատախազների մասնագիտացման, ինչպես նաեւ դատախազությունների կազմակերպչական կառուցվածքի շրջանակում մասնագիտացման անհրաժեշտությունը պետք է դիտարկվի որպես առաջնահերթություն⁸⁶՝ հանցավորության նոր ձեւերին ավելի լավ արձագանքելու համար, ինչպես նաեւ այն դեպքերում, երբ դատախազը քրեաիրավական ոլորտից դուրս իրավասություններ ունի: Դա նաեւ կբարելավի եւ կոյուրացնի միջազգային համագործակցությունը: Մասնագիտացումը կարելու է ոչ միայն արդյունավետությունը բարելավելու, այլ նաեւ ժամանակակից հասարակությանը բնորոշ բարոյության պատճառով դատախազների առաքելության առջեւ ծառացող մարտահրավերները հաղթահարելու համար:

6.5 Ներքին համագործակցությունը

120. Դատախազական ծառայության արդյունավետության համար կարելու է փոխադարձ եւ արդար համագործակցությունը տարբեր դատախազությունների, ինչպես նաեւ նույն դատախազության տարբեր դատախազների միջեւ:

7 Միջազգային համագործակցությունը

121. Դատախազներն իրենց իրավագործության շրջանակում պետք է աջակցության վերաբերյալ միջազգային հարցումներին վերաբերվեն նույն բարեխղճությամբ, ինչ ազգային մակարդակով իրենց աշխատանքի կատարման դեպքում: Իրենց իրավագործության շրջանակում նրանք պետք է, ըստ անհրաժեշտության, նպաստեն օտարերկրյա որոշումների իրականացմանը:

122. Դատախազները պետք է օգտվեն միջազգային փաստաթղթերի եւ հիմնական իրավական համակարգերը կարգավորող ելակետային սկզբունքների կիրառման վերաբերյալ վերապատրաստումներից: Նրանք կարող են հնարավոր առավելագույն չափով մասնակցել փոխանակումներին եւ միջազգային ֆորումներին, որոնք օգտակար են իրենց գործառույթների իրականացման համար, ներառյալ՝ մասնավորապես լավագույն փորձի ձեռքբերումը⁸⁷:

123. Այն դեպքում, երբ դա հանգեցնում է արդյունավետության բարձրացման, դատախազները պետք է օգտագործեն համագործակցության այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են համագործակցությունը Դատական համագործակցության եվրոպական գրասենյակի (Եվրաջասթ), Եվրոպական դատական ցանցի եւ այլ տարբեր համապատասխան ցանցերի, այդ թվում՝ փոխգործակցության հարցերով դատախազների հետ⁸⁸:

⁸⁵ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, *Դատախազական ծառայությունների միջոցների կառավարման վերաբերյալ* թիվ 7(2012) կարծիք, 2012 թվականի դեկտեմբերի 11, (ii) առաջարկություն:

⁸⁶ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, «*Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին*» Rec(2000)19 առաջարկություն, 2000 թվականի հոկտեմբերի 6, 8-րդ պարբերություն:

⁸⁷ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, «*Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին*» Rec(2000)19 առաջարկություն, 2000 թվականի հոկտեմբերի 6, 38-րդ եւ 39-րդ պարբերություններ:

⁸⁸ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ, *Քրեական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության ամրապնդման միջոցների վերաբերյալ* թիվ 1(2007) կարծիք, 2007 թվականի նոյեմբերի 30, 38-րդ եւ 39-րդ պարբերություններ:

Կարծիք թիվ 10 (2015)

Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի՝
ուղղված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին

Քրեական գործերով քննություններում դատախազների դերը

1. Ներածություն

1. Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԳԽՆ) ստեղծվել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 2005 թվականին՝ անդամ պետություններին ուղղված՝ «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec(2000)19 առաջարկության կիրարկմանն առնչվող հարցերի վերաբերյալ կարծիքներ տրամադրելու խնդրով:

2. Նախարարների կոմիտեն 2015 թվականին ԵԴԳԽՆ-ին հանձնարարել է պատրաստել եւ ընդունել կարծիք՝ քրեական գործերով քննությունների ընթացքում դատախազների դերի վերաբերյալ՝ իր ուշադրությանը ներկայացնելու համար: ԵԴԳԽՆ-ն սույն կարծիքը պատրաստել է 29 անդամ պետություններից ստացված հարցաշարի պատասխանների հիման վրա:

3. Ըստ այդ պատասխանների՝ պարզվում է, որ դատախազների եւ քննչական մարմինների միջեւ հարաբերությունների տարբեր հայեցակետերը որոշվում են սահմանադրությամբ եւ (կամ) ազգային օրենքներով եւ ներքին կարգավորող փաստաթղթերով (օրինակ՝ գլխավոր դատախազի հրամաններով ու ցուցումներով, վարքագծի կանոններով, Էթիկայի կանոնագրքերով եւ այլն):

4. Տարբեր համակարգերում դատախազների դերը քրեական գործերով քննությունների ընթացքում տարբեր է: Որոշ երկրներում դատախազները կարող են քննություն իրականացնել: Այլ երկրներում քննություններն իրականացվում է կամ դատախազների ղեկավարությամբ եւ (կամ) վերահսկողությամբ ոստիկանության կողմից, կամ ոստիկանությունը կամ այլ քննչական մարմիններ կարող են գործել ինքնուրույն:

5. Յուրաքանչյուր անդամ պետությունում դատախազական համակարգը կարող է տարբեր լինել: Դա կարող է հիմնված լինել պարտադիր հետապնդման կամ հայեցողական հետապնդման սկզբունքների վրա: Բացի այդ, տարբեր դատախազական համակարգեր ավանդաբար արտացոլել են կամ քննչական, կամ մրցակցային մոդելները:

6. Վերջին տարիներին Եվրոպայում, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Դատարան) ազդեցության ներքո տեղի է ունեցել Եվրոյուգիա այս մոդելները միմյանց ավելի մոտեցնելու ուղղությամբ՝ փորձելով ապահովել ինչպես արդյունավետ քննություն, այնպես էլ շահագրգիռ անձանց իրավունքների նկատմամբ հարգանք, որի հիմնական նպատակն այս բոլոր համակարգերի համապատասխանությունն է ընդհանուր հիմնարար արժեքներին:

Ա. Վկայակոչված տեքստերը¹

7. ԵԴԳԽՆ-ն ընդգծում է Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային (այսուհետ՝ ՄԻԵԿ), մասնավորապես՝ դրա 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ եւ 8-րդ հոդվածներին եւ Դատարանի համապատասխան նախադեպային իրավունքին հղում կատարելու կարեւորությունը: Այն նաեւ հղում է կատարում Խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի եզրակացությունների եւ առաջարկությունների կարեւորությանը:

8. ԵԴԳԽՆ-ն հաշվի է առել վերոնշյալ Rec(2000)19 առաջարկությունը, որտեղ նշվում է, որ քրեական արդարադատության որոշ համակարգերում հանրային մեղադրողներն են իրականացնում, ուղղորդում կամ վերահսկում քննությունը²: ԵԴԳԽՆ-ն նաեւ հաշվի է առել Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված՝ «Ոստիկանության Էթիկայի եվրոպական կանոնագրքի մասին» Rec(2001)10 առաջարկությունը³, Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված՝ «Ծանր հանցագործությունների, այդ թվում՝ սհաբեկչական գործողությունների հետ կապված «հատուկ քննչական մեթոդների» մասին» Rec(2005)10 առաջարկությունը, ինչպես նաեւ Եվրոպայի գլխավոր

¹ Տե՛ս անդամ պետությունների պատասխանները ԵԴԳԽՆ-ի կայքում (www.coe.int/ccpe)՝ «Նախնական աշխատանքներ. Դատախազների գործողությունները քրեական գործերով քննությունների շրջանակներում» (2015թ.) վերնագրի ներքո:

² Այս պետությունների համար առաջարկությամբ սահմանվում է, որ դատախազները պետք է մանրամասն ուսումնասիրեն ոստիկանության կողմից իրականացվող քննությունների օրինականությունը, ցուցումներ տան ոստիկանությանը, հետեւեն դրանց կատարմանը եւ պատժեն հնարավոր խախտումները: Ավելի ավելում է, որ այն պետությունները, որտեղ ոստիկանությունն անկախ է դատախազությունից, ձեռնարկվեն բոլոր միջոցները՝ դատախազության եւ ոստիկանության միջեւ պատշաճ եւ գործուն համագործակցության առկայությունը երաշխավորելու համար:

³ Դրանով տրամադրվում է ուղղորդում այն սկզբունքների վերաբերյալ, որոնք պետք է հարգվեն ոստիկանության կողմից քրեական գործերով քննությունների իրականացման համատեքստում, եւ ամրագրվում է, որ համապատասխանության ապահովումը վերապահված է հանրային մեղադրողին կամ գործը քննող դատավորին:

դատախազների 6-րդ համաժողովի կողմից 2005 թվականի մայիսի 31-ին Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում ընդունված՝ դատախազների եւ ոստիկանության միջեւ հարաբերությունների վերաբերյալ եզրակացությունները: ԵՂԳԽՆ-ն հիմնվել է իր՝ Դատախազներին առնչվող Եվրոպական նորմերի ու սկզբունքների վերաբերյալ թիվ 9(2014) կարծիքի՝ Հռոմի կանոնադրության եւ իր այլ վերաբերելի կարծիքների, մասնավորապես՝ Զրեախրավական ոլորտից դուրս դատախազական ծառայությունների դերի վերաբերյալ թիվ 3(2008) կարծիքի եւ Դատախազների եւ լրատվության միջոցների միջեւ հարաբերությունների վերաբերյալ թիվ 8(2013) կարծիքի վրա:

9. ԵՂԳԽՆ-ն նաեւ հաշվի է առել Միավորված ազգերի կազմակերպության վերաբերելի փաստաթղթերը, ինչպիսիք են «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» 1966 թվականի միջազգային դաշնագիրը, Միավորված ազգերի կազմակերպության ընդհանուր վեհաժողովի կողմից 1979 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունված՝ Իրավապահ մարմինների աշխատակիցների վարքագծի կանոնագիրը (34/169 բանաձեւ), Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ 1984 թվականի կոնվենցիան, Դատախազների դերի վերաբերյալ 1990 թվականի ուղեւիշները եւ Միավորված ազգերի կազմակերպության վերաբերելի փաստաթղթերի կիրարկումը մշտադիտարկելու համար պատասխանատու կոմիտեների առաջարկությունները⁴:

10. ԵՂԳԽՆ-ն նաեւ դիտարկել է Դատախազների միջազգային ասոցիացիայի (ԴՄԱ) կողմից 1999 թվականին ընդունված՝ Դատախազների մասնագիտական պատասխանատվության չափորոշիչները եւ կարելու պարտականությունների եւ իրավունքների վերաբերյալ հայտարարությունը, ԴՄԱ-ի կողմից ընդունված այլ վերաբերելի փաստաթղթեր, ինչպես նաեւ 2015 թվականի մայիսի 25-ի Վիշեգրադյան խմբի գլխավոր դատախազների Սոպոտի հռչակագիրը՝ դատախազական ծառայությունների եւ ոստիկանության միջեւ հարաբերությունների վերաբերյալ:

Բ. Կարծիքի նպատակը եւ շրջանակը

11. Սույն կարծիքի նպատակն է ներկայացնել առաջարկություններ՝ քրեական գործերով քննությունների ընթացքում դատախազների դերի վերաբերյալ՝ հաշվի առնելով այդ քննություններին ներգրավված բոլոր կողմերի (տուժողների, պաշտպանյալների, պաշտպանների, վկաների եւ այլոց) իրավունքները, ինչպես նաեւ վերհանել եւ խթանել դատախազների եւ քննիչների միջեւ աշխատանքային լավագույն գործելակերպերը:

12. Rec(2000)19 առաջարկության մեջ հակիրճ ընդգծված են դատախազների եւ քննչական մարմինների միջեւ հարաբերությունները՝ նշելով Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում գոյություն ունեցող տարբեր համակարգերի միջեւ առկա տարբերությունները:

13. Այս խնդիրն Եական է քրեական արդարադատության պատշաճ իրականացման համատեքստում: Օրենքի գերակայության հիմնական սկզբունքներից մեկը դատախազների եւ քննիչների կողմից մարդու իրավունքները եւ հիմնարար ազատությունները հարգելն է քննության բոլոր փուլերում:

14. Սա ենթադրում է, որ՝

- դատախազները, այն դեպքում, երբ դա իրենց լիազորությունների շրջանակում է, պետք է ապահովեն, որ այն անձանց նկատմամբ, որոնց առնչվում է քննությունը, դրսեւորվի մարդկային վերաբերմունք, եւ նրանք կարողանան պաշտպանել իրենց օրինական իրավունքները:
- դատախազները պետք է իրենց իրավասության եւ լիազորությունների շրջանակներում ունեցած հնարավորության սահմաններում օգտագործեն իրենց բոլոր լիազորությունները՝ ապահովելու, որ քննչական մարմինները հարգեն օրենքը եւ հետեւեն վարքագծի կոնկրետ չափանիշներին, որպեսզի լիազորությունների կամ վարքագծի չարաշահման համար համապատասխան մարմնի առջեւ պատասխանատվություն կրեն:
- դատախազները պետք է ապահովեն, որ գործը քննող դատավորին ներկայացված քննության արդյունքներն արտացոլեն իրական փաստերը՝ դատարանին չմոլորեցնելու համար:

15. Սույն կարծիքը սահմանափակվում է քրեական ոլորտում եւ դատախազության համատեքստում իրականացվող քննություններով:

II. Դատախազների դերը քրեական գործերով քննությունների ընթացքում

Ա. Դատախազների կողմից քննությունների նկատմամբ հսկողությունը

16. Ընդհանուր առմամբ դատախազները պետք է մանրամասն ուսումնասիրեն քննությունների օրինականությունն առնվազն որոշելիս, թե արդյոք պետք է հետապնդում հարուցել կամ շարունակել: Այս առումով դատախազները պետք է նաեւ հետեւեն, թե ինչպես են իրականացվում քննությունները, եւ թե արդյոք հարգվում են մարդու իրավունքները:

17. Այն դեպքում, երբ դատախազներն ունեն դա անելու լիազորություն, նրանք կարող են ըստ պատշաճության պարտադիր կատարման ենթակա ցուցումներ, խորհուրդներ, իրահանգներ կամ ուղեւիշներ տալ քննչական մարմիններին՝ կապված կամ քննության ամբողջ ընթացքի, կամ կոնկրետ քննչական գործողությունների հետ՝ քրեական իրավունքի ինչպես կոնկրետ իրավական, այնպես էլ

⁴ Սարդու իրավունքների կոմիտե, Խոշտանգումների դեմ կոմիտե, Երեխայի իրավունքների կոմիտե:

ընթացակարգային կանոններին, ինչպես նաև ՄԻԵԿ-ով երաշխավորված իրավունքներին համապատասխանությունն ապահովելու նպատակով:

18. Արդյունավետ հետապնդումներ ապահովելու նպատակով այս ցուցումները կամ ուղենիշները կարող են վերաբերել, ի թիվս այլնի, այն ապացույցներին, որոնք պետք է ձեռք բերել, քննության զարգացման պատշաճ ռազմավարությանը, ապացույցների հավաքման համար օգտագործվող միջոցներին կամ գործիքներին, այն փաստերին, որոնք պետք է պարզաբանվեն եւ ապացուցվեն, եւ քննությունների ընթացքում ձեռնարկվելիք միջոցներին:

19. Եթե դատախազներն ունեն քննության նկատմամբ վերահսկիչ դեր, նրանք պետք է ապահովեն, որ քննչական մարմինները դատախազներին տեղեկացնեն քրեական գործերի քննության ընթացքի, իրենց հանձնարարված քրեական քաղաքականության առաջնահերթությունների իրականացման եւ դատախազների ցուցումների կիրառման մասին:

20. Այն անդամ պետություններում, որտեղ դա իրենց իրավասության շրջանակում է, դատախազները պետք է՝

- ձգտեն ապահովել, որ քննությունների միակ նպատակը լինի ճշմարտությունը պարզելը եւ դեպքերի հանգամանքները պարզաբանելը, դրանք իրականացվեն օրինական ձևով՝ հարգելով մասնավորապես ՄԻԵԿ-ի 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ եւ 8-րդ հոդվածներով հռչակված մարդու իրավունքները եւ հիմնարար սկզբունքները, եւ իրականացվեն ժամանակին՝ օբյեկտիվությամբ, անաչառությամբ եւ պրոֆեսիոնալիզմով: Քննիչների աշխատանքը ղեկավարելու, հսկելու կամ վերահսկելու համար պատասխանատու լինելու դեպքում նրանք պետք է այնքանով, որքանով դա հնարավոր է իրենց իրավասությունների եւ լիազորությունների շրջանակներում, ապահովեն, որ քննիչները հարգեն նույն սկզբունքները, ինչպես նաև հիմնարար իրավունքները:
- ձգտեն ապահովել, որ քննությունների ընթացքում հարգվեն պաշտպանության կողմի անմեղության կանխավարկածը եւ իրավունքները: Յնարավորության դեպքում անհրաժեշտ է քննության այս փուլում հրապարակայնորեն չբացահայտել կասկածյալների ինքնությունը եւ ապահովել նրանց անձնական ապահովությունը եւ նրանց արժանապատվության եւ անձնական կյանքի պաշտպանության իրավունքները:
- քննությունների ընթացքում ձգտեն երաշխավորել տեղեկությունների գաղտնիությունը՝ քննությունների ընթացքն ու արդյունավետությունը չփոխանցելու համար:
- այն քննությունների ընթացքում, որոնց նրանք ներգրավված են, ապահովեն, որ երաշխավորեն գործի կողմերի, վկաների եւ այլ մասնակիցների անձնական անվտանգությունն ու իրավունքները:
- ապահովել, որ տուժողները եւ մասնավորապես խոցելի անձինք համապատասխան միջոցներով տեղեկացված լինեն քննություններ սկսելու եւ դրանց արդյունքների մասին՝ հարգելով նրանց իրավունքները:

21. Այս խնդիրները կատարելիս դատախազները պետք է իրենց պարտականությունները կատարեն արդար, հետեւողական եւ արագ կերպով՝ այդպիսով նպաստելով քրեական արդարադատության համակարգի պատշաճ գործընթացի եւ բնականոն գործունեության ապահովմանը:

22. Դատախազները, եթե դա գտնվում է նրանց իրավասության ներքո, պետք է նաև հաշվի առնեն ռեսուրսների, այդ թվում՝ մարդկային եւ ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարմանն առնչվող հարցերը: Նրանք նաև պետք է խուսափեն անհամաչափ ծախսերից՝ միեւնույն ժամանակ մշտապես հարգելով օրենքի գերակայությունը եւ ընթացակարգային իրավունքները:

Բ. Իրավիճակներ, որոնցում դատախազներն են իրականացնում քննություններ

23. Այն անդամ պետություններում, որտեղ թույլատրվում է դատախազների կողմից քննության իրականացում, դատախազները պետք է քննություններն իրականացնեն օրինական, պրոֆեսիոնալ, արդար, արագ կերպով, իրենց լավագույն կարողությունների սահմաններում եւ առանց որևէ մեկի նկատմամբ սահմանափակումների կամ խտրականության: Նրանք պետք է նաև մշակեն քննության ուղղությունները, որոնք կարող են նպաստավոր լինել պաշտպանության կողմի համար, եւ այս առնչությամբ հավաքագրեն եւ բացահայտեն ապացույցներ:

24. Դատախազները պետք է իրենց քննչական գործառույթների շրջանակներում ունենան առնվազն նույն իրավունքներն ու պարտականությունները, ինչ մյուս քննչական մարմինները, ինչպես նաև իրենց տնօրինության տակ ունենան իրենց գործառույթներն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներ:

Գ. Իրավիճակներ, որոնցում ոստիկանությունը կամ քննչական այլ մարմիններ դատախազների ղեկավարման ներքո իրականացնում են քննություններ

25. Այն անդամ պետություններում, որտեղ ոստիկանությունը գտնվում է դատախազության ղեկավարման ներքո, կամ որտեղ ոստիկանության կողմից իրականացվող քննությունները վերահսկվում են դատախազական ծառայությունների կողմից, դատախազներին պետք է վերապահվեն արդյունավետ միջոցներ՝ երաշխավորելու, որ նրանք կարողանան լիովին կատարել քրեական գործերով քննությունների ընթացքում իրենց խնդիրները՝ մշտապես ազգային եւ միջազգային իրավունքին համապատասխան: Նրանք պետք է ապահովեն, որ քննություններն իրականացվեն ամենապատշաճ եւ արդյունավետ ձևով,

ինչպես նաև օրենքի գերակայության եւ ընթացակարգային իրավունքների շարունակական հարգմամբ:

26. Այդպիսի խնդիրները կարող են ներառել հետևյալը.

- ապահովել քրեական քաղաքականության առաջնահերթությունների արդյունավետ իրականացումը.
- ցուցումներ տալ ոստիկանությանն այն մասին, թե երբ սկսել եւ ինչպես իրականացնել քրեական գործերով քննությունները.
- բաշխել առանձին գործեր համապատասխան քննչական մարմին.
- խթանել ոստիկանության եւ դատախազության միջեւ բեղմնավոր եւ արդյունավետ համագործակցություն եւ համակարգել քննությունը, երբ դա առնչվում է մի քանի մարմինների.
- ուղղորդում եւ ցուցումներ տալ օրենքին առնչվող հարցերի վերաբերյալ.
- վերահսկել քննությունների օրինականությունը եւ որակը.
- իրականացնել օրենքին համապատասխանության գնահատում եւ հսկողություն, որքանով դա անհրաժեշտ է.
- եւ պատշաճ դեպքում եւ ազգային օրենսդրությանը համապատասխան՝ պատիժ նշանակել կամ խթանել խախտումների համար պատիժ սահմանելը:

27. Այն անդամ պետություններում, որտեղ դատախազներն իրականացնում են քննությունների նկատմամբ վերահսկողություն, նրանց պետք է վերապահվեն բավարար լայն ընթացակարգային լիազորություններ՝ ապահովելու համար, որ քրեական գործերով քննություններն արդյունավետորեն եւ օրենքին լիակատար համապատասխանությամբ իրականացվեն: Մասնավորապես այն անդամ պետություններում, որտեղ դատախազներն ազգային օրենսդրության շրջանակներում ունեն քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորություն՝

- դատախազները պետք է ապահովեն, որ քննիչները հարգեն իրավական դրույթները, այդ թվում՝ քրեական գործ հարուցելու, կասեցնելու եւ դադարեցնելու օրինականությանը վերաբերող դրույթները, ինչպես նաև պատշաճորեն հաշվի առնեն քրեական վարույթի մասնակիցների, այդ թվում՝ տուժողների եւ պաշտպանության կողմերի իրավունքները: Դա անելու հնարավորություն ունենալու համար դատախազները պետք է պատշաճ տեղեկացված լինեն քննության հետ կապված ապագայում կայացվելիք եւ արդեն կայացված բոլոր կարեւոր որոշումների մասին, մասնավորապես, երբ դրանք ներառում են քրեական վարույթի մասնակիցների իրավունքների եւ ազատությունների լուրջ սահմանափակման հնարավորություն (օրինակ՝ հաղորդված հանցագործության հետեւանքների եւ քննչական հիմնական գործողությունների վերաբերյալ).
- դատախազները պետք է լիազորություն ունենան կամ հաստատելու քննիչի կողմից այդպիսի կարեւոր որոշումների ընդունումը, կամ չեղյալ ճանաչելու դրանք.
- որպեսզի քրեական վարույթի մասնակիցների իրավունքներն ու օրինական շահերը պատշաճ հարգվեն, դատախազները պետք է պատշաճ դեպքում նաև տեղեկացնեն այդ մասնակիցներին վերադաս դատախազին կամ դատարան բողոքարկելու իրենց իրավունքի մասին.
- դատախազները պետք է պահպանեն քննության գաղտնիությունը: Նրանք չպետք է թույլ տան քննիչներից կամ երրորդ կողմերից ստացված գաղտնի տեղեկությունների բացահայտումը, եթե այդպիսի տեղեկությունների բացահայտումն անհրաժեշտ չէ՝ ելնելով արդարադատության շահերից կամ օրենքին համապատասխան.
- դատախազները պետք է հնարավորություն ունենան ազատ եւ ցանկացած պահի մատչելիություն ունենալ քրեական գործերով քննություններին առնչվող բոլոր կյուբերին, որոնք հասանելի են քննիչներին, որպեսզի հնարավոր լինի քննության արդյունավետ եւ ժամանակին վերահսկողություն իրականացնել, անհրաժեշտության դեպքում՝ խուսափել կարեւոր ապացույցների կորստից, ապահովել անվտանգությունն ու տուժողների մատչելիությունը (եթե ազգային օրենսդրությունը դա թույլ է տալիս) գործի կյուբերին կամ կանխել արդարադատությանից այն անձանց փախչելու հնարավորությունը, որոնք պետք է հետապնդման ենթարկվեն.
- դատախազները պետք է կանոնավոր կերպով հսկողություն իրականացնեն քննությունների նկատմամբ, մասնավորապես՝ մարդկանց ապօրինի կամ անհիմն կալանավորումը կամ ազատազրկումը կանխելու նպատակով.
- դատախազները պետք է ձգտեն միջազգային եւ ազգային օրենսդրությանը համապատասխան ազատությունից զրկված բոլոր անձանց պաշտպանել պաշտոնատար անձանց եւ այլ անձանց կողմից ոչ պատշաճ վերաբերմունքից, եւ նրանք պետք է ուշադիր դիտարկեն այդ առնչությամբ ներկայացված բողոքները.
- դատախազները պետք է ունենան օրենքով սահմանված իրավասություններ, որոնք նրանց հնարավորություն կտան ոչ միայն գնահատելու քննիչների գործողությունների օրինականությունը եւ նրանց ցուցումների կատարումը, այլև հնարավորության սահմաններում կանխելու այդ քննիչների կողմից օրենքի խախտումները.
- քննիչների կողմից մարդու իրավունքների լուրջ խախտումների հանգեցնող անօրինական քննչական մեթոդներ կիրառելու յուրաքանչյուր դեպքում դատախազները պետք է իրավունք ունենան քրեական հետապնդում հարուցելու այդ քննիչների նկատմամբ կամ դիմելու իրավասու մարմիններին, որպեսզի դրանք քրեական հետապնդում կամ կարգապահական վարույթ հարուցեն այդ քննիչների նկատմամբ.

- դատախազները պետք է իրավունք ունենան ազատորեն այցելելու արգելանքի տակ պահվող կասկածյալին/պաշտպանյալին:

Դ. Իրավիճակներ, որոնցում ոստիկանությունն անկախ է քննություններ իրականացնելու հարցում⁵

28. Այն անդամ պետություններում, որտեղ ոստիկանությունը կամ քննչական այլ մարմիններ իրականացնում են անկախ քննություն, իրավական համակարգերը պետք է ունենան գործող պատշաճ վերահսկողական ընթացակարգեր՝ ապահովելու քննությունների օրինականությունը, ինչպես նաև ապահովելու, որ ոստիկանությունը եւ քննչական այլ մարմիններ գործեն մասնագիտորեն, արդար եւ արագ:

29. Ամեն դեպքում դատախազները պետք է կարողանան արդյունավետ միջոցներ ձեռնարկել քննչական մարմինների հետ համապատասխան եւ գործուն համագործակցության խթանման համար:

III. Դատախազների դերը քննությունների ժամանակ պաշտպանության կողմի իրավունքները հարգելու առնչությամբ եւ քննության մեթոդները

Ա. Անմեղության կանխավարկածի սկզբունքի եւ պաշտպանության կողմի իրավունքների նկատմամբ հարգանքը

30. Համաձայն Դատարանի նախադեպային իրավունքի⁶՝ յուրաքանչյուր քրեական դատավարություն, այդ թվում՝ ընթացակարգային հայեցակետերը, պետք է կրեն մրցակցային բնույթ եւ ապահովեն մեղադրանքի եւ պաշտպանության կողմերի միջեւ իրավահավասարությունը: Սա արդար դատաքննության իրավունքի հիմնարար հայեցակետ է: Ավելին, ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվում է, որ դատաքննության փուլում դատախազության մարմինները պաշտպանության կողմին ներկայացնեն իրենց մոտ առկա բոլոր համապատասխան ապացույցները, որոնք մեղադրյալի օգտին կամ նրա դեմ են: *Արդար դատաքննության իրավունքը* ներառում է իրավահավասարության սկզբունքը եւ ենթադրում է նաև մրցակցային դատավարության սկզբունքը: Այն ներառում է դատախազի մոտ առկա բոլոր համապատասխան նյութերն ամբողջությամբ եւ ժամանակին հրապարակելու իրավունքը: Սա ենթադրում է ապացուցման բոլոր տարրերի առկայություն եւ դատախազի կամ քննչական այլ մարմնի՝ ինչպես մեղավորության, այնպես էլ անմեղության վերաբերյալ ապացույցներ փնտրելու պարտավորություն:

31. Դատախազները, անկախ քննությունների ընթացքում իրենց դերից, պետք է ապահովեն, որ իրենց գործողությունները համապատասխանեն օրենքին, եւ մասնավորապես հարգեն հետեւյալ սկզբունքները.

- օրենքի առջեւ հավասարությունը,
- դատախազների անաչառությունը եւ անկախությունը,
- փաստաբանի մատչելիության իրավունքը,
- պաշտպանության կողմի՝ բոլոր համապատասխան նյութերն ամբողջությամբ հրապարակելու իրավունքը,
- անմեղության կանխավարկածը,
- կողմերի իրավահավասարությունը,
- դատարանների անկախությունը,
- մեղադրյալի արդար դատաքննության իրավունքը:

32. *Անմեղության կանխավարկածի* նկատմամբ հարգանքը պարտադիր է ոչ միայն դատարանների, այլ բոլոր մյուս պետական մարմինների համար: Դատախազներն ու քննչական մարմինները պետք է ձեռնպահ մնան ցանկացած հայտարարությունից կամ վերաբերմունքից, որը կնպաստի այս սկզբունքի խախտմանը:

33. *Կողմերի իրավահավասարության սկզբունքը*, որպես արդար քրեական դատավարության մաս, պահանջում է, որ քննության օբյեկտ հանդիսացող անձը կարողանա իր գործը ներկայացնել դատարան այնպես, որ իր համար հակառակ կողմի համեմատ էապես անբարենպաստ պայմաններ չստեղծվեն: Հետեւաբար կողմերի միջեւ պետք է պահպանվի արդար հավասարակշռություն, որը թույլ կտա նրանց քննարկել քննության ցանկացած տարր:

34. Քրեական գործերով *մրցակցային սկզբունքի նկատմամբ հարգանքը* պահանջում է քննության եւ դատաքննության փուլերի միջեւ տարբերակում: Ինչ վերաբերում է քննության առաջին փուլին, ապա մրցակցային սկզբունքը բացարձակ չէ: Այն ավելի շուտ այս սկզբունքը պահպանելու ակնկալիք է. այն բաղկացած է ապացույցների որոնումից՝ պարզելու համար, թե արդյոք այս փուլում առկա են բավարար հիմքեր մեղադրական եզրակացություն ներկայացնելու համար , եւ այս փուլում

⁵ Վիշեգրայան խումբը կազմված է Չեխիայի Հանրապետությունից, Հունգարիայից, Լեհաստանից եւ Սլովակիայից:
⁶ *Sէ՛ս Մեյէն* ընդդեմ Ֆրանսիայի [*Messier v. France*] գործը (ՄԻԵԿ, 2011 թվականի հունիսի 30):

ընթացակարգը կարող է գաղտնի լինել⁷:

35. Այնուամենայնիվ, ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետով սահմանվում է յուրաքանչյուր մեղադրյալի՝ իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի եւ հիմքի մասին տեղեկացվելու իրավունքը: Մեղադրյալը պետք է ստույգ տեղեկացված լինի իրեն առաջադրված մեղադրանքի մասին՝ առնվազն ձեռքարկվելու պահից: Բացի այդ, այդ պահից է նաեւ, որ սկսում է գործել 6-րդ հոդվածի 1-ի կետի իմաստով ողջամիտ ժամկետը: Ձեռքարկված, կալանավորված կամ ազատությունից զրկված անձը պետք է անհապաղ գրավոր տեղեկացվի իր իրավունքների մասին: Այդ ծանուցումը պետք է հստակ գրված լինի այն լեզվով, որին տիրապետում է այդ անձը: Այս ծանուցումը, ի թիվս այլնի, պետք է պարունակի տեղեկություններ, որոնք սահմանում են նրա իրավունքը հետեւյալին.

- ամբողջությամբ տեղեկացված լինել իրեն առաջադրված մեղադրանքի մասին,
- ամբողջությամբ տեղեկացված լինել իր կալանքի հիմքի մասին,
- ունենալ փաստաբանի մատչելիություն եւ նրա հետ արդյունավետ խորհրդակցության հնարավորություն,
- բանավոր եւ (կամ) գրավոր թարգմանության իրավունք:

36. Մեղավորության կամ անմեղության վերաբերյալ ապացույցներ փնտրելու եւ դրանք պահպանելու պարտավորությունը պետք է իրատեսորեն մեկնաբանվի՝ հաշվի առնելով յուրաքանչյուր գործի փաստերը, եւ պետք է գնահատվի ապացույցների վերաբերելիությունը:

37. Մեղավորությանը կամ անմեղությանը վերաբերելի ապացույցները պետք է պահվեն, որքանով դա անհրաժեշտ է եւ նպատակահարմար, ազգային օրենսդրությանը համապատասխան առնվազն միջնա դատավարության ավարտը: Այն փաստը, որ որեւէ ապացույց չպետք է օգտագործվի մեղադրանքի կողմի կողմից, չի արդարացնում դրա ոչնչացումը կամ անհասանելիությունը կամ դրա վերաբերյալ գրառումների կամ արձանագրությունների ոչնչացումը: Այն դեպքում, երբ ապացույցներն ընձեռնում են մեղադրանքի կողմի վարկածը հերքելու ողջամիտ հնարավորություն, այդ ապացույցները պետք է պահպանվեն:

38. Եթե դատախազը տեղյակ է մեղադրյալի անմեղությանը վերաբերելի նյութերի եւ (կամ) այնպիսի նյութերի մասին, որոնք կարող են էականորեն օժանդակել պաշտպանության կողմին, դատախազը պետք է հրապարակի այդ նյութերը: Եթե դատախազը հրաժարվում է կամ ի վիճակի չէ դա անելու, ապա դա կարող է հանգեցնել արդարացման կամ հետապնդման դադարեցման:

39. Դատախազները պետք է մշտապես պրոֆեսիոնալ վարքագիծ ցուցաբերեն օրենքին, իրենց մասնագիտության կանոններին եւ Էթիկային եւ Դատախազների Էթիկայի կանոնագրքին (Բուդապեշտի ուղեկիշներ⁸) համապատասխան: Նրանք պետք է ձգտեն հասնել բարեվարքության ամենաբարձր չափանիշներին եւ ապահովեն, որ իրենց վարքագիծն անբասիր լինի:

Բ. քննության հատուկ մեթոդները

40. Դատախազները պետք է իրենց գործունեությունը համապատասխանեցնեն հանցավորության արագ զարգացմանը: Այդ շրջանակներում նրանք պետք է օգտագործեն հասանելի նոր մեթոդներն այնքանով, որքանով դրանք համապատասխանում են օրենքին, եւ պատշաճ ուշադրություն դարձնեն մասնագիտացման եւ բազմառարկայականության անհրաժեշտությանը:

41. Դատախազները պետք է հաշվի առնեն, որ այդպիսի մեթոդներից մի քանիսի, օրինակ՝ տեղեկատուների, գաղտնի գործակալների օգտագործումը, հանդիպումների ձայնագրումը, հեռախոսագանգերի, էլեկտրոնային նամակների, համացանցային հաղորդակցության վերահսկողությունն ու գաղտնալուծումը, միջամտող համակարգչային ծրագրերի, Գլոբալ տեղորոշման համակարգի (ԳՏՅ) կամ տեսաներածիչների եւ այլնի օգտագործումը նույնպես կարող են հանգեցնել անձանց իրավունքների սահմանափակումների կամ արգելքների:

42. Այն անդամ պետություններում, որտեղ դատախազները ներգրավված են հատկապես անձնական կյանքին միջամտող հատուկ մեթոդների օգտագործմամբ իրականացվող քննություններին, նրանք չպետք է դիմեն այդպիսի քննչական միջոցների կիրառմանը՝ բացառությամբ այն լուրջ դեպքերի, երբ կատարվել կամ նախապատրաստվել է ծանր հանցանք, եւ միայն այն դեպքում, եթե այլ միջոցներ կիրառելի կամ տեղին չեն, եւ «այնքանով, որքանով դա անհրաժեշտ է ժողովրդավարական

⁷ Տե՛ս Սալդուզ ընդդեմ Թուրքիայի [Salduz v. Turkey] գործը (ՄԻԵԿ, 2008 թվականի նոյեմբերի 27): Սալդուզը դատապարտվել էր ահաբեկչության համար՝ ոստիկանության կողմից առանց իրավական օգնության տրամադրման կատարված առաջին հարցաքննության ժամանակ գործի փաստական հանգամանքների վերաբերյալ արված հայտարարության հիման վրա: Ըստ Դատարանի՝ բոլոր կասկածյալների՝ իրավական օգնությանը մատչելիություն ունենալու իրավունքն արդար դատաքննության հիմնարար տարրերից մեկն է:

⁸ Եվրոպայի գլխավոր դատախազների համաժողովի կողմից 2005 թվականին Զուլուգարիայի Բուդապեշտ քաղաքում ընդունված՝ Դատախազների Էթիկայի եւ վարքագծի եվրոպական ուղեկիշներ:

հասարակությունում եւ համարվում է արդյունավետ՝ քրեական գործերով քննության եւ հետապնդման համար» (Rec(2005)10 առաջարկություն, 2-րդ պարբերություն): Դատախազները պետք է այս համատեքստում հարգեն համաչափության եւ անաչառության սկզբունքները, անհատների հիմնարար իրավունքները, ինչպես նաեւ անմեղության կանխավարկածը:

43. Այս մեթոդների օգտագործման հարցում պատշաճ հավասարակշռության հասնելու համար անդամ պետությունները պետք է՝

- ձեռնարկեն պատշաճ օրենսդրական միջոցներ՝ այս նոր մեթոդների օգտագործմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը թույլատրելու եւ դրա սահմանները սահմանելու համար.

- ձեռնարկեն պատշաճ միջոցներ՝ ՄԻԵԿ-ով կիրառվող պահանջները եւ Դատարանի նախադեպային իրավունքից բխող սկզբունքները (դատական հսկողություն, օրինականության հարգում եւ այլն) բավարարելու համար.

- ապահովեն դատախազների եւ դատախազական ծառայությունների անձնակազմի համար պատշաճ վերապատրաստում՝ դատախազներին նոր մեթոդների արդյունավետորեն օգտագործման հնարավորություն տալու եւ քրեական գործերով քննությունների իրականացումը դյուրացնելու համար:

IV. Զննության ընթացքում դատախազների դերի ամրապնդմանն ուղղված միջոցները

Ա. Միջազգային համագործակցությունը

44. Դատախազները պետք է խթանեն միջազգային համագործակցությունը եւ փոխադարձ վստահությունը քրեական վարույթների ոլորտում՝ հաշվի առնելով պետությունների ինքնիշխանությունը հարգելու եւ միջազգային եւ ազգային իրավունքի համապատասխան դրույթները խստորեն պահպանելու անհրաժեշտությունը:

45. Պետությունները պետք է խթանեն գործող միջազգային կոնվենցիաների եւ համաձայնագրերի շրջանակներում անմիջական շփումները տարբեր պետությունների կամ միջազգային կազմակերպությունների դատախազների միջեւ՝ նպատակ ունենալով մասնավորապես իրականացնել փորձի փոխանակում մասնագիտացված ցանցերի, սեմինարների եւ աշխատաժողովների միջոցով:

46. Դատախազներն իրենց իրավասության շրջանակներում պետք է քննարկեն հանձնման եւ քրեական գործերով իրավական օգնության, այդ թվում՝ սառեցման, առգրավման եւ բռնագրավման վերաբերյալ միջազգային հարցումները՝ դրանց նկատմամբ ցուցաբերելով այն նույն ուշադրությունը, որը նրանք կցուցաբերեին ազգային մակարդակով իրենց սեփական կամ համանման գործերի նկատմամբ:

47. Դատախազների համագործակցությունը պետք է բարելավվի՝ հնարավորության դեպքում օգտագործելով տեղեկատվական նոր տեխնոլոգիաները, մասնավորապես՝ իրավական օգնության հարցումների փոխանցման եւ կատարման համար, ինչպես նաեւ կանոնավոր կերպով բարձրացնելով նրանց հարցումների եւ այլ լեզուներով կատարվող դրանց թարգմանությունների որակը:

48. Պետք է խթանել միջազգային համագործակցության ոլորտում դատախազական գործունեության առավել լայն մասնագիտացումը, մասնավորապես՝ նշանակելով մասնագիտացված դատախազներ՝ այդ խնդիրը կատարելու համար, կամ ստեղծելով միջազգային համագործակցության հարցերին առնչվող համապատասխան կառույցներ, որոնք աջակցություն կտրամադրեն դատախազներին:

49. Անհրաժեշտ է ապահովել դատախազների, ինչպես նաեւ դատավարության այլ մասնակիցների համար միջազգային իրավական համագործակցության հարցերով հատուկ վերապատրաստում՝ ապահովելու համար, որ նրանք ունենան անհրաժեշտ հմտություններ հանձնման եւ փոխադարձ իրավական օգնության հարցումներ կազմելու, ինչպես նաեւ այլ երկրներից ստացվող նմանօրինակ հարցումները քննելու եւ դրանց պատասխանելու համար: Այդ վերապատրաստումը պետք է ներառի օտար լեզուների ուսուցում, ինչպես նաեւ միջազգային եւ համեմատական իրավունքի վերաբերյալ գիտելիքների թարմացում՝ այդպիսով խթանելով եւ դյուրացնելով տարբեր երկրներից մասնակիցների միջեւ արդյունավետ կապերի ստեղծումը:

50. Եթե դատախազական մարմինները նշանակվում են որպես քրեական գործերով միջազգային համագործակցության կենտրոնական ազգային մարմիններ, դրանք պետք է իրենց ազգային օրենսդրության շրջանակներում լիազորված լինեն ուղղակիորեն կատարել օտարերկրյա հարցումները եւ (կամ) դրանք փոխանցել կատարման իրավասու այլ մարմինների՝ դրանց կատարումը վերահսկելու իրավունքով:

51. Այս առնչությամբ պետք է պատշաճ կերպով հաշվի առնել յուրաքանչյուր երկրում կապի ապահովման կենտրոններ ստեղծելու հարցը, ինչը թույլ կտա անմիջական հաղորդակցություն իրականացնել այդ երկրների իրավասու մարմինների միջեւ՝ դրանց միջեւ կանոնավոր հանդիպումներ անցկացնելով՝ ընդհանուր հետաքրքրությունն ներկայացնող հարցեր քննարկելու համար: Այս կապի ապահովման կենտրոններում աշխատակիցները պետք է ունենան լավ զարգացած հմտություններ միջազգային համագործակցության հարցերի առնչությամբ եւ պետք է հասկանան օտար լեզուներ եւ խոսեն այդ լեզուներով: «Կապի հարցերով մագիստրատների» ծառայությունների տրամադրումը կարող է օգտակար լինել նույն նպատակների համար եւ պետք է խրախուսվի:

Բ. Չանգվածային լրատվության միջոցների հետ փոխգործակցությունը

52. Դատախազները պետք է տեղյակ լինեն զանգվածային լրատվության միջոցների հետ արդյունավետ շփումներ հաստատելու անհրաժեշտության մասին՝ իրենց աշխատանքում հրապարակայնության եւ թափանցիկության սկզբունքներին համապատասխան՝ բարձրացնելով հանրային վստահությունը, տարածելով տեղեկություններ իրենց գործառույթների եւ լիազորությունների մասին եւ դրանով իսկ նպաստելով իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ առավել խորը գիտելիքներ ձեռք բերելուն⁹:

53. Դատախազների կողմից զանգվածային լրատվության միջոցներին տրամադրվող տեղեկությունները պետք է լինեն հստակ, հավաստի եւ ճշգրիտ եւ չպետք է խախտեն քննության ամբողջականությունն ու արդյունավետությունը կամ դատախազների անձնական անվտանգությունը: Խոսքը պետք է վերաբերի ոչ թե կոնկրետ դատախազների, այլ չանձնավորված ձեռով վերաբերի ընդհանուր առմամբ դատախազության գործողություններին: Դատախազները պետք է լրատվության միջոցներին վերաբերվեն առանց որեւէ խտրականության:

54. Այս տեղեկությունները պետք է համապատասխանեն նաեւ արտահայտվելու ազատությանը, անձնական տվյալների պաշտպանությանը, քննությունների գաղտնիությանը, արժանապատվությանը, անմեղության կանխավարկածի սկզբունքին, վարույթի մյուս մասնակիցների նկատմամբ էթիկայի նորմերին, ինչպես նաեւ կոնկրետ տեղեկության հրապարակումը կարգավորող եւ սահմանափակող իրավական նորմերին:

55. Դատախազները կարող են նաեւ հանրության լայն շերտերին տեղեկություններ տրամադրել զանգվածային լրատվության միջոցներով՝ հանցանքների կանխարգելումը եւ (կամ) հետապնդումը, ինչպես նաեւ ազգային կամ միջազգային մակարդակով քրեական վարույթների իրականացումն ավելի լավ հասկանալու խթանման համար:

56. Հանրության լայն շերտերին իրենց գործունեության վերաբերյալ ավելի լավ տեղեկացնել կարողանալու համար դատախազները պետք է օգտագործեն տեղեկատվական տեխնոլոգիաները, այդ թվում՝ կայքերի ստեղծումը, պատշաճ կառավարումը եւ կանոնավոր թարմացումը:

57. Չանգվածային լրատվության միջոցների հետ շփումների վերաբերյալ հատուկ վերապատրաստում պետք է իրականացնել այն իրավիճակներում, երբ դատախազներն անմիջական եւ կանոնավոր կապ ունեն զանգվածային լրատվության միջոցների մասնագետների հետ՝ որակյալ եւ հիմնավորված տեղեկություններ տրամադրելու նպատակով: Այդ վերապատրաստումը հնարավոր է անհրաժեշտության դեպքում իրականացնել փորձագետների եւ լրագրողների օգնությամբ:

Գ. Վերապատրաստումը

58. Դատախազների մասնագիտական բարձր որակավորումը, մասնավորապես՝ քննությունների շրջանակներում, անհրաժեշտ պայման է դատախազության արդյունավետ աշխատանքի եւ դրա նկատմամբ հանրության վստահությունը բարձրացնելու համար: Այդ իսկ պատճառով դատախազները պետք է համապատասխան կրթություն ստանան եւ անցնեն նախնական եւ ընթացիկ վերապատրաստման դասընթացներ իրենց մասնագիտացման վերաբերյալ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ա. Անդամ պետությունները պետք է հստակորեն սահմանեն քրեական գործերով քննությունների շրջանակներում դատախազների եւ քննչական մարմինների իրավունքներն ու պարտականությունները:

բ. Ընդհանուր առմամբ դատախազները պետք է մանրամասն ուսումնասիրեն քննությունների օրինականությունը ոչ ուշ, քան որոշում կայացնելիս, թե արդյոք պետք է հետապնդում հարուցել կամ այն շարունակել, թե՛ ոչ: Այս առնչությամբ դատախազները պետք է նաեւ հետեւեն, թե ինչպես են իրականացվում քննությունները, եւ արդյոք հարգվում են մարդու իրավունքները:

գ. Այս խնդիրն իրագործելիս դատախազները պետք է ունենան իրավական, ֆինանսական եւ տեխնիկական միջոցներ՝ քննությունների օրինականությունը ստուգելու եւ օրենքի ցանկացած խախտմանն արձագանքելու համար:

դ. Քննությունները պետք է մշտապես անաչառ իրականացվեն եւ ներառեն քննիչների թե՛ մեղավորությանը, թե՛ անմեղությանն առնչվող ապացույցներ փնտրելու եւ դրանք պահպանելու պարտավորությունը:

ե. Դատախազները պետք է իրենց հասանելի բոլոր արժանահավատ ապացույցները ներկայացնեն դատարան եւ վերաբերելի բոլոր ապացույցները բացահայտեն մեղադրյալին:

զ. Դատախազները պետք է մշտապես հարգեն մեղադրյալի, տուժողների, վկաների կամ վարույթին այլ կերպ ներգրավված անձանց իրավունքները:

է. Դատախազներն ու քննչական մարմինները պետք է համագործակցեն եւ փոխանակեն իրենց գործառույթների իրականացման համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները:

ը. Դատախազներն ու քննչական մարմինները պետք է իրենց խնդիրները կատարեն ամենարդյունավետ եւ ամենաարագ կերպով, հատկապես, երբ գործը վերաբերում է կալանավորված

⁹ Տե՛ս Զրեափրավական ոլորտից դուրս դատախազական ծառայությունների դերի վերաբերյալ ԵՂԳԽԻ-ի թիվ 3(2008) կարծիքը եւ Դատախազների եւ լրատվության միջոցների միջեւ հարաբերությունների վերաբերյալ թիվ 8(2013) կարծիքը:

անձանց, եւ պետք է քննչական միջոցներն օգտագործելիս հարգեն համաչափության սկզբունքը:

թ. Դատախազներն ու քննչական մարմինները պետք է ըստ պատշաճության համապատասխան վերապատրաստում անցած լինեն ինչպես օրենքի, այնպես էլ քննության ամենաարդիական մեթոդների վերաբերյալ:

ժ. Դատախազներն ու քննչական մարմինները պետք է զարգացնեն ամենաարդյունավետ միջազգային հարաբերություններն ու համագործակցությունը:

ժա. Դատախազները պետք է ձգտեն բարձրացնել հանրային վստահությունը՝ տրամադրելով տեղեկություններ իրենց գործառույթների եւ լիազորությունների մասին եւ դրանով իսկ նպաստելով իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ առավել խորը գիտելիքներ ձեռք բերելուն՝ միեւնույն ժամանակ հարգելով հիմնարար իրավունքներն ու սկզբունքները, ինչպիսիք են անմեղության կանխավարկածը եւ արդար դատաքննության իրավունքը:

Կարծիք թիվ 11 (2016)

Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի՝
ուղղված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին

Դատախազների աշխատանքի, այդ թվում՝ ահաբեկչության և ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հարցում նրանց աշխատանքի որակը և արդյունավետությունը

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Նախարարների կոմիտեի կողմից իրեն վերապահված լիազորությունների շրջանակի համաձայն՝ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԳԽՆ) պատրաստել է կարծիք՝ Դատախազների աշխատանքի, այդ թվում՝ ահաբեկչության և ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության դեմ պայքարում որակի և արդյունավետության մասին: Անդամ պետություններում, որտեղ դատախազական ծառայություններն իրականացնում են քրեական արդարադատությունից դուրս այլ գործառնություններ, սույն կարծիքի սկզբունքներն ու առաջարկությունները տարածվում են նաև այդ գործառնությունների նկատմամբ:

2. Եվրոպայի խորհրդի հետզհետե ավելացող անդամ պետություններում հանրային ծառայությունն ընդհանրապես և քրեական արդարադատության ոլորտի հաստատությունները, ներառյալ՝ մասնավորապես դատախազական ծառայությունները, ավելի ու ավելի շատ են արժանանում հասարակության, քաղաքական գործիչների և լրատվության միջոցների ուշադրությանը: Հետեւաբար դատախազական ծառայությունները պետք է ցույց տան, որ իրենց պարտականությունները կատարում են առավելագույն և ժամանակին համահունչ պրոֆեսիոնալիզմով:

3. Սույն կարծիքի նպատակն է որոշել, թե դատախազական ծառայություններն ինչպես կարող են կատարել իրենց առաքելությունն ամենաբարձր որակով և արդյունավետությամբ: Այն նաև ուսումնասիրում է, թե նրանք ինչպես պետք է կազմակերպեն իրենց աշխատանքը ժամանակակից ձևով՝ օգտագործելով բոլոր վերջին տեխնիկական մեթոդներն ու միջոցները, ինչպես նաև այն, թե ինչպես կարելի է չափել և գնահատել նրանց աշխատանքի արդյունավետությունն ու որակը: Կարծիքի երկրորդ մասում կքննարկվի, թե դատախազական ծառայություններն ինչպես կարող են բավարարել որակի և արդյունավետության աճող պահանջները նաև ահաբեկչության և ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության դեմ պայքարում հատուկ մարտահրավերների առջև կանգնելիս:

4. ԵԴԳԽՆ-ն համարում է, որ դատախազական ծառայությունները բարդ պետական կազմակերպություններ են: Հետեւաբար աճող կարիքներին, սոցիալական մարտահրավերներին և ավելի լավ հանրային ծառայություններ մատուցելու ճնշումներին համարժեք արձագանքելու համար առաջնային նշանակություն ունեն ընդհանուր իրավական, կազմակերպական և տեխնիկական շրջանակը, ինչպես նաև անհրաժեշտ ֆինանսական և մարդկային ռեսուրսները:

5. Եվրոպայի խորհրդի անդամ պետություններն ունեն տարբեր իրավական համակարգեր, այդ թվում՝ դատախազական ծառայություններ: ԵԴԳԽՆ-ն հարգում է դրանցից յուրաքանչյուրի բազմատեսակությունը: Հետեւաբար սույն կարծիքում քննարկված ոչ բոլոր տարրերը կարող են վերաբերել բոլոր անդամ պետություններին: Այնուամենայնիվ, դրանք հիմնականում առնչվում են հնարավորինս արդյունավետ, որակով և օրենքի ու մարդու իրավունքների խստագույն պահպանմամբ աշխատելու վերաբերյալ դատախազների մտահոգություններին:

6. Սույն կարծիքը պատրաստվել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ), ինչպես նաև Եվրոպայի խորհրդի այլ փաստաթղթերի հիման վրա, ներառյալ՝ Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին 1959 թվականի Եվրոպական կոնվենցիան, Ահաբեկչության արգելման մասին 1977 թվականի Եվրոպական կոնվենցիան, Կիբեռանցագործության մասին 2001 թվականի Եվրոպական կոնվենցիան, Ահաբեկչության կանխարգելման մասին 2005 թվականի կոնվենցիան և դրա 2015 թվականի լրացուցիչ արձանագրությունը, Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին 2005 թվականի կոնվենցիան, Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին 2005 թվականի կոնվենցիան, «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Նախարարների կոմիտեի Rec(2000)19 առաջարկությունը և «Քրեական արդարադատության համակարգից դուրս հանրային մեղադրողների դերի մասին» Նախարարների կոմիտեի Rec(2012)11 առաջարկությունը:

7. Սույն կարծիքը հիմնված է նաև Նախարարների կոմիտեի՝ Մարդու իրավունքների և ահաբեկչության դեմ պայքարի 2002 թվականի ղեկավար սկզբունքների, Նախարարների կոմիտեի՝ Ծանր հանցագործությունների, այդ թվում՝ ահաբեկչության հետ կապված «քննության հատուկ մեթոդների մասին» Rec(2005)10 առաջարկության և ԵԴԳԽՆ-ի Նախորդ կարծիքների վրա, մասնավորապես՝ Քրեական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության ամրապնդման միջոցների վերաբերյալ թիվ 1(2007) կարծիքի, Դատախազական ծառայությունների միջոցների կառավարման վերաբերյալ թիվ 7(2012) կարծիքի, Դատախազներին առնչվող Եվրոպական նորմերի ու սկզբունքների վերաբերյալ թիվ 9(2014) կարծիքի, այդ թվում՝ Հռոմի կանոնադրության, Քրեական գործերով

քննություններում դատախազների դերի վերաբերյալ թիվ 10(2015) կարծիքի վրա:

8. Հաշվի են առնվել նաև Միավորված ազգերի կազմակերպության հետեւյալ փաստաթղթերը՝ Ռուբբային ահաբեկչության դեմ պայքարի մասին 1997 թվականի կոնվենցիան, Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին 1999 թվականի կոնվենցիան, Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ 2000 թվականի կոնվենցիան, Կոռուպցիայի դեմ 2003 թվականի կոնվենցիան:

9. ԵՂԳԽՆ-ն նաև դիտարկել է 1999 թվականին Դատախազների միջազգային ասոցիացիայի (ԴՄԱ) կողմից ընդունված՝ Դատախազների մասնագիտական պատասխանատվության չափանիշները եւ հիմնական պարտականություններն ու իրավունքները:

10. Սույն կարծիքը պատրաստելու համար ԵՂԳԽՆ-ն վերլուծել է մասնավորապես իր 30 անդամների պատասխանները Զարտուղարության կողմից այդ նպատակով կազմված հարցաշարին (պատասխանների շարքը հասանելի է ԵՂԳԽՆ-ի կայքում)՝ www.coe.int/ccpe:

II. ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Ա. Արտաքին միջավայրը

11. Դատախազների աշխատանքի որակն ու արդյունավետությունը կախված են ոչ միայն նրանց կադրային ներուժից եւ հմտություններից, այլ նաև զգալիորեն կրում են արտաքին գործոնների ազդեցությունը, որոնք հիմնականում դուրս են դատախազների վերահսկողությունից. դրանք են օրենսդրական եւ դատական որոշումները, հասանելի ռեսուրսները եւ հասարակությունից ակնկալիքները: Հետեւաբար այս գործոնները պետք է մանրակրկիտ ուսումնասիրվեն հատկապես դատախազության աշխատանքի որակի եւ արդյունավետության վրա իրենց ունեցած ազդեցության տեսանկյունից:

1. Իրավական դաշտը, ազգային ավանդույթները

12. Օրենքի գերակայության նկատմամբ հարգանքը պարտավորություն է Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների համար: Նաև ՄԻԵԿ-ում սահմանվել են որակին առնչվող մի շարք պահանջներ: Այսպես՝ 6-րդ հոդվածը կարելի է պահանջներ է սահմանում ցանկացած ազգային իրավական դաշտի համար՝ ապահովելու քրեական արդարադատության որակը, ինչպես օրինակ՝ դատական համակարգի անկախությունը, ողջամիտ ժամկետը, մատչելիությունը եւ հրապարակայնությունը¹: Զանի որ յուրաքանչյուր դատախազական ծառայություն իր գործառնություններն իրականացնում է իրավական դաշտի շրջանակներում, օրենսդրությունը դրա աշխատանքի որակի եւ արդյունավետության առաջնային նախապայմանն է: Օրենքները եւ հաճախ ընդհանուր իրավունքի համակարգերում՝ վճիռներն ազդեցություն են ունենում դատախազների կողմից դատարաններ ներկայացվող գործերի տեսակի եւ ծավալի, ինչպես նաև դրանց ընթացքի վրա: Այս դաշտը պետք է լինի հստակ եւ աշխատելու համար պարզ՝ ապահովելով, որ ազգային համակարգերը չճանապարհեն զործերով, օրինակ՝ վեճերի լուծման այլընտրանքային միջոցներ ստեղծելու միջոցով: Մյուս կողմից՝ օրենսդրության կամ դատական գործելակերպի ոչ բավարար նախագծումը կամ դրանցում չափազանց հաճախ կատարվող փոփոխությունները կարող են լուրջ խոչընդոտ լինել դատախազության կողմից հիմնավոր եւ համոզիչ որոշումներ կայացնելու համար:

13. Հստակ եւ պարզ իրավական դաշտը պարզեցնում եւ արդյունավետ է դարձնում արդարադատության մատչելիությունը, օրինակ՝ օգնելով նվազեցնել քննվող գործերի մեծ ծավալը, հատկապես քրեական արդարադատության համակարգում՝ ավելի արդյունավետ եւ նպատակային օգտագործելով հանրային ռեսուրսները, ինչպես նաև ավելի շատ ժամանակ եւ ֆինանսական ռեսուրսներ հատկացնելով հասարակական կարգը լրջորեն խախտող հանցագործությունների, մասնավորապես՝ ահաբեկչության, ինչպես նաև ծանր հանցագործությունների եւ կազմակերպված հանցավորության համար: Նմանապես, ազգային օրենսդրությունը եւ արդարադատության համակարգերը պետք է հաշվի առնեն տեխնոլոգիական զարգացումը, նպաստեն տվյալների բազաներին եւ այլ համապատասխան տեղեկություններին դատախազական ծառայությունների հեշտ հասանելիությանը եւ հիմք հանդիսանան դրանց աշխատանքի որակի բարելավման համար:

14. Զաղաքական համակարգերն ու իրավական ավանդույթները նույնպես անմիջական ազդեցություն ունեն դատախազների աշխատանքի վրա: Դա ներառում է դատախազական ծառայությունների կարգավիճակը եւ մասնավորապես՝ գործադիր իշխանությունից դրանց անկախությունը: Ավելին, ներկայումս Եվրոպայում տիրող անվտանգության իրավիճակի արդյունքում, որտեղ երկրները բախվում են ահաբեկչության եւ ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության աճող սպառնալիքներին, պետք է ձեւավորվի ազգային քրեական քաղաքականություն, որը միտված է դատախազների աշխատանքի որակի ու արդյունավետության բարելավմանը:

15. Թեեւ միջազգային համագործակցությունը վերջին տասնամյակների ընթացքում կայուն կերպով բարելավվում է, երբեմն այլ պետությունների հարցումներին պատասխանելու գործընթացը ձգձգվում է, ինչը կարող է ոչ արդարացված թվալ: Սա խոչընդոտում է արդյունավետ արտահանձնմանը եւ

¹ Տե՛ս Դատական խորհուրդների եվրոպական ցանցի (ԴԽԵՑ) «Որակի կառավարման մասին» 2008 թվականի վերջնական զեկույցը:

աջակցությանն առնչվող հարցումներին եւ հետեւաբար խաթարում է հարցում ներկայացրած պետություններում դատախազների աշխատանքի եւ դատական վարույթների արդյունավետությունը: Այսպիսով, պետությունները պետք է շարունակեն ձգտել քրեական գործերով անմիջական անդրազգային համագործակցությանը՝ փոխադարձ վստահության հիման վրա:

2. Ռեսուրսները

16. Անդամ պետություններում ֆինանսական եւ այլ ռեսուրսների առկայությունն ուղղակիորեն ազդեցություն է ունենում դատախազների աշխատանքի որակի եւ արդյունավետության վրա: Այս համատեքստում ԵՂԿԽՆ-ն ընդգծում է մասնավորապես մարդկային եւ տեխնիկական բավարար ռեսուրսներ, պատշաճ եւ հետեւողական վերապատրաստում ապահովելու անհրաժեշտությունը, ինչպես նաեւ դատախազներին տրամադրվող սոցիալական ապահովության փաթեթների շրջանակը, որը պետք է համապատասխանի նրանց առաքելության կարեւորությանը: Իրավիճակն անդամ պետություններում նաեւ ցույց է տալիս, որ արդյունավետությունը կարող է մեծանալ կառավարմանն առնչվող շատ հարցերում դատախազական ծառայությունների ինքնավարության (մասնավորապես՝ բյուջեի մասով) որոշակի մակարդակի միջոցով:

17. Դատախազները, այսպիսով, պետք է ունենան համարժեք մարդկային, ֆինանսական եւ նյութական ռեսուրսներ, որպեսզի կարողանան ուսումնասիրել եւ քննել բոլոր համապատասխան հարցերը: Որակավորված անձնակազմի աջակցությունը, ժամանակակից համարժեք տեխնիկական սարքավորումները եւ այլ ռեսուրսներ դատախազներին կարող են ազատել ավելորդ ծանրաբեռնվածությունից եւ հետեւաբար բարելավել նրանց աշխատանքի որակն ու արդյունավետությունը:

3. Հասարակության կողմից ազդեցությունը

18. Դատախազները պետք է արագ կերպով հավաստի եւ համապարփակ տեղեկություններ ստանան հասարակության բոլոր համապատասխան դերակատարներից: Հետեւաբար արդարադատության համակարգի ներսում եւ դրանից դուրս այլ դերակատարների (օրինակ՝ ոստիկանության եւ այլ պետական մարմինների, իրավաբանների, ՀԿ-ների) հետ հարաբերությունները կարեւոր դեր են խաղում ազգային եւ միջազգային մակարդակով համապատասխան տեղեկությունների արդյունավետ փոխանակման հիման վրա արագ կերպով հիմնավորված որոշումներ կայացնելու դատախազների կարողության մեջ: Այս նպատակով դատախազներին անհրաժեշտ են համաձայնեցված եւ բավարար իրավական նորմեր եւ ընթացակարգեր, որոնք նրանց թույլ կտան դիտարկվող շահերին համաչափ եղանակներով հիմնավոր որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ տեղեկություններ հավաքել:

19. Անդամ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն ՄԻԵԿ-ում սահմանված իրավունքներին համապատասխան, որոնք կարող են օգնել դատախազության ծառայությունների նկատմամբ հանրային վստահությունն ամրապնդելու հարցում՝ արձագանքելով լրատվության միջոցների կողմից ներկայացվող աճող պահանջներին եւ այդպիսով աշխատելով ավելի թափանցիկ: Դատախազության ծառայությունների համար ժամանակակից տեղեկատվական համակարգերի եւ մեթոդների կիրառումն անփոխարինելի է հանրությանն արագ եւ ճշգրիտ տեղեկություններ տրամադրելու հարցում:

20. Քրեական գործերում զգայուն տեղեկությունների արտահոսքը լրատվության միջոցներին ոչ միայն կարող է նվազեցնել քննության արդյունավետությունը եւ ոտնահարել տուժողների իրավունքները, այլ նաեւ շփոթեցնում է անմեղության կանխավարկածի եւ «չպիտակավորվելու» իրավունքի համար: Դա կանխելու համար պետք է արգելվի չթույլատրված անձանց համար գաղտնի տեղեկությունների հասանելիությունը: Քննությունների վերաբերյալ կեղծ կամ կողմնակալ լուրերը կարող են խաթարել հանրության վստահությունը եւ կասկածներ առաջացնել դատախազական համակարգի կամ դատարանների անկախության, անկողմնակալության եւ ազնվության վերաբերյալ: Հետեւաբար դատախազական ծառայությունների եւ լրատվության միջոցների միջեւ պետք է ստեղծվի պատշաճ հաղորդակցություն, որը կօգնի խուսափել կեղծ կամ կողմնակալ լուրերի հրապարակումից կամ նվազագույնի հասցնել դրանց բացասական հետեւանքները:

21. Յուրաքանչյուր ոք պետք է ունենա դատախազի կողմից ձեռնարկված միջոցի վերաբերյալ բողոք կամ գանգատ ներկայացնելու իրավունք: Դատախազների որոշումների որակն ու հաշվետվողականությունը բարձրացնելու համար պետք է ստեղծվի բողոքարկման արդյունավետ եւ անկողմնակալ մեխանիզմ, եւ պետք է վերլուծվեն բողոքների հիմքերն ու արդյունքները ոչ միայն արդար դատաքննության իրավունքի տեսանկյունից, այլ նաեւ դատախազների աշխատանքի որակը խթանելու համար՝ նրանց թերությունները վերացնելու եւ ձախողումները կանխելու միջոցով:

4. Անհարկի արտաքին ազդեցությունը

22. Դատախազներն իրենց գործառնությունները պետք է իրականացնեն՝ գերծ մնալով ցանկացած կողմի կողմից կամ ցանկացած պատճառով անհարկի արտաքին ազդեցություններից, դրդումներից,

ճնշումներից, սպառնալիքներից կամ միջամտություններից՝ ուղղակի կամ անուղղակի:

Բ. Ներքին միջավայրը

1. Ռազմավարական տեսլականը

22. Դատախազների աշխատանքի որակի եւ արդյունավետության վրա զգալի ազդեցություն են ունենում նաեւ ներքին գործոնները: Դատախազական ծառայությունների ղեկավարությունը պետք է ռազմավարական կառավարում իրականացնի: Դատախազների աշխատանքի ուղղեցիչը պետք է լինի մասնագիտական նպատակներ եւ մարդկային ու կյուլթական ռեսուրսների կառավարում ներառող ռազմավարական ծրագիրը: Դրանով կարող են նախատեսվել մարդկային ռեսուրսների եւ գործերի համարժեք կառավարման միջոցով որակի եւ արդյունավետության բարելավման ներքին միջոցներ, ինչպես նաեւ այդ նպատակով իրականացվող թիրախային գործողություններ:

2. Մարդկային ռեսուրսների կառավարումը. դատախազների ընտրությունը, աշխատանքի ընդունումը, առաջխաղացումը եւ վերապատրաստումը

24. Որակի խթանման համար անհրաժեշտ է, որ դատախազների ընտրությունը, աշխատանքի ընդունումը, առաջխաղացումը եւ այլ աշխատանքի փոխադրումը հիմնված լինեն օրենքով կամ գրավոր ներքին ուղեցույցներով սահմանված հստակ եւ կանխատեսելի չափորոշիչների վրա:

25. Դատախազության որոշումների կամ այլ գործողությունների որակը, ի թիվս այլ գործոնների, կախված է ներգրավված դատախազների մշտական վերապատրաստումից: ԵՂԳԽՄ-ն այն կարծիքին է, որ դատախազությունների եւ (կամ) այլ իրավասու կառույցների ղեկավարները (օրինակ՝ դատական աշխատողների վերապատրաստում իրականացնող հաստատությունները) պետք է պատասխանատու լինեն իրենց հաստատությունների շրջանակներում վերապատրաստման, այդ թվում՝ ինքնակրթության մասով ակտիվ քաղաքականության համար, որն ապահովում է դատախազների աշխատանքի որակի եւ արդյունավետության բարձրացումը:

26. Դատախազներն իրենց կարիերայի յուրաքանչյուր փուլում պետք է ունենան շարունակական վերապատրաստման ծրագիր՝ իրենց մասնագիտական հմտությունները պահպանելու եւ կատարելագործելու համար²: Նման վերապատրաստումը պետք է ներառի նաեւ տեղեկատվական տեխնոլոգիաներին, Էթիկային եւ հաղորդակցության հմտություններին³, ինչպես նաեւ ընդհանուր առմամբ կառավարմանը, իսկ մասնավորապես՝ գործերի կառավարմանն առնչվող հարցեր եւ պետք է հասանելի լինի դատախազական ծառայության բոլոր մակարդակների համար: Պետք է խորությամբ ուսումնասիրվեն հատուկ թեմաներ (անհրաժեշտության դեպքում՝ նաեւ այլ հաստատությունների հետ համատեղ վերապատրաստում անցկացնելով) այն մասնագիտական հմտությունները բարելավելու նպատակով, որոնք անհրաժեշտ են մշտապես աճող մարտահրավերներին (օրինակ՝ ահաբեկչությանը, ինչպես նշված է ստորեւ) դիմակայելու համար⁴:

27. Նախորդ մի քանի կարծիքներում ԵՂԳԽՄ-ն ընդգծել է դատախազների մասնագիտացումը խթանելու կարեւորությունը, հատկապես՝ կանոնավոր վերապատրաստման դասընթացներին⁵, մասնագիտական միջոցառումներին եւ համաժողովներին մասնակցելու միջոցով: Նման մասնակցության միջոցով ավելի խորը գիտելիքներ եւ այլ որակավորումներ ձեռք բերելը կարող է դատախազների պաշտոնի բարձրացման, առաջխաղացման կամ ավելի բարձր վարձատրության հիմք դառնալ:

28. Սկզբունքները եւ ուղեցույցներն այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են ժամանակի կառավարումը, համապատասխան մեթոդաբանությունը կամ արդարադատության իրականացման համակարգի այլ դերակատարների հետ համագործակցության ընդլայնումը, պետք է ուղղված լինեն ամենօրյա աշխատանքը հեշտացնելուն եւ այդ կերպ դատախազների աշխատանքի որակն ու արդյունավետությունը բարելավելուն:

29. Բարեվարքությունը, լավ վարքագծի չափանիշները՝ թե՛ մասնագիտական, թե՛ անձնական, եւ Էթիկայի վերաբերյալ իրավական դրույթները կամ դատախազների Էթիկայի կանոնագրքերն այն անդամ պետություններում, որտեղ նրանք գոյություն ունեն, պետք է նրանց կանոնավոր վերապատրաստման մաս կազմեն:

3. Դատախազական ծառայությունների կառավարումը

ա. Դատախազական ծառայությունների աշխատանքի կազմակերպումը. պարտականությունները, վարչական ստորաբաժանումները, իրավասությունների բաշխումը եւ այլն

² Տե՛ս Դատախազներին առնչվող եվրոպական կորմերի ու սկզբունքների վերաբերյալ ԵՂԳԽՄ-ի թիվ 9(2014) կարծիքը, Հռոմի կանոնադրություն, XIII հոդված, Բացատրական ծանոթագրություն, 57-րդ, 61-րդ եւ 63-րդ պարբերությունները:
³ Նույն տեղում, Բացատրական ծանոթագրություն, 62-րդ պարբերություն:
⁴ Նույն տեղում, Հռոմի կանոնադրություն, XX հոդված, Բացատրական ծանոթագրություն, 64-րդ պարբերություն:
⁵ Նույն տեղում, Հռոմի կանոնադրություն, XIII հոդված, Բացատրական ծանոթագրություն, 57-րդ եւ 62-րդ պարբերություններ:

30. Դատախազների աշխատանքի արդյունավետությունն ու որակն ընդհանուր առմամբ պահանջում են հստակ եւ համարժեք կազմակերպական կառուցվածք, պարտականություններ եւ իրավասություններ՝ իրենց իրավագործության տարածքում փաստացի քրեական կամ սոցիալական իրավիճակին համահունչ մարդկային եւ կյանքական ռեսուրսները տնօրինելու համար⁶: Մյուս կողմից՝ քրեական, սոցիոլոգիական, տնտեսական եւ միջազգային նոր մարտահրավերներին առերեսվելիս դատախազական ծառայությունների կառուցվածքը եւ աշխատանքային մեխանիզմները պետք է լինեն բավական ճկուն՝ համարժեք, բավարար, արագ եւ օրինական կերպով դրանց արձագանքելու համար:

31. Մասնավորապես պետք է դիտարկել դատախազական ծառայությունների շրջանակներում մասնագիտացված ստորաբաժանումների (օրինակ՝ ահաբեկչության, թմրամիջոցների, տնտեսական հանցագործությունների, շրջակա միջավայրի պաշտպանության գործերով զբաղվող եւ միջազգային համագործակցության ոլորտում աշխատող դատախազներ) ստեղծումը:

32. Ավելին, դատախազական ծառայությունները պետք է կազմակերպեն պատշաճ վերլուծական եւ մեթոդական աշխատանք՝ դատախազների աշխատանքի որակն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

33. Անդամ պետություններում որոշ տեսակի հանցագործությունների դեմ պայքարի լավագույն փորձի տարածումը, ինչպես նաեւ գործերի պատշաճ բաշխումը եւ տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործումը, ներառյալ՝ առանձին գործերի կառավարման համար, կարող է բարձրացնել արդյունավետությունը եւ ապահովել ավելի լավ որակ: Դատախազական ծառայությունների/դատախազությունների եւ (կամ) այլ իրավասու կառույցների ղեկավարները մասնավորապես պետք է պատասխանատու լինեն կառավարման այդպիսի գործիքների կիրառումը խթանելու եւ իրենց դատախազություններում լավագույն գործելակերպերի մասին տեղեկություններ փոխանակելու համար:

բ. Էթիկայի կանոնները

34. Շատ անդամ պետություններում որակը եւ արդյունավետությունը բարձրացնելու նպատակով դատախազական ծառայությունները գնահատում են դատախազների եւ այլ աշխատողների բարեվարքությունը՝ միջնաժամկետ կամ երկարաժամկետ կտրվածքով: Դա արվում է տարբեր ձևերով: Որոշ համակարգեր իրավական կամ ընդհանուր չափանիշներ են սահմանել, մյուսներն Էթիկայի կանոնագրքեր ընդունել: Այլ համակարգերում դեռեւս պահպանվել է նորանշանակ դատախազների կողմից երդում տալու ավանդույթը: Նրանք պարտավորվում են պահպանել անձնական եւ մասնագիտական որակները, անկողմնակալությունն ու արդարությունը, բարեվարքությունը եւ Էթիկայի առումով անբասիրությունը: ԵԴԳԽԽ-ն նախկինում խորհուրդ է տվել, որ «պետք է ընդունվեն եւ հրապարակվեն միջազգային չափանիշների վրա հիմնված մասնագիտական Էթիկայի եւ վարքագծի կանոնագրքեր»⁷ ընդգծելով, որ «դատախազները պետք է հավատարիմ մնան Էթիկական եւ մասնագիտական ամենաբարձր չափանիշներին՝ մշտապես դրսևորելով անկողմնակալ եւ օբյեկտիվ վարքագիծ»⁸:

35. Էթիկայի կանոնագրքի հիմնական նպատակն է խթանել այն չափանիշները, որոնք անհրաժեշտ են համարվում դատախազների պատշաճ եւ անկախ աշխատանքի համար: Եթե դատախազական ծառայությունները պետք է ընդունեն Էթիկայի կանոնագրքեր, ապա դրանք, ինչպես նշվել է վերելում, պետք է համապատասխանեն ընդունված ընդհանուր միջազգային չափանիշներին, որոնք սահմանված են, օրինակ, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Rec(2000) 19 առաջարկությամբ (այսուհետ՝ Rec(2000)19)⁹ Եվրոպայի գլխավոր դատախազների համաժողովի կողմից 2005 թվականի մայիսի 31-ին ընդունված՝ Հանրային մեղադրողների Էթիկայի եւ վարքագծի վերաբերյալ եվրոպական ուղեցույցով (Բուդապեշտի ուղեցույց), վերելում հիշատակված ԵԴԳԽԽ-ի Դատախազներին առնչվող եվրոպական նորմերի ու սկզբունքների վերաբերյալ թիվ 9(2014) կարծիքով (Հռոմի կանոնադրություն), ինչպես նաեւ համապատասխան այլ միջազգային փաստաթղթերով:

գ. Դատախազական ծառայությունների կատարողականի չափումը (քանակական եւ որակական)

36. Մի շարք անդամ պետություններում գոյություն ունի վիճակագրություն՝ աշխատանքային քանակական ծանրաբեռնվածությունը, դատախազության կատարողականը եւ նրա իրավագործության տարածքում քրեական իրավիճակը չափելու համար: Շատ անդամ պետություններում դատախազների

⁶ Տե՛ս Դատախազական ծառայությունների միջոցների կառավարման վերաբերյալ ԵԴԳԽԽ-ի թիվ 7(2012) կարծիքը, 47-րդ պարբերություն:

⁷ Տե՛ս Դատախազներին առնչվող եվրոպական նորմերի ու սկզբունքների վերաբերյալ ԵԴԳԽԽ-ի թիվ 9(2014) կարծիքը, Հռոմի կանոնադրություն, VII հոդված:

⁸ Նույն տեղում, VI հոդված:

⁹ Տե՛ս Rec(2000)19 առաջարկությունը, Բացատրական հուշագիր, առանձին առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանություններ, 35-րդ պարբերություն:

գնահատումն օգտագործվում է դատախազական ծառայության որակն ու արդյունավետությունը բարձրացնելու համար:

37. Դատախազական ծառայությունները պետք է թափանցիկ կերպով սահմանեն ցուցիչներ եւ հետագա վերահսկողության մեխանիզմներ՝ հիմնականում դատախազներին մասնագիտական գործունեության ավելի բարձր մակարդակի ձգտելու համար մոտիվացնելու նպատակով: Դատախազական ծառայություններում ներքին հետագա վերահսկողությունը պետք է լինի կանոնավոր, համաչափ եւ օրենքի գերակայության վրա հիմնված:

38. ԵՂԳԽՆ-ն համարում է, որ քանակական ցուցիչները, որպես այդպիսին, (գործերի քանակը, վարույթների տեւողությունը եւ այլն) չպետք է լինեն միակ վերաբերելի չափորոշիչը թե՛ դատախազության գործունեության, թե՛ առանձին վերցված՝ դատախազի աշխատանքի արդյունավետությունը գնահատելու համար: Նույն կերպ Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԽՆ) նշել է, որ «արդարադատության «որակը» չպետք է ընկալվի զուտ որպես դատական համակարգի «արդյունավետության» հոմանիշ»¹⁰:

39. Ահա թե ինչու նաեւ որակական այնպիսի ցուցիչներ, ինչպիսիք են պատշաճ եւ մանրակրկիտ քննությունը (եթե դա դատախազի իրավասության շրջանակներում է), ապացույցների պատշաճ օգտագործումը, մեղադրանքի ճշգրիտ կառուցումը, դատարանում պրոֆեսիոնալ վարքագիծը եւ այլն, պետք է հաշվի առնվեն որպես քանակական բնույթի ցուցիչները փոխլրացնելու միջոց: Արագ քրեական հետապնդումներ իրականացնելու ցանկալիությունը պետք է հաշվի առնի նաեւ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքները¹¹:

40. Հետեւաբար իրավական համակարգերը, որպես իրական եւ վերջնական նպատակ, պետք է կարողանան նախատեսել գնահատման համակարգ, որը կարող է գնահատել դատախազների աշխատանքի քանակական եւ որակական ցուցիչները, եւ որով պահպանվում են արդարադատության էական սկզբունքները՝ ՄԻԵԿ-ի եւ այլ միջազգային փաստաթղթերի համաձայն:

41. Ահաբեկչության եւ ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության առանձնահատուկ բնույթն էլ ավելի անհրաժեշտ է դարձնում վերոնշյալ մոտեցմանը հետեւելը եւ հարգելը: Այդ դեպքերում անհրաժեշտ կլինի նաեւ հաշվի առնել այն երաշխիքները, որոնք նախատեսված են ԵՂԳԽՆ-ի Քրեական գործերով քննություններում դատախազների դերի վերաբերյալ թիվ 10(2015) կարծիքով, մասնավորապես, երբ օգտագործվում են քննության հատուկ մեթոդներ¹² պայմանավորված մարդու իրավունքների այն կարեւոր սահմանափակումների վտանգով, որոնք բխում են դրանցից:

դ. Առանձին դատախազների աշխատանքի գնահատումը (քանակական եւ որակական)

42. Դատախազների եւ նրանց աշխատանքի գնահատումը կարող է օգտակար ռազմավարական գործիք լինել որակի, արդյունավետության եւ պրոֆեսիոնալիզմի աճող պահանջներին դիմակայելու նպատակով անհրաժեշտ հմտությունները զարգացնելու համար: Անհատական գնահատումները կարող են նաեւ կարեւոր ներդրում լինել բոլոր մակարդակների դատախազների համար ավելի համապատասխան վերապատրաստումներ մշակելու գործում:

43. ԵՂԳԽՆ-ի անդամների կողմից հարցաշարին տրված պատասխանները ցույց են տալիս, որ գործածվում է գնահատման երկու տեսակ՝ ֆորմալ եւ ոչ ֆորմալ: Ֆորմալ գնահատումը կատարվում է ֆիքսված ժամկետում (օրինակ՝ յուրաքանչյուր 3 կամ 5 տարին մեկ): Այն կարգավորվում է հատուկ ընթացակարգով եւ կենտրոնացած է գնահատման ենթակա հատուկ հմտությունների վրա: Երբեմն այն համակցվում է գնահատման համակարգի հետ, որը թույլ է տալիս համեմատվել այլ գործընկերների հետ եւ ավելի արագ առաջխաղացում ապահովել: Դրա արդյունքները բաց են դատական վերանայման համար, երբ դրանք չեն ընդունվում գնահատման ենթարկված դատախազի կողմից: Ոչ ֆորմալ գնահատումն ինչ-որ չափով կարելի է դիտարկել դատախազի աշխատանքի որակն ու արդյունավետությունը բարելավելու եղանակների մասին տեղեկություններ հավաքելու եւ տրամադրելու վերաբերյալ (օրինակ՝ հասկանալի մեղադրանքի կազմում, թիմային աշխատանքի կարողություն, չափանիշների խախտումից խուսափում եւ այլն) կամ ավելի ռազմավարական ձեւով, օրինակ՝ դատախազների՝ իրենց պարտականությունների կատարման հմտություններ ունենալու կամ չունենալու վերաբերյալ քննարկում: Դատախազների աշխատանքի գնահատման երկու տեսակների նպատակներն էլ պետք է լինեն հմտությունների եւ աշխատունակության զարգացման ուսումնասիրությունը, ինչպես նաեւ առաջխաղացում, իսկ որոշ երկրներում՝ խրախուսման միջոցներ եւ պարգևատրումներ նախատեսելը կամ ընդհանուր առմամբ՝ անկարգությունների եւ վատ վարքագծի կանխարգելումը՝ խուսափելով հնարավոր կարգապահական պատասխանատվության միջոցներից:

44. ԵՂԳԽՆ-ն առաջարկում է, որ դատախազների աշխատանքի գնահատումը լինի թափանցիկ եւ կանխատեսելի՝ հիմնված լինելով հստակ եւ նախկինում հրապարակված չափորոշիչների վրա՝ թե՛ նյութաիրավական, թե՛ դատավարական նորմերի տեսանկյունից:

45. Թափանցիկ ու կանխատեսելի գնահատումը նշանակում է, որ գնահատման ենթարկվող

¹⁰ Տե՛ս Ողջամիտ ժամկետում արդար դատաքննության եւ դատաքննության ժամանակ դատավորների դերի վերաբերյալ ԵՂԽՆ-ի թիվ 6 (2004) կարծիքը՝ հաշվի առնելով վեճերի կարգավորման այլընտրանքային միջոցները, 42-րդ պարբերություն:

¹¹ Տե՛ս Դատական որոշումների որակի վերաբերյալ ԵԴԽՆ-ի թիվ 11(2008) կարծիքը, 26-րդ պարբերություն:

¹² Տե՛ս 40-43-րդ պարբերությունները:

դատախազը պետք է ի վիճակի լինի քննարկելու իր գնահատման արդյունքները կամ ըստ անհրաժեշտության՝ համեմատելու իր ինքնագնահատումը վերադաս դատախազի կամ եթե տարբերվում է, այլ իրավասու անձի կողմից կատարված գնահատման հետ, եւ դրանք ներկայացնելու վերանայման: Գնահատման արդյունքները չպետք է հրապարակվեն այնպես, որ որեւէ կերպ վնասեն գնահատման ենթարկված դատախազի անձնական բարեկարգությանը կամ արատավորեն նրա պատիվը:

46. Գնահատումը պետք է իրականացվի դատախազական ծառայության ներսում միեւնույն մակարդակով՝ հավասար չափորոշիչների հիման վրա: Ինչպես դատախազական ծառայության ընդհանուր կատարողականի չափման դեպքում է, ԵՂԳԽՍ-ն համարում է, որ դատախազների աշխատանքի որակի սահմանումը պետք է ներառի ինչպես քանակական, այնպես էլ որակական տարրեր, ինչպիսիք են հարուցված եւ դադարեցված հետապնդումներով գործերի թիվը, որոշումների տեսակները եւ արդյունքները, դատախազական վարույթների տեղողությունը, գործերի կառավարման հմտությունները, բանավոր եւ գրավոր կերպով հստակ փաստարկման ունակությունը, ժամանակակից տեխնոլոգիաների հանդեպ բաց լինելը, տարբեր լեզուների իմացությունը, կազմակերպական հմտությունները, դատախազության ներսում եւ դրանից դուրս այլ անձանց հետ համագործակցելու կարողությունը:

4. Գործերի կառավարումը

47. Դատախազի կայացրած լավ որոշումը կամ ձեռնարկած այլ համապատասխան գործողություն այնպիսի քայլ է, որն արտացոլում է թե՛ առկա նյութերը եւ թե՛ օրենքը, եւ որն իրականացվում է արդար, արագ, համաչափ, հստակ եւ օբյեկտիվ կերպով: Այս առումով ակնհայտ է, որ դատախազական գործողությունները, ՄԻԵԿ-ի եւ այլ համապատասխան միջազգային փաստաթղթերի համաձայն, պետք է հարգեն տուժողների, նրանց ընտանիքների եւ վկաների իրավունքները եւ հավասարակշռված լինեն պաշտպանականների իրավունքների, ինչպես նաեւ հանցագործությունների կատարման համար հետապնդման հարցում հանրային շահերի հետ: Ուստի դատախազները պետք է ձգտեն իրենց աշխատանքն իրականացնել այս սկզբունքներին համապատասխան: ԵՂԳԽՍ-ի կարծիքով՝ դատախազական ծառայությունները պետք է աջակցեն դատախազների աշխատանքին՝ դատախազական իրավասությունների եւ պարտականությունների տարբեր ոլորտներում սահմանելով գործերի կառավարման լավ գործելակերպեր: Դատախազների որոշումներում պետք է նաեւ արտացոլվեն հետեւյալ տարրերը.

ա. Օբյեկտիվությունը եւ անկողմնակալությունը

48. Դատախազները պետք է անկախ մնան իրենց գործառնություններն իրականացնելիս եւ դրանք իրականացնել՝ մշտապես ապավինելով օրենքի գերակայությանը, քրեական արդարադատության համակարգի ազնվությանը եւ արդար դատաքննության իրավունքին: Դատախազները պետք է հավատարիմ մնան ամենաբարձր էթիկական եւ մասնագիտական չափանիշներին, իրենց պարտականությունները կատարեն ազնվորեն եւ մշտապես գործեն անկողմնակալ եւ օբյեկտիվ կերպով:

49. Դատախազները պետք է ապահովեն մարդկանց հավասարությունն օրենքի առջեւ՝ առանց որեւէ խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, ազգային եւ սոցիալական ծագումից, քաղաքական եւ կրոնական համոզմունքից, գույքային դրությունից, սոցիալական կարգավիճակից եւ սեռական կողմնորոշումից:

բ. Համապարփակությունը

50. Դատախազները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն իրենց բոլոր որոշումներն ու գործողությունները: Նրանք պետք է փնտրեն ապացույցներ թե՛ մեղավորության, թե՛ անմեղության վերաբերյալ եւ պետք է ապահովեն համապատասխան բոլոր քննությունների իրականացումը, ներառյալ՝ այնպիսիք, որոնց արդյունքում մեղադրյալների կամ կասկածյալների օգտին ապացույցներ են ձեռք բերվում: Օրինակ՝ նրանք պետք է պարզեն, թե արդյոք քննությամբ ներկայացված ապացույցները պարզ են եւ համապարփակ: Դա, սակայն, քննիչին չի պարտադրում անհամաչափ ռեսուրսներ հատկացնել եւ պետք է մեկնաբանվի ողջամտորեն եւ իրատեսորեն՝ յուրաքանչյուր գործի փաստերի հիման վրա: Դա պաշտպանության փաստաբաններին չի ազատում այնպիսի ապացույցներ փնտրելու պատասխանատվությունից, որոնք իրենք վերաբերելի են համարում:

51. Դատախազները հետապնդում իրականացնելու մասին որոշում պետք է կայացնեն միայն հիմնավոր ապացույցների հիման վրա, որոնք ողջամտորեն համարվում են հավաստի եւ ընդունելի, եւ հրաժարվեն մարդու իրավունքների կոպիտ խախտում պարունակող ապացույցների օգտագործումից:

գ. Պատճառաբանվածությունը

52. Հստակ պատճառաբանվածությունը ու վերլուծությունը դատախազների աշխատանքի հիմնական պահանջներն են: Նրանք պետք է ամբողջությամբ հաշվի առնեն բոլոր վերաբերելի ապացույցները եւ ուսումնասիրեն քննությամբ եւ կողմերի կողմից բացահայտված փաստական եւ այլ հարցեր: Դատախազների բոլոր որոշումները կամ գործողությունները պետք է արտացոլեն այդ

վերաբերելի ապացույցները եւ համապատասխանեն օրենքին եւ այն ընդհանուր ուղեցույցներին, որոնք տվյալ թեմայով կարող են գոյություն ունենալ: Դատախազների որոշումներն ու գործողությունները պետք է հիմնավորված լինեն հետեւողական, հստակ, միանշանակ եւ ոչ հակասական կերպով:

դ. Հստակությունը

53. Բոլոր ցուցումները կամ հրահանգները, ինչպես նաեւ դատախազների կողմից տրված ցանկացած պաշտոնական փաստաթուղթ պետք է հստակ հասկանալի լինեն նրանց համար, ում դրանք հասցեագրված են: Գրավոր լինելու դեպքում այդ ցուցումները եւ հրահանգները պետք է կազմված լինեն շատ պարզ լեզվով: Բացի այդ, դատախազները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն գրավոր ցուցումների եւ հրահանգների ձեւաչափին, որպեսզի դրանք հեշտությամբ նույնականացվեն:

ե. Տեղեկությունների փոխանակումը եւ համագործակցությունը

54. Համագործակցությունը դատախազական ծառայության արդյունավետության համար կարեւոր է ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներով, տարբեր դատախազությունների, ինչպես նաեւ նույն դատախազությանը պատկանող դատախազների, նաեւ դատախազների եւ իրավապահ մարմինների/քննիչների միջեւ: Դատախազների մասնագիտացման բարձրացումը հավանաբար կբարելավի այդ համագործակցության արդյունավետությունը:

55. Այն դեպքում, երբ դատախազներն ունեն քննչական գործառույթ, նրանք պետք է ձգտեն ապահովել տեղեկությունների արդյունավետ եւ պատշաճ փոխանակումը միմյանց միջեւ, ինչպես նաեւ միմյանց եւ իրավապահ մարմինների/քննիչների միջեւ: Սա պետք է օգնի խուսափել աշխատանքների կրկնությունից, ինչպես նաեւ լրացնել տարբեր դատախազների եւ իրավապահ մարմինների ջանքերը միմյանց հետ կապված գործերում:

56. Այն դեպքում, երբ դատախազները նման քննչական գործառույթ չունեն, նրանք անհրաժեշտության դեպքում քննության ընթացքում պետք է համագործակցեն համապատասխան քննչական մարմնի հետ, մասնավորապես՝ համապատասխան խորհրդատվություն տրամադրելու եւ (կամ) ուղղորդելու հարցում:

57. Այդ համագործակցությունը պետք է շարունակվի մինչեւ քննության ավարտը՝ նպատակ ունենալով ապահովել, որ բոլոր համապատասխան ապացույցները հասանելի լինեն դատախազին եւ անհրաժեշտության դեպքում բացահայտվեն պաշտպանության կողմին:

III. ԱՐԱԲԵԿԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԾԱՆՐ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐԴՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ՆԵՐԿԱՅԻՍ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՅՐԱԿԵՐՆԵՐԸ
--

Ա. Ներածություն

59. Եվրոպայի խորհրդի անդամ պետություններից շատերն արձանագրել են, որ ծանր հանցագործություններն ու կազմակերպված հանցավորությունը դարձել են ավելի դժվար հաղթահարելի եւ միջազգային բնույթ են ձեռք բերել: Ահաբեկչությունը լրջորեն հարվածել է բազմաթիվ երկրների եւ ներկայումս դատախազական ծառայությունների աշխատանքի գլխավոր առաջնահերթություններից է: Այս համատեքստում անօրինական միգրացիան նոր մարտահրավերներ է ստեղծում, օրինակ՝ ահաբեկչության, կազմակերպված հանցավորության եւ մարդկանց թրաֆիքինգի ոլորտներում:

60. Դատախազներն առաջին հերթին պատասխանատու են այս ծանր հանցագործությունների համար դատական կարգով հետապնդում իրականացնելու համար եւ հետեւաբար կարեւոր դեր են խաղում հասարակության անվտանգությունը երաշխավորելու եւ օրենքի գերակայությունն ապահովելու հարցում:

Բ. Ազգային մակարդակով ահաբեկչության եւ ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության դեմ պայքարը

1. Ահաբեկչության եւ ծանր հանցագործությունների եւ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ռազմավարությունը

61. Համաձայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1566 (2004) բանաձեւի, որը վերաբերում է ահաբեկչության հետեւանքով միջազգային խաղաղությանը եւ անվտանգությանը սպառնացող վտանգներին, ԵԴԳԽԽ-ն համարում է, որ դատախազների հիմնական պարտականությունն է «հիմնվելով արտահանձնման կամ հետապնդման սկզբունքի վրա՝ պատասխանատվության ենթարկել ցանկացած անձի, որն աջակցում է, նպաստում, մասնակցում կամ փորձում է մասնակցել ահաբեկչական գործողությունների ֆինանսավորմանը, ծրագրմանը, նախապատրաստմանը կամ կատարմանը» կամ ծանր հանցագործություններին եւ կազմակերպված հանցավորությանը: Այս պարտականությունը որակյալ եւ արդյունավետ կերպով կատարելու համար դատախազները պետք է գործեն բավարար

իրավական դաշտում, ազգային եւ միջազգային մակարդակներով համագործակցեն այս ոլորտում համապատասխան բոլոր շահագրգիռ կողմերի հետ եւ ունենան բավարար մարդկային ու կյուրական ռեսուրսներ: Ահաբեկչության նոր սպառնալիքների (ծանր հանցագործությունների եւ կազմակերպված հանցավորության ֆինանսավորումը, քարոզումը, համացանցի միջոցով կռվողների հավաքագրումը եւ վերապատրաստումը) համար պահանջվում են նոր արձագանքներ, քննության եւ հետապնդման նոր ձեւեր, մեթոդներ եւ միջոցներ, որպեսզի դատախազները կարողանան գործել այն արդյունավետությամբ եւ որակով, որն ավելի ու ավելի է պահանջվում հասարակության կողմից:

62. ԵՂԳԽԽ-ն գտնում է, որ ահաբեկչության եւ ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության դեպքերի քննության եւ հետապնդման ժամանակ պետք է առանձնահատուկ կերպով ապահովվեն դատախազների անկախությունն ու անկողմնակալությունն իրենց պարտականությունները կատարելիս:

2. Այս տեսակի հանցագործությունների համար ստեղծվելիք օրենսդրական դաշտը, ինչպես նաեւ կազմակերպական եւ ֆինանսական ռեսուրսները, որոնք պետք է հասանելի լինեն դատախազներին

63. Ահաբեկչության, ծանր հանցագործությունների եւ կազմակերպված հանցավորության ու կիրեռհանցագործությունների եւ դրանց ֆինանսավորման, այդ թվում՝ փողերի լվացման դեմ պայքարի ոչ բավարար օրենսդրական եւ ինստիտուցիոնալ դաշտը ահաբեկիչներին, ծանր հանցագործությունների եւ կազմակերպված հանցավորության մեջ ներգրավված հանցագործներին եւ նրանց աջակցողներին թույլ է տալիս գործել առանց տարածքային սահմանափակումների եւ իրենց ֆինանսական միջոցներն օգտագործել իրենց հանցավոր գործունեությունն իրականացնելու եւ ընդլայնելու համար: Արդյունավետ լինելու համար դատախազները հիմնվում են այնպիսի օրենսդրության վրա, որով հստակորեն քրեականացվում է ցանկացած գործունեություն, որն ուղղակի կամ անուղղակի աջակցություն է ահաբեկչական գործունեությանը եւ ծանր հանցագործություններին ու կազմակերպված հանցավորությանը, այդ թվում՝ դրա քարոզումը եւ ահաբեկիչների հավաքագրումը եւ այլն: Սա թույլ կտա դատախազներին ընդլայնել իրենց գործողությունների շրջանակն ահաբեկչության եւ ծանր հանցագործությունների եւ կազմակերպված հանցավորություն դեմ պայքարում հանցավորության ծանր ձեւերի համար ստեղծված իրավական փաստաթղթերի կիրառման միջոցով:

64. Ահաբեկչության դեմ պայքարը եւ մասնավորապես՝ պոտենցիալ ահաբեկիչների հավաքագրումը, կազմակերպությունում ընդունումը եւ ահաբեկչության քարոզումը եւ ահաբեկչական նպատակներով տեղեկությունների փոխանակումը, ահաբեկչական գործողությունների համար վերապատրաստումը եւ դրանց նախապատրաստումը, ինչպես նաեւ ահաբեկչական նպատակներով փոխադրումները կպահանջեն վաղ փուլում ունենալ ներքին (ինսայդերական) տեղեկություններ՝ ահաբեկչության եւ ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության մասին: Այնուամենայնիվ, պետք է խուսափել հիմնարար իրավունքների եւ ազատությունների անհամաչափ սահմանափակումից: Նույն պատճառով օրենքների համաչափ կիրարկման համար պետք է սահմանվեն հստակ սահմաններ եւ չափորոշիչներ հատկապես այն դեպքում, երբ դատախազության դիտարկմանն են ներկայացվում այնպիսի կանխարգելիչ միջոցներ, որոնց նկատմամբ կիրառվում են քրեադատավարական իրավունքի նորմերը:

3. Զննության մեթոդները եւ հատուկ գործիքների ու միջոցների, այդ թվում՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը

65. Շատ անդամ պետություններում քննության այնպիսի հատուկ մեթոդներ, ինչպիսիք են էլեկտրոնային հսկողությունը եւ գաղտնի գործողությունները, ապացուցել են ահաբեկչության եւ ծանր հանցագործությունների եւ կազմակերպված հանցավորության դեմ պայքարում արդյունավետ գործիքներ լինելու հանգամանքը: Այս գործիքները հասանելի են դառնում դատախազություններին առնվազն այն իրավագործություններում, որտեղ դատախազներն ունեն քննչական լիազորություններ: Զանի որ դրանք ոտնահարում են ոչ միայն կասկածյալների, այլ նաեւ այլ անձանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, որոնք պարտադիր չէ, որ ներգրավված լինեն քննվող տվյալ քրեական իրավիճակում, այդ միջոցների կիրառումը պահանջում է վարույթների ցանկացած փուլում դատախազների կողմից մանրակրկիտ եւ հետեւողական ուսումնասիրության իրականացում, որպեսզի քննության ելքն ընդունվի դատարանների եւ լայն հասարակության կողմից:

66. Մասնավոր կազմակերպությունների եւ կապի ընկերությունների կողմից համապատասխան եւ համաչափ կերպով պետք է ապահովվի տեղաշարժի եւ գտնվելու վայրի վերաբերյալ տվյալների պահումն ու պահպանումը՝ միաժամանակ հարգելով ազգային եւ միջազգային իրավագործությունը, ինչպես նաեւ ՄԻԵԿ-ը եւ Եվրոպայի խորհրդի Անձնական տվյալների պաշտպանության մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին 1981 թվականի կոնվենցիան:

67. Հարցաշարի պատասխանները ցույց են տալիս, որ բոլոր անդամ պետությունները կազմակերպական քայլեր են ձեռնարկել ահաբեկչության եւ ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության գործերով դատախազական որոշումների որակն ու արդյունավետությունը բարձրացնելու համար: Որոշ պետությունների դատախազություններում

մասնագիտացված ստորաբաժանումներ կան, մյուսներն այս պարտականությունը փոխանցել են ամբողջ երկրում գործող մեկ գերատեսչության: ԵՂԳԽՆ-ն ցանկալի է համարում այս քրեական գործերի քննությունն ու դրանցով հետապնդումը կենտրոնացնել հատուկ ստորաբաժանումներում: Սա կարող է ապահովել անհրաժեշտ պրոֆեսիոնալիզմը ոչ միայն քննության հատուկ մեթոդների կիրառման, այլ նաև այս ոլորտում մյուս շահագրգիռ կողմերին տեղեկությունների փոխանցման եւ նրանց հետ հաղորդակցության զարգացման հարցում: Սա կարող է նաև ապահովել ներգրավված դատախազների հատուկ վերապատրաստում եւ հնարավորություն տալ նրանց ստանալու նորագույն տեխնիկական, իրավական եւ կազմակերպական առկա միջոցները: Ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանումները կամ փորձագետները, որոնք անմիջականորեն ենթակա են դատախազության մարմիններին եւ գտնվում են նրանց տրամադրության տակ, անհրաժեշտության դեպքում կարող են բարձրացնել ահաբեկչության եւ ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության դեմ պայքարին առնչվող քննությունների որակն ու արդյունավետությունը: Այսպիսի կազմակերպական շրջանակը դատախազներին հետագայում կօգնի իրենց պարտականությունները կատարել լիակատար անկախությամբ եւ անկողմնակալությամբ՝ կասկածյալների՝ մարդու իրավունքների նկատմամբ անհրաժեշտ հարգանքով եւ քրեական գործընթացում ներգրավված տուժողների, վկաների եւ այլ անձանց անհրաժեշտ պաշտպանությամբ:

4. Գործերի կառավարումը

68. Գործերի կառավարման պատշաճ մեթոդաբանությամբ կարող է երաշխավորվել, որ քննության՝ միջամտող բնույթ ունեցող հատուկ մեթոդները կիրառվեն միայն անհրաժեշտ դատական հսկողությամբ, երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ ծանր հանցագործություն է կատարվել կամ նախապատրաստվել կամ նախապատրաստվում է մեկ կամ մի քանի անձի կողմից կամ դեռևս չպարզված անձի կամ անձանց խմբի կողմից:

69. ԵՂԳԽՆ-ն ընդգծում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի համաձայն՝ քննության հատուկ մեթոդները պետք է օգտագործվեն միայն՝ պահպանելով համաչափության սկզբունքը, եւ դրանք պետք է համապատասխանեն գաղտնիության, բարեվարքության եւ մատչելիության նվազագույն պահանջներին¹³:

70. Այն դեպքերում, երբ ահաբեկչության եւ ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության մասին օրենսդրությամբ նախատեսվում է քրեական վարույթի շրջանակներում անձանց իրավունքների սահմանափակում, այդպիսի սահմանափակում կիրառելու մասին որոշում կայացնող դատախազները պետք է միշտ պարզեն՝ արդյոք դա արդարացված է համաչափության պարտավորության տեսանկյունից, եւ ապահովեն, որ ապացույցները ձեռք չբերվեն խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի միջոցով՝ հիմք ընդունելով այս հասկացությունների մեկնաբանումը ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքում: Անկախ ահաբեկչական եւ ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության վտանգավորության աստիճանից՝ գործերի որակյալ եւ արդյունավետ կառավարումն ապահովում է, որ դատախազության որոշումներն ընդունվեն ժամկետների պահպանմամբ եւ կատարվեն օբյեկտիվ, անկողմնակալ եւ պրոֆեսիոնալ կերպով՝ հարգելով անմեղության կանխավարկածը եւ պաշտպանության իրավունքը, ինչպես նաև հանցագործությունից տուժած անձանց իրավունքները: Դատախազների իրավասությունների մեջ է մտնում նաև իրավապահ մարմինների կողմից իրականացվող վարույթների ընթացքում այս հիմնարար սկզբունքների եւ ազատությունների պահպանման մշտադիտարկումը:

71. Եթե տուժողներին եւ վկաներին թույլատրվում է պահպանել իրենց անանունությունը, ապա մեղադրվող անձանց իրավունքների հետ ճիշտ հավասարակշռություն պետք է պահպանվի:

72. Պետք է կիրառվի համապատասխան պաշտպանություն տուժողների, վկաների եւ վարույթներում ներգրավված այլ անձանց, այդ թվում՝ հենց դատախազների եւ նրանց ընտանիքների նկատմամբ:

5. Վերապատրաստումը

73. Rec(2000)19 առաջարկությունը ցույց է տալիս, որ հատուկ ուշադրություն պետք է դարձնել դատախազների շարունակական վերապատրաստմանը՝ հաշվի առնելով հանցավորության նոր ձևերի ի հայտ գալը եւ քրեական գործերով միջազգային համագործակցությունը շարունակելու անհրաժեշտությունը: Հետապնդումն ամենաարդյունավետ կերպով իրականացնելու համար դատախազների գիտելիքները պետք է շարունակաբար թարմացվեն, եւ նրանք պետք է մասնագիտանան ահաբեկչության, ինչպես նաև ծանր հանցագործությունների եւ կազմակերպված հանցավորության բոլոր ձևերի քննության եւ հետապնդման մեջ: Ինչ վերաբերում է հանցավորության այս ոլորտներում հատուկ կարիքներին, ապա դատախազների վերապատրաստումը մասնավորապես պետք է կենտրոնանա

¹³ Տե՛ս ահաբեկչության վերաբերյալ ՄԻԵԴ-ի գործերի ցուցակը հետևյալ հղմամբ՝ <https://www.unodc.org/tldb/en/case-law-of-the-european-court-of-human-rights-related-to-terrorism.html>: Տե՛ս նաև Անա Սալինաս դե Ֆրիասի «Ահաբեկչության դեմ պայքարը եւ մարդու իրավունքները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում» վերնագրով գիրքը (2012)՝ հետևյալ հղմամբ՝ <https://book.coe.int/eur/en/european-court-of-human-rights/4966-counter-terrorism-and-human-rights-in-the-case-law-of-the-european-court-of-human-rights.html>:

տարածաշրջանային, ազգային եւ միջազգային մակարդակներով ապացույցների հավաքման եւ օգտագործման, շահագրգիռ կողմերի միջեւ համագործակցության ձեւերի եւ մեթոդների, փորձի եւ լավագույն գործելակերպերի փոխանակման, մարդու իրավունքների հնարավոր խախտումները հասկանալու, պոտենցիալ ահաբեկիչների հավաքագրման գործում սոցիալական մեղիայի դերի եւ լրատվության միջոցների հետ պատշաճ հաղորդակցության վրա:

74. ԵՂԳԽՆ-ն այն կարծիքին է, որ այս ոլորտում վերապատրաստումը պետք է ներառի նաեւ համապատասխան ազգային եւ միջազգային իրավական փաստաթղթերը եւ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը:

6. Տեղեկությունների կառավարումը (փոխանակումը, համագործակցությունը)

75. Համապատասխան ստորաբաժանումների հետ ապացույցների կամ տեղեկությունների փոխանակումը ահաբեկչության եւ ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կարեւորագույն տարրերից է: Այդ տեղեկությունները պետք է փոխանցվեն հատկապես հետախուզության եւ անվտանգության ստորաբաժանումներին, դատական ստորաբաժանումներին եւ անհրաժեշտության դեպքում՝ այն հաստատություններին, որոնք բազմիցս թիրախավորվել են ահաբեկչական գործողությունների հետեւանքով: Ավելին, անհրաժեշտ եւ նպատակահարմար համարվելու դեպքում ահաբեկիչներին վերաբերող ապացույցներն ու տեղեկությունները կարող են անմիջապես բացահայտվել նաեւ հանրությանը:

76. Զննությունների հնարավոր թերի կողմերից մեկն այն իրավիճակն է, երբ ոստիկանությունը եւ իրավապահ եւ հետախուզական այլ մարմիններ դատախազներին ժամանակին չեն տրամադրում ձեռք բերված համապատասխան տեղեկությունները: Այս խնդրից խուսափելու համար խորհուրդ է տրվում խթանել դատախազության եւ ոստիկանության համապատասխան մարմինների համատեղ ջննությունը: Այն անդամ պետություններում, որտեղ դատախազները քննչական լիազորություններ ունեն, նրանք պետք է համակարգեն եւ կառավարեն այդ գործողությունները:

77. Արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, բացի օպերատիվ գործողությունների շրջանակներում համագործակցությունից եւ կոնկրետ խնդիրների համատեղ լուծումից, ապացուցվել է բազմապրոֆիլ խմբերի անդամների հետ դատախազների մասնակցությամբ խորհրդատվական հանդիպումների անցկացման արդյունավետությունը:

78. ԵՂԳԽՆ-ն ընդգծում է ահաբեկչության եւ ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության ֆինանսավորման համակարգերի քննության եւ հետապնդման արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությունը ինտենսիվ, համակարգված եւ հետեւողական մոտեցման միջոցով: Առաջին հերթին անհրաժեշտ է տեղեկություններ փոխանակել տվյալների վրա հիմնված ազգային տեղեկատվական համակարգի միջոցով: Ավելին, անհրաժեշտ է սերտ համագործակցություն հաստատել իրավապահ մարմինների եւ բանկերի, ինչպես նաեւ այլ մասնավոր իրավաբանական եւ ֆիզիկական անձանց (ապահովագրական ընկերությունների, բորոքերների, նոտարների, իրավաբանների, դատական կատարածուների եւ այլն) միջեւ: Քննչական մեկ այլ՝ ավելի կարեւոր մոտեցում է ինտերնետային ծառայություններ մատուցողների հետ համագործակցությունը՝ վիրտուալ կամ էլեկտրոնային արժույթին հետեւելու համար:

9. Միջազգային մակարդակով ահաբեկչության եւ ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության դեմ պայքարը

79. Դատախազների միջեւ միջազգային համագործակցությունը կենսական նշանակության գործիք է դարձել՝ անդրսահմանային հանցագործությունների, մասնավորապես՝ դաժան եւ ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության, այդ թվում՝ ահաբեկչության թվի աճով պայմանավորված: Հանցավոր խմբերի եւ անձանց միջեւ փոխհարաբերությունների միջազգային մասշտաբը, որին նպաստում են գլոբալիզացիան եւ հաղորդակցության ժամանակակից միջոցները, նշանակում է, որ այդ հանցագործությունների քննությունը, հետապնդումը եւ կանխարգելումը զուտ ազգային մակարդակով կարեւորելը բավարար չէ:

80. Ինչպես հաստատում է ԵՂԳԽՆ-ն, դատախազները պետք է մշտապես ցուցաբերեն համագործակցելու պատրաստակամություն եւ «աջակցության վերաբերյալ միջազգային հարցումների նկատմամբ իրենց իրավագրության շրջանակում պետք է ցուցաբերեն նույն ջանասիրությունը, ինչ ազգային մակարդակով իրենց աշխատանքի դեպքում, եւ իրենց տրամադրության տակ պետք է ունենան անհրաժեշտ գործիքներ, այդ թվում՝ անցնեն վերապատրաստումներ՝ իրական եւ արդյունավետ միջազգային դատական համագործակցությունը խթանելու եւ պահպանելու համար¹⁴:

81. Այս պահանջների կատարումն այսօր հատկապես իրատապ է դարձել՝ հաշվի առնելով ահաբեկչության եւ միջազգային ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության հետեւանքով առաջացած հարձակումների եւ մարտահրավերների մակարդակը: Արդյունավետ միջազգային համագործակցությունն անխուսափելի է ոչ միայն այդ հանցագործությունները կանխելու, այլ

¹⁴ Տե՛ս Դատախազներին առնչվող եվրոպական նորմերի ու սկզբունքների վերաբերյալ ԵՂԳԽՆ-ի թիվ 9(2014) կարծիքը, Հռոմի կանոնադրություն, XX հոդված:

Նաեւ դրանք քննելու, հետապնդում իրականացնելու, ապացուցելու եւ դրանք կատարողներին օրինական կերպով պատժելու, ինչպէս նաեւ հանցավոր գործունեությունից ստացված եկամուտները բռնագրավելու եւ վերադարձնելու համար: Այս նպատակները ենթադրում են առավելագույն համատեղ ջանքեր՝ բացահայտելու եւ վերացնելու հանցավոր խմբերի եւ անձանց ֆինանսավորումը, նրանց կյուբատեխնիկական եւ գործառնական բազաները, կեղծ փաստաթղթերի, զէնքերի եւ պայթուցիկ կյութերի մատակարարումը: Մերօրյա հանցագործների կողմից լուրջ մարտահրավեր է նրանց կողմից հաղորդակցության ժամանակակից միջոցների օգտագործումը (ներառյալ սոցիալական մեդիան եւ ինտերնետային ցանցերը), որոնց մոնիթորինգը եւ օրինական գաղտնալուծումը գլոբալ մասշտաբի գործողություններ են պահանջում:

82. Ազգային դատախազական ծառայությունների միջեւ անմիջական շփումներն արդյունավետ եւ համարժեք միջոց են անդրսահմանային քրեական գործերի հետ կապված ջանքերի արդյունավետության ու որակի բարձրացման նպատակով ոչ միայն իրավաբանական օգնության հարցումներին արձագանքելու, այլ նաեւ զուգահեռ իրականացվող քննություններից բխող տեղեկությունների փոխանակումը խթանելու եւ երբեմն համատեղ քննչական թիմեր ստեղծելու միջոցով: ԵՂԳԽԻՆ-ն անդամ պետություններին խրախուսում է բարելավել անմիջական համագործակցության իրավական հիմքը եւ խթանել արագ ու ճկուն համագործակցությունը՝ հանցագործությունների որոշ տեսակների համար ազգային համակարգող մարմինների նշանակման միջոցով, ինչպիսիք են սահբեկչությունը կամ ծանր հանցագործություններն ու կազմակերպված հանցավորությունը, եւ (կամ) այլ երկրներում փոխգործակցության հարցերով մագիստրատներ նշանակելու միջոցով:

83. Ազգային օրենսդրության ներդաշնակեցումը միջազգային իրավական չափանիշներին, ինչպէս հանցավոր արարքների իրավական դասակարգման, այնպէս էլ վարույթների օրինականության առումով զգալիորեն կոյուրացնի միջսահմանային համագործակցությունը: Նույնը վերաբերում է նաեւ ազգային օրենքների հնարավոր համակարգմանը եւ ներդաշնակեցմանը: Ուստի մեծ ջանքեր պետք է գործադրվեն ազգային այն մշակույթներից բխող խոչընդոտները հաղթահարելու համար, որոնք քրեական իրավունքում ինքնավարությունը համարում են յուրաքանչյուր ազգային քրեական համակարգի ինքնատիպության արժեքավոր մասը:

84. Միջազգային համագործակցությունը բարելավելու եւ պարզեցնելու նպատակով պետք է դիտարկել երեք հիմնական հայեցակետեր՝ սահուն եւ արդյունավետ համագործակցության իրավական հիմքը, յուրաքանչյուր մասնակից պետությունում միջազգային իրավական փաստաթղթերի համարժեք կիրարկումը, գործնական եւ գործառնական փաստաթղթերի ստեղծումը:

85. Միջազգային համագործակցության խոչընդոտները պետք է վերացվեն: Սահմանի մյուս կողմում գտնվող գործընկերներին չճանաչելը, նույն լեզվով չխոսելը, հանցավորության դեմ պայքարում այլ մշակույթները չըմբռնելը միասին աշխատելու բնական դժկամություն են ստեղծում: Այդ նպատակով ստեղծվել են միջազգային համագործակցության մարմիններ եւ ցանցեր՝ ինչպէս ինստիտուցիոնալ, այնպէս էլ ոչ ֆորմալ: Ֆորմալ ցանցային կազմակերպություններն իրավապահ մարմինների մակարդակով, ինչպիսիք են Եվրասյուրը եւ Ինտերպոլը, եւ դատական մարմինների մակարդակով, ինչպիսիք են Եվրաջասթը եւ Եվրոպական դատական ցանցը, արագ եւ արդյունավետ միջոցներ են անդրսահմանային իրավական համագործակցությունը զարգացնելու, իրավական համակարգերի, մշակույթների եւ լեզուների միջեւ բացերը կամրջելու համար: Պետություններն այդ կազմակերպություններին պետք է տրամադրեն սահուն եւ հաջող միջազգային օգնության համար անհրաժեշտ հնարավորություններ: Սահմաններից այն կողմ հանցավորության դեմ պայքարում օգտակար կարող են լինել նաեւ պակաս ֆորմալ կազմակերպությունները, օրինակ՝ Դատախազների միջազգային ասոցիացիան, որը նպաստում է դատախազական գործառույթների իրականացմանը վերաբերող միջազգային չափանիշների համակարգմանը եւ կապի ապահովման հազարավոր կենտրոնների միջոցով ամբողջ աշխարհի դատախազների միավորմանը (օրինակ՝ 2015 թվականին հիմնված՝ սահբեկչության գործերով զբաղվող դատախազների ցանցը եւ 2010 թվականին ստեղծված՝ կիբեռնահանցագործություններով զբաղվող դատախազների ցանցը):

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Թափանցիկության եւ հաշվետվողականության հետ կապված հանրության պահանջներին արձագանքելու համար դատախազական ծառայությունները պետք է գործեն ռազմավարորեն՝ դատախազների աշխատանքի որակի եւ արդյունավետության հնարավոր առավելագույն մակարդակն ապահովելու համար:

2. Զանի որ յուրաքանչյուր դատախազական ծառայություն իր գործառույթներն իրականացնում է իրավական դաշտում, պատշաճ օրենսդրությունը դրա աշխատանքի որակի եւ արդյունավետության առաջնային նախապայմանն է:

3. Միջազգային համագործակցությունը, այդ թվում՝ արտահանձնման, իրավական օգնության եւ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների վերադարձման հարցերով միջազգային համագործակցությունը բարելավելու եւ պարզեցնելու նպատակով պետք է դիտարկել երեք հիմնական հայեցակետեր՝ սահուն եւ արդյունավետ համագործակցության իրավական հիմքը, յուրաքանչյուր մասնակից պետությունում միջազգային իրավական փաստաթղթերի համարժեք կիրարկումը եւ

գործնական եւ գործառական գործիքների ստեղծումը:

4. Դատախազների անկողմնակալությունը կարելու պահանջ է մարդու իրավունքների պաշտպանության որակի բարձրացման համար: Հետեւաբար անդամ պետությունները պետք է ապահովեն, որ դատախազներն իրենց գործառույթները կարողանան կատարել հնարավորինս անկախ՝ զերծ մնալով ցանկացած կողմի կողմից կամ ցանկացած պատճառով անհարկի ազդեցություններից, դրդումներից, ճնշումներից, սպառնալիքներից կամ միջամտությունից՝ ուղղակի կամ անուղղակի:

5. Դատախազների աշխատանքի որակը կախված է նաեւ դատախազների եւ նրանց ընտանիքների անձնական անվտանգության ապահովման երաշխիքներից: Մասնավորապես, երբ դատախազները ներգրավված են ահաբեկչության եւ ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության հետ կապված գործերում, դատախազական ծառայությունները պետք է գործուն միջոցներ ձեռնարկեն նրանց կյանքի, առողջության, ազատության, ֆիզիկական անձեռնմխելիության եւ ունեցվածքի պաշտպանության համար:

6. Ընտությունների վերաբերյալ կեղծ կամ կողմնակալ լուրերը կարող են խաթարել հանրության վստահությունը արդարադատության իրականացման որակի նկատմամբ եւ կասկածներ առաջացնել դատախազական համակարգի եւ դատարանների անկախության, անկողմնակալության եւ ազնվության առնչությամբ: Ուստի պետք է ակտիվ տեղեկատվական քաղաքականություն վարել՝ կապված լրատվության միջոցների եւ հանրության հետ:

7. Հանրության կողմից ակնկալվող արդյունավետությամբ եւ որակով գործելու համար դատախազներն իրենց գործերը քննելիս բոլոր կարելու հարցերին համապատասխան ուշադրություն հատկացնելու նպատակով պետք է ունենան բավարար մարդկային, ֆինանսական եւ նյութական ռեսուրսներ, այդ թվում՝ դատախազական ծառայությունների շրջանակներում մասնագիտացված ստորաբաժանումներ: Նրանց որակավորված անձնակազմի, նախնական եւ շարունակական վերապատրաստման, համապատասխան ժամանակակից տեխնիկական սարքավորումների, այդ թվում՝ կենտրոնացված տվյալների բազայի համակարգերի եւ այլ ռեսուրսների տրամադրումը դատախազներին կարող է ազատել ավելորդ լարումից եւ հետեւաբար բարձրացնել նրանց որոշումների որակը եւ դատախազական ծառայությունների արդյունավետությունը: Այս բոլոր միջոցառումները պետք է ներառվեն միջնաժամկետ կամ երկարաժամկետ ռազմավարական հեռանկարում:

8. ԵՂԻՍ-ն համարում է, որ դատախազական ծառայությունների եւ դատախազների աշխատանքի որակի սահմանման չափանիշները պետք է ներառեն ինչպես քանակական, այնպես էլ որակական տարրեր, ինչպիսիք են հարուցված եւ դադարեցված հետապնդումներով գործերի թիվը, որոշումների տեսակները եւ արդյունքները, դատախազական վարույթների տեւողությունը, գործերի կառավարման հմտությունները, բանավոր եւ գրավոր կերպով հստակ փաստարկման ունակությունը, ժամանակակից տեխնոլոգիաների հանդեպ բաց լինելը, տարբեր լեզուների իմացությունը, կազմակերպական հմտությունները, դատախազության ներսում եւ դրանից դուրս այլ անձանց հետ համագործակցելու կարողությունը:

9. Հստակ պատճառաբանվածությունն ու վերլուծությունը դատախազների աշխատանքի որակի հիմնական պահանջներն են: Հետեւաբար նրանք պետք է ամբողջությամբ հաշվի առնեն բոլոր վերաբերելի ապացույցները եւ ուսումնասիրեն քննությամբ եւ կողմերի կողմից բացահայտված համապատասխան բոլոր փաստական եւ այլ հարցեր: Դատախազների բոլոր որոշումները կամ գործողությունները պետք է արտացոլեն այդ վերաբերելի ապացույցները եւ համապատասխանեն օրենքին եւ այն ընդհանուր ուղեցույցներին, որոնք տվյալ թեմայով կարող են գոյություն ունենալ: Դատախազների որոշումներն ու գործողությունները պետք է հիմնավորված լինեն հետեւողական, հստակ, միանշանակ եւ ոչ հակասական կերպով:

10. Անհրաժեշտության դեպքում եւ ազգային օրենսդրությանը համապատասխան՝ դատախազական ծառայությունները պետք է ուղեցույցներ հրապարակեն դատախազների համար՝ ընդհանուր դրույթներով սահմանելով այն սկզբունքները, որոնցով պետք է առաջնորդվել հետապնդում սկսելու եւ իրականացնելու ժամանակ: Այդ ուղեցույցներով պետք է սահմանվեն այն գործոնները, որոնք պետք է հաշվի առնվեն հետապնդման տարբեր փուլերում, որպեսզի դատախազության միջամտությունները հիմնված լինեն արդար, հիմնավորված եւ կայուն քաղաքականության վրա: Դատախազական ծառայությունները պետք է թափանցիկ կերպով սահմանեն ցուցիչներ եւ հետագա վերահսկողության մեխանիզմներ՝ հիմնականում դատախազներին մասնագիտական գործունեության ավելի բարձր մակարդակի ձգտելու համար մոտիվացնելու նպատակով: Դատախազական ծառայությունում ներքին հետագա վերահսկողությունը պետք է լինի կանոնավոր եւ օրենքի գերակայության վրա հիմնված:

11. Դատախազների աշխատանքի որակը բարձրացնելու համար արդյունավետ եւ անկողմնակալ բողոքների համակարգը եւ համապատասխան շահագրգիռ կողմերի հետ պարբերական հարցաշարերի փոխանակումը օգտակար են եղել համակարգում հնարավոր թերությունների բացահայտման տեսանկյունից: Հսկողության մեխանիզմը, որով մշտադիտարկվում են դատախազների որոշումները՝ հատկապես կապված այն իրավախախտումների հետ, որոնց մասով չկան բողոքարկողներ կամ տուժողներ, կարող է հնարավոր դարձնել քննության եւ հետապնդման փուլերում թույլ տրված հնարավոր սխալների ուղղումը:

12. Գործերի որակյալ եւ արդյունավետ կառավարումն ապահովում է, որ դատախազության որոշումներն ընդունվեն ցանկացած ժամկետի պահպանմամբ եւ կատարվեն օբյեկտիվ, անկողմնակալ եւ

պրոֆեսիոնալ կերպով՝ հարգելով անմեղության կանխավարկածը եւ պաշտպանության իրավունքը, ինչպես նաեւ հանցագործությունից տուժած անձանց իրավունքները: Դատախազների իրավասությունների մեջ է մտնում նաեւ իրավապահ մարմինների կողմից իրականացվող վարույթների ընթացքում այս հիմնարար իրավունքների եւ ազատությունների պահպանումը:

13. Ահաբեկչության եւ ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության դեպքերում անդամ պետությունները պետք է համապատասխան եւ համաչափ միջոցներ ձեռնարկեն, որպեսզի թույլ տան դատախազներին քննության հատուկ մեթոդներ կիրառել:

Կարծիք թիվ 12 (2017)

Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի՝
ուղղված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին

Քրեական վարույթներում տուժողների և վկաների իրավունքների առնչությամբ դատախազների դերը

1. Ներածություն. Կարծիքի նպատակը եւ շրջանակը

1. Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԳԽՄ) ստեղծվել է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 2005 թվականին՝ անդամ պետություններին ուղղված՝ «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Նախարարների կոմիտեի Rec(2000)19 առաջարկության կիրառման առնչվող հարցերի վերաբերյալ, ի թիվս այլնի, կարծիքներ ձևավորելու:

2. Նախարարների կոմիտեն ԵԴԳԽՄ-ին հանձնարարել է 2017 թվականին պատրաստել եւ ընդունել կարծիք՝ քրեական վարույթներում տուժողների եւ վկաների իրավունքների հետ կապված՝ դատախազների դերին ուշադրություն դարձնելու համար: ԵԴԳԽՄ-ն սույն կարծիքը կազմել է՝ հիմնվելով 31 անդամ պետությունների կողմից հարցաշարին¹ տրված պատասխանների վրա:

3. Սույն կարծիքի նպատակն է որոշել, թե դատախազներն ինչպես կարող են իրենց առաքելությունը կատարել ամենաբարձր որակով եւ արդյունավետությամբ՝ կապված հանցագործությունից տուժած անձանց եւ վկաների իրավունքների պաշտպանության գործում իրենց դերի հետ: Կարծիքը մասնավորապես ընդգծում է դատախազների դերը խոցելի համարվող անձանց քրեական վարույթների տարբեր փուլերում, ինչպես նաեւ դատարանի վճիռների կատարման ժամանակ պաշտպանելու հարցում, քանի որ տուժողները եւ վկաները կարող են խոցելի լինել նաեւ դրանց կատարման փուլում եւ նույնիսկ դրանից հետո:

4. ԵԴԳԽՄ-ն նշում է, որ այն անդամ պետություններում, որտեղ դատախազները կատարում են քրեական արդարադատության ոլորտից դուրս գործառնություններ, սույն կարծիքի սկզբունքներն ու առաջարկությունները, *mutatis mutandis* [համապատասխան փոփոխություններով], կիրառվում են նաեւ այդ գործառնությունների նկատմամբ:

5. Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում կան դատախազական ծառայությունների համար բազմատեսակ իրավական եւ կազմակերպական համակարգեր, ինչպես նաեւ ընդհանուր հատկանիշներ: Օրինակ՝ ոչ բոլոր դատախազական ծառայություններն ունեն քրեական գործի քննություն իրականացնելու գործառնություն: Հետեւաբար սույն կարծիքում քննարկված ոչ բոլոր տարրերն են կիրառելի բոլոր անդամ պետությունների նկատմամբ: Այնուամենայնիվ, բոլոր անդամ պետությունների դատախազները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն քրեական վարույթների ընթացքում տուժողների եւ վկաների իրավունքների պաշտպանությանը եւ պետք է գործեն օրենքի եւ մարդու իրավունքների նկատմամբ խստագույն հարգանքով:

6. Սույն կարծիքն ընդունում է Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ), ինչպես նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) համապատասխան նախադեպային իրավունքի կարեւորությունը: Այն նաեւ հաշվի է առել Եվրոպայի խորհրդի մի քանի կոնվենցիաներ² եւ քրեական իրավունքի այլ փաստաթղթեր, այդ թվում՝ «Հանցագործությունից տուժած անձանց փոխհատուցման մասին» (77) 27 բանաձեւը, «Քրեական իրավունքի եւ քրեական դատավարության շրջանակներում տուժողի կարգավիճակի մասին» R (85)11 առաջարկությունը, «Տուժողներին աջակցություն ցուցաբերելու եւ վիկտիմիզացիան կանխելու վերաբերյալ» R(87)21 առաջարկությունը, «Վկաների եւ արդարադատությանն օգնող անձանց պաշտպանության մասին» Rec(2005)9 առաջարկությունը, Ահաբեկչական գործողություններից տուժած անձանց պաշտպանության ուղեցույցը (2005), «Հանցագործությունից տուժած անձանց օժանդակության մասին» Rec(2006)8 առաջարկությունը եւ «Քրեական արդարադատության համակարգից դուրս հանրային մեղադրողների դերի մասին» Նախարարների կոմիտեի Rec(2012) 11 առաջարկությունը: Սույն կարծիքը հիմնված է նաեւ ԵԴԳԽՄ-ի Նախորդ կարծիքների մեծ մասի վրա³:

¹ Տե՛ս ԵԴԳԽՄ(2017)1 փաստաթուղթը կամ անցե՛ք

http://www.coe.int/t/dghl/cooperation/ccpe/opinions/Travaux/Compilation_CCPE_avis%2012.pdf հղմամբ:

² Տե՛ս ԵԿ-ի այդ կոնվենցիաների ցանկը 20-րդ եւ 21-րդ ծանոթագրություններում:

³ Տե՛ս մասնավորապես Քրեական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության ամրապնդման միջոցների վերաբերյալ թիվ 1(2007) կարծիքը, Դատախազության եւ անչափահասների գործերով արդարադատության վերաբերյալ թիվ 5(2010) կարծիքը, Դատախազների եւ լրատվության միջոցների միջեւ հարաբերությունների վերաբերյալ թիվ 8(2013) կարծիքը, Դատախազներին առնչվող եվրոպական նորմերի ու սկզբունքների վերաբերյալ թիվ 9(2014) կարծիքը, Ներառյալ՝ Դոմին

7. ԵՂԳԻՒՄ-ն դիտարկել է նաեւ Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան փաստաթղթերը⁴, ինչպես նաեւ Դատախազների միջազգային ասոցիացիայի (ԴՄԱ) կողմից 1999 թվականին ընդունված՝ Դատախազների մասնագիտական պատասխանատվության չափանիշները եւ հիմնական պարտականություններն ու իրավունքները:

2. Սահմանումները

8. Սույն կարծիքի նպատակներով տուժողներն այն անձինք են, որոնք քրեական իրավախախտման հետեւանքով ուղղակիորեն կամ անուղղակիորեն կրել են ցանկացած ֆիզիկական, բարոյական, սոցիալական, տնտեսական կամ որեւէ այլ վնաս: Այս սահմանումը չի բացառում այն իրավաբանական անձանց, որոնք կարող են օգտվել սույն կարծիքի կիրառելի դրույթներից: «Վկա» նշանակում է անձ, որը, անկախ դատավարական իրավունքի առումով իր կարգավիճակից, տիրապետում է այնպիսի փաստեր բացահայտելուն, հասկանալուն, հաստատելուն եւ գնահատելուն առնչվող տեղեկությունների, որոնք պետք է ներառվեն քննության եւ դատական վարույթի շրջանակներում:

9. Թեեւ պարտադիր չէ, որ հանցագործությունից տուժած անձը լինի քրեական վարույթի կողմ, այնուամենայնիվ, նա կարելու է խաղում քրեական արդարադատության գործընթացում: Տուժողները կարող են նաեւ հանդես գալ որպես վկաներ, եւ հետեւաբար պետք է նրանց վերաբերվեն որպես այդպիսիք, եթե ազգային օրենսդրությամբ տուժողների համար հատուկ դատավարական ռեժիմ չի նախատեսվում:

10. Սույն կարծիքի նպատակներով խոցելի անձինք՝ լինեն տուժողներ, թե վկաներ, նրանք են, ում վնաս (ֆիզիկական կամ բարոյական) պատճառելու առումով ավելի մեծ վտանգ է սպառնում, քան մյուսներին՝ իրենց տարիքով (երեխաներ, տարեցներ), իրավիճակով, հասունությամբ կամ հաշմանդամությամբ (ֆիզիկական կամ մտավոր) պայմանավորված: Խոշտանգումների եւ անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքի այլ ձևերից տուժած անձինք հատկապես խոցելի են, եւ դատախազները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն դրան:

11. Երբ սույն կարծիքով հղում է կատարվում իրավապահ մարմիններին, անդամ պետություններում դրանք կարող են ներառել ոստիկանությունը, քննչական մարմինները, անվտանգության ուժերը, դատախազները կամ դատախազական ծառայությունները՝ իրենց համապատասխան իրավասության շրջանակներում:

3. Տուժողների եւ վկաների իրավունքները եւ պաշտպանության միջոցները

12. Յուրաքանչյուր ոք, ով հանցագործությունից տուժած անձ է եւ (կամ) ակնատես, կարող է կրել ֆիզիկական, հուզական, սոցիալական, տնտեսական կամ այլ բնույթի վնասներ, որոնցից ոմանք հնարավոր է՝ երբեք լիովին չապաքինվեն: Այս վնասները կարող են նաեւ ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ունենալ նրանց հետ սերտ կապ ունեցող անձանց վրա:

13. Նրանց մարդկային արժանապատվությունը հարգելու եւ նրանց անվտանգությունը երաշխավորելու համար քրեական արդարադատության համակարգերը պետք է ներառեն տուժողների եւ վկաների իրավունքների եւ պաշտպանության միջոցների մի շարք, որոնք պետք է հարգեն քրեական գործընթացի բոլոր մասնակիցները:

14. Այդ դրույթները կարող են նաեւ նպաստել տուժողների եւ վկաների ավելի լավ համագործակցության ապահովմանը, որոնք իրենց պատշաճ կերպով պաշտպանված են զգում: Ավելին, կարելու է ապահովել, որ տուժողները եւ վկաները, հատկապես երբ նրանք խոցելի են, ստանան համապատասխան խնամք, խորհրդատվություն եւ աջակցություն:

15. Տուժողները պետք է տեղեկացված լինեն իրենց ներկայացուցչական եւ մասնակցային բոլոր իրավունքների եւ պարտականությունների մասին եւ ստանան արագ ու արդյունավետ արձագանք իրենց կարիքներին, օրինակ՝ ունենալով իրենց պաշտպանելու եւ իրենց կրած վնասների համարժեք փոխհատուցման միջոցների հասանելիություն: Կարելու է նաեւ, որ քրեական արդարադատության համակարգը ունենա բավարար պատասխաններ՝ երկրորդային վիկտիմիզացիան կանխելու համար (տես ստորեւ՝ 32-38-րդ պարբերությունները):

կանոնադրությունը, քրեական գործերով քննություններում դատախազների դերի վերաբերյալ թիվ 10(2015) կարծիքը, Դատախազների աշխատանքի, այդ թվում՝ ահաբեկչության եւ ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հարցում նրանց աշխատանքի որակի եւ արդյունավետության վերաբերյալ թիվ 11(2016) կարծիքը:

⁴ Տե՛ս մասնավորապես 1985 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից հաստատված՝ «Յանցավորությունից եւ իշխանության չարաշահումից տուժած անձանց համար արդարադատության հիմնարար սկզբունքների վերաբերյալ» հռչակագիրը, Դատախազների դերի մասին ուղեցույցը (1990թ.), Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան (2000թ.) եւ «Մարդկանց, հատկապես կանանց եւ երեխաների առևտրի կանխարգելման, արգելման եւ պատժի մասին» 2003 թվականի արձանագրությունը, որը լրացնում է ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան, Դատախազների կարգավիճակը ու դերը. Միավորված ազգերի կազմակերպության թմրամիջոցների եւ հանցավորության դեմ պայքարի գրասենյակի եւ Դատախազների միջազգային ասոցիացիայի ուղեցույցը (2014թ.):

16. Կան հատուկ պաշտպանության ռեժիմներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել հատկապես խոցելի անձանց: Չնայած դրան, ընդհանուր առմամբ, տուժողների և վկաների նկատմամբ պետք է ցուցաբերել արդար վերաբերմունք, և դա պետք է արվի բոլորի համար հավասար վերաբերմունքի սկզբունքին համապատասխան:

17. Տուժողների և վկաների իրավունքները կարող են տարբեր լինել՝ կախված քրեական վարույթի փուլից, որին նրանք մասնակցում են: Ինչ վերաբերում է հանցագործության մասին հաղորդմանը, ապա տուժողն իրավունք ունի⁵ հանցագործության մասին համապատասխան մարմիններին տեղեկացնելու և ոստիկանության կամ հետապնդում իրականացնող մարմնի հետ սկզբնական շփումից և իրեն հասկանալի լեզվով տեղեկացված լինելու՝

- այն ընթացակարգերի մասին, որոնցով կարող է բողոք ներկայացվել.
- դատավարության և դատաքննության ընթացքում իր իրավունքների մասին.
- իրավական օգնության, խորհրդատվության և աջակցության հասանելիության մասին.
- անհրաժեշտության դեպքում՝ վկաների (բարոյական և (կամ) տնտեսական)

փոխհատուցում պահանջելու հնարավորության մասին.

• անհրաժեշտության դեպքում՝ դատաքննության և փոխկապակցված այլ ծախսերի և ծախքերի փոխհատուցման հնարավորության մասին:

18. Տուժողն իրավունք ունի նաեւ օրենքով սահմանված կարգով պահանջելու և ստանալու տեղեկություններ՝

• վարույթի ընթացքի, ապացույցների ընդունման և հետապնդում իրականացնելու կամ չիրականացնելու (և ինչ հանցանքների համար) կամ վեճերի այլընտրանքային լուծում առաջարկելու դատախազի որոշման մասին և այդ որոշումները հիմնավորող պատճառների մասին.

• դատաքննության վայրի և ամսաթվի, դատական վարույթներին ներկա գտնվելու և լսվելու, ինչպես նաեւ օրենքով նախատեսված դեպքերում՝ օրինական ներկայացուցչի միջոցով ներկայանալու, փաստաթղթերին և արձանագրություններին հասանելիություն ունենալու և բողոքներ ներկայացնելու իրավունքի մասին.

• ցանկացած պաշտպանության միջոցի մասին, որը կարող է պահանջվել իր անունից, մասնավորապես՝ հանցանքի բնույթին և գործի հանգամանքներին համապատասխան՝ իր անանունությունը, անձնական տվյալները և անվտանգությունը պահպանելու նպատակով.

• հասանելի սոցիալական, բժշկական և այլ օգնության մասին (օրինակ՝ տուժողների աջակցության ծառայություններ, առողջապահական հաստատություններ, բռնության դեմ պայքարի կենտրոններ և ապաստարաններ), որոնցից ինքը կարող է օգտվել.

• դատապարտյալի նկատմամբ նշանակված՝ ազատագրկման ձեռով պատժի և նրա հնարավոր ազատ արձակման ամսաթվի հետ կապված փոփոխությունների մասին.

• տարածաշրջանային և միջազգային մակարդակով անհատական/կոլեկտիվ բողոքների մեխանիզմների և դրանց հասանելիության մասին:

19. Այս համատեքստում կարող են լինել՝

• այնպիսի փորձագետների մասնակցությունը լուծումներին, ինչպիսիք են հոգեբանները կամ բժշկական և այլ փորձագետներ՝ դատախազներին, իրավապահ մարմիններին կամ դատարաններին (օրինակ՝ սեռական հանցանքների, ընտանեկան բռնության, մարդկանց թրաֆիքինգի կամ մանկական պոռնոգրաֆիայի դեպքերում) օժանդակելու համար.

• մասնագիտացված ստորաբաժանումների և վերապատրաստված իրավասու ծառայողների միջամտությունը՝ հարցաքննությանը կամ փորձաքննությանը մասնակցելու համար.

• անհրաժեշտության դեպքում՝ տուժողի հետ նույն սեռի ծառայողների ներգրավումը, հատկապես որոշ տեսակի հանցագործությունների դեպքում (օրինակ՝ սեռական հանցագործությունների կամ սեռական ազատության դեմ իրականացվող հանցագործությունների, ընտանեկան բռնության դեպքերի պարագայում)՝ հարցաքննությանը կամ փորձաքննությանը մասնակցելու համար.

• վկաների պաշտպանության հատուկ պետական ծրագրերը.

• հանցագործի հետ շփումներից խուսափելու անհրաժեշտությունը և տուժողների կողմից կրկնակի ցուցմունք տալուց խուսափելու անհրաժեշտությունը, եթե դա խիստ անհրաժեշտ չէ, երկրորդային վիկտիմիզացիան կանխելու համար.

• ցուցմունք տալու համար հատուկ պայմաններից օգտվելը (օրինակ՝ երեխաների համար հարմարեցված հատուկ տարածքներ, ապահով սպասարաններ, դատարաններում կամ նույնիսկ դատարանի շենքերից դուրս հատուկ սենյակներ, ոչ աշխատանքային ժամերին անցկացվող հարցաքննություններ, երկկողմանի հայելիների օգտագործում, տեսաձայնագրություն, կաբելային

⁵ Որոշ իրավական համակարգերում այդպիսի հաղորդումներ ներկայացնելը կարող է պարտականություն համարվել:

հեռուստատեսություն կամ ուղիղ հեռուստատեսային կապ՝ տուժողի ցուցմունքի համար, անհրաժեշտության դեպքում՝ տեխնիկական միջոցներով դեմքի եւ ձայնի փոփոխմամբ):

20. Տուժողները եւ անհրաժեշտության դեպքում՝ վկաները պետք է նաեւ տեղեկացվեն, առնվազն առանձնապես լուրջ դեպքերում, պաշտպանայւի եւ (կամ) իրավախախտի ձերբակալման, ազատ արձակման կամ փախուստի դեպքերի մասին:

4. Դատախազների դերը տուժողների եւ վկաների իրավունքների պաշտպանության գործում

Դատախազի դերը եւ պարտականությունները տուժողների եւ վկաների նկատմամբ

21. Դատախազների դերը տուժողների եւ վկաների իրավունքների պաշտպանության հարցում շատ անդամ պետություններում նախատեսված է օրենքով, բայց կարող է նաեւ բխել իրավական ավանդույթներից, քրեական հետապնդման քաղաքականությունից կամ էթիկական կանոններից⁶: Դատախազների պարտականությունն է առաջնորդվել դրանցում սահմանված մասնագիտական վարքագծի չափանիշներով:

22. Դատախազները տուժողների եւ վկաների նկատմամբ միշտ պետք է դրսեւորեն հարգալից, խտրականությունից զերծ եւ անկողմնակալ վերաբերմունք՝ պատշաճ կերպով հաշվի առնելով այդ անձանց անձնական հանգամանքները:

23. Դատախազները պետք է ողջամիտ դատողություններ կատարեն իրենց պարտականություններն իրականացնելիս, այդ թվում՝ տուժողների եւ վկաների հետ գործ ունենալիս, հատկապես, երբ նրանք խոցելի են:

24. Դատախազները պետք է պատշաճ կերպով հաշվի առնեն վկաների օրինական շահերը եւ տուժողների տեսակետներն ու մտահոգությունները, երբ շրջափվում են նրանց անձնական շահերը, եւ խրախուսեն կամ ձեռնարկեն գործողություններ՝ ապահովելու համար, որ տուժողները եւ վկաները տեղեկացված լինեն թե՛ իրենց իրավունքների եւ թե՛ պարտականությունների, ինչպես նաեւ քրեական վարույթների ընթացքի մասին:

25. Վարույթների բոլոր փուլերում դատախազները պետք է ձգտեն պաշտպանել տուժողների եւ վկաների արժանապատվությունը, անձնական եւ ընտանեկան կյանքը, անձնական անվտանգությունը, ինչպես նաեւ ապահովել նրանց դատավարական իրավունքները, այդ թվում՝ տեղեկություններ ստանալու իրավունքը եւ անհրաժեշտության դեպքում՝ իրավաբանական օգնություն եւ փոխհատուցում ստանալու տուժողների իրավունքը:

26. Տուժողների եւ վկաների իրավունքների պաշտպանության դերը, կախված ազգային իրավական համակարգից, կարող է իրականացվել իրավապահ մարմինների եւ դատարանների հետ համագործակցությամբ կամ դրանց դիմելով:

27. Դատախազները պետք է պահանջեն, որ տուժողները եւ վկաները ներկա գտնվեն դատական վարույթներին, երբ նրանց ցուցմունքներն էական նշանակություն ունեն մեղադրանքի եւ պաշտպանության կողմերի համար կամ պահանջվում են օրենքով: Ավելին, հաշվի առնելով տուժողի/վկայի ցուցմունքների կարեւորությունը՝ անդամ երկրները պետք է ստեղծեն ինչպես օրենսդրական, այնպես էլ ինստիտուցիոնալ մեխանիզմներ տուժողի/վկայի հարցաքննության համար, որպեսզի նրանք կարողանան ազատ եւ ապահով կերպով ցուցմունքներ տալ:

28. ՄԻԵԴ-ի համաձայն՝ քրեական վարույթների ընթացքում պաշտպանության կողմի իրավունքները կարող են հավասարակշռվել վկային/տուժողին պաշտպանելու, մասնավորապես՝ նրանց անձնական կյանքի նկատմամբ հարգանք ցուցաբերելու նպատակով: Այսպիսով, որոշակի միջոցներ կարող են ձեռնարկվել վկային/տուժողին պաշտպանելու հատուկ նպատակով⁷:

29. Հատուկ պաշտպանության միջոցներն այն մեխանիզմներն են, որոնք երաշխավորում են տուժողների/վկաների, ինչպես նաեւ անհրաժեշտության դեպքում՝ նրանց ընտանիքի անդամների ֆիզիկական եւ հոգեբանական անձեռնմխելիությունը եւ նրանց գույքի անձեռնմխելիությունը:

30. Այս առումով անհրաժեշտության դեպքում տուժողների/վկաների համար ցուցմունք տալուց առաջ, դրա ընթացքում եւ հետո պետք է նախատեսվեն հատուկ պաշտպանության միջոցներ, որպեսզի նրանց կյանքի, առողջության եւ գույքի կամ նրանց ընտանիքի անդամների համար հնարավոր մտահոգությունների հետ կապված միջոցներ ձեռնարկվեն:

31. Դատախազները, ոստիկանությունը եւ իրավապահ այլ մարմիններ պետք է կարողանան

⁶ Տե՛ս նաեւ Rec (2000)19 առաջարկությունը, 32-րդ եւ 33-րդ պարբերությունները:

⁷ Տե՛ս ՄԻԵԴ-ի վճիռը Ս.Լ.-ն ընդդեմ Շվեդիայի գործով, 2002 թվականի հուլիսի 2:

կիրառել հատուկ պաշտպանության միջոցներ՝ ելնելով քրեական գործի հանգամանքներից եւ տուժողների/վկաների կամ նրանց ընտանիքի անդամների կյանքին, առողջությանը եւ գույքին սպառնացող վտանգի չափից:

32. Հանրային մեղադրողները պետք է պատշաճ կերպով հաշվի առնեն վկաների շահերը, հատկապես ձեռնարկեն նրանց կյանքը, անվտանգությունը եւ մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը պաշտպանելուն ուղղված միջոցները կամ նպաստեն դրան կամ ապահովեն այդ միջոցների ձեռնարկումը:

33. Հանրային մեղադրողները պետք է նաեւ պատշաճ հաշվի առնեն տուժողների տեսակետները եւ մտահոգությունները, երբ վտանգված են նրանց շահերը, եւ ձեռնարկեն այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են ինչպես իրենց իրավունքների, այնպես էլ վարույթի ընթացքի մասին տուժողների կողմից տեղեկացվելու ապահովմանը, կամ նպաստեն դրանց:

Երկրորդային վիկտիմիզացիայից խուսափելը

32. Երկրորդային վիկտիմիզացիան վնաս է, որն ուղղակիորեն չի պատճառվում հանցագործի կողմից, այլ ծագում է դատախազների, իրավապահ մարմինների կամ դատական իշխանությունների գործողությունների հետեւանքով, որոնք ազդեցություն են ունենում տուժողի վրա: Դատախազները պետք է ձգտեն խուսափել իրենց գործողությունների հետեւանք հանդիսացող երկրորդային վիկտիմիզացիայից:

33. Որոշ տուժողներ, հատկապես ընտանեկան բռնության, սեռական բռնության, մարդկանց թրաֆիքինգի, ահաբեկչության եւ անօրինական միգրացիայի զոհերը կարող են համապատասխանել հատուկ կարգավիճակի, հատկապես խոցելի տուժողի կարգավիճակի պայմաններին այն բռնության կամ բռնության սպառնալիքի պատճառով, որին նրանք կարող են ենթարկվել, ինչպես նաեւ երկրորդային վիկտիմիզացիայի վտանգի պատճառով:

34. Դատախազների, ոստիկանության, իրավապահ կամ դատական այլ մարմինների ոչ պրոֆեսիոնալ մոտեցումը եւս կարող է հանգեցնել երկրորդային վիկտիմիզացիայի: Տուժողների կոնկրետ իրավիճակը լավ չհասկանալը կարող է տուժողների մոտ առաջացնել մեկուսացման, անորոշության զգացում եւ հանգեցնել քրեական արդարադատության համակարգի նկատմամբ հավատը կորցնելուն:

35. Ոչ պրոֆեսիոնալ, երկարատեւ կամ ուշացած քննությունը եւ հետապնդումը կարող են հանգեցնել ապացույցների անդառնալի կորստի կամ հակասել գործը ողջամիտ ժամկետում կամ համապատասխան վաղեմության ժամկետում ավարտելու պահանջին:

36. Հանցավոր գործունեության որոշակի տեսակների համար (օրինակ՝ ընտանեկան բռնություն, սեռական բռնություն, մարդկանց թրաֆիքինգ, ահաբեկչություն, անօրինական ներգաղթ) դատախազները պետք է կարողանան մասնագիտանալ, ձեռք բերել դատական հոգեբանության գիտելիքներ եւ անցնել համապատասխան մասնագիտական վերապատրաստում, որպեսզի կարողանան արագացված կարգով եւ գրագետ քննել նման գործերը:

37. Եթե խոցելի համարվող տուժողների երկրորդ հարցաքննության անցկացումը հնարավոր, նպատակահարմար կամ էական չէ, ապա պետք է կիրառվեն տեսաձայնագրություններ՝ միաժամանակ պատշաճ պահպանելով մրցակցության սկզբունքը:

38. Երկրորդային վիկտիմիզացիայից խուսափելու համար անչափահաս երեխաների եւ այլ խոցելի անձանց հարցաքննությունը պետք է իրականացվի առանց իրավախախտի ներկայության, հատուկ հարցաքննության սեյյակներում՝ տեսաձայնագրությունների օգտագործմամբ կամ տեսակոնֆերանսի սարքավորումների միջոցով: Հարգելով մրցակցության սկզբունքը՝ այդ ձայնագրությունները պետք է որպես ապացույց օգտագործվեն քրեական վարույթների ընթացքում՝ անհարկի կրկնությունից⁸ խուսափելու համար:

Տուժողների առանձին խմբերի (օրինակ՝ ահաբեկչության, մարդկանց թրաֆիքինգի, ընտանեկան բռնության, սեռական բռնության զոհերի) հետ կապված հատուկ մտահոգությունը

39. Թեեւ քրեական իրավախախտումներից տուժած բոլոր անձինք արժանի են ոստիկանության եւ իրավապահ եւ դատական մարմինների ուշադրությանը, այնուամենայնիվ, ոմանք պետք է օգտվեն հատուկ ռեժիմից՝ իրենց կրած տրավմայի հատուկ բնույթը կամ իրենց նկատմամբ կատարված հանցագործության ծանրությունը հաշվի առնելով:

40. Դատախազները, եթե դա իրենց իրավասության շրջանակում է, պետք է ձգտեն նման

⁸ Տե՛ս Եվրոպական պառլամենտի եւ հորիզոնի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի 2012/29/ԵՄ հրահանգի 23-րդ եւ 24-րդ հոդվածները, որոնցով սահմանվում են հանցագործությունից տուժած անձանց իրավունքների, աջակցության եւ պաշտպանության վերաբերյալ նվազագույն չափանիշները՝ քրեական վարույթի ընթացքում պաշտպանության հատուկ կարիքներով տուժողների պաշտպանության իրավունքը: Տե՛ս նաեւ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Երեխաների համար բարենպաստ արդարադատության վերաբերյալ ուղեցույցները (2010):

դեպքերի վաղ բացահայտմանը եւ ուշադրություն դարձնեն մասնավորապես՝

- վաղ փուլում ցուցմունքների ստացմանը, որ հետագայում դրանք որպես ապացույց օգտագործվեն դատական վարույթի շրջանակներում.
- քրեական գործով քննության եւ հետապնդման վաղ նախաձեռնմանը եւ դրանց ելքի համարժեք վերահսկողությանը.
- տուժողի կողմից անհարկի կրկնակի ցուցմունք տալու կանխմանը.
- վարույթին մասնակցող երեխայի համար անհրաժեշտության դեպքում խնամակալի նշանակմանը.
- փորձագիտական խորհրդատվություն խնդրելուն եւ փորձագետների համար հարցերը ճշգրիտ ձեւակերպելուն:

Ընտանեկան բռնությունը եւ սեռական բռնությունը

41. Ընտանեկան բռնությունը հաճախ բնութագրվում է կրկնվող հարձակումների զգալի ժամանակահատվածով, իրավախախտի ազդեցիվության սրմամբ, իրավախախտի եւ տուժողի միջեւ հուզական փոխկապակցվածությամբ եւ գաղտնիությամբ (հիմնականում գաղտնի պայմաններում տեղի ունենալը): Շատ հաճախ տուժողը չի ցանկանում համագործակցել իրավապահ մարմինների հետ՝ իրավախախտից նյութական եւ հոգեբանական կախվածության, ամաչկոտության եւ այն ենթադրության պատճառով, թե իրավախախտի վարքագիծը կբարելավվի: Տուժողները երբեմն կարող է ցանկանան նվազեցնել իրավախախտի գործողությունների լրջությունը, հրաժարվել ցուցմունքներ տալուց, փոխել իրենց ցուցմունքները կամ իրենց վրա վերցնել մեղավորության մի մասը: Եթե տուժողը ցանկանում է ցուցմունք տալ, ապա նա սովորաբար հնարավորինս շատ տեղեկություններ է տրամադրում միջադեպից անմիջապես հետո (շատ հաճախ դա վերջին եւ ամենալուրջ հարձակումն է լինում, երբեմն, սակայն, դա կարող է լինել առաջին հարձակումից հետո, երբ երեխա է ներգրավված):

42. Դատախազները⁹, եթե դա իրենց իրավասության շրջանակում է, պետք է ձգտեն նման դեպքերի վաղ բացահայտմանը եւ ուշադրություն դարձնեն մասնավորապես՝

- ընտանեկան բռնության հասկացության ներքո դասվող իրադարձությունների տարբերակմանը.
- ընտանեկան բռնության հանգեցնող արարքին պատշաճ իրավական որակում տալու անհրաժեշտությանը. այս առումով նրանք չպետք է կենտրոնանան միայն ամենավերջին հարձակման վրա, որը տուժողին ստիպել է քրեական բողոք ներկայացնել, այլ նաեւ պետք է փնտրեն քրեական հետեւանքներ ունեցող նախորդ դեպքերը (նախորդ հարձակումները մեկ այլ կամ պակաս ծանր հանցագործություն որակելու վտանգ կա):

43. Ներընտանեկան բռնությունը՝ հանցավոր երեւույթ, որը հաճախ գործնականում անտեսանելի է, պահանջում է, որ քննիչները եւ դատախազները ուշադիր լսեն տուժողներին՝ բռնության դեպքերը հնարավորինս արագ հայտնաբերելու եւ բռնի վարքագծին վերջ դնելու համար: Հարցաքննությունները պետք է իրականացվեն անհրաժեշտ բոլոր իրավական երաշխիքների ապահովմամբ: Կարելի է նաեւ համագործակցել այն մարմինների, պետական եւ մասնավոր կառույցների հետ, որոնք կարող են աջակցություն տրամադրել ընտանեկան բռնության զոհերին:

44. Տուժողի առօրյա կյանքում վտանգավոր հետեւանքներից խուսափելու համար անհրաժեշտության դեպքում, ի թիվս այլնի, մասնավորապես պետք է ապահովվի, որ բռնություն գործադրող ամուսինը, այլ ոչ թե տուժողը, լքի ընտանիքի տունը կամ ենթարկվի խափանման միջոցի, նրան արգելվի մոտենալ տանը, եւ տուժողը կարողանա օգտվել ժամանակակից տեխնոլոգիաներից, օրինակ՝ ունենա հեռախոս՝ մոտալուտ վտանգի դեպքում իրավասու մարմիններին նախազգուշացնելու համար:

45. Դատախազների, ոստիկանության եւ այլ իրավապահ մարմինների համար կարելի է հատուկ ուշադրություն դարձնել սեռական բռնության զոհերին ընդունելու եւ նրանց լսելու վրա, հատկապես, եթե զոհը երեխա է կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձ:

Մարդկանց թրաֆիքինգը

46. Մարդկանց թրաֆիքինգը հանցավոր երեւույթ է տարբեր դրսեւորումներով, ինչպիսիք են միգրանտների թրաֆիքինգը, սեռական շահագործումը կամ հարկադիր աշխատանքը:¹⁰ Չոհերը հաճախ

⁹ Տե՛ս մասնավորապես անդամ պետություններին ուղղված՝ Նախարարների կոմիտեի «Բռնությունից կանանց պաշտպանելու մասին» Rec(2002)5 առաջարկությունը:

¹⁰ Որոշ եզրույթներ՝ ստրկություն, անազատ վիճակ եւ հարկադիր աշխատանք, կարելի է գտնել ՄԻԵԴ-ի Նախադեպային իրավունքում Կոնվենցիայի 4-րդ հոդվածի հետ կապված: Այս եզրույթների սահմանումը պետք է լինի ճշգրիտ, բայց ճկուն, եւ պետք է հնարավոր լինի այն հարմարեցնել տարբեր հանգամանքներին: 4-րդ հոդվածի ընթացակարգային հայեցակետերը ներառում են Պայմանավորվող

խոցելի անձինք են, որոնց մտահոգում են իրավախախտման հետեւանքները, եւ որոնք խուսափում են հանցագործների վրեժխնդրությունից: Ուստի կարելոր է, որ դատախազները, ոստիկանությունը կամ իրավապահ եւ դատական այլ մարմիններ օգնեն նրանց անհրաժեշտ աջակցություն ստանալ՝ իրենց պաշտպանությունն ապահովելու եւ հանցավոր միջավայրից նրանց դուրս բերելու համար:

47. Համապատասխան մարմինը պետք է ուշադրություն դարձնի մասնավորապես հետեւյալին.

- գործի արդյունավետ քննություն.
- մարդկանց թրաֆիքինգի զոհի կամ պոտենցիալ զոհի վաղ բացահայտում.
- արարքին որպես մարդկանց թրաֆիքինգի հանցագործություն եւ ոչ որպես մեկ այլ, հատկապես՝ պակաս ծանր հանցագործություն պատշաճ իրավական որակում տալը.
- մարդկանց թրաֆիքինգի զոհի կամ պոտենցիալ զոհի իրավունքների հստակ եւ արդյունավետ պաշտպանություն.
- մարդկանց թրաֆիքինգի նոր ձեւերի դիտարկում, օրինակ՝ վաղ եւ (կամ) հարկադրված ամուսնությունները եւ հաշվարկով ամուսնությունները, տուժողներին, հիմնականում երեխաներին մուրացկանությունը եւ հանցագործությունների կատարմանը հարկադրելը.
- անօրինական միգրացիայի հետ կապված ցանկացած հանցավոր գործունեության հետ մարդկանց թրաֆիքինգի հնարավոր կապեր.
- հնարավորության դեպքում՝ մարդկանց թրաֆիքինգի զոհերի նկատմամբ պատիժ չկիրառելու սկզբունքի կիրառում¹¹:

48. Անօրինական միգրացիայի շրջանակներում, երբ միգրանտների կյանքն ու առողջությունը շատ հաճախ վտանգված են, դատախազները, ոստիկանությունը եւ իրավապահ այլ մարմիններ պետք է հատկապես ուշադրություն դարձնեն հետեւյալին.

- հնարավոր կապեր անօրինական միգրացիայի եւ մարդկանց թրաֆիքինգի ու ներգաղթյալների հետ կապված՝ մարդկանց թրաֆիքինգի դեպքերի հնարավոր աճի միջեւ.
- մաքսանենգների եւ մաքսանենգության հանցավոր ցանցերի բացահայտում.
- անօրինական միգրացիայի հետ կապված հանցագործությունների բացահայտում, օրինակ՝ փաստաթղթերի կեղծում (սույնականացման քարտեր, վիզա, կացության թույլտվություն, ապաստան հայցողների գրանցում) եւ հանցավոր այլ գործունեության հետ մաքսանենգների ունեցած կապ (մարդկանց թրաֆիքինգ, թմրամիջոցների չարաշահում, գույքի վրա ազդեցություն ունեցող հանցավոր գործունեություն).
- սոցիալական մեդիայի մոնիթորինգ (ծառայությունների գովազդ, վարորդների հավաքագրում, միգրացիոն ուղիների գարգացման, նպատակակետ երկրներում իրավիճակի մասին տեղեկություններ, գովազդ, օրինակ՝ «փնտրվում է ուղեւոր»).
- առանց ուղեկցողի երեխա միգրանտներին կամ այլ մեկուսացված անձանց կարելորդ ավելի հավանական է, որ նրանք դառնան մարդկանց թրաֆիքինգի պոտենցիալ զոհ՝ իրենց խոցելի վիճակի պատճառով.
- անօրինական միգրացիայի եւ ահաբեկչության համատեքստեր եւ դրանց հնարավոր փոխկապակցվածություն:

Ահաբեկչությունը

49. Ահաբեկչական գործողությունների արդյունքում տուժած անձինք դեպքերից հետո հաճախ մնում են ծանր վնասվածքներով եւ մեկուսացած: Ուստի կարելոր է, որ դատախազներն իրենց իրավասության շրջանակներում եւ փաստերը հայտնի դառնալուն պես ուշադրություն դարձնեն տուժողների ճակատագրին ինչպես քննության, այնպես էլ ամբողջ վարույթի ընթացքում¹²:

50. Հատկապես կարելոր է, որ տուժողների ընտանիքներն ու հարազատները հնարավորինս շուտ տեղեկացվեն նրանց ճակատագրի մասին: Տուժողների վիճակի՝ վիրավորված, մահացած կամ անհետ կորած լինելու մասին պետք է հայտարարվի մարդասիրական եղանակով: Նրանք պետք է ստանան նաեւ համապատասխան եւ անվճար շտապօգնություն՝ միաժամանակ խստագույնս պահպանելով նրանց մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը:

պետությունների՝ արդյունավետ հետապնդում իրականացնելու եւ ցանկացած հանցագործություն պատժելու դրական պարտավորությունները, որոնց նպատակն է անձին պահել ստրկության, անագատ վիճակի կամ հարկադիր աշխատանքի մեջ, այսինքն՝ խոսքը պետության իրավագործության սահմաններում կատարված հանցագործություններն արդյունավետ կերպով քննելու ընթացակարգային պարտավորության մասին է: Արդյունավետ քննությունը պետք է լինի անկողմնակալ, անկախ, մանրակրկիտ եւ բավարար, արագ եւ ելթակա լինի հանրության վերահսկողությանը, եւ դա ի սկզբանե ոչ թե արդյունքի, այլ օգտագործված միջոցների հարց է:

¹¹ Պատիժ չկիրառելու սկզբունքը չի հակասում մարդու իրավունքներին: Տե՛ս ՄԻԵԴ-ի Ռանցեն ընդդեմ Կիպրոսի եւ Ռուսաստանի [Rantsev v. Cyprus and Russia] գործը եւ Սիլիանոն ընդդեմ Ֆրանսիայի գործը [Siliadin v. France], Կոնվենցիայի 4-րդ հոդվածի մաս: Տե՛ս նաեւ Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (26-րդ հոդված):

¹² Տե՛ս նաեւ Նախարարների կոմիտեի կողմից 2005 թվականի մարտի 2-ին ընդունված՝ Ահաբեկչական գործողությունների զոհերի պաշտպանության վերաբերյալ ուղեցույցը:

51. Պետք է ձեռնարկվեն բոլոր նախագգուշական միջոցները ահաբեկչական գործողությունների արդյունքում տուժած անձանց մարմինները եւ նրանց պատկանող իրերը վերադարձնելիս:

52. Դատախազները պետք է նաեւ ձգտեն տուժողներին անհրաժեշտության դեպքում հավաստի տեղեկություններ տրամադրել քննության փաստերի եւ ընթացքի մասին՝ հատուկ ուշադրություն դարձնելով նախքան տեղեկությունները լրատվության միջոցներին կամ դրանց կողմից հաղորդելը տուժողներին տեղյակ պահելու հանգամանքին:

53. Ահաբեկչական գործողությունների արդյունքում տուժած անձինք հաճախ լրջորեն տուժում են ոչ միայն իրենց ֆիզիկական եւ հոգեբանական անձեռնմխելիության, այլ նաեւ ֆինանսական վիճակի առումով: Դատախազները պետք է հնարավորինս ապահովեն, որ գործերին արագ ընթացք տրվի՝ ցանկացած պատճառված վնասի դիմաց արագ եւ համարժեք փոխհատուցում ապահովելու համար:

Տուժողների/վկաների պաշտպանության եւ նրանց վերականգնման համար հատուկ միջոցների կամ ընթացակարգերի կիրառումը

Օգնությունը եւ աջակցությունը

54. Տուժողներին եւ վկաներին համապատասխան պաշտպանություն եւ աջակցություն տրամադրելու համար բավարար նյութական, մարդկային եւ ֆինանսական ռեսուրսներ են անհրաժեշտ: Մարդկային ռեսուրսներում պետք է ներգրավվեն ոչ միայն վերապատրաստված դատախազներ, այլ նաեւ հոգեբաններ, մանկավարժներ եւ այլ կոմպետենտ փորձագետներ:

55. Զանի որ հանրային կառույցները եւ ՀԿ-ները հաճախ կարելու դեր են խաղում տուժողներին եւ վկաներին տրամադրվող աջակցության ծրագրերի եւ նախագծերի իրականացման գործում, նրանց հետ արդյունավետ համագործակցություն պետք է կազմակերպվի:

Տուժողների եւ վկաների ցուցմունքները, հատկապես, երբ նրանք խոցելի են. երդմամբ ցուցմունք տալու կարողությունը, ռիսկի գնահատումը եւ պաշտպանության այլ միջոցներ

56. Երկրորդային վիկտիմիզացիայից խուսափելու համար դատախազները տուժողների եւ վկաների հետ զրուցելու միջոցով, հատկապես երբ նրանք խոցելի են, պետք է գնահատեն, թե արդյոք նրանք կարող են համապատասխան տեղեկություններ տրամադրել գործի համար:

57. Խոցելի տուժողները եւ վկաները պետք է նախապես ամբողջությամբ տեղեկացված լինեն իրենց հարցաքննության հետեւանքների եւ բովանդակության մասին:

58. Դատախազները պետք է հարգեն երեխաների՝ վարույթում համապատասխան ներկայացուցիչներ ունենալու իրավունքը:

59. Եթե անհրաժեշտ է երդմամբ ցուցմունք տալ, ապա տուժողը կամ վկան պետք է նախագգուշացվի այդ ցուցմունքի հետեւանքների մասին:

60. Այն իրավական համակարգերում, որտեղ տուժողից/վկայից կարող է պահանջվել երդում տալ, երբ երդվելու առարկություն կա կամ կրոնական համոզմունք չունենալու, կամ նրա կրոնական համոզմունքին հակասելու պատճառով, ապա նրան պետք է թույլ տրվի անել իր հանդիսավոր հավաստումը (հայտարարությունը), եւ դա պետք է ճանաչվի որպես այն նույն ուժն ու ազդեցությունն ունեցող, ինչ երդում տալու դեպքում:

61. Զրեական վարույթներին հատկապես խոցելի տուժողների եւ վկաների մասնակցությունը պետք է ենթարկվի ռիսկերի կառավարման վերլուծության մեխանիզմներին՝ բացահայտելով այդ անձանց համար հնարավոր սպառնալիքները՝ պատշաճ եւ համաչափ պաշտպանության միջոցներ նախատեսելու եւ դրանց կիրառման արդյունավետությունը վերահսկելու համար:

Երեխաների, մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց կամ այլ խոցելի անձանց կողմից ապացույցների տրամադրումը մերժելու կամ դա անելու անկարողության հետեւանքը

62. Օրենքի համաձայն՝ ցանկացած անձ կարող է հարցաքննվել՝ անկախ իր տարիքից, եթե տեղյակ է քրեական գործին վերաբերող հանգամանքներից: Եթե նախքան երեխայի հարցաքննությունը հարց է ծագում, թե արդյոք երեխան ի վիճակի է ճիշտ հասկանալ եւ ձեւակերպել քրեական գործի հանգամանքները, կամ դատավարական գործողությունների իրականացումը կարող է բացասական հոգեբանական ազդեցություն ունենալ երեխայի վրա, դատավարական գործունեությունը պետք է իրականացվի՝ հիմնվելով փորձագետի գնահատականի վրա:

63. Դատարանի հայեցողությունն է փորձագետների օգնությամբ որոշել, թե արդյոք մտավոր հաշմանդամություն ունեցող անձը կարող է ցուցմունք տալ՝ ելնելով գործի հանգամանքները հասկանալու եւ պատշաճ կերպով արտահայտելու անձի կարողությունից, ինչպես նաեւ այն, թե արդյոք դրանով նրա առողջությանը վնաս չի հասցվի:

Տուժողներին եւ վկաներին փորձագետների աջակցությունը

64. Այն տուժողները եւ վկաները, որոնք դժվարանում են հարցերը հասկանալ եւ ապացույցներ ներկայացնել, կարող են ցուցմունքներ տալ համապատասխան փորձագետների օգնությամբ ինչպես մինչդրամական, այնպես էլ դատաքննության փուլերում՝ հասկանալի հաղորդակցություն ապահովելու համար:

65. Փորձագետը ցուցմունք տվող անձին կարող է բացատրել առաջադրվող հարցերը, ինչպես նաեւ նրա տված պատասխանները՝ դատախազի եւ դատարանի հետ համապատասխան հաղորդակցություն ապահովելու համար: Փորձագետի մասնակցությունը չպետք է նվազեցնի դատախազի այն պարտականությունը, որով նա ապահովում է, որ տուժողին եւ վկային տրվող հարցերը լինեն տեղին եւ համապատասխան են նրա մտավոր հասունության աստիճանին: Ներպետական օրենսդրությամբ եւ (կամ) այլ փաստաթղթերով պետք է նախատեսվեն այդ առումով փորձագետների համապատասխան վարքագծի համար կանոններ:

Ապացույցների ընդունելիությանն առնչվող հատուկ միջոցները

66. Ներպետական օրենսդրությամբ պետք է նախատեսվեն հատուկ մեխանիզմներ՝ հատուկ միջոցների կիրառմամբ ձեռք բերված ապացույցների ընդունելիությունն ապահովելու համար: Այս համատեքստում կարող են օգտագործվել հարցաքննությունների տեսագրությունը, տեսակոնֆերանսի/ուղիղ հեռարձակման միջոցով այլ վայրում հարցաքննությունը կամ նախկինում տեսագրված ցուցմունքների ցուցադրումը: Այս մեխանիզմները պետք է ապահովեն արդար դատաքննության ապահովմանն ուղղված համապատասխան երաշխիքներ, հարգեն ՄԻԵԿ-ի 6.3 հոդվածի «դ» ենթակետով մեղադրյալի համար սահմանված մրցակցության սկզբունքի երաշխիքները, ապահովեն ապացույցների հավաստիությունը եւ պաշտպանեն այն անձանց իրավունքները, որոնց դեմ ցուցմունք է տրվել:

Տուժողների եւ վկաների բազմակի զննությունից եւ նրանց անձնական կյանքի վերաբերյալ խաչաձեւ հարցաքննությունից խուսափելը

67. Դատախազներն իրենց վերահսկողական գործառնությունների շրջանակում պետք է միջոցներ ձեռնարկեն երեխաների, մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց եւ ընդհանրապես խոցելի անձանց հարցաքննությունների քանակը նվազեցնելու համար: Այդ անձինք հնարավորության դեպքում պետք է հարցաքննվեն մեկ անգամ եւ միայն խիստ անհրաժեշտության դեպքում: Հարցաքննությունը պետք է լինի հնարավորինս ընդգրկուն՝ կրկնությունից խուսափելու համար: Երբ հոգեբանը կամ այլ համապատասխան փորձագետ որոշում է, որ ուղիղ հարցաքննությունը կարող է վնասել մտավոր հաշմանդամություն ունեցող երեխային կամ անձին, պետք է դիտարկել համապատասխան տեխնիկական միջոցների կիրառմամբ հարցաքննությունն անցկացնելու հարցը:

68. Խոցելի տուժողի/վկայի եւ ենթադրյալ իրավախախտի միջեւ անմիջական հաղորդակցությունը պետք է հնարավորինս սահմանափակվի, հատկապես սեռական շահագործման, սեռական ոտնձգության եւ սեռական բռնության դեպքերում, եւ միայն այն դեպքում, երբ դա խիստ անհրաժեշտ է արդար դատաքննություն ապահովելու համար: Սա կարող է ներառել այն, որ տուժողին/վկային թույլ տրվի ցուցմունքներ տալ Էկրանի կամ նմանատիպ այլ սարքի հետեւից, որպեսզի տուժողը/վկան չտեսնեն մեղադրյալին:

Դատաքննություններին հանրության ներկայությունը բացառելու հնարավորությունը

69. Դատաքննությունները սովորաբար պետք է անցկացվեն հրապարակային: Այնուամենայնիվ, շատ սահմանափակ դեպքերում ներպետական օրենսդրությամբ պետք է նախատեսվի դնփակ նիստեր անցկացնելու հնարավորություն (օրինակ՝ երբ հանրության ներկայությունը կարող է խախտել տուժողի կամ վկայի անձնական կյանքի իրավունքը կամ կարող է երեխային հոգեբանական կամ այլ վնաս պատճառել): Ամեն դեպքում դա պետք է որոշի դատարանը՝ միշտ ապահովելով արդար դատաքննության եւ թափանցիկության պահանջների պատշաճ կատարումը:

Դատախազների եւ այլ դերակատարների դերն այս իրավունքների իրականացման եւ դրանց խախտման դեպքում

70. Դատախազներն անհրաժեշտության դեպքում պետք է համագործակցեն ոստիկանության եւ այլ իրավապահ եւ դատական մարմինների, տուժողներին աջակցող հաստատությունների, միջնորդության եւ հաշտարարության խորհրդատվական կառույցների եւ ՀԿ-ների հետ: Դատախազն անհրաժեշտության դեպքում պետք է համագործակցի հաստատությունների հետ (սոցիալական ծառայության կենտրոններ, համայնքային կենտրոններ, հիվանդանոցներ, կրթական հաստատություններ, վկաների պաշտպանության եւ տուժողների իրավունքների պաշտպանության կառույցներ) կամ տուժողներին ուղղորդի այդպիսի հաստատություններ, որպեսզի նրանք օգտվեն աջակցությունից եւ օժանդակությունից (բնակարանային, կրթության եւ աշխատանքի հարցերով իրավական, հոգեբանական,

ֆինանսական օգնություն)՝ բռնությունից հետո վերականգնվելու ընթացքը դյուրացնելու նպատակով:

71. Տուժողը պետք է տեղեկացված լինի առկա տարբերակների մասին, ինչպիսիք են միջնորդությունը, հաշտարարությունը եւ արդարադատության մատչելիության հարցում վերականգնողական արդարադատությունը¹³: Հաշվի առնելով տուժողի տարիքը, հասունությունը եւ մտավոր կարողությունները՝ նա պետք է տեղեկացված լինի այս առումով եղած ընտրության ռիսկերի եւ օգուտների մասին:

72. Դատախազն անհրաժեշտության դեպքում պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ՝ տուժողներին նրանց հասկանալի լեզվով հասանելի աջակցության ծառայությունների եւ իրավական միջոցների մասին բավարար եւ ժամանակին տեղեկություններ տրամադրելու համար¹⁴:

73. Դատախազն անհրաժեշտության դեպքում պետք է օգտագործի իրավական պաշտպանության բոլոր միջոցները ոստիկանության եւ այլ իրավապահ մարմինների անհիմն որոշումների դեմ, որոնք ընդունվել են ի վնաս տուժողների եւ վկաների:

5. Վերապատրաստումը

74. Մասնագիտական վերապատրաստումը, որն ընդհանուր առմամբ դատախազների իրավունքն ու պարտականությունն է, կարելի է սոցիալական, առողջական եւ հոգեբանական հնարավոր հետեւանքներ ունեցող այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հանցագործությունից տուժած անձանց եւ վկաների, ինչպես նաեւ քրեական վարույթներում ներգրավված խոցելի անձանց հետ հարաբերությունները: Վերապատրաստման ծրագրերը պետք է ներառեն ազգային, տարածաշրջանային եւ միջազգային մակարդակներով լավ գործելակերպի եւ գործառական մոդելների վերաբերյալ տեղեկությունների եւ փորձի փոխանակումը:

75. Տուժողների եւ վկաների իրավունքների պաշտպանությունը պետք է ճանաչվի որպես օրենքը պատշաճ իրականացնելու եւ դատաքննությունների արդարությունն ապահովելու էական պայման: Հետեւաբար այս թեման պետք է ներառվի դատախազների վերապատրաստման ծրագրերում ինչպես սկզբնական, այնպես էլ ծառայողական վերապատրաստման ժամանակ, որպեսզի այն դառնա նրանց մասնագիտական գիտելիքների եւ գործելակերպի կարելի բաղադրիչ:

76. Հանցագործությունների որոշ տեսակներ առանձնահատուկ մարտահրավերներ են տուժողների/վկաների համար: Օրինակ՝ կազմակերպված հանցավորության, ահաբեկչության կամ կիբեռնահանցագործության դեպքերում վկաները կարող են մոտալուստ վտանգի սպառնալիք զգալ սեռական կամ ընտանեկան բռնության կամ հետապնդման դեպքերում խոցելի տուժողները/վկաները որոշակի սահմանափակումների են ենթարկվում համացանցի միջոցով կատարված հանցագործությունների դեպքում տուժողը կարող է իրեն անօգնական զգալ՝ ագրեսիայի, անձնական տվյալների գողության դեպքերին եւ այլնի դիմակայելու համար:

77. Այս մարտահրավերներից յուրաքանչյուրին առավել կարող են դիմակայել այն դատախազները, որոնք քաջատեղյակ են ներգրավված անձանց վրա հնարավոր հոգեբանական հետեւանքների եւ խոցելի անձանց հետ վարվելու համապատասխան մեթոդների մասին: Հետեւաբար խորհուրդ է տրվում անցնել մասնագիտացված վերապատրաստում՝ ներգրավելով ոչ միայն քննիչների եւ իրավական ոլորտի այլ մասնագետների, այլ նաեւ համապատասխան տարբեր կարգապահական հաստատությունների եւ ՀԿ-ների փորձագետների:

78. Վերապատրաստման ծրագրերը պետք է ուղղված լինեն տարբեր տուժողների/վկաների նկատմամբ համապատասխան մոտեցմանը, նրանց հանդեպ հարգանքին եւ պաշտպանությանը, ինչպես նաեւ քրեական վարույթների ընթացքում նրանց իրավունքների իրականացման արդյունավետությանը: Պետք է ուշադրություն դարձնել քննության եւ հարցաքննության համապատասխան մեթոդների կիրառմանը՝ ճշմարիտ եւ համապարփակ ցուցմունքներ ստանալու համար՝ միաժամանակ խուսափելով ներգրավված անձի վրա որեւէ բացասական ազդեցությունից:

79. Հմուտ եւ վերապատրաստված դատախազները կարող են նպաստել դատախազության անձնակազմի, ոստիկանության եւ այլ իրավապահ մարմինների վերապատրաստմանը, որպեսզի ընդհանուր առմամբ միեւնույն մասնագիտական գիտելիքները եւ գործելակերպը ներթափանցեն իրավապահ համակարգի ոլորտ, որտեղ եւ կկիրառվեն միեւնույն համապատասխան գործառական գործիքները:

¹³ Այս մոտեցումը նաեւ Քրեական գործերով վերականգնողական արդարադատության ծրագրերի կիրառման վերաբերյալ (2002 թ.) ՄԱԿ-ի հիմնական սկզբունքների եւ Քրեական գործերով միջնորդության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի թիվ R (99)19 առաջարկության պահանջն է:

¹⁴ Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (2011թ.):

6. Միջազգային համագործակցությունը

80. Հասարակական կյանքի տարբեր ասպեկտների համատարած միջազգայնացմամբ պայմանավորված՝ հանցավորության դեմ պայքարի միջազգային համագործակցությունը, այդ թվում՝ դատական և ոստիկանական համագործակցությունը, ինչպես նաև տեխնիկական աջակցությունը զնալով ավելի կարելու են դառնում քրեական վարույթների ընթացքում տուժողների/վկաների իրավունքների պաշտպանության համար, մասնավորապես՝ ահաբեկչության և անդրազգային հանցավորության, օրինակ՝ մարդկանց և մարդու օրգանների թրաֆիքինգի, երեխաների սեռական շահագործման և սեռական բռնության և կիբեռնահանցագործության դեպքերում:

81. Դատախազների դերը հանցավորության դեմ պայքարում միջազգային համագործակցության մեջ և հետեւաբար վկաների և տուժողների իրավունքների պաշտպանության գործում մեծ նշանակություն ունի, հատկապես՝ փորձի և տեղեկատվության ֆորմալ և ոչ ֆորմալ փոխանակման հարցում, ինչպես ըստ պահանջի, այնպես էլ սեփական ցանկությամբ (օրինակ՝ մատնահետքերը և ԴՆԹ տվյալները փոխանակելը), հանձնումը¹⁵, փոխադարձ իրավական օգնությունը¹⁶, քրեական գործերով վարույթների փոխանցումը¹⁷, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների առգրավումը, բռնագրավումը և արտասահմանից հետվերադարձը¹⁸: Այսպիսի համագործակցության համար գոյություն ունեցող իրավական հիմքերը թարմացնելու և ընդլայնելու ջանքերը պետք է շարունակվեն Եվրոպայի բոլոր դատախազական ծառայությունների ակտիվ մասնակցությամբ:

82. Օտարերկրյա ակտիվների բռնագրավման և դրանց հետվերադարձի հարցերով միջազգային համագործակցությունը տուժողների համար առաջնային նշանակություն ունի: ԵՂԳԽՆ-ն հետեւաբար խրախուսում է անդամ պետություններին միջազգային համագործակցության շրջանակներում մշակել և ընդլայնել բռնագրավված ակտիվների հետվերադարձի համար ընդհանուր իրավական հիմքեր¹⁹:

83. Դատախազները պետք է ծանոթ լինեն և օգտագործեն համապատասխան միջազգային փաստաթղթերը տուժողների և վկաների պաշտպանության համատեքստում, մասնավորապես՝ Բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին Եվրոպական կոնվենցիան (ԵԽՊԸ թիվ 116, 1983թ.), և Եվրոպայի խորհրդի՝ քրեական իրավունքին առնչվող վերջին կոնվենցիաները²⁰, որոնցով նախատեսվում են տուժողների և վկաների և նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանության հետ կապված դրույթներ²¹:

84. Դատախազները միջազգային համագործակցության մեջ պետք է առավելագույն օգտագործեն նաև նոր տեխնոլոգիաներ, որպեսզի ապահովեն տուժողների և վկաների օրինական իրավունքները (օրինակ՝ առանց տեղափոխվելու արտասահմանից ցուցմունքներ տալու հնարավորությունը, մասնավորապես՝ տեսակոնֆերանսի միջոցով, և արտասահմանում էլեկտրոնային եղանակով ապացույցներ վերցնելու հնարավորությունը):

85. Դատախազները պետք է արդյունավետ կերպով օգուտ քաղեն գոյություն ունեցող միջազգային համագործակցության մարմիններից և աջակցեն դրանց, ինչպիսիք են Եվրաջասթը և

¹⁵ Տե՛ս նախեւառաջ Հանձնման մասին Եվրոպական կոնվենցիան (1957, ԵՊԸ թիվ 24) և դրան կից 4 լրացուցիչ արձանագրությունները (1975թ. ԵՊԸ թիվ 086, 1978թ. ԵՊԸ թիվ 098, 2010թ. ԵԽՊԸ թիվ 209, 212, ԵԽՊԸ թիվ 212):

¹⁶ Տե՛ս նախեւառաջ Զրեական գործերով փոխադարձ օգնության մասին Եվրոպական կոնվենցիան (1959թ., ԵՊԸ թիվ 30) և դրան կից լրացուցիչ 2 արձանագրությունները (1978թ., ԵՊԸ թիվ 099, 2001 թ. ԵՊԸ թիվ 182):

¹⁷ Տե՛ս Զրեական գործերով վարույթների փոխանցման մասին Եվրոպական կոնվենցիան (1972 թ., ԵՊԸ թիվ 073):

¹⁸ Տե՛ս, օրինակ, Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների վճարման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին կոնվենցիան (1990թ., ԵՊԸ թիվ 141) և Եվրոպայի խորհրդի Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների վճարման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիան (2005թ. ԵԽՊԸ թիվ 198):

¹⁹ Որպես վերջին համակարգում արված նորամուծություն՝ Եվրոպայի խորհրդի Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների վճարման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիան Կողմերի համար սահմանում է պարտավորություն՝ առաջնայնության կարգով քննարկելու բռնագրավված գույքը հարցում ներկայացնող Կողմին վերադարձնելու հարցը, որքանով դա թույլատրվում է ներպետական օրենսդրությամբ, և եթե պահանջվում է, ապահովել, որ տուժողները փոխհատուցում ստանան, կամ բռնագրավված գույքը վերադարձվի նրանց օրինական սեփականատերերին (25-րդ հոդված, 2-րդ պարբերություն):

²⁰ Սույն կոնվենցիան ուժի մեջ է մտել 1988 թվականի փետրվարի 1-ին և մինչ օրս 26 պետություն դա վավերացրել է և միացել դրան, 8 պետություն ստորագրել է, սակայն չի վավերացրել այն, և դա փոխհատուցման մասով տուժողների իրավունքի պաշտպանությանը վերաբերող առաջին միջազգային պայմանագիրն է, որը կնքվել է Եվրոպայի խորհրդի շրջանակներում:

²¹ Տե՛ս, օրինակ, Եվրոպայի խորհրդի Ահաբեկչության կանխարգելման մասին կոնվենցիան (2005թ., ԵԽՊԸ թիվ 196), 13-րդ հոդված, Եվրոպայի խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների մասին կոնվենցիան (2005թ., ԵԽՊԸ թիվ 197), Գլուխ III, Եվրոպայի խորհրդի Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին կոնվենցիան (2007 թ., ԵԽՊԸ թիվ 201), Գլուխ IV, Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին կոնվենցիան (2011թ., ԵԽՊԸ թիվ 210), Գլուխ IV, Եվրոպայի խորհրդի Բժշկական նշանակության արտադրանքի կեղծման և հանրային առողջության համար վտանգ ներկայացնող նմանատիպ հանցագործությունների մասին կոնվենցիան (2011 թ., ԵԽՊԸ թիվ 211), Գլուխ IV, Եվրոպայի խորհրդի Մարզական մրցումների մեքենայությունների մասին կոնվենցիայի (2014 թ., ԵԽՊԸ թիվ 215) 21-րդ հոդվածը, Եվրոպայի խորհրդի Մարդու օրգանների թրաֆիքինգի դեմ պայքարի մասին կոնվենցիան (2015թ., թիվ 216), Գլուխ IV:

դատական ցանցերը (օրինակ՝ Եվրոպական դատական ցանցը): Լայնորեն պետք է կիրառվեն նաև համագործակցության այնպիսի ժամանակակից գործիքներ, ինչպիսիք են վերահսկվող տեղափոխումը, գաղտնի քննությունը եւ համատեղ քննչական թիմերը:

86. Հաշվի առնելով Անդրազգային կազմակերպված հանցավորության սպիտակ փաստաթուղթը (2014), մասնավորապես՝ վերջինիս՝ միջազգային դատական համագործակցության ամրապնդմանը եւ վկաների պաշտպանությանն առնչվող դրույթները, ԵՂԳԽՆ-ն շահագրգռված է անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի՝ Եվրոպայի խորհրդի գործողությունների ծրագրով (2016-2020) նախատեսված միջոցառումների իրականացմամբ²², որը ներառում է, ի թիվս այլնի, համապատասխան բյուջեների բաշխմամբ վկաների պաշտպանության միջազգային ծրագրերի համակարգում, պաշտպանված վկաների իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ ուղեցույցների մշակում, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի համապատասխան փաստաթղթերի ու հրատարակությունների թարմացում²³:

87. Վկաների պաշտպանության դեպքերում միջազգային համագործակցությունը պետք է ավելի զարգանա՝ միաժամանակ հաշվի առնելով այդ տիրույթում ազգային եւ միջազգային լավ գործելակերպերը²⁴:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Դատախազներն իրենց պարտականությունները պետք է կատարեն առավելագույն որակով եւ արդյունավետությամբ՝ քրեական վարույթների տարբեր փուլերում, այդ թվում՝ դատական վճիռների կատարման ժամանակ տուժողների եւ վկաների իրավունքները պաշտպանելու նպատակով:

2. Քրեական արդարադատության համակարգերը պետք է ներառեն տուժողների եւ վկաների իրավունքների եւ պաշտպանության միջոցների ընդգրկուն մի շարք, որոնք պետք է հարգեն քրեական գործընթացի բոլոր մասնակիցները: Մասնավորապես, երբ նրանք խոցելի են, տուժողները եւ վկաները պետք է ստանան համապատասխան օգնություն, խորհրդատվություն եւ աջակցություն:

3. Տուժողները եւ վկաները պետք է արդար եւ արժանապատիվ վերաբերմունք ստանան դատախազական ծառայությունների կողմից եւ պետք է տեղեկացված լինեն իրենց բոլոր իրավունքների, այդ թվում՝ ներկայացուցչության եւ մասնակցության մասին, իսկ նրանց կարիքներին պետք է արձագանքել անհապաղ (ապահովելով պաշտպանության միջոցներ, վնասների փոխհատուցում եւ այլն):

4. Վարույթների բոլոր փուլերում դատախազները պետք է ձգտեն պաշտպանել տուժողների եւ վկաների արժանապատվությունը, անձնական եւ ընտանեկան կյանքը, անձնական անվտանգությունը եւ ապահովել նրանց դատավարական իրավունքները, այդ թվում՝ դատավարության ընթացքի մասին տեղեկություններ ստանալու իրավունքը եւ անհրաժեշտության դեպքում՝ իրավաբանական օգնություն եւ փոխհատուցում ստանալու տուժողների իրավունքը:

5. Դատախազները, ոստիկանությունը եւ իրավապահ այլ մարմիններ պետք է կարողանան կիրառել հատուկ պաշտպանության միջոցներ՝ ելնելով քրեական գործի հանգամանքներից եւ տուժողների/վկաների կամ նրանց ընտանիքի անդամների կյանքին, առողջությանը եւ գույքին սպառնացող վտանգի չափից:

6. Դատախազները պետք է ունենան հատկապես զգայուն այնպիսի գործերի հետ կապված հետապնդում իրականացնելու համար անհրաժեշտ հմտություններ, ինչպիսիք են ահաբեկչությունը, մարդկանց թրաֆիքինգը, ընտանեկան բռնությունը եւ սեռական ոտնձգությունը, եւ պետք է համագործակցեն բոլոր համապատասխան դերակատարների հետ՝ պետական կամ մասնավոր՝ նման դեպքերն ավելի արդյունավետ քննելու եւ երկրորդային վիկտիմիզացիայից խուսափելու համար: Այդ կապակցությամբ անհրաժեշտության դեպքում կարող են ստեղծվել հատուկ վերապատրաստում անցած դատախազական ստորաբաժանումներ:

7. Տուժողներին եւ վկաներին համապատասխան պաշտպանություն եւ աջակցություն տրամադրելու համար դատախազներին պետք է հասանելի լինեն բավարար նյութական, մարդկային եւ ֆինանսական ռեսուրսներ: Տուժողները եւս պետք է տեղեկացված լինեն տարածաշրջանային եւ միջազգային մակարդակով անհատական/կոլեկտիվ բողոքների մեխանիզմների եւ դրանց հասանելիության մասին:

8. Տուժողները պետք է տեղեկացված լինեն արդարադատության հասանելիության հնարավոր տարբերակների մասին, ինչպիսիք են միջնորդությունը, հաշտարարությունը կամ վերականգնողական արդարադատությունը:

²² ԵՂԳԽՆ (2015) 17 վերջնական փաստաթուղթ, 2016 թվականի մարտի 2:

²³ Մասնավորապես «Վկաների եւ արդարադատությանն օգնող անձանց պաշտպանության մասին» Rec(2005)9 առաջարկությունը, Ծանր հանցագործությունների վկաների պաշտպանություն, իրավապահ մարմինների եւ դատական իշխանության վերապատրաստումների համար նախատեսված ձեռնարկ (2006), Ահաբեկչություն, Վկաների եւ արդարադատությանն օգնող անձանց պաշտպանություն (2006):

²⁴ Տե՛ս, օրինակ, ՄԱԿ ԹՀԳԳ-ի Վկաների պաշտպանության օրինակելի օրենքը (2000) եւ Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում 2006 թվականի նոյեմբերի 28-ին ստորագրված եւ 2009 թվականի ապրիլի 13-ին ուժի մեջ մտած «Քրեական գործերով վարույթի մասնակիցների պաշտպանության մասին» համաձայնագիրը:

9. Տուժողների եւ վկաների իրավունքների պաշտպանությունը, հատկապես երբ նրանք խոցելի են, ինչպես նաեւ տարբեր տուժողների/վկաների նկատմամբ համապատասխան մոտեցումը պետք է դատախազների սկզբնական եւ ծառայողական վերապատրաստման ծրագրերի մաս կազմեն՝ նրանց մասնագիտական գիտելիքների եւ գործելակերպի կարեւոր բաղադրիչ դառնալու համար:

10. Տուժողների եւ արդարադատության շահերից ելնելով՝ դատախազները պետք է օգուտ քաղեն միջազգային համագործակցության մարմիններից եւ աջակցեն դրանց, ինչպես նաեւ խթանեն միջազգային համագործակցության առկա եւ նոր գործիքների զարգացումը: Այս առումով առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների բռնագանձմանը եւ բռնագրավված ակտիվների հետվերադարձին:

Կարծիք թիվ 13 (2018)

Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի՝
ուղղված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին

Դատախազների անկախությունը, հաշվետվողականությունը և էթիկան

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐԾԻՔԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿԸ

1. Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԳԽՆ) ստեղծվել է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 2005 թվականին՝ Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված՝ «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» [Rec\(2000\)19](#) առաջարկության իրականացման հետ կապված հարցերի վերաբերյալ կարծիքներ ձեռնարկելու առաջադրանքով:

2. Այդ շրջանակներում Նախարարների կոմիտեի կողմից ընդունված որոշումից հետո¹ ԵԴԳԽՆ-ն որոշեց պատրաստել եւ 2018 թվականին ընդունել դատախազների անկախության, հաշվետվողականության եւ էթիկայի վերաբերյալ կարծիք:

3. Այդ նպատակով, նկատի ունենալով, որ միջազգային բազմաթիվ փաստաթղթեր արդեն իսկ նվիրված են դատախազների անկախությանը, ԵԴԳԽՆ-ն մասնավորապես հիմնվում է Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽՆ) հետ համատեղ ընդունված՝ Ժողովրդավարական հասարակությունում դատավորների եւ դատախազների միջեւ հարաբերությունների վերաբերյալ (Բորդոյի հռչակագիր) իր թիվ 4 (2009) կարծիքի վրա եւ հիշեցնում է, որ դատախազության անկախությունը դատական համակարգի անկախության անքակտելի հետեւանքն է: ԵԴԳԽՆ-ն վկայակոչում է նաեւ Դատախազներին առնչվող Եվրոպական նորմերի ու սկզբունքներ վերաբերյալ (Հռոմի կանոնադրություն) իր թիվ 9 (2014) կարծիքը, որում նշվում է, որ դատախազական ծառայությունների անկախությունն ու արդյունավետ ինքնավարությունը բարձրացնելու ընդհանուր միտումը պետք է խրախուսվի, որոշումներ կայացնելիս դատախազները պետք է լինեն ինքնուրույն եւ կատարեն իրենց պարտականությունները՝ զերծ արտաքին ճնշումից կամ միջամտությունից:

4. Այս կարծիքում ԵԴԳԽՆ-ն անդրադառնում է դատախազների անկախությանը հնարավոր միջամտություններին եւ ճնշումներին, մասնավորապես՝ նրանց վրա գործադրվող քաղաքական ճնշումներին, ինչպես այդ երեւոյթը նկատվել է որոշ անդամ պետություններում: Անկախության, հաշվետվողականության եւ էթիկայի հետ կապված խնդիրների վերաբերյալ հստակ պատկերացում կազմելով՝ ԵԴԳԽՆ-ն ձգտում է բարձրացնել դատախազների եւ համապատասխան մարմինների իրազեկությունն այդ ոլորտներում տեղի ունեցող զարգացումների եւ բարեփոխումների վերաբերյալ:

5. ԵԴԳԽՆ-ն նաեւ հաշվի է առնում Եվրոպայի խորհրդի՝ անդամ պետություններում դատական համակարգի անկախության եւ անկողմնակալության ամրապնդմանն ուղղված գործողությունների ծրագիրը², ինչպես նաեւ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի 2016 թվականի՝ «Ժողովրդավարությունը, մարդու իրավունքները եւ օրենքի գերակայությունը որպես Եվրոպայի անվտանգության հիմնայական» զեկույցը³:

6. Այստեղ, ինչպես եւ իր նախորդ աշխատանքների ընթացքում, ԵԴԳԽՆ-ն հիշեցնում է, որ դատախազների գործառույթները եւ դրանց իրականացման եղանակը պետք է համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) 6-րդ հոդվածով սահմանված՝ անհատների արդար դատաքննության իրավունքի պահպանությանը: Դատախազներն իրենց գործառույթներն իրականացնում են նաեւ օրենքի գերակայության սկզբունքի շրջանակում, որը պահանջում է հարգել մի շարք այնպիսի հիմնարար արժեքներ, ինչպիսիք են անկողմնակալությունը, թափանցիկությունը, ազնվությունը, շրջահայացությունը, արդարությունը, եւ նպաստել արդարադատության որակին: Արդարադատության համակարգի նկատմամբ հանրության վստահությունը բարձրացնելու համար դատախազները միշտ պետք է հոգ տանեն, որ այդ արժեքները հարգվեն, եւ որ դատախազներն իրենց գործունեությունն իրականացնելիս ուղղորդվեն այդ արժեքներով:

7. Վերջին տարիներին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԿ) մշակել է դատախազների անկախությանն աջակցելու կարեւոր նախադեպային իրավունք՝ անկախ այն հանգամանքից՝ նրանք համարվում են դատական մարմին, թե՛ ոչ: Քրեական վարույթի առաջին փուլը դեկավարող եւ վերահսկող դատախազը պետք է համարվի «մարդու իրավունքների առաջադեմ պաշտպան», եւ այդ էական դերը պետք է կատարվի գործընթացի ամբողջ ընթացքում⁴:

8. Անդամ պետությունները, եթե մտադրություն ունեն դատախազների համար Մարդու

¹ Նախարարների տեղակալների 1300-րդ նիստ, 2017 թվականի նոյեմբերի 21-23:

² Պատրաստվել է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի նախաձեռնությամբ եւ ընդունվել է 2016 թվականի ապրիլի 13-ին Նախարարների տեղակալների 1253-րդ նիստում:

³ Ներկայացվել է 2016 թվականի մայիսի 18-ին՝ Նախարարների կոմիտեի 126-րդ նիստի ժամանակ (Սոֆիա):

⁴ Տե՛ս Դատախազների կարգավիճակի եւ գործունեության վերաբերյալ ՄԻԵԿ-ի նախադեպային իրավունքի ընտրությունը սույն կարծիքի հավելվածում:

իրավունքների եվրոպական կոնվենցիայի իմաստով դատական իշխանության կարգավիճակ վերապահելու կամ այն պահպանելու, պետք է իրենց վարչական եւ աստիճանակարգային համակարգերում ապահովեն, որ դատախազներն ունենան բոլոր երաշխիքները, մասնավորապես՝ անկախության համար պահանջվող երաշխիքները, որոնք կցված են այդ կարգավիճակին, ինչպես նշված է ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքում⁵:

9. Պետությունից պետություն դատախազներին վերապահված խնդիրները տարբերվում են՝ ըստ գործող համակարգի: Այսպիսով, որոշ անդամ պետությունների իրավական համակարգերում քրեական հետապնդման համար հիմք է ծառայում «օրինականության» սկզբունքը, որոշ այլ անդամ պետություններում այդպիսի հիմք է համարվում «հայեցողության» կամ «հնարավորության» սկզբունքը. այլ պետություններում քրեական հետապնդման համար հիմք է համարվում այս սկզբունքների համակցությունը: Որոշ անդամ պետություններ դատախազներին վերապահում են ոստիկանության եւ քննիչների նկատմամբ իրական վերահսկողության դերը, իսկ մյուսները՝ ոչ. որոշ համակարգերում դատախազները միջամտում են լուսմներին, իսկ այլ համակարգերում նրանց դերը քրեական դատավարության մեջ մտնում է սահմանափակ: Շատ անդամ պետություններում դատախազներն ունեն հանրային գործողություններ եւ քրեական հետապնդում իրականացնելու եւ քննության օրինականությունը վերահսկելու իրավասություն, որոնք ներկայացվելու են դատավորներին՝ որպես հիմք նրանց որոշումների կայացման համար: Նրանք երբեմն նաեւ պատիժները կատարելու եւ բանտերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասություն ունեն:

10. ԵԴԳԽՄ-ի սույն կարծիքում եւ նախորդ կարծիքներում շարադրված անկախության, օբյեկտիվության եւ անաչառության սկզբունքները, որոնք վերաբերում են քրեական գործերին, *mutatis mutandis* կիրառվում են դատախազների՝ ոչ քրեական հարցերով իրավասությունների նկատմամբ:

11. Ի վերջո, ԵԴԳԽՄ-ն ցանկանում է վկայակոչել, առանց դրանց բովանդակությունը կրկնելու, այս ոլորտում որոշ վերաբերելի միջազգային փաստաթղթեր, ինչպիսիք են Եվրոպայի խորհրդի (մասնավորապես՝ ԵԴԳԽՄ-ի եւ ԵԴԽՄ-ի կարծիքները եւ «Հանրային մեղադրողների էթիկայի եւ վարքագծի եվրոպական ուղեցույցը»⁶ Բուդապեշտի ուղեցույցը)⁶ եւ միջազգային այլ կազմակերպությունների փաստաթղթերը⁷:

12. Այս փաստաթղթերի լույսի ներքո եւ եվրոպական համատեքստում, երբ դատախազների կողմից իրենց խնդիրների իրականացման մեթոդները մշտապես փոփոխվում են, սույն կարծիքի նպատակը ոչ թե ֆիքսված եվրոպական օրենսգիրք ընդունելն է, այլ ավելի շուտ սկզբունքների որոշակի «կորիզ» ստեղծելը, որոնք պետք է տրամադրվեն համապատասխան մարմիններին եւ ուղղորդեն դատախազներին իրենց ամենօրյա գործողությունները կատարելիս եւ որոշակի վարքագիծ դրսևորելիս, ինչպես իրենց աշխատանքի շրջանակում, այնպես էլ այդ շրջանակից դուրս, եւ որոնց վրա նրանք կարող են հիմնվել:

13. Դատախազների անկախությունը, հաշվետվողականությունն ու էթիկան պետք է լինեն այնպիսի հասկացություններ, որոնք ներառված են ազգային իրավունքով կամ նույնիսկ անդամ պետությունների սահմանադրություններով նախատեսված՝ դատախազների վերաբերյալ օրենսդրության մեջ:

14. Հաշվի առնելով դատավորների եւ դատախազների առաքելությունների, ինչպես նաեւ նրանց կարգավիճակին եւ ծառայության պայմաններին ներկայացված պահանջների մոտ եւ փոխլրացնող բնույթը⁸ դատախազները պետք է ունենան դատավորների համար նախատեսված երաշխիքներին համանման երաշխիքներ:

II. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դատախազների անկախությունը

15. «Անկախություն» նշանակում է, որ դատախազներն իրենց պարտականություններն իրականացնելիս զերծ են ապօրինի միջամտությունից, որպեսզի ապահովվի օրենքի եւ օրենքի գերակայության սկզբունքի նկատմամբ լիակատար հարգանքը եւ կիրառումը, եւ որ նրանք ենթակա չեն որեւէ քաղաքական ճնշման կամ որեւէ տեսակի ապօրինի ազդեցության:

16. Անկախությունը վերաբերում է եւ դատախազությանը, որպես ամբողջություն, նրա կոնկրետ

⁵ Տե՛ս Դատախազների կարգավիճակի եւ գործունեության վերաբերյալ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի ընտրությունը սույն կարծիքի հավելվածում:

⁶ Ընդունվել է 2005 թվականի մայիսի 31-ին Եվրոպայի գլխավոր դատախազների համաժողովի ժամանակ: Տե՛ս նաեւ Վենետիկի հանձնաժողովի փաստաթղթերը (մասնավորապես՝ «Դատական համակարգի անկախության եվրոպական չափանիշների վերաբերյալ գեկույց. Մաս II. Դատախազությունը»՝ ընդունված 2010 թվականի դեկտեմբերին, CDL-AD(2010)040):

⁷ Տե՛ս, օրինակ, Դատական խորհուրդների եվրոպական ցանցի (ԴԽԵՑ) (մասնավորապես՝ «Դատախազների անկախությունն ու հաշվետվողականությունը» վերառառությամբ 2014-2016 թվականների գեկույցը), Միավորված ազգերի կազմակերպության (մասնավորապես՝ Դատախազների դերի վերաբերյալ ուղեցույցները (1990)), Կոռուպցիայի դեմ 2003 թվականի կոնվենցիան), Դատախազների միջազգային ասոցիացիայի (մասնավորապես՝ 1999 թվականի՝ Դատախազների մասնագիտական պատասխանատվության չափանիշները եւ հիմնական պարտականություններն ու իրավունքները) գործիքներն ու փաստաթղթերը, ինչպես նաեւ «Դատախազների կարգավիճակի եւ դերի մասին» փաստաթուղթը, որը ՄԱԿ-ի թմրամիջոցների եւ հանցավորության դեմ պայքարի գրասենյակի եւ Դատախազների միջազգային ասոցիացիայի կողմից 2014 թվականին համատեղ ընդունված ուղեցույց է:

⁸ Տե՛ս ԵԴԳԽՄ-ի թիվ 9 (2014) կարծիքը, Հռոմի կանոնադրության Բացատրական ծանոթագրություն, պարբերություն 53:

մարմին, եւ առանձին դատախազներին՝ ստորեւ բացատրված իմաստով:

17. Դատախազները պետք է արտահայտվելու եւ միավորումներ կազմելու իրենց ազատությունն իրացնեն այնպես, որպեսզի համատեղելի լինի իրենց պաշտոնի հետ եւ չազդի դատական եւ դատախազական անկախության կամ անաչառության վրա կամ չքվա, որ ազդում է վերջիններիս վրա: Թեւեւ նրանք ազատ են մասնակցելու իրավական թեմաներին, դատական համակարգին կամ արդարադատության իրականացմանն առնչվող հարցերի վերաբերյալ հանրային քննարկումներին, նրանք չպետք է մեկնաբանեն քննության փուլում գտնվող գործերը եւ պետք է խուսափեն այնպիսի տեսակետներ արտահայտելուց, որոնք կարող են խաթարել դատարանի վարկանիշն ու ազնվությունը: Դատախազները պետք է զերծ մնան անաչառության սկզբունքի հետ անհամատեղելի քաղաքական գործունեությունից⁹:

18. Դատախազները պետք է ազատ լինեն մասնագիտական ասոցիացիաներ ստեղծելու եւ այդպիսի ասոցիացիաների միանալու հարցում՝ ներկայացնելու համար իրենց շահերը, պաշտպանելու իրենց կարգավիճակն ու նպաստելու իրենց մասնագիտական վերապատրաստմանը:

Դատախազների հաշվետվողականությունը

19. Լինել «հաշվետու» մասնավորապես նշանակում է՝

- չգործել կամայականորեն.
- որոշումներ կայացնելիս հիմք ընդունել օրենքը.
- հիմնավորել որոշումները՝ անկախ այն հանգամանքից՝ դրանք հիմնված են օրինականության, թե՛ հնարավորության (հայեցողության) սկզբունքի վրա.
- անհրաժեշտության դեպքում համապատասխան շահառուներին տրամադրել հաշվետվություններ:

Դատախազների էթիկան

20. «Էթիկա» նշանակում է դատախազական ծառայության համար աշխատող կամ նրա անունից գործող բոլոր դատախազներից ինչպես իրենց աշխատանքում, այնպես էլ աշխատանքային շրջանակից դուրս անկախվող վարքագծի եւ գործելակերպի չափանիշները սահմանող բոլոր ուղեւիշները:

21. Էթիկայի կանոնները հարգելն այն հիմնարար պարտականությունն է, որով դատախազները պետք է առաջնորդվեն իրենց գործունեության ժամանակ: Կարելի է դատախազների էթիկական սկզբունքներ պարունակող այնպիսի ժողովածուների վրա հիմնվել կարողանալը, որոնցով պետք է կարգավորվի նրանց վարքագիծը:

22. Դատախազների վարքագիծը, ինչպես դատավորների վարքագիծը, չի կարելի թողնել զուտ նրանց հայեցողությանը՝ լինի դա նրանց աշխատանքի շրջանակներում, թե աշխատանքային շրջանակից դուրս: Սա հատկապես կարելի է դատախազների գործունեությունը գնահատելիս եւ նրանց նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ժամանակ:

III. ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ

23. Դատախազի առաքելությունը խստապահանջ է եւ բարդ. այն պահանջում է պրոֆեսիոնալիզմ, կուռ բնավորություն, համարձակություն, հավասարակշռություն եւ վճռականություն: Այս հատկանիշներին տիրապետելը պետք է որոշիչ չափանիշ լինի դատախազների հավաքագրման եւ նրանց կարիերայի ընթացքում: Իրավաբանական կրթության, թեկնածուների ընտրության եւ վերապատրաստման գործընթացներում պետք է արվի հնարավոր ամեն բան այդպիսի չափանիշների պահպանումն ապահովելու համար: Այնուամենայնիվ, անձին ներկայացվող այս պահանջները բավարար չեն դատախազների անկախությունն ապահովելու համար: Դատախազների կարգավիճակն ու անկախությունը պետք է հստակորեն սահմանվեն եւ երաշխավորվեն օրենքով:

24. Այս առումով հատկապես ցանկալի է, որ զենդերային հավասարակշռության պահպանումն ապահովելիս դատախազների նշանակման, տեղափոխման, առաջխաղացման եւ կարգապահության գործընթացը հստակ ձեւակերպվի գրավոր եւ հնարավորինս մոտ լինի դատավորների տեղափոխման, առաջխաղացման եւ կարգապահության գործընթացին, մասնավորապես այն անդամ պետություններում, որոնք պաշտպանում են դատական մարմինների միասնականության սկզբունքը, եւ որոնք կապեր են ստեղծել դատավորների եւ դատախազների գործառույթների միջեւ իրենց կարիերայի ընթացքում: Այդպիսի դեպքերում նախընտրելի է, որ դրույթները սահմանվեն օրենքով եւ կիրառվեն այնպիսի անկախ մասնագիտական մարմինների հսկողության ներքո (օրինակ՝ իրենց գործընկերների կողմից ընտրված դատավորների եւ դատախազների մեծամասնությունից կազմված), ինչպիսիք են Դատական խորհուրդները կամ դատախազների խորհուրդները, որոնք դատախազներին նշանակելու, նրանց առաջխաղացման եւ կարգապահության մասով իրավասություն ունեն: Դա հատկապես արդիական է այն դեպքում, երբ դատախազները պետք է ճանաչվեն որպես դատական մարմիններ ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի իմաստով, կամ նրանց պետք է տրվի անվիճարկելի դեր եւ լիազորություն անհատի իրավունքներին եւ ազատություններին վերաբերող հարցերում, մասնավորապես՝ նոր ոլորտներում, ինչպիսին է անձնական տվյալների պաշտպանությունը:

⁹ Տե՛ս ԵՂՂԽՆ-ի թիվ 9 (2014) կարծիքը, Հռոմի կանոնադրության Բացատրական ծանոթագրություն, պարբերություններ 81-82:

25. Որպես դատախազների անկախությունն ապահովելու միջոց, պետք է նաեւ ստեղծվեն դատախազների նկատմամբ քրեական հետապնդում կամ կարգապահական վարույթ հարուցելու հստակ մեխանիզմներ: Օրինակ՝ որոշ անդամ պետություններում կա օրենքով սահմանված հատուկ ընթացակարգ, որը հնարավորություն է տալիս վարույթ հարուցելու վարչական եւ (կամ) քրեական իրավախախտումների համար, որոնք ենթադրաբար կատարվել են դատախազների կողմից:

26. Այս դրույթները պետք է նաեւ ուղղված լինեն շահերի հնարավոր կամ իրական բախումների կանխարգելմանն ու այդ բախումների լուծմանը եւ դատախազներին հնարավորություն ընձեռեն ապահովելու օրենքի պատշաճ կիրառումը՝ առանց իրենց առաքելությանը հակասող ճնշումների կամ միջոցների ենթարկվելու:

27. Ավելի լայն իմաստով, դատախազների անկախությունը ենթադրում է, որ նրանք ունեն իրենց ինդիքների պատշաճ իրականացման համար անհրաժեշտ բավարար միջոցներ, ինչպես նաեւ իշխանություն, իրավասություն եւ լիազորություններ: Նրանց հետ մասնավորապես պետք է խորհրդակցել իրենց առաքելությունը կատարելու համար անհրաժեշտ ռեսուրսների վերաբերյալ որոշում կայացնելիս:

28. Անհրաժեշտ է կազմակերպել դատախազների համապատասխան վերապատրաստում նրանց ծառայության կառավարման եւ նրանց հատկացված ռեսուրսների կառավարման թեմայով, հակառակ դեպքում նրանց անկախությունը կարող է զգալիորեն սահմանափակվել:

29. Դատախազներին պետք է երաշխավորվեն դատավորների ապրուստի միջոցների հետ համեմատելի ապրուստի միջոցներ, այդ թվում՝ պատշաճ վարձատրություն, որով կապահովվի նրանց, ինչպես նաեւ նրանց ընտանիքի անդամների նյութական անկախությունն ու պաշտպանությունը: Այդպիսի պաշտպանությունը պետք է ներառի նրանց կյանքի, առողջության եւ ունեցվածքի, ինչպես նաեւ պատվի ու հեղինակության իրավական եւ ֆիզիկական պաշտպանությունը ցանկացած բռնությունից, հարձակումից կամ ճնշումից եւ համապատասխան պետական ապահովագրությունն նախատեսի:

30. Դատախազների իրավական կարգավիճակը, որի վրա հիմնված է նրանց գործունեությունը, շատ հաճախ հանրությանը հայտնի չէ եւ հետեւաբար սխալ է ընկալվում: Յետեւաբար նրանց դերի սխալ մեկնաբանությունից խուսափելու համար համապատասխան տեղեկությունները պետք է լինեն իրապարակայնորեն հասանելի: Դատախազությունը պետք է ներգրավվի այս գործընթացում:

Արտաքին անկախությունը եւ ներքին անկախությունը

31. Դատախազներն իրենց կարգավիճակով եւ վարքագծով պետք է լինեն անկախ՝

- նրանք պետք է օգտվեն արտաքին անկախությունից, այսինքն՝ այլ պետական կամ ոչ պետական մարմինների, ինչպես օրինակ՝ քաղաքական կուսակցությունների կողմից անհիմն կամ անօրինական միջամտությունից,
- նրանք պետք է օգտվեն ներքին անկախությունից եւ կարողանան ազատորեն իրականացնել իրենց գործառնություններն ու որոշում կայացնել, նույնիսկ եթե որոշակի գործողություններ կատարելու եղանակները տարբերվում են մի իրավական համակարգից մյուսը՝ ըստ աստիճանակարգության:

32. Որոշ իրավական ավանդույթներում հասարակության կարծիքով դատախազների հանրային գործողությունները կապված են քաղաքական իշխանության իրականացման հետ, հատկապես՝ կառավարության միջոցով: ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքով պահանջվում է, որ այս երկու մարմինների միջև փոխադարձ անկախություն լինի, քանի որ այդ անկախության բացակայությունը կխաթարի դատախազի միջամտության օրինականությունը՝ քրեական դատավարության նախապատրաստական փուլում եւ այդ դատավարության իրականացման ժամանակ, ինչպես նաեւ քրեական ոլորտից դուրս նրա իրավասության ոլորտներում¹⁰: Եվ իսկապես, դատախազը պետք է լինի օրենքի նկատմամբ հարգանքի երաշխավորն ու հասարակության պաշտպանը. նա չպետք է լինի որեւէ սոցիալական, քաղաքական եւ կրոնական խմբի, կառավարությունում որեւէ ֆրակցիայի շահերից գործող գործիք կամ նրա կողմնակիցների պաշտպան: Այս պահանջը շատ կարեւոր է հատկապես այն ժամանակ, երբ դատախազի միջամտությունը նպատակաուղղված է կազմակերպված հանցավորության կամ կոռուպցիայի դեմ պայքարին կամ ազդեցություն է ունենում անհատի իրավունքների ու ազատությունների, մասնավորապես՝ ազատությունից զրկելու վրա:

33. Դատախազների եւ դատախազական ծառայությունների կողմից ավելի մեծ անկախության ձգտելու ընդհանուր միտում կա, ինչը խրախուսվում է ԵԴԳԽՄ-ի կողմից, թեեւ այս առումով ընդհանուր ընդունված չափորոշիչներ դեռեւս չկան:

34. *Արտաքին անկախության* նկատմամբ հարգանքը չի խանգարում, որ դատախազական ծառայությունն ընդհանուր ցուցումներ ստանա դատախազական գործունեության առաջնահերթությունների վերաբերյալ, որոնք բխում են օրենքից, միջազգային համագործակցության զարգացումից կամ ծառայությունը կազմակերպելու համար սահմանված պահանջներից:

35. Այդպիսի ցուցումները միշտ պետք է տրվեն օրենքին համապատասխան, լիովին թափանցիկ եւ գրավոր ձևով, իսկ այն քննարկումները, որոնց դրանք կարող են հանգեցնել, երբեք չպետք է վնասեն դատախազի անձնական վիճակը, այդ թվում՝ նրա կարիերան:

36. Գործադիր իշխանության կողմից կոնկրետ գործերի վերաբերյալ ցուցումներն ընդհանուր առմամբ անցանկալի են: Այս համատեքստում, քրեական հետապնդում չիրականացնելու մասին ցուցումները պետք է արգելվեն, իսկ քրեական հետապնդում իրականացնելու մասին ցուցումները պետք

¹⁰ Տե՛ս Դատախազների կարգավիճակի եւ գործունեության վերաբերյալ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի ընտրությունը սույն կարծիքի հավելվածում:

Է խստորեն կարգավորվեն Rec(2000)19 առաջարկությանը համապատասխան¹¹:

37. Դատարանները պետք է հարգեն դատախազների անկախությունը: Դատախազի միջամտությունն ու վերաբերմունքը չպետք է նրա օբյեկտիվության եւ անաչառության մասով կասկածի տեղիք տաս: Ե՛վ դատավորները, ե՛ւ դատախազները պետք է օգտվեն իրենց գործառնությունների կատարման առնչությամբ անկախությունից, ինչպես նաեւ միմյանցից անկախ լինեն եւ այդպիսին դիտվեն:

38. Դատախազները պետք է հարգեն դատարանների եւ ընդհանուր առմամբ դատական համակարգի անկախությունը: Նրանք կարող են դատավորների որոշումները վիճարկել միայն օրենքով նախատեսված պաշտպանության միջոցների միջոցով: Դատախազներն իրենց իրավասության շրջանակներում պետք է ձեռնարկեն բոլոր միջոցները՝ դատարանների անկախությունը պաշտպանելու համար:

39. *Ներքին անկախությունը* չի նշանակում, որ յուրաքանչյուր դատախազ կարող է անել ինչ կամենա. նա կարող է ենթակա լինել իր վերադասին, որի խնդիրն է հստակ ձեռով եւ առանց անկախությունը վնասելու ապահովել դատախազական ծառայության պատշաճ գործունեությունը, որպես ամբողջություն, եւ արդարադատության իրականացման եւ մարդու իրավունքների պաշտպանության գործողություններում ապահովել համաձայնեցվածությունը, հետեւողականությունն ու միատեսակությունը:

40. Աստիճանակարգային կառուցվածքը դատախազական ծառայությունների մեծ մասի ընդհանուր կողմն է: Ներքին անկախությունը չի խոչընդոտում ծառայության աստիճանակարգային կազմակերպմանն ու օրենքի կիրառության վերաբերյալ ընդհանուր առաջարկություններ կամ ուղեցույցներ/հրահանգներ տալը՝ ապահովելու համար օրենքի եւ իրավական պրակտիկայի հետեւողականությունը կամ դատախազական գործողությունների առաջնահերթությունները: Սա հատկապես անհրաժեշտ է այն անդամ պետություններում, որտեղ գործում է «հնարավորության/հայեցողական սկզբունքը»: Դատախազական ծառայության բոլոր ներքին հրահանգները պետք է տրվեն գրավոր, լինեն թափանցիկ եւ ուղղված լինեն ճշմարտության բացահայտմանն ու արդարադատության պատշաճ իրականացման ապահովմանը:

41. Լիազորությունների, հաշվետվողականության եւ պատասխանատվության դրսեւորման տիրույթները պետք է լինեն թափանցիկ՝ հասարակության վստահությունը խթանելու համար:

42. Եթե դատախազն իր վերադասից ստանում է անհատական ցուցումներ, որոնք անօրինական են թվում կամ չեն համապատասխանում մասնագիտական էթիկայի կանոնագրքին, ապա նա չպետք է ստիպված լինի կատարելու դրանք եւ պետք է ունենա իր հիմնավորումներն իր վերադասին ներկայացնելու հնարավորություն:

43. Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի հստակ մեխանիզմներ, որոնք ստորադաս դատախազներին թույլ կտան բողոքարկել վերադաս դատախազի հանձնարարությունները կամ ցուցումները, եթե նրանք գտնեն, որ այդ հանձնարարությունները կամ ցուցումներն անօրինական են կամ չհիմնավորված:

44. Դատախազների որոշումները բողոքարկելու հնարավորությունը՝ լինի դա վերադաս դատախազին կամ դատարան, տուժողների կողմից ներկայացվելու դեպքում որեւէ կերպ չի հակասում նրանց անկախությանը, այլ նպաստում է նրանց հաշվետվողականության բարձրացմանը՝ պայմանով, որ այն պատշաճ քննարկման հնարավորություն է ընձեռում, եւ որ կողմերը տեղյակ են պահվում այդ մասին:

45. Դատախազների անկախությունը պահանջում է նաեւ նյութական անկախություն, որը նույն կերպ, ինչպես եւ դատավորների համար, ենթադրում է նրանց առաքելությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական եւ այլ միջոցներ.

- հաճախ պահանջվում է, որ դատախազները հերթապահություն իրականացնեն գիշերը եւ տոն օրերին. նրանց քանակը պետք է բավարար լինի, որպեսզի հնարավոր լինի հաղթահարել այս սահմանափակումները, եւ նրանք պետք է ստանան համապատասխան վարձատրություն՝ այդպիսի իրավիճակներում իրենց պարտականությունները կատարելուց չհուսահատվելու համար.
- նրանց պետք է տրամադրվեն ժամանակակից սարքավորումներ եւ պատշաճ ծառայություններ (բարդ արտադրական համակարգիչներ եւ ծրագրաշարեր, վիդեոկոնֆերանսի հնարավորություն ընձեռող համակարգեր, անհրաժեշտության դեպքում՝ թարգմանչական ծառայությունների հասանելիություն եւ այլն), որոնք հարմարեցված են նրանց ամենօրյա խնդիրներին եւ հնարավորություն են ընձեռում արդյունավետորեն շփվելու իրավապահների եւ դատարանների, իրավաբանների, կողմերի եւ միջազգային գործընկերների հետ՝ ավելի մեծ միջազգային

¹¹ Տե՛ս Rec(2000)19 առաջարկության 13(դ) պարբերությունը: «Այն դեպքում, երբ հանրային մեղադրանքի մարմինը կառավարության մաս է կազմում կամ ենթարկվում է նրան, անդամ պետությունները պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկեն երաշխավորելու համար, որ եթե կառավարությունն իրավասու է կոնկրետ գործով քրեական հետապնդման համար ցուցումներ տալու, ապա այդպիսի հրահանգները պետք է պարունակեն բավարար երաշխիքներ այն մասին, որ հարգվում են թափանցիկության եւ արդարության սկզբունքները՝ ազգային իրավունքին համապատասխան. դրա հետ մեկտեղ կառավարությունը պարտավոր է, օրինակ՝

- նախնական գրավոր խորհրդատվություն ստանալ կամ իրավասու դատախազից կամ հանրային քրեական հետապնդումն իրականացնող մարմնից.
- պատշաճ կերպով բացատրել իր գրավոր հրահանգները, հատկապես, երբ դրանք շեղվում են դատախազի խորհուրդներից, եւ դրանք փոխանցել աստիճանակարգային ուղիներով.
- հոգ տանել այն մասին, որ նախքան դատաքննությունը խորհուրդներն ու հրահանգները դառնան գործի նյութերի մի մաս, որպեսզի մյուս կողմերը կարողանան ծանոթանալ դրանց եւ մեկնաբանություններ անել»:

համագործակցության եւ դատարանների աշխարհագրական ռացիոնալացման (դատական քարտեզ) եւ դատական համակարգերի արդիականացման համատեքստում.

- Նրանք պետք է ստանան համապատասխան անձնակազմի աջակցություն, ինչպես նաեւ հասանելիություն համապատասխան իրավական տեղեկություններին (օրենսդրություն, նախադեպային իրավունք եւ այլն), պրոֆեսիոնալ փորձագետներին (բանկային, տնտեսագիտության, կիրառական գոյության, կենսաբանության եւ այլ ոլորտներում) եւ դատաբժշկական փորձաքննություններին (ԴԼԹ հետազոտություն, թմրամիջոցների հայտնաբերման համակարգեր եւ այլն):

IV. ԴԱՏԱԽԱՉՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

46. Հասարակության վստահությունը խթանելու համար դատախազները պետք է լինեն անկախ, բայց իրենց նաեւ հաշվետու զգալ: Այս պատասխանատվությունը պետք է իրականացվի՝ հարգելով մարդու իրավունքներն ու ազատությունները, այդ թվում՝ անմեղության կանխավարկածը եւ անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը: Հստակ հրապարակված եւ պարբերաբար թարմացվող՝ մասնագիտական էթիկայի եւ վարքագծի ուղեցույցներն ու կանոնադրերը կօգնեն խթանելու թափանցիկությունը, հետեւողականությունը, հաշվետվողականությունն ու արդարությունը:

47. Դատախազների պատասխանատվությունը կոչված չէ միջամտելու նրանց անկախությանը: Թեեւ դատախազներն անկախ են, սակայն նրանք հաշվետու են ազգային օրենքներով նախատեսված դեպքերում եւ կարգով:

- ըստ անհրաժեշտության նրանք պետք է զեկուցեն վերադասին, կողմերին եւ մասնավորապես՝ տուժողներին, դատական մարմիններին եւ պետական այլ պաշտոնյաների ու մարմինների, քաղաքացիական հասարակությանն ու լրատվամիջոցներին: Նրանք պետք է բացատրեն իրենց գործողությունները կամ պրոակտիվ կերպով տեղեկություններ տրամադրեն հանրությանը հատկապես այն գործերով, որոնք հանրային ուշադրություն եւ մտահոգություն են պահանջում. տեղեկությունը կարող է տրամադրվել տարեկան հաշվետվության ձեւով (ընդհանուր հանցավորության վերաբերյալ կամ իրենց իրավասության շրջանակներում հանցագործության որոշակի հայեցակետի վերաբերյալ), բաղկացած լինել ընթացակարգի կամ գնահատման մեջ ձախողման կամ սխալի պատճառների բացատրությունից կամ պարզապես վերաբերել քննության տվյալ փուլին կամ ընթացակարգին:

- հարկ եղած դեպքում նրանք ենթակա են օրենքի վրա հիմնված կարգապահական վարույթի՝ պարտականությունների լուրջ խախտման դեպքում (անփութություն, գաղտնիության պարտականության, հակակոռուպցիոն կանոնների խախտում եւ այլն)՝ պարզ եւ հստակ պատճառներով. վարույթը պետք է լինի թափանցիկ, վարույթում պետք է կիրառվեն սահմանված չափանիշները եւ անցկացվի գործադիր մարմնից անկախ մարմնով. շահագրգիռ դատախազները պետք է լսվեն, եւ նրանց պետք է թույլ տրվի պաշտպանվել իրենց խորհրդականների օգնությամբ, պաշտպանվել ցանկացած քաղաքական ազդեցությունից, եւ նրանք պետք է հնարավորություն ունենան օգտվելու դատարանում բողոքարկելու իրավունքից. ցանկացած պատճառից պետք է լինի նաեւ անհրաժեշտ, համարժեք եւ համաչափ կարգապահական իրավախախտմանը:

48. Զանի դեռ չի պարզվել, որ դատախազները կարգապահական իրավախախտում են թույլ տվել կամ անկախորեն չեն կատարել իրենց աշխատանքը պատշաճ կերպով, նրանք, ինչպես եւ դատավորները, չեն կարող անձնապես պատասխանատվություն կրել հանրային գործողությունների հետ կապված իրենց ընտրության համար, եթե դրանք անհատական մտավոր եւ իրավական վերլուծության արդյունք են:

49. Անդամ պետությունները պետք է փոխհատուցեն դատախազների մասնագիտական գործողություններից կամ անգործությունից բխող վնասը, եւ դատախազները չպետք է անձամբ պատասխանատվություն կրեն այդպիսի վնասի համար՝ բացառությամբ դիտավորյալ կերպով կատարված իրավախախտումների եւ (կամ) կոպիտ անփութության դեպքերի:

50. Դատախազները պետք է օգտվեն ոչ թե ընդհանուր անձեռնմխելիությունից, այլ գործառնությանի անձեռնմխելիությունից՝ իրենց պարտականությունների կատարման ընթացքում բարեխղճորեն կատարված գործողությունների համար¹²: Այնուամենայնիվ, դատախազը պետք է ազգային իրավունքին համապատասխան քրեական պատասխանատվություն կրի ցանկացած իրավախախտման համար, որը կատարվել է, այդ թվում՝ արդարադատության իրականացման ընթացքում:

V. ԴԱՏԱԽԱՉՆԵՐԻ ԷԹԻԿԱՆ

51. Օրենքի գերակայության նկատմամբ հարգանքը պահանջում է դատախազների վարքագծում, ինչպես եւ դատավորների վարքագծում, ամենաբարձր էթիկական եւ մասնագիտական չափանիշների պահպանում, ինչպես աշխատանքում, այնպես էլ աշխատանքից դուրս, ինչը նպաստում է արդարադատության նկատմամբ հասարակության վստահությանը: Դատախազները գործում են ժողովրդի անուկից եւ հանրության շահերից ելնելով: Ուստի նրանք պետք է միշտ պահպանեն անձնական

¹² Տե՛ս թիվ 9 (2014) կարծիքը, Հռոմի կանոնադրություն, X պարբերություն:

բարեվարքությունը եւ գործեն օրենքին համապատասխան՝ արդար, անաչառ եւ օբյեկտիվ ձեւով՝ հարգելով եւ պաշտպանելով հիմնարար իրավունքներն ու ազատությունները, այդ թվում՝ անմեղության կանխավարկածը, արդար դատաքննության իրավունքը եւ կողմերի հավասարության, լիազորությունների տարանջատման սկզբունքներն ու դատական որոշումների պարտադիր ուժը: Նրանք պարտավոր են զերծ մնալ քաղաքական կամ այլ ազդեցությունից:

52. Նախընտրելի է, որ դատախազների էթիկայի կանոնները սահմանվեն օրենքով եւ էթիկայի կանոնագրքի ձեւ ստանան, որը պատրաստված եւ հրապարակված կլինի օրենքով նախատեսված ազգային եւ (կամ) կարգապահական այնպիսի մարմինների կողմից, ինչպիսիք են Դատական խորհուրդները կամ դատախազների խորհուրդները: Էթիկայի այդպիսի ազգային կանոնագիրք մշակելիս պետք է հաշվի առնվեն համապատասխան միջազգային փաստաթղթերը: Այսուհետ, որպես հղում, կարելի է գտնել դատախազների գործունեությանն առնչվող ամենաարդիական էթիկական կանոններից մի քանիսը:

53. Դատախազներն ունեն չեզոքության պարտավորություն եւ պետք է գործեն իրենց անձնական նախասիրություններից, սոցիալական ծագումից, հարաբերություններից, քաղաքական, փիլիսոփայական կամ կրոնական համոզմունքներից անկախ: Նրանք պետք է հարգեն բազմազանությունն ու զերծ մնան կողմնակալությունից կամ նախապաշարմունքներից կամ խտրականությունից: Իրենց աշխատավայրում դատախազները չեն կարող ընդունել ոտնձգությունների, ռասիզմի կամ խտրականության կամ ոչ պատշաճ վարքագծի որեւէ այլ ձեւ:

54. Նրանք պետք է լինեն եւ կողքից դիտվեն որպես անաչառ իրենց որոշումներում, լինեն թափանցիկ, խուսափեն շահերի բախումից եւ չսատարեն որեւէ կողմի՝ նրա հետ ունեցած կապից ելնելով: Եթե վտանգ կա, որ դատախազը կարող է բավարար հեռավորություն չունենալ այդ անձից, ապա նա պետք է ձեռնպահ մնա գործը վարելուց: Դատախազները պետք է նաեւ խուսափեն անհարկի ճնշումներից (օրինակ՝ լրատվամիջոցների կողմից): Դատախազները պետք է ձեռնպահ մնան անաչառության սկզբունքի հետ անհամատեղելի քաղաքական գործունեությունից եւ չպետք է գործեն այն դեպքերում, երբ նրանց (կամ նրանց ընտանիքի) անձնական շահերը կարող են խոչընդոտել նրանց լիարժեք անաչառությունն ու օբյեկտիվությունը:

55. Նրանք պետք է բացարձակ բարեվարքություն դրսևորեն իրենց վարքագծում եւ չընդունեն իրենց ընտրության բովանդակության հետ կապված որեւէ օգուտ կամ վարձատրություն եւ չտրվեն կարիերայի հետ կապված այնպիսի հավակնությունների, որոնք կարող են սխալ ուղղորդել իրենց որոշումները (օրինակ՝ որոշակի քաղաքական կամ վարչական մարմնի հաճոյանալու համար):

56. Նրանք պետք է միայն առաջնորդվեն օրենքի համապատասխանությունն ապահովելու կամքով եւ պետք է միշտ ապահովվեն, որ իրենց որոշումները կայացվեն հստակ, հիմնավորված եւ թափանցիկ իրավական հիմքերի վրա:

57. Ընտրությունները եւ (կամ) ոստիկանության գործողությունները վերահսկելիս դատախազները պետք է ձգտեն ապահովել, որ քննությունն իրականացվի անկախ եւ օրենքին համապատասխան, եւ պետք է ակտիվ դեր խաղան պաշտպանության կողմի իրավունքների պաշտպանության եւ կողմերի հավասարության ապահովման գործում: Այդպիսի դեպքերում նրանք պետք է ապահովվեն, որ անձի ազատությունների եւ անձեռնմխելիության իրավունքի ցանկացած սահմանափակում լինի անհրաժեշտ, համարժեք եւ համաչափ՝ հետապնդվող օրինական նպատակին, մասնավորապես՝ ահաբեկչության կամ հանրային անվտանգության այլ դեպքերում:

58. Դատախազները պետք է ձգտեն ապահովել, որ մինչեւ հետապնդման առնչությամբ որոշում կայացնելը կատարվեն բոլոր անհրաժեշտ եւ ողջամիտ հարցումներն ու քննությունները, եւ ընթացք տան միայն այն դեպքում, երբ գործի հիմքում ընկած են հուսալի եւ թույլատրելի համարվող ապացույցները: Հետապնդումները պետք է իրականացվեն վճռական, սակայն արդարացի ձեւով եւ դուրս չգան այն շրջանակից, ինչին որ ապացույցները մատնացույց են անում:

59. Դատախազները չպետք է օգտագործեն մարդու իրավունքների կոպիտ խախտման արդյունքում ձեռք բերված ապացույցներ, պետք է ձգտեն ապահովել, որ այդպիսի ապացույցները չընդունվեն դատարանների կողմից, եւ համապատասխան պատժամիջոցներ կիրառվեն այդ ամենի համար պատասխանատուների նկատմամբ:

60. Արդարադատության նկատմամբ իրենց օրինական ակնկալիքներում դատախազները պետք է առաջնորդվեն ուրիշների նկատմամբ ուշադրությամբ: Այս ուշադրությունը պետք է ուղղված լինի հատկապես առավել խոցելի խավերին՝ տուժողներին, վկաներին, տարեցներին, երեխաներին եւ անչափահասներին, հաշմանդամություն ունեցող անձանց, ռեսուրս չունեցող կամ իրենց առջև ծառայած իրավիճակները հասկանալու հետ կապված դժվարություն ունեցող անձանց, իրենց ծանոթ միջավայրից կտրված եւ (կամ) լեզուն ու ընթացակարգը չհասկացող օտարերկրացիներին:

61. Թե՛ ծառայության ժամանակ, քննության ընթացքում, թե՛ լուսմների ժամանակ իրենց պարտականությունները կատարելիս դատախազները պետք է շրջահայացություն եւ զսպվածություն պահպանեն. մասնավորապես նրանք պետք է ձեռնպահ մնան քաղաքական, փիլիսոփայական կամ կրոնական համոզմունքներ արտահայտելուց, անձնական թշնամանքից կամ որեւէ անձի նկատմամբ նրա վարքագծով պայմանավորված արհամարհանք կամ բռնի վերաբերմունք դրսևորելուց, նույնիսկ եթե դա լրջորեն դատապարտելի է:

62. Այն դեպքում, երբ նրանց առաքելությունը նրանց լիազորում է հայտարարություններ կամ հաղորդումներ անել այն գործերի վերաբերյալ, որոնց իրենք ծանոթ են, դատախազները պետք է

ապահովեն, որ դրանք չվտանգեն վարույթում ներգրավված անձանց (մասնավորապես՝ տուժողների եւ վկաների) կյանքը կամ ֆիզիկական ամբողջականությունը կամ քննիչների աշխատանքը՝ բացահայտելով ընթացիկ քննությունները, որ դրանք չխախտեն անմեղության կանխավարկածի սկզբունքը եւ զուտ ենթադրություններով անտեղի չվնասեն այլոց պատիվն ու հեղինակությունը:

63. Էթիկայի կրթությունը պետք է ներառվի սկզբնական պատրաստվածության եւ վերապատրաստման ծրագրերում:

64. Զանի որ դատախազների առջև ծառայած Էթիկայի խնդիրները գնալով դառնում են ավելի բազմազան, բարդ եւ ժամանակի ընթացքում ենթարկվում են փոփոխությունների, անդամ պետությունները պետք է տրամադրեն հասանելի մեխանիզմներ եւ ռեսուրսներ (հատուկ անկախ մարմիններ, Արդարադատության խորհուրդների կամ դատախազական խորհուրդների փորձագետներ եւ այլն)՝ աջակցելու դատախազներին իրենց կողմից բարձրացված հարցերը հաղթահարելիս (օրինակ՝ հրաժարվել, թե չհրաժարվել որեւէ գործից շահերի հնարավոր բախման եւ գիտելիքների կամ նախապաշարմունքների պատճառով, որոնք նրանք կարող են ունենալ, կամ լրացուցիչ այնպիսի գործողություններ իրականացնելու հնարավորությունը, ինչպիսիք են արբիտրաժը եւ այլն):

65. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ դատախազները պաշտպանված լինեն իրենց պաշտոնին վերագրվող Էթիկայի կանոններին համապատասխանելու մասով առաջացող եւ մասնավորապես ահաբեկումից, մեկուսացումից կամ կարիերայի հետընթացից բխող ցանկացած անբարենպաստությունից:

VI. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

66. Թեեւ սոցիալական, քաղաքական, իրավական եւ վարչական կազմակերպական ուղեվածքային համակարգերը մեկ անդամ պետությունից մեկ այլ անդամ պետություն տարբերվում են, ժողովրդավարական արժեքներին ընդհանուր հավատարմությունը նպաստում է նմանատիպ իրավական լուծումների մշակմանն ու տարբեր անդամ պետությունների դատախազների միջեւ համագործակցության հնարավորությունների զարգացմանը:

67. Իրենց վարչակազմերի աջակցությամբ դատախազական ծառայությունները եւ անհրաժեշտության դեպքում հենց դատախազները պետք է օգուտ քաղեն դրանից եւ նպաստեն անկախության, հաշվետվողականության եւ Էթիկայի մասով լավ գործելակերպերի վերաբերյալ տեղեկությունների փոխանակման հնարավորություններին: Այդ նպատակով պետք է մշակվեն տեղեկությունների փոխանակման ցանցեր, երկկողմ եւ բազմակողմ միջազգային սեմինարներ, վերապատրաստման դասընթացներ, գործընկերության մասին պայմանավորվածություններ եւ այս համագործակցության միջոցով փոխշահավետ բոլոր միջոցները:

68. Այս միջազգային համագործակցությունը պետք է ներառի նաեւ ապագայում անկախության, հաշվետվողականության եւ Էթիկայի պաշտպանությանն առնչվող հարցեր:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

i. Անդամ պետություններում պետք է ընդունվեն համապատասխան դրույթներ՝ դատավորների անկախությանը զուգահեռ՝ ուժեղացնելու համար դատախազների անկախությունը, հաշվետվողականությունն ու Էթիկան թե՛ քրեաիրավական ոլորտում, թե՛ նրանց իրավասության այլ ոլորտներում: Քաղաքական ազդեցությունը պետք է լինի անընդունելի:

ii. Գենդերային հավասարակշռության նկատմամբ հարգանքը պահելով՝ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ դատախազներն ընտրվեն իրենց հմտությունների եւ բարոյական ու Էթիկական արժեքների հիման վրա եւ ստանան համապատասխան նախնական վերապատրաստում եւ արտադրական պրակտիկա՝ իրենց գործառնություններն անկախ, անաչառ, հաշվետվողական ձեւով եւ Էթիկայի չափանիշների նկատմամբ լիարժեք հարգանքով իրականացնելու համար: Նրանք պետք է դյուրացնեն դատախազներին այդ հարցերի վերաբերյալ համապատասխան տեղեկությունների եւ խորհրդատվության տրամադրումը:

iii. Դատախազների կարգավիճակը, անկախությունը, աշխատանքի ընդունումը եւ մասնագիտական ուղին պետք է դատավորներին համանման կերպով հստակ սահմանված լինեն օրենքով եւ կարգավորվեն թափանցիկ եւ օբյեկտիվ չափորոշիչներով: Անդամ պետությունները պետք է դատախազների համար երաշխավորեն այնպիսի կարգավիճակ, որը կապահովի ինչպես նրանց արտաքին, այնպես էլ ներքին անկախությունը, նախընտրելի է՝ իրավական ամենաբարձր մակարդակի դրույթներով եւ երաշխավորելով դրանց կիրառումն այնպիսի անկախ մարմնի կողմից, ինչպիսին է Դատախազական խորհուրդը, մասնավորապես՝ պաշտոնի նշանակումների, մասնագիտական ուղու եւ կարգապահության համար:

iv. Գործադիր իշխանության կողմից կոնկրետ գործերի վերաբերյալ ցուցումներն ընդհանուր առմամբ անցանկալի են: Այս համատեքստում, քրեական հետապնդում չիրականացնելու մասին ցուցումները պետք է արգելվեն, իսկ քրեական հետապնդում իրականացնելու մասին ցուցումները պետք է խստորեն կարգավորվեն Rec(2000)19 առաջարկությանը համապատասխան:

v. Ներքին անկախությունը չի խոչընդոտում ծառայության աստիճանակարգային կազմակերպմանն ու օրենքի կիրառության վերաբերյալ ընդհանուր առաջարկություններ տալը՝ ապահովելու համար օրենքի եւ իրավական պրակտիկայի հետ համաձայնեցվածությունն ու հետեւողականությունը կամ դատախազական գործողությունների առաջնահերթությունները:

vi. Եթե դատախազներին տրվում են ցուցումներ, ապա դրանք պետք է տրվեն գրավոր, լիովին թափանցիկ ձեւով եւ միշտ նպատակ ունենան կիրառելու օրենքը՝ հարգելով իրավունքներն ու

ազատությունները՝ առանց հետապնդվող օրինական նպատակին անհամաչափ սահմանափակումների:
vii. Դատախազական ծառայության եւ դատախազության գործունեության վերաբերյալ համապատասխան տեղեկությունները պետք է լայնորեն հասանելի լինեն հանրությանը: Դատախազները պետք է առանցքային դերակատարություն ունենան այդպիսի տեղեկությունների տարածման գործում: Իրենց անկախության, անմեղության կանխավարկածի սկզբունքի, քննչական մարմինների կարիքների եւ անձնական տվյալների պաշտպանության նկատմամբ հարգանքն ապահովելիս դատախազները պետք է իրենց գործունեության եւ ձեռք բերած արդյունքների մասին զեկուցեն իրենց վերադասներին եւ այլ պետական մարմինների, որոնց հետ իրենք աշխատում են, ինչպես նաեւ հանրությանը՝ համապատասխան ուղիներով եւ օրենքով սահմանված կարգով:

viii. Երբ նրանց առաքելությունը նրանց լիազորում է հրապարակային հայտարարություններ անել իրենց իրավասության սահմաններում առկա գործերի վերաբերյալ, ապա դատախազները պետք է ապահովեն, որ դրանք չվտանգեն վարույթում ներգրավված անձանց կյանքը կամ ֆիզիկական ամբողջականությունը կամ քննիչների աշխատանքը՝ բացահայտելով ընթացիկ քննությունները, եւ որ դրանք չխախտեն անմեղության կանխավարկածի սկզբունքը:

ix. Անդամ պետությունները պետք է պաշտպանեն դատախազներին եւ ըստ պատշաճության՝ նրանց ընտանիքի անդամներին իրենց գործառույթներն իրականացնելիս:

x. Դատախազների առաջխաղացումը պետք է հիմնված լինի արժանիքների վրա:

xi. Դատախազների կարգավիճակը, վարձատրությունը եւ նրանց նկատմամբ վերաբերմունքը, ինչպես նաեւ դատախազական ծառայությունների համար նախատեսված ֆինանսական, մարդկային եւ այլ ռեսուրսներ պետք է համապատասխանեն առաքելության ակնավոր բնույթին եւ դատախազների կոնկրետ պարտականություններին՝ դատավորների հետ համեմատելի եղանակով:

xii. Անդամ պետությունները, եթե մտադրություն ունեն դատախազների համար Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի իմաստով դատական իշխանության կարգավիճակ վերապահելու կամ այն պահպանելու, պետք է իրենց վարչական եւ աստիճանակարգային համակարգերում ապահովեն, որ դատախազներն ունենան բոլոր երաշխիքները, մասնավորապես՝ անկախության համար պահանջվող երաշխիքները, որոնք կցված են այդ կարգավիճակին:

xiii. Դատախազները պետք է մշտապես ձգտեն զարգացնել իրենց իրավական, էթիկական եւ սոցիալական գիտելիքները՝ իրենց առաքելությունը պատշաճ կերպով կատարելու համար:

xiv. Պետք է ընդունել եւ հրապարակել էթիկայի կանոնագրեր: Դատախազները պետք է հարգեն ամենաբարձր չափանիշներին համապատասխան էթիկայի վարքագծի կանոնները, որոնք պարբերաբար թարմացվում են հասարակության զարգացմանն ու առաջացող խնդիրներին համընթաց: Նրանք պետք է պահպանեն իրենց գործառույթներին համապատասխան շրջահայացություն եւ զսպվածություն, որպեսզի կասկածի տակ չդնեն իրենց անկախությունը, օբյեկտիվությունն ու անաչառությունը:

xv. Քննությունները եւ (կամ) ոստիկանության գործողությունները վերահսկելիս դատախազները պետք է ապահովեն, որ անձի իրավունքների եւ ազատությունների եւ անձնական կյանքի անձեռնմխելիության սահմանափակումները լինեն անհրաժեշտ, հետապնդվող օրինական նպատակին համարժեք եւ համաչափ: Նրանք պետք է հատուկ ուշադրություն դարձնեն առավել խոցելի անձանց, մասնավորապես՝ հանցագործությունից տուժածներին, ինչպես նաեւ պաշտպանության կողմի իրավունքներին:

xvi. Դատախազները պետք է ձեռնարկեն իրենց իրավասության շրջանակներում բոլոր միջոցները՝ հարգելու եւ պաշտպանելու համար դատարանների անկախությունը:

xvii. Միջազգային համագործակցության համատեքստում, իրենց գործելակերպերը հարստացնելու եւ իրենց առաքելության վերաբերյալ ընկալումն առավել խորացնելու համար դատախազները պետք է շփվեն իրենց օտարերկրյա գործընկերների հետ: Այդ նպատակների համար կարող են հատկապես օգտակար լինել տեղեկությունների փոխանակման ցանցերը, ուսումնական հաստատությունները, փոխգործակցության հարցերով դատախազները, միջազգային սեմինարները, վերապատրաստման դասընթացները, գործընկերության մասին պայմանավորվածությունները: Այս համատեքստում պետք է նաեւ նշել դատավորների եւ դատախազների միջազգային ասոցիացիաների կարելորդությունը, որոնց խնդիրն օրենքի գերակայությամբ առաջնորդվող պետությունում դատավորների եւ դատախազների անկախությունը, էթիկան եւ անհատական ու սոցիալական հաշվետվողականությունը պաշտպանելն է, եւ որն արդյունքում կարող է առանցքային դեր խաղալ սույն կարծիքում նշված արժեքների տարածման գործում:

Հավելված

Ղատախազների կարգավիճակի եւ գործունեության վերաբերյալ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի ընտրությունը

ՄԻԵԴ-ը նշել է, որ լսման ժամանակ ղատախազի բացակայությունը կարող է հանգեցնել արդար ղատաքննության սկզբունքի խախտման¹³:

ՄԻԵԴ-ը դիտարկել է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին կետի (արդար ղատաքննություն) պահանջների պահպանման մասով ղատախազների անկախության հարցն այն դեպքում, երբ ղատախազական ծառայությունը եղել է ղատաքննության կողմերից մեկը, որը վիճարկվել է դիմումատուի կողմից:

2006 թվականի հունիսի 15-ի *Չինսաթն ընդդեմ Բուլղարիայի* [*Zinsat v. Bulgaria*] գործով (57785/00) ՄԻԵԴ-ը վիճարկել է այն փաստը, որ ղատախազը փոխարինել էր ղատարանին՝ որոշելով գործել ինքնուրույն՝ առանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի:

ՄԻԵԴ-ը նաեւ փորձել է ստուգել ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջների հետ համապատասխանությունն այն դեպքում, երբ կալանքի նկատմամբ վերահսկողությունը վստահված է ղատախազին: Այն համարել է, որ այն դեպքում, երբ այդ հսկողությունը վստահված է ղատախազին, վերջինս ամեն դեպքում պետք է լինի անկախ, անկողմնակալ, կարողանա վերահսկել կիրառված միջոցի վավերությունը եւ ազատ արձակելու հրաման տալու իրավասություն ունենա:

Հենց այս միտքն է ընկած *Շիեսերն ընդդեմ Շվեյցարիայի* [*Schiesser v. Switzerland*] (7710/76) գործով 1979 թվականի դեկտեմբերի 4-ի վճռի հիմքում, որում հաստատվում էր գործադիր մարմնի եւ կողմերի նկատմամբ ղատախազի անկախության անհրաժեշտությունը:

Եթե անդամ պետությունները ցանկանում են, որ ղատախազական ծառայությունը ճանաչվի որպես ղատական մարմին՝ ՄԻԵԿ-ի իմաստով, մի հատկանիշ, որին շատ հակված են շահագրգիռ երկրների ղատախազները, ապա անդամ պետությունները պետք է հաշվի առնեն, որ մի քանի վճիռներում ՄԻԵԴ-ը որոշել է, որ ղատախազական ծառայությունը չի համապատասխանում ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի իմաստով ղատական մարմին ճանաչվելու չափորոշիչներին¹⁴:

Ղատախազների անկախության հարցում ՄԻԵԴ-ը շատ պահանջկոտ է, սակայն դա չպետք է հանգեցնի այս պահանջի՝ որպես ղատական գործընթացում ղատախազների դերի նկատմամբ անվստահության մեկնաբանմանը կամ նույնիսկ արժեզրկմանը. պետք է ճիշտ հակառակը լինի: Ինչպես նշել է ՄԻԵԴ-ի՝ Ֆրանսիայի հարցերով ղատավոր պարոն Անդրե Պոտոցկին 2018 թվականի մայիսի 17-ին Փարիզում տեղի ունեցած համաժողովում Եվրոպական միության Գերագույն ղատարանների գլխավոր ղատախազների ցանցի առջեւ, քրեական վարույթի առաջին փուլը ղեկավարող եւ վերահսկող ղատախազը նաեւ միեւնույն ժամանակ «մարդու իրավունքների առաջադեմ պաշտպանն է»:

¹³ Տե՛ս *Կարելն ընդդեմ Ռուսաստանի* [*Karel v. Russia*] գործով ՄԻԵԴ-ի 2016 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը (926/08):

¹⁴ Տե՛ս *Մեդվեդեւն ընդդեմ Ֆրանսիայի* [*Medvedev v. France*] [GC] գործով ՄԻԵԴ-ի 2010 թվականի մարտի 29-ի վճիռը, թիվ 3394/03, *Մուլինն ընդդեմ Ֆրանսիայի* [*Moulin v. France*] գործով 2010 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, թիվ 37104/06, *Ջասինսկին ընդդեմ Լեհաստանի* [*Jasinski v. Poland*] գործով 2005 թվականի դեկտեմբերի 20-ի վճիռը, թիվ 30865/96, *Վասիլեսկուն ընդդեմ Ռումինիայի* [*Vasilescu v. Romania*] («ղատարան» հասկացության տեսանկյունից՝ 651 հոդվածի իմաստով) գործով 1998 թվականի մայիսի 22-ի վճիռը, թիվ 27053/95, *Պանտեան ընդդեմ Ռումինիայի* [*Pantea v. Romania*] գործով 2003 թվականի հունիսի 3-ի վճիռը, թիվ 33343/96, *Ասսենովն ու այլք ընդդեմ Բուլղարիայի* [*Assenov and others v. Bulgaria*] գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, թիվ 24760/94, § 149:

Կարծիք թիվ 14 (2019)

Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի՝
ուղղված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին

Դատախազների դերը կոռուպցիայի և հարակից տնտեսական ու ֆինանսական հանցագործությունների
դեմ պայքարում

I. Ներածություն. նպատակը, շրջանակը, սահմանումները

Ա. Նպատակը

1. Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԳԽՆ) ստեղծվել է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 2005 թվականին՝ Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված՝ «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Rec(2000)19 առաջարկության իրականացման հետ կապված հարցերի վերաբերյալ կարծիքներ ձեռավորելու առաջադրանքով¹:

2. Նախարարների կոմիտեի կողմից իրեն տրված մանդատի համաձայն՝ ԵԴԳԽՆ-ն պատրաստել է կոռուպցիայի եւ հարակից տնտեսական ու ֆինանսական հանցագործությունների² դեմ պայքարում դատախազների դերի վերաբերյալ սույն կարծիքը:

3. Ինչպես արդեն ընդգծվել է ԵԴԳԽՆ-ի նախորդ կարծիքներում, դատախազներին վերապահված խնդիրները պետությունից պետություն տարբերվում են՝ համապատասխան սահմանադրական եւ օրենսդրական հիմքերին եւ իրավական ավանդույթներին համապատասխան: Այսպիսով, որոշ անդամ պետությունների քրեական արդարադատության համակարգերում քրեական հետապնդման համար հիմք է ծառայում «օրինականության» սկզբունքը, մինչդեռ մյուս անդամ պետություններում այդպիսի հիմք է համարվում «հայեցողության» կամ «հնարավորության» սկզբունքը. այլ պետություններում քրեական հետապնդման համար հիմք է համարվում այս սկզբունքների համակցությունը: Որոշ անդամ պետություններում դատախազներին են վստահում ոստիկանության եւ քննիչների նկատմամբ ընդհանուր վերահսկողության դերը, իսկ մյուսներում՝ ոչ³: Այն երկրներում, որտեղ դատախազներն ընդհանուր վերահսկողություն են իրականացնում քննության նկատմամբ, կարող են քննությունն իրականացնել ինքնուրույն, կամ քննությունն անցկացվում է ոստիկանության կողմից՝ դատախազության լիազորությունների ներքո:

4. Անկախ դատախազության տարբեր համակարգերից՝ կարող են սահմանվել ընդհանուր պահանջներ ու մարտահրավերներ հանցավորության դեմ արդյունավետ պայքարի մասով եւ այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է մեղադրյալի մարդու իրավունքները հարգելուն, հանցավորության քաղաքականության մասով պետության շահերին եւ տուժողի ու քրեական դատավարության մյուս մասնակիցների իրավունքներին: Սույն կարծիքն ուղղված է այն հարցի հետ կապված ընդհանուր ուղեցույցներ եւ չափորոշիչներ սահմանելուն, թե ինչպես պետք է դատախազները գործեն կոռուպցիայի եւ հարակից տնտեսական ու ֆինանսական հանցագործությունների կոնկրետ ոլորտում: Անդամ պետություններում, որտեղ դատախազները կատարում են քրեաիրավական ոլորտից դուրս գործառնություններ, սույն կարծիքի եզրակացություններն ու առաջարկությունները, mutatis mutandis, կիրառվում են նաեւ այդպիսի դատախազական գործունեության նկատմամբ: Որոշ եզրակացություններ հավանաբար ավելի համապատասխան կլինեն տվյալ դատախազական համակարգի համար, քան մյուսի: Այնուամենայնիվ, սույն կարծիքն այս կամ այն համակարգերին նախապատվությունը տալու նպատակ չի հետապնդում, այն ավելի շուտ ուղղված է դրանց բոլորի բարելավմանը նպաստելուն: Հետեւաբար կարծիքը կարող է օգտագործվել քրեական վարույթում ներգրավված բոլոր դերակատարներին ոգեշնչելու համար՝ հատկապես ավելի լավ արդյունավետության հասնելու նպատակով նրանց միավորելու տեսանկյունից:

¹ Իր կարծիքները մշակելիս ԵԴԳԽՆ-ն նաեւ հաշվի է առնում իր ստեղծումից հետո ընդունված այլ համապատասխան առաջարկություններ եւ փաստաթղթեր, մասնավորապես՝ Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված՝ «Քրեական արդարադատության համակարգից դուրս հանրային մեղադրողների դերի մասին» Rec(2012)11 առաջարկությունը:

² Որոշ անդամ պետություններում «տնտեսական հանցագործություն» հասկացությունը ներառում է նաեւ ֆինանսական հանցագործությունը:

³ Տե՛ս, օրինակ, Դատախազների անկախության, հաշվետվողականության եւ էթիկայի վերաբերյալ ԵԴԳԽՆ-ի թիվ 13(2018) կարծիքը, պարբ. 9:

Բ. Շրջանակը

5. Կոռուպցիայի եւ հարակից տնտեսական ու ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարը հետաքրքրում է բազմաթիվ պետական եւ մասնավոր դերակատարների, ինչպիսիք են դատախազները, դատավորները, ոստիկանության քննիչները, փորձագետները, վերահսկիչ մարմինները, պետական գերատեսչությունները, գանգվածային լրատվամիջոցները, ՀԿ-ներն ու քաղաքացիական հասարակության շահագրգիռ այլ տարրեր, եւ պահանջում է այդ դերակատարների ներգրավվածությունը: ԵՂԳԽՆ-ն ցանկանում է, որ սույն կարծիքում շարադրված սկզբունքները, բացի դատախազներից, ոգեշնչեն նաեւ այլ շահագրգիռ եւ համապատասխան դերակատարների գործողությունները՝ ընդհանուր արդյունքները բարձրացնելու նպատակով:

6. Կարծիքի նպատակը կոնկրետ անհատական եւ ինստիտուցիոնալ մոտեցումները սահմանելն է, որոնց պետք է հետեւեն բնույթով բարդ եւ հաճախ գաղտնի ձեւեր ներառող մի շարք հանցագործությունների, ինչպես օրինակ՝ կոռուպցիայի եւ հարակից տնտեսական ու ֆինանսական հանցագործությունների (ինչպես սահմանված է ստորեւ) դեմ պայքարում ներգրավված դատախազներն ու դատախազական ծառայությունները: Սույն կարծիքում մասնավորապես շեշտը դրված է այդ ոլորտում բարձր մակարդակում կատարվող քրեական իրավախախտումների վրա, օրինակ, երբ դատախազական ծառայությունը եւ առանձին դատախազները բախվում են նյութական իրավունքի եւ դատավարության մասով որոշակի մարտահրավերների: Այս առումով խորհուրդ է տրվում խորհրդակցել դատախազական ծառայությունների հետ ամեն անգամ, երբ գործադիր կամ օրենսդիր իշխանություններն այս ոլորտում նոր կանոններ կամ դրույթներ են մշակում:

7. ԵՂԳԽՆ-ն ի սկզբանե ընդգծում է, որ կոռուպցիայի եւ հարակից տնտեսական ու ֆինանսական հանցագործությունների դեմ արդյունավետ եւ գործուն, միեւնույն ժամանակ թափանցիկ եւ մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված դատախազական պայքարը մեծապես կախված է այդպիսի հանցավոր վարքագծի դեմ իրապես պայքարելու եւ այն վերահսկելու քաղաքական կամքից: Հետեւաբար անդամ պետությունները պետք է ոչ միայն նվիրվածություն դրսեւորեն իրենց հանձնառությանը, այլ նաեւ բարենպաստ միջավայր ստեղծեն իրենց դատախազական ծառայությունների, ինչպես նաեւ այս տեսակի հանցագործություններով զբաղվող առանձին դատախազների համար՝ ի լրումն այս ոլորտում միջազգային համագործակցության մեջ իրենց մասնակցության ընդլայնմանն ու խորացմանը:

8. Կոռուպցիայի եւ հարակից տնտեսական ու ֆինանսական հանցագործությունների դեմ արդյունավետ պայքարը եւ այս տեսակի վարքագծի խիստ վնասակար ազդեցությունը հանրային վստահության, սոցիալական կայունության եւ տվյալ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաեւ բոլոր մարդկանց արդարության եւ օրենքի առաջ հավասարության սկզբունքների վրա միայն մեղավորներին պատասխանատվության ենթարկելու հարց չէ: Այդպիսի հանցագործությունների կանխարգելման համար չափազանց կարեւոր է բոլոր պատշաճ իրավական, օրենսդրական եւ այլ գործիքների օգտագործումը: Անհրաժեշտ է, որ թե՛ առհասարակ հասարակությունը, թե՛ կոռուպցիայով եւ հարակից քրեական իրավախախտումներով զբաղվող դատախազները մասնավորապես քաջ գիտակցեն այդպիսի հանցագործությունների ծայրահեղ վնասակար բնույթը: Պետք է շարունակաբար պայքարել կոռուպցիայի նկատմամբ հանդուրժողականության դեմ:

9. Սույն կարծիքը պատրաստելիս ԵՂԳԽՆ-ն մասնավորապես հիմնվել է Քրեական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության ամրապնդման միջոցների վերաբերյալ իր թիվ 1 (2007) կարծիքի, Քրեաիրավական ոլորտից դուրս դատախազական ծառայությունների դերի վերաբերյալ թիվ 3 (2008) կարծիքի, Դատախազական ծառայությունների միջոցների կառավարման վերաբերյալ թիվ 7 (2012) կարծիքի, Դատախազների եւ լրատվության միջոցների միջեւ հարաբերությունների վերաբերյալ թիվ 8 (2013) կարծիքի, Քրեական գործերով քննություններում դատախազների դերի վերաբերյալ թիվ 10 (2015) կարծիքի, Դատախազների աշխատանքի, այդ թվում՝ ահաբեկչության եւ ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հարցում նրանց աշխատանքի որակի եւ արդյունավետության վերաբերյալ թիվ 11 (2016) կարծիքի, Քրեական վարույթներում տուժողների եւ վկաների իրավունքների առնչությամբ դատախազների դերի վերաբերյալ թիվ 12 (2017) կարծիքի եւ Դատախազների անկախության, հաշվետվողականության եւ էթիկայի վերաբերյալ թիվ 13 (2018) կարծիքի վրա:

10. ԵՂԳԽՆ-ի համար հիմք են հանդիսացել նաեւ կոռուպցիայի դեմ պայքարի եւ կանխարգելման ոլորտում Եվրոպայի խորհրդի ամենակարեւոր փաստաթղթերն ու եզրակացությունները, հատկապես՝ Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան (1999 թվական), ⁴Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիան (1999 թվական), ⁵Անդամ պետություններին ուղղված՝ «Պաշտոնատար անձանց վարքագծի կանոնների մասին» Նախարարների կոմիտեի Rec(2000)10 առաջարկությունը (2000 թվական), Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈՒ)՝ մինչ

⁴ Եվրոպական պայմանագրերի շարք՝ թիվ 173:

⁵ Եվրոպական պայմանագրերի շարք՝ թիվ 174:

օրս իր գնահատման հինգ փուլերում⁶ ձեռք բերած արդյունքները, ինչպես նաև ՄՈՆԻԿՎԱԼ-ի [MONEYVAL] փաստաթղթերը եւ կոռուպցիայի ու հարակից հարցերի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) համապատասխան նախադեպային իրավունքը⁷:

11. Հաշվի են առնվել նաև կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ այլ միջազգային կազմակերպությունների փաստաթղթեր եւ մեխանիզմներ, մասնավորապես՝ ՄԱԿ-ի 2003 թվականի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան⁸ եւ Դատախազների դերի վերաբերյալ 1990 թվականի ուղեցույցը, Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության Միջազգային գործարար գործառնություններում օտարերկրյա հանրային պաշտոնյաների կաշառման դեմ պայքարի մասին 1997 թվականի կոնվենցիան⁹, Եվրոպական միության Եվրոպական համայնքների պաշտոնյաների կամ Եվրոպական միության անդամ պետությունների պաշտոնյաների ներգրավմամբ կոռուպցիայի դեմ պայքարի մասին 1997 թվականի կոնվենցիան¹⁰, Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից երկրների միջխորհրդարանական վեհաժողովի կողմից 1999 թվականին ընդունված «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» օրինակելի օրենքը, ԵՄ Խորհրդի 2003 թվականի հուլիսի 22-ի «Մասնավոր հատվածում կոռուպցիայի դեմ պայքարի մասին» 2003/568/ՄՆԳ շրջանակային որոշումը¹¹, ինչպես նաև Փողերի լվացման դեմ պայքարի ֆինանսական գործողությունների հանձնախմբի (ՖԱՏՖ)՝ Կոռուպցիայի հետ կապված հարցերի վերաբերյալ 13 հրապարակումները: ¹²ԵՂԳԽԽ-ն նաև հաշվի է առել Դատախազների միջազգային ասոցիացիայի կողմից 1999 թվականին ընդունված «Դատախազների մասնագիտական պատասխանատվության չափանիշները եւ հիմնական պարտականություններն ու իրավունքները»:

12. ԵՂԳԽԽ-ն հիմնվել է Լյորայի դատախազության (Գերմանիա) գլխավոր դատախազի տեղակալ, Գերմանիայի դատական ակադեմիայի նախկին տնօրեն դոկտոր Ռայներ ՀՈՐՆՈՒԼԳ-ՅՈՍԹԻ կողմից պատրաստված կարծիքի նախագծի վրա եւ նրան շնորհակալություն է հայտնում սույն աշխատության մեջ նրա արժեքավոր փորձագիտական ներդրման համար:

Գ. Սահմանումները

13. ԵՂԳԽԽ-ն ընդգծում է, որ կոռուպցիայի համընդհանուր ընդունված սահմանում չկա: Ուստի այն գտնում է, որ սույն կարծիքի շրջանակներում «կոռուպցիա» եզրույթը սահմանելու լավագույն հղումը կարող է վերցվել Եվրոպայի խորհրդի՝ Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայից (ETS173), ինչպես այն կիրառվել է ԳՐԵԿՈՒ-ի կողմից¹³: Դա նշանակում է, որ «կոռուպցիա»-ն այնպիսի հասկացություն է, որում ներառված են, կամ որն անդրադառնում է մի շարք քրեական իրավախախտումների, ինչպիսիք են ակտիվ եւ պասիվ կաշառակերությունը պետական եւ մասնավոր հատվածներում եւ ազդեցությունը շահադիտական նպատակներով օգտագործելը: Այնպիսի երեւույթները, ինչպիսիք են նվերների ընդունման, պետական գնումների կամ ապօրինի հարստացման հետեւանքով առաջացած կոռուպցիան, նույնպես վնասում են պետության լավ գործունեության նկատմամբ հանրային վստահությունը՝ օրենքի գերակայության սկզբունքին համապատասխան:

14. Շատ դեպքերում կոռուպցիոն հանցագործությունները սերտորեն միահյուսվում են տնտեսական եւ ֆինանսական հանցագործությունների այլ, հաճախ գաղտնի, երեւույթների հետ, ինչպիսիք են խարդախությունը, հարկային խարդախությունը, փողերի լվացումը, յուրացումները եւ այլն: Հետեւաբար մասնագիտացված դատախազական ծառայությունները եւ (կամ) դատախազները բավականին հաճախ զբաղվում են ոչ միայն կոռուպցիոն բնույթի իրավախախտումներով, այլ նաև հարակից այլ տնտեսական եւ ֆինանսական հանցագործություններով, օրինակ՝ համակարգչային խարդախություն, մտավոր սեփականության գողություն, մրցակցային օրենքների խախտումներ, արժեթղթերի շուկայի կարգավորումների խախտումներ, կեղծ մեամակություն եւ (կամ) անվճարունակության մասով իրավախախտումներ: Կոռուպցիան կարող է կապված լինել նաև այնպիսի հանցագործությունների հետ, ինչպիսիք են մարդկանց թրաֆիքինգը, միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխելը, ապօրինի աշխատուժը, բնապահպանական, հողային եւ քաղաքաշինական

⁶ Հատկանշական է, որ «Պատգամավորների, դատավորների եւ դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելմանը» վերաբերող գնահատման IV-րդ փուլի արդյունքները, որոնք մեծ մասամբ ավարտված են, առանձնահատուկ հետաքրքրություն էին ներկայացնում ԵՂԳԽԽ-ի համար սույն կարծիքը կազմելիս:

⁷ Օրինակ՝ ավելի վերջերս կայացված՝ ՄԻԵԴ-ի՝ *Գուցանովի ընդդեմ Բուլղարիայի* [Gutsanovi v. Bulgaria] թիվ 34529/10 գործով 2013 թվականի հոկտեմբերի 15-ի վճիռը [Բաժին IV], *Ապոստուն ընդդեմ Ռումինիայի* [Apostu v. Romania] թիվ 22765/12 գործով 2015 թվականի փետրվարի 3-ի վճիռը [Բաժին III], *Շակիցիսն ընդդեմ Հունաստանի* (թիվ 2) [Tsalkitzis v. Greece (no. 2)] թիվ 72624/10 գործով 2017 թվականի հոկտեմբերի 19-ի վճիռը [Բաժին I]:

⁸ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2003 թվականի հոկտեմբերի 31-ի 58/4 բանաձեռ:

⁹ «Օտարերկրյա հանրային պաշտոնյաների կաշառման դեմ հետագա պայքարի մասին» ՏՀԶԿ 2009 թվական առաջարկության հետ միասին:

¹⁰ Պաշտոնական տեղեկագիր, L 195, 1997 թվականի հունիսի 25, էջ 0002 – 0011:

¹¹ Պաշտոնական տեղեկագիր, L 192, 2003 թվականի հուլիսի 31, էջ 54-56:

¹² Որպես Կոռուպցիայի դեմ պայքարի հարցերով G20 աշխատանքային խմբի հետ համագործակցության շրջանակներում սահմանված կանոն:

¹³ Իր Գնահատման III փուլում:

հարցերով օրենքների մասով իրավախախտումները եւ այլն:

15. Արդյունքում սույն կարծիքի նպատակների համար «կոռուպցիա» եզրույթն օգտագործելիս այն ներառում է նաեւ դրա հետ կապված տնտեսական եւ ֆինանսական հանցագործությունները:

II. Հատուկ մարտահրավերներ, որոնց բախվում են դատախազական ծառայություններն ու առանձին դատախազները կոռուպցիայի դեմ պայքարելիս

16. Կոռուպցիայի դեմ պայքարելիս դատախազները բախվում են մի շարք առանձնահատուկ մարտահրավերների: Օրինակ՝ որոշ երկրներում կարող է բացակայել քաղաքական կամքը, հատկապես, երբ խոսքը վերաբերում է ազդեցիկ անձանց կողմից բարձր մակարդակի կոռուպցիային¹⁴: Կարող է պատահել նաեւ այնպես, որ որոշ քաղաքական գործիչներ փորձեն անօրինական ազդեցություն ունենալ քննության վրա, հատկապես, երբ այդ քննությունները վերաբերում են անձամբ հենց իրենց կամ իրենց ընտանիքներին, կառավարության կամ խորհրդարանի այլ անդամների, իրենց քաղաքական կուսակցություններին կամ աշխատանքային ընկերներին եւ այլն:

17. Կոռուպցիան հաճախ ենթադրում է քիչ տեսանելի, բայց բարդ մեխանիզմներ՝ դրանք գնահատելիս դատախազների համար առաջացնելով իրական խնդիրներ: Միեւնույն ժամանակ մեղադրյալները հակված են իրենց տրամադրության տակ ունենալու զգալի ռեսուրսներ, ինչը Նրանց հնարավորություն է տալիս մշակելու պաշտպանության բարդ ռազմավարություն, որը հաղթահարելը կարող է դժվար լինել: Ի վերջո, դատախազական ծառայություններն ու դատախազները պետք է կարողանան դիմադրել հնարավոր հետաձգման մարտավարությանը՝ միաժամանակ երաշխավորելով կողմերի հավասարության սկզբունքը: Նրանք նաեւ պետք է ունենան բավարար եւ համապատասխան ռեսուրսներ՝ պատշաճ քրեական հետապնդման համար, իսկ դատարանները պետք է ունենան մի շարք համապատասխան եւ համաչափ պատիժներ՝ պատիժ նշանակելու նպատակով:

18. Որքան կոռուպցիան լուրջ բույթ է կրում եւ բարձր մակարդակի է, այնքան մեծ է կազմակերպված հանցավորության հետ դրա սերտ կապի հավանականությունը¹⁵:

19. Հատուկ մարտահրավերները, որոնց դատախազները բախվում են կոռուպցիայի դեմ պայքարելիս, կապված դրա գաղտնի եւ բարդ բնույթի հետ, արդիական են նաեւ դրա հետ կապված տնտեսական եւ ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարում: Ավելին, հետագա մարտահրավերները նպաստում են դատախազների համար նախատեսված խնդիրների բարդությանը: Ծանր տնտեսական հանցագործության դեմ պայքարն ամենից հաճախ ենթադրում է խորքային տնտեսական վերլուծության եւ ծավալուն փաստաթղթերով զբաղվելու անհրաժեշտություն՝ հաճախ կենտրոնանալով մի շարք հանցավոր արարքների վրա: Բացի այդ, այսօրվա «պաշտոնավոր» հանցագործները հաճախ օգտագործում են հաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում իրենց փորձառությունը՝ իրենց ինքնությունը, իրենց կատարած հանցագործություններն ու համապատասխան ապացույցները թաքցնելու համար: Դատախազական ծառայությունները պետք է իրենց տրամադրության տակ ունենան համապարփակ եւ թարմացված տեղեկություններ, այդ թվում՝ վիճակագրական տվյալներ իրենց երկրներում կոռուպցիայի մասշտաբների եւ առանձնահատկությունների վերաբերյալ:

20. «Ծանր տնտեսական հանցագործություն» ըստ էության նշանակում է, որ մեկ կամ մի քանի սուբյեկտներ, ներառյալ՝ պետական եւ մասնավոր սուբյեկտները, կամ անհատներ կարող են զգալի ֆինանսական կորուստներ կրել: Այսպիսով, այս տեսակի հանցագործության հետ առերեսվելիս դատախազները պետք է տեղյակ լինեն տուժողների իրավունքներին եւ ակնկալիքներին եւ պետք է ապահովեն վկաների անվտանգությունը: Նրանք նաեւ պետք է կարողանան կիրառելի օրենքներին եւ կանոններին համապատասխան եւ մեծ ճշգրտությամբ զբաղվել հանցավոր ճանապարհով ստացված ակտիվների սառեցման, առգրավման, բռնագրավման եւ վերականգնման հետ կապված բարդ վարույթներով՝ լինի դա ի շահ պետության, տուժողների, թե երկուսի:

III. Ինստիտուցիոնալ պահանջներն ու երաշխիքները

Ա. Օրենսդրական շրջանակը, ռեսուրսները, բյուջեն, անձնակազմը

21. Հաշվի առնելով վերոհիշյալ բազմաթիվ մարտահրավերները՝ դատախազական ծառայությունը կարող է պատշաճ եւ համարժեք կերպով պայքարել կոռուպցիայի դեմ եւ բարձրացնել մարդկանց վստահությունը պետական հաստատությունների եւ մասնավոր առեւտրային հատվածի նկատմամբ միայն այն ժամանակ, երբ համապատասխան անդամ պետությունն ապահովում է սահմանադրական եւ այլ օրենսդրական հուսալի դաշտ, որը դատախազությանը թույլ է տալիս գործել որպես անկախ/ինքնավար հաստատություն եւ գործել արդյունավետորեն, թափանցիկ եւ հաշվետու

¹⁴ Հաճախ խոսքը վերաբերում է առանձնապես խոշոր ֆինանսական գումարներին:

¹⁵ Տե՛ս Դատախազների աշխատանքի, այդ թվում՝ ահաբեկչության եւ ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հարցում նրանց աշխատանքի որակի եւ արդյունավետության վերաբերյալ ԵՂԿԻՄԻ թիվ 11 (2016) կարծիքը:

ծելով՝ գերծ որելէ անհարկի քաղաքական կամ այլ արտաքին ազդեցությունից:

22. Քանի որ կոռուպցիայի եւ տնտեսական հանցագործությունների դեմ պայքարը կարող է լինել քաղաքական եւ այլ տեսանկյունից խնդրահարույց, չափազանց կարեւոր է, որ դատախազների հավաքագրման, առաջխաղացման/պաշտոնների բարձրացման եւ փոխադրման ներքին համակարգերով, ինչպես նաեւ կարգապահական ընթացակարգերով անհրաժեշտ երաշխիքներ եւ պաշտպանության միջոցներ առաջարկվեն անկախ, ինքնուրույն եւ թափանցիկ որոշումների կայացման համար, եւ որ դրանք ղեկավարվեն թափանցիկ եւ օբյեկտիվ չափանիշներով¹⁶:

23. Յուրաքանչյուր անդամ պետության պարտավորությունն է անհրաժեշտ ինստիտուցիոնալ, իրավական եւ գործառնական շրջանակ եւ մարդկային, ֆինանսական եւ տեխնիկական ռեսուրսներ ապահովելը՝ երաշխավորելու համար, որ կոռուպցիայի եւ տնտեսական հանցագործության նույնիսկ ամենաբարդ դեպքերում վերջնական որոշումները կայացվեն՝ անհարկի ճգճգումից խուսափելու համար եւ անհրաժեշտության դեպքում՝ մինչեւ օրենքով սահմանված ցանկացած վաղեմության ժամկետի ավարտը: Պետք է խուսափել ֆինանսական եւ մարդկային ռեսուրսների անբավարար քանակությամբ հատկացումից, որը կարող է լինել այն հիմնական պատճառներից մեկը, թե ինչու դատախազությունը կարող է կոռուպցիայի գործերով ուշ արձագանքել կամ մեղմ արձագանքել: Նույն եզրակացությունները վերաբերում են գործընթացին ներգրավված մյուս մարմիններին, ինչպիսիք են ոստիկանությունը, իրավապահ եւ վերահսկողություն իրականացնող մյուս մարմիններն ու դատարանները: Այս համատեքստում կոռուպցիայի դեմ պայքար մղելու համար նշանակված դատախազների թիվը պետք է հիմնված լինի տվյալ պետության համար այս հանցագործության կարեւորության, ինչպես նաեւ դատախազական ծառայության կարիքների գնահատման վրա:

24. Կոռուպցիոն բարդ գործերի քննությունն ու քրեական հետապնդումն իրականացնելու գործընթացի համար անհրաժեշտ է, որ նաեւ տրամադրվեն մասնավորապես ժամանակակից սարքավորումներ եւ այլ միջոցներ, ինչպիսիք են բարդ սարքաշարերի եւ ծրագրաշարերի հատկացումը դատախազական ծառայությանը¹⁷, ինչպես նաեւ բարձր մասնագիտական տնտեսական, բանկային եւ համակարգչային գիտելիքները:

25. Պետք է խրախուսվի իրավախախտման հետեւանքով առաջացած գույքը սառեցնելու, առգրավելու եւ բռնագրավելու դատավարական գործիքների արդյունավետ օգտագործումը դատախազական ծառայության կողմից, քանի որ «պաշտոնյա» հանցագործներից գույքն այդ կերպ հետ վերցնելը կունենա ոչ միայն ռեպրեսիվ, այլ նաեւ կանխարգելիչ եւ զսպող ազդեցություն: Բացի այդ, օրենսդրական կամ այլ կարգավորող փաստաթղթեր, որոնցով կոռուպցիայի համար վերջնականապես դատապարտված հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավորվում է հրաժարական տալ կամ պաշտոնից ազատվել եւ այլևս հանրային պաշտոն չզբաղեցնել առնվազն որոշակի ժամկետով, կարեւոր ռեպրեսիվ եւ կանխարգելիչ ազդեցություն ունեն:

26. Ակտիվների վերականգնման՝ հաճախ իրավաբանորեն եւ փաստացիորեն բարդ եւ ծանր գործընթացի համար անհրաժեշտ են բավականաչափ լավ մոտիվացված եւ պրոֆեսիոնալ համագործակցողներ: Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է տրամադրի անհրաժեշտ բյուջե՝ ապահովելու համար, որ դատախազական ծառայությունում պարբերաբար նշանակվեն բավարար թվով իրավասու դատախազներ եւ արդյունավետ ու պատշաճ վերապատրաստված օժանդակ անձնակազմ (քարտուղարներ եւ այլն) եւ փորձագետներ: ԵՂԳԽՄ-ն նշում է, որ մի քանի անդամ պետություններ կոռուպցիայի եւ հարակից տնտեսական ու ֆինանսական հանցագործությունների քննության ծախսերը վերաֆինանսավորում են «պաշտոնյաների» կողմից կատարված հանցագործությունից ստացված գույքի եւ ակտիվների վերականգնման միջոցով:

27. Որոշ անդամ երկրներում օրենքով թույլատրվում է իրավաբանական անձանց երթարկել քրեական պատասխանատվության: Մյուս անդամ պետություններում իրենց բարձրաստիճան պաշտոնյաների կողմից իրավաբանական անձանց օգտին կատարված հանցավոր արարքների համար իրավաբանական անձանց ենթարկում են վարչական կամ քաղաքացիական պատասխանատվության: Սա կարող է արդյունավետ լինել նաեւ իրավաբանական անձանց միջոցով գործող անձանց շրջանում կոռուպցիայի դեմ պայքարելու եւ կոռուպցիոն գործունեության մեջ սիստեմատիկ ներգրավված իրավաբանական անձին իր հանցավոր բնույթի եկամտից զրկելու համար: Ակտիվների բռնագրավման համար անհրաժեշտ են նաեւ վարչական եւ (կամ) քաղաքացիական մեխանիզմներ այն դեպքերում, երբ ապացույցները ցույց են տալիս, որ դրանք ձեռք են բերվել «պաշտոնյաների» կողմից կատարված հանցագործության միջոցով՝ հատկապես եկամուտները հարկային մարմիններից թաքցնելու դեպքում:

¹⁶ Ավելի մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Դատախազների անկախության, հաշվետվողականության եւ Եթիկայի վերաբերյալ ԵՂԳԽՄ-ի թիվ 13 (2018) կարծիքը, ii, iii եւ x առաջարկություններ:
¹⁷ Տե՛ս, օրինակ, Դատախազների անկախության, հաշվետվողականության եւ Եթիկայի վերաբերյալ ԵՂԳԽՄ-ի թիվ 13(2018) կարծիքը, պարբ. 45:

28. Զննությունն անցկացնելիս կամ քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս անհրաժեշտության դեպքում, ըստ դատական թույլտվության, դատախազները պետք է ունենան արդյունավետ հասանելիություն տեղեկատվության բոլոր համապատասխան աղբյուրներին, որոնք հաճախ պահվում են հանրային կամ մասնավոր տվյալների բազաներում: Ավելին, վճռորոշ նշանակություն ունի ապահովելը, որ դատախազական ծառայությունը հասանելիություն ունենա սեփականության եւ շահերի գրանցամատյաններին կամ պետական պաշտոնյաների եւ այլ անձանց կողմից ազգային օրենսդրության համաձայն պարբերաբար տրամադրվող ակտիվների վերաբերյալ հայտարարագրերին՝ պոտենցիալ հանցագործներին կոռուպցիոն բնույթի գործողություն կատարելուց հետո պահելու եւ այդպիսի արարք կատարած լինելու դեպքում նրանց պատասխանատվության ենթարկելու համար: Սա կարելու գործիք է գոյություն ունեցող կոռուպցիոն համակարգի կամ դրա հետ կապված հանցավոր մեխանիզմների բացահայտման համար: Բանկային գրառումները կամ հարկային տեղեկատվության հասանելիությունը նույնպես կարելուրագույն նշանակություն ունեն կոռուպցիոն դեպքերի արդյունավետ քրեական հետապնդման համար:

Բ. Կազմակերպչական մեխանիզմներն ու դատախազների մասնագիտացումը

29. ԵՂԳԽՆ-ն անդամ պետություններին խրախուսում է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ անհրաժեշտության դեպքում ապահովելու դատախազների եւ այլ շահագրգիռ կողմերի անաչառությունը, պրոֆեսիոնալիզմն ու մասնագիտացումը կոռուպցիայի դեմ պայքարում:

30. Չզալի թվով անդամ պետություններ ստեղծել են կենտրոնական հակակոռուպցիոն մարմիններ: Կախված ներքին պայմաններից՝ այս իշխանությունները, երբեմն բացառապես, ունեն նաեւ այս տեսակի հանցագործությունների քննության դատախազական իրավասություններ: Այլ երկրներում կոռուպցիայի դեմ պայքարում են ապակենտրոնացված, բայց մասնագիտացված դատախազությունները կամ առնվազն այդ դատախազություններում մասնագիտացած ստորաբաժանումները: Ի վերջո, փոքր դատախազական ծառայություններում առանձին դատախազները մասնագիտանում են ընդհանուր կոռուպցիայի դեմ պայքարում, ինչը պետք է նվազագույն չափանիշ համարվի այդ հանցագործություններով զբաղվող դատախազներից ակնկալվող վերոհիշյալ առանձնահատուկ պրոֆեսիոնալիզմը երաշխավորելու համար:

31. Կոռուպցիայի բարդ դեպքերի հետ աշխատելու համար դատախազների կողմից գործերի լավ կառավարումն անփոխարինելի է: Կախված կոնկրետ համակարգից՝ դատախազության կողմից իրականացվող քրեական հետապնդումները եւ անհրաժեշտության դեպքում քննությունները կարող են լինել կենտրոնացված: Սրանով չի բացառվում բարձր մակարդակի առանձնահատուկ բարդ եւ խնդրահարույց գործերով դատախազների թիմերի ձեւավորումը ինչպես նախաքննության, այնպես էլ դատավարության փուլում: Հաշվի առնելով, որ այդպիսի գործերը բարդ են եւ ժամանակատար, պետք է ապահովվի դատախազական ծառայության ներսում տեղեկությունների ամենանպատակահարմար եւ արդյունավետ հոսքը:

32. Լավագույն հնարավոր համագործակցությունը եւ տեղեկատվության հոսքը ոչ միայն դատախազական ծառայության ներքին նախապայմանն են, այլեւ շատ կարեւոր գործոն են դատախազական ծառայությունների եւ կոռուպցիայի դեմ պայքարում ներգրավված այլ շահագրգիռ կողմերի միջեւ հարաբերությունների համար: ԵՂԳԽՆ-ն ընդգծում է մի կողմից դատախազական ծառայության եւ մյուս կողմից՝ իրավապահ մարմինների, մաքսային, ֆինանսական հետախուզության ստորաբաժանումների եւ հարկային խարդախությունների քննության հարցերով ծառայությունների, վերահսկիչ հաստատությունների եւ այլնի միջեւ համագործակցության եւ համակարգման կարեւորությունը, որոնց պրոֆեսիոնալիզմն ու մասնագիտացումը նույնպես անփոխարինելի են:

33. Մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է կոռուպցիայի բարձր մակարդակի բարդ եւ խնդրահարույց գործերին, ապա անհրաժեշտ արտաքին փորձաքննությունը պետք է հասանելի լինի ներգրավված դատախազներին: Սա վերաբերում է, օրինակ, հաշվապահական հաշվեկշիռների կամ համակարգչային տվյալների բազաների եւ այլ մարմինների կողմից պահվող սարքավորումների վերլուծությանը: Տվյալ դեպքերում կարող է բավականին շահավետ լինել այդպիսի ոչ իրավաբանական ոլորտի փորձագետներին (երդվյալ հաշվապահներ եւ այլն) դատախազի հսկողության ներքո կոնկրետ գործի հատուկ ասպեկտի վրա աշխատող միջմասնագիտական թիմի անդամներ դարձնելը:

Գ. Գործերի եւ աշխատանքային ծանրաբեռնվածության բաշխումը

34. Որպես ընդհանուր կանոն, կոռուպցիոն բնույթի գործերի բաշխումը եւ աշխատանքային ծանրաբեռնվածության կարգավորումը պետք է իրականացվի ըստ բաշխման օբյեկտիվ համակարգի՝ գործերի բարդությանն ու հնարավոր դժվարությանը, ինչպես նաեւ դատախազների գիտելիքներին, կարողություններին եւ հմտություններին համապատասխան: Ավելին, այս գործերով զբաղվող դատախազները պետք է ստանան անհրաժեշտ աջակցություն, եւ նրանց պետք է տրվի բավարար ժամանակ այդ գործերի բարդությանը համապատասխան:

Դ. Զննության եւ քրեական հետապնդման պատշաճ եւ հարմարեցված գործիքներն ու ազդարարները

35. Բարձր մակարդակի կոռուպցիան իր բնույթով ծանր հանցագործություն է եւ կարող է իր մեջ ընդգրկել մի շարք քրեական իրավախախտումներ: Այդ իսկ պատճառով դատախազներին (եւ կամ) ոստիկանությանը՝ կախված համակարգից) օրինական քննչական գործիքների ամբողջ շարք, այդ թվում՝ հատուկ քննչական մեթոդ տրամադրելն անփոխարինելի է: Սրանում ներառվում է նաեւ համապատասխան տեխնոլոգիաների կիրառումը:

36. ԵՂԳԽՆ-ն, այնուամենայնիվ, ցանկանում է կրկնել, որ քննության արդյունքների ընդունման համար ժողովրդավարական հասարակության մեջ չափազանց կարեւոր է, որ հարկադրանքի միջոցներ եւ հատուկ քննչական մեթոդներ կիրառելիս խստորեն պահպանվեն անհրաժեշտության եւ համաչափության սկզբունքները՝ միաժամանակ դատախազության համար ապահովելով իրավաբանական անձանց հետ կապված քրեական քննության կամ վարչական քննության համար համապատասխան ապացույցներ գտնելու համար անհրաժեշտ բոլոր գործիքները: Պետք է խուսափել մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների ցանկացած անհամաչափ սահմանափակումից՝ տվյալ քննչական գործիքի¹⁸ կիրառման հստակ սահմաններ եւ չափանիշներ սահմանելով: Ամենաշատ միջամտություն ենթադրող միջոցառումները պետք է կախված լինեն անկախ դատական թույլտվությունից: Դատարանի կողմից այդպիսի միջոցառում նշանակվելու մասին որոշում կայացվելուց հետո քննությունը վարող դատախազական ծառայության խնդիրը վարույթի ցանկացած փուլում մանրամասն եւ մշտապես դիտարկելն է այն հարցը, թե արդյոք դեռեւս անհրաժեշտ է շարունակել միջոցառման կիրառումը:

37. Անդամ պետությունները պետք է ունենան խիստ կանոններ այն մասին, թե ինչպես պաշտպանել մարդկանց կոնկրետ հանցագործների եւ նրանց հանցավոր սխեմաների մասին ներքին տեղեկություններ ունեցող տվյալ մարմնից/կազմակերպությունից: Այս պոտենցիալ ազդարարները հաճախ առաջնային դեր են խաղում կոռուպցիայի դեպքերի բացահայտման գործում: Տեղեկատվության բացահայտման դեպքում նրանց ինքնությունը պետք է լինի պաշտպանված: Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ քրեական վարույթի ընթացքում հատկապես խոցելի վկաների պաշտպանության մասին դրույթներն անհրաժեշտության դեպքում կիրառելի լինեն նաեւ ազդարարների նկատմամբ հատկապես քննության փուլում: Սա կարող է ներառել, *ի թիվս այլնի*, տեղեկատվության աղբյուրների հետ աշխատելու հատուկ գաղտնի եղանակներ, որոնցով միշտ պաշտպանվում է մեղադրյալի արդար դատաքննության իրավունքը:

38. Այն պոտենցիալ ազդարարները, որոնք ցանկանում են տեղեկություններ բացահայտել, պետք է իմանան՝ ում դիմել, եւ ինչպես եւ ինչ պաշտպանական միջոցներ են կիրառվելու իրենց նկատմամբ: Դրա համար շատ օգտակար է դատախազական ծառայության հետ համագործակցության շրջանակներում կամ նրա հետ անմիջական համագործակցությամբ հատուկ կոնտակտային կետեր տրամադրելը եւ կոնտակտային տվյալները հանրությանը հասանելի դարձնելը: Անհրաժեշտ է նաեւ նշել, որ պոտենցիալ ազդարարները կարող են լինել իրենց իսկ կողմից բացահայտված հանցագործության հանցակից: Որոշ դեպքերում նրանց կարող է շնորհվել անձեռնմխելիություն կամ հատուկ ներում շնորհելու այլ ձեւեր, քանի որ տեղեկություններ բացահայտելով նրանք իրենց մեծ ռիսկի են ենթարկում: Ազդարարները պետք է հնարավորինս արագ տեղեկացվեն իրենց նկատմամբ կիրառվող պաշտպանական բոլոր միջոցների մասին:

Ե. Միջազգային համագործակցությունը

39. Շատ դեպքերում կատարված տնտեսական եւ ֆինանսական հանցագործությունը միջսահմանային բնույթ է կրում, որի համար անհրաժեշտ է մի քանի երկրների դատախազական ծառայությունների եւ իրավապահ մարմինների կամ միջազգային, այդ թվում՝ վերազգային մարմինների եւ համաշխարհային բանկային համակարգի համագործակցությունը: Հնարավոր է նաեւ, որ ֆինանսական վնասը չի սահմանափակվում միայն ազգային մակարդակով, այլ կարող է միաժամանակ ազդել մի քանի պետությունների, միջազգային, այդ թվում՝ վերազգային կազմակերպությունների (օրինակ՝ Եվրոպական միություն (ԵՄ)) եւ օտարերկրյա ֆիզիկական անձանց կամ կազմակերպությունների ֆինանսական շահերի վրա:

40. Հանցագործները, օրինակ, շահագրգռված են իրենց շահույթներն ու համապատասխան ապացույցները մեկ այլ երկրում կամ մի քանի երկրներում միաժամանակ պահելու հարցով: Հետեւաբար նրանք չպետք է կարողանան օգտվել պետությունների կամ նրանց տարբեր քրեական համակարգերի միջեւ համագործակցության գործիքների եւ դատավարական կանոնների բացակայությունից: Համապատասխանաբար չափազանց կարեւոր է, որ հանձնման եւ փոխադարձ իրավական աջակցության արդյունավետ մեխանիզմները թույլ տան անմիջական կապ եւ համագործակցություն հաստատել տարբեր

¹⁸ Տե՛ս Դատախազների աշխատանքի, այդ թվում՝ ահաբեկչության եւ ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հարցում նրանց աշխատանքի որակի եւ արդյունավետության վերաբերյալ ԵՂԳԽՆ թիվ 11 (2016) կարծիքը, պարբ. 65:

անդամ պետությունների դատախազական ծառայությունների միջեւ՝ միաժամանակ օգտագործելով հաղորդակցման ժամանակակից եւ բավականաչափ ապահովված մեթոդներ¹⁹:

41. Կոռուպցիայի դեմ պայքարի նկատմամբ լայնամասշտաբ ներդաշնակեցված մոտեցում ապահովելու համար ԵՂԳԽՆ-ն անդամ պետություններին կոչ է անում անհրաժեշտության դեպքում վավերացնել սույն կարծիքի շրջանակներում ամենակարեւոր միջազգային փաստաթղթերը:

42. ԵՂԳԽՆ-ն անդամ պետություններին առաջարկում է երկկողմ կամ բազմակողմ մակարդակով եւ անհրաժեշտության դեպքում ընդունել միջսահմանային կոռուպցիայի դեմ պայքարում անդամ պետությունների դատախազական ծառայությունների եւ իրավապահ մարմինների միջեւ գործնական համագործակցությունը դյուրացնելու նմանատիպ մեխանիզմներ եւ միջոցներ: ԵՂԳԽՆ-ն նշում է այս ուղղությամբ ՄԱԿ-ի թմրամիջոցների եւ հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (ՄԱԿ-ի ԹՅԴԳ), ԵՄ²⁰-ի եւ տարածաշրջանային (ենթատարածաշրջանային) այլ նախաձեռնությունների կողմից շարունակաբար գործադրվող ջանքերը: Ավելին, ԵՂԳԽՆ-ն ընդունում է այս համագործակցությանը նպաստող գործնական աջակցությունը, որը տրամադրվում է այնպիսի հաստատությունների կողմից, ինչպիսին է ԵՎՐԱԶԱՍԹԸ-ը, ինչպես նաեւ ոչ պաշտոնական կազմակերպությունների կողմից, ինչպիսին է Դատախազների միջազգային ասոցիացիան:

43. Բացի այդ, միջսահմանային գործերով հանցագործի շահույթն ի շահ պետության կամ բացահայտված տուժողների²¹ վերջնականապես առգրավելու նպատակով անդամ պետության կողմից մեկ այլ անդամ պետությունում գտնվող գույքի նկատմամբ տրված ժամանակավոր առգրավման եւ վերջնական բռնագրավման մասին որոշումների փոխադարձ ճանաչումը կամ փոխադարձ իրավական օգնության միջոցով կատարումը կարող է նպաստել հանցավոր ճանապարհով ձեռք բերված ակտիվների²² սառեցմանը, բռնագրավմանը եւ վերականգնմանը կամ հետ վերցնելուն:

44. Կոռուպցիայի դեմ արդյունավետորեն պայքարելու համար անդամ պետությունները պետք է միմյանց աջակցեն կոռուպցիոն բնույթի իրավախախտումները, այդ թվում՝ պետական պաշտոնյաների եւ շահագրգիռ այլ անձանց կողմից իրենց գույքի, շահույթի, ծախսերի եւ շահերի վերաբերյալ հայտարարություններում կեղծ եւ (կամ) անբավարար տեղեկություններ ներկայացնելու հետ կապված իրավախախտումները կանխելու, բացահայտելու եւ քննելու համար անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելու հարցում, նույնիսկ քրեական գործով քննության բացակայության դեպքում:

2. Թափանցիկությունը եւ դատախազների կապը լրատվամիջոցների հետ

45. Դատախազների գործառնությունների իրականացման հարցում թափանցիկությունն օրենքի զերակայության հիմնական բաղադրիչն է՝ արդար դատաքննության կարեւոր երաշխիքներից մեկը, եւ անհրաժեշտ է հանրության վստահությունն ու հավատն ապահովելու համար: Այսպիսով, դատախազական ծառայության գործունեությունը դրական լույսի ներքո ներկայացնելն արդարադատության համակարգի պատշաճ գործունեության նկատմամբ հանրային վստահության կարեւոր տարր է: Հանրության հետ դատախազական ծառայության բաց փոխգործակցությունը զարգացնելու համար ²³դատախազական ծառայությունը պետք է պրոակտիվ մոտեցում ցուցաբերի: Լրատվամիջոցների եւ հանրության կողմից դատախազների գործունեության վերաբերյալ տեղեկությունների առավելագույն օրինական հասանելիությունը նաեւ ծառայում է ժողովրդավարության եւ թափանցիկության ամրապնդմանը:

46. Դա հատկապես արդիական է, երբ խոսքը վերաբերում է կոռուպցիայի դեմ իսկապես կայուն

¹⁹ Տե՛ս Զրեական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության ամրապնդման միջոցների վերաբերյալ ԵՂԳԽՆ-ի թիվ 1 (2007) կարծիքը:

²⁰ Պետք է նաեւ նշել, որ ԵՄ-ն մշակել է հատուկ գործիքներ եւ մեխանիզմներ՝ միջսահմանային հանցավորության դեմ ամենարդյունավետ պայքարն ապահովելու եւ առավելապես՝ ԵՄ-ի ֆինանսական շահերի լավագույն հնարավոր պաշտպանությունն ապահովելու համար: Ներքին դատախազական ծառայություններն օգտվում են ՕԼԱՖ խարդախության դեմ պայքարի գրասենյակի, Եվրաջաթի, ինչպես նաեւ Զրեական գործերով եվրոպական դատական ցանցի գործնական աջակցությունից: Բավականին մոտ ապագայում Եվրոպական դատախազությունն ու անդամ պետություններում նրա համապատասխան գործընկերները կմտնեն այս ոլորտ: Բազմակողմ պայմանագրերը, ինչպիսին է Եվրոպական միության անդամ պետությունների միջեւ քրեական գործերով փոխադարձ օգնության մասին 2000 թվականի մայիսի 29-ի կոնվենցիան, ներդրել են քննության եւ քրեական հետապնդման նորարարական նոր գործիքներ, ինչպիսին է Համատեղ քննչական թիմերի (ՀՔԹ-ներ) ձեւավորումը՝ կազմակերպված համապատասխան միջսահմանային հանցագործությունների գործերով: Տե՛ս նաեւ «Զրեական գործերով քննության եվրոպական կարգի մասին» ԵՄ 2014 թվականի ապրիլի 3-ի թիվ 2014/41/ԵՄ հրահանգը:

²¹ Տե՛ս ԵՂԳԽՆ-ի թիվ 12 (2017) կարծիքը:

²² Տե՛ս, օրինակ, ԵՄ Խորհրդի 2003 թվականի հուլիսի 22-ի «Գույքը կամ ապացույցները սառեցնելու վերաբերյալ որոշումները Եվրոպական միությունում կատարելու մասին» 2003/577/ՄՆԳ շրջանակային որոշումը եւ ԵՄ 2018 թվականի նոյեմբերի 14-ի «Սառեցման եւ բռնագրավման մասին որոշումների փոխադարձ ճանաչման վերաբերյալ» թիվ 2018/1805 կանոնակարգը՝ Խորհրդի 2003/577/ՄՆԳ եւ 2006/783/ՄՆԳ շրջանակային որոշումներին համապատասխան:

²³ Տե՛ս Դատախազների եւ լրատվության միջոցների միջեւ հարաբերությունների վերաբերյալ ԵՂԳԽՆ-ի թիվ 8 (2013) կարծիքը, պարբ. 30-31:

եւ հաջող պայքարին: Կոռուպցիայի դեմ պայքարն իր բոլոր դրսեւորումներով եւ արմատապես հնարավոր է միայն այն դեպքում, երբ այն իրականացվում է բաց եւ թափանցիկ ձեւով, ինչպես նաեւ զերծ որեւէ անհարկի կամ անօրինական քաղաքական կամ այլ ազդեցությունից:

47. Սկզբունքորեն դատախազական ծառայությունները պետք է իրենց գործունեության բոլոր փուլերում կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ համապատասխան տեղեկություններ տրամադրեն լրատվամիջոցներին եւ հանրությանը, այդ թվում՝ իրենց կայքերի միջոցով: Միեւնույն ժամանակ դա պետք է արվի՝ պահպանելով անձնական տվյալների պաշտպանության, գաղտնիության, արժանապատվության, անմեղության կանխավարկածի վերաբերյալ իրավական դրույթները, դատավարության այլ մասնակիցների հետ հարաբերությունների էթիկական կանոնները, ինչպես նաեւ որոշակի տեղեկությունների բացահայտումը բացառող կամ սահմանափակող իրավական դրույթները հատկապես այն դեպքերում, երբ դա պահանջվում է քննության անվտանգությունն ու հետեւողականությունն ապահովելու համար²⁴:

IV. Անձին ներկայացվող պահանջներն ու երաշխիքները

Ա. Անձնական բարեվարքությունը, անկողմնակալությունը, անկախությունն ու պաշտպանությունը

48. Կոռուպցիոն գործերով զբաղվող դատախազները մասնագիտական առումով շատ խոցելի դիրքում են, եւ հետեւաբար առավել կարեւոր է, որ նրանք պահպանեն դատախազների մասնագիտական վարքագծի մասով առկա եվրոպական եւ միջազգային չափանիշները²⁵: Կարելու է չմոռանալ, որ բարձրաձայնված սկզբունքները վերաբերում են նաեւ դատախազների՝ պաշտոնից դուրս եւ մասնագիտական դերից դուրս դրսեւորած վարքագծին:

49. Դատախազները մասնավորապես պետք է ցուցաբերեն բացարձակ բարեվարքություն եւ չեզոքություն՝ գործելով ցանկացած տեսակի կողմնակալությունից, նախապատվություններից կամ գործոններից զերծ եւ առաջնորդվելով միայն օրենքով: Դատախազները պետք է նաեւ խուսափեն թե՛ արտաքին, թե՛ ներքին անհարկի ճնշման ռիսկից²⁶ եւ օգտվեն անկախ, ինքնուրույն եւ թափանցիկ որոշումներ կայացնելու երաշխիքներից: Նրանք պետք է լինեն, ինչպես նաեւ կողքից դիտվեն որպես անկողմնակալ իրենց որոշումներում, լինեն թափանցիկ, խուսափեն շահերի բախումից եւ չսատարեն քրեական եւ այլ վարույթներում որեւէ կողմի: Եթե վտանգ կա, որ դատախազը կարող է բավարար հեռավորություն չունենալ այդպիսի որեւէ կողմից, ապա նա պետք է ձեռնպահ մնա գործը վարելուց:

50. Այն դեպքերում, երբ դատախազների միջեւ կոռուպցիա է տեղի ունենում, քննությունը վարող դատախազը (դատախազները) պետք է խուսափի (խուսափեն) մեղադրյալի նկատմամբ արտոնյալ վերաբերմունքի ցանկացած տպավորություն թողնելուց կամ դրսեւորելուց՝ հարգելով օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքը:

51. Օրինական պատշաճ ընթացակարգի համաձայն՝ դատախազը պետք է հեռացվի կոռուպցիայի հետ կապված գործերից, երբ առկա է հնարավոր կողմնակալության, նախապատվության կամ շահերի բախման նշան: Սակայն այս իրավունքը չպետք է չարաշահվի, իսկ դատախազին հեռացնելու մասին որոշումները պետք է լինեն հիմնավորված եւ արձանագրված: Դատախազի կողմից գործն ակնհայտորեն ոչ պատշաճ վարելու դեպքում նրա նկատմամբ կարող է հարուցվել կարգապահական կամ կախված տվյալ իրավիճակից՝ քրեական վարույթ: Անհրաժեշտության դեպքում դատախազական ծառայության եւ նրա մարմինների ներսում պետք է լինեն շահերի ցանկացած բախում սահմանող եւ այդ բախումները կարգավորող մեխանիզմներ:

52. Անհարկի միջամտության դեպքում պետք է համապատասխան պաշտպանություն կիրառվի վարույթներում ներգրավված դատախազների եւ քննիչների եւ նրանց ընտանիքների նկատմամբ²⁷:

Բ. Հատուկ վերապատրաստում

53. Հատկապես բարձր են կոռուպցիայի դեմ պայքար մղող դատախազներին ներկայացվող մասնագիտական պահանջները: Հետեւաբար այդպիսի դատախազների համար առավել կարեւոր է իրենց

²⁴ Տես Դատախազների եւ լրատվության միջոցների միջեւ հարաբերությունների վերաբերյալ ԵԴԳԽԽ-ի թիվ 8 (2013) կարծիքը, պարբ. 38:

²⁵ Ինչպես շարադրված է Դատախազների անկախության, հաշվետվողականության եւ էթիկայի վերաբերյալ ԵԴԳԽԽ-ի թիվ 13(2018) կարծիքում: Այս առումով կենտրոնական գործիք է նաեւ այսպես կոչված «Բուդապեշտի ուղեցույցը», այսինքն՝ «Հանրային մեղադրողների էթիկայի եւ վարքագծի եվրոպական ուղեցույցը», որն ընդունվել է Գլխավոր դատախազների համաժողովի կողմից 2005 թվականի մայիսի 31-ին Բուդապեշտում՝ Եվրոպայի խորհրդի անունից, ԵԳԴՀ (2005) 05:

²⁶ Տե՛ս Դատախազների անկախության, հաշվետվողականության եւ էթիկայի վերաբերյալ ԵԴԳԽԽ-ի թիվ 13(2018) կարծիքը, պարբ. 53-56:

²⁷ Տե՛ս 1999 թվականի «Դատախազների մասնագիտական պատասխանատվության չափանիշները եւ հիմնական պարտականություններն ու իրավունքները» եւ Դատախազների միջազգային ասոցիացիայի (ԴՄԱ) կողմից 2008 թվականին մշակված՝ «Հանրային մեղադրողների եւ նրանց ընտանիքների անվտանգությանն ու պաշտպանությանն առնչվող նվազագույն չափանիշների մասին» հռչակագիրը:

հատուկ կարիքներին հնարավորինս հարմարեցված կանոնավոր ծառայողական վերապատրաստում անցնելը:

54. Այդպիսի վերապատրաստման շրջանակներում պետք է ներառվի նաև օրենսդրության եւ նախադեպային իրավունքի կատարելագործումը, ինչպես ներպետական զարգացումները, այնպես էլ միջազգային այնպիսի դատարանների դատական փորձը, ինչպիսիք են Մարդու իրավունքների եվրոպական դատարանը եւ համապատասխան դեպքերում՝ Առևտրային դատարանը եւ Արդարադատության եվրոպական դատարանը: Դատախազները պետք է նաև տեղյակ լինեն այս ոլորտում համապատասխան միջազգային մարմինների դերի եւ գործունեության, ինչպես նաև նրանց համապատասխան փաստաթղթերի եւ առաջարկությունների մասին:

55. Կոռուպցիայի կանխարգելումը, քննությունը եւ քրեական հետապնդումը հաճախ կրում են բազմամասնագիտական բնույթ: Հետեւաբար հակակոռուպցիոն եւ տնտեսական հանցագործությունների դեմ պայքարող դատախազների շարունակական վերապատրաստումը կարող է ներառել նաև այնպիսի հմտություններ, ինչպիսիք են հաշվապահական հաշվեկշիռները կարդալն ու հասկանալը, SS ընկալումը, բարձր ծրագրաշարերի հետ աշխատելը եւ այլն: Այդ նպատակով կարող են ներգրավվել դատախազական ծառայությունից դուրս գործող դասընթացավարներ եւ փորձագետներ: Տարբեր պետությունների դատախազական ծառայությունների միջև կոռուպցիայի դեմ պայքարում ձեռք բերած փորձի փոխանակումը կազմակերպելը կարող է գործնական կիրառություն ունենալ:

56. Սույն կարծիքի շրջանակներում դատախազները պետք է հատկապես սթրեսակայուն լինեն: Նրանք պետք է կարողանան գործ ունենալ շատ ծավալուն փաստաթղթերի եւ հատկապես փորձառու մեղադրյալների եւ պաշտպանների հետ: Մասնագիտական այրումից խուսափելու համար կարելի է, որ վերապատրաստումը ներառի նաև այսպես կոչված «միջանձնային շփման» հմտություններ, ինչպիսիք են սթրեսի կառավարումը, գործերի կառավարումը, քննադատական մտածողությունը, հիշողության մարզումը եւ աջակցության այլ համապատասխան ձևեր: Դատախազական թիմերի ղեկավարները նույնպես պետք է օգտվեն այդպիսի աջակցությունից, ինչպես նաև ղեկավարների համար նախատեսված համապատասխան վերապատրաստումից:

57. Ի վերջո, վերապատրաստման գործընթացը պետք է լրացվի աշխատավայրում ավելի ոչ ֆորմալ եւ ճկուն տարրերով: Դրանք կարող են ներառել հանդիպումներ եւ կլոր սեղաններ կոռուպցիայի դեմ պայքարող այլ հաստատությունների, պաշտոնյաների եւ փորձագետների հետ: ԵԴԳԽՄ-ն ընդգծում է այս առումով ցանցային կապի ավելացված արժեքը:

Գ. Մեղադրյալների իրավունքների նկատմամբ հարգանքը

58. Դատախազները պետք է խթանեն եւ հարգեն դատախազության եւ պաշտպանության միջև կողմերի հավասարության, անմեղության կանխավարկածի սկզբունքը, արդար դատաքննության իրավունքը, դատարանների անկախությունը, լիազորությունների տարանջատման եւ վերջնական դատական որոշումների պարտադիր ուժի սկզբունքները եւ համապատասխան միջազգային փաստաթղթերով ամրագրված մյուս կիրառելի իրավունքները:

59. Զննության եւ քրեական հետապնդման փուլերի ընթացքում դատախազը պետք է լիովին հարգի եւ պաշտպանի մեղադրյալների իրավունքները՝ հատկապես խստորեն հարգելով եւ կիրառելով անհրաժեշտության եւ համաչափության սկզբունքները: Սա առավել արդիական է, երբ խոսքը վերաբերում է հատուկ քննչական մեթոդներին. դրանք պետք է պահվեն առանձնահատուկ կարելորության եւ ծանրության քրեական գործերի համար²⁸:

60. Չնայած սույն կարծիքի շրջանակում ընդգրկված քրեական իրավախախտումների բարձր բնույթին՝ դատախազները պետք է ողջամիտ ժամկետում կայացնեն մեղադրական եզրակացություն կամ գործը կարճելու մասին որոշում: Ըստ այդմ, եթե մեղադրյալը գտնվում է նախնական կալանքի տակ, ապա եւ՛ քննությունը, եւ՛ դատաքննությունը պետք է անցկացվեն հնարավորինս արագ:

61. Կոռուպցիայի եւ հարակից հանցագործությունների գործերով մեղադրյալն ունի իր անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք եւ օգտվում է անմեղության կանխավարկածի սկզբունքից այնքանով, որքանով ցանկացած այլ մեղադրյալ: Գործը վարող դատախազը պետք է հարգի օրենքով սահմանված հավասար վերաբերմունքի սկզբունքը: Միեւնույն ժամանակ նա պետք է խուսափի մեղադրյալին անհարկի հրապարակայնության կամ հանրության կողմից մեղավորության ենթադրությունների ենթարկելուց:

Վ. Առաջարկություններ

²⁸ ԵԴԳԽՄ-ն վկայակոչում է նախորդ կարծիքներում եւ հատկապես Քրեական գործերով քննություններում դատախազների դերի վերաբերյալ թիվ 10 (2015) կարծիքում ներառված իր եզրակացությունները: Բացի այդ, ինչպես արդեն նշվել է սույն կարծիքի 36-րդ պարբերության մեջ, պետք է խուսափել հիմնարար իրավունքների եւ ազատությունների անհամաչափ սահմանափակումից՝ սահմանելով տվյալ քննչական գործի կիրառման հստակ սահմաններ եւ չափորոշիչներ:

Քանի որ՝

կոռուլացիայի համընդհանուր ընդունված սահմանում չկա, ԵՂԳԽՆ-ն գտնում է, որ «կոռուլացիա» եզրույթը սահմանելու լավագույն հղումը կարող է վերցվել Եվրոպայի խորհրդի Կոռուլացիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայից (ETS173), ինչպես այն կիրառվել է ԳՐԵԿՈ-ի կողմից: Դա նշանակում է, որ «կոռուլացիա»-ն այնպիսի հասկացություն է, որում ներառված են, կամ որն անդրադառնում է մի շարք քրեական իրավախախտումների, ինչպիսիք են ակտիվ եւ պասիվ կաշառակերությունը պետական եւ մասնավոր հատվածներում եւ ազդեցությունը շահադիտական նպատակներով օգտագործելը:

շատ դեպքերում կոռուլացիոն հանցագործությունները սերտորեն միախառնվում են տնտեսական եւ ֆինանսական հանցագործությունների այլ, հաճախ գաղտնի, երեւույթների հետ, ինչպիսիք են խարդախությունը, հարկային խարդախությունը, փողերի լվացումը, յուրացումները եւ այլն:

Հետեւաբար կոռուլացիայի դեմ արդյունավետ պայքարը պետք է ներառի նաեւ դրա հետ կապված այլ տնտեսական եւ ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարը:

բոլոր պատշաճ իրավական, օրենսդրական եւ այլ գործիքների օգտագործումը չափազանց կարեւոր է նախ եւ առաջ կոռուլացիայի եւ հարակից տնտեսական ու ֆինանսական հանցագործությունների կանխարգելման համար:

Վաստորեն կոռուլացիայի եւ հարակից տնտեսական ու ֆինանսական հանցագործությունների դեմ արդյունավետ պայքարը եւ այս տեսակի վարքագծի խիստ վնասակար ազդեցությունը հանրային վստահության, սոցիալական կայունության եւ տվյալ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաեւ բոլոր մարդկանց արդարության եւ օրենքի առաջ հավասարության սկզբունքների վրա ոչ միայն մեղավորներին պատասխանատվության ենթարկելու հարցն է, այլ հիմնականում այդպիսի իրավախախտումների կատարվելը կանխելու:

անհրաժեշտ է, որ թե՛ առհասարակ հասարակությունը, թե՛ կոռուլացիայի եւ հարակից քրեական իրավախախտումներով զբաղվող դատախազները մասնավորապես լիարժեքորեն գիտակցեն այդպիսի հանցագործությունների ծայրահեղ վնասակար բնույթը: Պետք է շարունակաբար պայքարել կոռուլացիայի նկատմամբ հանդուրժողականության դեմ:

ԵՂԳԽՆ-ն համաձայնել է հետեւյալ հիմնական առաջարկություններին.

1. Հաշվի առնելով, որ դատախազները կոռուլացիայի դեմ պայքարում բախվում են մի շարք առանձնահատուկ մարտահրավերների, անդամ պետությունները պետք է հետեւողական եւ համակարգված ջանքեր գործադրեն նրանց աշխատանքի համար բարենպաստ միջավայր ստեղծելու համար:

2. Կոռուլացիայի դեմ պայքարելու համար քաղաքական կամքը պետք է դրսևորվի հստակ եւ հետեւողական ձեւով եւ հաստատվի ամենաբարձր մակարդակով:

3. Անդամ պետությունները պետք է ստեղծեն սահմանադրական եւ օրենսդրական հուսալի դաշտ, որը դատախազությանը թույլ կտա գործել որպես անկախ/ինքնավար հաստատություն եւ գործել արդյունավետորեն, թափանցիկ եւ հաշվետու ձեւով՝ զերծ որեւէ անհարկի քաղաքական կամ այլ արտաքին ազդեցությունից:

4. Դատախազների հավաքագրման, առաջխաղացման/պաշտոնների բարձրացման եւ փոխադրման ներքին համակարգերով, ինչպես նաեւ կարգապահական ընթացակարգերով պետք է անհրաժեշտ երաշխիքներ եւ պաշտպանության միջոցներ առաջարկվեն անկախ, ինքնուրույն եւ թափանցիկ որոշումների կայացման համար եւ դրանք պետք է ղեկավարվեն թափանցիկ եւ օբյեկտիվ չափորոշիչներով:

5. Դատախազական ծառայություններին պետք է տրամադրվեն անհրաժեշտ ինստիտուցիոնալ, իրավական եւ գործառնական շրջանակ եւ մարդկային, ֆինանսական եւ տեխնիկական ռեսուրսներ՝ երաշխավորելու համար, որ կոռուլացիայի նույնիսկ ամենաբարդ դեպքերում վերջնական որոշումները կայացվում են առանց անհարկի ձգձգումների եւ մինչեւ օրենքով սահմանված ցանկացած վաղեմության ժամկետի ավարտը:

6. Անդամ պետությունները պետք է տրամադրեն անհրաժեշտ բյուջե՝ ապահովելու համար, որ դատախազական ծառայությունում հավաքագրվեն բավարար թվով իրավասու դատախազներ, եւ նշանակվեն արդյունավետ ու պատշաճ վերապատրաստված օժանդակ անձնակազմ (քարտուղարներ եւ այլն) եւ փորձագետներ, ինչպես նաեւ հասանելի լինեն անհրաժեշտ ժամանակակից սարքավորումներն ու այլ միջոցներ:

7. Դատախազներն ու դատախազական ծառայությունները պետք է կարողանան կիրառելի օրենքներին եւ կանոններին համապատասխան եւ մեծ ճշգրտությամբ զբաղվել հանցավոր ճանապարհով

ձեռք բերված ակտիվների սառեցման, առգրավման, բռնագրավման, վերականգնման եւ վերադարձման հետ կապված բարդ վարույթներով:

8. Պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ բոլոր միջոցառումները՝ ապահովելու համար կոռուպցիայի դեմ պայքարող դատախազների (եւ համապատասխան դեպքերում՝ այլ շահագրգիռ կողմերի) անաչառությունը, պրոֆեսիոնալիզմն ու մասնագիտացումը: Այդպիսի դատախազների համար առավել կարեւոր է կանոնավոր ծառայողական վերապատրաստում անցնելը:

9. Ընտություն անցկացնելիս կամ քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս անհրաժեշտության դեպքում, ըստ դատական թույլտվության, դատախազները պետք է ունենան արդյունավետ հասանելիություն տեղեկատվության բոլոր համապատասխան աղբյուրներին, որոնք հաճախ պահվում են հանրային կամ մասնավոր տվյալների բազաներում, ինչպիսիք են սեփականության եւ շահերի գրանցամատյանները կամ ակտիվների վերաբերյալ հայտարարագրերը, բանկային գրառումներն ու հարկային տեղեկությունները:

10. Ընտության եւ քրեական հետապնդման փուլում դատախազները պետք է խորապես հարգեն եւ պաշտպանեն մեղադրյալների իրավունքները՝ հատկապես խստորեն հարգելով եւ կիրառելով անհրաժեշտության եւ համաչափության սկզբունքները, մասնավորապես հարկադրանքի միջոցներ եւ հատուկ քննչական մեթոդներ կիրառելիս:

11. Կոռուպցիայի բարդ դեպքերի հետ աշխատելու համար դատախազների կողմից գործերի լավ կառավարումն անփոխարինելի է, եւ այն կարող է տարբեր ձեւերով դրսեւորվել, օրինակ՝ դատախազների մասնագիտացված խմբերի ստեղծում եւ դատախազական ծառայության ներսում տեղեկությունների ամենանպատակահարմար եւ արդյունավետ հոսքի ապահովում:

12. ԵՂԳԽԽ-ն ընդգծում է մի կողմից դատախազական ծառայությունների եւ մյուս կողմից՝ իրավապահ մարմինների, մաքսային, ֆինանսական հետախուզության ստորաբաժանումների եւ հարկային խարդախությունների քննության հարցերով ծառայությունների, վերահսկիչ հաստատությունների եւ այլնի միջեւ համագործակցության եւ համակարգման կարեւորությունը:

13. Անդամ պետությունները պետք է ունենան խիստ կանոններ այն մասին, թե ինչպես պաշտպանել կոնկրետ հանցագործների եւ նրանց հանցավոր սխեմաների մասին ներքին տեղեկություններ ունեցող մարդկանց: Պոտենցիալ ազդարարները հաճախ առաջնային դեր են խաղում կոռուպցիայի դեպքերի բացահայտման գործում: Տեղեկատվության բացահայտման դեպքում նրանց ինքնությունն ու բարոյական որակները պետք է լինեն պաշտպանված:

14. Անհարկի միջամտության դեպքում պետք է համապատասխան պաշտպանություն տրամադրվի վարույթներում ներգրավված դատախազներին եւ քննիչներին եւ նրանց ընտանիքներին:

15. Զանի որ կոռուպցիան հաճախ միջսահմանային բնույթ է կրում, չափազանց կարեւոր է, որ հանձնման եւ փոխադարձ իրավական աջակցության արդյունավետ մեխանիզմները թույլ տան անմիջական կապ եւ համագործակցություն հաստատել տարբեր անդամ պետությունների դատախազական ծառայությունների միջեւ, ներառյալ՝ տեղեկությունների փոխանակումը ոչ հանրային դերակատարների, քաղաքացիական հասարակության եւ հասարակական կազմակերպությունների հետ:

16. Կոռուպցիայի դեմ պայքարի նկատմամբ լայնամասշտաբ ներդաշնակեցված մոտեցում ապահովելու համար անդամ պետությունները պետք է անհրաժեշտության դեպքում վավերացնեն կոռուպցիայի դեմ պայքարի համար ամենակարեւոր միջազգային փաստաթղթերը:

Կարծիք թիվ 15 (2020)

Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի՝
ուղղված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին

Արտակարգ իրավիճակներում, մասնավորապես՝ համավարակի ժամանակ դատախազների դերը

I. Ներածություն. Կարծիքի նպատակը եւ շրջանակը

1. Նախարարների կոմիտեի կողմից իրեն վստահված լիազորությունների համաձայն՝ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԳԽԽ) պատրաստել է արտակարգ իրավիճակներում, մասնավորապես՝ համավարակի ժամանակ դատախազների դերի վերաբերյալ սույն կարծիքը:

2. Արդարադատության իրականացման ժամանակ օրենքի գերակայության ու մարդու իրավունքների պաշտպանությունն ստանձնած՝ արդյունավետ եւ ինքնավար գործող դատախազական ծառայությունը ժողովրդավարական պետության հիմնասյուներից մեկն է: Դատախազների՝ օրենքի գերակայությունը խթանելու եւ ամրապնդելու պատասխանատվությունն ունի բազմաթիվ ներհատուկ ասպեկտներ, որոնք լուրջ մարտահրավերներ են առաջացնում դատախազների համար: Այս մարտահրավերները հատկապես գործուն քանքեր են պահանջում արտակարգ իրավիճակների համատեքստում:

3. Վեներտիկի հանձնաժողովն արտակարգ դրությունը սահմանում է որպես ժամանակավոր իրավիճակ, երբ գործադիր մարմինն տրվում են բացառիկ լիազորություններ եւ կիրառվում են բացառիկ կանոններ՝ երկրի համար Էական սպառնալիք ներկայացնող արտակարգ իրավիճակին ի պատասխան եւ այդ իրավիճակի հաղթահարման նպատակով: Օրինակները ներառում են բնական աղետները, քաղաքացիական անկարգությունները, համաճարակները, զանգվածային ահաբեկչական հարձակումները, տնտեսական ճգնաժամը, պատերազմը եւ պատերազմի սպառնալիքները:¹

4. Հաշվի առնելով սա եւ նկատի ունենալով, որ դատախազների աշխատանքին եւ նրանց պարտականություններին առնչվող մարտահրավերներն առավել վճռական քանքեր են պահանջում արտակարգ իրավիճակների վերոնշյալ բոլոր օրինակների համատեքստում, ԵԴԳԽԽ-ն ցանկանում է, ստորեւ բացատրված պատճառներով, սույն կարծիքում կենտրոնանալ 2020 թվականին հայտարարված ԶՈՎԻԴ-19 համավարակի համատեքստում դատախազների դերի վրա: Այնուամենայնիվ, միջազգային եւ սահմանադրական համապատասխան դրույթների լույսի ներքո, Կարծիքում, ընդհանուր առմամբ, Նաեւ անդրադարձ է արվում արտակարգ իրավիճակներում դատախազների դերին², եւ դրա բովանդակությունը կարող է հետագայում տարածվել նմանատիպ իրավիճակների վրա:

5. ԶՈՎԻԴ-19 համավարակն առաջացրել է համաշխարհային առողջապահական ճգնաժամ՝ հանրային առողջության արտակարգ իրավիճակ՝

- ի տարբերություն ցանկացած այլ երեւոյթի, որին բախվել են մեկ դարից ավելի ժամանակահատված: Համավարակի դեմ պայքարի պատճառով աշխարհում ստեղծված աննախադեպ իրավիճակը Նույնքան աննախադեպ մարտահրավերներ է առաջացրել դատախազական ծառայության համար: Համավարակը զգալի ազդեցություն է ունեցել հասարակությունների, կառավարությունների, համայնքների, ընտանիքների եւ անհատների կյանքի, ապրուստի եւ կենսամակարդակի վրա: Բացի դրանից, սահմանափակող միջոցառումների ազդեցությունն ամենից շատ զգացել են առավել խոցելի խմբերը: Սոցիալական հեռավորության պահպանման եւ լրջառուկի միջոցառումների կիրառման անհրաժեշտությունը շատ դեպքերում հանգեցրել է դատարանների եւ դատախազական ծառայությունների աշխատանքի խաթարմանը, վարույթների ձգձգմանը եւ ազդել է դատավարական (օրինակ՝ նախնական կալանքի հետ կապված) ժամկետների վրա, այն նաեւ հանգեցրել է իրավաբանական օգնության, ինչպես նաեւ՝ հանրային եւ համայնքային ծառայությունների կասեցմանը կամ նվազմանը: Միջոցառումները զգալիորեն ազդել են միջազգային համագործակցության վրա: Համավարակի հետեւանքով հաճախ առաջացել է վարակված կամ վարակի հետեւանքով մահացած դատախազներին կամ դատախազական անձնակազմին փոխարինելու անհրաժեշտություն:

6. Հիմնական դասը, որը դատախազները քաղել են համավարակի ժամանակ, եւ որը կկիրառվի նաեւ հետագա այլ արտակարգ իրավիճակներում, այն է, որ համավարակի ընթացքում բավականին խորությամբ փորձության է ենթարկվել իրենց գործառույթներն արդյունավետորեն իրականացնելու եւ

¹ Տե՛ս Վեներտիկի հանձնաժողովի կարծիքը «Արտակարգ իրավիճակների ժամանակ ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ օրենքի գերակայության նկատմամբ հարգանքի վերաբերյալ», Ստրասբուրգ, 2020 թվականի մայիսի 26 (CDL-PI(2020)005rev), 5-րդ պարբերություն:

² Տե՛ս սույն կարծիքի II գլուխը:

իրենց պարտականությունները կատարելու նրանց կարողությունը, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում անդամ պետություններում կիրառելով Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ ՄԻԵԿ). նրանք կշարունակեն դասեր քաղել նաեւ համավարակի հետեւանքները վերացնելու ընթացքում (կամ վերականգնման ժամանակահատվածում):

7. Այնպիսի արտակարգ իրավիճակների հետեւանքով ներդրված սահմանափակումները, ինչպիսին օրինակ համավարակն է, կարող են ազդել ոչ միայն ՄԻԵԿ-ով պաշտպանվող քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների վրա, այլ նաեւ տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների վրա՝ հանգեցնելով այնպիսի որոշակի խմբերի նկատմամբ հավանական խտրականության, ինչպիսիք են բուժաշխատողները, ռասայական եւ էթնիկ փոքրամասնությունները. նաեւ հանգեցնելով ատելության խոսքի, ռասիզմի, այլաոյացության, փախստականների եւ ապաստան հայցողների դեմ իրականացվող հարձակումների եւ նրանց հարկադիր վերադարձի, օտարերկրացիների եւ միգրանտների նկատմամբ վատ վերաբերմունքի, սեռական եւ գենդերային բռնության, ընտանեկան բռնության, այդ թվում՝ կանանց եւ երեխաների նկատմամբ բռնության:³

8. Դատախազները կարող են կանգնել երկրնտրանքների առջեւ, որոնք առնչվում են նրանց առաքելությունն ուղղորդող ամենահիմնարար սկզբունքներն ու պահանջները գործնականում կիրառելուն, ինչպիսիք են օրինականությունը, համաչափությունը, հավասարությունն ու խտրականության բացառումը, ինչպես նաեւ որոշ միջոցների համարժեքությունը, անհրաժեշտությունն ու տեղողությունը գնահատելուն. երկրնտրանքները կարող են կապված լինել նաեւ այնպիսի գաղափարները գործնականում կիրառելու հետ, որոնք ոչ միայն անհրաժեշտ են սովորական ժամանակ, այլ կարելու են մարդու իրավունքների կասեցման կամ սահմանափակման դեպքում, օրինակ՝ հանրային առողջության նկատառումներից ելնելով:

9. Արդյունքում, դատախազները բախվել են հետեւյալ մարտահրավերին նրանք պետք է համոզվեն, որ իրենց աշխատանքի ընթացքում առողջապահության ոլորտում առաջացած արտակարգ իրավիճակներում ձեռնարկված միջոցառումները կիրառվում են մարդկանց պաշտպանելու համար, այլ ոչ թե որպես մարդու իրավունքների ոտնահարման պատրվակ, եւ որ նոր իրավական միջոցները կիրառվում են մարդու իրավունքները հարգելու պարտավորությունների խիստ պահպանմամբ:

10. Հետեւաբար, սույն կարծիքի նպատակն է որոշել, թե դատախազական ծառայություններն ինչպես կարող են առանց իրենց գործառնության ինքնավարությանը խոչընդոտելու իրենց առաքելությունը կատարել ամենաբարձր որակով եւ արդյունավետությամբ՝ հարգելով օրենքի գերակայությունը եւ մարդու իրավունքները, արտակարգ իրավիճակների, մասնավորապես՝ ԶՈՎԻԴ-19 համավարակի եւ դրա հետեւանքների համատեքստում:

11. Ինչպես ԵՂԳԽՆ-ն ընդգծել է իր նախկին կարծիքներում, Եվրոպայի խորհրդի անդամ պետություններն ունեն տարբեր իրավական համակարգեր, այդ թվում՝ դատախազական ծառայություններ: ԵՂԳԽՆ-ն հարգում է դրանցից յուրաքանչյուրի բազմատեսակությունը: Հետեւաբար, սույն կարծիքում քննարկված ոչ բոլոր տարրերը կարող են վերաբերել բոլոր անդամ պետություններին: Այնուամենայնիվ, այս կարծիքը հիմնականում վերաբերում է դատախազների այն մտահոգություններին, թե նրանք ինչպես կարող են հնարավորինս արդյունավետ աշխատել, նույնիսկ ամենադժվար հանգամանքներում՝ խուսափելով իրենց աշխատանքին անօրինական կամ անտեղի ցանկացած միջամտությունից եւ պահպանելով իրենց բոլոր գործողություններում ամենաբարձր որակը եւ խիստ հարգանքն օրենքի ու մարդու իրավունքների նկատմամբ:

12. Սույն կարծիքը պատրաստվել է ՄԻԵԿ-ի ⁴եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) համապատասխան նախադեպային իրավունքի, ինչպես նաեւ Եվրոպայի խորհրդի այլ փաստաթղթերի հիման վրա՝ ներառյալ Նախարարների կոմիտեի՝ «Զրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Rec(2000)19 առաջարկությունը եւ Նախարարների կոմիտեի՝ «Զրեական արդարադատության համակարգից դուրս դատախազության դերի մասին» Rec(2012)11 առաջարկությունը:

13. Այս կարծիքը հիմնված է նաեւ ԵՂԳԽՆ-ի նախորդ կարծիքների, մասնավորապես՝ Զրեական հետապնդման այլընտրանքների վերաբերյալ թիվ 2 (2008), Զրեաիրավական ոլորտից դուրս

³ Այս առումով ԵՂԳԽՆ-ն հիմնվում է սույն կարծիքի պատրաստման համար կազմված հարցաշարին անդամ պետությունների կողմից տրված պատասխանների վրա, տե՛ս պատասխանները, ինչպես նաեւ դրանց ժողովածուն (2020 թվականի հոկտեմբերի 7-ի CCPE(2020)1 փաստաթուղթ), տե՛ս հետեւյալ հղմամբ՝ <https://www.coe.int/en/web/ccpe/the-role-of-prosecutors-in-emergency-situations-in-particular-when-facing-a-pandemic>:

⁴ Այս կապակցությամբ տե՛ս 2020 թվականի սեպտեմբերին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մամուլի հետ կապերի բաժնի կողմից մշակված «Արտակարգ իրավիճակների ժամանակ տեղի ունեցող շեղում» տեղեկատվական թերթիկը (https://www.echr.coe.int/documents/fs_derogation_eng.pdf), որում ներառված է ՄԻԵԴ-ի հատուկ նշանակություն ունեցող գործերի ցանկը: Տեղեկատվական թերթիկի 2-րդ էջում «Փաստեր եւ ամսաթվեր» վերնագրի ներքո, նշված է նաեւ Եվրոպայի խորհրդի այն անդամ պետությունների թիվը, որոնք համավարակի պատճառով շեղվելով ՄԻԵԿ-ով սահմանված իրենց պարտավորություններից՝ փնջ այժմ դիմել են ՄԻԵԿ-ի 15-րդ հոդվածին:

դատախազական ծառայությունների դերի վերաբերյալ թիվ 3 (2008), Դատախազությունը եւ անչափահասների գործերով արդարադատությունը թիվ 5 (2010թ.), Դատախազների եւ բանտի վարչակազմի միջեւ հարաբերությունների վերաբերյալ թիվ 6 (2011թ.), Դատախազական ծառայությունների միջոցների կառավարման վերաբերյալ թիվ 7 (2012թ.), Դատախազների եւ լրատվության միջոցների միջեւ հարաբերությունների վերաբերյալ թիվ 8 (2013թ.), Դատախազներին առկա լինող եվրոպական նորմերի ու սկզբունքների վերաբերյալ թիվ 9 (2014)՝ ներառյալ «Հռոմի կանոնադրություն»-ը, Զրեական գործերով քննություններում դատախազների դերի վերաբերյալ թիվ 10 (2015), Դատախազների աշխատանքի, այդ թվում՝ ահաբեկչության եւ ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հարցում նրանց աշխատանքի որակի եւ արդյունավետության վերաբերյալ թիվ 11 (2016), Դատախազների անկախությունը, հաշվետվողականությունը եւ Էթիկան թիվ 13 (2018) կարծիքների, ինչպես նաեւ ԵԴԽԽ Նախագահի 2020 թվականի հունիսի 24-ի «Դատավորների դերը ԶՈՎԻՂ-19 համավարակի ընթացքում եւ դրանից հետո. քաղաճ դասեր եւ մարտահրավերներ» թեմայով հայտարարության, Վենետիկի հանձնաժողովի «Արտակարգ իրավիճակներում մարդու իրավունքների պաշտպանության մասին» եզրակացության (2006 թ.), Վենետիկի հանձնաժողովի «Արտակարգ իրավիճակների ժամանակ ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ օրենքի գերակայության նկատմամբ հարգանքի վերաբերյալ» կարծիքի (2020 թ.) եւ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի «Արտակարգ իրավիճակներում մարդու իրավունքների պաշտպանության մասին» 1659 (2009) բանաձեւի վրա:

14. Հաշվի են առնվել նաեւ Միավորված ազգերի կազմակերպության՝ Հանցագործության կանխարգելմանը եւ հանցագործություն կատարած անձանց հետ վարվելակերպին նվիրված ութերորդ համաժողովում ընդունված «Դատախազների դերի վերաբերյալ ուղեցույցը» (Հավանա, Կուբա, 1990 թվականի օգոստոսի 27-սեպտեմբերի 7), ինչպես նաեւ Դատախազների միջազգային ասոցիացիայի (ԴՄԱ) կողմից 1999 թվականին ընդունված «Դատախազների մասնագիտական պատասխանատվության չափանիշները եւ հիմնական պարտականություններն ու իրավունքները»⁵:

II. Արտակարգ իրավիճակներում կիրառվող միջազգային եւ սահմանադրական դրույթներն ու դրանց ազդեցությունը դատախազների աշխատանքի վրա

15. Անդամ պետությունների կողմից պատշաճ կերպով վավերացված պայմանագրերի միջազգային դրույթները կիրառվում են նրանց տարածքներում արտակարգ իրավիճակների դեպքում: Օրինակ, ՄԻԵԿ-ի 15-րդ հոդվածով սահմանվում է, որ ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրության ժամանակ անդամ պետությունները կարող են ձեռնարկել միջոցառումներ՝ ի շեղումն ՄԻԵԿ-ով ամրագրված իրենց պարտավորությունների՝ բացառապես այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը՝ պայմանով, որ նման միջոցառումներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրանց մյուս պարտավորությունների հետ: Նույնը վերաբերում է Միավորված ազգերի կազմակերպության «Զաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրին (ԶԶԻՄ) (Հոդված 4):⁶

16. Համաձայն այս միջազգային փաստաթղթերի եւ Սահմանադրությամբ կամ անդամ պետությունների համապատասխան օրենքներով ամրագրված դրույթների՝ թեեւ չկա արտակարգ դրություն հայտարարելու միասնական սահմանված մոդել, եւ հենց փաստացի իրավիճակով են որոշվում դրա իրական չափն ու հիմնավորումը, արտակարգ դրություն հայտարարելու համար անհրաժեշտ նախապայման է, որ համապատասխան օրենսդրությամբ նախատեսված լիազորությունները բավարար չլինեն արտակարգ դրությունը հաղթահարելու համար: Հետեւաբար, ցանկացած արտակարգ դրության վերջնական նպատակը պետք է լինի այն, որ պետությունը հաղթահարի արտակարգ դրությունը եւ հնարավորինս շուտ վերադառնա բնականոն իրավիճակին:⁷

17. ԵԴԽԽ-ն նշում է, որ անդամ պետություններում գոյություն ունեն արտակարգ իրավիճակներ հայտարարելու տարբեր մեխանիզմներ՝ կամ հիմնվելով սահմանադրության կամ սահմանադրական օրենքների վրա, կամ հիմնվելով հնարավոր արտակարգ իրավիճակների վերաբերյալ համապատասխան օրենսդրության վրա, կամ նույնիսկ արտակարգ միջոցառումներ ձեռնարկելու միջոցով՝ առանց պաշտոնապես արտակարգ դրություն հայտարարելու: ⁸Ամեն դեպքում, նախքան ՄԻԵԿ-

⁵ Տե՛ս նաեւ ԻՆՏԵՐՊՈՒԼ-ի «ԶՈՎԻՂ-19 համավարակ. Օրենքի կիրարկման ուղեցույցներ» 2020 թվականի մարտի 26, «Հանցագործության կանխարգելում եւ ոստիկանության պաշտպանություն. ԻՆՏԵՐՊՈՒԼ-ի «ԶՈՎԻՂ-19-ի գլոբալ սպառնալիքի գնահատում», 2020 թվականի ապրիլի 6, «ԶՈՎԻՂ-19-ի համատեքստում կոռուպցիոն ռիսկեր եւ օգտակար իրավական հղումներ». ԳՐԵԿՈ (2020)4, 2020 թվականի ապրիլի 15-ի փաստաթղթերը:

⁶ Տե՛ս CCPR/C/128/2 փաստաթուղթը, Սարդու իրավունքների կոմիտեի կողմից 2020 թվականի ապրիլի 24-ին ընդունված «Զուլիդ-19 համավարակի պատճառով Դաշնագրից արվող շեղումների մասին հայտարարությունը» (<https://www.ohchr.org/Documents/HRBodies/CCPR/COVIDstatementEN.pdf>)

⁷ Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի կարծիքը «Արտակարգ իրավիճակների ժամանակ ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ օրենքի գերակայության նկատմամբ հարգանքի վերաբերյալ», Ստրասբուրգ, 2020 թվականի մայիսի 26 (CDL-PI(2020)005rev), 5-րդ պարբերություն:

⁸ Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի կարծիքը «Արտակարգ իրավիճակների ժամանակ ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ օրենքի գերակայության նկատմամբ հարգանքի վերաբերյալ», Ստրասբուրգ, 2020 թվականի մայիսի 26 (CDL-PI(2020)005rev), 22-րդ

ով սահմանված իրավունքներից շեղվելը պետք է ակնկալել պաշտոնական հայտարարություն:

18. ԵՂԻՍԻ-ն նաեւ նշում է, որ ՄԻԵԿ-ի համաձայն՝ ցանկացած արտակարգ միջոցառում չպետք է անհամատեղելի լինի անդամ պետությունների՝ միջազգային իրավունքով ստանձնած այլ պարտավորությունների հետ, եւ, այս առումով ԶԶԻՄԴ-ը, որի կողմ են Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները, անդրադառնում է հանրային արտակարգ իրավիճակին, որի առկայության մասին պետք է պաշտոնապես հայտարարություն արվի: ⁹Այս առումով, այդպիսի պաշտոնական հայտարարության նշանակությունը կարող է տարբեր հետեւանքներ ունենալ անդամ պետություններում:

19. Ավելին, արտակարգ միջոցառումները պետք է հարգեն մարդու իրավունքները, պարտավորություններն ու ապահովեն, որ հանրային առողջության արտակարգ դրությունը չօգտագործվի որպես մարդու իրավունքների ոտնահարման պատրվակ: Պետք է հավասարակշռություն պահպանվի մի կողմից ազգային անվտանգության կամ հանրային անվտանգության (կամ երկուսի) եւ մյուս կողմից՝ հիմնարար իրավունքներից եւ ազատություններից օգտվելու միջեւ:¹⁰

20. Արտակարգ իրավիճակների ժամանակ միջոցառումների ընդունումը կարգավորող օրենսդրությամբ պետք է նախեւառաջ հարգվեն անքակտելի բոլոր իրավունքները, այսինքն՝ այն իրավունքները, որոնք որեւէ պարագայում որեւէ ազդեցության չեն ենթարկվում^{11,12}:

21. Այլ իրավունքների ու ազատությունների վրա ազդող օրենսդրությունը պետք է հիմնված լինի, առաջին հերթին, օրենքի գերակայության գերակա սկզբունքի եւ անհրաժեշտության, համարժեքության, հավասարության եւ խտրականության բացառման, համաչափության, ժամանակավորության, արդյունավետ (խորհրդարանական եւ դատական) վերահսկողության սկզբունքների, արտակարգ իրավիճակների վերաբերյալ օրենսդրության կանխատեսելիության եւ պետական կառույցների միջեւ հավասարիմ համագործակցության վրա:¹³

22. Սա անհրաժեշտ է հիմնարար իրավունքներն ու ազատություններն անհրաժեշտ սահմանափակող միջոցառումների հետ հավասարակշռության մեջ պահելու եւ դրանով իսկ ցանկացած հակասական իրավունքների եւ հակասական իրավիճակների անդրադառնալու համար՝ միաժամանակ դիմակայելով արտակարգ իրավիճակների հետեւանքներին եւ նախապատրաստվելով հետագա արտակարգ իրավիճակներին, այդ թվում՝ զարգացնելով դատախազների եւ դատախազության անձնակազմի արդյունավետ աշխատանքի հնարավորությունները, ինչպես նաեւ գտնելով նոր ուղիներ հրատապ մարտահրավերներին արձագանքելու համար:

23. Արտակարգ միջոցառումներ ընդունելիս պետք է հստակ սահմանվի, թե անդամ պետության տարածքի որ հատվածի նկատմամբ են դրանք կիրառվում, որքան ժամանակով, եւ, ամենակարեւորը, երբ

պարբերություն:

⁹ Տե՛ս ԶԶԻՄԴ-ի հոդված 4(1)-ը:

¹⁰ Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի «Արտակարգ իրավիճակներում մարդու իրավունքների պաշտպանության մասին եզրակացությունը», որն ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 66-րդ լիազուրկար նիստում (Վենետիկ, 2006 թվականի մարտի 17-18):

¹¹ Տե՛ս 2020 թվականի սեպտեմբերին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մամուլի հետ կապերի բաժնի կողմից մշակված «Արտակարգ իրավիճակների ժամանակ տեղի ունեցող շեղում» տեղեկատվական թերթիկը (https://www.echr.coe.int/documents/fs_derogation_eng.pdf): ՄԻԵԿ-ի 15-րդ հոդվածի 2-րդ կետով արգելվում է կյանքի իրավունքի մասով որեւէ շեղում կատարելը, բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների, խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելման, ստրկության եւ անազատ վիճակում պահելու արգելման եւ «Պատիժ բացառապես օրենքի հիման վրա» կանոնի համատեքստում. նույն կերպ չի կարող շեղում կատարվել Կոնվենցիայի թիվ 6 Արձանագրության 1-ին հոդվածից (մահապատժի վերացումը խաղաղ պայմաններում), Կոնվենցիայի թիվ 13 Արձանագրության 1-ին հոդվածից (մահապատժի վերացումը բոլոր պարագաներում) եւ Կոնվենցիայի թիվ 7 Արձանագրության 4-րդ հոդվածից (կրկին անգամ չդատվելու եւ չպատժվելու իրավունքը): Համավարակի մասով կարելու է «առանց համաձայնության բժշկական կամ գիտական փորձերից» ազատությունը:

¹² Տե՛ս CCPR/C/128/2 փաստաթուղթը, Մարդու իրավունքների կոմիտեի կողմից 2020 թվականի ապրիլի 24-ին ընդունված «Զուլիդ-19 համավարակի պատճառով Դաշնագրից արվող շեղումների մասին հայտարարությունը»՝ «Կողմ հանդիսացող պետությունները չեն կարող դիմել արտակարգ լիազորությունների կամ կիրառել նսեմացնող միջոցառումներ այնպիսի ձեւով, որը խտրական է, կամ որով խախտվում են այլ պարտավորությունները, որոնք իրենք ստանձնել են միջազգային իրավունքով, այդ թվում՝ մարդու իրավունքների վերաբերյալ այլ միջազգային պայմանագրերով, որոնցից որեւէ շեղում չի թույլատրվում: Կողմ հանդիսացող պետությունները նաեւ չեն կարող շեղվել Դաշնագրի՝ շեղման ոչ ենթակա դրույթներից՝ 6-րդ հոդվածից (կյանքի իրավունք), 7-րդ հոդվածից (խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը կամ առանց անձի ազատ արտահայտված համաձայնության՝ բժշկական կամ գիտական փորձերի ենթարկվելու արգելքը), 8-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ պարբերություններից (ստրկության, ստրկավաճառության եւ անազատ վիճակում պահելու արգելքը), 11-րդ հոդվածից (պայմանագրային պարտավորությունների կատարումը չկարողանալու հիման վրա ազատագրվման արգելքը), 15-րդ հոդվածից (քրեաիրավական ոլորտում օրինականության սկզբունքը), 16-րդ հոդվածից (յուրաքանչյուր մարդ ունի իր իրավասությունները ճանաչման իրավունք) եւ 18-րդ հոդվածից (մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունք), կամ այլ իրավունքներից, որոնք եսական են վերոհիշյալ դրույթներում նշված՝ անքակտելի իրավունքների պահպանման եւ օրենքի գերակայության եւ օրինականության սկզբունքի նկատմամբ հարգանքն ապահովելու համար՝ նույնիսկ արտակարգ դրության ժամանակ, ներառյալ դատարանի մատչելիության իրավունքը, պատշաճ դատավարության երաշխիքները եւ տուժածների՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոց ստանալու իրավունքը»:

¹³ Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի կարծիքը «Արտակարգ իրավիճակների ժամանակ ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ օրենքի գերակայության նկատմամբ հարգանքի վերաբերյալ», Ստրասբուրգ, 2020 թվականի մայիսի 26 (CDL-PI(2020)005rev), 6-16-րդ պարբերություններ:

եւ ինչպես է դադարում արտակարգ իրավիճակը (օրինակ՝ ժամկետի ավարտի մասին դրույթ ներառելու միջոցով):¹⁴

24. Հաշվի առնելով անդամ պետություններում համակարգերի եւ մեխանիզմների բազմազանությունը՝ ԵՂԳԽՆ-ն այն կարծիքին է, որ հատկապես օգտակար կլինեն եվրոպական երկրներում արտակարգ իրավիճակների նկատմամբ վերոնշյալ սկզբունքների վրա հիմնված միասնական մոտեցում ունենալը:

25. Սա միջազգային փաստաթղթերով եւ ներպետական օրենսդրությամբ իստեգրված իրավական այն դաշտն է, որտեղ դատախազական ծառայությունները պետք է կարողանան գործել արտակարգ իրավիճակների ժամանակ: Հետեւաբար, դատախազները պետք է տեղյակ լինեն այն իրավիճակների եւ հնարավոր զարգացումների մասին, որոնց դեպքում սահմանափակող միջոցառումները հատկապես բացասաբար են անդրադառնում հիմնարար իրավունքների եւ ազատությունները վրա: Այդպիսի սահմանափակումների կիրառման չարաշահումից խուսափելու, ինչպես նաեւ որեւէ կերպ, ներառյալ փաստացիորեն, անքակտելի իրավունքների սահմանափակումից խուսափելու համար կարող են սահմանվել բողոքների պարզ եւ արդյունավետ ընթացակարգեր, այդ թվում՝ ոչ ֆորմալ ընթացակարգեր, որտեղ *դա կարող է կիրառելի լինել, մասնավորապես, երբ դատարանները կարող են ամբողջությամբ մատչելի չլինել՝ առողջական պատճառներով* նրանց գործունեության սահմանափակման հետեւանքով:

III. Արտակարգ իրավիճակներում դատախազական ծառայությունների եւ դատախազների սովորական գործառույթների իրականացումը

Ա. Դատախազական ծառայությունների եւ դատախազների գործառույթների իրականացումը քրեաիրավական ոլորտում

26. Նույն կերպ, ինչպես պետք է պաշտպանված լինեն դատական համակարգի ամբողջականությունը, ներառյալ դրա իրավասությունները, անկախությունը եւ անկողմնակալությունը, հատկապես դատարան դիմելու եւ արտակարգ իրավիճակներում մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի առնչությամբ, այնպես էլ պետք է պաշտպանված լինի դատախազական ծառայության եւ դրա կազմակերպման ամբողջականությունը՝ ելնելով նույն հիմնավորումից, քանի որ դա արտակարգ իրավիճակում արդարադատության համակարգի գործառույթները երաշխավորելու միակ միջոցն է:¹⁵

27. ԵՂԳԽՆ-ն արդեն ընդգծել է, որ հասարակության շահերից է բխում, որպեսզի օրենքի գերակայությունը երաշխավորվի արդարադատության արդար, անաչառ եւ արդյունավետ իրականացմամբ: Դատախազներն ու դատավորները վարույթի բոլոր փուլերում պետք է ապահովեն, որ երաշխավորվեն անհատների իրավունքները եւ ազատությունները: Սա ենթադրում է հարգանք մեղադրյալների եւ տուժողների հիմնարար իրավունքների նկատմամբ:¹⁶

28. Ինչ վերաբերում է արտակարգ իրավիճակների¹⁷ ժամանակ դատախազական ծառայությունների գործունեության հատուկ ձեւերին եւ միջամտություններին, ապա դրանք, ինչպես նաեւ դատարանները, պետք է շարունակվեն գործել¹⁸ անհետաձգելի հարցերին լուծում տալու համար՝ միաժամանակ ապահովելով դրանց համապատասխան պաշտպանությունը, ինչպես հիվանդությունների համավարակի դեպքում, նույնիսկ այն ժամանակ, երբ որոշ ոչ հրատապ գործեր կարող են հետաձգվել:

29. Ակնհայտ է, որ ինչպես դատախազական ծառայությունների, այնպես էլ դատարանների գործունեությունը պետք է հարմարեցվի արտակարգ իրավիճակների հետեւանքով առաջացած հանգամանքներին: Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների դատական համակարգում նոր տեխնոլոգիաների զարգացումը եւ տեսակոնֆերանսների անցկացման համակարգերի կայուն կատարելագործումը նոր հնարավորություններ են ստեղծել վկաների, փորձագետների եւ մեղադրյալների լուծումներն ապահովելու համար՝ առանց նրանց ստիպելու մեկնել անդամ պետության¹⁹ տարբեր վայրեր,

¹⁴ Ժամկետի ավարտի մասին դրույթն օրենքի դրույթ է այն մասին, որ այն ինքնաբերաբար կդադարի որոշակի սահմանված ժամկետից հետո, եթե այն չեղարկվի օրենքով:

¹⁵ Ինչպես նշված է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի «Արտակարգ իրավիճակներում մարդու իրավունքների պաշտպանության մասին» 1659 (2009) Բանաձեւում:

¹⁶ Տե՛ս ԵՂԳԽՆ-ի ԹԻՎ 4 (2009) եւ Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵՂԽՆ) ԹԻՎ 12 (2009) համատեղ կարծիքը «Ժողովրդավարական հասարակությունում դատավորների եւ դատախազների միջեւ հարաբերությունների վերաբերյալ», ներառյալ Բորդոյի հռչակագիրը, Հռչակագրի 1-ին բաժինը:

¹⁷ Պորտուգալիայի դեպքում Գլխավոր դատախազությունն արտակարգ իրավիճակի ամբողջ ընթացքում մշտապես նիստեր է հրավիրում պաշտպանելու համար օրինականության սկզբունքն ու քաղաքացիների իրավունքները, ինչպես անում է նաեւ Օմբուդսմենը (44/86 Օրենքի 18-րդ, 2-րդ հոդվածներ):

¹⁸ Ինչպես, օրինակ, Պորտուգալիայում է (տե՛ս Պորտուգալիայի 44/86 օրենքի 22-րդ հոդվածը):

¹⁹ Որպես օրինակ՝ Իռլանդիայում ներդրվել է դատարանների կողմից էլեկտրոնային փոստով ծանուցումների համակարգ՝ ընթացակարգի վերաբերյալ համաձայնությունների ընդունումն ապահովելու համար:

որտեղ ընթանում է գործի քննությունը կամ դատավարությունը:²⁰

30. Ակնհայտորեն, ինչպես ցույց են տալիս Եվրոպայում որոշ օրինակներ,²¹ այս մոտեցումը կարող է ավելի մեծ հետաքրքրություն առաջացնել արտակարգ իրավիճակների դեպքում՝ խուսափելով դատախազական ծառայությունների եւ դատարանների գործունեության սահմանափակումներից կամ նվազեցնելով այդ սահմանափակումները: Վարակից պաշտպանվածությունն ապահովելով եւ կողմերի լիարժեք մասնակցությունը թույլատրող լուծումները հեշտացնելով՝ նպատակը պետք է լինի հեռավար վարույթներն ու լուծումները դատախազական ծառայությունների եւ դատարանի սովորական գործելաձևին հնարավորինս մոտեցնելը:

31. Իր նախադեպային իրավունքում ՄԻԵԴ-ը սահմանել է նաեւ, որ պարտադիր չէ, որ ֆիզիկական բացակայությունն արդար դատաքննության իրավունքի խախտում լինի: Դատարանը մատնանշել է միջազգային իրավունքի մի քանի փաստաթղթեր, որոնք նախատեսում են մասնակցություն դատավարությանը՝ օգտագործելով տեսակոնֆերանսը՝ որպես ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածը²² հարգելու միջոց, եւ կայացրել է մի քանի վճիռներ տեսակոնֆերանսի օգտագործման վերաբերյալ:²³

32. ԵՂԳԽՆ-ն ցանկանում է ընդգծել, որ դատարաններում տեսակոնֆերանսի տարբերակից օգտվելիս պետք է պատշաճ ուշադրություն դարձնել բոլոր մասնակիցների շահերին, մասնավորապես՝ պաշտպանության կողմի իրավունքների պահպանմանը:

33. Ինչ վերաբերում է դատական նիստերի ինտերնետային հեռարձակմանը, ապա սովորական պայմաններում ինտերնետային հեռարձակումն օգտագործվում է ավելի լայն լսարանին հասանելիություն ունենալու եւ հասարակական կյանքի՝ դատարանների կողմից շոշափվող կողմերի նկատմամբ ավելի մեծ հետաքրքրություն խրախուսելու համար: Համապատասխանաբար, երբ խոսքը վերաբերում է արտակարգ իրավիճակին, ինտերնետային հեռարձակումն ավելի արդարացված է ոչ միայն քաղաքացիական ներգրավվածության տեսանկյունից, այլև հստակ ցույց տալու համար, որ արդարադատությունն իրականացվում է բաց եւ հրապարակային ձևով:

34. Արտակարգ իրավիճակի պատճառով դատավարական ժամկետների ցանկացած կասեցում կամ երկարաձգում պետք է հստակ ամրագրված լինի օրենքում, լինի արտակարգ իրավիճակի տեղողությանը համաչափ եւ չխախտի դատավարությունների ողջամիտ ժամկետների պահանջները (բացառությամբ հրատապ դեպքերի կամ մարդու իրավունքների հետ կապված կարեւոր հարցեր վերհանող դեպքերի, մասնավորապես՝ շեղման ոչ ենթակա իրավունքների մասով):²⁴ Բացի դրանից, պետք է խուսափել նաեւ ժամկետների հնարավոր կրճատումներից այնքանով, որքանով կարող են խախտվել արդար դատաքննության իրավունքները:

35. Կարող են նախատեսվել դատախազական ծառայության շրջանակներում կենտրոնական, տարածաշրջանային եւ տեղական մակարդակով ճգնաժամային արձագանքման խմբերի ստեղծում, ինչպես նաեւ այլ կազմակերպական միջոցառումներ, որոնք ուղղված են անդամ պետությունում որոշակի իրավիճակներին դատախազների հարմարվելուն: Դատախազական ծառայությունները բոլոր դատախազներին պետք է փոխանցեն հարմարվելու անհրաժեշտության մասին ծանուցումը եւ բարձրացնեն նոր հանգամանքների ու նոր միջոցառումների մասին իրազեկվածությունը:

36. Յուրաքանչյուր անդամ պետության դատախազության համակարգի համաձայն՝ դատախազության կողմից կենտրոնական մակարդակով պետք է տրվեն ուղեցույցներ՝ ընդգծելով հատուկ

²⁰ Բացառությամբ, իհարկե, որոշ դեպքերի, երբ ֆիզիկական ներկայությունը կարող է անհրաժեշտ լինել, ինչպես, օրինակ, կալանքի տակ պահելու *[habeas corpus]* դեպքում:

²¹ Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Ձաղաքացիական եւ վարչական վարույթներում էլեկտրոնային ապացույցների վերաբերյալ» ուղեցույցները (ընդունվել է 2019 թվականի հունվարի 30-ին, CM(2018)169-add1final). տե՛ս նաեւ «Համավարակի ընթացքում եւ դրանից հետո արդարադատության մատչելիության վերաբերյալ» CEELI/ODIHR համատեղ վեբինարների շարքը, ներառյալ տեսակոնֆերանսների հնարավորությունը՝ ի աջակցություն դատարանների հեռավար մատչելիության, տե՛ս հետեւյալ հղմամբ՝ <https://ceeliinstitute.org/webinars/>: Բացի դրանից, օրինակ, Իտալիայում, մաֆիայի գործերով կասկածյալների դեմ ընթացող դատավարությունների անվտանգությունը պատճառ դարձավ 1992 թվականին քրեական վարույթներում տեսակոնֆերանսներ անցկացնելու հնարավորություն ներդնելու համար: Այս իրավական կարգավորումն զգալիորեն ընդլայնվել է 1998 թվականին: Գերմանիայում կիրառվում է տեսակոնֆերանսի եւ այլ միջոցով լսելի լինելու կարգավորում այն վկաների համար, որոնք բարեկեցությունը կարող է վտանգվել, եթե նրանք ֆիզիկապես ներկա գտնվեն վարույթին:

²² Տե՛ս Մարչելո Վիոլան ընդդեմ Իտալիայի *[Marcello Viola v. Italy]* գործով ՄԻԵԴ-ի 2006 թվականի հոկտեմբերի 5-ի վճիռը (<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-77246>):

²³ Տե՛ս Մարչելո Վիոլան ընդդեմ Իտալիայի գործով ՄԻԵԴ-ի 2006 թվականի հոկտեմբերի 5-ի վճիռը (<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-77246>), Սախնովսկին ընդդեմ Ռուսաստանի *[Sakhnovskiy v. Russia]*, Մեծ Պալատ - 2010 թվականի նոյեմբերի 2 (<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-101568>), Ռեպաշկին ընդդեմ Ռուսաստանի *[Repashkin v. Russia]* (Թիվ 2), 2010 թվականի դեկտեմբերի 16 (<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-102282>), Վլադիմիր Վասիլյեւ ընդդեմ Ռուսաստանի *[Vladimir Vasilyev v. Russia]* - 2012 թվականի հունվարի 10 (<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-108478>), Եվդոկիմովը եւ այլք ընդդեմ Ռուսաստանի *[Yevdokimov and Others v. Russia]* - 2016 թվականի փետրվարի 16 (<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-160620>), Գորբաչովն ընդդեմ Ռուսաստանի *[Gorbunov and Gorbachev v. Russia]* - 2016 թվականի մարտի 1 (<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-160993>), Սախնովսկին ընդդեմ Ռուսաստանի *[Sakhnovskiy v. Russia]*, 2018 թվականի նոյեմբերի 27 (<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-187831>):

²⁴ Օրինակ՝ Պորտուգալիայի 2020 թվականի մարտի 13-ի 10-Ա/2020 Հրամանագիր-օրենքը, մարտի 19-ի 1-Ա/2020 օրենքը, ապրիլի 6-ի 4-Ա/2020 օրենքը:

արտակարգ իրավիճակներում համագործակցության մեխանիզմներն ինչպես դատախազական ծառայության ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս: Եթե դատախազական ծառայությունների կազմակերպական կառուցվածքի պատճառով կենտրոնական մակարդակի ուղեցույցները հնարավոր չեն, ապա դրանք պետք է առնվազն ձգտեն համահունչ լինել տարբեր դատախազություններում: Օրենքի եւ կանոնակարգերի կիրառման միատեսակությունն ակնկալվում է շահագրգիռ պետությունների ամբողջ տարածքում դատախազների եւ դատախազական ծառայությունների կողմից:

37. Արտակարգ իրավիճակների ժամանակ կարող են սահմանվել համագործակցության եւ համակարգման հատուկ մեխանիզմներ եւ ընթացակարգեր այնպիսի այլ հաստատությունների հետ, ինչպիսիք են իրավապահ մարմինները, քննություն եւ հսկողություն իրականացնող մարմինները, դատարանները, առողջապահական հաստատությունները, զանգվածային լրատվության միջոցները, դատախազների մասնագիտական ասոցիացիաները եւ քաղաքացիական հասարակության այլ կազմակերպությունները: Համագործակցության եւ համակարգման աշխատանքների համար կարող են անհրաժեշտ լինել այնպիսի անձնակազմ եւ այլ համապատասխան գործակալություններ, որոնք սովորական իրավիճակում պարտադիր չէ, որ կապի մեջ լինեն դատախազական ծառայությունների հետ:

38. Քննությունների անցկացումը կամ ոստիկանության եւ այլ քննչական մարմինների կողմից դրանց նկատմամբ վերահսկողությունը պետք է իրականացվեն արտակարգ իրավիճակների համատեքստում մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության վերահսկման նկատմամբ առանձնահատուկ զգուշությամբ: Այստեղ նախատեսված չեն դատախազական ծառայությունների ընդլայնված լիազորություններ, փոխարենը այսպիսի իրավիճակներում պետք է առավելագույնս օգտագործվեն արդեն իսկ գոյություն ունեցող լիազորությունները:

39. Այս համատեքստում պետք է արդյունավետ օգնություն եւ/կամ պաշտպանություն տրամադրել տուժածներին, վրաներին եւ այլ խոցելի խմբերին, իսկ քրեական վարույթի ընթացքում պետք է հարգվեն մեղադրյալների իրավունքները: Դատախազական ծառայությունները եւ դատախազները պետք է հատկապես վերահսկեն, թե արդյոք արտակարգ միջոցառումները մարդու հիմնարար իրավունքներին եւ ազատություններին չեն միջամտում ավելի շատ, քան իրականում անհրաժեշտ է:

40. Այս բացառիկ հանգամանքներում դատախազներն ու դատախազական ծառայությունները հատկապես պետք է ձգտեն ուսումնասիրելու ընդհանուր առմամբ՝ քրեական հետապնդման եւ մասնավորապես՝ նախնական կալանքի այլընտրանքներ օգտագործելու հնարավորությունը: Արտակարգ իրավիճակի հետեւանքներին դիմակայելու մեկ այլ հնարավորություն կարող է լինել նաեւ միջնորդությունը:²⁵

41. Արտակարգ իրավիճակը կարող է մեծ ազդեցություն ունենալ հանցավորության վրա: Այն կարող է օգնել նվազեցնելու հանցավորության որոշ տեսակներ, օրինակ՝ կարանտինի կամ խափանման միջոցների կիրառման շնորհիվ: Այն կարող է նաեւ նպաստել դրանց թվի աճին՝ ստեղծելով հանցավորության նոր միտումներ կամ որոշակի իրավախախտումներ կատարելու պայմաններ (օրինակ՝ ընտանեկան բռնությունը, արտակարգ իրավիճակների հաղթահարման համար անհրաժեշտ միջոցների հետ կապված տնտեսական եւ ֆինանսական հանցագործություններ)՝ ստեղծելով նոր տեսակի իրավախախտումներ կամ նպաստելով դրանց կատարմանը (օրինակ՝ խափանման կամ պարետային ժամի միջոցառումների խախտում): Սա մարտահրավերներ է ստեղծում եւ դատախազական ծառայություններից ու դատախազներից պահանջում է հատուկ ուշադրություն դարձնել, եւ անհրաժեշտության դեպքում, համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ քրեական հետապնդում նախաձեռնելու համար հրատապ դեպքերում կամ արտակարգ իրավիճակների հետ կապված այնպիսի դեպքերում, ինչպիսիք են օրինակ՝ սանիտարական թափոնների ապօրինի կամ սխալ հեռացման վերաբերյալ իրավապահ մարմիններ կամ առողջապահական ոլորտի անձնակազմի օրինական հրամաններին չհնազանդվելը, ընտանեկան բռնության դեպքերին կատարվող միջամտությունը եւ այսպիսի համատեքստին բնորոշ այլ հնարավոր խախտումները: Նրանք նաեւ պետք է ուշադրություն դարձնեն արտակարգ իրավիճակների հետ կապված ընդլայնվող գիտելիքների համարժեք ըմբռնումն ապահովելու անհրաժեշտությանը, օրինակ՝ համավարակի ժամանակ առողջապահական ոլորտի մասնագետների կողմից հնարավոր սխալ գործելակերպի դեպքում նրանց քաղաքացիական, վարչական կամ քրեական պատասխանատվության աստիճանը գնահատելու համար հաշվի առնել բժշկական գործողության կատարման պահին առկա գիտական գիտելիքները:²⁶

²⁵ Տե՛ս Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված «Քրեական գործերով միջնորդության մասին» (1999 թվականի սեպտեմբերի 15) R (99) 19 առաջարկությունը եւ Դատախազների միջազգային ասոցիացիայի կողմից 2018 թվականի նոյեմբերի 27-ին ընդունված՝ «Տուժողի եւ հանցագործության կատարած անձի միջեւ միջնորդության վերաբերյալ դատախազների համար նախատեսված ուղեցույցը»: Տե՛ս նաեւ «Քաղաքացիական գործերով միջնորդության մասին» CM/Rec(2002)10 առաջարկությունը եւ Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (ԱՎԵՅ) 2019 թվականի հունիսի 14-ի «Միջնորդության վերաբերյալ օրենսդրության եվրոպական ձեռնարկը» (ԱՎԵՅ (2019)9):

²⁶ Տե՛ս ՄԱԿ-ի Ահաբեկչության դեմ պայքարի հարցերով կոմիտեի գործադիր տնօրինության «ԶՈՎԻԴ-19 համավարակի ազդեցությունը ահաբեկչության, ահաբեկչության դեմ պայքարի եւ բռնությանը զուգորդվող ծայրահեղականության դեմ պայքարի վրա» թեմայով 2020 թվականի հունիսի փաստաթուղթը (<https://www.un.org/sc/ctc/wp-content/uploads/2020/06/CTED-Paper%E2%80%9393-The-impact-of-the>

42. Դատախազական ծառայությունները եւ դատախազները պետք է ուսումնասիրեն իրենց հնարավորությունների եւ գործունեության սահմանափակ լինելու պահին դատարաններին դիմելու եւ նրանց հետ կառուցողական երկխոսության մեջ մտնելու հնարավորությունները, որպեսզի քննարկեն, թե ինչպես պետք է վարվել առաջնահերթ գործերի հետ: Դատախազական ծառայություններից պահանջվում է ցուցաբերել նաեւ ճկունություն, որպեսզի կարողանան լուծել գործերի կուտակումների հարցը, ինչը հանգեցնում է արտակարգ իրավիճակների՝ ինչպես օրինակ համավարակի հետեւանքով դրանց զգալի կրճատմանը, երբ դատարանները վերսկսում են իրենց բնականոն գործունեությունը. բացի դրանից, վաղ փուլում պետք է ջանքեր գործադրվեն՝ այդպիսի կուտակումներից հնարավորինս շուտ ձեռքագատվելու համար:

43. Դատարանի որոշումների բողոքարկման գործընթացը կարելի է լրացուցիչ կերպով ռացիոնալացնել եւ պարզեցնել հաղորդակցման էլեկտրոնային միջոցների կիրառման եւ վարույթների կառավարման միջոցով:

44. Կիրառելիության դեպքում, դատախազական ծառայությունները, որոնք վերահսկողություն են իրականացնում դատարանի որոշումների կատարման նկատմամբ կամ մասնակցում են այդ վերահսկողությանը, պետք է, հնարավորության դեպքում, հաշվի առնեն համավարակի ժամանակ ազատագրված հետ կապ չունեցող միջոցառումների կիրառման կամ ազատագրված պատիժների ժամկետների կրճատման հնարավորությունը՝ քրեակատարողական հիմնարկներում գերբեռնվածությունից խուսափելու եւ դրանց տարածքի ներսում հիվանդության տարածումը կամ տարածվածությունը կանխելու նպատակով:

45. Դատախազական ծառայությունների օրակարգում առաջնահերթ տեղ պետք է զբաղեցնի հանցավորության դեմ պայքարի ազգային քաղաքականության շրջանակներում օրենքի հարգվածությունն ապահովելը եւ, անհրաժեշտության դեպքում, դրա կիրառումը տարածաշրջանային եւ տեղական այնպիսի առաջնահերթություններին համապատասխանեցնելը, ինչպես օրինակ՝ այն դեպքերում, երբ կալանքի տակ պահելու վերաբերյալ իրավապահ մարմինների կամ առողջապահության ոլորտի անձնակազմի օրինական հրամաններին չենթարկվելը կարող է նպաստել հիվանդության տարածմանը:

46. Արտակարգ իրավիճակներում, ինչպիսին համավարակն է, լոքաուսներն ու ապաստան տրամադրելու մասով ձեռնարկվող միջոցառումները կարող են ուղեկցվել խոցելի խմբերի, այդ թվում՝ երեխաների, գենդերային հիմքով բռնության զոհերի եւ մարդկանց թրաֆիքինգի եւ այլոց համար մեծ ռիսկով՝ խթանելով բռնության եւ դաժան վերաբերմունքի տեսարաններին նրանց ականատես լինելը կամ այդպիսի երեւույթների ենթարկվելը: Տեղաշարժման սահմանափակումների եւ ֆիզիկական հեռավորության պահպանման միջոցառումների կիրառումը կարող է քողարկել խոցելի խմբերի նկատմամբ խտրականության եւ բռնության երեւույթները: Այս համատեքստում դատախազական ծառայությունները եւ դատախազները պետք է միջոցներ ձեռնարկեն այդպիսի դեպքերը հնարավորինս արդյունավետ կերպով կանխելու եւ վերացնելու համար: Օրինակ՝ տուժածների, այդ թվում՝ ընտանեկան բռնությունից տուժածների եւ այլ խոցելի անձանց համար իրավական պաշտպանության միջոցների մշտական հասանելիությունն ապահովելու նպատակով նրանց բողոքների ստացումն ու իրականացումը պետք է շարունակվեն ինչպես արտակարգ իրավիճակների, օրինակ՝ համավարակի ընթացքում, այնպես էլ դրանից հետո՝ անհրաժեշտության դեպքում տուժողների կողմից իրենց բողոքները ներկայացնելու նորարարական ուղիներ ստեղծելու միջոցով:

47. Անդամ պետություններում, որտեղ դատախազները կատարում են քրեաիրավական ոլորտից դուրս գործառույթներ, սույն Ա բաժնի եզրակացություններն ու առաջարկությունները, համապատասխան փոփոխություններով [*mutatis mutandis*], կիրառվում են նաեւ ստորեւ ներկայացված Բ բաժնում նշված դատախազական գործունեության նկատմամբ:

Բ. Դատախազական ծառայությունների եւ դատախազների գործառույթների իրականացումը քրեաիրավական ոլորտից դուրս

48. ԵՂԳԽՆ-ն անդամ պետություններում էական տարբերություններ է նշում կապված այն բանի հետ, որ դրանցից մի քանիսում դատախազները քրեաիրավական ոլորտից դուրս լայն լիազորություններ ունեն, իսկ մյուսներում նրանք այդպիսի լիազորություններ չունեն: Դրա համար պետք է նկատի ունենալ, որ հետեւյալ պարբերությունները կարող են վերաբերել միայն պետությունների առաջին խմբին:

49. Այս համատեքստում եւ կախված ազգային իրավական դաշտից՝ դատախազական

[COVID-19-pandemic-on-counter-terrorism-and-countering-violent-extremism.pdf](#)), ԻՆՏԵՐՊՈԼ-ի «ՔՈՎԻԴ-19-ի կիբեռվտանգի համաշխարհային լանշաֆտը», ՖԱԹՖ-ի «ՔՈՎԻԴ-19-ի հետ կապված փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերը եւ քաղաքականության պատասխանները» Փարիզ, 2020 թվականի մայիս (<http://www.fatf-gafi.org/publications/methodsandtrends/documents/covid-19-mi-tf.html>), ԻՆՏԵՐՊՈԼ-ի «ՔՈՎԻԴ-19. Կեղծ դեղերի համաշխարհային սպառնալիք», 2020 թվականի մայիս, ՄԱՆԻՎԱԼ-ի գեկույցը «ՔՈՎԻԴ-19 ճգնաժամի ժամանակ ՄԱՆԻՎԱԼ-ի իրավագործությունների շրջանակներում փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման միտումները», 2020 թվականի սեպտեմբերի 2:

ծառայությունները, ինչպես եւ քրեաիրավական ոլորտում, կարող են նաեւ վերահսկել քրեաիրավական ոլորտից դուրս (օրինակ՝ քաղաքացիական եւ վարչական իրավունքի ոլորտում) ընդունված արտակարգ միջոցառումների անհրաժեշտությունը, համաչափությունն ու համարժեքությունը: Սա դատախազական ծառայությունների կարեւոր գործունեությունն է ոչ քրեական ոլորտում, որը նույնպես պետք է հիմնականում կենտրոնանա մարդու իրավունքների եւ ազատությունների, այդ թվում՝ ընդհանուր բնակչության առողջության պաշտպանության վրա:

50. Հետեւաբար, կիրառելիության դեպքում եւ կախված ազգային իրավական դաշտից՝ կարեւոր է ապահովել, որ բոլոր սահմանափակող միջոցառումները ձեռնարկվեն մարդու իրավունքների միջազգային չափանիշներին եւ պարտավորություններին համապատասխան, որպեսզի այդ իրավունքների նկատմամբ կատարվող ցանկացած միջամտություն թե՛ ժամանակային եւ թե՛ բովանդակային առումով լինի սահմանափակ եւ համաչափ այն իրավիճակներին, երբ դա իսկապես անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակության մեջ: Այս միջոցառումների կիրառումը չպետք է խտրական լինի:²⁷ Այս նպատակներն ապահովելու համար դատախազական ծառայությունները կարող են, անհրաժեշտության դեպքում, խորհրդակցել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ (հասարակական կազմակերպություններ, հիմնադրամներ, բարեգործական կազմակերպություններ, մասնագիտական ասոցիացիաներ եւ այլն), եւ նախընտրելի է դա անել մինչեւ նոր սահմանափակող միջոցառում ներդնել:

51. Դատախազական ծառայությունները, հատկապես արտակարգ իրավիճակներում, պետք է համապատասխան միջոցառումներ ձեռնարկեն՝ կանխելու իրենց դատախազական գործունեության վրա անհարկի ազդեցությունները: Նրանք պետք է նաեւ գերծ մասն ցանկացած տեսակի խտրականությունից, հատկապես իրավապաշտպանների եւ լրագրողների նկատմամբ խտրականությունից՝ ապահովելով, որ իրենց աշխատանքի արդյունքում նրանք չբախվեն անհամաչափ վերաբերմունքի կամ պատժի:

52. Ժամանակակից տեխնոլոգիաները ներկայումս օգտագործվում են ԶՆՎԻԴ-19-ով վարակված անձանց շփումները, ախտանշանները կամ նրանց նկատմամբ կիրառվող կարանտինային միջոցառումների համապատասխանությունը վերահսկելու համար: Այս նպատակներին հասնելու համար օգտագործվում են բջջային հեռախոսի հավելվածները եւ հեռահաղորդակցության ծառայություններ մատուցողների կողմից տրամադրվող՝ տեղաշարժի եւ գտնվելու վայրի վերաբերյալ տվյալները: Դատախազական ծառայությունները եւ դատախազները, որտեղ նրանք այդ իրավասությունն ունեն, եւ որտեղ դա տեղին կլինի, պետք է վերահսկեն այս գործընթացը՝ ՄԻԵԿ-ի սկզբունքներին եւ համապատասխան ներպետական օրենսդրությանը համապատասխան, որպեսզի հետեւեն, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին ցանկացած միջամտություն սահմանափակված լինի այնքանով, որքան պահանջվում է նախատեսված նպատակին հասնելու համար, եւ որ դրա կիրառելիությունը ժամանակային առումով սահմանափակ լինի:

53. Անձնական տվյալները պետք է մշակվեն կիրառվող օրենքներին համապատասխան եւ տվյալների պաշտպանության իրավասու մարմինների վերահսկողության ներքո: Այդպիսի տվյալների ցանկացած օգտագործում, որպես կանոն, պետք է կատարվի տվյալ անձի համաձայնությամբ, կամ տվյալ անձը պետք է առնվազն հետագայում տեղեկացվի այդ օգտագործման մասին: Հավաքված անձնական տվյալների անվտանգությունը պետք է ապահովվի այնպես, որ հաքերները կամ այլ անձինք, ովքեր այդ տվյալներին հասանելիություն չպետք է ունենան, չկարողանան չարամտորեն օգտագործել դրանք: Անհատները պետք է տեղեկացվեն ձեռնարկված միջոցառումների հիմքում ընկած պատճառների եւ դրանց տեւողության մասին եւ պետք է կարողանան պաշտպանվել դրանց հնարավոր չարաշահումից: Այս եղանակով հավաքված անձնական տվյալների օգտագործումն առաջին հերթին պետք է ծառայի ԶՆՎԻԴ-19-ի տարածման կանխարգելմանը, այլ ոչ թե ներգրավված անձանց վարչական կամ քրեական պատասխանատվության գնահատմանը: Դատախազական ծառայությունների իրավասու ստորաբաժանումները կամ փորձագետները, անհրաժեշտության դեպքում, կարող են վերահսկել այս գործընթացը՝ ՄԻԵԿ-ի սկզբունքներին, ինչպես նաեւ այլ համապատասխան միջազգային եւ ներպետական դրույթներին համապատասխան:

54. Կիրառվող կարանտինային միջոցառումներին համապատասխանելը պետք է լինի ավելի առաջնահերթ, քան այլ՝ ավելի խիստ սահմանափակող միջոցառումների կիրառումը: Հնարավոր խախտումների համար նախատեսվող պատժամիջոցները պետք է համաչափ լինեն կատարված արարքներին: Այդպիսի արարքները չափից ավելի քրեականացնելուց խուսափելու եւ օրենքի գերակայության նկատմամբ հասարակության վստահությունը խաթարելուց խուսափելու համար գործերը, հնարավորության դեպքում, պետք է լուծվեն համաձայնությամբ, հատկապես, եթե հանցագործները համագործակցում են իշխանությունների հետ: Սահմանափակող միջոցառումների կիրառումը չպետք է խտրական լինի փոքրամասնությունների, մարգինալացված խմբերի կամ իրավապաշտպանների ու լրագրողների նկատմամբ: Դատախազական ծառայությունները,

²⁷ ՄԻԳՀԳ, ԶՆՎԻԴ-19. Պետությունները չպետք է չարաշահեն արտակարգ միջոցառումները՝ մարդու իրավունքները ճնշելու համար ՄԱԿ-ի փորձագետներ, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=25722>.

անհրաժեշտության դեպքում եւ եթե նրանք իրավասու են, պետք է վերահսկեն այս գործընթացը՝ ՄԻԵԿ-ի սկզբունքներին եւ այլ համապատասխան միջազգային եւ ներպետական դրույթներին համապատասխան:

55. Արտակարգ իրավիճակների ազդեցությունը սովորաբար զգացվում է սահմանափակող միջոցառումների կիրառումը դադարեցնելուց շատ ավելի ուշ: Նույնիսկ այս միջոցառումների կիրառումը դադարեցնելուց հետո մարդիկ կարող են շարունակել սահմանափակված լինել, ինչպես տեղի է ունենում համավարակի դեպքում, երբ նրանք ստիպված են լինում մնալ կարանտինում կամ որեւէ այլ կերպ սոցիալական մեկուսացման մեջ: Սա ավելի շատ վերաբերում է համավարակից անհամաչափ կերպով տուժած խոցելի խմբերին, մասնավորապես՝ փոքրամասնությունների խմբերի անդամներին, աղքատության վտանգի տակ գտնվող մարդկանց, տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց, ծերանոցներում գտնվող անձանց կամ համավարակից ամենաշատ տուժած այլ անձանց, միգրանտներին, փախստականներին, ընտանեկան բռնության եւ սեռական բռնության վտանգի տակ գտնվող կանանց եւ երեխաներին, ատելության խոսքից, մարդկանց թրաֆիքինգից տուժածներին: Այս խոցելի խմբերը պետք է լինեն պաշտպանված, այլ ոչ թե մեկուսացված, եւ նրանց պաշտպանությունն, անհրաժեշտության դեպքում, պետք է լիովին ապահովվի դատախազական ծառայությունների եւ դատախազների կողմից, որոնք պետք է նրանց վերաբերվեն օրենքի առջեւ հավասարության եւ խտրականության բացառման սկզբունքի համաձայն՝ ապահովելու համար հարգանքը նրանց մարդկային արժանապատվության եւ իրավունքների նկատմամբ:

IV. Դատախազական ծառայությունների եւ դատախազների առկա, նոր կամ ընդլայնված գործառնություններն արտակարգ իրավիճակներին արձագանքելու համար

56. Համավարակի ժամանակ դատախազական ծառայությունների եւ դատախազների եղած գործառնությունները կարող են ընդլայնվել, եթե դա լինի կիրառելի եւ տեղին: Այս համատեքստում նրանց կարող են վերապահվել նաեւ նոր գործառնություններ: Անդամ պետությունների տարբեր իրավական համակարգերն այդպիսի նոր կամ ընդլայնված գործառնությունների հնարավորությունը տարբեր կերպ են կարգավորում: Հետեւաբար, որոշ անդամ պետություններում դատախազական ծառայության կողմից կատարվող միջամտությունները կարող են գերազանցել նախկինում սահմանված սահմանները: Եղել են տարբեր օրինակներ, թե դատախազական ծառայությունների եւ դատախազների ընդլայնված դերն ինչպես կարող է կիրառվել այս հանգամանքներում մարդկանց ավելի լավ պաշտպանելու համար:

57. Հետեւյալ պարբերությունները վերաբերում են սույն կարծիքի պատրաստման համար նախատեսված հարցաշարին անդամ պետությունների կողմից տրված պատասխաններում իրենց կողմից ներկայացված օրինակներին: Այդպիսի օրինակները ներառում են՝

- սննդամթերքի, հիգիենայի պարագաների եւ առաջին անհրաժեշտության դեղամիջոցների եւ սպառողական նյութերի սպեկուլյատիվ գործարքների դեպքերի քննություն, ինչպես նաեւ վարակի փոխանցման կամ դրա բժշկական բուժման մասով քրեական պատասխանատվություն.²⁸
- դատախազությունները տեսչական ստուգումներ են կազմակերպում ԶՈՎԻԴ-19-ի հայտնաբերված դեպքերով տարեցների տուն-ինտերնատներում՝ դրա հետագա տարածումը կանխելու համար ձեռնարկված միջոցառումներն ստուգելու նպատակով.²⁹
- որոշ երկրներում պարետային ժամը որպես առողջապահական միջոցառում չհարգելը համարվում է հանցագործություն, եւ դատախազական ծառայությունն ունի այդպիսի դեպքերի մասով քրեական հետապնդում իրականացնելու ընդլայնված լիազորություն: Ընդհանուր առմամբ, արտակարգ միջոցառումների իրականացման գործընթացը պետք է վերահսկվի դատախազությունների կողմից.³⁰
- հաշվի առնելով դատախազական ծառայության լիազորությունները՝ կանխարգելիչ միջոցառումները եւ հաղորդված փաստերի մասով օպերատիվ ու արդյունավետ արձագանքը կարելի է գործիքներ են ընտանեկան բռնության դեմ պայքարում, եւ համավարակի համատեքստում այս երեւույթին մեծ ուշադրություն է դարձվում.³¹

• դատախազական ծառայությունը համապատասխան միջոցառումներ է ձեռնարկել՝ կալանավորված անձանց պահելու վայրերում, ինչպես նաեւ դատարանների դահլիճներում, դատախազների եւ դատավորների աշխատասենյակներում գերբեռնվածությունից խուսափելու համար՝ չտոնահարելով մեղադրյալների եւ խոցելի խմբերի իրավունքները: Այն անհրաժեշտ միջոցառումներ է կիրառում ընդհանուր առմամբ՝ առանձին անձանց եւ մասնավորապես՝ խոցելի խմբերին հիմնականում հնարավոր բռնությամբ ուղեկցվող խտրականությունից պաշտպանելու համար: Այն ցուցումներ է տալիս առաջնահերթության կարգով որոշ գործերով քրեական հետապնդում իրականացնելու համար, օրինակ,

²⁸ Իտալիա:

²⁹ Բուլղարիա եւ Իսպանիա: 2020 թվականի հունիսի սկզբին Իսպանիայի դատախազությունը տարեցների համար նախատեսված գրեթե 200 տուն-ինտերնատներում իրականացրել է քննություն՝ կապված ԶՈՎԻԴ-19-ի խնդիրների հետ:

³⁰ Հյուսիսային Մակեդոնիա:

³¹ Սլովակիա:

երբ առկա է վաղեմության ժամկետը գերազանցելու վտանգ, կամ երբ կան ժամանակավոր կալանքի տակ պահվող մեղադրյալներ: Հնարավոր չէ, որ կարելու գործերը ցանկացած ձևով «փակվեն»՝ մեծ թվով գործերի կուտակման պատճառով: Կորուսավիրուսի պատճառով առաջացած խնդիրները պետք է հաղթահարվեն արդարադատության հետ առնչություն ունեցող բոլոր մասնակիցների (դատախազներ, դատավորներ, քարտուղարներ, փաստաբաններ) կողմից գործադրվող մեծ ջանքերի շնորհիվ:³²

58. Շատ անդամ պետություններում դատախազական ծառայություններն ու դատախազները պետք է ընդհանուր առմամբ ավելի սերտ համագործակցեն լրատվության միջոցների հետ եւ բացատրեն համաճարակի համատեքստում իրենց կողմից իրականացվող աշխատանքի բնույթը: Որոշ դեպքերում նրանք պետք է հանրությանը տեղեկացնեն արտակարգ իրավիճակներում կիրառվող ավելի խիստ պատժամիջոցների եւ տույժերի մասին:³³ Այս առումով կարելու է ապահովել, որ լրատվության միջոցների ազատության եւ արտահայտվելու ազատության հնարավոր սահմանափակումները ձեւակերպված լինեն հստակ, քանի որ ենթադրյալ «ապատեղեկատվության» դեմ պայքարին ուղղված գործողությունները կարող են անհարկի կիրառվել ցանկացած տեսակի քննադատության նկատմամբ: Միեւնույն ժամանակ եւ համավարակից անկախ՝ դատախազները պետք է ձգտեն ապահովել, որ լրատվության միջոցներին տրամադրվող տեղեկությունները չխաթարեն քննության եւ քրեական հետապնդման անկողմնակալությունը կամ քննությունների նպատակը: Դրանցով չպետք է խախտվեն նաեւ երրորդ անձանց իրավունքները, եւ դրանք չպետք է ազդեցություն ունենան քննության կամ քրեական հետապնդման մեջ ներգրավված անձանց վրա: Դրանք չպետք է ազդեն դատական վարույթների ելքի վրա:³⁴

59. Դատախազական ծառայությունները եւ դատախազները պետք է ձգտեն ապահովելու մարդու իրավունքների եւ ազատությունների նկատմամբ հարգանքն այնպիսի արտակարգ միջոցառումների կիրառման ընթացքում, ինչպիսիք են կալանքը/լոքդաունը, հանրային տարածքների փակումը եւ այլ համապատասխան սահմանափակող միջոցները:

60. Այսպիսով, արտակարգ միջոցառումների կիրառումը պետք է իրականացվի արդար ձևով եւ մարդասիրաբար, իսկ կիրառվող ցանկացած պատժամիջոց պետք է լինի կատարված հանցանքին համաչափ եւ սահմանված լինի օրենքով:

61. Դատախազության ծառայություններից կարող է պահանջվել վերահսկել կարանտինի կամ կալանքի համար նախատեսված տարածքների հատկացման գործընթացը: Անհրաժեշտության դեպքում դատախազական ծառայությունները պետք է ապահովեն, որ կարանտինում կամ կալանքի տակ պահվող անձանց վերաբերվեն այնպես, ինչպես ազատ մարդկանց, բացառությամբ այն սահմանափակումների, որոնք պարտադիր կերպով կիրառվում են նրանց նկատմամբ՝ օրենքով սահմանված կարգով եւ կարանտինային նպատակներով գիտական ապացույցների հիման վրա: Այս անձանց չպետք է դիտարկել կամ վերաբերվել որպես կալանավորվածների:

62. Կարանտինում կամ կալանքի տակ պահվող անձինք պետք է նաեւ կարողանան օգտվել վատ վերաբերմունքի դեմ հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ կարանտինի կամ կալանքի տակ պահվելու պատճառների մասին տեղեկություն ստանալու իրավունքից, պետք է ունենան անկախ բժշկական ծառայությունից օգտվելու, իրավաբանական օգնություն ստանալու իրավունք եւ իրավունք՝ ապահովելու, որ երրորդ կողմերը տեղեկացված լինեն իրենց՝ կարանտինում կամ կալանքի տակ պահվելու մասին՝ իրենց կարգավիճակին եւ իրավիճակին համապատասխան: Նրանք պետք է կարողանան համապատասխան միջոցներով հաղորդակցվել ընտանիքների եւ ընկերների հետ եւ չպետք է տուժեն մարզինալացման կամ խտրականության որեւէ ձևից, այդ թվում՝ նաեւ համայնք վերադառնալուց հետո:

V. Արտակարգ իրավիճակներում դատախազական ծառայությունների եւ դատախազների առջեւ ծառայած մարտահրավերների հաղթահարումը

63. Արտակարգ իրավիճակներում, եւ հատկապես համավարակի ժամանակ, դատախազական ծառայությունները եւ դատախազները պետք է օրենքը կիրառեն՝ առանց նշաձողն ակնկալվող չափանիշներից իջեցնելու՝ խստորեն հարգելով մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները: Այդպիսի իրավիճակներում դատախազներն իրենց վրա են վերցնում ամենամեծ պատասխանատվությունն ու պարտականությունը, քանի որ ստեղծվում է մի իրավիճակ, երբ դա ամենից շատ է անհրաժեշտ:

64. Տնտեսական ակտիվության նվազմամբ պայմանավորված՝ համավարակը հանգեցնում է գործազրկության եւ եկամուտների կորստի եւ կարող է ունենալ կայուն հոգեբանական բացասական հետեւանքներ: Կարող է աճել ընտանեկան բռնության, ռասիզմի եւ անհանդուրժողականության, մասնավորապես՝ բժշկական եւ առողջապահության ոլորտի անձնակազմի նկատմամբ բռնության

³² Հունաստան:

³³ Բելգիա:

³⁴ Տես ԵՂԳԽԻ Դատախազների եւ լրատվության միջոցների միջեւ հարաբերությունների վերաբերյալ թիվ 8 (2013) կարծիքը, 23-րդ պարբերություն:

դեպքերի թիվը: Հետեւաբար, խոցելի անձանց նկատմամբ հանցագործությունների, ինչպես նաեւ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների թվի հնարավոր աճի հետեւանքով դատախազական ծառայությունները կարող են որոշակի կարճատեւ դժվարությունների բախվել:

65. Այլ հնարավոր մարտահրավերները բխում են դատախազական ծառայություններին հատկացվող բյուջեի հնարավոր նվազումից՝ պայմանավորված համավարակի ծանր տնտեսական հետեւանքներով եւ դատախազներին, դատախազության անձնակազմին, ինչպես նաեւ նրանց ընտանիքներին եւ դատավարության կողմերին համավարակի հետեւանքով առաջացած ռիսկերից համարժեք պաշտպանություն ապահովելու անհրաժեշտությամբ:

66. Ավելին, բանտերում եւ կալանքի տակ պահելու վայրերում հիվանդության տարածման վտանգ կա: Սա բարձրացնում է բանտերի անձնակազմին, բանտարկյալներին եւ կալանավորվածներին, ինչպես նաեւ նրանց ընտանիքներին համավարակից պաշտպանելու անհրաժեշտությունը: Անհրաժեշտության դեպքում դատախազական ծառայությունները պետք է ձեռնարկեն կարեւոր բոլոր միջոցառումները՝ կալանավորվածների եւ բանտարկյալների իրավունքները պաշտպանելու համար:

67. Համավարակի ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար դատախազները պետք է հրատապ եւ արդյունավետ կերպով զբաղվեն խոցելի անձանց նկատմամբ կատարված հանցագործություններով: Մնացած բոլոր հանցագործությունների մասով գործողություններ իրականացնելիս դատախազները պետք է իրենց գործունեությունը շարունակեն սահմանված կարգով: Անհրաժեշտության դեպքում ոչ հրատապ քննությունները կարող են հետաձգվել՝ պայմանով, որ դրանց ժամկետներն ու պայմանները նախապես սահմանված են օրենքով:

68. Ինչ վերաբերում է հանրային առողջապահական միջոցառումների կիրառման հետեւանքով առաջացած խախտումների քննությանը, ապա պետք է շարունակաբար հաշվի առնվի մարդու իրավունքների պաշտպանության ու լայն հասարակության եւ առանձին անձանց առողջության պաշտպանության միջեւ հավասարակշռությունը:

69. Զանի որ արտակարգ իրավիճակներում դատախազների առջեւ ծառայած մարտահրավերները լուրջ են եւ բարդ, այդ մարտահրավերները հաղթահարելու համար հատկապես անհրաժեշտ է դատախազական ծառայությունների, արդարադատություն իրականացնող մարմինների եւ դատավարության կողմերի միջեւ համագործակցությունը:

70. Սովորական ժամանակների համեմատությամբ՝ արտակարգ իրավիճակների ժամանակ կարող է մեծանալ անօրինական միջամտությունների ռիսկը, որը կարող է վնասել դատախազների անկախությանը: Այս առումով դատախազների եւ դատախազական ծառայությունների ներքին եւ արտաքին անկախությունը կամ ինքնավարությունը պահպանելու համար կառավարությունները եւ պետական այլ մարմինները, լրատվության միջոցները, դատավարության մասնակիցները եւ քաղաքացիական հասարակությունը պետք է ստանձնեն դատախազության գործունեությանն անտեղի չմիջամտելու համապատասխան պատասխանատվությունը:

71. Ինչ վերաբերում է դատախազների աշխատանքի գնահատմանը, ապա արտակարգ իրավիճակի հետեւանքով նրանց աշխատանքային պայմանների ցանկացած վատթարացում եւ ծանրաբեռնվածության ավելացում պետք է պատշաճ կերպով հաշվի առնվեն:

72. Դատախազներին, դատախազության անձնակազմին, դատավարության կողմերին, կալանավորվածներին եւ բանտարկյալներին համավարակից պաշտպանելու նպատակով դատախազական ծառայությունների տարածքներում պետք է ձեռնարկվեն նրանց անվտանգությունն ապահովելու ուղղված ֆիզիկական պաշտպանության բոլոր միջոցառումները, օրինակ՝ դատախազների եւ դատախազության անձնակազմի հերթափոխի կազմակերպման միջոցով. այդ միջոցառումները պետք է ձեռնարկվեն նաեւ բանտերում եւ կալանքի տակ պահելու վայրերում, ինչպես նաեւ պետք է տրամադրվեն մաքրող եւ սանիտարական պարագաներ:

73. Բացի դրանից, դեմ առ դեմ շփման փոխարեն, տեխնոլոգիական ենթակառուցվածքի զարգացման միջոցով պետք է ապահովվեն արդյունավետ հեռավար աշխատանքի, հեռահաղորդակցության եւ տեսակոնֆերանսի համակարգեր:

74. Արտակարգ իրավիճակներում համապատասխան բյուջեի հատկացումը շատ կարեւոր է դատախազական ծառայություններին անհրաժեշտ բոլոր միջոցներով եւ ակնկալվող չափանիշներին համապատասխան ձեռով ապահովելու համար այնպես, որ ծառայության գործունեությունն էապես չտուժի:

75. Դատախազները չպետք է փոխգիշումների գնան մասնագիտական էթիկայի չափանիշները նվազեցնելու կամ սահմանափակելու միջոցով նույնիսկ արտակարգ իրավիճակներում, եւ նրանք պետք է տեղյակ լինեն, որ մարտահրավերները պետք է հաղթահարվեն այդ չափանիշների պահպանմամբ:

76. Որպեսզի դատախազները եւ դատախազության անձնակազմը ոչ միայն հարմարվեն

աշխատանքի նոր ռեժիմներին եւ պայմաններին, այլեւ նաեւ իրենց պատշաճ կերպով պաշտպանեն այնպիսի արտակարգ իրավիճակներից, ինչպիսին համավարակն է, պետք է արդյունավետ կերպով մշակվեն վերապատրաստման միջոցառումներ, եւ այդ նպատակով տրամադրվի փորձագիտական աջակցություն՝ իր բոլոր տեսակներով:

77. Դատախազական ծառայությունները պետք է կապ պահպանեն առողջապահական ազգային մարմինների հետ եւ պարբերաբար գնահատեն ձեռնարկվելիք միջոցառումներն ու նախագուշակական միջոցները:

78. Անհրաժեշտության դեպքում դատախազական ծառայությունների, դատարանների, իրավապահ մարմինների համար, ինչպես նաեւ բանտերում եւ կալանքի տակ պահելու վայրերում պետք է հասանելի լինի բժշկական անձնակազմ: Այդ վայրերում ռիսկերը նվազագույնի հասցնող միջոցառումները պետք է պարբերաբար գնահատվեն՝ փորձագետների առաջարկություններին համապատասխան:

79. Եթե արտակարգ իրավիճակի պատճառով ռիսկերն զգալիորեն ավելանում են, ապա դրանք կառավարելու եւ, հնարավոր է, որոշ գործողություններ հետաձգելու համար ընդունվեն իրավական եւ վարչական կարգավորումներ՝ խստորեն հարգելով մարդու իրավունքները եւ նախապես դնելով սահմանափակումներ:

VI. Համավարակի ժամանակ միջազգային համագործակցությունը եւ ծագող դժվարությունները

80. Արտակարգ իրավիճակը, ինչպիսին համավարակն է, հատկապես լուրջ խնդիրներ է ստեղծում միջազգային համագործակցության համար: Այն դեպքում, երբ կալանավորումը եւ լոքաուսնի միջոցառումներն ազդում են իրենց երկրների ներսում դատախազական ծառայությունների նույնիսկ ամենապարզ գործողությունների վրա, փակ սահմաններն ու կարանտինային միջոցառումներն ավելի ուժեղ են ազդում ցանկացած տեսակի միջազգային, այդ թվում՝ անդրսահմանային համագործակցության վրա:

81. Այդպիսի համագործակցության որոշ տարրեր կարող են ամբողջությամբ խզվել կամ էապես հետաձգվել արտակարգ այնպիսի իրավիճակների ժամանակ, ինչպիսին համավարակն է, օրինակ՝ փոխադարձ իրավական օգնությունը, ձերբակալման եվրոպական օրդերների իրականացումը, հանձնումը, համատեղ քննչական խմբերը եւ անձանց ֆիզիկական տեղափոխման հետ կապված այլ միջոցառումներ:

82. ԶՈՎԻԴ-19 համավարակի ազդեցությունը հատկապես մեծացրել է բոլոր շահագրգիռ կողմերի՝ հանցավորության դեմ պայքարին ուղղված ջանքերն ակտիվացնելու անհրաժեշտությունը:

83. Զանի որ ԶՈՎԻԴ-19 համավարակի հետ կապված հատուկ միջոցառումները տարբեր են անդամ պետություններում, տարբեր պետությունների դատախազությունները պետք է ակտիվացնեն միմյանց միջեւ խորհրդակցությունները՝ համագործակցության ավելի արդյունավետ եւ նորարարական ձևեր մշակելու եւ գործառական արդյունավետությունն առավելագույնի հասցնելու համար: Միջազգային համագործակցությունն ու համակարգումն ամրապնդելու համար անդամ պետությունների դատախազական ծառայություններն արտակարգ դեպքերի համար նախատեսված իրենց կոնտակտների մասին այդպիսի իրավիճակներում պետք է հայտարարեն նախապես:

84. Պետք է բացահայտել լավ գործելակերպերն ու դրանք օգտագործել ԶՈՎԻԴ-19 համավարակի ժամանակ դատախազությունների արդյունավետ գործունեության հետ կապված նոր կանոնակարգեր եւ ընթացակարգեր մշակելու համար: Դրանք պետք է ներառեն այնպիսի տեխնոլոգիաների ավելի լայն կիրառություն, ինչպիսիք են գործերի փոխանցման առցանց ընթացակարգերը, տեսակոնֆերանսները, էլեկտրոնային ապացույցների կամ էլեկտրոնային միջոցներով ներկայացված ապացույցների օրինական ճանաչումը, գործերի էլեկտրոնային նիշքերի եւ ապացույցների կառավարման համակարգերի ստեղծումը, ինչպես նաեւ արտակարգ իրավիճակների համար նախատեսված կանոնակարգերի օգտագործումը: Լավ գործելակերպերը կարող են ներառել նաեւ մինչդատական վարույթում տուժողների եւ վկաների հեռակա մասնակցության դյուրացումը: Արտակարգ իրավիճակների վերաբերյալ կանոնակարգերի համատեքստում դատախազների վերահսկողությունն ու հաշվետվողականությունը պետք է շարունակաբար ապահովվեն արտակարգ իրավիճակի ամբողջ ընթացքում:

85. Համավարակի հետեւանքով թղթային փաստաթղթերի փոխանցման հետ կապված դժվարությունների պատճառով դատախազությունները պետք է դիտարկեն փոխադարձ իրավական օգնության եւ հանձնման վերաբերյալ հարցումների ընդունման եւ դրանց ընթացք տալու հնարավորությունը, եթե դրանք փոխանցվում են էլեկտրոնային փոստով: Այն պետությունները, որոնք իրավական օգնություն ցուցաբերելու պարտադիր պահանջ ունեն միայն թղթային հարցումներ ստանալու դեպքում, պետք է ժամանակավորապես վերանայեն այդ պահանջները եւ փորձեն հարցումներին ընթացք տալ էլեկտրոնային տարբերակների հիման վրա՝ մինչեւ համապատասխան թղթային հարցումներն

ստանալը:

86. Պետությունների միջև մարդկանց ազատ տեղաշարժի մասով ներկայումս կիրառվող սահմանափակումների պատճառով դատախազությունները պետք է դիտարկեն հանձնված անձանց տարանցման թույլտվության վերաբերյալ հարցումներն էլեկտրոնային փոստով ընդունելու եւ դրանց ընթացք տալու հնարավորությունը, ինչը կօգնի համավարակի ընթացքում նվազեցնել աշխատանքային ժամանակը եւ անհրաժեշտ ռեսուրսների քանակը եւ կնպաստի հարցումներին ավելի օպերատիվ արձագանքելուն:

87. Զանի որ հանձնման ենթակա անձինք գտնվում են կալանքի տակ, եւ կան նրանց փոխանցման հետ կապված բազմաթիվ հարցեր (տեխնիկական, կազմակերպական, ֆինանսական), ապա հարցումն ստացող եւ փոխանցումն իրականացնող պետությունները պետք է դիտարկեն սահմանված կարանտինային կանոնների ավելի պարզեցված ընթացակարգեր կիրառելու հարցում հնարավոր օգնություն ցուցաբերելու հնարավորությունը հարցումը ներկայացնող պետությունների այն պաշտոնյաների համար, որոնք իրենց տարածք են մեկնում այդ անձանց տեղափոխումը կազմակերպելու առաքելությամբ:

VII. Առաջարկությունները

Ներածություն

1. Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից վավերացված միջազգային փաստաթղթերի համաձայն՝ արտակարգ դրության պաշտոնական հայտարարումը պետք է արվի նախքան արտակարգ միջոցառումների կիրառումը:

2 Թեեւ չկա արտակարգ դրություն հայտարարելու միասնական սահմանված մոդել, եւ հենց փաստացի իրավիճակով են որոշվում դրա իրական չափն ու հիմնավորումը, արտակարգ դրություն հայտարարելու համար անհրաժեշտ նախապայման է, որ սովորական օրենսդրությամբ նախատեսված լիազորությունները բավարար չլինեն արտակարգ դրությունը հաղթահարելու համար: Հետեւաբար, ցանկացած արտակարգ դրության վերջնական նպատակը պետք է լինի այն, որ պետությունը հաղթահարի արտակարգ դրությունը եւ հնարավորինս շուտ վերադառնա բնականոն իրավիճակին:

3. Իրավական այն դաշտը, որի շրջանակներում դատախազական ծառայությունները պետք է գործեն արտակարգ այնպիսի իրավիճակների ժամանակ, ինչպիսին համավարակն է, սահմանվում է անդամ պետությունների կողմից վավերացված միջազգային փաստաթղթերով, ինչպիսիք են ՄԻԵԿ-ը եւ ԶԶԻՄԴ-ը, որոնցով սահմանվում են մի շարք պայմաններ, որոնք պետք է պահպանվեն այդպիսի իրավիճակներում (օրինակ՝ անքակտելի իրավունքների կամ այլ իրավունքների վերաբերյալ, որոնք էական նշանակություն ունեն անքակտելի իրավունքների պահպանման համար), ինչպես նաեւ սահմանադրական կամ ներպետական այլ օրենքներով:

4. Դատախազների՝ օրենքի գերակայությունը խթանելու եւ ամրապնդելու պատասխանատվությունն ունի բազմաթիվ ներհատուկ ասպեկտներ, որոնք լուրջ մարտահրավերներ են առաջացնում դատախազների համար: Այս մարտահրավերները հատկապես գործուն քանքեր են պահանջում արտակարգ իրավիճակների համատեքստում:

5. ԶՈՎԻԴ-19 համավարակն առաջացրել է համաշխարհային առողջապահական ճգնաժամ՝ հանրային առողջության արտակարգ իրավիճակ՝

- ի տարբերություն ցանկացած այլ երեւույթի, որին բախվել են մեկ դարից ավելի ժամանակահատված: Համավարակի դեմ պայքարի պատճառով աշխարհում ստեղծված աննախադեպ իրավիճակը նույնքան աննախադեպ մարտահրավերներ է առաջացրել դատախազական ծառայության համար:

Առաջարկություններ

1. Արտակարգ դրություն հայտարարելու, ինչպես նաեւ ՄԻԵԿ-ով սահմանված իրավունքներից շեղվելու դեպքում՝ դրա 15-րդ հոդվածի համաձայն, կամ ԶԶԻՄԴ-ով սահմանված իրավունքներից շեղվելու դեպքում՝ դրա 4-րդ հոդվածի համաձայն, պաշտոնական հայտարարությունը պետք է արվի մինչեւ այդպիսի շեղումն ուժի մեջ մտնելը:

2. Համավարակի հետեւանքով ներդրված սահմանափակումները կարող են ազդել ոչ միայն ՄԻԵԿ-ով պաշտպանվող քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների վրա, այլ նաեւ տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների վրա՝ որոշակի խմբերի նկատմամբ խտրականություն առաջացնելու հնարավոր ռիսկով: Հետեւաբար, կիրառվելիք սահմանափակումները պետք է հարգեն մարդու իրավունքների պարտավորություններն ու ապահովեն, որ հանրային առողջության արտակարգ դրությունն օգտագործվի ոչ թե որպես մարդու իրավունքների ոտնահարման պատրվակ, այլ առաջին հերթին նպատակ ունենա պաշտպանելու մարդկանց:

3. Արտակարգ իրավիճակների ժամանակ միջոցառումների ընդունումը կարգավորող օրենսդրությամբ պետք է նախեւառաջ հարգվեն անբակտեյի իրավունքները: Այլ իրավունքների վրա ազդող օրենսդրությունը պետք է հիմնված լինի օրենքի գերակայության գերակա սկզբունքի եւ անհրաժեշտության, համարժեքության, հավասարության եւ խտրականության բացառման, համաչափության, ժամանակավորության, արդյունավետ (խորհրդարանական եւ դատական) վերահսկողության սկզբունքների, արտակարգ իրավիճակների վերաբերյալ օրենսդրության կանխատեսելիության եւ պետական կառույցների միջեւ հավատարիմ համագործակցության վրա:

4. Նույն կերպ, ինչպես պետք է պաշտպանված լինեն դատական համակարգի ամբողջականությունը, ներառյալ դրա իրավասությունները, անկախությունը եւ անկողմնակալությունը, հատկապես լիարժեք կերպով դատարան դիմելու եւ արտակարգ իրավիճակներում մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի առնչությամբ, այնպես էլ պետք է պաշտպանված լինի դատախազական ծառայության եւ դրա կազմակերպման ամբողջականությունը՝ ելնելով նույն հիմնավորումից:

5. Դատախազների եւ դատախազության անձնակազմի եւ նրանց ընտանիքների համար վարակից պաշտպանվածություն ապահովելու կամ վարակվածներին անհրաժեշտ բուժօգնություն տրամադրելու ընթացքում դատախազական ծառայությունների, ինչպես նաեւ դատարանների գործունեությունը պետք է հարմարեցվի արտակարգ իրավիճակների հետեւանքով առաջացած հանգամանքներին՝ միեւնույն ժամանակ կարողանալով պահպանել իրատապ գործերով կամ որոշումներով զբաղվելու կարողությունը: Դատախազական ծառայությունները պետք է վաղ փուլում ձեռնարկեն անհրաժեշտ բոլոր միջոցառումները՝ արտակարգ իրավիճակի պատճառով հետաձգված գործերի կուտակումները վերացնելու համար:

6. Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների դատական համակարգում նոր տեխնոլոգիաների զարգացումը եւ տեսակոնֆերանսների համակարգերի կայուն կատարելագործումը նոր հնարավորություններ են ստեղծել վկաների, փորձագետների եւ մեղադրյալների լուսմներն ապահովելու համար: Նպատակը, որին պետք է հասնել դրանց կիրառմամբ, պետք է լինի այն լուսմը դյուրացնելը, որը կողմերին հնարավորություն կտա լիարժեք մասնակցելու հեռավար վարույթին եւ լսմանը, ինչպես նաեւ թույլ կտա հեռավար վարույթն ու լուսմը հնարավորինս մոտեցնել դատախազական ծառայության եւ դատարանի՝ սովորական պայմաններում կազմակերպված վարույթին եւ լսմանը՝ միաժամանակ պահպանելով նույն իրավունքների եւ երաշխիքների նկատմամբ հարգանքը:

7. Կարող են նախատեսվել դատախազական ծառայության շրջանակներում կենտրոնական, տարածաշրջանային եւ տեղական մակարդակով ճգնաժամային արձագանքման խմբերի ստեղծում, ինչպես նաեւ՝ այլ կազմակերպական միջոցառումներ, որոնք ուղղված են անդամ պետությունում որոշակի իրատապ իրավիճակների կարգավորմանը:

8. Յուրաքանչյուր անդամ պետության դատախազության համակարգի համաձայն՝ դատախազության կողմից, օրինակ, կենտրոնական մակարդակով պետք է տրվեն ուղեցույցներ՝ ընդգծելով հատուկ արտակարգ իրավիճակներում համագործակցության մեխանիզմներն ինչպես դատախազական ծառայության ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս: Օրենքի եւ կանոնակարգերի կիրառման միատեսակությունն ակնկալվում է շահագրգիռ պետությունների ամբողջ տարածքում դատախազների եւ դատախազական ծառայությունների (կամ դատախազությունների) կողմից:

9. Արտակարգ իրավիճակների ժամանակ կարող են սահմանվել համագործակցության եւ համակարգման հատուկ մեխանիզմներ եւ ընթացակարգեր այլ այնպիսի հաստատությունների հետ, ինչպիսիք են իրավապահ մարմինները, քննություն եւ հսկողություն իրականացնող մարմինները, դատարանները, առողջապահական հաստատությունները, զանգվածային լրատվության միջոցները, դատախազների մասնագիտական ասոցիացիաները եւ քաղաքացիական հասարակության այլ կազմակերպությունները:

10. Անհրաժեշտության դեպքում դատախազական ծառայությունները եւ դատախազները պետք է հատկապես վերահսկեն, թե արդյոք արտակարգ միջոցառումները մարդու հիմնարար իրավունքներին չեն միջամտում ավելի շատ, քան իրականում անհրաժեշտ է: Նրանք պետք է օրենքը կիրառեն առանց նշանդոն ակնկալվող չափանիշներից իջեցնելու՝ խստորեն հարգելով մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները:

11. Կախված ազգային իրավական դաշտից՝ դատախազական ծառայություններից, քրեաիրավական ոլորտում իրենց միջամտությունից բացի, կարող է նաեւ պահանջվել վերահսկել քրեաիրավական ոլորտից դուրս ընդունված արտակարգ միջոցառումների անհրաժեշտությունը, համաչափությունը եւ համարժեքությունը:

12. Բոլոր սահմանափակող միջոցառումները պետք է ձեռնարկվեն մարդու իրավունքների միջազգային չափանիշներին եւ պարտավորություններին համապատասխան եւ երաշխավորելով, որ այդ

իրավունքների նկատմամբ կատարվող ցանկացած միջամտություն թե՛ ժամանակային եւ թե՛ բովանդակային առումով լինի սահմանափակ եւ համաչափ այն իրավիճակներին, երբ դա իսկապես անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակության մեջ: Այս միջոցառումների կիրառումը չպետք է խտրական լինի:

13. Արտակարգ իրավիճակը, ինչպիսին համավարակն է, հատկապես լուրջ խնդիրներ է ստեղծում միջազգային համագործակցության համար: Փակ սահմանները եւ կարանտինային միջոցառումներն էլ ավելի ուժեղ են ազդում ցանկացած տեսակի միջազգային, այդ թվում՝ անդրսահմանային համագործակցության վրա:

14. Այդպիսի համագործակցության որոշ տարրեր կարող են ամբողջությամբ խզվել կամ էապես հետաձգվել արտակարգ այնպիսի իրավիճակների ժամանակ, ինչպիսին համավարակն է: Դատախազությունները պետք է ակտիվացնեն խորհրդակցությունները՝ համագործակցության ավելի արդյունավետ եւ նորարարական ձեւեր մշակելու եւ գործառական արդյունավետությունն առավելագույնին հասցնելու համար:

15. Դատախազությունները պետք է դիտարկեն փոխադարձ իրավական օգնության եւ հանձնման վերաբերյալ հարցումների ընդունման եւ դրանց ընթացք տալու հնարավորությունը, եթե դրանք փոխանցվում են էլեկտրոնային փոստով: Պետությունները պետք է դիտարկեն սահմանված կարանտինային կանոնների ավելի պարզեցված ընթացակարգեր կիրառելու հարցում հնարավոր օգնություն ցուցաբերելու հնարավորությունը հարցումը ներկայացնող պետությունների պաշտոնյաների համար:

16. Հաշվի առնելով, որ անդամ պետություններն, անշուշտ, կանցկացնեն իրենց դատական համակարգերի եւ իրենց դատարանների ու դատախազական ծառայությունների կանոնավոր գործունեության վրա համավարակի թողած ազդեցության գնահատում, եւ հաշվի առնելով նաեւ, որ այդ գնահատումները կարող են պարունակել արժեքավոր տեղեկություններ, ԵԴԳԽԽ-ն անդամ պետություններից կարող է պահանջել իրեն տրամադրել այդ գնահատումների արդյունքները՝ գնահատելու համար, թե արդյոք սույն կարծիքը պետք է հետագայում թարմացվի:

Կարծիք թիվ 16 (2021)

Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի՝
նուղված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին

Դատախազների գործնական անկախության վերաբերյալ միջազգային դատարանների և պայմանագրային մարմինների որոշումների հետևանքները

1. Ներածություն. Կարծիքի նպատակը եւ շրջանակը

1. Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԳԽՄ), Նախարարների կոմիտեի կողմից իրեն տրված մանդատի համաձայն, պատրաստել է սույն կարծիքը դատախազների գործնական անկախության եւ փաստացի ինքնավարության ու հարակից հայեցակետերի վերաբերյալ միջազգային դատարանների եւ պայմանագրային մարմինների որոշումների հետևանքների վերաբերյալ:

2. Սույն թեման ԵԴԳԽՄ-ի կողմից ընտրվել է դատախազների անկախության վրա միջազգային դատարանների եւ պայմանագրային մարմինների որոշումների ազդեցությունն ընդգծելու նպատակով: Թեեւ այդ որոշումների մեծ մասը կենտրոնանում է ավելի շատ դատական համակարգի անկախության վրա, այդ անկախությունը սերտորեն կապված է դատախազների անկախության հետ, քանի որ դատախազական ծառայության անկախությունն ու ինքնավարությունը դատական համակարգի անկախության անքակտելի հետևանքն է¹: Դատախազները պետք է ինքնուրույն գործեն իրենց որոշումների կայացման հարցում եւ իրենց պարտականությունները պետք է կատարեն առանց արտաքին ճնշումների եւ միջամտության՝ հաշվի առնելով իշխանությունների տարանջատման եւ հաշվետվողականության սկզբունքները²: Ըստ այդմ, անդամ պետություններում պետք է դատավորների անկախությանը զուգահեռ ընդունվեն պատշաճ դրույթներ՝ դատախազների անկախությունը, հաշվետվողականությունը եւ էթիկան նույն կերպ ամրապնդելու համար³:

3. Զրեական արդարադատության համակարգերն ամբողջ Եվրոպայում տարբերվում են: Տարբեր համակարգեր հիմնված են տարբեր իրավական մշակույթների վրա, եւ հետեւաբար առկա չէ միասնական մոդել բոլոր պետությունների համար: Օրինակ՝ առկա են կարելու տարբերություններ այն համակարգերի միջեւ, որոնք քրեական դատավարության շրջանակներում իրենց բնույթով մրցակցային են, եւ որոնք քննչական են⁴: Այդուհանդերձ, դարերի ընթացքում եվրոպական քրեական արդարադատության համակարգերը միմյանցից լայնորեն փոխառություններ են կատարել, այսպիսով՝ ներկայումս հավանաբար չկա որեւէ մաքուր համակարգ: Համակարգերի այդ փոխառությունները կատարելը հանգեցրել է որոշակի համապատասխանեցման⁵:

4. Համապատասխանեցման ամենակարելու եւ այս բոլոր համակարգերն իսկապես միավորող գործոնը դատախազական ծառայությունների անկախության պահանջն է որպես օրենքի գերակայության եւ դատական համակարգի նախապայման, ինչպես նշված է սույն կարծիքի 2-րդ պարբերությունում: Անձի վրա քրեական գործով քննության եւ դատաքննության լուրջ հետևանքների պատճառով դատախազը պետք է որոշելիս, թե արդյոք հետապնդում իրականացնի, եւ ինչ մեղադրանքներով, գործի գզուշավոր եւ արդար կերպով, քանի որ դա կարող է հանգեցնել դատապարտման կամ պատժի: Այս առնչությամբ դատախազը, ինչպես դատավորը, չի կարող գործել այնպիսի հարցի առնչությամբ, որում նա անձնական շահ ունի, եւ հետեւաբար կարող է իր սեփական անաչառությունը եւ բարեվարքությունը երաշխավորելու նպատակով ենթակա լինել որոշակի մասնագիտական սահմանափակումների⁶:

5. Դատախազների անկախությունը պարտադիր է նրանց՝ իրենց առաքելությունն իրականացնելու հնարավորություն տալու համար: Այն ամրապնդում է իրավունքի պետությունում եւ

¹ Տե՛ս Դատախազներին առնչվող եվրոպական նորմերի ու սկզբունքների վերաբերյալ ԵԴԳԽՄ-ի թիվ 9(2014) կարծիքը, Հռոմի կանոնադրություն, IV բաժին:

² Տե՛ս Դատախազներին առնչվող եվրոպական նորմերի ու սկզբունքների վերաբերյալ ԵԴԳԽՄ-ի թիվ 9(2014) կարծիքը, Հռոմի կանոնադրություն, V բաժին:

³ Տե՛ս Դատախազների անկախության, հաշվետվողականության եւ էթիկայի վերաբերյալ ԵԴԳԽՄ-ի թիվ 13(2018) կարծիքը, Առաջարկություններ, i բաժին:

⁴ Տե՛ս «Չեկոյց դատական համակարգի անկախության եվրոպական չափանիշների վերաբերյալ. Մաս II. Դատախազություն», ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից դրա 85-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2010 թվականի դեկտեմբերի 17-18), 7-րդ պարբերություն:

⁵ Տե՛ս «Չեկոյց դատական համակարգի անկախության եվրոպական չափանիշների վերաբերյալ. Մաս II. Դատախազություն», ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից դրա 85-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2010 թվականի դեկտեմբերի 17-18), 9-րդ պարբերություն:

⁶ Տե՛ս «Չեկոյց դատական համակարգի անկախության եվրոպական չափանիշների վերաբերյալ. Մաս II. Դատախազություն. Ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից դրա 85-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2010 թվականի դեկտեմբերի 17-18), 16-17-րդ պարբերություններ:

հասարակությունում նրանց դերը, ինչպես նաև երաշխավորում է, որ արդարադատության համակարգը գործի արդար եւ արդյունավետ, եւ որ իրացվեն դատական իշխանության անկախության բոլոր օգուտները: Այսպիսով, ինչպես դատավորների համար ապահովված անկախությունն է, այնպես էլ դատախազների անկախությունն իրենց շահերին վերապահված բացառիկ իրավունք կամ արտոնություն չէ, այլ երաշխիք է ի շահ արդար, անաչառ եւ արդյունավետ արդարադատության, որը պաշտպանում է շահագրգիռ անձանց ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր շահերը⁷:

6. Այն երկրներում, որտեղ հանրային դատախազությունը կառավարության մասն է կամ ենթակա է դրան, պետությունը պետք է ապահովի, որ իր՝ հանրային հետապնդման լիազորությունների բնույթը եւ շրջանակը հստակ սահմանված լինի օրենքով, եւ որ կառավարությունն իր լիազորություններն իրականացնի թափանցիկ կերպով եւ միջազգային պայմանագրերին եւ չափանիշներին, ազգային օրենսդրությանը եւ իրավունքի ընդհանուր սկզբունքներին համապատասխան⁸:

7. Հետեւաբար դատախազների եւ դատախազական ծառայության անկախությունը եւ ինքնավարությունը պետք է խրախուսվի⁹ եւ երաշխավորվի օրենքով, հնարավորինս բարձր մակարդակով, դատավորների կարգավիճակին համանման եղանակով: Այն երկրներում, որտեղ հանրային դատախազությունը կառավարությունից անկախ է, պետությունը պետք է ըստ այդմ արդյունավետ միջոցներ ձեռնարկի՝ երաշխավորելու, որ այդ անկախության բնույթը եւ շրջանակը սահմանվի օրենքով¹⁰, այլ ոչ թե պարզապես վարչական կարգավորումներով: Լիակատար անկախ դատախազական համակարգը շարունակում է լինել դատախազների անվերապահ անաչառության երաշխիք:

8. Միջազգային դատարանների նախադեպային իրավունքը եւ պայմանագրային մարմինների որոշումները նույնպես կարող են կարեւոր դերակատարում ունենալ: Սույն կարծիքը նպատակ ունի ուսումնասիրելու այդ նախադեպային իրավունքի եւ որոշումների ազդեցությունը դատախազական ծառայության եւ առանձին դատախազների անկախության վրա:

9. Սույն կարծիքը պատրաստվել է Մարդու իրավունքների եվրոպական կոմիտեի (ՄԻԵԿ) եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի, ինչպես նաև Եվրոպական միության արդարադատության դատարանի (ԵՄԱԴ) նախադեպային իրավունքի եւ Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան պայմանագրային մարմինների որոշումների հիման վրա:

10. Սույն կարծիքը հիմնված է նաև ԵՂԳԽՆ-ի կարծիքների, մասնավորապես՝ Դատախազներին առնչվող եվրոպական նորմերի ու սկզբունքների վերաբերյալ թիվ 9(2014) կարծիքի, այդ թվում՝ Հռոմի կանոնադրության, եւ Դատախազների անկախության, հաշվետվողականության եւ էթիկայի վերաբերյալ թիվ 13(2018) կարծիքի, ինչպես նաև Նախարարների կոմիտեի կողմից անդամ պետություններին ուղղված «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Rec(2000)19 առաջարկության (այսուհետ՝ Rec(2000)19 առաջարկություն) եւ Նախարարների կոմիտեի «Քրեական արդարադատության համակարգից դուրս հանրային մեղադրողների դերի մասին» Rec(2012)11 առաջարկության (այսուհետ՝ Rec(2012)11 առաջարկություն) վրա:

11. ԵՂԳԽՆ-ն նաև պատկերացում է ստացել 1990 թվականին ընդունված՝ ՄԱԿ-ի Դատախազների դերի վերաբերյալ ուղեցույցի¹¹, ինչպես նաև Դատախազների միջազգային ասոցիացիայի (ԴՄԱ) կողմից 1999 թվականին ընդունված «Դատախազների մասնագիտական պատասխանատվության չափանիշները եւ կարեւոր պարտականությունների եւ իրավունքների վերաբերյալ հայտարարություն» փաստաթղթի վերաբերյալ¹²:

12. Սույն կարծիքը պատրաստելու ընթացքում ԵՂԳԽՆ-ն հիմնվել է պրն ժառու դա Սիլվա Միգելի (Պորտուգալիա), պրն ժոզե Մանուել Սանտուշ Պաիշի (Պորտուգալիա), տկն Յանա Չեզուկովայի (Չեխիայի Հանրապետություն) եւ տկն Յոանա Բարա-Բուշիլայի (Ռումինիա) կողմից տրամադրված զգալի

⁷ Տե՛ս ժողովրդավարական հասարակությունում դատավորների եւ դատախազների միջև հարաբերությունների վերաբերյալ ԵՂԳԽՆ-ի թիվ 4 (2009) կարծիքը, 27-րդ պարբերություն:

⁸ Տե՛ս Դատախազներին առնչվող եվրոպական նորմերի ու սկզբունքների վերաբերյալ ԵՂԳԽՆ-ի թիվ 9(2014) կարծիքը, 33-րդ պարբերություն:

⁹ Տե՛ս Դատախազներին առնչվող եվրոպական նորմերի ու սկզբունքների վերաբերյալ ԵՂԳԽՆ-ի թիվ 9(2014) կարծիքը, Հռոմի կանոնադրություն, IV բաժին:

¹⁰ Տե՛ս Rec(2000)19 առաջարկությունը, 14-րդ պարբերություն: Տե՛ս նաև Դատախազներին առնչվող եվրոպական նորմերի ու սկզբունքների վերաբերյալ ԵՂԳԽՆ-ի թիվ 9(2014) կարծիքը, 33-րդ պարբերություն:

¹¹ Ընդունվել է 1990 թվականի օգոստոսի 27-ից սեպտեմբերի 7-ը Կոբլայի Հավանա քաղաքում կայացած՝ Հանցագործությունների կանխարգելմանը եւ հանցագործություն կատարած անձանց հետ վարվելակերպին նվիրված՝ Միավորված ազգերի կազմակերպության ութերորդ կոնգրեսում:

¹² Այս չափանիշները միջազգային ուղենիշ են ծառայում առանձին դատախազների եւ դատախազական ծառայությունների վարքագծի համար: Դրանցով սահմանվում է, որ կոնկրետ պետությունում թույլատրված լինելու դեպքում դատախազական հայեցողականության կիրառումը պետք է իրականացվի անկախ եւ գերծ լինի քաղաքական միջամտությունից: Եթե ոչ դատախազական մարմիններն իրավունք ունեն ընդհանուր կամ կոնկրետ ցուցումներ տալու դատախազներին, ապա այդ ցուցումները պետք է լինեն թափանցիկ, օրինական լիազորությանը համապատասխան եւ ենթակա սահմանված ուղենիշներին՝ դատախազական անկախության փաստացիությունը եւ ընկալումն ապահովելու համար:

օժանդակության վրա եւ նրանց շնորհակալություն է հայտնում սույն աշխատության մեջ նրանց արժեքավոր փորձագիտական ներդրման համար:

II. Միջազգային դատարանների որոշումներն ընդհանրապես դատական համակարգի եւ մասնավորապես դատախազների եւ դատախազական ծառայությունների գործնական անկախության վերաբերյալ

Ա. ԵՂԳԻՏԻ-ի կողմից դատախազների եւ դատախազական ծառայությունների անկախության վերաբերյալ մշակված սկզբունքները

13. Ըստ ԵՂԳԻՏԻ-ի՝ անկախությունը հասկացությունը նշանակում է, որ դատախազներն իրենց պարտականություններն իրականացնելիս գերծ են ապօրինի միջամտությունից, որպեսզի ապահովվի օրենքի եւ օրենքի գերակայության սկզբունքի նկատմամբ լիակատար հարգանքը եւ կիրառումը, եւ որ նրանք ենթակա չեն որեւէ քաղաքական ճնշման կամ որեւէ տեսակի ապօրինի ազդեցության: Անկախությունը վերաբերում է ոչ միայն ընդհանրապես դատախազական ծառայությանը, այլեւ դրա կոնկրետ մարմիններին եւ առանձին դատախազներին¹³:

14. Գործնական առումով վերոնշյալ սահմանումը հանգեցնում է բազմաթիվ կարեւոր սկզբունքների՝ այդ անկախությունն իրականություն դարձնելու համար.

- Նախեւառաջ, այդպիսի անկախությանն ուղղված միջոցները պետք է սահմանված լինեն համապատասխան իրավական շրջանակով, ինչպես որ սահմանված են դատավորների անկախության դեպքում¹⁴,

- ըստ այդմ, դատախազների կարգավիճակը, անկախությունը, աշխատանքի ընդունումը եւ մասնագիտական ուղին պետք է դատավորներին համանման կերպով հստակ սահմանված լինեն օրենքով եւ կարգավորվեն թափանցիկ եւ օբյեկտիվ չափորոշիչներով¹⁵,

- դատախազների համար կարգավիճակը պետք է ապահովի ինչպես նրանց արտաքին, այնպես էլ ներքին անկախությունը, նախընտրելի է՝ իրավական ամենաբարձր մակարդակի դրույթներով եւ երաշխավորելով դրանց կիրառումն այնպիսի անկախ մարմնի կողմից, ինչպիսին է Դատախազական խորհուրդը, մասնավորապես՝ պաշտոնի նշանակումների, մասնագիտական ուղու եւ կարգապահության համար¹⁶: Մասնավորապես անհրաժեշտ է ապահովել պատշաճ պաշտոնավարում եւ համապատասխան կարգավորումներ դատախազների պաշտոնի առաջխաղացման, կարգապահության եւ պաշտոնից ազատման համար¹⁷,

- դատախազներն իրենց մասնագիտական ուղու ընթացքում, այդ թվում՝ աշխատանքի ընդունման եւ առաջխաղացման համար պետք է ընտրվեն իրենց հմտությունների, գիտելիքների եւ Էթիկական արժեքների հիման վրա եւ պատշաճ վերապատրաստում անցնեն՝ իրենց գործառույթներն անկախ եւ անաչառ կերպով եւ Էթիկայի չափանիշների նկատմամբ լիակատար հարգանքով իրականացնելու համար¹⁸,

- գործադիր իշխանության կողմից կոնկրետ գործերի վերաբերյալ ցուցումներն ընդհանուր առմամբ անցանկալի են: Այս համատեքստում, հետապնդում չիրականացնելու մասին ցուցումները պետք է արգելվեն, իսկ հետապնդում իրականացնելու մասին ցուցումները պետք է խստորեն կարգավորվեն Rec(2000)19 առաջարկությանը համապատասխան¹⁹,

- դատախազական գործունեության՝ օրենքից բխող առաջնահերթությունների վերաբերյալ ընդհանուր ցուցումները, միջազգային համագործակցության զարգացումը կամ ծառայության կազմակերպման վերաբերյալ պահանջները պետք է մշտապես լինեն օրենքին համապատասխան, լիակատար թափանցիկ եւ գրավոր²⁰: Եթե ցուցումները դատախազներին տրվում են դատախազական

¹³ Տե՛ս Դատախազների անկախության, հաշվետվողականության եւ Էթիկայի վերաբերյալ ԵՂԳԻՏԻ-ի թիվ 13(2018) կարծիքը, Առաջարկություններ, 15-16-րդ պարբերություններ:

¹⁴ Տե՛ս Դատախազների անկախության, հաշվետվողականության եւ Էթիկայի վերաբերյալ ԵՂԳԻՏԻ-ի թիվ 13(2018) կարծիքը, Առաջարկություններ, i բաժին:

¹⁵ Տե՛ս Դատախազների անկախության, հաշվետվողականության եւ Էթիկայի վերաբերյալ ԵՂԳԻՏԻ-ի թիվ 13(2018) կարծիքը, Առաջարկություններ, iii բաժին:

¹⁶ Տե՛ս Դատախազների անկախության, հաշվետվողականության եւ Էթիկայի վերաբերյալ ԵՂԳԻՏԻ-ի թիվ 13(2018) կարծիքը, Առաջարկություններ, iii բաժին:

¹⁷ Տե՛ս «Չեկոյց դատական համակարգի անկախության եվրոպական չափանիշների վերաբերյալ. Մաս II. Դատախազություն», ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից դրա 85-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2010 թվականի դեկտեմբերի 17-18), 18-րդ պարբերություն, տե՛ս նաեւ Դատախազներին առնչվող եվրոպական նորմերի ու սկզբունքների վերաբերյալ ԵՂԳԻՏԻ-ի թիվ 9(2014) կարծիքը, 53-րդ պարբերություն:

¹⁸ Տե՛ս Դատախազների անկախության, հաշվետվողականության եւ Էթիկայի վերաբերյալ ԵՂԳԻՏԻ-ի թիվ 13(2018) կարծիքը, Առաջարկություններ, ii բաժին:

¹⁹ Տե՛ս Դատախազների անկախության, հաշվետվողականության եւ Էթիկայի վերաբերյալ ԵՂԳԻՏԻ-ի թիվ 13(2018) կարծիքը, Առաջարկություններ, iv բաժին:

²⁰ Տե՛ս Դատախազների անկախության, հաշվետվողականության եւ Էթիկայի վերաբերյալ ԵՂԳԻՏԻ-ի թիվ 13(2018) կարծիքը,

ծառայությունում իրենց վերադասների կողմից, ապա դրանք պետք է ներկայացվեն գրավոր, տրվեն թափանցիկ եւ մշտապես իրավունքի կիրառման, ճշմարտության փնտրության եւ արդարադատության պատշաճ իրականացումն ապահովելու նպատակով՝ միեւնույն ժամանակ հարգելով մարդու իրավունքները եւ հիմնարար ազատությունները²¹,

- դատախազների կարգավիճակը, վարձատրությունը եւ նրանց նկատմամբ վերաբերմունքը, ինչպես նաեւ դատախազական ծառայություններին հատկացվող ֆինանսական, մարդկային եւ այլ ռեսուրսներ պետք է համապատասխանեն առաքելության ակնաւոր բնույթին եւ դատախազների կոնկրետ պարտականություններին՝ դատավորների հետ համեմատելի եղանակով²²,

- անդամ պետությունները պետք է պաշտպանեն դատախազներին եւ ըստ պատշաճության՝ նրանց ընտանիքի անդամներին, եւ նրանց կենսապահովումն իրենց գործառույթներն իրականացնելիս²³,

- անդամ պետությունները, եթե ցանկանում են դատախազների համար Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի իմաստով դատական իշխանության կարգավիճակ վերապահել կամ այն պահպանել, պետք է իրենց վարչական եւ աստիճանակարգային համակարգերում ապահովեն, որ դատախազներն ունենան բոլոր երաշխիքները, մասնավորապես՝ անկախության համար պահանջվող երաշխիքները, որոնք կցված են այդ կարգավիճակին²⁴,

- լայն հասարակությունը եւ շահագրգիռ անձինք պետք է ըստ պահանջի ստանան պատշաճ տեղեկություններ դատախազական ծառայության եւ դատախազական գործունեության վերաբերյալ: Դրան զուգահեռ դատախազները պետք է առանցքային դեր խաղան այդ տեղեկությունները պատշաճ ուղիներով եւ օրենքին համապատասխան տարածելու, միեւնույն ժամանակ դատախազական անկախությունը, անմեղության կանխավարկածը հարգելու, քննության կարիքները, անձնական տվյալների պաշտպանությունը եւ վերաբերելի այլ հայեցակետեր ապահովելու հարցում²⁵:

15. Ինչ վերաբերում է մասնավորապես դատախազների պաշտոնավարման ժամկետին, ապա կարելու է վերհիշել Վենետիկի հանձնաժողովի կողմից հաստատված այն դիրքորոշումը, որ դատախազները պետք է օգտվեն մասնագիտական ուղի ունենալու հնարավորությունից մինչեւ կենսաթոշակի անցնելը: Վերանշանակման հնարավորությամբ կարճ ժամկետներով պաշտոնի նշանակումը պարունակում է ռիսկ առ այն, որ դատախազն իր որոշումները կկայացնի ոչ թե օրենքի, այլ այն անձանց գոհացնելու գաղափարի հիման վրա, որոնք նրան կվերանշանակեն²⁶:

Բ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպային իրավունքը

16. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում նշվում է, որ յուրաքանչյուր ոք ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ եւ անաչառ տրիբունալի իրավունք: Առկա է լայն իրավական պրակտիկա այն մասին, թե ինչպիսին պետք է լինի անկախ տրիբունալը: Հասկացության կարեւորությունը բխում է այն փաստից, որ այն դատական համակարգի տարր է, որը կենսական նշանակություն ունի օրենքի գերակայությունն ամրապնդելու եւ դրա գործունեության համար: Անկախ եւ անաչառ տրիբունալը երաշխավորում է մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը եւ կենսական նշանակություն ունի ժողովրդավարական հասարակությունում դատական համակարգի նկատմամբ հանրային վստահությունն ապահովելու համար:

17. Դատախազների անկախությունը եւ ինքնավարությունը մինչ այժմ ՄԻԵԴ-ի կողմից քննվել է միայն սահմանափակ չափով՝ ի տարբերություն դատավորներին վերաբերող նախադեպային իրավունքի, որը շատ ավելի ընդգրկում է: Դատախազների հետ կապված այս հասկացություններին անդրադարձ է արվել միայն որոշ վճիռներում: Այնուամենայնիվ, քանի որ դատախազական ծառայությունների անկախությունը եւ ինքնավարությունը ԵՂԳԽԻ-ի կարծիքով դատական համակարգի անկախության անքակտելի հետեւանքն են²⁷ (տե՛ս նաեւ սույն կարծիքի 2-րդ եւ 4-րդ պարբերությունները), դատական

Առաջարկություններ, 34-35-րդ պարբերություններ:

²¹ Տե՛ս Դատախազների անկախության, հաշվետվողականության եւ եթիկայի վերաբերյալ ԵՂԳԽԻ-ի թիվ 13(2018) կարծիքը, Առաջարկություններ, vi բաժին:

²² Տե՛ս Դատախազների անկախության, հաշվետվողականության եւ եթիկայի վերաբերյալ ԵՂԳԽԻ-ի թիվ 13(2018) կարծիքը, Առաջարկություններ, xi բաժին:

²³ Տե՛ս Դատախազների անկախության, հաշվետվողականության եւ եթիկայի վերաբերյալ ԵՂԳԽԻ-ի թիվ 13(2018) կարծիքը, Առաջարկություններ, ix բաժին:

²⁴ Տե՛ս Դատախազների անկախության, հաշվետվողականության եւ եթիկայի վերաբերյալ ԵՂԳԽԻ-ի թիվ 13(2018) կարծիքը, Առաջարկություններ, xii բաժին:

²⁵ Տե՛ս Դատախազների անկախության, հաշվետվողականության եւ եթիկայի վերաբերյալ ԵՂԳԽԻ-ի թիվ 13(2018) կարծիքը, Առաջարկություններ, vii բաժին:

²⁶ Տե՛ս «Չեկոյց դատական համակարգի անկախության եվրոպական չափանիշների վերաբերյալ. Մաս II. Դատախազություն», ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից դրա 85-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2010 թվականի դեկտեմբերի 17-18), 50-րդ պարբերություն:

²⁷ Տե՛ս Դատախազներին առնչվող եվրոպական նորմերի ու սկզբունքների վերաբերյալ ԵՂԳԽԻ-ի թիվ 9(2014) կարծիքը, Հռոմի կանոնադրություն, IV բաժին:

իշխանությանը վերաբերող վճիռներում տրամադրվող ուղղորդումը նույնպես կարող է որոշ չափով կիրառելի լինել, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), դատախազական ծառայությունների նկատմամբ:

18. Անկախ տրիբունալ հասկացությունն անկախություն է պահանջում ոչ միայն գործադիր իշխանությունից եւ վարույթի կողմերից, այլեւ օրենսդիր իշխանությունից²⁸: Ավելին, որոշելու համար, թե արդյոք տրիբունալը կարող է համարվել անկախ, ինչպես պահանջվում է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով, կարող է կարեւոր լինել նաեւ անկախ դիտվելը²⁹:

19. ՄԻԵԿ-ն այնուհետեւ լուսաբանել է անկախ դիտվելու կարեւորությունը եւ մատնանշել, որ այստեղ վտանգված է այն վստահությունը, որը ժողովրդավարական հասարակությունում դատարանները ներշնչում են հանրությանը եւ նախենառաջ մեղադրյալին՝ այնքանով, որքանով վերաբերելի է քրեական վարույթին³⁰:

20. Անկախ տրիբունալի պահանջը պահպանելը գնահատվում է օրենքով սահմանված չափորոշիչների հիման վրա, ինչպիսիք են դրա անդամների նշանակումը եւ նրանց պաշտոնավարման ժամկետի տեւողությունը կամ արտաքին ճնշումների ռիսկի դեմ բավարար երաշխիքների առկայությունը³¹:

21. Մասնավորապես գործադիր իշխանության կողմից դատավորների՝ նրանց պաշտոնավարման ժամկետի ընթացքում անփոխարինելիությունն ընդհանուր առմամբ համարվում է նրանց անկախության հետեւանք եւ այդպիսով ներառված է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի երաշխիքների մեջ³²:

22. Թեեւ ՄԻԵԿ-ը հաստատել է, որ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով դատարաններից պահանջվում է լինել անկախ ոչ միայն գործադիր իշխանությունից եւ կողմերից, այլեւ օրենսդիր իշխանությունից, զուտ դատավորների՝ խորհրդարանի կողմից նշանակվելու փաստը չի կարող մեկնաբանվել որպես նրանց անկախությունը կամ անաչառությունը կասկածի տակ դնող³³:

23. Գործադիր իշխանության կողմից դատավորների նշանակումը կարող է թույլատրելի լինել՝ պայմանով, որ նշանակված անձինք իրենց դատական գործառույթներն իրականացնելիս զերծ են ազդեցությունից կամ ճնշումից³⁴:

24. Անաչառության պահանջն ունի երկու հայեցակետ. առաջինը, տրիբունալը պետք է սուբյեկտիվորեն զերծ լինի անձնական կանխակալությունից կամ կողմակալությունից, եւ երկրորդ, այն պետք է օբյեկտիվ տեսանկյունից անաչառ լինի, այսինքն՝ պետք է բավարար երաշխիքներ առաջարկի՝ իր անաչառության վերաբերյալ ցանկացած իրավաչափ կասկած բացառելու համար³⁵:

25. Ինչ վերաբերում է դատավորների պաշտոնավարման ժամկետի տեւողությանը, ապա որեւէ կոնկրետ պաշտոնավարման ժամկետ որպես անիրաժեշտ նվազագույն ժամկետ չի սահմանվել: Թեեւ գործադիր իշխանության կողմից դատավորների՝ նրանց պաշտոնավարման ժամկետի ընթացքում անփոխարինելիությունն ընդհանուր առմամբ համարվում է նրանց անկախության հետեւանք³⁶, օրենքով այդ անփոխարինելիության պաշտոնական ճանաչման բացակայությունն ինքնին չի եւթադրում անկախության բացակայություն՝ պայմանով, որ անփոխարինելիությունը փաստացի ճանաչվում է, եւ

²⁸ *Նինն-Հանսենն ընդդեմ Դանիայի* (որոշում) [Ninn-Hansen v. Denmark (dec.)], թիվ 28972/95, 1999 թվականի մայիսի 18, 93-րդ պարբերություն:

²⁹ *Շրամեկն ընդդեմ Ավստրիայի* [Sramek v. Austria], թիվ 8790/79, 1984 թվականի հոկտեմբերի 22, §42: *Տե՛ս, mutatis mutandis, Բենսիբելը եւ Ֆելն ընդդեմ Միացյալ Թագավորության* [Campbell and Fell v. the United Kingdom], թիվ 7819/77 եւ թիվ 7878/77, 1984 թվականի հունիսի 28, շարք Ա, թիվ 80, էջ 39-40, 78-րդ պարբերություն, եւ *Պիերսակն ընդդեմ Բելգիայի* [Piersack v. Belgium], թիվ 8692/79, 1982 թվականի հոկտեմբերի 1, շարք Ա, թիվ 53, էջ 14-15, 30-րդ պարբերություն:

³⁰ *Շահիներն ընդդեմ Թուրքիայի* [Şahiner v. Turkey], թիվ 29279/95, 2001 թվականի սեպտեմբերի 25, § 44: Զաղաքացիաիրավական հայեցակետի համար տե՛ս *Սասիլորը Լորմինն ընդդեմ Ֆրանսիայի* [Sacilor Lormines v. France], թիվ 65411/01, 2006 թվականի նոյեմբերի 9, § 63, *Գրեյս Գաթն ընդդեմ Մալթայի* [Grace Gatt v. Malta], թիվ 46466/16, 2019 թվականի հոկտեմբերի 8, § 85:

³¹ *Մուստաֆա Թունչը եւ Բեյրեթ Թունչն ընդդեմ Թուրքիայի* [Mustafa Tunç and Fecire Tunç v. Turkey (GC)], թիվ 24014/05, 2015 թվականի ապրիլի 14, § 221, *Ֆինդլին ընդդեմ Միացյալ Թագավորության* [Findlay v. the United Kingdom], թիվ 22107/93, 1997 թվականի փետրվարի 25, § 73, *Բրայանն ընդդեմ Միացյալ Թագավորության* [Bryan v. the United Kingdom], թիվ 19178/91, 1995 թվականի նոյեմբերի 22, շարք Ա, թիվ 335-Ա, էջ 15, 37-րդ պարբերություն: Զաղաքացիաիրավական հայեցակետի համար տե՛ս *Լանգբորգերն ընդդեմ Շվեդիայի* [Langborger v. Sweden], թիվ 11179/84, 1989 թվականի հունիսի 22, § 32, *Կլեյնը եւ այլք ընդդեմ Նիդեռլանդների* [UՊ] [Kleyn and Others v. the Netherlands (GC)], թիվ 39343/98, թիվ 39651/98, թիվ 43147/98 եւ թիվ 46664/99), 2003 թվականի մայիսի 6, § 190:

³² *Բենսիբելը եւ Ֆելն ընդդեմ Միացյալ Թագավորության*, թիվ 7819/77 եւ թիվ 7878/77, 1984 թվականի հունիսի 28, շարք Ա, թիվ 80, էջ 39-40, 80-րդ պարբերություն:

³³ *Ֆիլիպինն ընդդեմ Սան Մարինոյի* (որոշում) [Filippini v. San Marino (dec.)], թիվ 10526/02, 2003 թվականի օգոստոսի 26, § 8, *Նինն-Հանսենն ընդդեմ Դանիայի* (որոշում), թիվ 28972/95), 1999 թվականի մայիսի 18, § 89, 93:

³⁴ *Յենրիկ Ուրբանը եւ Ռիշարդ Ուրբանն ընդդեմ Լեհաստանի* [Henryk Urban and Ryszard Urban v. Poland], թիվ 23614/08, 2010 թվականի նոյեմբերի 30, § 49, *Բենսիբելը եւ Ֆելն ընդդեմ Միացյալ Թագավորության*, թիվ 7819/77 եւ թիվ 7878/77, 1984 թվականի հունիսի 28, § 79, *Սակտուֆը եւ Ղամյանովիչն ընդդեմ Բոսնիա եւ Հերցեգովինայի* [UՊ] [Maktouf and Damjanović v. Bosnia and Herzegovina (GC)], թիվ 2312/08 եւ թիվ 34179/08, 2013 թվականի հոկտեմբերի 18, § 49:

³⁵ *Ֆիլդինն ընդդեմ Միացյալ Թագավորության*, 1997 թվականի փետրվարի 25, Վճիռների եւ որոշումների մասին գեկույցներ 1997-Ի, էջ 281, § 73:

³⁶ *Բենսիբելը եւ Ֆելն ընդդեմ Միացյալ Թագավորության*, թիվ 7819/77 եւ թիվ 7878/77, 1984 թվականի հունիսի 28, շարք Ա, թիվ 80, էջ 39-40, 80-րդ պարբերություն:

առկա են անհրաժեշտ այլ երաշխիքներ³⁷:

26. Դատավորների անկախության համար պահանջվում է, որ առանձին դատավորները զերծ լինեն ոչ միայն արտաքին, այլև դատական համակարգի ներսից գործադրվող անհարկի ազդեցությունից: Դատավորների այդ ներքին անկախության համար պահանջվում է, որ նրանք զերծ լինեն գործընկեր դատավորների կամ դատարանում վարչական գործառույթներ իրականացնող անձանց, օրինակ՝ դատարանի նախագահի կամ դատարանի ստորաբաժանման նախագահի հրահանգներից կամ ճնշումներից³⁸:

27. Մասնավորապես գործը քննող դատարանի անկախության եւ անաչառության վերաբերյալ կասկածները կարող են համարվել օբյեկտիվորեն հիմնավորված քրեական գործով դատարանի կազմի մեջ մտնող անդամների կրկնվելու եւ հաճախակի փոխարինումների հետեւանքով, որոնք իրականացվում են ոչ ակնհայտ պատճառներով եւ չեն սահմանափակվում դատավարական երաշխիքներով³⁹:

28. Այս առնչությամբ, եթե տրիբունալի անդամների կազմում ընդգրկված է այնպիսի անձ, որն իր պարտականությունների եւ ծառայության կազմակերպման տեսանկյունից կողմերից մեկի նկատմամբ գտնվում է ստորադաս դիրքում, ապա մեղադրյալներն այդ անձանց անկախության վերաբերյալ կարող են ունենալ իրավաչափ կասկած: Այդպիսի իրավիճակը լրջորեն ազդում է այն վստահության վրա, որը դատարանները պետք է ներշնչեն ժողովրդավարական հասարակությունում⁴⁰:

29. Այն սկզբունքները, որոնք կիրառվում են որոշելիս, թե արդյոք տրիբունալը կարող է ՄԻԵԿ-ի իմաստով համարվել անկախ եւ անաչառ, կիրառվում են ոչ միայն մասնագետ, այլև ոչ մասնագետ դատավորների եւ երդվյալ ատենակալների նկատմամբ⁴¹:

30. Ժողովրդավարական հասարակությունում ինչպես դատարանները, այնպես էլ քննչական մարմինները պետք է զերծ լինեն քաղաքական ճնշումից: Այդպիսով, հանրության շահերից է բխում պետության հետապնդում իրականացնող մարմինների անկախության եւ քաղաքական չեզոքության նկատմամբ վստահությունը պահպանել⁴²:

31. Ավելին, որպեսզի քննությունը լինի արդյունավետ, քննությունն իրականացնելու համար պատասխանատու անձինք պետք է անկախ եւ անաչառ լինեն օրենքի համաձայն եւ գործնականում: Սա նշանակում է ոչ միայն աստիճանակարգային կամ ինստիտուցիոնալ կապի բացակայություն իրադարձություններին ներգրավված անձանց հետ, այլև գործնական անկախություն⁴³:

32. Զննության կամ դրա արդյունքների նկատմամբ պետք է առկա լինի հանրային մանրամասն ուսումնասիրություն՝ գործնականում, ինչպես նաեւ տեսականում հաշվետվողականություն ապահովելու, օրենքի գերակայությանն իշխանությունների կողմից ենթարկվելու նկատմամբ հանրային վստահությունը պահպանելու եւ ապօրինի գործողությունների վերաբերյալ գաղտնի համաձայնությունը կամ դա հանդուրժելը կանխելու համար⁴⁴:

33. Անդամ պետություններում կիրառվող ընդհանուր դատավարական երաշխիքները ներառում են դրույթներ, որոնցով երաշխավորվում են հանրային մեղադրողների ինստիտուցիոնալ կամ գործառական անկախությունը, լինեն նրանք դատական համակարգի անդամներ, թե քաղաքացիական ծառայողներ⁴⁵: Ավելին, որոշ անդամ պետություններում դատախազներն անհարկի ճնշումներից պաշտպանված են լրացուցիչ երաշխիքների միջոցով, ինչպիսին է ոչ մեծ ծանրության իրավախախտումներից բացի բոլոր իրավախախտումները հետապնդելու պարտավորությունը⁴⁶ (օրինականության սկզբունքը հարգելու անհրաժեշտությունից ելնելով): Որոշ այլ անդամ

³⁷ *Զեմփերելը եւ Ֆելն ընդդեմ Միացյալ Թագավորության*, թիվ 7819/77 եւ թիվ 7878/77, 1984 թվականի հունիսի 28, § 80:

³⁸ *Պարով-Տկալչիչն ընդդեմ Խորվաթիայի* [*Parlov-Tkalčić v. Croatia*], թիվ 24810/06, 2009 թվականի դեկտեմբերի 22, § 86, *Դակտարասն ընդդեմ Լիտվայի* [*Daktaras v. Lithuania*], թիվ 42095/98, 2000 թվականի հոկտեմբերի 10, § 36, Մոյսեյեւն ընդդեմ Ռուսաստանի [*Moiseyev v. Russia*], թիվ 62936/00, 2008 թվականի հոկտեմբերի 9, § 184, *Սասիլոյը Լոդվինն ընդդեմ Ֆրանսիայի*, թիվ 65411/01, 2006 թվականի նոյեմբերի 9, § 59:

³⁹ *Մոյսեյեւն ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 62936/00, 2008 թվականի հոկտեմբերի 9, § 184:

⁴⁰ *Շահիներն ընդդեմ Թուրքիայի* [*Sahiner v. Turkey*], թիվ 29279/95, 2001 թվականի սեպտեմբերի 25, § 45:

⁴¹ *Հյոլմսն ընդդեմ Շվեդիայի* [*Holm v. Sweden*], թիվ 14191/88, 1993 թվականի նոյեմբերի 25, § 30:

⁴² *Գուջանն ընդդեմ Մոլդովայի* [*Guja v. Moldova*], թիվ 14277/04, 2008 թվականի փետրվարի 12, § 86 եւ 90:

⁴³ *Կոլեւինն ընդդեմ Բուլղարիայի* [*Kolevi v. Bulgaria*], թիվ 1108/02, 2009 թվականի նոյեմբերի 5, § 193, *Ռամսահայը եւ այլք ընդդեմ Լիդեյանի* [*Ramsahai and Others v. the Netherlands*], թիվ 52391/99, 2007 թվականի մայիսի 15, §§ 321-332, *Խախնդրական եւ Չամաշվիլին ընդդեմ Գրաստանի* [*Khaindrava and Dzamashvili v. Georgia*], թիվ 18183/05, 2010 թվականի հունիսի 8, §§ 59-61, *Թասին Աքարն ընդդեմ Թուրքիայի* [*Tahsin Acar v. Turkey*], թիվ 26307/95, 2004 թվականի ապրիլի 8, §§ 222-225, *Գյուլեչն ընդդեմ Թուրքիայի* [*Güleç v. Turkey*], թիվ 21593/93, 1998 թվականի հուլիսի 27, § 82, *Սկավուզո-Հագերը եւ այլք ընդդեմ Շվեյցարիայի* [*Scavuzzo-Hager and Others v. Switzerland*], թիվ 41773/98, 2006 թվականի փետրվարի 7, §§ 78 եւ 80-86, եւ *Երգինն ընդդեմ Թուրքիայի* [*Ergin v. Turkey*], թիվ 23818/94, 1998 թվականի հուլիսի 28, §§ 83-84:

⁴⁴ *Անգուելովանն ընդդեմ Բուլղարիայի* [*Anguelova v. Bulgaria*], թիվ 38361/97, ՄԻԵԿ 2002 IV, § 140:

⁴⁵ *Կոլեւինն ընդդեմ Բուլղարիայի*, թիվ 1108/02, 2010 թվականի փետրվարի 5, §§ 148-149, *Վասիլեւսկունն ընդդեմ Ռումինիայի*, թիվ 27053/95, 1998 թվականի մայիսի 22, §§ 40-41, *Պանտեանն ընդդեմ Ռումինիայի*, թիվ 33343/96, 2003 թվականի հունիսի 3, § 238, *Մուլենն ընդդեմ Ֆրանսիայի*, թիվ 37104/06, 2011 թվականի նոյեմբերի 23, § 57:

⁴⁶ *Կոլեւինն ընդդեմ Բուլղարիայի*, թիվ 1108/02, 2010 թվականի փետրվարի 5, §§ 149:

պետություններում, որոնք ճանաչում են հայեցողական հետապնդումների սկզբունքը, կարեւորություն է տրվում պաշտոնական ուղեւորների թափանցիկությանը⁴⁷:

34. Որոշ անդամ պետություններում դատախազական համակարգն ունի աստիճանակարգային կառուցվածք, որտեղ բարձրաստիճան դատախազները լիազորություն ունեն կարգադրություններ եւ ցուցումներ տալու ավելի ցածր աստիճան ունեցող դատախազներին: Չնայած այս կառուցվածքին՝ անդամ պետությունների իրավական համակարգերում գործում են մի շարք երաշխիքներ՝ ապահովելու բարձրաստիճան դատախազների վերաբերյալ քրեական գործերով քննություններ իրականացնելու համար պատասխանատու մարմինների արդյունավետությունն ու անկախությունը: Այդ երաշխիքները կարող են ներառել.

- գործի փոխանցումը դատախազության համակարգում կամ դրանից դուրս գտնվող մեկ այլ մարմնի,
- հատուկ քննչական ընթացակարգեր բարձրաստիճան դատախազների նկատմամբ կասկած ներառող գործերով,
- կասկածի տակ գտնվող դատախազի պարտականությունների կասեցում (ամենաբարձրաստիճան դատախազի դեպքում այս որոշումը կայացվում է նրա նշանակման համար պատասխանատու քաղաքական մարմինների կողմից), եւ
- ընդհանուր երաշխիքներ, ինչպես օրինակ՝ դատախազների՝ իրենց վերադասից եւ դատախազական ծառայության գործողությունների նկատմամբ վերահսկողությունից գործառական անկախությունն ապահովող երաշխիքներ⁴⁸:

35. ՄԻԵԴ-ը 2020 թվականին բացահայտ անդրադարձել է դատախազների անկախությանը՝ նշելով, որ գլխավոր դատախազի պաշտոնից հեռացումը եւ դա հիմնավորող պատճառներն այդ կոնկրետ դեպքում հազիվ թե կարող են համատեղվել դատական գործառույթի՝ որպես պետական իշխանության անկախ ճյուղի բնույթի եւ դատախազների անկախության սկզբունքի այն կոնկրետ հաշվառմանը, որը, ըստ Եվրոպայի խորհրդի եւ վերաբերելի միջազգային փաստաթղթերի, դատական անկախության պահպանման առանցքային տարր է: Հակառակ դրան, դիմումատուին գլխավոր դատախազի իր պաշտոնից հեռացնելու մշտական բնույթը կարծես թե տապալել է հենց դատական իշխանության անկախությունը պահպանելու նպատակը⁴⁹:

36. ՄԻԵԴ-ը սահմանել է, որ կառավարության գործադիր ճյուղը չի կարող հեռացնել գլխավոր դատախազին առանց անկախ դատական վերանայման⁵⁰, ինչպես նաեւ նշել է, որ դիմումատուի լիազորության վաղաժամկետ դադարեցումը հատկապես խիստ պատիժ էր, որն անկասկած «դեմոտիվացնող ազդեցություն» է ունեցել այն իմաստով, որ այն պետք է որ ապախրախուսած լինի ոչ միայն նրան, այլեւ հետագայում այլ դատախազների եւ դատավորների՝ մասնակցելու դատական իշխանության վրա ազդեցություն գործող օրենսդրական բարեփոխումների եւ ավելի լայն իմաստով դատական իշխանության անկախությանը վերաբերող հարցերի վերաբերյալ հանրային բանավեճերին⁵¹: Այս կերպ ՄԻԵԴ-ը վերահաստատել է, ի թիվս այլնի, դատախազների՝ այն օրենսդրական բարեփոխումների առնչությամբ ազատ արտահայտվելու իրավունքը, որոնք կարող են ազդեցություն գործել դատական իշխանության եւ դրա անկախության վրա:

9. Եվրոպական միության արդարադատության դատարանի (ԵՄԸԴ) նախադեպային իրավունքը

37. ԵՄԸԴ-ն նշել է, որ «Եվրոպական միության մասին» պայմանագրի 19-րդ հոդվածը պարունակում է դատական անկախությունն ապահովելու պարտավորություն, եւ այն ընդգծել է, որ անկախության երաշխիքը, որը հատուկ է որոշումների կայացման պարտականությանը, պահանջվում է ոչ միայն ԵՄ-ի մակարդակով, այլեւ անդամ պետությունների մակարդակով՝ ազգային դատարանների առնչությամբ: Դատական անկախության հասկացությունը մասնավորապես ենթադրում է, որ տվյալ մարմինն իր դատական գործառույթներն իրականացնում է լիովին անկախ, առանց ենթարկվելու որեւէ աստիճանակարգային սահմանափակման կամ ստորադասվելով որեւէ այլ մարմնի եւ առանց որեւէ աղբյուրից կարգադրություններ կամ ցուցումներ ստանալու, եւ որ հետեւաբար այն պաշտպանվում է արտաքին միջամտություններից կամ ճնշումից, որը կարող է վնասել դրա անդամների կողմից անկախ վճռի կայացումը եւ ազդեցություն գործել նրանց որոշումների վրա⁵²:

⁴⁷ Կոլեկին ընդդեմ Բուլղարիայի, թիվ 1108/02, 2010 թվականի փետրվարի 5, §§ 149:

⁴⁸ Կոլեկին ընդդեմ Բուլղարիայի, թիվ 1108/02, 2009 թվականի նոյեմբերի 5, § 142:

⁴⁹ Կյովեսին ընդդեմ Ռումինիայի [Kövesi v. Romania], թիվ 3594/19, 2020 թվականի մայիսի 5, § 208:

⁵⁰ Կյովեսին ընդդեմ Ռումինիայի, թիվ 3594/19, 2020 թվականի մայիսի 5, §§ 154, 201, 205 եւ 208-209: Տե՛ս նաեւ Բակյան ընդդեմ Հունգարիայի [Baka v. Hungary], թիվ 20261/12, 2016 թվականի հունիսի 23, §§ 156-157 եւ 164-167:

⁵¹ Կյովեսին ընդդեմ Ռումինիայի, թիվ 3594/19, 2020 թվականի մայիսի 5, § 209:

⁵² Գործ C-64/16, (Պորտուգալիայի դատավորների միության արհմիություն [Associação Sindical dos Juizes Portugueses]), 2018 թվականի

38. ԵՄԱԴ-ն նաեւ շեշտել է, որ անկախության եւ անաչառության երաշխիքները պահանջում են կանոններ, մասնավորապես՝ երաշխիքներ դատական մարմնի կազմի եւ անդամների նշանակման, ծառայության ժամկետի եւ դրա անդամների ձեռնպահ մնալու, մերժման եւ պաշտոնից հեռացման հիմքերի առկայությամբ, որպեսզի անձանց մտքում ցրվի այդ մարմնի՝ արտաքին գործոնների կողմից ազդեցության չենթարկվելու եւ դրա կողմից քննվող շահերի առկայությամբ չեզոքության վերաբերյալ ցանկացած անհիմն կասկած: Տվյալ մարմնի անկախությանն առնչվող պայմանը դիտարկելու համար նախադեպային իրավունքով պահանջվում է, ի թիվս այլնի, որ դրա անդամների պաշտոնից հեռացումը պետք է որոշվի բացահայտ օրենսդրական դրույթներով⁵³:

39. ԵՄԱԴ-ն դատախազների եւ եվրոպական դատական կարգադրություն «արձակող դատական մարմին» հասկացության մեկնաբանության առնչությամբ նշել է⁵⁴, որ Ֆրանսիայի սահմանադրության 64-րդ հոդվածով երաշխավորվում է դատական մարմինների անկախությունը, որը ներառում է դատավորներին եւ հանրային մեղադրողներին, եւ որ դատախազությունն իր պարտականություններն իրականացնում է օբյեկտիվ կերպով, առանց կոնկրետ գործով գործադիր իշխանությունից որեւէ ցուցման, քանի որ արդարադատության նախարարը հանրային մեղադրողներին քրեական արդարադատության քաղաքականության վերաբերյալ կարող է միայն ընդհանուր ցուցումներ տալ՝ ապահովելու համար, որ այդ քաղաքականությունը հետեւողականորեն կիրառվում է ամբողջ տարածքում: Ըստ այդ կառավարման մարմնի, այդ ընդհանուր ցուցումները որեւէ հանգամանքում չեն կարող ունենալ հանրային մեղադրողին ձերբակալման մասին եվրոպական որոշում արձակելու համաչափության առնչությամբ իր հայեցողականությունն իրականացնելու կանխելու ազդեցություն: Ավելին, դատախազությունն իրականացնում է հետապնդում եւ ապահովում է, որ օրենքը կիրառվի անաչառության սկզբունքին համապատասխան⁵⁵:

40. Այսպիսով, ԵՄԱԴ-ն ընդգծում է բազմաթիվ չափորոշիչներ՝ գնահատելու համար, թե արդյոք կոնկրետ դատախազը պետք է համարվի ձերբակալման մասին եվրոպական որոշում արձակող դատական մարմին.

- արդարադատության իրականացմանը մասնակցելը,
- օբյեկտիվորեն գործելը,
- անկախ լինելը,
- դատական մանրամասն ուսումնասիրության ենթակա լինելը⁵⁶:

41. Երրորդ չափորոշիչի առնչությամբ այն պահանջում է օրենքով սահմանված կանոններ եւ ինստիտուցիոնալ շրջանակ, որոնք կարող են երաշխավորել, որ արձակող դատական մարմինը ձերբակալման մասին այդպիսի որոշում արձակելու մասին որոշում ընդունելիս ենթակա չլինի, ի թիվս այլնի, գործադիր իշխանությունից կոնկրետ գործով ցուցում ստանալու վտանգի⁵⁷:

42. Հետեւաբար անդամ պետությունների այն դատախազների նկատմամբ, որոնք պատասխանատու են հետապնդումներ իրականացնելու համար, եւ որոնք գործում են իրենց աստիճանակարգային վերադասների ղեկավարության եւ հսկողության ներքո, տարածվի «արձակող դատական մարմին» եզրույթը՝ այդ դրույթի իմաստով, պայմանով, որ նրանց կարգավիճակը նրանց ձերբակալման մասին եվրոպական որոշում արձակելու մասով տրամադրում է անկախության երաշխիք, մասնավորապես՝ գործադիր իշխանության առնչությամբ⁵⁸: Ի հավելումն դատախազների ինքնավարության եւ անկախության՝ ձերբակալման մասին եվրոպական որոշումներ արձակելու մասին նրանց որոշումները պետք է ենթակա լինեն դատական վերանայման⁵⁹:

Դ. Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանի նախադեպային իրավունքը

43. Դատավորների անկախությունը երաշխավորված է Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի 8-րդ հոդվածում: Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանի իրավական պրակտիկան դատավորների անկախության առնչությամբ հետեւում է նաեւ ՄԻԵԴ-ի չափորոշիչներին, քանի որ ցանկացած դատավորի անկախություն ենթադրում է, որ առկա է պաշտոնի նշանակման

փետրվարի 28, §5 42 եւ 44:

⁵³ Գործ C-64/16, (Պորտուգալիայի դատավորների միության արհմիություն), 2018 թվականի փետրվարի 28, եւ գործ C-216/18 (Արդարադատության եւ հավասարության նախարար), 2018 թվականի հուլիսի 25, §5 63 եւ 66:

⁵⁴ Խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի «Ձերբակալման մասին եվրոպական որոշման եւ անդամ պետությունների միջեւ հանձնման ընթացակարգերի մասին» 2002/584/JHA շրջանակային որոշման 6(1) հոդվածի իմաստով, Խորհրդի 2009 թվականի փետրվարի 26-ի 2009/299/JHA շրջանակային որոշմամբ կատարված փոփոխություններով:

⁵⁵ Տե՛ս 566/19 գործը (C-566/19 եւ C-626/19 միացված գործեր), 2019 թվականի դեկտեմբերի 12, §54: Տե՛ս 625/19 եւ 627/19 գործերով նույն ամսաթվի վճիռները: Տե՛ս նաեւ C-489/19 գործը, 2019 թվականի հոկտեմբերի 9, եւ C-508/18 (C-508/18 եւ C-82/19 միացված գործեր) եւ C-509/18 գործերը, 2019 թվականի մայիսի 27:

⁵⁶ Տե՛ս C-648/20, C-206/20, C-414/20 գործերը:

⁵⁷ Գործ 566/19, §52: Տե՛ս նաեւ C 508/18 եւ C 82/19 PPU գործերը, §51 եւ 74:

⁵⁸ Գործ 566/19, §58:

⁵⁹ Գործ 566/19, §74:

պատշաճ գործընթաց, պաշտոնավարման սահմանված ժամկետ եւ արտաքին ճնշումների դեմ երաշխիք⁶⁰:

44. ՄիԵԴ-ի իրավական պրակտիկային սերտորեն համահունչ Միջամերիկյան դատարանը նշել է, որ պետական իշխանությունների տարանջատման առաջնային նպատակներից մեկն է դատավորների անկախությունը երաշխավորելը⁶¹:

45. Միջամերիկյան դատարանը վճռել է, որ դատարանին մատչելիության պահանջներն անկախության եւ անաչառության չափորոշիչի հետ միասին տարածվում են նաեւ ոչ դատական մարմինների վրա, որոնք պատասխանատու են միևնույն դատական վարույթն իրականացվող քննության համար, ցույց տալով, որ մարդու իրավունքների խախտումների քննությունները պետք է ոչ միայն իրականացվեն ողջամիտ ժամկետում, այլև դրանք պետք է նաեւ լինեն անկախ եւ անաչառ⁶²:

46. Դատարանը նաեւ վճռել է, որ հատկապես կարելոր է, որ իրավասու մարմիններն ընդունեն ողջամիտ բոլոր միջոցները՝ քննություն իրականացնելու նպատակով անհրաժեշտ ապացուցողական նյութերը երաշխավորելու համար, եւ որ նրանք լինեն գործի փաստերին ներգրավված պաշտոնատար անձանցից անկախ ինչպես օրենքով, այնպես էլ փաստացի: Վերոնշյալով պահանջվում է ոչ միայն աստիճանակարգային կամ ինստիտուցիոնալ անկախություն, այլև իրական անկախություն⁶³:

47. Օրենքով եւ փաստացի անկախությունն ընդգրկում է կրկնակի հարթություն՝ առաջինն ինստիտուցիոնալ կամ համակարգայինն է, իսկ երկրորդը՝ գործառնականը, հղում կատարելով արդարադատության իրականացման մասնակիցների՝ իրենց գործառույթներն իրականացնելիս անհատական անկախությանը⁶⁴:

48. Միջամերիկյան դատարանը նաեւ վճռել է, որ դատավորների նկատմամբ կիրառվող՝ անկախության ամրապնդված երաշխիքները դատական իշխանության անհրաժեշտ անկախության հետեւանքով, որը կարելոր է դատական գործառույթների իրականացման համար, պետք է կիրառվի նաեւ դատախազների նկատմամբ՝ նրանց կողմից իրականացվող պարտականությունների բնույթից ելնելով⁶⁵:

49. Անդրադառնալով դատախազների կոնկրետ պարտականություններին, Դատարանն ընդգծել է պետության՝ մարդու իրավունքների խախտումների եւ ընդհանրապես հանցագործությունների անկախ եւ օբյեկտիվ քննություն իրականացնելու պարտականությանը՝ շեշտելով, որ քննության համար պատասխանատու մարմինները պետք է լինեն անկախ օրենքով եւ փաստացի, ինչը պահանջում է ոչ միայն աստիճանակարգային կամ ինստիտուցիոնալ անկախություն, այլև փաստացի անկախություն⁶⁶:

50. Դատարանն ավելացրել է, որ դատախազների անկախությունը երաշխավորում է, որ նրանք իրենց գործողություններում չեն լինի քաղաքական ճնշումների կամ ոչ պատշաճ խոչընդոտման առարկա, ոչ էլ հաշվեհարդարի կենթարկվեն իրենց կողմից օբյեկտիվորեն կայացված որոշումների համար: Դա պահանջում է կայունության եւ իրենց պաշտոնում սահմանված ժամկետով պաշտոնավարման երաշխիք: Յետեւաբար դատախազների համար գործող՝ դատավորների համար ճանաչված պաշտպանության մեխանիզմների կիրառմանը համարժեք կոնկրետ երաշխիքները հանգեցնում են հետեւյալին՝ i) որ պաշտոնից հեռացումը պետք է կատարվի բացառապես թույլատրված պատճառներով, արդար դատաքննության իրավունքին համապատասխանող վարույթի միջոցով կամ այն պատճառով, որ այն լիազորության ժամկետը, որի համար նրանք նշանակվել են, ավարտվել է, ii) որ դատախազները կարող են պաշտոնից հեռացվել միայն ծանր կարգապահական խախտումների կամ անգործունակության համար, եւ iii) դատախազների դեմ հարուցված բոլոր վարույթները պետք է համապատասխանաբար լինեն արդար ընթացակարգեր, որոնք երաշխավորում են սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված օբյեկտիվությունը եւ անաչառությունը՝ հաշվի առնելով այն փաստը, որ դատախազներին ազատորեն պաշտոնից հեռացնելը խթանում է նրանց համար իրենց պարտականություններն առանց հաշվեհարդարի վախի իրականացնելու փաստացի հնարավորության վերաբերյալ օբյեկտիվ կասկածը⁶⁷:

Ե. Միջազգային դատարանների որոշումների ազդեցությունը դատախազների

⁶⁰ *Սահմանադրական դատարանն ընդդեմ Պերուի* [Tribunal Constitucional v. Perú] գործը, 2001 թվականի հունվարի 31-ի վճիռ, §75:

⁶¹ *Սահմանադրական դատարանն ընդդեմ Պերուի* գործը, 2001 թվականի հունվարի 31-ի վճիռ, § 73:

⁶² *Կանտորալ Յուամանին եւ Գարսիա Սանտա Կրուսն ընդդեմ Պերուի* [Cantoral Huamán and García Santa Cruz v. Perú] գործը, 2007 թվականի հուլիսի 10, §§ 132-133:

⁶³ *Սամբրանո Վելեզ եւ այլք ընդդեմ Էկվադորի* [Zambrano Vélez et al. v. Ecuador] գործը, 2007 թվականի հուլիսի 4, §122:

⁶⁴ «Արդարադատության իրականացման մասնակիցների անկախության երաշխիքները: Դեպի Ամերիկաներում արդարադատության մատչելիության եւ օրենքի գերակայության ամրապնդում» գեկույց՝ հաստատված Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովի կողմից 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, § 25:

⁶⁵ *Մարտինես Եսկիվիան ընդդեմ Կոլումբիայի* [Martínez Esquivia v. Colombia] գործը, §§84, 86:

⁶⁶ *Մարտինես Եսկիվիան ընդդեմ Կոլումբիայի* գործը, §§86-88: Նույն իմաստով, ՄԻՄԶ, թիվ 109/18 գեկույց, Գործ 12.840: Ըստ էության քննությունը: *Յենինա Եսթեր Մարտինես Եսկիվիան ընդդեմ Կոլումբիայի* [Yenina Esther Martínez Esquivia v. Colombia], 2018 թվականի հոկտեմբերի 5, հաստատված Յանձնաժողովի կողմից 2018 թվականի հոկտեմբերի 5-ին անցկացված իր թիվ 126 նիստում, 169-րդ նստաշրջան, հասանելի է հետեւյալ հղումով՝ <https://www.oas.org/en/iachr/decisions/court/2019/12870FondoEn.pdf>

⁶⁷ *Մարտինես Եսկիվիան ընդդեմ Կոլումբիայի* գործը, §§95-96:

գործնական անկախության վրա

51. Միջազգային դատարանների վերոնշյալ վճիռներով օգտակար տարրեր են ներկայացվում ընդհանրապես դատական իշխանության անկախության եւ մասնավորապես դատախազների անկախության վերաբերյալ: Ինչպես վերելում բացատրված է, դատական իշխանության համար տրամադրվող երաշխիքները կարող են որոշակի չափով կիրառելի լինել նաեւ դատախազական ծառայությունների եւ դատախազների նկատմամբ:

52. Այսպես, անկախության՝ այդ վճիռներում շեշտվող տարրեր տարրեր կարող են օգտագործվել դատախազական ծառայությունների ինստիտուցիոնալ անկախությունը, ինչպես նաեւ առանձին դատախազների գործառույթային անկախությունն ամրապնդելու համար՝ կապված մասնավորապես դատախազական ծառայությունների կազմակերպական ինքնավարության օրենսդրական շրջանակի, դատախազների պաշտոնի նշանակման, գնահատման եւ պաշտոնից հեռացման գործընթացի, նրանց պաշտոնավարման ժամկետի, դատախազների աշխատանքին չմիջամտելու եւ այլ կարեւոր հայեցակետերի հետ:

53. ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի հիմնական ավելացված արժեքը դրա պարտադիր ուժն է: ՄԻԵԴ-ի այն վճիռները, որոնցում գտնում են, որ տեղի են ունեցել ՄԻԵԿ-ի խախտումներ, պատասխանող պետության վրա դնում են ոչ միայն պարզապես որպես արդարացի փոխհատուցում տրամադրված գումարները շահագրգիռ անձանց վճարելու, այլեւ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից վերահսկմանը համապատասխան՝ այն ընդհանուր միջոցները սահմանելու իրավական պարտավորություն, որոնք պետք է ընդունվեն իր ներպետական իրավակարգում՝ այն խախտումները վերացնելու համար, որոնք Դատարանը գտել է, որ տեղի են ունեցել, եւ դրանց ազդեցությունները հնարավորինս փոխհատուցելու համար⁶⁸:

54. Այսպիսով, խախտումները վերացնելու համար ընդհանուր միջոցներ ձեռնարկելու պահանջը պարտադիր է եւ վերահսկվում է Նախարարների կոմիտեի կողմից: Այդ ընդհանուր միջոցները կարող են ներառել նոր կամ փոփոխված օրենսդրություն, նոր ինստիտուտներ, մեխանիզմներ, ընթացակարգեր, դատախազների պաշտոնի նշանակման, տեղափոխության, առաջխաղացման, գնահատման, պաշտոնից հեռացման նոր չափորոշիչներ, դատախազների դեմ իրականացվող կարգապահական վարույթներում նոր երաշխիքներ, եթեկայի չափանիշների եւ այլ միջոցների մշակում:

55. Այդ իսկ պատճառով ԵԴԳԽՆ-ն կարեւոր է համարել պատրաստել սույն կարծիքը, որը բացահայտ ցույց է տալիս ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքում մշակված՝ դատախազների անկախության տարրերը, որոնք կարող են գործնականում իրականացվել պարտադիր ընդհանուր միջոցների շրջանակում:

56. Միեւնույն ժամանակ առկա են Եվրոպայի խորհրդի կողմից մշակված եւ վերոնշյալ բոլոր հայեցակետերում դատախազների անկախության վերաբերյալ խորն ուղղորդում տրամադրող կարեւոր խորհրդատվական փաստաթղթեր: Այդ փաստաթղթերը ներառում են մասնավորապես ԵԴԳԽՆ-ի Նախորդ կարծիքները եւ Վենետիկի հանձնաժողովի զեկույցները, որոնք վերաբերել են դատախազությանը: Այս փաստաթղթերում պարունակվող առաջարկություններն ակտիվորեն քարոզվում են Նախարարների կոմիտեի կողմից՝ անդամ պետություններում իրականացման համար, եւ դրանք հաճախ ազգային մակարդակում գործնականում իրականացվում են: Դրանք հիմք են ծառայում անդամ պետություններում դատական եւ դատախազական բարեփոխումների համար, իսկ Եվրոպայի խորհրդի ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ համագործակցային գործողություններում ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի հետ միասին սերտորեն հաշվի են առնվում այդ խորհրդատվական փաստաթղթերը:

57. ԵԴԳԽՆ-ն նկատում է, որ ՄԻԵԴ-ի որոշ վճիռներ, ինչպես օրինակ՝ այն վճիռը, որում Դատարանը բացահայտ անդրադարձել է դատախազների անկախությանը⁶⁹, ներառել են հղումներ ԵԴԳԽՆ-ի կարծիքներին⁷⁰: ԵԴԳԽՆ-ն նաեւ ողջունում է այն փաստը, որ ՄԻԵԴ-ի կողմից կոնկրետ գործերով վճիռները պատրաստելիս ի թիվս այլ աղբյուրների օգտագործվել են խորհրդատվական փաստաթղթեր:

2. Ազգային դատարանների՝ դատախազների գործնական անկախությունն ամրապնդող որոշումները

58. Ինչպես ԵԴԳԽՆ-ն ընդգծել է, Եվրոպայի խորհրդի անդամ պետություններն ունեն տարբեր իրավական համակարգեր, այդ թվում՝ բազմազան դատախազական ծառայություններ: Այնուամենայնիվ,

⁶⁸ Տե՛ս ՄԻԵԿ-ի 46-րդ հոդվածը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների պարտադիր ուժի եւ կատարման վերաբերյալ:

⁶⁹ *Կյովետին ընդդեմ Ռումինիայի*, թիվ 3594/19, § 208:

⁷⁰ *Կյովետին ընդդեմ Ռումինիայի* գործով իր վճիռում, թիվ 3594/19, մեջբերվել է Դատախազներին առնչվող եվրոպական նորմերի ու սկզբունքների վերաբերյալ ԵԴԳԽՆ-ի թիվ 9(2014) կարծիքը, այդ թվում՝ Զոմոնի կանոնադրությունը, վճիռի 91-րդ պարբերություն:

անկախ ազգային դատախազության համակարգի⁷¹, անդամ պետություններում գերագույն դատարանների, վճռաբեկ դատարանների, գերագույն վարչական դատարանների եւ սահմանադրական դատարանների ազգային որոշումները կարգավորել են դատախազների եւ դատախազությունների անկախության հետ կապված խնդիրը տարբեր համատեքստերում:

59. Տարիների ընթացքում այդ որոշումներն ընդունվել են որպես պատասխան անդամ պետությունների ամբողջական դատախազների կարգավիճակի եւ դատախազի մասնագիտությունների տարբեր հայեցակետերի առնչությամբ ծառայած տարբեր իրավիճակներին, եւ դրանք մեծապես ուղղորդվել են ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքով, ինչպես նաեւ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի առաջարկություններով եւ ԵԴԳԽԻ-ի, ԵԴԽԻ-ի, Վենետիկի հանձնաժողովի, ԳՐԵԿՈ-ի եւ Եվրոպայի խորհրդի առանցքային այլ մարմինների կարծիքներով:

60. Անդամ պետությունները սույն կարծիքը պատրաստելու վերաբերյալ հարցաշարին տրված իրենց պատասխաններում մասնավորապես նշել են, թե այդ բարձրագույն դատական մարմիններն ազգային մակարդակում ինչ համատեքստում են կայացնում դատախազական անկախությունն ու անաչառությունն ամրապնդող որոշումները: Վերլուծության ենթարկված ամենակարեւոր թեմաները եւ հայեցակետերը, որոնք ցույց են տալիս քննարկվող թեմաների լայն շրջանակը, հետեւյալն են եղել.

- դատախազության սահմանադրական կարգավիճակը եւ անկախությունը, դատախազության դիրքը, դատախազության եւ դատախազների անկախությունը, ինքնավարությունը, դատախազական ծառայությունում աստիճանակարգության ընդունելիությունը եւ սահմանները⁷²,
- դատախազների եւ գլխավոր դատախազի պաշտոնի նշանակումը եւ պաշտոնից հեռացումը, գլխավոր դատախազների տեղափոխությունը⁷³,
- ցուցումները, միջամտությունը դատախազության գործունեությանը եւ կապը գործադիր եւ օրենսդիր իշխանության հետ⁷⁴,
- դատախազների աշխատավարձը, աշխատավարձերի սահմանափակումները՝ պայմանավորված ԶՈՎԻԴ-19 համավարակով, կենսաթոշակների վերահաշվարկը⁷⁵,
- «Դատախազության մասին» օրենքի որոշ դրույթների (այսինքն՝ գլխավոր դատախազի եւ դատախազների գերագույն խորհրդի կազմի ընտրության, պաշտոնի նշանակման, պաշտոնից հեռացման Նոր կարգը) եւ այլ իրավական կարգավորումների սահմանադրականության նկատմամբ հսկողությունը⁷⁶,
- գլխավոր դատախազի կողմից դատախազության գործունեության մասին զեկույցների ներկայացումը նախագահին եւ Խորհրդարանին կամ կառավարությանը եւ Բարձրագույն դատական խորհրդին, զեկույցների բնույթը, քննվող գործերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը⁷⁷ եւ գլխավոր դատախազի պաշտոնից հեռացումը Խորհրդարանի կողմից տարեկան զեկույցը չհաստատվելու համար⁷⁸,
- Խորհրդարանի քննչական հանձնաժողովի ստեղծումը եւ քաղաքական գործչի կոռուպցիոն իրավախախտումների բազմաթիվ գործերով հետապնդման իրականացմանը եւ դատաքննությանը ներգրավված պետական պաշտոնատար անձանց, այդ թվում՝ դատախազների եւ դատավորների քաղաքական պատասխանատվության սահմանումը⁷⁹,
- դատախազների դիրքը քրեական վարույթներում (մինչդատական քննության նկատմամբ հսկողության իրականացում, քննչական մարմնի եւ դատախազի միջեւ կապը, պարտադիր քրեական հետապնդում)⁸⁰,
- Դատախազի դիրքը քրեաիրավական ոլորտից դուրս⁸¹:

61. Ազգային դատարանների՝ դատախազների գործնական անկախությունն ամրապնդող

⁷¹ Յուրաքանչյուր անդամ պետությունում պետական իշխանության համակարգում դատախազության տարբերվող կարգավիճակի հետ կապված՝ դատախազությունն ամենահաճախ դասակարգվում է որպես գործադիր կամ դատական իշխանություն: Այնուամենայնիվ, կարելի է ենթադրել, որ դատախազությունը կարող է նկարագրվել ավելի շատ որպես *sui generis* (հատուկ) մարմին, որը պետական իշխանության երեք ճյուղերի դասական եռյակից դուրս է գտնվում:

⁷² Հայաստան, Բուլղարիա, Կիպրոս, Չեխիայի Հանրապետություն, Եստոնիա, Հունգարիա, Իտալիա, Լատվիա, Լիտվա, Լեհաստան, Պորտուգալիա:

⁷³ Չեխիայի Հանրապետություն, Իտալիա, Լիտվա:

⁷⁴ Կիպրոս, Հունգարիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ:

⁷⁵ Չեխիայի Հանրապետություն, Լատվիա, Սլովենիա, Ուկրաինա:

⁷⁶ Մոլդովայի Հանրապետություն, Սլովակիայի Հանրապետություն, Ուկրաինա:

⁷⁷ Բուլղարիա:

⁷⁸ Հունգարիա, Լիտվա:

⁷⁹ Հունգարիա, Սլովենիա:

⁸⁰ Հայաստան, Չեխիայի Հանրապետություն, Եստոնիա, Իտալիա, Հյուսիսային Մակեդոնիա:

⁸¹ Բուլղարիա, Չեխիայի Հանրապետություն, Հունգարիա, Ռուսաստանի Դաշնություն:

որոշումներն անդամ պետություններում դատախազների գործնական անկախության վրա միջազգային դատարանների եւ մասնավորապես ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի դրական արժեքներով ազդեցության օրինակներից մեկն են: Ինչպես վերը ներկայացված է, այդ որոշումները վերաբերում են դատախազական կարգավիճակի եւ մասնագիտության հայեցակետերի լայն շրջանակին եւ մասնավորապես անհրաժեշտ են, եթե դատական իշխանության եւ դատախազության բարեփոխումներով բավարար դրական արդյունքներ չեն ապահովվում:

62. Ազգային դատական մարմինները սերտ աջակցություն են ստացել Եվրոպայի խորհրդից եւ բացի ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքից հիմնվում են Եվրոպայի խորհրդի մարմինների կողմից մշակված խորհրդատվական չափանիշների եւ մասնավորապես ԵՂԳԽՄ-ի եզրահանգումների վրա, որոնք ամբողջ Եվրոպայում բարձրաձայնում եւ տեսակետ են հայտնում ծառայություն իրականացնող դատախազների վերաբերյալ եւ նպատակ ունեն ապահովելու, որ դատախազներն իրենց ազգային իրավական համակարգերում իրենց կարելու պատասխանատվությունները կատարելիս կարողանան աշխատել անկախ, անաչառ եւ արդյունավետ եղանակով:

63. Ինչպես ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը, այնպես էլ Եվրոպայի խորհրդի մարմինների խորհրդատվական եզրահանգումների օգտակար ազդեցությունների այդպիսի համակցությունն ազգային դատական մարմիններին համապատասխան համատեքստ է տրամադրում ազգային մակարդակում դատախազների գործնական անկախությունն ամրապնդելու համար: Այն նրանց զգալիորեն օգնում է աշխատել անաչառորեն եւ առավել արդյունավետորեն կիրարկել ՄԻԵԴ-ի դրույթները, ինչն իր հերթին հնարավորություն է տալիս ազգային մակարդակով լուծելու ավելի շատ վեճեր՝ այդպիսով կանխելով ՄԻԵԴ-ում գործերի աճող հոսքը, այդ թվում՝ կրկնվող գործերը:

III. Դայմանագրային մարմինների որոշումներն ընդհանրապես դատական համակարգի եւ մասնավորապես դատախազների գործնական անկախության վերաբերյալ

64. Մարդու իրավունքների կոմիտեն (այսուհետ՝ ՄԻԿ), որն անկախ փորձագետներից կազմված մարմին է, որը դիտանցում է «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի (ԸԶԻՄԴ) կիրարկումը դրա կողմ պետությունների կողմից, մի շարք վերաբերելի առաջարկություններ է տրամադրել դատական եւ դատախազական անկախության վերաբերյալ:

65. ԸԶԻՄԴ-ի կողմ բոլոր պետությունները պարտավոր են պարբերական գեկույցներ ներկայացնել ՄԻԿ այն մասին, թե ինչպես են Դաշնագրով սահմանված իրավունքները կիրարկվում: Ի պատասխան՝ ՄԻԿ-ը տվյալ պետության վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ է ներկայացնում: Դատախազների եւ նրանց աշխատանքի վերաբերյալ ՄԻԿ-ի մտահոգություններից շատերն արտահայտվել են կողմ պետությունների ներկայացրած գեկույցների վերանայումից հետո ներկայացված եզրափակիչ դիտարկումներում:

66. Այդ մտահոգությունները կապված են դատական համակարգի բարեփոխման եւ պատշաճ գործընթացի երաշխիքների լիակատար պահպանման հետ, որոնք ենթադրում են ինչպես դատական, այնպես էլ դատախազական ծառայության անկախության ամրապնդման անհրաժեշտություն⁸²:

67. Այս առնչությամբ հարկ է պատշաճ զգուշավորություն ցուցաբերել՝ դատական անկախությունը, այդ թվում՝ հետապնդում իրականացնող մարմինների անկախությունը գործադիր իշխանությունից⁸³, նախագահից⁸⁴ կամ օրենսդիր իշխանությունից⁸⁵ ապահովելու համար:

68. Դատական կարգապահության համար պատասխանատու պետք է լինի անկախ մարմին, եւ պետք է գործեն բավարար երաշխիքներ՝ կանխելու համար դատավորների եւ դատախազների նկատմամբ կարգապահական վարույթների հարուցումը ոչ մեծ ծանրության իրավախախտումների կամ օրենքի հակասական մեկնաբանման համար⁸⁶: Այդ անկախ մարմինը, օրինակ՝ Բարձրագույն դատախազական խորհուրդը, պետք է կազմված լինի մասնագիտական ինքնակառավարվող մարմինների կողմից ընտրված դատախազներից⁸⁷:

⁸² Եզրափակիչ դիտարկումներ Անգոլայի վերաբերյալ, 2019 թ.:

⁸³ Եզրափակիչ դիտարկումներ Ադրբեջանի վերաբերյալ, 2016թ., Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետության վերաբերյալ, 2020թ., Չեխիայի Հանրապետության վերաբերյալ, 2019թ., Հասարակածային Գվինեայի վերաբերյալ, 2019թ., Լատսի Ժողովրդական Ժողովրդավարական Հանրապետության վերաբերյալ, 2018թ., Լիգերիայի վերաբերյալ, 2019թ., Պարագվայի վերաբերյալ, 2019թ., Ռումինիայի վերաբերյալ, 2017թ., Շվեյցարիայի վերաբերյալ, 2017թ., Տաջիկստանի վերաբերյալ, 2019թ.:

⁸⁴ Եզրափակիչ դիտարկումներ Բելառուսի վերաբերյալ, 2018 թ.:

⁸⁵ Եզրափակիչ դիտարկումներ Չեխիայի Հանրապետության վերաբերյալ, 2019թ., Գվատեմալայի վերաբերյալ, 2018թ., Լատսի Ժողովրդական Ժողովրդավարական Հանրապետության վերաբերյալ, 2018թ., Պարագվայի վերաբերյալ, 2019թ., Սերբիայի վերաբերյալ, 2017թ., Տաջիկստանի վերաբերյալ, 2019թ., Վիետնամի վերաբերյալ, 2019թ., Անգոլայի վերաբերյալ, 2019թ.:

⁸⁶ Եզրափակիչ դիտարկումներ Ադրբեջանի վերաբերյալ, 2016թ., Բելառուսի վերաբերյալ, 2018թ., Բուլղարիայի վերաբերյալ, 2018թ.:

⁸⁷ Եզրափակիչ դիտարկումներ Չեխիայի Հանրապետության վերաբերյալ, 2019 թ.:

69. Այս առնչությամբ դատավորների⁸⁸ եւ դատախազների⁸⁹ ընտրության, կարգապահական պատասխանատվության, գնահատման եւ պաշտոնի մշտական նշանակման, ինչպես նաեւ պաշտոնից հեռացման⁹⁰ հետ կապված որոշումները պետք է հիմնված լինեն օրենքով բացահայտ նախատեսված օբյեկտիվ չափորոշիչների վրա⁹¹:

70. Մտահոգություններ են բարձրացվել նաեւ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի⁹² եւ դատական իշխանության շրջանում, ինչպես դատավորների, այնպես էլ դատախազների կոռուպցիայից խուսափելու անհրաժեշտության վերաբերյալ⁹³:

71. Որոշ երկրների առնչությամբ մտահոգություններ են արտահայտվել նաեւ գլխավոր դատախազի հնարավոր լայն լիազորությունների վերաբերյալ, երբ դա կարող է հանգեցնել թույլ հաշվետվողականության կամ դատարանների գործունեությանը միջամտության⁹⁴:

72. Ի հավելումս կողմ պետությունների զեկույցների վերանայմանը եւ եզրափակիչ դիտարկումների ներկայացմանը՝ Դաշնագրի առաջին կամընտիր արձանագրությունը ՄԻԿ-ին տալիս է Արձանագրության կողմ պետությունների կողմից Դաշնագրի ենթադրյալ խախտումների վերաբերյալ անհատական բողոքներ ուսումնասիրելու իրավասություն՝ ՄԻԵԿ-ով սահմանված կարգով ՄԻԵԿ-ի կողմից իրականացվող գործունեությանը համանման⁹⁵:

73. Ըստ ՄԻԿ-ի ձեւավորված նախադեպային իրավունքի՝ Դաշնագրի 39 (2) հոդվածով այն լիազորված է ստեղծելու իր սեփական ընթացակարգային կանոնները, որոնք կողմ պետությունները համաձայնել են ճանաչել: Ենթարկվելով Կամընտիր արձանագրությանը, Դաշնագրի կողմ պետությունը ճանաչում է ՄԻԿ-ի՝ իր իրավազորության ներքո գտնվող այն անհատներից հաղորդումներ ստանալու եւ քննելու իրավասությունը, որոնք պնդում են, որ Դաշնագրում սահմանված իրավունքներից որեւէ մեկի խախտման զոհ են դարձել (Կամընտիր արձանագրություն, Նախաբան եւ 1-ին հոդված): Կամընտիր արձանագրության կողմ պետության կողմից ենթարկվելու հարցում Կոմիտեի հետ բարեխղճորեն համագործակցել պարտավորվելը բացահայտ է, որպեսզի դրան թույլատրվի եւ հնարավորություն տրվի քննելու այդ հաղորդումները եւ դրանց ուսումնասիրությունից հետո իր տեսակետներն ուղարկել կողմ պետությանը եւ շահագրգիռ անձին (5 (1) եւ (4) հոդվածներ): Կամընտիր արձանագրության 1-ին հոդվածով սահմանված պարտավորությունների հետ անհամատեղելի է, որ կողմ պետությունը ձեռնարկի որեւէ գործողություն, որը կկանխի կամ կխախտի Կոմիտեի կողմից հաղորդումների իր քննարկումը եւ ուսումնասիրությունը եւ իր տեսակետների արտահայտումը⁹⁶:

74. ՄԻԿ-ն ունի Դաշնագրում սահմանված իրավունքների, մասնավորապես՝ դատական անկախության վերաբերյալ լայն թվով որոշումներ եւ տեսակետներ, ինչը շատ հայեցակետերով համանման է ՄԻԵԿ-ի նախադեպային իրավունքին⁹⁷:

75. ՄԻԿ-ն ընդգծել է⁹⁸, որ Դաշնագրի համաձայն՝ տրիբունալն օրենքով սահմանված մարմին է, որն անկախ է գործադիր եւ օրենսդիր իշխանությունից կամ կոնկրետ դեպքերում դատական բնույթի

⁸⁸ Եզրափակիչ դիտարկումներ Ադրբեջանի վերաբերյալ, 2016 թ.:

⁸⁹ Եզրափակիչ դիտարկումներ Բելառուսի վերաբերյալ, 2018 թ., Կիտնեսամի վերաբերյալ, 2019թ.:

⁹⁰ Եզրափակիչ դիտարկումներ Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետության վերաբերյալ, 2020թ., Չեխիայի Հանրապետության վերաբերյալ, 2019թ., Հասարակածային Գվինեայի վերաբերյալ, 2019թ., Գվատեմալայի վերաբերյալ, 2018թ., Մոնղոլիայի վերաբերյալ, 2017թ., Աիգերիայի վերաբերյալ, 2019թ.:

⁹¹ Եզրափակիչ դիտարկումներ Հասարակածային Գվինեայի վերաբերյալ, 2019թ., Գվատեմալայի վերաբերյալ, Լատվի ժողովրդական ժողովրդավարական Հանրապետության վերաբերյալ, 2018թ., Մոնղոլիայի վերաբերյալ, 2017թ., Տաջիկստանի վերաբերյալ, 2019թ.:

⁹² Եզրափակիչ դիտարկումներ Ադրբեջանի վերաբերյալ, 2016 թ., Գվատեմալայի վերաբերյալ, 2018թ.:

⁹³ Եզրափակիչ դիտարկումներ Անգոլայի վերաբերյալ, 2019թ., Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետության վերաբերյալ, 2020թ., Հասարակածային Գվինեայի վերաբերյալ, 2019թ., Մոնղոլիայի վերաբերյալ, 2017թ., Պարագվայի վերաբերյալ, 2019թ.:

⁹⁴ Եզրափակիչ դիտարկումներ Բուվարիայի վերաբերյալ, 2018 թ., Տաջիկստանի վերաբերյալ, 2018թ.:

⁹⁵ Կոմիտեն 2021 թվականի հուլիսին կայացած իր 132-րդ նիստի ավարտին եզրակացրել է, որ 1979 թվականից սկսած՝ իր կողմից ընդունված 1,532 տեսակետներից 1,278-ի (83.4 տոկոս) դեպքում տեղի է ունեցել Դաշնագրի խախտում:

⁹⁶ Տե՛ս թիվ 33 (2008) ընդհանուր մեկնաբանությունը, 8-րդ եւ 10-րդ պարբերություններ, եւ, ի թիվս այլնի, *Լեվինովի ընդդեմ Բելառուսի* [Levinov v. Belarus] (CCPR/C/105/D/1867/2009, 1936, 1975, 1977-1981, 2010/2010), 8.2-րդ պարբերություն, եւ *Պոպլանյանի ընդդեմ Բելառուսի* [Poplavny v. Belarus] (CCPR/C/115/D/2019/2010), 6.2-րդ պարբերություն, *Պիանդիոնգի ընդդեմ Ֆիլիպինների* [Piandiong v. Philippines] (CCPR/C/70/D/869/1999 եւ 1 ուղղում), 5.1-րդ պարբերություն, *Մակսուդովի ընդդեմ Կիրգիզստանի* [Maksudov v. Kyrgyzstan] (CCPR/C/93/D/1461, 1462, 1476 եւ 1477/2006), 10.1-10.3-րդ պարբերություններ, եւ *Յուզեպչուկի ընդդեմ Բելառուսի* [Yuzepchuk v. Belarus] (CCPR/C/112/D/1906/2009), 6.2-րդ պարբերություն: Ինչպես նշված է Կոմիտեի «Կամընտիր արձանագրության կողմ պետությունների պարտավորությունների մասին» թիվ 33 (2008) ընդհանուր մեկնաբանության 19-րդ պարբերությունում, միջանկյալ միջոցներ չձեռնարկվել անհամատեղելի է Կամընտիր արձանագրությանը սահմանված՝ անհատական հաղորդումներ ներկայացնելու ընթացակարգը բարեխղճորեն պահպանելու պարտավորության հետ: ՄԻԿ-ը հետևաբար այն տեսակետին է, որ չկատարելով կողմ պետությանը հաղորդված միջանկյալ միջոցները, այդ կողմ պետությունը չի կատարում Կամընտիր արձանագրության 1-ին հոդվածով սահմանված իր պարտավորությունները:

⁹⁷ Ըստ ՄԻԿ-ի, ինչպես արտահայտված է Կոմիտեի «Կամընտիր արձանագրության կողմ պետությունների պարտավորությունների մասին» թիվ 33 (2008) ընդհանուր մեկնաբանության մեջ (տե՛ս 11-րդ պարբերությունը), թե՛ն անհատական հաղորդումները քննարկելու հարցում Մարդու իրավունքների կոմիտեի գործառնությունը որպես այդպիսին դատական մարմին գործառնությո՛ւն չէ, Կոմիտեի կողմից Կամընտիր արձանագրությանը ներկայացված տեսակետները դատական որոշումների որոշ կարեւոր բնութագրեր են ցուցադրում: Դրանց հանգել են դատական ոգով, այդ թվում՝ Կոմիտեի անդամների անաչառությունը եւ անկախությունը, Դաշնագրի լեզվի դիտարկվող մեկնաբանումը եւ որոշումների որոշիչ բնույթը:

⁹⁸ Դաշնագրի՝ դատարանների մատչելիության եւ վերաբերելի սկզբունքների մասին 14-րդ հոդվածի իր մեկնաբանման մեջ:

վարույթներով իրավական հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս օգտվում է դատական անկախությունից: Քրեական մեղադրանք առաջադրված յուրաքանչյուր անձի՝ այդ մարմնին մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել, եւ տրիբունալ չհանդիսացող մարմնի կողմից քրեական կարգով ցանկացած դատապարտում անհամատեղելի է սույն դրույթի հետ⁹⁹:

76. ՄԻԿ-ն ավելացրել է, որ Դաշնագրով սահմանված՝ իրավասու, անկախ ու անկողմնակալ տրիբունալի պահանջը բացարձակ իրավունք է եւ ենթակա չէ որեւէ բացառության¹⁰⁰: Անկախության պահանջը մասնավորապես վերաբերում է դատավորների պաշտոնի նշանակման ընթացակարգին եւ որակավորումներին եւ նրանց՝ մինչեւ պարտադիր կենսաթոշակի անցնելու տարիքը կամ նրանց պաշտոնավարման ժամկետի ավարտը, եթե առկա է, պաշտոնավարման անվտանգության հետ կապված երաշխիքներին, առաջխաղացումը, տեղափոխությունը, գործառույթների կասեցումը եւ դադարեցումը կարգավորող պայմաններին եւ դատական իշխանության՝ գործադիր ճյուղի կամ օրենսդիր իշխանության կողմից քաղաքական միջամտությունից փաստացի անկախությանը¹⁰¹:

77. Ըստ ՄԻԿ-ի՝ պետությունները պետք է կոնկրետ միջոցներ ձեռնարկեն, որոնք երաշխավորում են դատական իշխանության անկախությունը, դատավորներին սահմանադրության կամ դատական իշխանության անդամների պաշտոնի նշանակման, վարձատրության, պաշտոնավարման ժամկետի, առաջխաղացման, լիազորությունների կասեցման եւ պաշտոնից հեռացման եւ նրանց նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու հստակ ընթացակարգեր եւ օբյեկտիվ չափորոշիչներ սահմանող օրենքներ ընդունելու միջոցով պաշտպանում են իրենց որոշումների կայացման գործընթացում քաղաքական ազդեցության ցանկացած տեսակից¹⁰²: Իրավիճակը, երբ դատական իշխանության եւ գործադիր իշխանության գործառույթները եւ իրավասությունները հստակ տարբերակվող չեն կամ, երբ վերջինս կարող է վերահսկել կամ ղեկավարել առաջինին, անհամատեղելի է անկախ տրիբունալ հասկացության հետ¹⁰³: Անհրաժեշտ է դատավորներին պաշտպանել շահերի բախումից եւ ահաբեկումից: Իրենց անկախությունը պաշտպանելու համար դատավորների կարգավիճակը, այդ թվում՝ նրանց պաշտոնավարման ժամկետը, նրանց անկախությունը, անվտանգությունը, պատշաճ վարձատրությունը, ծառայության պայմանները, կենսաթոշակները եւ կենսաթոշակի անցնելու տարիքը պետք է պատշաճ պաշտպանվեն օրենքով¹⁰⁴:

78. Ինչ վերաբերում է դատավորների պաշտոնից հեռացմանը, ապա ՄԻԿ-ը մատնանշել է¹⁰⁵, որ նրանք պաշտոնից կարող են հեռացվել միայն ապօրինի վարքագծի կամ ոչ կոմպետենտության լուրջ դեպքերի հիմքով՝ սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված՝ օբյեկտիվությունը եւ անաչառությունն ապահովող արդար ընթացակարգերին համապատասխան: Գործադիր իշխանության կողմից դատավորների պաշտոնից հեռացումը, օրինակ՝ այն ժամկետը լրանալուց առաջ, որով նրանք նշանակվել են պաշտոնի, առանց նրանց որեւէ կոնկրետ պատճառ ներկայացնելու եւ առանց պաշտոնից հեռացումը վիճարկելու համար իրենց հասանելի արդյունավետ դատական պաշտպանության անհամատեղելի է դատական իշխանության անկախության անկախության հետ¹⁰⁶: Նույնը ճիշտ է, օրինակ, գործադիր իշխանության կողմից ենթադրաբար կոռումպացված դատավորներին առանց օրենքով նախատեսված ընթացակարգերից որեւէ մեկին հետեւելու պաշտոնից հեռացնելու դեպքում¹⁰⁷:

79. Ինչ վերաբերում է անաչառություն հասկացությանը, ապա ՄԻԿ-ը սահմանել է երկու հայեցակետ¹⁰⁸՝ 1) դատավորները չպետք է թույլ տան, որ իրենց վճռի վրա ազդեցություն ունենան անձնական կողմնակալությունը կամ կանխակալությունը, եւ չպետք է գործեն այնպես, որ անհարկի խթանվեն կողմերից մեկի շահերը՝ ի վնաս մյուս կողմի¹⁰⁹, 2) տրիբունալը պետք է նաեւ անաչառ թվա ողջամիտ դիտորդին: Այն դատավորի մասնակցությունից էական ազդեցություն կրած դատաքննությունը, որը ներպետական օրենքների համաձայն պետք է որակագրկվեր, սովորաբար չի կարող համարվել

⁹⁹ ՄԻԿ-ի 32 (2007) ընդհանուր մեկնաբանությունը դատարանների եւ տրիբունալների առջեւ հավասարության եւ արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ, 18-րդ պարբերություն:

¹⁰⁰ Թիվ 263/1987 հաղորդագրություն, *Գոնսալես դել Ռիոն ընդդեմ Պեռուի* [Gonzalez del Rio v. Peru], 5.2-րդ պարբերություն:

¹⁰¹ ՄԻԿ-ի 32 (2007) ընդհանուր մեկնաբանությունը դատարանների եւ տրիբունալների առջեւ հավասարության եւ արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ, 19-րդ պարբերություն:

¹⁰² Եզրափակիչ դիտարկումներ, Սլովակիա, CCPR/C/79/Add.79 (1997), 18-րդ պարբերություն:

¹⁰³ Թիվ 468/1991 հաղորդագրություն, *Օլո Բահամոնդեն ընդդեմ Զասարակածային Գվինեայի* [Oló Bahamonde v. Equatorial Guinea], 9.4-րդ պարբերություն:

¹⁰⁴ ՄԻԿ-ի 32 (2007) ընդհանուր մեկնաբանությունը դատարանների եւ տրիբունալների առջեւ հավասարության եւ արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ, 19-րդ պարբերություն:

¹⁰⁵ ՄԻԿ-ի 32 (2007) ընդհանուր մեկնաբանությունը դատարանների եւ տրիբունալների առջեւ հավասարության եւ արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ, 20-րդ պարբերություն:

¹⁰⁶ Թիվ 814/1998 հաղորդագրություն, *Պաստուխովն ընդդեմ Բելառուսի* [Pastukhov v. Belarus], 7.3-րդ պարբերություն:

¹⁰⁷ Թիվ 933/2000 հաղորդագրություն, *Մունդյո Բուսյոն եւ այլք ընդդեմ Կոնգոյի Ժողովրդավարական Զանրապետության* [Mundyo Busyo et al v. Democratic Republic of Congo], 5.2-րդ պարբերություն:

¹⁰⁸ ՄԻԿ-ի 32 (2007) ընդհանուր մեկնաբանությունը դատարանների եւ տրիբունալների առջեւ հավասարության եւ արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ, 21-րդ պարբերություն:

¹⁰⁹ Թիվ 387/1989 հաղորդագրություն, *Կարտտունենն ընդդեմ Ֆինլանդիայի* [Karttunen v. Finland], 7.2-րդ պարբերություն:

անաչառ¹¹⁰:

80. ՄԻԿ-ն անձանց ազատության եւ անվտանգության առնչությամբ նաեւ պահանջել է, որ դատարանի կամ դատական իշխանության անկախության եւ անաչառության նույն որակների տիրապետող այլ տրիբունալի կողմից անհապաղ եւ պարբերական վերանայումն անհրաժեշտ երաշխիք է՝ ցույց տալու համար, որ կալանքը չի տեւում բացարձակ անհրաժեշտ ժամկետից ավելի, որ հնարավոր կալանքի ընդհանուր ժամկետը սահմանափակ է, եւ որ նրանք լիովին հարգում են Դաշնագրով նախատեսված երաշխիքները¹¹¹:

81. Ավելին, ինչ վերաբերում է ձերբակալված կամ կալանավորված անձանց՝ անհապաղ դատավորին կամ դատական իշխանություն իրականացնելու համար օրենքով լիազորված այլ պաշտոնատար անձի ներկայացվելու իրավունքին, ապա այդ իրավունքը նախատեսված է քրեական գործով քննության կամ հետապնդման ընթացքում կալանքը դատական վերահսկողության ներքո բերելու համար¹¹²:

82. ՄԻԿ-ը նաեւ անդրադարձել է իրենց ազատ արտահայտվելու իրավունքի համատեքստում դատախազների պաշտպանության հարցին, որ գրպարտության մասին օրենքները պետք է մշակվեն զգուշորեն՝ ապահովելու համար, որ դրանք համապատասխանեն Դաշնագրին, եւ որ դրանք գործնականում չծառայեն ազատ արտահայտվելու իրավունքը ճնշելուն: Միեւնույն ժամանակ ՄԻԿ-ն ընդունել է, որ հանրային մեղադրողները հանրային գործիչների հետ նույն դիրքում չեն, եւ ինչպես դատական ծառայողները, իրենց գործառույթներն արդյունավետորեն կատարելու համար պահանջում են հանրային վստահության աստիճան¹¹³:

83. ՄԻԿ-ն ավելացրել է, որ դատական համակարգի անկախության սկզբունքը, որը դատական գործառույթների անկախ իրականացման կարեւոր երաշխիք է, պահանջում է, որ դատավորները եւ դատախազները կարողանան օրենքը մեկնաբանել եւ կիրառել եւ փաստերը գնահատել ազատ, առանց իրենց գործառույթներն իրականացնելու ընթացքում ահաբեկման, խոչընդոտման կամ միջամտության ենթարկվելու: Դատավորները չպետք է իրենց որոշումների բովանդակության համար ենթարկվեն քրեական կամ կարգապահական պատիժների՝ բացառությամբ ծանր հանցագործություններ, կոռուպցիա, ապօրինի վարքագիծ կամ այնպիսի ոչ կոմպետենտություն ներառող դեպքերում, որը նրանց դարձնում է պաշտոնին ոչ համապատասխան. այդպիսի դեպքերում դա պետք է կատարվի արդար դատաքննության երաշխիքները հարգող ընթացակարգերի միջոցով: Դատական սխալները պետք է ուղղվեն ավելի բարձր ատյանի դատարանի կողմից որոշման վերանայման միջոցով¹¹⁴:

IV. Եզրակացություններ

Ա. ԵՂԳԻՏԻ-ի կողմից դատախազների եւ դատախազական ծառայությունների անկախության վերաբերյալ մշակված սկզբունքները

1. ԵՂԳԻՏԻ-ն իր նախորդ կարծիքներում մշակել է դատախազների եւ դատախազական ծառայությունների անկախության հետեւյալ առանցքային տարրերը.

- դատախազները պետք է իրենց պարտականություններն իրականացնելիս գերծ լինեն ապօրինի միջամտությունից եւ քաղաքական ճնշումից կամ որեւէ տեսակի ապօրինի ազդեցությունից, այդ թվում՝ քրեաիրավական ոլորտից դուրս գործելիս, որպեսզի ապահովվի օրենքի եւ օրենքի գերակայության սկզբունքի նկատմամբ լիակատար հարգանքը եւ կիրառումը,

- պետք է թափանցիկ եւ օբյեկտիվ չափորոշիչների հիման վրա սահմանվեն դատախազների կարգավիճակը, անկախությունը, աշխատանքի ընդունումը, պաշտոնավարման ժամկետը եւ մասնագիտական ուղին կարգավորող համապատասխան իրավական շրջանակ, ինչպես դատական իշխանության դեպքում,

- դատախազները պետք է օգտվեն մասնագիտական ուղի ունենալու հնարավորությունից մինչեւ կենսաթոշակի անցնելը, քանի որ վերանշանակման հնարավորությամբ սահմանափակ ժամկետներով պաշտոնի նշանակումը պարունակում է ռիսկ առ այն, որ դատախազները կողմնակալ որոշումներ կկայացնեն՝ կախված իրենց պաշտոնի նշանակող մարմինների առաջնահերթություններից,

¹¹⁰ Նույն տեղում:

¹¹¹ ՄԻԿ-ի 35 (2014) ընդհանուր մեկնաբանությունն ազատության եւ անվտանգության իրավունքների վերաբերյալ, 15-րդ պարբերություն:

¹¹² ՄԻԿ-ի 35 (2014) ընդհանուր մեկնաբանությունն ազատության եւ անվտանգության իրավունքների վերաբերյալ, 32-րդ պարբերություն:

¹¹³ ՄԻԿ-ի թիվ 34 ընդհանուր մեկնաբանություն, 32-րդ պարբերություն, ՄԻԿ-ի թիվ 2716/2016 հաղորդագրություն, *Էգլե Կուսայտեն ընդդեմ Լիտվայի* [Eglė Kusaitė v. Lithuania], 8.7 պարբերություն:

¹¹⁴ ՄԻԿ-ի թիվ 34 ընդհանուր մեկնաբանություն, 5.5 պարբերություն, ՄԻԿ-ի թիվ 2844/2016 հաղորդագրություն, *Բալտասար Գարսոնն ընդդեմ Իսպանիայի* [Baltasar Garzón v. Spain], 5.4 պարբերություն:

- դատախազների եւ դատախազական ծառայությունների ինչպէս արտաքին, այնպէս էլ ներքին անկախությունը պետք է ապահովվեն այնպիսի անկախ մարմնի կողմից, ինչպիսին է դատախազական խորհուրդը,

- դատախազներին եւ դատախազական ծառայություններին տրվող ինչպէս արտաքին, այնպէս էլ ներքին ցուցումները պետք է հիմնված լինեն կոնկրետ երաշխիքներ պարունակող ուղեւորների վրա, ինչպէս օրինակ՝ այդ ցուցումների օրինականությունը եւ թափանցիկությունը, որը պետք է մշտապէս հետապնդի օրենքը կիրառելու նպատակ՝ միեւնոյն ժամանակ հարգելով մարդու իրավունքները եւ հիմնարար ազատությունները,

- դատախազների կարգավիճակը, վարձատրությունը եւ նրանց նկատմամբ վերաբերմունքը, ինչպէս նաեւ դատախազական ծառայություններին հատկացվող ֆինանսական, մարդկային եւ այլ ռեսուրսներ պետք է կարգավորվեն նրանց առաքելության եւ աշխատանքի կարեւորությանը համապատասխան եւ դատավորների հետ համեմատելի եղանակով,

- դատախազները եւ ըստ պատշաճության նրանց ընտանիքի անդամները եւ նրանց կենսաապահովումն իրենց գործառնություններն իրականացնելիս պետք է պաշտպանվեն:

Բ. Միջազգային դատարանների եւ պայմանագրային մարմինների՝ ընդհանրապէս դատական համակարգի եւ դատախազների եւ մասնավորապէս դատախազական ծառայության անկախության վերաբերյալ նախադեպային իրավունքին վերաբերող նյութերը

2. Անկախ եւ անաչառ տրիբունալի իրավունքն օրենքի գերակայության առանցքային արժէք է եւ ամրագրված է հիմնական միջազգային եւ տարածաշրջանային իրավական փաստաթղթերում, եւ դրանով երաշխավորվում են մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը, եւ որոնք կենսական են ժողովրդավարական հասարակությունում արդարադատության համակարգի նկատմամբ հանրային վստահությունն ապահովելու համար: Այդ իրավունքի վերաբերյալ առկա է միջազգային դատարանների եւ պայմանագրային մարմինների հարուստ եւ լավ սահմանված իրավական պրակտիկա:

3. Այդ իրավական պրակտիկայում դատական իշխանության անկախությունը մանրամասն ուսումնասիրվել է, եւ այն նաեւ պարունակում է հղումներ դատախազական ծառայությունների անկախությանն ու ինքնավարությանը: Զանազան դատախազական ծառայությունների անկախությունն ու ինքնավարությունը ԵՂԳԽԻ-ի կարծիքով դատական համակարգի անկախության անքակտելի հետեւանքն են, դատական իշխանության վերաբերյալ համապատասխան միջազգային վճիռներով եւ որոշումներով տրամադրված ուղղորդումը կարող է որոշ չափով կիրառելի լինել, *mutatis mutandis*, դատախազական ծառայությունների նկատմամբ:

4. Տարբեր իրավական մշակույթների վրա հիմնված քրեական արդարադատության համակարգերն ամբողջ Եվրոպայում տարբերվում են: Չնայած տարբերություններին՝ վերջին տարիներին ի հայտ է գալիս համապատասխանեցման կարեւոր գործոն, որը հիմնված է դատախազական ծառայությունների անկախության պահանջի՝ որպէս օրենքի գերակայության եւ դատական համակարգի անկախության նախապայմանի վրա:

5. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով ընդգծվում է, որ ժողովրդավարական հասարակությունում ինչպէս դատարանները, այնպէս էլ քննչական մարմինները պետք է գերծ լինեն քաղաքական ճնշումից: Այդպիսով, հանրության շահերից է բխում պետության՝ հետապնդում իրականացնող մարմինների անկախության եւ քաղաքական չեզոքության նկատմամբ վստահությունը պահպանել:

6. Որպէսզի քննությունը լինի արդյունավետ, քննությունն իրականացնելու համար պատասխանատու անձինք պետք է անկախ եւ անաչառ լինեն օրենքի համաձայն եւ գործնականում: Սա նշանակում է ոչ միայն քննություն անցնող անձանց հետ աստիճանակարգային կամ ինստիտուցիոնալ կապի բացակայություն, այլեւ գործնական անկախություն:

7. Անդամ պետություններում դատախազների նկատմամբ կիրառվող ընդհանուր դատավարական երաշխիքները ներառում են դրույթներ, որոնցով երաշխավորվում են դատախազների ինստիտուցիոնալ կամ գործառնական անկախությունը, լինեն նրանք դատական համակարգի անդամներ, թե քաղաքացիական ծառայողներ:

8. Որոշ անդամ պետություններում դատախազական համակարգն ունի աստիճանակարգային կառուցվածք, որտեղ բարձրաստիճան դատախազները լիազորություն ունեն կարգադրություններ եւ ցուցումներ տալու ավելի ցածր աստիճան ունեցող դատախազներին: Չնայած այս կառուցվածքին, անդամ պետությունների իրավական համակարգերում գործում են մի շարք երաշխիքներ՝ ապահովելու բարձրաստիճան դատախազների վերաբերյալ քրեական գործերով քննություններ իրականացնելու համար պատասխանատու մարմինների արդյունավետությունն ու անկախությունը:

9. Եվրոպական միության արդարադատության դատարանը մեկնաբանելիս, թե արդյոք կոնկրետ դատախազը պետք է համարվի ձերբակալման մասին եվրոպական որոշում արձակող դատական մարմին, նշել է, որ դա այդպես է, երբ նա բավարարում է հետեւյալ երեք չափորոշիչները՝ մասնակցում է արդարադատության իրականացմանը, գործում է օբյեկտիվորեն, անկախ է եւ չի ենթարկվում, ի թիվս այլնի, գործադիր իշխանությունից կոնկրետ գործի վերաբերյալ ցուցում ստանալու ռիսկի: Այնուամենայնիվ, ձերբակալման մասին եվրոպական որոշումներ արձակող դատախազի որոշումը պետք է ենթակա լինի դատական վերանայման:

10. Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանին համահունչ, նշել է, որ պետական իշխանությունների տարանջատման առաջնային նպատակներից մեկն է դատավորների անկախությունը երաշխավորելը: Դատարանը նաեւ վճռել է, որ դատավորների նկատմամբ կիրառվող՝ անկախության ամրապնդված երաշխիքները դատական իշխանության անհրաժեշտ անկախության հետեւանքով, որը կարելի է դատական գործառնությունների իրականացման համար, պետք է կիրառվեն նաեւ դատախազների նկատմամբ՝ նրանց կողմից իրականացվող պարտականությունների բնույթից ելնելով:

11. Դատարանն այնուհետեւ մանրամասն նշել է, որ քննության համար պատասխանատու մարմինները պետք է լինեն անկախ՝ օրենքով եւ փաստացի, ինչը պահանջում է ոչ միայն աստիճանակարգային կամ ինստիտուցիոնալ անկախություն, այլեւ փաստացի անկախություն: Դատախազներն իրենց գործողություններում չպետք է լինեն քաղաքական ճնշումների կամ ոչ պատշաճ խոչընդոտման առարկա, ոչ էլ պետք է հաշվեհարդարի ենթարկվեն իրենց կողմից կայացված որոշումների համար: Դա պահանջում է կայունության եւ իրենց պաշտոնում սահմանված ժամկետով պաշտոնավարման երաշխիք, ինչպես նաեւ նրանց պաշտոնից հեռացման կամ նրանց դեմ հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ ընթացակարգային երաշխիքներ:

12. Մարդու իրավունքների կոմիտեն (ՄԻԿ), որն անկախ փորձագետներից կազմված մարմին է, որը դիտանցում է «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ) կիրարկումը, մի շարք վերաբերելի առաջարկություններ է տրամադրել դատական եւ դատախազական անկախության վերաբերյալ: Այդ առաջարկություններից շատերն արտահայտվել են կողմ պետությունների ներկայացրած զեկույցների վերանայումից հետո ներկայացված եզրափակիչ դիտարկումներում եւ վերաբերում են արդարադատության համակարգի բարեփոխմանը եւ պատշաճ գործընթացի երաշխիքների լիակատար պահպանմանը, որոնք ենթադրում են ինչպես դատական, այնպես էլ դատախազական ծառայության անկախության ամրապնդման անհրաժեշտություն:

13. Այս առնչությամբ դատավորների եւ դատախազների ընտրության, կարգապահական պատասխանատվության, գնահատման եւ պաշտոնի մշտական նշանակման, ինչպես նաեւ պաշտոնից հեռացման հետ կապված որոշումները պետք է հիմնված լինեն օրենքով բացահայտ նախատեսված օբյեկտիվ չափորոշիչների վրա:

14. Ի հավելումն կողմ պետությունների զեկույցների վերանայմանը եւ եզրափակիչ դիտարկումների ներկայացմանը՝ ՔՔԻՄԴ-ի առաջին կամընտիր արձանագրությունը ՄԻԿ-ին տալիս է ՔՔԻՄԴ-ի ենթադրյալ խախտումների վերաբերյալ անհատական բողոքներ ուսումնասիրելու իրավասություն: Այդ իրավասությունը ճանաչված է բոլոր կողմ պետությունների կողմից՝ Արձանագրությանը դրանց միանալու ուժով: Ըստ ՄԻԿ-ի նախադեպային իրավունքի, դատական համակարգի անկախության սկզբունքը, որը դատական գործառնությունների անկախ իրականացման կարելի է երաշխիք է, պահանջում է, որ դատավորները եւ դատախազները կարողանան օրենքը մեկնաբանել եւ կիրառել եւ փաստերը գնահատել ազատ, առանց իրենց գործառնություններն իրականացնելու ընթացքում ահաբեկման, խոչընդոտման կամ միջամտության ենթարկվելու:

Գ. Միջազգային դատարանների եւ պայմանագրային մարմինների նախադեպային իրավունքի ազդեցությունը դատախազների գործնական անկախության վրա

15. Միջազգային դատարանների եւ պայմանագրային մարմինների նախադեպային իրավունքի վերոնշյալ կյոթերը, որոնք տարիներ շարունակ վերաբերել են դատավորների անկախությանը, իսկ վերջին տարիներին՝ նաեւ դատախազների անկախությանը, օգտակար տարրեր են տրամադրում, որոնք կարող են կարելի է կիրառել եւ փաստերը գնահատել ազատ, առանց իրենց գործառնություններն իրականացնելու եւ անկախության համար:

16. Այդ նախադեպային իրավունքի տարբեր տարրեր նպաստում են դատախազական ծառայությունների ինստիտուցիոնալ անկախությունը, ինչպես նաեւ առանձին դատախազների գործառնության անկախությունն ամրապնդելուն քրեական արդարադատության համակարգում, իսկ այն երկրներում, որտեղ դատախազությունն ունի պարտականություններ այլ ոլորտներում՝ նաեւ քրեական արդարադատության համակարգից դուրս:

17. Մասնավորապես դատախազական ծառայությունների կազմակերպական ինքնավարության օրենսդրական շրջանակը, դատախազների պաշտոնի նշանակման, գնահատման եւ պաշտոնից

հեռացման գործընթացը, նրանց պաշտոնավարման ժամկետը, դատախազների աշխատանքին չմիջամտելը եւ նրանց մասնագիտական ուղուն վերաբերող այլ կարեւոր հայեցակետեր անշուշտ օգուտ կքաղեն այդ նախադեպային իրավունքից:

18. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հիմնական ավելացված արժեքը դրա պարտադիր ուժն է եւ անդամ պետություններում ընդհանուր միջոցներ ձեռնարկելու պահանջը՝ ՄԻԵԴ-ի վճիռներով հաստատված խախտումները վերացնելու համար: Այս գործընթացը պարտադիր է եւ վերահսկվում է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե կողմից:

19. Այդ ընդհանուր միջոցները կարող են ներառել նոր կամ փոփոխված օրենսդրություն, նոր ինստիտուտներ, մեխանիզմներ, ընթացակարգեր, դատախազների պաշտոնի նշանակման, տեղափոխության, առաջխաղացման, գնահատման, լիազորությունների կասեցման եւ պաշտոնից հեռացման նոր չափորոշիչներ, նրանց դեմ հարուցվող կարգապահական վարույթներում նոր երաշխիքներ, Էթիկայի չափանիշների եւ այլ միջոցների մշակում:

20. Առկա են նաեւ Եվրոպայի խորհրդի մարմինների եւ հաստատությունների կողմից մշակված՝ խորն ուղղորդում տրամադրող կարեւոր խորհրդատվական փաստաթղթեր: Այդ փաստաթղթերը ծառայում են որպես փափուկ իրավունքի նորմեր եւ հիմք են անդամ պետություններում Եվրոպայի խորհրդի համագործակցային գործունեության շրջանակներում դատական եւ դատախազական բարեփոխումների համար:

21. Փափուկ իրավունքի վերաբերյալ այդ փաստաթղթերը կարող են իրենց հերթին ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ տարածաշրջանային մակարդակով ոգեշնչման աղբյուր ծառայել եւ միջազգային դատարանների եւ պայմանագրային մարմինների կողմից օգտագործվել որպես հղումային փաստաթուղթ առավել արդար եւ առավել արդյունավետ այնպիսի արդարադատության համակարգի իրենց առավել լայն փնտրտուքում, որտեղ դատախազների եւ դատախազական ծառայությունների անկախությունը եւ անաչառությունը սահմանված են պատշաճ իրավական շրջանակում դատավորների նկատմամբ կիրառելի շրջանակին համանման:

Կարծիք թիվ 17 (2022)

Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի՝
ուղղված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին

Շրջակա միջավայրի պահպանության գործում դատախազների դերը

I. Ներածություն. Կարծիքի նպատակը եւ շրջանակը

1. Նախարարների կոմիտեի կողմից իրեն տրված մանդատի համաձայն՝ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԳԽՄ) որոշել է կազմել շրջակա միջավայրի պահպանության գործում դատախազների դերի վերաբերյալ սույն կարծիքը: ԵԴԳԽՄ-ն գիտակցում է բնապահպանական հանցագործություններին եւ դրանց հետ կապված խախտումներին արձագանքելու գործընթացը խստացնելու եւ որպես այդպիսին, շրջակա միջավայրի, հանրային առողջության եւ անվտանգության պահպանման եւ մարդկանց՝ մաքուր, առողջ եւ կայուն միջավայր ունենալու իրավունքի պաշտպանության ռազմավարություններին նպաստելու անհրաժեշտությունը¹: Այս թեման ընտրվել է ԵԴԳԽՄ-ի լիազումար նիստի կողմից՝ նպատակ ունենալով ընդգծելու այն կարեւոր դերը, որը դատախազները կարող են եւ պետք է ունենան շրջակա միջավայրի պահպանության գործում, հատկապես արդարադատության համար պայքարելիս, հանրային շահերին ծառայելիս, քրեական հետապնդումների միջոցով արդյունավետ զսպվածություն ստեղծելիս եւ օրենքի նկատմամբ հարգանքը բարձրացնելիս:

2. Բնապահպանական հանցագործությունները եւ դրանց հետ կապված խախտումները համաշխարհային մտահոգության ընդլայնվող աղբյուր են եւ հրատապ սպառնալիք՝ անհատների եւ հասարակության համար: Դրանք հաճախ ունենում են երկարատեւ եւ անդամայի հետեւանքներ, այդ թվում՝ գլոբալ ընդգրկման շրջանակը եւ ազդեցությունն ինչպես ներկայիս, այնպես էլ ապագա սերունդների վրա, ինչը կարող է ազդել տարբեր պետությունների եւ արդարադատության համակարգերի վրա եւ ներառել տարբեր պետություններ ու արդարադատության համակարգեր: Հավասարապես կարեւոր է այն, որ այդպիսի հանցագործությունները կարող են խարխիլ օրենքի գերակայությունը, լավ կառավարումը եւ կարող են աշխարհաքաղաքական հակամարտություններ հրահրել: Այս համատեքստում բնապահպանական հանցագործությունների եւ իրավունքի կիրարկման գործընթացի նկատմամբ դատախազների մեծ եւ կայուն ուշադրությունն էական նշանակություն ունի օրենքի գերակայության ամրապնդման համար, որի վրա հիմնված է բնապահպանական կառավարումը, եւ այս առնչությամբ ուղենիշներ եւ արժեքներ սահմանելու համար:

3. Ֆինանսական, տնտեսական, սոցիալական եւ այլ օգուտներ բերելու հետ համատեղ գլոբալիզացիան եւ ընդլայնված անդրասահմանային առեւտուրը դուռ բացեցին նաեւ հանցավորության, հատկապես բնապահպանական հանցագործությունների եւ դրանց հետ կապված խախտումների թվի աճի համար: Բնապահպանական հանցագործությունը լայն իմաստով համարվում է անդրազգային հանցավոր գործունեության առավել շահավետ ձեւերից մեկը: Այդպիսի հանցագործությունները հաճախ համընկնում են այլ այնպիսի ծանր հանցագործությունների հետ, ինչպիսիք են մարդկանց թրաֆիքինգը եւ թմամիջոցների ապօրինի շրջանառությունը, կեղծարարությունը, կիբեռնահանցագործությունը եւ կոռուպցիան: Ավելին, բնապահպանական հանցագործությունների գործերով վարույթները հաճախ կարող են խորին լինել, քանի որ այդ հանցագործությունները կարող են իրականացված լինել մի շարք դերակատարների կողմից՝ սկսած անհատներից, ընկերություններից եւ կորպորացիաներից, կաշառված պաշտոնյաներից, կազմակերպված հանցավոր ցանցերից կամ այս բոլոր դերակատարների համակցությունից: Սա իր հերթին հատուկ մարտահրավերներ է ներկայացնում դատախազների համար. իսկ այդ մարտահրավերները պահանջում են ոչ միայն գործնական խորը գիտելիքներ, հմտություններ եւ կարողություններ, այլ նաեւ մարտահրավերները լուծելու եւ բնապահպանական հանցագործությունները կանխելու նորարարական համագործակցային մոտեցումներ եւ ուժեղ ձգտում:

4. Սույն կարծիքը հիմնված է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների դատախազների կողմից ձեռք բերված փորձի եւ ընդունված մոտեցումների վրա՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի պահպանության գործում նրանց դերը եւ նրանց իրավասությունները՝ պատշաճ կերպով հաշվի առնելով իրավական համակարգերի բազմազանությունը: Կարծիքում հաշվի են առնվում նաեւ նրանց փորձի վրա ազդող այլ հիմնական տարբերություններ, մասնավորապես՝ նրանց հանդիպած բնապահպանական հանցագործությունների տեսակների մասով առկա տարբերությունները, նրանց կազմակերպչական տարբեր մոտեցումները եւ այն, որ ներպետական իրավունքի համաձայն՝ բնապահպանական

¹ A/HRC/RES/48/13 - ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդ, 2021 թվականի հոկտեմբերի 8-ին ընդունված 48/13 բանաձեւ, «Մարդու՝ մաքուր, առողջ եւ կայուն միջավայր ունենալու իրավունքը» եւ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 2022 թվականի հուլիսի 28-ին 76/300 բանաձեւի ընդունումը, որով մաքուր, առողջ եւ կայուն միջավայր ունենալու իրավունքը նույնպես ճանաչվում է որպես մարդու իրավունք, եւ որով կոչ է արվում ընդլայնելու գործադրվող ջանքերը՝ բոլորի համար այդպիսի միջավայր ապահովելու համար:

հանցագործություններն ու խախտումները կարող են դիտարկվել եւ լուծվել տարբեր կերպ:

5. Կարծիքում սահմանվում եւ նկարագրվում է բնապահպանական հանցագործությունների կանխարգելման, բացահայտման, քննության եւ քրեական հետապնդման գործընթացներում դատախազներից ակնկալվող վարքագիծը: Այդպիսի հանցագործությունները սովորաբար լինում են բարդ, կատարված մոլորեցնող եւ լավ կազմակերպված ձեռով, կրում են գաղտնի բնույթ եւ պահանջում են բազմամասնագիտական մոտեցում:

6. Կարծիքը նպատակ ունի դատախազների համար ծառայելու որպես տեղեկատվական գործիք բնապահպանական հանցագործությունների դեմ պայքարում եւ շրջակա միջավայրի պահպանության հարցում:

7. Կարծիքում հաշվի է առնվում ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց նկատմամբ կատարված բնապահպանական հանցագործություններն ու դրանց հետ կապված խախտումները քրեական, վարչական կամ քաղաքացիական իրավունքի միջոցով պատժելու եւ վերացնելու համար գոյություն ունեցող իրավական գործիքների ու մեխանիզմների պարբերաբար վերանայման անհրաժեշտությունը: Բնապահպանական հանցագործությունների եւ այլ ծանր հանցագործությունների, մասնավորապես՝ կազմակերպված հանցավորության եւ կոռուպցիայի, ինչպես նաեւ զինված հակամարտությունների համատեքստում պատերազմ մղելու համար նախատեսված միջոցներով կատարված հանցագործությունների միջեւ կապերի, ինչպես նաեւ ազգային միջգերատեսչական եւ միջազգային համագործակցության համապատասխան գործիքների ու ուղիների առկայության կանոնավոր վերանայումը նույնպես կարեւոր է:

8. Անդամ պետությունները պայքարում են բնապահպանական հանցագործությունների եւ դրանց հետ կապված խախտումների դեմ քրեական, վարչական եւ քաղաքացիական իրավունքի միջոցով: Քրեական իրավունքը սովորաբար կիրառվում է ավելի լուրջ խախտումների դեպքում, որոնք ավելի մեծ վտանգ են ներկայացնում եւ համապատասխանաբար սոցիալապես հավանության արժանացած չլինելու եւ դատապարտված լինելու ավելի բարձր հավանականություն են ներկայացնում: Թեեւ իրավական համակարգերը եւ նմանատիպ խնդիրների վերաբերյալ մոտեցումները կարող են տարբեր լինել անդամ պետություններում, երբ վտանգի տակ է այնպիսի ընդհանուր արժեք ներկայացնող երեւույթ, ինչպիսին շրջակա միջավայրի պահպանությունն է, այնուամենայնիվ, ընդհանուր նպատակները, պահանջները եւ լուծումները հնարավոր է սահմանել: Դատախազության ներգրավվածությունը շարունակում է կենսական նշանակություն ունենալ օրենքի կիրառման որակը բարձրացնելու, հետեւողականության եւ հանցագործներին պատասխանատվության ենթարկելու համար:

9. Շրջակա միջավայրի պահպանությունը պահանջում է համալիր մոտեցում եւ ինչպես մասնավոր, այնպես էլ պետական հատվածը ներկայացնող շահագրգիռ կողմերի, ներառյալ՝ դատավորների, դատախազության, ոստիկանության եւ քննչական մարմինների, այն հաստատությունների, որոնց վստահված է ներպետական օրենսդրության համաձայն շրջակա միջավայրի պահպանությունը, շահագրգիռ պետական մարմինների ու գերատեսչությունների, զանգվածային լրատվամիջոցների, հասարակական եւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավվածությունը: Հաշվի առնելով, որ շրջակա միջավայրի պահպանության գործում դատախազական ներգրավվածության մասշտաբը կարող է տարբեր լինել անդամ պետություններում, եւ որ դատախազներից բացի այլ մարմիններ նույնպես կարող են էական դեր խաղալ այս ոլորտում, սույն կարծիքը կարող է, *mutatis mutandis*, օգտակար լինել նաեւ այնպիսի մարմինների համար, որոնց վստահված է շրջակա միջավայրի պահպանությունը՝ ներպետական իրավունքի եւ կանոնակարգերի համաձայն, ինչպես նաեւ շահագրգիռ եւ համապատասխան բոլոր դերակատարների համար:

10. Կարծիքի շրջանակներում կարեւորվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ), ինչպես նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) համապատասխան նախադեպային իրավունքի կարեւորությունը: Այն պատրաստվել է «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Նախարարների կոմիտեի Rec(2000)19 առաջարկության եւ «Քրեական արդարադատության համակարգից դուրս հանրային մեղադրողների դերի մասին» Նախարարների կոմիտեի Rec(2012)11 առաջարկության հիման վրա: Կարծիքում հաշվի են առնվում նաեւ Եվրոպայի խորհրդի, ինչպես նաեւ Եվրոպական միության այլ իրավական փաստաթղթեր եւ այլ միջազգային իրավական փաստաթղթեր:

11. ԵԴԳԽՆ-ն ցանկանում է իր խորին երախտագիտությունը հայտնել իր նախագահ պարոն Անտոնիո Վերչեր Նոգուերային (Իսպանիա) ԵԴԳԽՆ-ում շրջակա միջավայրի պահպանության գործում դատախազների դերի վերաբերյալ քննարկումներ սկսելու համար, աշխատանքային փաստաթուղթը պատրաստելու համար, ինչը հիմք է եղել սույն կարծիքի համար, եւ սույն կարծիքի ընդունման ամբողջ գործընթացի ժամանակ իր գործադրած կայուն ջանքերի համար: ԵԴԳԽՆ-ն ցանկանում է շնորհակալություն հայտնել նաեւ ԵԴԳԽՆ փորձագետ տիկին Կատերինա Վայսովային (Չեխիայի Հանրապետություն) սույն կարծիքում իր արդյունավետ ներդրումն ունենալու համար:

II. «Շրջակա միջավայր» հասկացությունը եւ դրա պահպանության հետ կապված իրավական փաստաթղթերը

Ա. «Շրջակա միջավայր» հասկացությունը

12. Կարելոր է հենց սկզբից սահմանել «շրջակա միջավայր» հասկացությունը՝ ավելի լավ հասկանալու համար այն արժեքների, շահերի եւ ապրանքների շրջանակը, որոնք ակնկալվում է, որ դատախազներն ու այլ համապատասխան մարմիններ պետք է պաշտպանեն շրջակա միջավայրի պահպանության շրջանակներում, եւ բացատրել այդ հասկացության գործառնական նշանակությունը սույն կարծիքի համատեքստում:

13. Հաշվի առնելով բնապահպանական խնդիրների սոցիալական արդիականությունը եւ կենսական նշանակությունը՝ ազգային, տարածաշրջանային եւ միջազգային մակարդակներում տարբեր իրավական փաստաթղթերում ներառվել են «շրջակա միջավայր» հասկացությունը բացատրող սահմանումներ: Ըստ լայն մոտեցման՝ «շրջակա միջավայր» հասկացությունն ընդգրկում է շրջակա արտաքին այն պայմանները, որոնք ազդում են մարդկանց, կենդանիների կամ բույսերի կայուն զարգացման կամ աճի, ինչպես նաեւ մարդկանց կենսապայմանների եւ աշխատանքի պայմանների վրա: Շրջակա միջավայրը պատկանում է բոլոր կենդանի արարածներին եւ հետեւաբար կարելոր է բոլորի համար:

14. Շրջակա միջավայրն ընդգրկում է եւ՛ աբիոտիկ, եւ՛ բիոտիկ բնական ռեսուրսները, ինչպիսիք են օդը, ջուրը, հողը, կենդանական աշխարհը եւ բուսական աշխարհը եւ նույն գործոնների փոխազդեցությունը, մշակութային ժառանգության մաս կազմող գույքը եւ լանդշաֆտի բնորոշ հայեցակետերը²: «Շրջակա միջավայր» հասկացությունը սահմանվում է ոչ թե որպես վերացական գաղափար, այլ որպես մարդ արարածի կենսատարածքի, կյանքի որակի եւ բուն առողջության մարմնավորում, ներառյալ՝ չձևված սերունդների համար, ինչը³ կայուն զարգացման գաղափարի շրջանակում կարելոր հայեցակետ է:

15. Որպեսզի «շրջակա միջավայր» հասկացության շրջանակում ընդգրկված որեւէ օբյեկտ չմնա անպաշտպան, անդամ պետությունները պետք է նախապատվությունը տան հնարավորինս լայն եւ համապարփակ մոտեցման՝ միաժամանակ «շրջակա միջավայր» եզրույթը սահմանելով թեմայի վերաբերյալ ներկայիս ազգային եւ միջազգային իրավական շրջանակներին համապատասխան:

Բ. Շրջակա միջավայրի պահպանության առնչությամբ միջազգային իրավական փաստաթղթերը եւ փափուկ իրավունքի նորմերը

16. Մարդու իրավունքների եւ շրջակա միջավայրի պահպանության միջեւ առկա փոխազդեցությունը գնալով ավելի մեծ ճանաչում է ձեռք բերում: Թեեւ առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունքը որպես այդպիսին նախատեսված չէ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (ՄԻԵԿ), Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ), այնուամենայնիվ, ունի շրջակա միջավայրին առնչվող գործերով նախադեպային իրավունք, քանի որ հասկանալի է դարձել, որ շրջակա միջավայրին հասցված վնասը կարող է խաթարել ՄԻԵԿ⁴-ով երաշխավորված որոշ իրավունքների իրացումը: Այս ոլորտում⁵ աշխատանքներ են իրականացնում նաեւ Եվրոպայի խորհրդի միջկառավարական մարմինները: Ավելին, առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունքը

² Շրջակա միջավայրի համար վտանգավոր գործունեության հետեւանքով առաջացած վնասի համար քաղաքացիական պատասխանատվության մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածին համապատասխան (Լուզանո, 1993 թվականի հունիսի 21):

³ «Միջուկային զենքերի սպառնալիքի կամ օգտագործման օրինակատվությունը», Արդարադատության միջազգային դատարանի (ԱՄԴ) 1996 թվականի հուլիսի 8-ի խորհրդատվական կարծիք, ԱՄԴ-ի (1996) 226 զեկույցներ, պարբ. 29:

⁴ Օրինակ՝ Գերան եւ այլք ընդդեմ Իտալիայի [Guerra and Others v. Italy], թիվ 116/1996/735/932 գործը, 1998 թվականի փետրվարի 19 (շրջակա միջավայրի խիստ աղտոտումը կարող է ազդել անհատների բարեկեցության վրա եւ թույլ չտալ նրանց վայելել իրենց տները, ինչը բացասաբար կազդի նրանց մասնավոր եւ ընտանեկան կյանքի վրա), *Լոպեզ Օստրան ընդդեմ Իսպանիայի* [López Ostra v. Spain], թիվ 16798/90 գործը, 1994 թվականի դեկտեմբերի 9 (քաղաքի տնտեսական բարեկեցության, այն է՝ թափոնների մշակման գործարան ունենալու շահերի եւ դիմումատուի՝ իր տան եւ իր մասնավոր ու ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքից արդյունավետ օգտվելու միջեւ արդար հավասարակշռության բացակայություն), *Ֆադեյեա ընդդեմ Ռուսաստանի* [Fadeyeva v. Russia], թիվ 55723/00 գործը, 2005 թվականի հունիսի 9 (համայնքի շահերի եւ դիմումատուի կողմից իր տան եւ իր մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքից արդյունավետ օգտվելու միջեւ արդար հավասարակշռության բացակայություն), *Ջակոմելլին ընդդեմ Իտալիայի* [Giacomelli v. Italy], թիվ 59909/00 գործը, 2006 թվականի նոյեմբերի 2 (համայնքի՝ արդյունաբերական թունավոր թափոնների վերամշակման գործարան ունենալու շահի եւ դիմումատուի՝ իր տան եւ իր մասնավոր ու ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքից արդյունավետ օգտվելու միջեւ արդար հավասարակշռության բացակայություն), *Ռուսինիայի* [Tătar v. Romania], թիվ 67021/01 գործը, 2009 թվականի հուլիսի 6 (հանքավայրը շահագործող ընկերության գործունեության ռիսկերը բավարար չափով չզննատեսելու եւ տվյալ անձանց՝ նրանց մասնավոր կյանքի ու տների նկատմամբ հարգանքի իրավունքը եւ ընդհանրապես, նրանց՝ առողջ եւ պահպանված շրջակա միջավայրից օգտվելու իրավունքը պաշտպանելու համար համապատասխան միջոցառումներ չձեռնարկելը): Տե՛ս նաեւ Մարդու իրավունքների ղեկավար կոմիտեի (ՄԻԿԿ) Մարդու իրավունքների եւ շրջակա միջավայրի վերաբերյալ ձեռնարկը (3-րդ հրատարակություն, 2022 թվականի փետրվար):

⁵ Մասնավորապես Մարդու իրավունքների ղեկավար կոմիտեն (ՄԻԿԿ) պատրաստել է Մարդու իրավունքների եւ շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ Նախարարների կոմիտեի առաջարկությունն անդամ պետություններին, որն ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2022 թվականի սեպտեմբերի 27-ին, որով անդամ պետություններին կոչ էր արվում ակտիվորեն դիտարկելու մաքուր, առողջ եւ կայուն միջավայր ունենալու իրավունքն ազգային մակարդակով ճանաչելու հարցը:

երաշխավորված է անդամ պետությունների մեծամասնության ներպետական օրենսդրությամբ, այդ թվում՝ նրանցից մի քանիսում նույնիսկ սահմանադրական մակարդակով:

17. Շրջակա միջավայրի պահպանության հետ կապված աճող եւ կրկնվող մտահոգություններին զուգընթաց տարբեր մակարդակներում ընդունվել են բազմաթիվ իրավական փաստաթղթեր: Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված որոշ փաստաթղթեր սերտորեն վերաբերում են բնապահպանական որոշ բաղադրիչների պաշտպանությանը, մինչդեռ մյուսները վերաբերում են շրջակա միջավայրի եւ մշակութային արժեքների համար վտանգ ներկայացնող գործողություններին, այդ թվում՝ համապատասխան տեղեկությունների մատչելիությանը:

18. Վերջին տասնամյակների ընթացքում Եվրոպայի խորհուրդն ընդունել է հետեւյալ կարեւոր փաստաթղթերը.

- «Շրջակա միջավայրի պահպանության գործում քրեական իրավունքի ունեցած ներդրումի մասին» Եվրոպայի խորհրդի 1977 թվականի (77)28 բանաձեւ,
- Եվրոպայի վայրի բնության եւ բնական միջավայրի պահպանության մասին Եվրոպայի խորհրդի 1979 թվականի կոնվենցիա կամ Բեռնի կոնվենցիա,
- Շրջակա միջավայրի համար վտանգավոր գործունեության հետեւանքով առաջացած վնասի համար քաղաքացիական պատասխանատվության մասին Եվրոպայի խորհրդի 1993 թվականի կոնվենցիա,
- Զրեական իրավունքի միջոցով շրջակա միջավայրի պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի 1998 թվականի կոնվենցիա⁶,
- Եվրոպայի խորհրդի 2000 թվականի Լանդշաֆտի կոնվենցիա կամ Ֆլորենցիայի կոնվենցիա,
- Մշակութային արժեքների նկատմամբ իրավախախտումների մասին Եվրոպայի խորհրդի 2017 թվականի Նիկոսիայի կոնվենցիա:

19. Զանի որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կեսից ավելին նաեւ Եվրոպական միության (ԵՄ) անդամներ են, ապա ԵՂԳԽՆ-ն ցանկանում է ընդգծել նաեւ շրջակա միջավայրի պահպանության հարցում ԵՄ օրենսդրության կարեւորությունը, ինչպես օրինակ՝ քրեական իրավունքի եւ կանոնակարգերի միջոցով շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ ԵՄ համապատասխան հրահանգները⁷:

20. Որոշ միջազգային պայմանագրերով պայմանավորվող պետությունները պարտավորվում են քրեական կամ վարչական վարույթում պատիժ կիրառել որոշակի վարքագծի կամ ապօրինի գործողությունների նկատմամբ⁸:

Գ. Շրջակա միջավայրի պահպանության իրավական դաշտն ազգային մակարդակում

21. Անդամ պետությունների իրավական համակարգերի եւ ավանդույթների միջեւ առկա տարբերություններն արտացոլվում են շրջակա միջավայրի պահպանության համար իրենց օրենսդրության մշակման եւ բնապահպանական հանցագործությունների եւ դրանց հետ կապված խախտումների նկատմամբ նրանց ցուցաբերած վերաբերմունքի ձեւի մեջ:

22. Որեւէ մտադրություն չկա սույն կարծիքով որոշակի համակարգի նկատմամբ նախապատվություն արտահայտելու, ավելի շուտ նպատակն այն ռիսկն ընդգծելն է, որ շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ ներպետական օրենսդրության թերությունները կամ մեղմությունը, այդպիսի օրենսդրության հնարավոր բացերը, կոնկրետ գործողությունների բացակայությունը կամ անգործությունը կարող են հանգեցնել հանցագործների կողմից պետության տարածքը որպես «հուսալի ապաստարան» օգտագործվելուն:

23. Բնապահպանական հանցագործությունները հանցավոր խմբերի եւ ցանցերի համար գրավիչ դարձնող պատճառները, հավանաբար, հետեւյալն են.

⁶ Հարկ է նշել, որ Զրեական հիմնախնդիրների հարցերով Եվրոպական կոմիտեի (ԶՀԵԿ)՝ 2022 թվականի հունիսի 14-15-ը կայացած լիազորմար նիստում հաստատվել է «Զրեական իրավունքի միջոցով շրջակա միջավայրի պաշտպանության մասին» տեխնիկատնտեսական հիմնավորումը, որում ընդգծվում է Եվրոպայի խորհրդի նոր կոնվենցիա մշակելու անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը, որը կփոխարինի Զրեական իրավունքի միջոցով շրջակա միջավայրի պաշտպանության մասին 1998 թվականի կոնվենցիան:

⁷ Օրինակ՝ 2008/99/ԵՄ հրահանգը, 2005/33/ԵՄ հրահանգը, Եվրոպական պառլամենտի եւ խորհրդի 2006 թվականի հունիսի 14-ի թիվ 1013/2006 (ԵՄ) կանոնակարգը՝ թափոնների ջրային փոխադրման մասին:

⁸ Ինչպիսին է Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առեւտրի մասին 1973 թվականի կոնվենցիան, CITES կոնվենցիա:

- բացահայտման համեմատաբար ցածր հավանականությունը կամ իրավասու մարմինների կողմից բնապահպանական հանցագործությունների եւ դրանց հետ կապված խախտումների առաջնահերթության իջեցումը կամ ներպետական օրենսդրության ներդաշնակեցման բացակայությունը.

- օրենսդրության, քաղաքականությունների եւ ընթացակարգերի տեխնիկական թերությունները, որոնք խոչընդոտում են իրավապահ մարմինների գործողությունները.

- ներպետական մակարդակով համապատասխան իրավասու մարմինների համագործակցության բացակայությունը կամ անբավարար համագործակցությունը.

- բնապահպանական հանցագործություններով զբաղվելու աղքատիկ հմտությունները կամ հարեւան եւ (կամ) այլ երկրների հետ անբավարար համագործակցությունը.

- բնապահպանական հանցագործության «ցածր ռիսկ, բարձր պարզեւատրություն» բնույթը:

24. Կազմակերպված հանցավոր ցանցերի կողմից իրականացվող բնապահպանական հանցագործությունները կանխելու համար անդամ պետությունները պետք է ազգային մակարդակով անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն՝ սկսելով ամրապնդել իրենց իրավական դաշտը, ուղղել իրավական թերություններն ու ապահովել դրա արդյունավետ իրականացումը գործնականում: Օրինակ՝ կազմակերպված հանցավորության կամ կոռուպցիայի դիտարկումը որպես ծանրացուցիչ հանգամանք կարող է համարվել որպես օրենսդրության ամրապնդման հնարավոր եղանակներից մեկը:

25. Հարկ է վերահաստատել, որ շրջակա միջավայրի պահպանությունը պահանջում է համալիր մոտեցում, իսկ օրենսդրության որակն այս մոտեցման առանցքային տարրերից մեկն է: Ներպետական օրենսդրությունը պետք է մշակվի այնպես, որ անդամ պետությունների իշխանություններին հնարավորություն ընձեռնվի ավելի լավ արձագանքելու շրջակա միջավայրի պահպանության շրջանակում հանդիպող մարտահրավերներին, եւ համահունչ լինի միջազգային զարգացող չափանիշների հետ, որոնք շրջակա միջավայրի վիճակի վատթարացման հետ մեկտեղ դառնում են ավելի պահանջկոտ:

26. Այդ նպատակով շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող ներպետական իրավական շրջանակները պետք է իրավասու մարմինների կողմից պարբերաբար ենթարկվեն վերանայման: Սա կարող է հանգեցնել օրենսդրության փոփոխության կամ նոր օրենսդրության ընդունման անհրաժեշտության, այդ թվում՝ իրավախախտումների նոր կատեգորիաների սահմանման՝ առավել վնասակար ապօրինի գործողություններին լավագույն լուծում տալու համար, որպեսզի պատշաճ կերպով լուծվեն շրջակա միջավայրի պահպանության կարիքներն, ու հաշվի առնվեն փոփոխվող եւ ավելի պահանջկոտ միջազգային չափանիշները:

27. Պետք է խորհրդակցել դատախազական ծառայությունների հետ, կամ նրանք պետք է ուղղակիորեն ներգրավվեն գործադիր կամ օրենսդիր իշխանությունների կողմից նոր օրենսդրության կամ կանոնների մշակման կամ իրավական բարեփոխումների ձեռնարկման գործընթացներին:

III. Շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ ուղեցուցային սկզբունքները

28. Համապատասխան սկզբունքներից մեկը Շրջակա միջավայրի եւ զարգացման մասին Ռիոյի հռչակագրով⁹ ներդրված *ընդհանուր նախազգուշական սկզբունքն* է: Այդ հռչակագրում հաշվի է առնվում այն փաստը, որ հաճախ դժվար է, եթե ոչ անհնար, շրջակա միջավայրի վրա մարդու գործողությունների ճշգրիտ ազդեցությունը գնահատելը, եւ որ որոշ գործողություններ կարող են անուղղելի վնաս պատճառել, Հռչակագրով նաեւ սահմանվում է, որ եթե առկա են լուրջ կամ անդամնայի վնասների սպառնալիքներ, ապա լիարժեք գիտական հստակության բացակայությունը չպետք է օգտագործվի որպես շրջակա միջավայրի դեգրադացիան կանխելու համար ծախսարդյունավետ միջոցառումները հետաձգելու պատճառ¹⁰:

29. «*In dubio pro Natura*» սկզբունքը կիրառելի է կանխարգելիչ տեսանկյունից: Համապատասխանաբար գործունեության՝ շրջակա միջավայրի համար վնասակար լինել-չլինելու մասով կասկած առաջանալու դեպքում հարցը պետք է լուծվի հօգուտ շրջակա միջավայրի պահպանության:

30. Մեկ այլ սկզբունք է *կորպորատիվ պատասխանատվությունը*: Ինչպես նշվել է ավելի վաղ, շրջակա միջավայրի դեմ ուղղված խախտումներ կատարելու մեջ իրավաբանական անձանց ներգրավելու

⁹ Շրջակա միջավայրի եւ զարգացման մասին Ռիոյի հռչակագրի 15-րդ սկզբունքը, որն ընդունվել է ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի եւ զարգացման համաժողովի կողմից Ռիո դե Ժանեյրոյում, Բրազիլիա, 1992 թվականին:

¹⁰ 2002 թվականի սեպտեմբեր: «Pfizer Animal Health SA»-ն ընդդեմ Եվրոպական միության խորհրդի, եւ այն աստիճանաբար ներմուծվել է ԵՄ օրենսդրության եւ ազգային օրենսդրության մեջ (Եվրոպական միության գործունեության մասին (ԵՄԳՄ) պայմանագրի 191(2) հոդվածի առաջին ենթապարբերությանը համապատասխան), ինչպես նաեւ տարբեր միջազգային իրավական փաստաթղթերում:

աճող միտում է նկատվում, ինչն իր հերթին իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու մեխանիզմներ է պահանջում:

31. Անդամ պետությունների ճնշող մեծամասնությունն արդեն կորպորատիվ պատասխանատվության վերաբերյալ դրույթներ է ներդրել քրեական, վարչական կամ քաղաքացիական օրենսգրքերում: Հետևաբար «*societas delinquere non potest*» (իրավաբանական անձինք չեն կարող ենթարկվել քրեական պատասխանատվության) սկզբունքի հիմնավորվածության ու արժանահավատության անհրաժեշտությունը մղվում է հետին պլան: Այս առնչությամբ ԵՂԳԽԻՆ-ն ցանկանում է ընդգծել, որ բնապահպանական հանցագործությունների եւ դրանց հետ կապված խախտումների մասով ինչպիսի մոտեցում էլ որդեգրվի, իրավաբանական անձանց պատասխանատվությունը միշտ պետք է սահմանվի օրենքով:

32. Կիրառելի մեկ այլ սկզբունք է «*բացարձակ պատասխանատվության սկզբունքը*», մասնավորապես՝ քաղաքացիական եւ վարչական պատասխանատվության համար: Մարդկության համար պոտենցիալ վտանգ ներկայացնող վնասակար կամ վտանգավոր նյութեր կամ առարկաներ ունեցող ցանկացած անձ պատասխանատվություն է կրում պատճառված ցանկացած վնասի համար՝ անկախ այդ անձի՝ այդպիսի վնաս պատճառելու մտադրությունից:

33. Հարկ է անդրադառնալ նաեւ *բնության նկատմամբ կիրառելի, իրավաբանորեն ամրագրված իրավունքների սկզբունքին*, որը հանգեցնում է այն հարցի քննարկման, թե արդյոք բնությունը պետք է ունենա իր սեփական իրավունքները՝ ի տարբերություն բնության նկատմամբ մարդկանց իրավունքների գաղափարի: Չնայած այն հանգամանքին, որ այս սկզբունքը հստակ ձեւակերպված չէ նախադեպային իրավունքում, այն զարգացող սկզբունք է:

34. Պետք է նշել նաեւ «*աղտոտողը վճարում է*»¹¹ սկզբունքը, որն աղտոտման համար պատասխանատու կողմից պահանջում է վճարել շոջակա միջավայրին հասցված վնասի համար, ինչպես նաեւ *կայուն զարգացման սկզբունքը*:

35. *Կանխարգելման սկզբունքը*, որն ընդհանուր սկզբունք է օրենքի տարբեր ոլորտներում, կարելի է նաեւ բնապահպանական հանցագործությունների եւ դրանց հետ կապված խախտումների համատեքստում եւ նույնքան կարելի է, որքան հանցագործներին պատասխանատվության ենթարկելը: Կանխարգելումը թույլ է տալիս խուսափել բնապահպանական հանցագործությունների եւ դրանց հետ կապված խախտումների երկարատեւ, ծախսատար եւ հաճախ անդառնալի հետեւանքներից, ինչը հանգեցնում է ակնհայտ սոցիալական եւ տնտեսական օգուտների: Կանխարգելումը նաեւ նվազեցնում է քրեական արդարադատության համակարգի եւ այդպիսի խախտումներով զբաղվող մարմինների, այդ թվում՝ դատախազական ծառայությունների ծանրաբեռնվածության հետ կապված երկարաժամկետ ծախսերը:

IV. Բնապահպանական հանցագործություններն ու դրանց համար նախատեսված պատիժները

Ա. Բնապահպանական հանցագործությունները

36. Թեեւ բարդ է բնապահպանական հանցագործություններից ստացված ապօրինի եկամուտների ճշգրիտ ծավալը պատկերացնելը, այնուամենայնիվ, առկա գնահատումները ցույց են տալիս, որ բնապահպանական հանցագործությունն աշխարհի ամենաեկամտաբեր հանցագործություններից է, որը տարեկան բերում է շուրջ 110-281 միլիարդ ԱՄՆ դոլար հանցավոր շահույթ՝ տարեկան¹² այս ցուցանիշն ավելացնելով 5-7 %-ով: Միայն վայրի կենդանիների եւ բույսերի ապօրինի առեւտրից ստացվող եկամուտը կազմում է 7-23 միլիարդ դոլար¹³: Սա բնապահպանական հանցագործությունը դարձնում է աշխարհում չորրորդ խոշորագույն հանցավոր գործունեությունը թմրանյութերի մաքսանենգությունից, կեղծարարությունից եւ մարդկանց թրաֆիքինգից հետո:

37. Ինչպես նշվել էր ավելի վաղ, անդամ պետությունները կարող են տարբեր կերպ արձագանքել բնապահպանական հանցագործություններին եւ դրանց հետ կապված խախտումներին: Այնուամենայնիվ, հաշվի առնելով շոջակա միջավայրի դեմ ուղղված խախտումների զարգացող բնույթն ու լրջությունը, դրանց դեմ պայքարի գործում ավելի հաճախ են սկսել դիմել քրեական իրավունքին:

38. Զրեական հանցագործությունների համար համընդհանուր համաձայնեցված սահմանում չկա: Բազմաթիվ իրավական փաստաթղթերով, այդ թվում՝ Զրեական իրավունքի միջոցով շոջակա միջավայրի պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի 1998 կոնվենցիայով սահմանվում են դրույթներ՝

¹¹ Շոջակա միջավայրի եւ զարգացման մասին Ռիոյի հռչակագրի 16-րդ սկզբունք, որն ընդունվել է ՄԱԿ-ի Շոջակա միջավայրի եւ զարգացման համաժողովի կողմից Ռիո դե Ժանեյրոյում, Բրազիլիա, 1992 թվականին:

¹² RHIPTO (Գլոբալ վերլուծության նորվեգական կենտրոն), ԻՆՏԵՐՊՈԼ եւ ՉԼ (2018) Ապօրինի ֆինանսական հոսքերի համաշխարհային քարտեզ:

¹³ ՄԱԿ-ի Շոջակա միջավայրի ծրագիր. Ինտերպոլի արագ արձագանքման գնահատում. Բնապահպանական հանցագործությունների աճ (2016 թվականի հունիս):

որոշ քրեական հանցագործություններ սահմանելու համար: 1998 թվականի կոնվենցիան առաջին վերագրային փաստաթուղթն էր, որում քննարկվում էր բնապահպանության տեսանկյունից վնասակար վարքագծին քրեական իրավունքի միջոցով տրվող արձագանքը: Դրանով նախատեսվում էր, որ լուրջ հետեւանքներով բնապահպանական խախտումները պետք է դիտարկվեն որպես հանցանքներ, որոնց նկատմամբ պետք է կիրառվեն համապատասխան պատժամիջոցներ, ինչպես նաեւ ներառում է հանցանքների ցանկ, այդ թվում՝ դիտավորյալ բնույթ կրող եւ զուտ անփութության հետեւանք հանդիսացող հանցանքները: Ըստ այդ փաստաթղթի՝ պատժամիջոցներ նշանակելիս պետք է հաշվի առնվեն այդ իրավախախտումների լուրջ բնույթը: Պետք է դիտարկվի առնվազն ազատագրկման եւ դրամական պատժամիջոցների կիրառումը: Առաջարկվում է նաեւ շրջակա միջավայրի վերականգնումը ներառել որպես բնապահպանական խախտման դեպքում կիրառվող պատժամիջոց կամ որպես քաղաքացիական պատասխանատվության ձև:

39. Հարկ է նշել, որ շրջակա միջավայրի դեմ ուղղված հանցագործությունների կործանարար ազդեցությունը կարող է տարբեր կերպ դասակարգվել, օրինակ՝ Էկոլոգիական ազդեցություն (կենսաբազմազանության եւ բնական միջավայրի կորուստ, Էկոհամակարգի վատթարացում), պետությունների եւ բարեխիղճ բիզնես դերակատարների կողմից օրինական եկամուտների տնտեսական կորուստ, անարդար մրցակցություն եւ սոցիալական ազդեցություն (անհատների առողջության վրա եւ անբարեխիղճ մրցակցության հանգամանքների հետեւանքով առաջացած գործազրկություն):

40. Շրջակա միջավայրի դեմ ուղղված ապօրինի արարքը որպես հանցագործություն որակավորելու համար պետք է առկա լինեն մի քանի տարրեր: Մասնավորապես անհրաժեշտ է ծանրության որոշակի մակարդակ եւ (կամ) զգալի վնաս: Թեեւ այս եզրույթները լայնորեն օգտագործվում են ազգային մակարդակում, սակայն անդամ պետություններում դրանք տարբեր կերպ են մեկնաբանվում: Որոշ պետությունների իրավագործություններում նախընտրում են վնասն ուղղակիորեն կապել ապօրինի արարքի ֆինանսական ազդեցության հետ՝ որոշելու համար՝ արդյոք արարքով զգալի վնաս է պատճառվել, թե՛ ոչ: Այս դեպքում որպես վնասի ընդհանուր չափը հաշվարկելու միջոցներ օգտագործվում են հանցագործի դրամական օգուտները եւ վնասը վերականգնելու համար պահանջվող գումարը:

41. Այլ իրավագործություններում վնասը կապում են ապօրինի արարքի Էկոլոգիական ազդեցության հետ՝ նույն նպատակով: Որոշ անդամ պետություններում զգալի վնասը որոշելու համար հնարավոր է միաժամանակ կիրառել երկու մոտեցում: Դա անելիս հաշվի են առնվում ապօրինի արարքի տեւողությունը, դրա դառնալիությունն ու ազդեցությունը: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ նույնիսկ այն դեպքում, երբ ապօրինի արարքի ազդեցությունը կարող է դառնալի լինել, եթե այն պահանջում է զգալի բյուջեի հատկացում, երկար է տեւում կամ այն կարելի է շտկել Էկոհամակարգի մշտական խախտման հետեւանքով, ապա այն դեռնու պետք է դասակարգվի որպես զգալի վնաս պատճառող արարք¹⁴:

42. Չնայած ԵԴԳԽՆ-ն նախապատվություն չի հայտնում վերոհիշյալ մոտեցումներից որեւէ մեկի նկատմամբ, այն ցանկանում է «զգալի կամ էական վնաս», «չնչին ազդեցություն» եւ «շրջակա միջավայրին հասցված անդառնալի վնաս» ընդհանուր եզրույթների մասով ընդգծել, որ այդ եզրույթների համար պետք է տրվեն լրացուցիչ եւ ճշգրիտ պարզաբանումներ՝ նպատակ ունենալով ապահովելու դրանց կիրառության հետեւողականությունը եւ թույլ չտալու գործողությունների անհիմն կամ անընդունելի ազատություն դրանց հայեցողական մեկնաբանության համար:

Բ. Բնապահպանական հանցագործությունների համար նախատեսված պատիժները

43. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անդամ պետությունները քրեական պատժամիջոցները սահմանում են իրենց ներպետական իրավական ավանդույթներին եւ կարիքներին համապատասխան՝ ԵԴԳԽՆ-ն մտադիր չէ առաջարկել նվազագույն կամ առավելագույն մակարդակի պատժամիջոցներ կամ առաջարկել որոշակի տեսակի պատժամիջոցների ներդրում: Այնուամենայնիվ, այն ցանկանում է ընդգծել, որ շրջակա միջավայրի համատեքստում ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ եւ զսպող:

44. Որպեսզի պատժամիջոցը լինի արդյունավետ, դրա կիրառման արդյունքում ստացված արդյունքները պետք է համապատասխանեն դրա նպատակներին: Պատժամիջոցի արդյունավետությունը գնահատելիս կարելի է հաշվի առնել խախտման հետեւանքով պատճառված վնասի հատուցման չափը, այն հանգամանքը, թե արդյոք պատժամիջոցը խոչընդոտ է եղել պոտենցիալ հանցագործների համար, եւ այլ հնարավոր տարրեր:

45. Պատժամիջոցի համաչափությունը դրա ամբողջական համապատասխանությունն է խախտման բնույթին, ծանրությանն ու հանգամանքներին: Համաչափության պահանջը բավարարելու համար պետք է հասանելի լինի տարբեր բնույթի եւ ծանրության տարբեր աստիճաններ ունեցող խախտումների համար կիրառվող հնարավոր տարբեր պատժամիջոցների լայն շրջանակ:

46. Չսպող պատժամիջոցը պետք է խոչընդոտի խախտումների կատարումն ու կանխի դրանց

¹⁴ Տե՛ս նաեւ <https://www.eea.europa.eu/help/glossary/eea-glossary/irreversibility-of-environmental-damage>.

կրկնությունը: Բացի այդ, այն պետք է լինի իրականանալի եւ ամբողջությամբ վերացնի ենթադրյալ խախտումը: Այս կերպ պետք է լինեն համապատասխան եւ հնարավորինս պարզ կիրառման ընթացակարգեր:

47. Պատժամիջոց կիրառելու համար դատախազներին անհրաժեշտ գործիքակազմ տրամադրելու համար օրենքով պետք է նախատեսվի բնապահպանական հանցագործությունների նկատմամբ կիրառելի ինչպես դրամական, այնպես էլ ոչ դրամական բնույթի պատժամիջոցների համարժեք շրջանակ, ինչպես նաեւ շրջակա միջավայրի վերականգնման հրահանգ տալու հնարավորություն:

48. Հաշվի առնելով ազգային իրավական համակարգերի տարբերությունները՝ բնապահպանական հանցագործությունների դեմ պայքարում կարող են ընդգծվել հետեւյալ լավագույն գործելակերպերի օրինակները, ներառյալ, բայց չսահմանափակվելով նշվածով.

- բնապահպանական հանցագործությունների ակտիվների եւ (կամ) եկամուտների ու այդ հանցագործությունները կատարելու միջոցների հետազոտում, սառեցում եւ բռնագրավում.

- բնապահպանական հանցագործությունների համար հանցագործների նկատմամբ կիրառվող տուգանքների՝ հօգուտ հանրային շահի կամ ի նպաստ շրջակա միջավայրի պահպանության եւ վերականգնման օգտագործում.

- հանցագործներին պարտավորեցում միջոցներ ձեռնարկել շրջակա միջավայրին հասցված վնասը վերացնելու եւ շրջակա միջավայրի վիճակը վերականգնելու համար.

- բնապահպանական իրավախախտումների հարցում փորձառու իրավախախտների հետ համաքայլ լինելը՝ ազատվելով կորպորատիվ շղարշից, որպեսզի հնարավոր լինի հասնել այն անձանց, որոնք իրավական պատասխանատվություն են կրում կորպորատիվ կազմակերպության ձեւավորման համար.

- հանցագործի գործունեության կասեցում կամ նրա գործունեության նկատմամբ այլ սահմանափակումների կիրառում:

49. Արդյունավետ զսպվածություն ապահովելու համար բնապահպանական հանցագործությունների նկատմամբ կիրառվող դրամական պատժամիջոցները պետք է սահմանվեն՝ հաշվի առնելով հանցագործի տնտեսական վիճակը: Այնպիսի միջամտող պատժամիջոցը, ինչպիսին է ազատագրկումը, կարող է կիրառվել անհատի կամ մի խումբ անձանց անօրինական գործողությունների պատճառով առաջացած ծանր հետեւանքների դեպքում: Համապատասխան իրավասու հաստատությունները պետք է կարողանան անհրաժեշտության դեպքում վերականգնողական միջոցառումներ կիրառել:

50. Դատախազական ծառայությունների եւ այլ համապատասխան դերակատարների կողմից կարող են մշակվել եւ տարածվել դատախազների եւ այլ շահագրգիռ կողմերի համար նախատեսված ուղեցույցներ, որոնք տարբերակում են բնապահպանական հանցագործությունը վարչական իրավախախտումից եւ անդրադառնում են բնապահպանական խախտումների քննության առանձնահատկություններին, պատիժների նշանակման սկզբունքներին, նախադեպային իրավունքի օրինակներին եւ հարակից այլ հարցերի:

V. Դատախազների դերը քրեական իրավունքի միջոցով շրջակա միջավայրի պահպանության գործում

51. Ինչպես ընդգծվել է ԵԴԳԽԻ-ի թիվ 10 (2015¹⁵) կարծիքում, դատախազներն Էական դեր են խաղում քրեական գործերով քննություններում: Կախված ազգային օրենսդրությունից՝ դատախազներին կարող է վստահվել այլ իրավապահ մարմինների կողմից իրականացվող քննության նկատմամբ վերահսկողությունը, իրենց կողմից քննություն անցկացնելը, ինչպես նաեւ դատաքննություններին մասնակցելը:

52. Անկախ նրանից, թե ինչ կարգավիճակով եւ ինչ չափով են նրանք ներգրավված քրեական վարույթներում, դատախազներն իրենց իրավասության սահմաններում պետք է ապահովեն, որ բնապահպանական հանցագործությունների քննությունն իրականացվի մանրակրկտորեն, որպեսզի պատասխանատվության շրթայի բոլոր թիրախները (ֆիզիկական եւ իրավական անձինք, հանցագործները, համակատարողներն ու հանցակիցները) բացահայտվեն, եւ պետք է բացահայտվեն անօրինական գործողությունների բոլոր դեպքերը եւ ցանկացած հնարավոր կապ կազմակերպված եւ բռնի հանցագործության եւ հարակից հանցագործությունների հետ:

53. Դատախազները պետք է ձգտեն ապահովել, որ պատասխանատվության ենթարկվեն ոչ

¹⁵ Քրեական գործերով քննություններում դատախազների դերի վերաբերյալ ԵԴԳԽԻ-ի թիվ 10 (2015) կարծիքը:

միայն բնապահպանական հանցագործությունների անմիջական կատարողները, այլ նաև մյուս դերում հանդես եկած իրավախախտները, ինչպիսիք են կազմակերպիչները, դրոհողները, միջնորդները եւ նրանք, ովքեր շահում են այդ հանցագործություններից:

54. Ինչպես նշվել է ավելի վաղ, դատախազները պետք է տեղյակ լինեն բնապահպանական հանցագործությունների եւ կազմակերպված ու բռնի հանցագործությունների, կոռուպցիայի, ահաբեկչության ֆինանսավորման¹⁶ կամ զինված հակամարտության համատեքստում պատերազմ մղելու համար նախատեսված մեթոդների եւ միջոցների միջոցով կատարված հանցագործությունների միջեւ կապի մասին: Նրանք պետք է հասկանան՝ ինչպես բացահայտել եւ քննել այդպիսի հանցագործությունները, մասնավորապես՝ բնապահպանական հանցագործությունների հետ կապված փողերի լվացումը¹⁷:

55. Ինչպես ընդգծվել է ԵԴԳԽԽ-ի թիվ 11 (2016)¹⁸ կարծիքում, այնպիսի հատուկ քննչական մեթոդներ, ինչպիսիք են էլեկտրոնային հսկողությունը եւ գաղտնի գործողությունները, որոնք, ինչպես ապացուցվել է, արդյունավետ գործիքներ են ահաբեկչության եւ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գործում, հասանելի են դառնում նաև այլ ոլորտների դատախազություններին՝ առնվազն այն իրավագործություններում, որտեղ դատախազներն ունեն քննչական լիազորություններ:

56. Բնապահպանական հանցագործության դեմ պայքարելու համար խիստ կարևոր է, որ դատախազներն իրենց տրամադրության տակ ունենան անհրաժեշտ իրավական գործիքներ, ինչպիսիք են՝ ակտիվների սառեցումն ու առգրավումը, ինչպես նաև գաղտնի քննչական մեթոդները: Կախված ազգային համատեքստից՝ այդ նպատակով քննչական հատուկ մեթոդներ կիրառելու համար կարող է պահանջվել դատարանի կողմից նախապես տրված թույլտվություն:

57. Կարևոր է նաև սահմանել շրջակա միջավայրի դեմ կատարված հանցավոր արարքի ծանրության աստիճանը¹⁹, ինչպես նաև դրա հետեւանքով պատճառված վնասի չափը: Բազմաթիվ իրավագործություններում, որոշելու համար, թե արդյոք բնապահպանական խախտումը պետք է որակվի որպես հանցագործություն, թե ոչ, ծանրության աստիճանը եւ դրա պատճառած վնասի չափը շատ կարևոր են: Պետք է չմոռանալ նաև, որ բնապահպանական խախտման ազդեցությունը կարող է ի հայտ գալ փաստացի կատարման օրվանից տասնամյակներ անց, իսկ դրա հետեւանքները կարող են լինել շարունակական եւ երկարատև:

58. Այս առնչությամբ քննության մանրակրկտությունն ապահովելու համար դատախազները, անկախ նրանից՝ հենց իրենք են վարում այն, թե հսկողություն են իրականացնում դրա իրականացման նկատմամբ, պետք է ներգրավեն դատաբժշկական փորձաքննության եւ այլ մասնագետների ու փորձագետների: Այդպես պետք է արվի, եթե նույնիսկ դատախազները մասնագիտանում են բնապահպանական գործերում, երբ քննության որոշակի խնդիր դուրս է նրանց գիտելիքների եւ փորձի սահմաններից:

59. Ինչպես բնապահպանական հանցագործությունների, այնպես էլ փողերի լվացման հետ կապված իրավախախտումների վրա կենտրոնացած՝ ֆինանսական հարցերով զուգահեռ քննություններն արդյունավետ գործիք են ավելի մեծ հանցավոր ցանցերը բացահայտելու եւ ֆինանսական հոսքերն ընդհատելու համար: Ֆինանսական հետախուզության մարմինների՝ կասկածելի բնապահպանական հանցագործությունների հետ կապված կասկածելի գործարքները բացահայտելու, վերլուծելու եւ դրանց մասին զեկուցելու եւ անհրաժեշտության դեպքում՝ այդ առնչությամբ իրենց օտարերկրյա գործընկերների հետ տեղեկություններ փոխանակելու կարողությունները, ինչպես նաև դատախազների հետ նրանց համագործակցությունը, կարևոր են այս ոլորտում քննչական մարմինների ջանքերն ուժեղացնելու համար: Դատախազները պետք է կարողանան ստանալ եւ օգտագործել ֆինանսական հետախուզական որակյալ տվյալներ եւ համապատասխան տեղեկությունների այլ ձեւեր՝ քննությանն աջակցելու եւ հանցագործներին քրեորեն հետապնդելու համար²⁰:

¹⁶ Ապացույցներ կան, որ զինված խմբավորումների եւ ահաբեկչական կազմակերպությունների գործողություններում տարբեր չափով առկա են բնապահպանական որոշակի հանցագործությունների տարրեր, որպեսզի նրանք կարողանան իրենց գործողությունների համար աջակցություն եւ ֆինանսավորում ներգրավել: Տե՛ս Ահաբեկչության դեմ պայքարի հարցերով կոմիտեի գործադիր տնօրինության մոտ նկատվող միտումների վերաբերյալ նախագրուշացումը՝ «Բնական ռեսուրսների շահագործումից, առեւտրից եւ ապօրինի շրջանառությունից ստացված եկամուտներն ահաբեկչության ֆինանսավորման նպատակով օգտագործելու վերաբերյալ մտահոգություններ» (2022 թվականի հունիս):

¹⁷ Ապօրինի ծառահատումը, հանքարդյունաբերությունը, թափոնների ապօրինի շրջանառությունը եւ վայրի կենդանիների ու բույսերի առեւտուրը համարվում էին փողերի լվացման համար հարմար հիմնական բնապահպանական հանցագործություններ, տե՛ս Բնապահպանական հանցագործությունների միջոցով փողերի լվացման մասին ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի (ՖԱԹՖ) զեկույցը (2021 թվականի հուլիս) եւ Փողերի լվացման եւ վայրի կենդանիների ու բույսերի ապօրինի առեւտրի մասին ՖԱԹՖ-ի զեկույցը (2020 թվականի հունիս):

¹⁸ Դատախազների աշխատանքի, այդ թվում՝ ահաբեկչության եւ ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հարցում նրանց աշխատանքի որակի եւ արդյունավետության վերաբերյալ ԵԴԳԽԽ-ի թիվ 11 (2016) կարծիքը:

¹⁹ Երբեմն բնապահպանական հանցագործությունը հիմնված է դրա ներկայացրած ծանրության հայեցակարգի վրա, նույնիսկ եթե վնասներ չեն պատճառվել:

²⁰ Տե՛ս, օրինակ, ՖՂՄՓԱԷԿ, ֆինանսական հետախուզության մարմինների առաջադեմ փորձի եւ առաջատարության Էզմոնտյան

60. Մասնագիտացման սկզբունքն ավելի մեծ նշանակություն ստացավ շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ աճող մտահոգությունների համատեքստում²¹: Հարկ է նշել, որ յուրաքանչյուր օրենսդրություն, անկախ նրանից, թե որքան կատարյալ է այն ձեւակերպված եւ շարադրված, պատշաճ չկիրառվելու դեպքում «սին խոսքեր» դառնալու վտանգ է պարունակում: Շրջակա միջավայրի մասին օրենսդրության կիրարկման համար անհրաժեշտ է բավարար բյուջետային հատկացում, լավ պատրաստված եւ մասնագիտացված անձնակազմ եւ որպես կարեւոր քայլ, մասնագիտացված բազմամասնագիտական ստորաբաժանումների եւ մարմինների ստեղծում:

61. Թեմայի բարդությունը, նրա հատուկ բնույթն ու բազմազանությունը, այլ ոլորտների հետ կապը, հատուկ խորը գիտելիքների պահանջն ու կազմակերպված հանցավոր խմբերի եւ իրավաբանական անձանց հնարավոր ներգրավվածությունը միայն մի քանիսն են այն պատճառներից, որոնք պահանջում են բնապահպանական գործերով զբաղվող դատախազների մասնագիտացումը: Բացի այդ, հաշվի առնելով շրջակա միջավայրի դեմ ուղղված խախտումների զարգացող բնույթը, մասնագիտացումը պետք է ուղեկցվի դատախազներին տրամադրվող շարունակական վերապատրաստմամբ²²: Զննություն իրականացնող մարմինների համատեղ վերապատրաստումն առանցքային այլ դերակատարների հետ նույնպես կարող է դրական ազդեցություն ունենալ, քանի որ այն իշխանություններին կօգնի բարելավելու իրենց հմտություններն ու ավելի լավ ըմբռնելու այն գործոնները, որոնք ազդում են այն հարցի վրա, թե արդյոք խախտումներին պետք է արձագանքել վարչական, քաղաքացիական, քրեական իրավունքի համատեքստում, թե համակցված մոտեցման համատեքստում:

62. Մասնագիտացված դատախազական եւ (կամ) բազմամասնագիտական ստորաբաժանումների ստեղծումը, հատկապես դատախազության համակարգում, մեծապես կախված է ազգային համատեքստից եւ այնպիսի գործոններից, ինչպիսիք են դատախազության չափը, աշխատանքային ծանրաբեռնվածությունը եւ բյուջեն: Ըստ այդմ, մասնագիտացված դատախազական եւ (կամ) շրջակա միջավայրի հարցերով զբաղվող ստորաբաժանումների ստեղծումը չպետք է պարտադիր լինի դատախազական մարմինների համար: Այնուամենայնիվ, այն պետք է դիտարկվի որպես առաջնահերթություն այն պետությունների համար, որտեղ դա հնարավոր է:

63. Ինչ վերաբերում է դատավարության փուլին, ապա ԵՂԳԽԻ-ն ցանկանում է կրկնել, որ դատավորների եւ դատախազների հստակ, բայց փոխյուրացնող դերերի պատշաճ կատարումն անհրաժեշտ երաշխիք է արդարադատության անաչառ, անկողմնակալ եւ արդյունավետ իրականացման համար: Ե՛վ դատավորները, եւ՛ դատախազները պետք է օգտվեն իրենց գործառույթների առնչությամբ անկախությունից, ինչպես նաեւ միմյանցից անկախ լինեն եւ այդպիսին դիտվեն²³: Ուստի նրանք պետք է զերծ մնան ցանկացած գործողությունից եւ վարքագծից, որը կարող է վնասել իրենց անկախության եւ անաչառության նկատմամբ վստահությանը²⁴:

VI. Շրջակա միջավայրի պահպանությունը վարչական եւ քաղաքացիական իրավունքում

64. Շրջակա միջավայրի պահպանության օրենսդրական դաշտի որակը չի կարող գնահատվել բացառապես քրեաիրավական միջոցների առկայության հիման վրա: Ինչպես նաեւ ձեւակերպված եւ պատշաճ կերպով իրականացվող վարչական եւ քաղաքացիական իրավունքը շրջակա միջավայրի պաշտպանության գործում նույնքան կարեւոր է, որքան եւ քրեական իրավունքը:

65. Հաշվի առնելով, որ մի շարք իրավագործություններում դատախազները կատարում են քրեական արդարադատության համակարգից դուրս գործառույթներ, կարծիքի այս մասը վերաբերում է

կենտրոնի [ECOFEL] «Վայրի կենդանիների եւ բույսերի նկատմամբ կատարված հանցագործությունների ֆինանսական հետախուզություն» փաստաթուղթը (2021 թվականի հունվար):

²¹ Ինչպես նշել է Շրջակա միջավայրի գործերով դատախազների եվրոպական ցանցը (ՇՄԳԻԵՑ), բնապահպանական հարցերով մասնագիտացումը պետք է հասանելի լինի բնապահպանական յուրաքանչյուր իրավախախտման եւ բոլոր իրավախախտումների համար (դատական համակարգում տարբերություն չկա «պակաս ծանր» եւ «ավելի ծանր» հանցագործությունների միջեւ, որտեղ միայն վերջիններս կարող են օգուտ ստանալ մասնագետ դատախազներից եւ դատավորներից), տե՛ս Բնապահպանական հանցագործությունների նկատմամբ պատժամիջոցների կիրառումը (ԱԽ4): Եզրափակիչ զեկույց. ՇՄԳԻԵՑ-ի 2016-2020 թվականների հիմնական դիտարկումներ եւ առաջարկություններ, պարբ. 28:

²² Շրջակա միջավայրի պահպանության գործում քրեական իրավունքի ունեցած ներդրումի մասին Եվրոպայի խորհրդի (77)28 բանաձեւ: Տե՛ս նաեւ Բնապահպանական հանցագործությունների նկատմամբ պատժամիջոցների կիրառումը (ԱԽ4): Եզրափակիչ զեկույց. Շրջակա միջավայրի գործերով դատախազների եվրոպական ցանցի (ՇՄԳԻԵՑ) 2016-2020 թվականների հիմնական դիտարկումներ եւ առաջարկություններ, պարբ. 70, որով սահմանվում է, որ վերապատրաստումը նախեւառաջ պետք է ուղղված լինի բնապահպանական հանցագործությունների եւ դրանց պատճառած կամ հնարավոր պատճառվելիք վնասի մասին գիտելիքների եւ ընկալման ձեւավորմանը: Այդպիսի գիտելիքն ու ընկալումն Եական նշանակություն ունեն բնապահպանական իրավախախտումների քրեական հետապնդման եւ պատժամիջոցների կիրառման համար:

²³ Ժողովրդական հասարակությունում դատավորների եւ դատախազների միջեւ հարաբերությունների վերաբերյալ ԵՂԳԽԻ-ի թիվ 4 (2009) կարծիքը, Բորդոյի հռչակագիր, 3-րդ կետ:

²⁴ Ժողովրդական հասարակությունում դատավորների եւ դատախազների միջեւ հարաբերությունների վերաբերյալ ԵՂԳԽԻ-ի թիվ 4 (2009) կարծիքը, պարբ. 40:

դատախազների՝ վարչական եւ քաղաքացիական իրավունքի միջոցով շրջակա միջավայրը պահպանելու գործում կատարած դերին:

66. Վարչական իրավունքով սահմանվում են լիցենզավորման, հատուկ թույլտվությունների եւ արտոնագրերի տրամադրման, ինչպես նաեւ համապատասխանության ստուգման եւ մշտադիտարկման ստանդարտները: Հաշվի առնելով վարչական իրավունքի շրջանակներում ընդգրկված հարցերի լայն եւ աճող շրջանակը՝ դրա պատշաճ ձեւակերպումն ու իրականացումը կարելի է պոտենցիալ հանցագործներին բնապահպանական հանցագործություններ եւ հարակից խախտումներ կատարելուց զերծ պահելու համար:

67. Թեեւ վարչական պատժամիջոցներով հնարավոր չէ սոցիալական անհամաձայնությունն արտահայտել այնքան, որքան քրեական պատժամիջոցներով, եւ դրանք կիրառվում են այն խախտումների համար, որոնք հանցագործություն չեն համարվում, բայցեայնպես դրանք կարող են օգտակար կերպով լրացնել քրեական պատժամիջոցները՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործելակերպի, եւ դրանք կարող են ապահովել ճկունության որոշակի աստիճան, որը հնարավորություն կտա ցուցաբերելու շրջակա միջավայրի դեմ ուղղված տարբեր խախտումների նկատմամբ անհատական մոտեցում:

68. Շրջակա միջավայրը կարող է եւ պետք է պաշտպանված լինի բոլոր հասանելի միջոցներով, այդ թվում՝ վարչական եւ քաղաքացիական իրավունքի միջոցով²⁵: Փաստորեն, պաշտպանության բոլոր հնարավոր միջոցների համակցությունը կարող է ամենաարդյունավետը լինել, եթե համակարգերը լինեն համատեղելի, համագործակցության համար բաց եւ լրացնեն միմյանց:

69. Այն իրավական համակարգերը, որոնցում քրեական եւ վարչական պատժամիջոցները համակցված են եւ կիրառվում են համարժեքորեն, ապահովում են շրջակա միջավայրի ավելի լավ պահպանություն: Այնուամենայնիվ, ինչպես նշվեց ավելի վաղ, հնարավոր երկիմաստություններն ու իրավական անորոշությունը կանխելու համար իրավունքի երկու ոլորտների միջեւ պետք է հստակ սահմաններ ուրվագծվեն: Եթե ներպետական օրենսդրությամբ դատախազներին տրված է այդպիսի իրավունք, ապա նրանք կարող են երաշխավորել, որ վարչական եւ քրեական իրավունքի միջեւ սահմանը պահպանվի դրանց իրականացման համար պատասխանատու անձանց կողմից:

70. Իրավական անորոշությունը, ներպետական իրավական դաշտի երկիմաստ ձեւակերպումները, տարբեր շահագրգիռ կողմերի լիազորությունների համընկնումը կամ իրավասու մարմինների միջեւ համակարգման բացակայությունը որոշ դեպքերում կարող են հանգեցնել *non-bis in idem* [նույն արարքի համար կրկին չդատվելու] սկզբունքի խախտմանը (որը նաեւ կոչվում է կրկնակի դատապարտման վտանգի սկզբունք): Այսպիսով, վարչական պատժամիջոցների կիրառման համար պատասխանատու մարմինը եւ քրեական պատասխանատվության ենթարկելու համար պատասխանատու մարմինը կարող են հանցագործի նկատմամբ պատժամիջոց կիրառել նույն խախտման համար:

71. Թեեւ քրեական եւ վարչական պատժամիջոցների միաժամանակյա կիրառումը չի կարող բացառվել, սակայն կարելի է ապահովել, որ դրանք լինեն փոխլրացնող եւ չհանգեցնեն նույն հանցագործության համար հանցագործին երկու անգամ պատժելուն: Համապատասխանաբար դատախազները, երբ դա իրենց իրավասությունների շրջանակում է, պետք է ապահովեն, որ վարչական եւ քրեական իրավունքի զուգահեռ կիրառումն իրականացվի գործող իրավական դաշտին եւ ավանդույթներին համապատասխան, եւ որ այդ կիրառմամբ չժխտվեն այդ ամենի ազդեցությունն իրենց վրա կրած անձանց օրինական շահերը՝ անկախ այն հանգամանքից՝ տվյալ անձը ֆիզիկական, թե իրավաբանական անձ է:

VII. Ներքին համագործակցությունը եւ համակարգումը շրջակա միջավայրի պահպանության գործում

72. Շրջակա միջավայրի բարեհաջող պահպանության համար անհրաժեշտ է միջուրտային եւ միջգերատեսչական համագործակցություն: Շրջակա միջավայրը կարող է պահպանվել ավելի համապարփակ ձեւով, երբ ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածները ներկայացնող բոլոր շահագրգիռ դերակատարները ներգրավված են դրա պահպանության գործում, եւ նրանց միջեւ պատշաճ կերպով ապահովվում է համագործակցության եւ համակարգման համապատասխան մակարդակ:

73. Շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ օրենսդրության կիրառման պարտավորությունը ստանձնած մարմինների միջեւ համագործակցության եւ համակարգման բացակայությունը կարող է բացասաբար ազդել պահպանության ողջ մեխանիզմի վրա եւ կարող է

²⁵ Շրջակա միջավայրի պահպանության գործում քրեական իրավունքի ունեցած ներդրումի մասին Եվրոպայի խորհրդի (77)28 բանաձեւին համապատասխան:

Նույնիսկ խախտել շահագրգիռ անձանց իրավունքները:

74. Անդամ պետություններում կան դատախազական ծառայություններ, որտեղ քաղաքացիական, վարչական եւ քրեական գործառնությունները ներառված են իրենց գործունեության մեջ, մինչդեռ մյուս անդամ պետություններում դատախազական ծառայություններն այդպիսի ծավալուն պարտականություններ չունեն. նրանք միայն զբաղվում են քրեական իրավունքի ոլորտում առկա եւ դրա միջոցով կարգավորվող բնապահականական գործերով: Վերջին տարբերակում, այնուամենայնիվ, պետք է լինեն հատուկ մարմիններ, որոնց վերապահված են քաղաքացիական եւ վարչական հարցերով այդպիսի խնդիրներ եւ պարտականություններ:

75. Այն համակարգերում, որտեղ դատախազության մեջ ներառված են քաղաքացիական, վարչական եւ քրեական գործառնություններ, կարելի է, որ այս տարբեր ոլորտների գործերով զբաղվող դատախազների միջեւ ապահովվի սերտ համագործակցություն: Այդպիսի ներքին համագործակցությունը պետք է ինստիտուցիոնալացվի կանոնակարգերով, ներքին կանոններով եւ ուղեցույցներով՝ այդպիսով այդ համալիր մոտեցումը դարձնելով արդյունավետ եւ ներգործուն, այդ թվում՝ տեղեկությունների կանոնավոր փոխանակման միջոցով:

76. Այն համակարգերում, որտեղ քաղաքացիական եւ վարչական պարտականությունները չեն մտնում դատախազական ծառայության լիազորությունների մեջ, վերջինս պետք է համագործակցի համապատասխան մարմինների հետ: Համագործակցությունը պետք է երաշխավորվի օրենքներով եւ կանոնակարգերով, որոնք պետք է հստակորեն սահմանեն այս համագործակցության իրավական հիմքը, այդ թվում՝ տեղեկությունների փոխանակումը եւ անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան շահագրգիռ կողմերի միջեւ հետախուզական տվյալների փոխանակումը:

77. Կարելի է առանձնացնել այս ոլորտում լավ գործելակերպերի հետեւյալ օրինակները.

- միջհամակարգող խմբերի, ազգային բնապահականական փորձագիտական խմբերի կամ տարածաշրջանային խմբերի ձեւավորում՝ դատախազների մասնակցությամբ.

- դատախազներին տրամադրելու համար լավ հագեցած տեխնիկական ստորաբաժանումների ստեղծում.

- բնապահականական հանցագործությունների եւ դրա հետ կապված խախտումների իրավիճակային դիտարկման անցկացում, բնապահականական հանցագործությունների հարցում հաջողություններ գրանցելու հնարավորությունների վերաբերյալ տարեկան հաշվետվությունների տրամադրում.

- իրավապահ մարմինների միջեւ համագործակցության մեխանիզմների հաստատում՝ հավանականորեն բնապահականական հարցերով մասնագիտացված ոստիկանության եւ շրջակա միջավայրի մշտադիտարկման համար պատասխանատու հասարակական հաստատությունների ներգրավմամբ.

- դատախազների երկարաժամկետ համագործակցություն մասնագիտացված այլ մարմինների հետ²⁶ եւ նրանց ու ոստիկանության հետ համագործակցությամբ քննությունների անցկացում.

- բնապահականական հանցագործությունների կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի համար մշակված ցանկացած ռազմավարական փաստաթղթի կամ գործողությունների ծրագրի վերաբերյալ կարծիքների, առաջարկությունների կամ դիտողությունների/առարկությունների տրամադրում եւ շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող օրենսդրության ձեւավորման ակտիվ խթանում՝ ապահովելու համար, որ դրանում հաշվի առնվեն դատախազների տեսակետներն ու փորձը:

78. Հասարակական եւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները որպես շահագրգիռ կողմեր նույնպես շատ կարելի էր են խաղում բնապահականական իրավունքի իրականացման եւ կիրարկման գործում²⁷: Նրանք կարող են նպաստել ներպետական օրենսդրության կիրարկմանը՝ մշտադիտարկելով, օրինակ, բնապահականական կանոնակարգերի համապատասխանությունը եւ հայտնաբերելով խախտումները, այդ թվում՝ կատարված հանցագործությունները: Եթե ազգային իրավական դաշտը հնարավորություն ընձեռի, ապա նրանք կարող են նաեւ գործողություններ ձեռնարկել ի շահ հասարակության կամ շրջակա միջավայրի պահպանության գործում ներգրավված որոշակի խմբերի (օրինակ՝ դատարանի անկախ փորձագետ [*amicus curiae*], հանրային հայց [*actio popularis*]) եւ բարձրացնել բնապահականական խնդիրների

²⁶ Ինչպիսիք են բնապահականական հարցերով զբաղվող տեսչությունները, մաքսային, վարչական մարմինները, ֆինանսական հետախուզության ստորաբաժանումները:

²⁷ Ինչպիսիք են բնապահականական հարցերով զբաղվող տեսչությունները, մաքսային, վարչական մարմինները, ֆինանսական հետախուզության ստորաբաժանումները:

վերաբերյալ իրազեկությունը:

79. Համագործակցությամբ ապահովվում է, որ բնապահպանական հարցերով գործը քննվի տարբեր տեսանկյուններից, եւ դա մեծացնում է արդյունավետությունը: Անկախ դատախազական ծառայության մոդելից՝ ԵՂԳԽՍ-ի թիվ 14 (2019) կարծիքի եզրակացություններն ու առաջարկությունները, *mutatis mutandis*, կիրառվում են նաեւ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում դատախազական գործունեության նկատմամբ²⁸:

80. ԵՂԳԽՍ-ն նաեւ ցանկանում է ընդգծել շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ տարեկան կամ կիսամյակային քննչական տվյալների հավաքագրման եւ վերլուծության կարելիությունը՝ միտումների, ձեռքբերումների եւ հետագայում ձեռնարկվելիք գործողությունների մասին հստակ պատկերացում կազմելու համար: Համապատասխան գործընթացը պետք է ներառի հայտնաբերված իրավախախտումների քանակի, հարուցված գործերի, կարճված գործերի, դեպի դատարաններ ուղղորդումների, վերջնական դատավճիռների կամ արդարացման դեպքերի, հանցագործների նկատմամբ կիրառվող պատժամիջոցների տեսակների եւ այլնի վերաբերյալ տվյալների հավաքագրումը: Տվյալները պետք է լինեն հնարավորինս մանրամասն, եւ ցանկայի է, որ հավաքված լինեն կենտրոնացված մակարդակով:

81. Կախված ազգային համատեքստից՝ համապատասխան տվյալների հավաքագրումն ու մշակումը կարող է վստահվել դատախազություններին: Սակայն, երբ այդ գործը նրանց չի վստահվում, նրանք պետք է ներգրավվեն գործընթացում: Տվյալների հավաքագրման եւ մշակման արդյունքները պետք է պարբերաբար հրապարակվեն եւ պետք է նպաստեն հետագա այնպիսի գործողություններին, ինչպես օրինակ՝ ազգային ռազմավարությունների մշակումը, ինչպես նաեւ անհրաժեշտության դեպքում պետք է հանգեցնեն օրենսդրական դաշտի վերանայմանը: Այս տվյալները պետք է օգտագործվեն նաեւ իրազեկության բարձրացման համար, որպեսզի ոչ միայն դատախազները, այլեւ լայն հասարակությունը հասկանա բնապահպանական հանցավորության մասշտաբներն ու շրջակա միջավայրի պահպանության գործում դատախազության դերը:

VIII. Միջազգային համագործակցությունը շրջակա միջավայրի պահպանության գործում

82. Բնապահպանական հանցագործություններն իրենց բնույթով հաճախ միջազգային են, ինչը նշանակում է, որ անհրաժեշտ են կոլեկտիվ գործողություններ: Բնապահպանական հանցագործություններին հանցավոր խմբերի եւ ցանցերի ներգրավվածության ավելացումը, ինչպես նաեւ ահաբեկչության եւ կազմակերպված ու այլ ծանր հանցագործությունների հետ նրանց հավանական կապը նույնպես եղել են 2022 թվականին Եվրոպայի դատախազների համաժողովի ընթացքում արտահայտված մտահոգությունների շարքում²⁹. համաժողովի ժամանակ կոչ էր արվում ընդլայնելու այս առնչությամբ դատախազների միջեւ միջազգային համագործակցությունը:

83. Նույնիսկ եթե բնապահպանական հանցագործությունը կատարվում է մեկ անդամ պետության տարածքում, ապա դրա հետեւեւնները կարող են ազդել նաեւ մյուս անդամ պետությունների վրա՝ հաստատելով «աղտոտումը սահմաններ չի ճանաչում» կանոնը: Դրա համար անհրաժեշտ են սերտ երկկողմ եւ բազմակողմ համագործակցություն անդամ պետությունների միջեւ եւ միջոցներ՝ ապահովելու, որ բնապահպանական հանցագործությունների իրավական շրջանակների բացերը չխանգարեն այդպիսի համագործակցությանը:

84. Դատախազները միշտ պետք է համագործակցելու պատրաստակամություն ցուցաբերեն եւ պետք է իրենց իրավասության շրջանակում բնապահպանական հարցերի շուրջ միջազգային համագործակցության վերաբերյալ հարցումներին վերաբերվեն նույն ջանասիրությամբ եւ առաջնահերթությամբ, ինչպես մյուս քրեական գործերին՝ եւ՛ ազգային, եւ՛ միջազգային մակարդակում³⁰: Առավելությունն այն է, որ շրջակա միջավայրի պահպանության գործերի շրջանակներում համագործակցության գործիքները նույնն են, ինչ բոլոր տեսակի անդրսահմանային

²⁸ Չհակասելով դատախազական ծառայությունների անկախությանն ու ինքնավարությանը:

²⁹ Կոռուպցիայի եւ հարակից տնտեսական ու ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարում դատախազների դերի վերաբերյալ ԵՂԳԽՍ-ի թիվ 14 (2019) կարծիք, Գլուխ I, պարբ. 4:

²⁹ Եվրոպայի դատախազների համաժողովը 2022 թվականի մայիսի 5-6-ը համատեղ ուժերով կազմակերպել էր ԵՂԳԽՍ-ի կողմից Պալերմոյում՝ Իտալիայի իշխանությունների հետ սերտ համագործակցությամբ՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Իտալիայի նախագահության շրջանակներում: Համաժողովը համախմբել էր Եվրոպայի խորհրդի անդամ 46 պետություններից, ինչպես նաեւ ոչ անդամ 8 պետություններից գլխավոր դատախազների եւ այլ իրավաբանների եւ շեշտը դնում էր դատախազական անկախության, ինքնավարության եւ հաշվետվողականության, վիրտուալ միջավայրում կատարվող բնապահպանական հանցագործությունների եւ ֆինանսական հանցագործությունների քննության եւ քրեական հետապնդման վրա:

³⁰ Դատախազներին առնչվող եվրոպական նորմերի ու սկզբունքների վերաբերյալ ԵՂԳԽՍ-ի թիվ 9 (2014) կարծիք, Հոմով կանոնադրություն, XX հոդված:

հանցագործությունների շրջանակներում համագործակցության գործիքները³¹:

85. Որպեսզի միջազգային համագործակցությունը լինի արդյունավետ, պետք է լինի բնապահպանական հանցագործությունների եւ դրանց հետ կապված խախտումների ու դրանց ազդեցության մասին ընդհանուր պատկերացում: Այն դեպքերում, երբ անհրաժեշտ են համակարգված գործողություններ, հատկապես օգտակար են համատեղ եւ անդրսահմանային քննչական խմբերն ու մեթոդները: Դրանց օգտագործումը նաեւ շահավետ է, քանի որ դրանով ոչ միայն սահմանափակվում է դատախազների կրկնակի աշխատանքի ռիսկերը, այլեւ հեշտանում է անհրաժեշտ ապացույցների ապահովումը, տեղեկությունների փոխանակումը եւ այլ լայնածավալ միջոցների ձեռնարկումը համապատասխան պետություններում³²: Այդպիսի գործողություններ իրականացնելու համար դատախազական ծառայություններն իրենց տրամադրության տակ պետք է համապատասխան ռեսուրսներ ունենան:

86. Ինչ վերաբերում է բնապահպանական հանցագործություններից նախկինում նշված շահույթներին եւ «հանցագործությանն արդարացում չկա» սկզբունքի պահպանմանը, միջազգային համագործակցությունը պետք է ընդգրկի նաեւ բնապահպանական հանցագործությունից ստացված եկամուտները հայտնաբերելու, սառեցնելու եւ բռնագրավելու հարցում աջակցությունը, այդ թվում՝ հնարավորության դեպքում՝ ակտիվների վերադարձը կամ դրանց բաշխումը: Հնարավորության դեպքում այն պետք է ներառի նաեւ առանց դատապարտման իրականացվող բռնագանձման (ԱԴԲ) հարցերով վարույթների ժամանակ աջակցության տրամադրումը, ինչպես նաեւ օտարերկրյա բռնագանձումների վերաբերյալ որոշումների կատարումը՝ անկախ նրանից, թե դրանք տրվել են ֆիզիկական կամ իրավաբանական անձի դատապարտման հետ կապված, թե ԱԴԲ միջոցով հարկադրաբար վերցման հետ կապված:

87. Այն համակարգերում, որտեղ իրավական փոխօգնության (ԻՓՕ) վարույթում հարկադրաբար վերցված ակտիվները գտնվում են հարցում ստացող պետությունում, օրենսդրությամբ պետք է նախատեսվի ակտիվների բաշխումը կամ ակտիվների վերադարձը այն իրավագործությանը, որտեղ կատարվել է բնապահպանական հանցագործությունը, կամ որտեղ զգացվել է այդ հանցագործության հետեւանքով առաջացած վնասը:

88. ԵՂԿԻՄ-ն ցանկանում է նաեւ ընդգծել Եվրոպական մակարդակով Եվրայոյի եւ Եվրաջասթի դերը քրեական կամ վարչական գործերով անդրսահմանային համագործակցությունը հեշտացնելու հարցում, ինչպես նաեւ այնպիսի մասնագիտական ցանցերի դերը, ինչպիսիք են Շրջակա միջավայրի գործերով դատախազների եվրոպական ցանցը (ՇՄԳԴԵՑ), Եվրոպական դատական ցանցը (ԵԴՑ) եւ «EnviCrimeNet»-ը: Անդամ պետությունների դատախազներին պետք է խրախուսել հնարավորության դեպքում մասնակցելու այդ մարմինների գործունեությանը:

89. Բացի գոյություն ունեցող ցանցերից եւ հաշվի առնելով միջազգային համագործակցության համար նշանակված կոնտակտային անձանց դերը՝ արագ եւ արդյունավետ միջսահմանային համագործակցության համար դեռեւս անհրաժեշտ են այլ պաշտոնական մեխանիզմներ եւ ընթացակարգեր, քանի որ շատ հաճախ պաշտոնական փաստաթղթերը, ապացույցները եւ այլ նյութեր պետք է փոխանցվեն տարբեր պետությունների՝ համապատասխան քրեական գործերում ներգրավված դատախազներին:

90. Շրջակա միջավայրի պահպանության համար համագործակցությունն ու համագործակցությունն իր բոլոր ուղղություններով եւ մասնավորապես՝ սահմաններից դուրս, կարելու է նաեւ հաշվի առնելով բնապահպանական հանցագործների եւ նրանց պաշտպանության ռազմավարությունների աճող բարդությունը: Քննչական եւ դատախազական մարմինների ջանքերի խոչընդոտումը կամ խաթարումը կանխելու համար չափազանց կարեւոր է, որ անդամ պետություններում ներպետական իրավական դաշտը շրջակա միջավայրի պաշտպանության միջազգային չափանիշներն իրականացնի համարժեքորեն: Նույնքան անհրաժեշտ է դեպի ներդաշնակեցված օրենսդրական դաշտ շարժվելը՝ հատկապես հանցագործությունների, պատժամիջոցների եւ քննության գործիքների սահմանման առումով:

IX. Առաջարկություններ

Քանի որ՝

- հրատապ անհրաժեշտություն կա ուժեղացնելու բնապահպանական հանցագործություններին եւ հարակից խախտումներին տրվող արձագանքը, որոնք համաշխարհային

³¹ Բնապահպանական հանցագործությունների նկատմամբ պատժամիջոցների կիրառում (ԱԽ4): Եզրափակիչ զեկույց. Շրջակա միջավայրի գործերով դատախազների եվրոպական ցանցի (ՇՄԳԴԵՑ) 2016-2020 թվականների հիմնական դիտարկումներ եւ առաջարկություններ, պարբ. 25:

³² Տե՛ս նաեւ 2021 թվականի հունվարի 29-ին հրապարակված՝ Բնապահպանական հանցագործությունների քննության վերաբերյալ Եվրաջասթի զեկույցը:

անհանգստության աճող աղբյուր են.

- բնապահպանական հանցագործությունները հաճախ կապ ունեն այլ այնպիսի ծանր հանցագործությունների հետ, ինչպիսիք են մարդկանց թրաֆիքինգը եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, կեղծարարությունը, կիրեռհանցագործությունը, կոռուպցիան եւ ահաբեկչության ֆինանսավորումը.

- հետեւաբար բնապահպանական հանցագործությունների հետ կապված վարույթների բարդությունը պահանջում է ամբողջական մոտեցում եւ տարբեր շահագրգիռ կողմերի համագործակցություն.

- այդպիսի ամբողջական մոտեցումը պահանջում է համապատասխան գործիքների եւ ուղիների առկայություն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում արդյունավետ համագործակցության համար.

- շրջակա միջավայրի պահպանության հարցում դատախազության ներգրավվածությունը շարունակում է մնալ կենսական՝ օրենքի կիրառման որակը բարձրացնելու եւ հանցագործներին պատասխանատվության ենթարկելու համար.

ԵՂՁԻՍ-ն համաձայնեց հետեւյալ առաջարկությունների վերաբերյալ.

1. «Շրջակա միջավայր» եզրույթը սահմանելիս պետք է նախապատվությունը տալ լայն եւ համապարփակ մոտեցմանը՝ տվյալ թեմայի վերաբերյալ ներկայիս ազգային եւ միջազգային իրավական շրջանակներին համապատասխան:

2. Պետք է հիշել, որ շրջակա միջավայրին հասցված վնասը կարող է խաթարել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորված որոշ իրավունքների իրացումը:

3. Պետք է խորհրդակցել դատախազական ծառայությունների հետ, կամ նրանք պետք է ուղղակիորեն ներգրավվեն շրջակա միջավայրի պահպանության հարցերով նոր օրենսդրության մշակման կամ իրավական բարեփոխումների ձեռնարկման գործընթացներին:

4. Թեեւ չկա բնապահպանական հանցագործությունների համընդհանուր համաձայնեցված սահմանում, եւ անդամ պետություններում այս եզրույթը տարբեր կերպ է մեկնաբանվում, այդ հանցագործությունների ընդհանուր տարրերը, ինչպիսիք են «ծանրության աստիճան» եւ «վնաս» հասկացությունները եւ այլ համապատասխան տարրեր, պետք է ճշգրիտ եւ հստակ կերպով սահմանվեն ազգային մակարդակում:

5. Բնապահպանական համատեքստում ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց նկատմամբ բնապահպանական հանցագործությունների համար կիրառվող պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ, այդ թվում՝ դրամական եւ ոչ դրամական բնույթի պատժամիջոցները, ինչպես նաեւ շրջակա միջավայրի վերականգնման հրահանգ տալու հնարավորությունը:

6. Դատախազները պետք է ապահովեն, որ բնապահպանական հանցագործությունների քննությունն իրականացվի մանրակրկտորեն, որ հանցագործները, համակատարողներն ու հանցակիցները բացահայտվեն, եւ որ այլ տեսակի հանցագործությունների հետ հնարավոր բոլոր կապերը բացահայտվեն:

7. Դատախազները պետք է նաեւ ձգտեն ապահովել, որ պատասխանատվության ենթարկվեն ոչ միայն բնապահպանական հանցագործությունների անմիջական կատարողները, այլ նաեւ մյուս դերում հանդես եկած իրավախախտները, ինչպիսիք են կազմակերպիչները, դրողները, միջնորդները եւ նրանք, ովքեր շահում են այդ հանցագործություններից:

8. Բնապահպանական հանցագործության դեմ պայքարելու համար դատախազներն իրենց տրամադրության տակ պետք է ունենան անհրաժեշտ իրավական գործիքներ ու քննչական մեթոդներ: Ինչպես բնապահպանական հանցագործությունների, այնպես էլ փողերի լվացման հետ կապված իրավախախտումների վրա կենտրոնացած ֆինանսական հարցերով զուգահեռ քննություններն ավելի մեծ հանցավոր ցանցերը բացահայտելու եւ ֆինանսական հոսքերն ընդհատելու արդյունավետ գործիքներից մեկն են:

9. Բնապահպանական հանցագործություններով զբաղվող դատախազները պետք է համապատասխան վերապատրաստում անցնեն: Բացի այդ, շրջակա միջավայրի մասին օրենսդրության կիրարկման համար անհրաժեշտ է բավարար բյուջետային հատկացում, լավ պատրաստված եւ մասնագիտացված անձնակազմ, ինչպես նաեւ մասնագիտացված բազմամասնագիտական ստորաբաժանումների եւ մարմինների ստեղծում:

10. Շրջակա միջավայրը պետք է պահպանվի բոլոր հասանելի միջոցներով, այդ թվում՝ վարչական եւ քաղաքացիական իրավունքի միջոցով, իսկ դատախազները նույնպես կարող են դերակատարություն ունենալ այդ գործընթացում:

11. Թեեւ վարչական պատժամիջոցներով հնարավոր չէ սոցիալական անհամաձայնությունն արտահայտել այնպես, ինչպես քրեական պատժամիջոցներով, այդուհանդերձ դրանք օգտակար կերպով լրացնում են քրեական պատժամիջոցները:

12. Շրջակա միջավայրի բարեհաջող պահպանության համար անհրաժեշտ է միջուրտային եւ միջգերատեսչական համագործակցություն հենց դատախազների, ինչպես նաեւ դատախազների եւ այլ համապատասխան դերակատարների միջեւ, ներառյալ ինչպես պետական կառույցները, այնպես էլ հասարակական եւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները:

13. Դատախազները կարող են դեր խաղալ բնապահպանական հանցագործությունների եւ դրանց հետ կապված խախտումների կանխարգելման գործում, քանի որ դա թույլ է տալիս խուսափել դրանց երկարատեւ, ծախսատար եւ հաճախ անդառնալի հետեւանքներից, ինչպես նաեւ նվազեցնում է քրեական արդարադատության համակարգի, այդ թվում՝ դատախազական ծառայությունների հետ կապված երկարաժամկետ ծախսերը:

14. Զանի որ բնապահպանական հանցագործություններն իրենց բնույթով հաճախ միջազգային են, ապա դատախազները միշտ պետք է բնապահպանական հարցերի շուրջ միջազգային համագործակցության վերաբերյալ հարցումներին վերաբերվեն նույն ջանասիրությամբ եւ առաջնահերթությամբ, ինչ մյուս քրեական գործերին:

15. Պետք է ընդգծել Եվրոպական մակարդակով Եվրապոլի եւ Եվրաջաթի դերը քրեական կամ վարչական գործերով անդրսահմանային համագործակցությունը հեշտացնելու հարցում, ինչպես նաեւ այնպիսի մասնագիտական ցանցերի դերը, ինչպիսիք են Շրջակա միջավայրի գործերով դատախազների եվրոպական ցանցը (ՇՄԳԴԵՑ), Եվրոպական դատական ցանցը (ԵԴՑ) եւ այլք:

16. Բացի գոյություն ունեցող ցանցերից եւ հաշվի առնելով միջազգային համագործակցության համար նշանակված կոնտակտային անձանց դերը՝ արագ եւ արդյունավետ միջսահմանային համագործակցության համար դեռեւս անհրաժեշտ են այլ պաշտոնական մեխանիզմներ եւ ընթացակարգեր, քանի որ շատ հաճախ պաշտոնական փաստաթղթերը, ապացույցները եւ այլ նյութեր պետք է փոխանցվեն տարբեր պետությունների՝ համապատասխան քրեական գործերում ներգրավված դատախազներին:

Կարծիք թիվ 18 (2023)

Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի՝
նուղված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին

Դատախազների խորհուրդները՝ որպես դատախազական ինքնակառավարման առանցքային մարմիններ

I. Ներածություն

1. Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԳԽՍ), Նախարարների կոմիտեի կողմից իրեն տրված մանդատի համաձայն, պատրաստել է սույն կարծիքը Դատախազների խորհուրդների՝ որպես դատախազական ինքնակառավարման առանցքային մարմինների վերաբերյալ:

2. Կարծիքի թեման ԵԴԳԽՍ-ի կողմից ընտրվել է դատախազների անկախության եւ անաչառության ԵԴԳԽՍ-ի չափանիշների մշակումից եւ այդ հիմնարար սկզբունքներին աջակցելու համար պահանջվող ինստիտուցիոնալ շրջանակը հասկանալու անհրաժեշտություն առաջանալուց հետո: ԵԴԳԽՍ-ն անհրաժեշտ է համարել ուսումնասիրել սույն իրավիճակն անդամ պետություններում կապված դատախազական ինքնակառավարման հետ, եւ կազմել ճանապարհային քարտեզ՝ լավագույն եվրոպական գործելակերպերի վրա հիմնված ապագայի համար:

3. Կարծիքով պատշաճ կերպով հաշվի են առնվում «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Rec(2000)19 առաջարկությունը եւ ԵԴԳԽՍ-ի Նախորդ կարծիքները, մասնավորապես՝ թիվ 9(2014) կարծիքը՝ դատախազներին վերաբերող եվրոպական Նորմերի եւ սկզբունքների վերաբերյալ, այդ թվում՝ Հռոմի կանոնադրությունը, թիվ 13(2018) կարծիքը՝ դատախազների անկախության, հաշվետվողականության եւ էթիկայի վերաբերյալ, թիվ 16 (2021) կարծիքը՝ դատախազների գործնական անկախության եւ փաստացի ինքնավարության ու հարակից հայեցակետերի վերաբերյալ միջազգային դատարանների եւ պայմանագրային մարմինների որոշումների հետեւանքների վերաբերյալ: Ավելին, կարծիքով ի թիվս այլի նկատի են առնվում ԵԴԳԽՍ-ի անդամների պատասխանները Դատախազների խորհուրդների՝ որպես դատախազական ինքնակառավարման առանցքային մարմինների վերաբերյալ հարցաշարին տված պատասխանները:

4. Կարծիքում հաշվի են առնվում նաեւ Եվրոպայի դատավորների խորհրդակցական խորհրդի (ԵԴԽՍ) թիվ 10 կարծիքը (2007)՝ հասարակությանը ծառայելու գործում Դատական խորհրդի դերի վերաբերյալ, եւ թիվ 24 (2021) կարծիքը՝ դատական խորհուրդների Էվոյուցիայի եւ անկախ եւ անաչառ դատական համակարգերում նրանց դերի վերաբերյալ, ինչպես նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) եւ Եվրոպական միության արդարադատության դատարանի (ԵՄԱԴ) վերաբերելի Նախադեպային իրավունքը, «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով), Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) եւ Եվրոպայի խորհրդի այլ հաստատությունների վերաբերելի փաստաթղթերը:

5. Կարծիքում օգտագործվում են Եվրոպայի խորհրդից դուրս հաստատությունների վերաբերելի փաստաթղթերը, մասնավորապես՝ Դատական խորհուրդների եվրոպական ցանցի (ԴԽԵՑ) «Դատական խորհուրդների վերաբերյալ ամփոփագիրը» (2021թ.), Դատախազների միջազգային ասոցիացիայի (ԴՄԱ) «Դատախազների մասնագիտական պատասխանատվության չափանիշները եւ կարելուր պարտականությունների եւ իրավունքների վերաբերյալ հայտարարությունը», Միավորված ազգերի կազմակերպության դատավորների եւ փաստաբանների անկախության հարցերով հատուկ զեկուցողի զեկույցը, Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) ուսումնասիրությունը «Արեւելյան Եվրոպայում, Կենտրոնական Ասիայում եւ Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում դատախազների անկախության վերաբերյալ» (2020թ.) եւ ԵԱԶԿ ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի (ԺՅՄԻԳ) «Արեւելաեվրոպական մասնակից պետություններում դատախազների գործառնության անկախության ամրապնդման վերաբերյալ զեկույցը» (2020թ.):

6. ԵԴԳԽՍ-ն ցանկանում է շնորհակալություն հայտնել Եվրոպայի խորհրդի կողմից նշանակված փորձագետներին՝ պրոֆ. Ժոան Դա Սիլվա Միգելին (Պորտուգալիա) եւ տկն Անկա ժուրմային (Ռումինիա) կարծիքի տեքստը կազմելու գործընթացում նրանց ունեցած էական օժանդակությունների համար:

II. Կարծիքի շրջանակը եւ նպատակը

7. Դատախազների խորհուրդներն ավելի ու ավելի լայնատարած են դառնում առանձին պետությունների իրավական համակարգերում¹: Այնուամենայնիվ, արդարադատության համակարգն

¹ Վենետիկի հանձնաժողովի զեկույցը դատական համակարգի անկախության եվրոպական չափանիշների վերաբերյալ Մաս II. Դատախազական ծառայությունը, 17-18.12.2010, CDL-AD(2010)040 §§ 64-68, տե՛ս նաեւ «Դատարանների եւ դատավորների մասին

ամբողջ Եվրոպայում տարբերվում է: Տարբեր համակարգեր հիմնված են տարբեր իրավական մշակույթների վրա եւ առկա չէ միասնական մոդել բոլոր անդամ պետությունների համար: Այդ բազմազանությունը նաեւ ազդեցություն ունի դատախազների ինքնակառավարման մոդելների վրա, որտեղ այդ ինքնակառավարումը կարգավորվում կամ չի կարգավորվում Դատախազների խորհուրդների կամ այլ մարմինների կողմից:

8. Դատախազների խորհուրդների՝ որպես դատախազական ինքնակառավարման առանցքային մարմինների վերաբերյալ հարցաշարին տված պատասխանները² ցույց են տալիս, որ անդամ պետությունների մեծամասնությունում դատախազության համակարգում առկա է հավաքական մարմին՝ անկախ դրա պաշտոնական անվանումից, որը պետք է կարգավորի դատախազների մասնագիտական ուղին, այդ թվում՝ պաշտոնի նշանակումը/ընտրությունը, գնահատումը, առաջխաղացումը, տեղափոխությունը, կարգապահությունը եւ այլ հարցեր: Այդ մարմինների մոտավորապես կեսը կարգավորում են ինչպես դատավորներին, այնպես էլ դատախազներին առնչվող հարցեր, իսկ մյուս կեսը կարգավորում է միայն դատախազներին առնչվող հարցեր: Որոշ անդամ պետություններում առկա չէ Դատախազների խորհուրդ կամ դատախազական ինքնակառավարումը կարգավորող այլ մարմին:

9. Պատասխանները նաեւ ցույց են տալիս, որ անդամ պետություններում առկա է մեծ բազմազանություն՝ կապված Դատախազների խորհրդի կամ այլ մարմինների կառուցվածքի, կազմակերպման, կազմի, իրավասության, գործառույթների եւ այլ հայեցակետերի հետ:

10. Ավելին, դատախազական ծառայությունների կառուցվածքը եւ կազմակերպումն ունեն մի շարք բազմազան եղանակներ, որոնցում որոշակի չափով ներգրավված են Դատախազների խորհուրդները կամ այլ մարմիններ³:

11. Որոշ մոդելներում դատախազական ծառայությունը լիովին անկախ է ինչպես գործադիր, այնպես էլ դատական իշխանություններից:

12. Այլ դեպքերում դատախազական ծառայությունը դատական իշխանության մասն է: Այդպիսի կառուցվածքներում հաճախ առկա է բարձրագույն դատական խորհուրդ կամ համանման անկախ վերադաս մարմին, որը կարգավորում է ինչպես դատավորների, այնպես էլ դատախազների մասնագիտական ուղին⁴: Կարող է առկա լինել նաեւ դատավորի եւ դատախազի համապատասխան մասնագիտական ուղիների փոխարինման հնարավորություն, որը որոշ դեպքերում օրենքով սահմանափակվում է:

13. Մեկ այլ մոդելում դատախազական ծառայությունն ունի ինքնավար մարմնի կազմակերպում, սակայն քիչ թե շատ կապված է գործադիր իշխանության հետ: Որոշ դեպքերում դատախազների մասնագիտական ուղին կարող է կարգավորվել Դատախազների խորհրդի կամ համանման անկախ մարմնի կողմից:

Երբեմն արդարադատության նախարարը կամ գործադիր իշխանության մեկ այլ մարմին պահպանում է որոշակի աստիճանի վերահսկողություն դատախազների աշխատանքի ընդունման նկատմամբ եւ կարող է պաշտոնի նշանակումների վերաբերյալ որոշում կայացնել ինքնուրույն կամ Դատախազների խորհրդի խորհրդով: Արդարադատության նախարարը կարող է նաեւ շարունակել պատասխանատու լինել դատախազական համակարգի կազմակերպական հարցերի եւ բյուջեի կառավարման համար:

14. Այլ պետություններում օգտագործվող նույն մոդելի տարբերակ է այն, որ քաղաքականության, գործառական եւ վարչական հարցերը վերապահված են դատախազական ծառայության գործառական ղեկավարին: Այնուամենայնիվ, պատասխանատու նախարարը կարող է շարունակել ունենալ որոշակի բյուջետային վերահսկողություն, ինչը կարող է ազդեցություն գործել ծառայության անկախության վրա:

15. Որոշ դեպքերում դատախազական ծառայությունը գործադիր իշխանության մասն է, որտեղ պաշտոնի նշանակումները, մասնագիտական ուղին եւ կարգապահական վարույթները կարող են կարգավորվել արդարադատության նախարարի կողմից, իսկ դատախազական խորհուրդը կամ համանման մարմինը կարող են հաստատել այդ հարցերը կամ դրանց վերաբերյալ խորհրդատվություն տրամադրել:

Վենետիկի հանձնաժողովի կարծիքների եւ զեկույցների ժողովածուն» (CDL-PI(2022)023), 2022 թվականի ապրիլի 26: Տե՛ս նաեւ ՄԱԿ-ի դատավորների եւ փաստաբանների անկախության հարցերով հատուկ զեկուցողի զեկույցը (A/HRC/38/38 փաստաթուղթ, 2018 թվականի մայիսի 2), որում մատնանշվում է, որ դատավորների կամ դատախազների եւ դատախազների համար պատասխանատու դատական խորհուրդների թիվը վերջին տասնամյակներում զգալիորեն աճել է, եւ կանխատեսվում է, որ մինչ օրս աշխարհի երկրների 70 տոկոսը որոշակի տեսակի դատական խորհուրդ ունի:

² Նշված է սույն կարծիքի 3-րդ պարբերությունում:

³ Դատավորների եւ փաստաբանների անկախության հարցերով հատուկ զեկուցող Գաբրիելա Կնաուլի զեկույցը (A/HRC/20/19), 07.06.2012թ., §29:

⁴ Հայտնի է նաեւ որպես կամրջային համակարգ:

16. Ընդունելով անդամ պետություններում առկա այդ տարբերությունները՝ ԵԴԳԽԽ-ն այն կարծիքին է, որ դրանց միավորում է դատախազական ծառայությունների անկախությունն եւ ինքնավարությունն նախատեսելու անհրաժեշտությունը՝ դրանց անաչառ եւ արդյունավետ գործունեությունը եւ որոշումների կայացումն ապահովելու համար:

17. Հետեւաբար սույն կարծիքի նպատակն է ուսումնասիրել եւ ընդգծել Դատախազների խորհուրդների եւ դատախազների ինքնակառավարումը կարգավորող այլ մարմինների առանցքային դերը դատախազական ծառայությունների ինստիտուցիոնալ անկախությունը եւ անաչառությունը եւ առանձին դատախազների գործառույթային անկախությունը պաշտպանելու համար:

18. Այնուամենայնիվ, ինչպես նշվել է նաեւ Վենետիկի հանձնաժողովի կողմից, դժվար կլինի Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետություններում դատախազական այդ խորհուրդների մեկ միասնական մոդել սահմանել, եւ դրա առկայությունը չի կարող համարվել Եվրոպական բոլոր պետությունների համար պարտադիր միասնական չափանիշ⁵:

19. Կարծիքով մասնավորապես ձգտում են անդամ պետություններին առաջարկել լավագույն գործելակերպերը: Դա նպատակ ունի բարելավելու ինչպես գործող համակարգերը, այնպես էլ դատախազական ինքնակառավարումը՝ պատշաճ կերպով հաշվի առնելով տարբեր իրավական մշակույթները եւ ավանդույթները եւ արդարադատության անկախության, արդյունավետության եւ որակի բարձրացման ընդհանուր շրջանակի ներքո:

III. Դատախազների խորհուրդների ընդհանուր առաքելությունը. պաշտպանել դատախազների անկախությունը եւ օրենքի գերակայությունը

20. Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ) օրենքի գերակայությունը համարում է ժողովրդավարական հասարակության կառուցվածքային հենասյուն: Արդարադատության մատչելիությունը ՄԻԵԿ-ի առանցքային տարրերից մեկն է, որով հռչակվում է, որ յուրաքանչյուր ոք ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ եւ անաչառ տրիբունալի իրավունք⁶:

21. Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) ըստ այդմ մշակել է լայն նախադեպային իրավունք՝ դատավորների անկախության եւ անաչառության չափանիշների եւ արդարադատության արդյունավետ իրականացման վերաբերյալ: Այս առնչությամբ Դատական խորհուրդները եւ դրանց կառուցվածքը, կազմը եւ գործունեությունը նշվել է ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքում⁷:

22. Եվրոպական միության արդարադատության դատարանը (ԵՄԱԴ) նույնպես արտահայտվել է Դատական խորհուրդների վերաբերյալ⁸: Այն, օրինակ, նշել է, որ այդ խորհուրդների մասնակցությունը դատավորների նշանակման գործընթացին կարող է սկզբունքորեն նպաստել այդ գործընթացն առավել օբյեկտիվ դարձնելուն: Այնուամենայնիվ, դա այդպես է միայն, ի թիվս այլնի, եթե այդ մարմինն ինքնին բավականաչափ անկախ է օրենսդիր եւ գործադիր իշխանություններից եւ այն մարմնից, որին դրանից պահանջվում է պաշտոնի նշանակելու մասին առաջարկություն ներկայացնել⁹:

23. Դատական խորհուրդները դատական իշխանության եւ առանձին դատավորների անկախությունը պաշտպանելու եւ այդպիսով դատական համակարգի արդյունավետ գործունեությունը խթանելու հանձնարարություն ունեցող մարմիններ են¹⁰: Մինչ օրս Եվրոպական բազմաթիվ համակարգեր

⁵ Վենետիկի հանձնաժողովի գեկույցը դատական համակարգի անկախության Եվրոպական չափանիշների վերաբերյալ. Մաս II. Դատախազություն, 17-18.12.2010, թիվ 494 / 2008 ուսումնասիրություն, CDL-AD(2010)040, § 68:

⁶ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածում:

⁷ ՄԻԵԴ-ի վճիռներ, *Օլեքսանդր Վոլկովն ընդդեմ Ուկրաինայի* [Oleksandr Volkov v. Ukraine], 2013 թվականի հունվարի 9, §§ 109-117: *Ռամոս Նունես դե Կարվալյուն եւ Սան ընդդեմ Պորտուգալիայի* [Ramos Nunes de Carvalho e Sá v. Portugal], 6. 11. 2018թ., § 144, *Գյուլմունդ Անդրի Աստրադսոն ընդդեմ Իսլանդիայի* [U] [Guðmundur Andri Ástráðsson v. Iceland [GC]], թիվ 26374/18, 1. 12. 2020թ., *Զսերո Ֆլորը եւ Պոլշեն ընդդեմ Լեհաստանի* [Xero Flor w Polsce v. Poland], 7.5.2021թ., 4907/18, §§ 243-251:

⁸ Հարկ է նկատել, որ Հիմնարար իրավունքների Եվրոպական խարտիայում նշվում է, որ այնքանով, որքանով սույն խարտիան պարունակում է այնպիսի իրավունքներ, որոնք երաշխավորված են Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով, այդ իրավունքների նշանակությունը եւ կիրառության ոլորտը պետք է լինեն նույնը, ինչ սահմանված է նշված կոնվենցիայով: Սույն դրույթը չի արգելում, որ Միության իրավունքը նախատեսի առավել լայն պաշտպանություն (52(3) հոդված): Եվրոպական խարտիայով նաեւ նախատեսվում է արդար դատքնության իրավունքը՝ ՄԻԵԿ-ով նախատեսվածին համանման (խարտիայի 47-րդ հոդված):

⁹ ԵՄԱԴ-ի 2019 թվականի Նոյեմբերի 19-ի վճիռը, C-585/18, C-624/18 եւ C-625/18: Տե՛ս նաեւ ԵՄԱԴ, *Եվրոպական հանձնաժողովն ընդդեմ Լեհաստանի* [European Commission v. Poland], 24.6.2019թ., C 619/18, §§ 71-73, Ա. Կ-ն ընդդեմ Ազգային դատական խորհրդի [A.K. v. Krajowa Rada Sadownicza], 19.11.2019թ., C 585/18, C-624/18, C-625/18, §§ 120-122, *Եվրոպական հանձնաժողովն ընդդեմ Լեհաստանի*, 24.6.2019թ., C 619/18, §§ 74-75, Ա. Կ-ն ընդդեմ Ազգային դատական խորհրդի, 19.11.2019թ., C 585/18, C-624/18, C-625/18, §§ 123, 133- 134, Վ. Բ-ն ընդդեմ Հեսենի երկրամասի [VQ v. Land Hessen], 9.7.2020թ., C2727/19, § 54, *Ռեպուբլիկան ընդդեմ Վարչապետի եւ ՎՅ-ն* [Repubblika II-Prim Ministru v. WY], 20.4.2021թ., C-896/19, C-83/19 եւ այլն, 18.5.2021թ.:

¹⁰ «Դատավորների անկախության, արդյունավետության եւ պարտականությունների մասին» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec(2010)12 առաջարկությունը, 26-29-րդ պարբերություններ, ԵԴԳԽԽ-ի թիվ 1 (2001) կարծիք, 45-րդ պարբերություն, եւ թիվ 10 (2007) եւ թիվ 24 (2021) կարծիքներ, Վենետիկի հանձնաժողովի գեկույցը դատական համակարգի անկախության վերաբերյալ, Մաս I. Դատավորների անկախությունը (32-րդ պարբերություն)՝ ընդունված Վենետիկի Հանձնաժողովի կողմից դրա 82-րդ լիազումար նիստին (Վենետիկ,

ներդրել են Դատական խորհուրդներ¹¹: Ինչպես արդեն նշվել է, շատ դեպքերում այդ խորհուրդները զբաղվում են ինչպես դատավորներին, այնպես էլ դատախազներին վերաբերող հարցերով¹²:

24. Ինչ վերաբերում է կոնկրետ Դատախազների խորհուրդներին, թեև ՄԻԵԴ-ը դեռևս չի մշակել համաձայն նախադեպային իրավունք, այն շեշտել է ընդհանրապես դատախազական անկախության սկզբունքը¹³: Օրինակ, Դատարանն անհրաժեշտ է համարել վերահաստատել, որ ժողովրդավարական հասարակությունում ինչպես դատարանները, այնպես էլ քննչական մարմինները պետք է գերծ լինեն քաղաքական ճնշումից¹⁴: Ավելին, Դատարանը նկատել է, որ հանրության շահերից է բխում պետության հետապնդում իրականացնող մարմինների անկախության եւ քաղաքական չեզոքության նկատմամբ վստահություն պահպանելը¹⁵:

25. ԵԴԳԽՆ-ն շեշտել է, որ դատախազական ծառայությունների անկախությունն ու ինքնավարությունը դատական համակարգի անկախության անքակտելի հետեւանքն են, եւ հետեւաբար այդ անկախության ընդհանուր միտումը պետք է առավել խրախուսվի¹⁶: Դատախազները պետք է ինքնուրույն գործեն իրենց որոշումների կայացման հարցում եւ իրենց պարտականությունները պետք է կատարեն առանց արտաքին ճնշումների եւ միջամտության՝ իշխանությունների տարանջատման եւ հաշվետվողականության սկզբունքներին համապատասխան¹⁷:

26. ԵԴԳԽՆ-ն այնուհետեւ ուղղակիորեն առաջարկել է դատախազների կարգավիճակ, որն ապահովում է նրանց արտաքին եւ ներքին անկախությունն ու ինքնավարությունը, եւ դա նախընտրելի է իրավական ամենաբարձր մակարդակի դրույթներով՝ երաշխավորելով դրանց կիրառումն այնպիսի անկախ մարմնի կողմից, ինչպիսին է Դատախազների խորհուրդը, մասնավորապես՝ պաշտոնի նշանակման/ընտրության, մասնագիտական ուղու եւ կարգապահության առնչությամբ¹⁸, որոնք պետք է կարգավորվեն հստակ եւ պարզ ընկալելի գործընթացներով եւ ընթացակարգերով¹⁹:

27. Վենետիկի հանձնաժողովը նկատել է, որ Դատախազների խորհուրդները կարելու են պետության այլ իշխանությունների (այսինքն՝ գործադիր եւ օրենսդիր իշխանությունների) կողմից միջամտությամբ ստեղծվող ռիսկերը նվազեցնելու եւ ի վերջո վերացնելու համար կամ այլ կերպ ասած՝ դատախազների անկախությունն ամրապնդելու համար: Ե՛վ դատավորների, ե՛ւ՝ դատախազների համար պատասխանատու խորհուրդների դեպքում պետք է ապահովել, որ նրանք չկարողանան ազդեցություն գործել միմյանց պաշտոնի նշանակման/ընտրության եւ կարգապահական վարույթների վրա²⁰:

28. Վենետիկի հանձնաժողովն այնուհետեւ նկատել է, որ Դատախազների խորհուրդները, երբ անկախ են պետական այլ մարմիններից, ունեն առավելություն՝ կարողանալու արժեքավոր փորձագիտական օժանդակություն տրամադրել պաշտոնի նշանակման եւ կարգապահական գործընթացի հարցում եւ այդպիսով դատախազներին պաշտպանելու քաղաքական ազդեցությունից: Կախված պաշտոնի նշանակման եղանակից՝ նրանք կարող են ժողովրդավարական օրինականությունն ապահովել դատախազական համակարգի համար: Առկա լինելու դեպքում նրանք բացի դատախազների

2010 թվականի մարտի 12-13):

¹¹ Պրոֆեսոր Էն Սանդերսի համեմատական ակնարկը Եվրոպայում դատական խորհուրդների վերաբերյալ (2022), հասանելի է հետեւյալ հղումով՝ <https://rm.coe.int/comparative-overview-on-judicial-councils-in-europe-en/1680a923bc>. Տե՛ս նաեւ Իրավական համագործակցության հարցերով Եվրոպական կոմիտեի (ԻՅԵԿ) կողմից Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ներկայացված զեկույցը Եվրոպայի խորհրդի՝ Դատական համակարգի անկախության եւ անկողմնակալության ամրապնդմանն ուղղված գործողությունների ծրագրի վերաբերյալ՝ ընդունված ԻՅԵԿ-ի կողմից դրա 98-րդ լիազումար հանդիպմանը (2022 թվականի հունիսի 1-3):

¹² Պրոֆեսոր Էն Սանդերսի համեմատական ակնարկը Եվրոպայում դատական խորհուրդների վերաբերյալ (2022), հասանելի է հետեւյալ հղումով՝ <https://rm.coe.int/comparative-overview-on-judicial-councils-in-europe-en/1680a923bc>.

¹³ Վերլուծության եւ ՄԻԵԴ-ի վերաբերելի վճիռների ցանկի համար՝ ԵԴԳԽՆ-ի թիվ 16 (2021) կարծիքը դատախազների գործնական անկախության վերաբերյալ միջազգային դատարանների եւ պայմանագրային մարմինների որոշումների հետեւանքների վերաբերյալ, 16-36-րդ պարբերություններ:

¹⁴ ՄԻԵԴ-ի վճիռը *Գուլջան ընդդեմ Մոլդովայի* [Guja v. Moldova] գործով, թիվ 14277/04, 2008 թվականի փետրվարի 12, § 86:

¹⁵ ՄԻԵԴ-ի վճիռը *Գուլջան ընդդեմ Մոլդովայի* գործով, թիվ 14277/04, 2008 թվականի փետրվարի 12, § 90, տե՛ս, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), *Պրագերը եւ Օբերշլիկն ընդդեմ Ավստրիայի* [Prager and Oberschlick v. Austria], 1995 թվականի ապրիլի 26, § 34, շարք Ա թիվ 313:

¹⁶ Դատախազներին առնչվող Եվրոպական Նորմերի ու սկզբունքների վերաբերյալ ԵԴԳԽՆ-ի թիվ 9(2014) կարծիքը, 3-րդ կանոնադրություն, IV կետ:

¹⁷ Դատախազներին առնչվող Եվրոպական Նորմերի ու սկզբունքների վերաբերյալ ԵԴԳԽՆ-ի թիվ 9(2014) կարծիքը, 3-րդ կանոնադրություն, V կետ:

¹⁸ Դատախազների անկախության, հաշվետվողականության եւ էթիկայի վերաբերյալ ԵԴԳԽՆ-ի թիվ 13(2018) կարծիքը, iii առաջարկություն: Տե՛ս նաեւ Իրավական համագործակցության հարցերով Եվրոպական կոմիտեի (ԻՅԵԿ) կողմից Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ներկայացված զեկույցը Եվրոպայի խորհրդի՝ Դատական համակարգի անկախության եւ անկողմնակալության ամրապնդմանն ուղղված գործողությունների ծրագրի վերաբերյալ՝ ընդունված ԻՅԵԿ-ի կողմից դրա 98-րդ լիազումար հանդիպմանը (2022 թվականի հունիսի 1-3), 147-րդ պարբերություն:

¹⁹ Տե՛ս Դատախազներին առնչվող Եվրոպական Նորմերի ու սկզբունքների վերաբերյալ ԵԴԳԽՆ-ի թիվ 9(2014) կարծիքը, 52-րդ պարբերություն:

²⁰ «Ժողովրդավարություն» իրավունքի միջոցով՝ Եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով), 2-եկույց դատական համակարգի անկախության Եվրոպական չափանիշների վերաբերյալ. Մաս II. Դատախազություն, 17- 18.12.2010, CDL-AD(2010)040, 20-րդ եզրակացություն:

պաշտոնի նշանակումից կարող են հաճախ դերակատարում ունենալ կարգապահական հարցերում²¹:

29. Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբը (ԳՐԵԿՈ) որպես դատախազական ծառայությունում բարեվարքությունը խթանելու նախապայման դատախազների անկախությունն ամրապնդելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելիս նույնպես մշակել է ուղղորդում դատախազների ինքնակառավարման վերաբերյալ: Ընդունելով, որ քրեական արդարադատության համակարգում հանրային դատախազության դերի եւ կազմակերպման առնչությամբ առկա են տարբեր համակարգեր, ԳՐԵԿՈ-ն առաջարկել է այն երկրներին, որտեղ գործում են դատախազական (կամ խառը՝ դատական եւ դատախազական) խորհուրդներ, որ դրանք ավելի մեծ դերակատարում ունենան կարգապահական հարցերում, ինչպես նաեւ դատախազական գրասենյակներում գործերի կառավարման եւ կազմակերպման հարցում²²:

30. Դատական խորհուրդների եվրոպական ցանցը (ԴԽԵՑ) համարում է, որ այդ խորհուրդները պետք է գործեն օրենքի գերակայությունն ամրապնդելու եւ պահպանելու ուղղությամբ, մասնավորապես՝ աջակցություն տրամադրելով դատական անկախության, հաշվեվտոդականության եւ դատական համակարգի իշխանության համար: ԴԽԵՑ-ը նաեւ ընդգծում է, որ եթե այդ չափանիշները կոնկրետ չեն անդրադառնում դատախազներին վերաբերող խնդիրներին, ապա հաշվի առնելով Եվրոպայում դատախազական ծառայությունների կազմակերպման լայն բազմազանությունը՝ դա չի կանխում, որ դրանք կիրառվեն նաեւ դատախազների նկատմամբ եւ երաշխավորեն նրանց անկախությունը²³:

31. Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) «Արեւելյան Եվրոպայում, Կենտրոնական Ասիայում եւ Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում դատախազների անկախության վերաբերյալ» ուսումնասիրությունը, ընդունելով այս ոլորտում պարտադիր ուժ ունեցող որեւէ միջազգային չափանիշի բացակայությունը, երկրներին խրախուսում է մշակել ազգային դատախազական խորհուրդներ կամ այլ տեսակի ինքնակարգավորվող մարմիններ: Այդպիսի մարմինները, որոնց վերապահված է դատախազների պաշտոնի նշանակմանը/ընտրությանը, կարգապահական վարույթներին կամ այլ խիստ կարեւոր հարցերին առնչվող լիազորություններ, կարեւոր գործոն են դատախազական համակարգի անկախությունն ամրապնդելու եւ դատախազներին արտաքին միջամտությունից եւ ճնշումից պաշտպանելու համար²⁴:

32. Բացի այդ, ՏՀԶԿ-ի վերոնշյալ ուսումնասիրությամբ ընդգծվում է որոշ երկրներում դատախազական համակարգերի ներսում կոլեգիալ մարմինների առկայությունը, որոնք քննում, առաջարկում կամ նույնիսկ ընդունում են կարեւոր որոշումներ դատախազների գործունեության վերաբերյալ²⁵:

33. Միավորված ազգերի կազմակերպությունը նույնպես ընդունում է, որ դատախազական ծառայություններն ունեն կազմակերպման լայն եղանակներ, եւ եթե դատախազական ծառայությունն ունի ինքնավար գործակալության կազմակերպական ձեւ, ապա դատախազների մասնագիտական ուղին կարող է կարգավորվել դատախազական խորհրդի կամ համանման անկախ մարմնի կողմից²⁶:

34. Հաշվի առնելով Եվրոպայում իրավական եւ դատախազական համակարգերի լայն բազմազանությունը՝ ԵՂԿԽ-ն նկատում է, որ Դատախազների խորհուրդներ կամ այդ հարցերով զբաղվող այլ մարմիններ ստեղծելուց բացի՝ կարող են առկա լինել դատախազների անկախությունը եւ դատախազական ինքնակառավարումն ապահովելու այլ արդյունավետ միջոցներ: Այնուամենայնիվ, այդպիսի խորհուրդների կամ այլ մարմինների առկայությունն ունի հստակ ինստիտուցիոնալ արժեք, եթե համեմատելք այլընտրանքային միջոցների հետ: Այդ հաստատությունները երկարատեւ ազդեցություններ են առաջացնում եւ անկախ եւ ինքնավար դատախազական համակարգի երկարաժամկետ կայունություն են ապահովում:

35. Հետեւաբար պետք է շեշտվի Դատախազների խորհուրդների, անկախ նրանից, թե դրանք առանձին մարմիններ են, թե ինչպես դատավորների, այնպես էլ դատախազների համար պատասխանատու Դատական խորհուրդների մասն են, կամ դատախազական ինքնակառավարումը կարգավորող այլ մարմինների ինստիտուցիոնալ արժեքը:

36. Ավելին, այդ խորհուրդները չպետք է զուտ առկա լինեն օրենսդրությամբ, այլ պետք է լինեն

²¹ Վենետիկի հանձնաժողովի զեկույցը դատական համակարգի անկախության եվրոպական չափանիշների վերաբերյալ. Մաս II. Դատախազություն, 17-18.12.2010, Թիվ 494 / 2008 ուսումնասիրություն, CDL-AD(2010)040, §§ 64-68:

²² ԳՐԵԿՈ, «Կոռուպցիայի կանխարգելում: Խորհրդարանի անդամներ, դատավորներ եւ դատախազներ: Եզրակացություններ եւ միտումներ», էջ 28:

²³ ԴԽԵՑ-ի Դատական խորհուրդների վերաբերյալ ամփոփագիր (2021):

²⁴ Տե՛ս ՏՀԶԿ Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական. Ասիայի հակակոռուպցիոն ցանցը (ՀԿՑ) հետեւյալ հղումով՝ <https://www.oecd.org/corruption/acn/The-Independence-of-Prosecutors-in-Eastern-Europe-Central-Asia-and-Asia-Pacific.pdf>, էջ 29:

²⁵ Տե՛ս ՏՀԶԿ Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական. Ասիայի հակակոռուպցիոն ցանցը (ՀԿՑ) հետեւյալ հղումով՝ <https://www.oecd.org/corruption/acn/The-Independence-of-Prosecutors-in-Eastern-Europe-Central-Asia-and-Asia-Pacific.pdf>, էջ 38-39:

²⁶ Դատավորների եւ փաստաբանների անկախության հարցերով հատուկ զեկուցող Գաբրիելա Կնասուլի զեկույցը (A/HRC/20/19, 7.6.2012թ., §29):

Նաեւ գործնականում գործող: Օրենսդրական շրջանակի եւ միջազգային չափանիշների առկայությունը չի կարող մշտապես ինքնին բավարար լինել գործնականում անկախ եւ անաչառ դատախազական համակարգ մշակելու համար: Այդ իսկ պատճառով դատախազական ծառայությունը եւ կառավարության այլ ճյուղեր, քաղաքական գործիչները, լրատվության միջոցները եւ քաղաքացիական հասարակությունը բոլորը միասին պետք է աշխատեն հոգուտ հասարակության՝ դատախազական ծառայությունում եւ դատական համակարգում պրոֆեսիոնալիզմը, թափանցիկությունը եւ էթիկան բարձրացնելու երկարաժամկետ ջանքերի ուղղությամբ²⁷:

37. Ամփոփելով՝ Դատախազների խորհուրդները բոլոր հնարավորություններն ունեն, որ՝

- ապահովեն արդյունավետ եւ անաչառ դատախազական ծառայություններ եւ առանձին դատախազներ՝ օրենքի գերակայության սկզբունքներին համապատասխան իրենց անկախ որոշումները կայացնելու միջոցով,
- այս կերպ ստեղծեն բարենպաստ շրջանակ, որ դատախազական ծառայությունները կարողանան երաշխավորել վարույթների օրինականությունը եւ արդար դատաքննության իրավունքը օրենքի գերակայության սկզբունքներին համահունչ, եւ
- ապահովեն դատախազների աշխատանքի համապատասխանությունը միջազգային պարտադիր իրավական ուժ ունեցող փաստաթղթերին, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային, ինչպես նաեւ փափուկ իրավունքի փաստաթղթերին:

38. Այս եւ այլ գործառնություններին, ինչպես նաեւ Դատախազների խորհուրդների դերին առնչվելիս պետք է հետեւել Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» Rec(2000)19 առաջարկության, ինչպես նաեւ ԵԴԳԽԻ-ի կարծիքների սկզբունքներին՝ որպես դատախազության համակարգի, դրա անկախության, անաչառության եւ արդյունավետության հիմնական երաշխիք:

IV. Դատախազների խորհուրդների կազմը. անկախ եւ թափանցիկ խորհրդի գործունեության խթանում

1. Դատախազների խորհուրդների կազմը

39. Դատախազների խորհուրդների կառուցվածքը եւ կազմը տարբերվում են: Դրանց հիմքերը եւ զարգացումը կապված են յուրաքանչյուր իրավական համակարգի զարգացման եւ դրա պատմական, մշակութային եւ սոցիալական համատեքստի հետ:

40. Նույն կերպ, ինչպես դատական խորհուրդները, Դատախազների խորհուրդների կայունությունը երաշխավորելու եւ դրանց կարեւորությունը շեշտելու համար այդ մարմինները պետք է պարտադիր ստեղծվեն օրենքով եւ գործեն օրենքի հիման վրա:

41. Չկա Դատախազների խորհուրդների համապիտանի մոդել: Հիմնական սկզբունքը պետք է լինի պատշաճ կազմությամբ, դատախազական ծառայության մեծությանը համաչափ կառուցվածք ստեղծելը, որպեսզի օպտիմալացվի դրա խնդիրների կատարումը: Այդպիսի մարմիններ ստեղծելիս անդամ պետություններին թողնվում են հայեցողական լիազորություններ՝ պայմանով, որ այս հիմնական սկզբունքը հարգվի:

42. Եթե առկա են Դատախազների խորհուրդներ, ապա կարելի է նշել երկու հիմնական մոդել՝ մեկը, երբ դատախազ անդամները կազմում են կազմի մեծամասնությունը կամ ամբողջ կազմը, եւ մյուսը, երբ դատախազ անդամները կազմի մեծամասնությունը չեն կազմում:

43. Ինչպես ԵԴԳԽԻ-ն, այնպես էլ Վենետիկի հանձնաժողովն ընդգծել են, որ Դատախազների խորհուրդ ստեղծելը լայնորեն ողջունելի քայլ է դեպի դատախազական ծառայության ապաքաղաքականացումը, եւ այդ իսկ պատճառով շատ կարեւոր է, որ դրան հասնեն որպես բազմակարծիք մարմին: Այդ մարմնի չեզոքությունն պահանջվելու համար պետք է հստակ սահմանվի այդ խորհրդի եւ դրա անդամների անկախությունը²⁸:

44. Վենետիկի հանձնաժողովը նաեւ մասնավորապես մատնանշել է, որ եթե այդ խորհուրդները կազմված են հավասարակշռված եղանակով, օրինակ՝ դատախազների, իրավաբանների եւ քաղաքացիական հասարակության միջոցով, եւ երբ դրանք անկախ են պետական այլ մարմիններից,

²⁷ Վենետիկի հանձնաժողով, Հրատապ միջանկյալ կարծիք նոր սահմանադրության վերաբերյալ, 2020 թվականի դեկտեմբերի 11, Բուլղարիա, CDL-AD(2020)035, 37-րդ պարբերության, տե՛ս նաեւ ԵԴԽԻ-ի թիվ 24(2021) կարծիքը, CCJE(2021)11: Եվրոպայի դատական մարմինների ստուգում հասանելի է Սահմանադրական իրավունքի 2019 թվականի եվրոպական տարեգրքում, 287-310:

²⁸ Վենետիկի հանձնաժողովի, Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի (ԵԴԳԽԻ) եւ ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) համատեղ կարծիքը Դատախազության մասին Կրաստանի օրենքի փոփոխությունների նախագծի վերաբերյալ, CDL-AD(2015)039, 33-34-րդ պարբերություններ:

դրանք ունեն առավելություն՝ կարողանալու արժեքավոր փորձագիտական օժանդակություն տրամադրել պաշտոնի նշանակման եւ կարգապահական գործընթացի հարցում եւ այդպիսով դատախազներին պաշտպանելու քաղաքական ազդեցությունից²⁹:

45. Ոչ մասնագետ անդամների առկայությունը դիտվում է որպես դատախազական համակարգի իրական անկախությունը խթանելու եւ երաշխավորելու միջոց՝ խորհրդին զերծ պահելով որեւէ քաղաքական միջամտությունից եւ դրա ինքնավարությունն ուժեղացնելուն ծառայելով: Բացի այդ, ոչ մասնագետ անդամների անդամությունն ուժեղացնում է դատախազների մասնագիտության հաշվետվողականությունը եւ թափանցիկությունը եւ լայն հասարակության առջեւ նրանց բաց լինելը:

46. Խառը կազմ ունեցող խորհուրդներում նախընտրելի է, որ դատախազ անդամները մեծամասնություն կազմեն, ընտրվեն իրենց գործընկերների կողմից նախկինում ընդունված կանոններին համապատասխան եւ թափանցիկ ընթացակարգով եւ բոլոր մակարդակներում ամենալայն ներկայացվածությունը երաշխավորող եղանակով, գենդերային հավասարակշռված ձեւով եւ պատշաճ դեպքում տարածաշրջանային եւ ազգային մակարդակներում ներկայացվածությամբ, խորհուրդների բոլոր կոլեգիաներում: Դատախազ բոլոր անդամները պետք է գործեն որպես իրենց ամբողջ դատախազական ծառայության ներկայացուցիչներ:

47. Դատախազների խորհուրդների կազմը պետք է պատշաճ դեպքում արտացոլի դատախազական համակարգում եւ ընդհանրապես հասարակությունում առկա բազմազանությունը: Խորհրդարանի կողմից ընտրվող ոչ մասնագետ անդամները պետք է ընտրվեն որակյալ մեծամասնությամբ՝ ընդդիմությանը մասնակցության հնարավորություն տալու համար: Այնուամենայնիվ, առաջին փուլում չընտրվելու դեպքում դա կարող է տեղի ունենալ երկրորդ փուլում՝ պարզ մեծամասնությամբ, որպես փակուղու դեմ ուղղված մեխանիզմ:

48. Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԽԽ) մատնանշել է, որ Դատական խորհրդի հեռանկարային անդամները չպետք է լինեն ակտիվ քաղաքական գործիչներ, խորհրդարանի անդամներ կամ գործադիր իշխանության պաշտոնատար անձինք³⁰: ԵԴԽԽ-ն այն կարծիքին է, որ Դատախազների խորհուրդների անդամների առնչությամբ պետք է հետամուտ լինել համանման մոտեցման:

49. Ի պաշտոնե անդամներ կարող են առկա լինել այն թվով, որը չի վտանգում վերոնշյալ սկզբունքները:

50. Դատախազների խորհուրդը կարող է օգուտ ստանալ ըստ անհրաժեշտության մշտական անդամությունից՝ իր առաքելությունն առավել արդյունավետ կատարելու, ինչպես նաեւ իր անկախությունը եւ հանրային հեղինակությունն ամրապնդելու համար: Պետք է գործեն երաշխիքներ՝ ապահովելու համար, որ իրենց մանդատն ավարտվելուց հետո դատախազ անդամները կարողանան վերականգնվել իրենց պաշտոններում, որոնք համապատասխանում են իրենց ավագությանը եւ որակավորումներին:

2. Դատախազների խորհուրդների անդամների որակավորումները

51. Դատախազների խորհուրդների անդամները, անկախ նրանից՝ դատախազ են, թե՛ ոչ, պետք է ընտրվեն նախապես սահմանված, արդար եւ հստակ չափորոշիչների հիման վրա, թափանցիկ ընթացակարգով:

52. Պետք է նախապես սահմանվի համապատասխանության չափորոշիչները հաշվի առնող կանոնների խումբ: Պետք է ընդգծվեն եւ հաշվի առնվեն թեկնածուների կոմպետենտությունը, փորձը, բարեվարքությունը, անկախությունը, անաչառությունը եւ այլ կարեւոր գործոններ:

53. Դատախազների խորհուրդների անդամության թեկնածուները պետք է մասնավորապես ցուցաբերեն բարձր էթիկայի չափանիշներ եւ խորհրդում իրենց մանդատը ստանալուն նախորդող եւ հաջորդող ողջամիտ ժամկետում չպետք է ներգրավված լինեն քաղաքականության մեջ:

3. Դատախազների խորհուրդների անդամների ընտրության եղանակները

54. Դատախազների խորհրդի անդամները պետք է ընտրվեն այնպիսի եղանակով, որն աջակցում է խորհրդի, դատախազական ծառայության եւ որպես անմիջական հետեւանք դատական իշխանության անկախությանը եւ արդյունավետ գործունեությանը, քաղաքական որեւէ ազդեցության կամ շահերի բախման ցանկացած ընկալման վերացմանը կամ շրջանցմանը:

²⁹ Վենետիկի հանձնաժողովի գեկույցը դատական համակարգի անկախության եվրոպական չափանիշների վերաբերյալ Մաս II. Դատախազություն, CDL-AD(2010)040, 65-րդ պարբերություն:

³⁰ ԵԴԽԽ-ի թիվ 10 (2007) կարծիքը հասարակությանը ծառայելու գործում Դատական խորհրդի դերի վերաբերյալ, 23-րդ պարբերություն, տե՛ս նաեւ ԵԴԽԽ-ի թիվ 24 (2021) կարծիքը դատական խորհուրդների Էվոլյուցիայի եւ անկախ եւ անաչառ դատական համակարգերում նրանց դերի վերաբերյալ, 8(Բ)(բ) պարբերություն:

55. Անդամների ընտրությունը պետք է կարգավորվի նախապես սահմանված կանոններով, որոնք տարածվում են նախապես: Այդ կանոնները պետք է կիրառվեն ընտրության ցանկացած եղանակի նկատմամբ՝ ընտրություն, պաշտոնի նշանակում կամ այլ եղանակ:

56. Պետք է գործեն կանոններ՝ ապահովելու համար, որ դատախազ անդամներն ընտրվեն իրենց գործընկերների կողմից, որոնք ներկայացնում են դատախազական ծառայության բոլոր մակարդակները, այլ ոչ թե միայն դատախազական մարմինների ավագ պաշտոնատար անձինք: Դատախազների միավորումները կարող են ունենալ թեկնածուներ ներկայացնելու իրավունք:

57. Ընտրության գործընթացը պետք է լինի թափանցիկ եւ ապահովի, որ հավաստիացվեն թեկնածուների որակավորումները, հատկապես՝ նրանց անաչառությունը եւ բարեվարքությունը: Թափուր պաշտոնները պետք է զովագրվեն հրապարակային, եւ պետք է հավասար հնարավորություններ երաշխավորվեն՝ անկախ թեկնածուների բազմազան խումբ սատարելու համար:

58. Ի պաշտոնե անդամների թիվը պետք է սահմանափակ լինի, իսկ գործադիր իշխանության պաշտոնատար անձանց անդամությունը պետք է ապահարախուսվի:

59. Պետք է նախընտրել խոստովանողները կորուստի դատախազ անդամների ընտրությունից կամ գործադիր իշխանության կողմից նրանց ընտրությունից: Ոչ մասնագետ անդամների ընտրությունը խորհրդարանների կողմից կարող է ընդունելի լինել: Այնուամենայնիվ, ընտրության գործընթացը պետք է թափանցիկ լինի եւ նախընտրելիորեն կատարվի որակյալ մեծամասնությամբ³¹: Առաջին փուլում չընտրվելու դեպքում դա կարող է տեղի ունենալ երկրորդ փուլում՝ պարզ մեծամասնությամբ, որպես փակուղու դեմ ուղղված մեխանիզմ:

60. Ոչ մասնագետ անդամների ընտրությունը կամ առաջադրումն այնպիսի հաստատությունների կողմից, ինչպիսիք են փաստաբանների պալատը կամ մասնագիտական միավորումները, հասարակական կազմակերպությունները (ՀԿ-ներ), կարող են պատշաճ լինել, եթե համահունչ են անդամ պետությունների իրավական ավանդույթներին:

4. Դատախազների խորհուրդների նախագահների ընտրությունը

61. Դատախազների խորհրդի նախագահը կարող է առանցքային դեր խաղալ խորհրդի աշխատանքում եւ դրա արտաքին եւ ներքին հեղինակության համար: Պետք է ընդունվեն այդ մասին հստակ կանոններ:

62. Դատախազների խորհրդի նախագահը պետք է ընտրվի/պաշտոնի նշանակվի այն եղանակով, որն ապահովում է նրա անաչառությունը եւ անկախությունն օրենսդիր եւ գործադիր իշխանությունների կողմից եւ ապահովում է դատախազական ծառայության վերադաս անդամների կողմից անհարկի ազդեցության բացակայությունը:

63. Վենետիկի հանձնաժողովը մատնանշել է, որ ողջունելի է խորհրդի նախագահի ընտրությունը դրա անդամների կողմից³²: Եթե արդարադատության նախարարն ի պաշտոնե խորհրդի անդամ է, ապա նրա՝ խորհրդի նախագահությունը կարող է կասկածներ առաջացնել այդ մարմնի անկախության վերաբերյալ³³: Հետեւաբար ԵՂԳԽՆ-ն այն կարծիքին է, որ նախագահը պետք է լինի դատախազ անդամներից մեկը, որն ընտրվել է բոլոր՝ ինչպես դատախազ, այնպես էլ ոչ մասնագետ անդամների կողմից որակյալ մեծամասնությամբ: Նույն կանոնը պետք է կիրառվի համանման այլ մարմինների նախագահության ընտրության նկատմամբ: Այնուամենայնիվ, առաջին փուլում չընտրվելու դեպքում դա կարող է տեղի ունենալ երկրորդ փուլում՝ պարզ մեծամասնությամբ, որպես փակուղու դեմ ուղղված մեխանիզմ:

64. Այն երկրներում, որտեղ դրանց իրավական ավանդույթների շնորհիվ դատախազների խորհրդի նախագահը կարող է նշանակվել ի պաշտոնե, խորհրդի նախագահությունը չպետք է հանձնվի գործադիր իշխանությունը ներկայացնող ի պաշտոնե անդամին (օրինակ՝ արդարադատություն նախարարին), որպեսզի խուսափեն անհարկի ազդեցությունից:

5. Դատախազների խորհուրդների անդամների կարգավիճակը եւ մանդատի ժամկետը

65. Դատախազների խորհրդի բոլոր անդամների մանդատը պետք է լինի նույն ժամկետով: Նրանք պետք է ընտրվեն պաշտոնավարման ֆիքսված ժամկետով եւ պետք է օգտվեն իրենց անաչառության եւ

³¹ Վենետիկի հանձնաժողովի զեկուցը դատական համակարգի անկախության եվրոպական չափանիշների վերաբերյալ. Մաս II. Դատախազություն», CDL-AD(2010)040, 66-րդ պարբերություն:

³² Վենետիկի հանձնաժողովի կարծիքը Դատախազության մասին Մոլդովայի օրենքի նախագծի վերաբերյալ, CDL-AD(2008)019, 62-րդ պարբերություն:

³³ Վենետիկի հանձնաժողովի, Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի (ԵՂԳԽՆ) եւ ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) համատեղ կարծիքը Դատախազության մասին Վրաստանի օրենքի փոփոխությունների նախագծի վերաբերյալ, CDL-AD(2015)039, 40-րդ պարբերություն:

անկախության մասով պաշտպանությունից:

66. Անդամի պաշտոնավարման ժամկետը պետք է ավարտվի միայն նրա իրավահաջորդի ընտրությունից հետո: Վերահաստատելով խորհրդի բոլոր անդամների պաշտոնավարման ժամկետի անվտանգության կարեւորությունը որպես դրա անկախության պայման՝ անդամի պաշտոնից հեռացումը պետք է հիմնված լինի օրենքով հստակ սահմանված հիմնավոր հիմքերի վրա եւ այնպիսի ընթացակարգով, որում երաշխավորված են նրա արդար դատաքննության իրավունքները:

67. Այս առնչությամբ ԵՂԳԽՆ-ն համաձայն է Վենետիկի հանձնաժողովի հետ առ այն, որ մագիստրատների խորհրդի անդամի անդամության չեղարկումը դատավորների եւ դատախազների համար օրենքով նախատեսված կարգապահական պատիժներից մեկին ենթարկված լինելու համար կասկածելի է, քանի որ դրանով թույլատրվում է անձի պաշտոնից հեռացումը նույնիսկ ամենաթեթեւ կարգապահական պատիժների համար³⁴: Այս համատեքստում կարելի է վկայակոչել նաեւ, որ Վենետիկի հանձնաժողովն այն կարծիքին է, որ անդամի անդամության կասեցման մասին որոշումներով պետք է հաշվի առնել մեղադրանքների ծանրությունը եւ առնվազն հավանական պատճառի առկայությունը, որ կատարվել է ծանր կարգապահական իրավախախտում³⁵: ԵՂԳԽՆ-ն համարում է, որ պետք է հասանելի լինի դատական բողոքարկման հնարավորություն:

68. ԵՂԳԽՆ-ն նաեւ համաձայն է նրա հետ, ինչը Վենետիկի հանձնաժողովը շեշտել է այդպիսի խորհուրդների ընտրված անդամների անդամությունը վստահության չեղարկման, այսինքն՝ դատախազական գրասենյակների ընդհանուր ժողովներին քվեարկության միջոցով չեղարկելու առնչությամբ: Վենետիկի հանձնաժողովը հետեւողականորեն առարկել է այդպիսի մեխանիզմի ներդրմանը, քանի որ դա ներառում է սուբյեկտիվ գնահատում եւ կարող է կանխել, որ ընտրված ներկայացուցիչներն իրենց որոշումներն անկախ կայացնեն: Զաղաքական ինստիտուտներին ավելի ներհատուկ է վստահության քվեն, եւ այն համապատասխան չէ այնպիսի ինստիտուտների դեպքում, ինչպիսիք են դատական խորհուրդները, եւ էլ ավելի պակաս համապատասխան է այդ խորհուրդների առանձին անդամների դեպքում³⁶:

69. Անգործունակության կամ այն կարգավիճակի կորստի դեպքում, որով անդամն ընտրվել կամ նշանակվել է, այդ անդամը կարող է դադարեցնել իր պաշտոնավարումը: Հենց խորհրդի կամ դրա ներքո գործող հատուկ մարմնի կողմից որոշում կայացվելու դեպքում անդամը պետք է օրենքով սահմանված վարույթի շրջանակներում օգտվի արդար լւման իարվուքից, այդ թվում՝ բողոքարկման հնարավորությունից:

V. Դատախազների խորհուրդների իրավասությունը եւ լիազորությունները՝ արդարադատության անկախությունը եւ անաչառությունն ամրապնդելու համար

70. Ինչպես Վենետիկի հանձնաժողովը, այնպես էլ ԳՐԵԿՈ-ն հաստատել են, որ Դատախազների խորհուրդը կարող է զբաղվել դատախազներին վերաբերող պաշտոնի նշանակման/ընտրության հետ կապված հարցերով, ինչպես նաեւ կարգապահական վարույթներով, այդ թվում՝ պաշտոնից հեռացմամբ: Օրինակ, Վենետիկի հանձնաժողովը շեշտել է, որ այդպիսի դեպքերում տվյալ դատախազը պետք է իրավունք ունենա լավելու մրցակցային վարույթում, իսկ այնպիսի համակարգերում, որտեղ առկա է Դատախազների խորհուրդ, կարգապահական գործերը կարող է քննել այդ խորհուրդը կամ դրա ներքո գործող կարգապահական հանձնաժողովը (կարգապահական պատժի դեմ դատարան ներկայացվող բողոքի հնարավորությունը պետք է դեռեւս առկա լինի)³⁷ : ԳՐԵԿՈ-ն նաեւ ընդգծել է, որ կատարյալ դեպքում այդպիսի խորհրդին կարող է տրվել կարելոր դեր՝ կարգապահական հարցերը կարգավորելու մասով³⁸:

71. ԵՂԳԽՆ-ն դատախազների պաշտոնի նշանակման/ընտրության առնչությամբ նաեւ նշել է, որ անաչառության ձգտումը, որով այս կամ այն ձեւով պետք է կարգավորվեն դատախազների աշխատանքի ընդունման եւ մասնագիտական ուղու հեռանկարները, կարող է հանգեցնել մասնագիտության ընտրության մրցակցային համակարգի եւ Բարձրագույն խորհուրդների ստեղծման՝ կամ ամբողջ

³⁴ Վենետիկի հանձնաժողովի կարծիքը Ռուսիայի «Դատավորների եւ դատախազների վերաբերյալ կանոնադրության մասին» թիվ 303/2004 օրենքի, «Դատական կառուցվածքի մասին» թիվ 304/2004 օրենքի եւ «Մագիստրատների գերագույն խորհրդի մասին» թիվ 317/2004 օրենքի վերաբերյալ, CDL-AD(2018)017, 142-րդ պարբերություն:

³⁵ Վենետիկի հանձնաժողովի կարծիքը «Դատական խորհրդի մասին» Զյուսիսային Մակեդոնիայի օրենքի վերաբերյալ, CDL-AD(2019)008, 37-րդ պարբերություն, տե՛ս նաեւ Վենետիկի հանձնաժողովի կարծիքը «Բարձրագույն դատական խորհրդի մասին» Սերբիայի օրենքի փոփոխությունների նախագծի վերաբերյալ, CDL-AD(2014)028, 30-րդ պարբերություն:

³⁶ Վենետիկի հանձնաժողովի կարծիքը Ռուսիայի «Դատավորների եւ դատախազների վերաբերյալ կանոնադրության մասին» թիվ 303/2004 օրենքի, «Դատական կառուցվածքի մասին» թիվ 304/2004 օրենքի եւ «Մագիստրատների գերագույն խորհրդի մասին» թիվ 317/2004 օրենքի վերաբերյալ, CDL-AD(2018)017, 143-րդ պարբերություն:

³⁷ Վենետիկի հանձնաժողովի զեկույցը դատական համակարգի անկախության եվրոպական չափանիշների վերաբերյալ. Մաս II. Դատախազություն», CDL-AD(2010)040, 52-րդ պարբերություն:

³⁸ ԳՐԵԿՈ-ի Գնահատման չորրորդ փուլի զեկույցը Հունգարիայի վերաբերյալ (2015թ.), էջ 49:

դատական իշխանության, կամ միայն դատախազների համար³⁹:

72. Դատախազների խորհուրդները պետք է ունենան իրավասությունների լայն շրջանակ՝ դատախազական անկախությունն ու արդարադատության արդյունավետ իրականացումն ավելի լավ պաշտպանելու եւ խթանելու համար: Խորհրդի իրավասությունը եւ լիազորությունները պետք է նախատեսվեն օրենքով:

73. Այսպիսով, Դատախազների խորհուրդները պետք է դերակատարում ունենան դատախազական համակարգի եւ գրասենյակների կարգավորման կամ կազմակերպման զարգացման հարցում: Բացի վերոնշյալ պաշտոնի նշանակման/ընտրության եւ կարգապահական հարցերից՝ դրանք կարող են զբաղվել դատախազների գնահատմամբ, առաջխաղացմամբ եւ տեղափոխմամբ:

74. Ավելին, պետք է խրախուսվեն Դատախազների խորհուրդների լրացուցիչ իրավասությունները դատախազական ծառայության կառավարման հարցում, ինչպես օրինակ՝

ա. դատախազների վերապատրաստումը,

բ. դատախազական համակարգի բյուջեի հսկողությունը եւ (կամ) կառավարումը՝ այն արդյունավետորեն կառավարելու համար,

գ. դատախազության համակարգի եւ լրատվության միջոցների հետ կապերի թափանցիկության նախատեսումը, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում դատախազների հեղինակությունը պաշտպանելը,

դ. ազգային, եվրոպական եւ միջազգային մակարդակում համագործակցությունը համապատասխան այլ մարմինների հետ,

ե. արդարադատության արդյունավետության եւ որակի խթանումը,

զ. դատախազական ծառայության, ինչպես նաեւ ընդհանրապես արդարադատության համակարգի կազմակերպման եւ գործունեության վերաբերյալ օրենսդրական առաջարկների վերաբերյալ կարծիքների տրամադրումը:

75. Այն դեպքերում, երբ Դատախազների խորհրդի տարբեր գործառնությունները, ինչպես օրինակ՝ պաշտոնի նշանակումը/ընտրությունը, կարգապահական հարցերը եւ դատախազների վերապատրաստումը վերագրվում են տարբեր ճյուղերի կամ խորհուրդների, ինչպես օրինակ՝ խորհրդին կամ այլ անկախ մարմինների, որոնք իրավասու են դատախազական գործունեության իրականացման կոնկրետ հայեցակետերի համար, դրանք կազմը պետք է արտացոլի խնդիրների տեսակը եւ այն եղանակը, որով դրանք պետք է իրականացվեն:

76. Դատախազների խորհրդի ընդլայնված ֆինանսական լիազորությունները ենթադրում են դրա հաշվետվողականությունը ոչ միայն գործադիր եւ օրենսդիր իշխանությունների, այլեւ դատարանների եւ հանրության առջեւ:

VI. Դատախազների խորհրդի գործունեությունը եւ որոշումների կայացման գործընթացը

77. Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԽԽ) շեշտում է, որ յուրաքանչյուր Դատական խորհուրդ պետք է աշխատի թափանցիկ եղանակով՝ ներկայացնելով իր որոշումների եւ ընթացակարգերի հիմքերը, եւ այդ եղանակով հաշվետու լինի: Խորհուրդների եւ պետական այլ իշխանությունների, այսինքն՝ գործադիր եւ օրենսդիր իշխանությունների միջեւ հարաբերությունները պետք է հիմնված լինեն ժողովրդավարական հասարակությունում օրենքի գերակայության նկատմամբ հարգանքի եւ իրենց համապատասխան դերերի ընկալման մշակույթի վրա: Խորհուրդները պետք է ակտիվորեն ներգրավվեն պետական այլ իշխանությունների, դատավորների միությունների եւ քաղաքացիական հասարակության, այդ թվում՝ փաստաբանների պալատների, ՀԿ-ների եւ լրատվության միջոցների հետ բաց, հարգալից երկխոսության⁴⁰:

78. ԵԴԽԽ-ն այն կարծիքին է, որ դա պետք է կիրառվի նաեւ Դատախազների խորհուրդների նկատմամբ: Դրանց գործունեությունը եւ որոշումների կայացման գործընթացը պետք է կարգավորվեն գրավոր եւ թափանցիկ, նախընտրելի է՝ օրենքով ընդունված կանոններով: Այդպիսի կանոններով նախատեսվում են մասնավորապես որոշում ընդունելու համար քվորումը, քվեարկության ընթացակարգը, մեծամասնությունը: Անհրաժեշտության դեպքում հենց խորհրդի կողմից պետք է ընդունվեն

³⁹ Դատախազներին առևտրի եվրոպական տրամադրումն ու սկզբունքների վերաբերյալ ԵԴԽԽ-ի թիվ 9(2014) կարծիքը, 54-րդ պարբերություն:

⁴⁰ ԵԴԽԽ-ի թիվ 24 (2021) կարծիքը դատական խորհուրդների Եվրոպայի եւ անկախ եւ անաչառ դատական համակարգերում նրանց դերի վերաբերյալ, IV գլուխ, Եզրակացություններ եւ առաջարկություններ, 7-րդ, 20-րդ, 21-րդ պարբերություններ:

Դատախազների խորհրդի մանրամասն կարգավորումներ:

79. Դատախազների մասնագիտական ուղու վրա ազդեցություն գործող որոշումները պետք է լինեն հիմնավորված, իսկ պարտադիր ուժ ունեցող որոշումները կարող են ենթակա լինել դատական վերանայման տվյալ դատախազի նախաձեռնությամբ:

80. Դատախազների մասնագիտական ուղու, այդ թվում՝ տեղափոխման եւ կարգապահական խախտումների վերաբերյալ որոշման չեղարկման դեպքում նրանց պետք է հասանելի լինեն իրավական պաշտպանության միջոցներ:

81. Ինչպես վերելում նշվել է, Դատախազների խորհուրդը կարող է օգուտ ստանալ մշտական անդամությունից, ինչը կարող է խորհրդին օգնել որպես մասնագետ գործելու եւ արդյունավետ կազմակերպման հարցում՝ ամրապնդելով նրանց անկախությունը, խուսափելով շահերի բախումից, բարելավելով դրա հեղինակությունը եւ օժանդակելով դրա առաքելության իրականացմանը:

82. Անկախ նրանից, թե Դատախազների խորհրդի անդամները ծառայում են որպես մշտական, թե արտահաստիքային անդամներ, նրանց պետք է հատկացվեն բավարար աշխատանքային ժամանակ եւ պատշաճ ֆինանսական եւ վարչական ռեսուրսներ՝ իրենց գործառնությունները կատարելու համար:

83. Պետք է արդյունավետորեն տրամադրվեն արտաքին դերակատարների կողմից Դատախազների խորհրդի եւ դատախազական ինքնակառավարմամբ զբաղվող այլ մարմինների աշխատանքին եւ որոշումների կայացմանն ապօրինի ազդեցությունից կամ միջամտությունից խուսափելու երաշխիքներ:

84. Արդարադատության համակարգի նկատմամբ հանրային վստահությունն ամրապնդելու համար Դատախազների խորհուրդները պետք է գործեն թափանցիկ եւ պարբերական զեկույցների միջոցով կամ համապատասխան այլ միջոցներով հաշվետու լինեն իրենց գործունեության համար: Այդպիսի զեկույցներում կարող են ընդգծվել արդարադատության համակարգի գործունեությունը բարելավելու նպատակով արդեն իսկ ձեռնարկված կամ ձեռնարկվելիք միջոցներ:

85. Ինչպես արդեն նշվել է, ԵՎ դատավորների, եւ՝ դատախազների համար պատասխանատու վերադաս խորհուրդների դեպքում⁴¹ պետք է ապահովվել, որ նրանք չկարողանան ազդեցություն գործել միմյանց պաշտոնի նշանակման/ընտրության եւ կարգապահական վարույթների վրա:

VII. Դատախազական ինքնակառավարումը կարգավորող այլ մարմիններ

86. Անդամ պետություններում դատախազական ծառայությունների կազմակերպական մոդելների բազմազանությունը հանգեցնում է դատախազական ինքնակառավարումը կարգավորող այլ մարմինների տեսակների բազմազանության: Բացի Դատախազների խորհուրդներից՝ մյուս մարմինները կարող են ներառել՝

- դատախազների համագումարներ կամ ընդհանուր վեհաժողովներ, որոնք ունեն Դատախազների խորհրդի կամ դատախազական ծառայության այլ մարմինների անդամներին ընտրելու, տարեկան զեկույցներ եւ քաղաքականության վերաբերյալ փաստաթղթեր ընդունելու ընդհանուր իրավասություն: Դրանք կազմված են երկրի բոլոր դատախազներից,

- ավագ դատախազների կոմիտեներ կամ դատախազական ծառայության կոլեգիա՝ մարմիններ, որոնք սովորաբար կազմված են ի պաշտոնե անդամներից, ղեկավար պաշտոններ զբաղեցնող դատախազներից, որոնք սահմանվում են օրենքով, եւ դրանց նախագահը գլխավոր դատախազն է: Այդ մարմինները գլխավոր դատախազին օժանդակում են նրա՝ գրասենյակի գործունեության կազմակերպման ռազմավարական առաքելության առնչությամբ,

- որակավորման հանձնաժողովներ, ատեստավորման հանձնաժողովներ, Էթկայի կոմիտեներ, որոնք դատախազների ընտրության, պաշտոնի նշանակման կամ առաջխաղացման, գնահատման եւ կարգապահության մասով խորհրդատվական դեր ունեցող մարմիններ են: Որոշ դեպքերում այդ հանձնաժողովներն առկա են որպես Դատախազների խորհրդի մարմիններ, սակայն այլ դեպքերում դրանք գլխավոր դատախազի կողմից ստեղծված կառույցներ են: Այդ հանձնաժողովները կազմված են նշանակված կամ ընտրված դատախազներից: Որոշ դեպքերում դրանք կարող են ներառել նաեւ ոչ մասնագետ անդամներ:

87. Այսպիսով, առկա են այս մարմինների իրավասության, լիազորությունների եւ կազմի, դրանց իրականացրած գործառնությունների նկատմամբ կիրառվող տարբեր մոտեցումներ, որոնք կարող են լինել ոչ այնքան ընդգրկուն եւ (կամ) բարդ, որքան Դատախազների խորհրդի գործառնություններն են՝ կապված անդամների նշանակման կամ ընտրության եղանակի, գլխավոր դատախազից ունեցած ինքնավարության

⁴¹ Նշված է սույն կարծիքի 12-րդ պարբերությունում:

աստիճանի (կամ բացակայության) եւ այլ հայեցակետերի հետ:

88. ԵՂԳԽՆ-ն վկայակոչում է, որ փափուկ իրավունքի վերաբերյալ միջազգային փաստաթղթերով որպես լավագույն գործելակերպ խրախուսվում է մասնագիտական, ոչ քաղաքական կառույցների ստեղծումը՝ նպատակ ունենալով ընդլայնել դատախազական ծառայությունների ինստիտուցիոնալ եւ գործառնության անկախությունը: Հետեւաբար ԵՂԳԽՆ-ն ընդունում է դատախազական ինքնակառավարումը կարգավորող այլ մարմինների կարեւորությունը եւ արժեքը եւ ըստ այդմ համարում է, որ դրանք պետք է կազմված լինեն եւ գործեն այնպես, որ բացառվի քաղաքական միջամտությունը, եւ գործեն դատախազական ծառայությունների անկախությունն ու անաչառությունն ամրապնդելու ուղղությամբ:

VIII. Առաջարկություններ

Քանի որ՝

- առկա է ԵՂԳԽՆ-ի կողմից դատախազների անկախության եւ անաչառության վերաբերյալ մշակված չափանիշներին աջակցելու համար ինստիտուցիոնալ շրջանակն առավել ուսումնասիրելու եւ հասկանալու անհրաժեշտություն,
- Դատախազների խորհուրդներն անդամ պետություններում առավել տարածվում են դրանց իրավական համակարգերի, ավանդույթների եւ մշակույթների բազմազանության լույսի ներքո,
- Դատախազների խորհուրդների ստեղծումը հստակ ինստիտուցիոնալ արժեք ունի այլընտրանքային հաստատությունների համեմատ՝ դատախազների անկախություն եւ դատախազական ինքնակառավարում նախատեսելու համար,
- այն անդամ պետություններում, որտեղ դրանք առկա են, կա մեծ բազմազանություն Դատախազների խորհուրդների կամ դատախազական ինքնակառավարումը կարգավորող այլ մարմինների կառուցվածքի, կազմակերպման, կազմի, իրավասության, գործառնությունների եւ այլ հայեցակետերի առումով,
- վերոնշյալ բազմազանությամբ պահանջվում է ազգային մարմինների համար ընդհանուր չափանիշների եւ ուղեկիշների մշակում,

ԵՂԳԽՆ-ն համաձայնել է հետեւյալ առաջարկությունների վերաբերյալ.

1. Պետք է հաշվի առնվի Դատախազների խորհուրդների՝ որպես ինքնակառավարվող մարմինների ինստիտուցիոնալ արժեքը դատախազական ծառայությունների եւ առանձին դատախազների՝ իրենց անկախ որոշումների կայացման միջոցով արդյունավետ եւ անաչառ գործունեության ապահովման համար: Այդ ինստիտուցիոնալ արժեքը պետք է դիտարկվի այն անդամ պետություններում, որտեղ առկա չեն Դատախազների խորհուրդներ՝ դրանց ներպետական օրենսդրությանը, իրավական ավանդույթներին եւ մշակույթներին համապատասխան: Ստեղծվելու դեպքում դրանց նկատմամբ պետք է կիրառվեն ստորեւ ներկայացված առաջարկությունները:
2. Թեեւ անդամ պետություններում կարող են առկա լինել տարբերություններ, Դատախազների խորհուրդները պետք է ստեղծվեն օրենքով, եւ դրանց պետք է տրվեն պատշաճ իրավասություն, կառուցվածք եւ կազմ՝ դատախազական ծառայության մեծությանը համաչափ, եւ պատշաճ ֆինանսական եւ վարչական ռեսուրսներ:
3. Եթե Դատախազների խորհուրդներն իրագործվում են խառը կազմով, ապա դրանք պետք է կազմված լինեն հավասարակշռված եղանակով, ոչ մասնագետ անդամների ներկայացվածության, այդ թվում՝ իրավական այլ մասնագիտությունների, գիտնականների եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջոցով: Խառը կազմ ունեցող խորհուրդներում նախընտրելի է, որ դատախազ անդամները մեծամասնություն կազմեն, ընտրվեն իրենց գործընկերների կողմից:
4. Դատախազների խորհուրդների անդամները, անկախ նրանից՝ դատախազ են, թե՛ ոչ, պետք է ընտրվեն նախապես ընդունված եւ սահմանված, արդար եւ հստակ չափորոշիչներին համապատասխան, թափանցիկ ընթացակարգով:
5. Դատախազների խորհրդի հեռանկարային անդամները չպետք է լինեն ակտիվ քաղաքական գործիչներ, խորհրդարանի անդամներ կամ գործադիր իշխանության պաշտոնատար անձինք:
6. Պետք է գործեն երաշխիքներ, որոք ապահովում են, որ իրենց մանդատն ավարտվելուց հետո որպես մշտական անդամ ծառայող դատախազ անդամները կարողանան վերականգնվել իրենց պաշտոններում, որոնք համապատասխանում են իրենց ավագությանը եւ որակավորումներին:
7. Պետք է ապահովվի Դատախազների խորհուրդների նախագահների, ինչպես նաեւ

անդամների անաչառությունը եւ անկախությունը գործադիր եւ օրենսդիր իշխանությունների կողմից եւ դատախազական ծառայության վերադաս անդամների կողմից անհարկի ազդեցության բացակայությունը:

8. Դատախազների խորհուրդների բոլոր անդամների մանդատները պետք է լինեն նույն ժամկետով եւ պետք է ավարտվեն միայն իրավահաջորդի ընտրությունից հետո: Նրանք պետք է ընտրվեն պաշտոնավարման ֆիքսված ժամկետով եւ պետք է օգտվեն իրենց անաչառության եւ անկախության մասով պաշտպանությունից:

9. Անդամի անդամության կասեցման մասին որոշումներով պետք է հաշվի առնել մեղադրանքների ծանրությունը եւ բավարար հավանականության առակյությունն առ այն, որ կատարվել է ծանր կարգապահական իրավախախտում: Բացի այդ, որոշումները պետք է ենթակա լինեն դատական կարգով բողոքարկման:

10. Դատախազների խորհուրդներին պետք է օրենքով տրամադրվի մասնագիտական ուղուն առնչվող հարցերում իրավասությունների լայն շրջանակ, եւ դրանք պետք է դերակատարում ունենան դատախազական համակարգի եւ գրասենյակների կարգավորման կամ կազմակերպման զարգացման հարցում՝ միեւնույն ժամանակ խթանելով դատախազական անկախությունն ու արդարադատության արդյունավետ իրականացումը:

11. Դատախազների խորհուրդների գործունեությունը եւ որոշումների կայացման գործընթացը պետք է կարգավորվեն գրավոր եւ թափանցիկ, նախընտրելի է՝ օրենքով ընդունված կանոններով: Այդպիսի կանոններով նախատեսվում են մասնավորապես որոշում ընդունելու համար քվորումը, քվեարկության ընթացակարգը եւ մեծամասնությունը: Անհրաժեշտության դեպքում հենց խորհրդի կողմից պետք է ընդունվեն Դատախազների խորհրդի մանրամասն կարգավորումներ:

12. Դատախազների խորհուրդների՝ դատախազների մասնագիտական ուղու վրա ազդեցություն գործող որոշումները պետք է լինեն հիմնավորված, իսկ պարտադիր ուժ ունեցող որոշումները կարող են ենթակա լինել դատական վերանայման տվյալ դատախազի նախաձեռնությամբ:

13. Արդարադատության համակարգի նկատմամբ հանրային վստահությունն ամրապնդելու համար Դատախազների խորհուրդները պետք է գործեն թափանցիկ եւ պարբերական զեկույցների միջոցով կամ համապատասխան այլ միջոցներով հաշվետու լինեն իրենց գործունեության համար:

Եվրոպայի խորհրդի Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԳԽ) Եվրոպայի խորհրդի խորհրդատվական մարմին է, որը ստեղծվել է 2005 թվականին՝ տրամադրելու խորհրդատվություն դատախազների անկախության, անաչառության և իրավասության հետ կապված հարցերի շուրջ: ԵԴԳԽ-ն առաջին մարմինն է միջազգային կազմակերպությունում, որը կազմված է բացառապես դատախազներից: Իր առաքելությունն իրականացնելու նպատակով ԵԴԳԽ-ն իր կարծիքների միջոցով տրամադրում է խորհրդատվություն և ուղեկիշեր: Չնայած ԵԴԳԽ-ի կողմից ընդունված կարծիքները հաշվի են առնում առկա ազգային իրավիճակները, դրանք պարունակում են նորարարական առաջարկներ դատախազների կարգավիճակը և արդարադատություն փնտրող հասարակության անդամներին մատուցվող ծառայությունները բարելավելու համար:



Եվրոպական դատախազների խորհրդատվական խորհրդի կայքը հասանելի է հետևյալ հասցեով՝ www.coe.int/ccpe



Եվրոպական միության անդամ պետությունները որոշում են կայացրել միավորել իրենց գիտելիքները, ռեսուրսները և ճակատագրերը: Անդամ պետությունները միասին կառուցել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման տարածաշրջան՝ պահպանելով մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունը և անհատի ազատությունները: Եվրոպական միությունը պատրաստվում է կիսվել իր ձեռքբերումներով և արժեքներով իր սահմաններից դուրս գտնվող երկրների և ժողովուրդների հետ:

www.europa.eu

Եվրոպայի խորհուրդը առաջատար իրավապաշտպան կազմակերպությունն է մայրցամաքում: Կազմակերպության անդամակցում է 46 պետություն, այդ թվում՝ Եվրոպական միության անդամ բոլոր պետությունները: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային, որը մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագիր է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

www.coe.int

Թարգմանությունը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

